

"Նամահայկական էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

Library

ՄԱՅՑՈՒՄ ԿԱՐՂԻ ԵՔ ՁՅՐ ԵՐԿՐՈՒՄՆԵՐ ԱՐԿԵՐԱԸ ԼՅՅԱՅԱՈ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ  
ԼՈՒՄԻՆՈՍԿԵՆԱՆՈՒՆԵԼ ԳՐԵՐ:

Ք-ՈՒՅՆ ԳՐԵՐԻ ՄՏԵՐՈՄԱՆ ՄԱՆՈՍՄԱՆՆԵՐԸ ԿԱՐՂԻ ԵՔ  
ԻՄՈՒՆԱԼ "ՄԱՍԸՆՅՈՒՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԵՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՑՔԻՑ

[www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

ԵՆԴՐՈՒՄ ԵՒՐ, ՈՐ ԾԳՆԱԼԻՄ ԵՔ ՄՏԵՐ ԿՈՑՔԻՑ  
ՑԱՆԿՈՒՄ ԵՒՐ ԶՈՒՆԻ ԸՆԹԵՐՍՈՒՆԹՅՈՒՆ:




ԳՐԵՐ ՄԻՔ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

2/11

ЫЗУУ

АГОЗУУ



1.  $\frac{1}{2}x^2 + 3x - 4$   
2.  $\frac{1}{3}x^3 - 2x^2 + 5x - 7$   
3.  $\frac{1}{4}x^4 - 3x^3 + 2x^2 - x + 1$   
4.  $\frac{1}{5}x^5 - 4x^4 + 3x^3 - 2x^2 + x - 1$   
5.  $\frac{1}{6}x^6 - 5x^5 + 4x^4 - 3x^3 + 2x^2 - x + 1$   
6.  $\frac{1}{7}x^7 - 6x^6 + 5x^5 - 4x^4 + 3x^3 - 2x^2 + x - 1$   
7.  $\frac{1}{8}x^8 - 7x^7 + 6x^6 - 5x^5 + 4x^4 - 3x^3 + 2x^2 - x + 1$   
8.  $\frac{1}{9}x^9 - 8x^8 + 7x^7 - 6x^6 + 5x^5 - 4x^4 + 3x^3 - 2x^2 + x - 1$   
9.  $\frac{1}{10}x^{10} - 9x^9 + 8x^8 - 7x^7 + 6x^6 - 5x^5 + 4x^4 - 3x^3 + 2x^2 - x + 1$   
10.  $\frac{1}{11}x^{11} - 10x^{10} + 9x^9 - 8x^8 + 7x^7 - 6x^6 + 5x^5 - 4x^4 + 3x^3 - 2x^2 + x - 1$

11.  $\frac{1}{12}x^{12} - 11x^{11} + 10x^{10} - 9x^9 + 8x^8 - 7x^7 + 6x^6 - 5x^5 + 4x^4 - 3x^3 + 2x^2 - x + 1$

12.  $\frac{1}{13}x^{13} - 12x^{12} + 11x^{11} - 10x^{10} + 9x^9 - 8x^8 + 7x^7 - 6x^6 + 5x^5 - 4x^4 + 3x^3 - 2x^2 + x - 1$

13.

14.

15.

16.  $\frac{1}{14}x^{14} - 13x^{13} + 12x^{12} - 11x^{11} + 10x^{10} - 9x^9 + 8x^8 - 7x^7 + 6x^6 - 5x^5 + 4x^4 - 3x^3 + 2x^2 - x + 1$

17.  $\frac{1}{15}x^{15} - 14x^{14} + 13x^{13} - 12x^{12} + 11x^{11} - 10x^{10} + 9x^9 - 8x^8 + 7x^7 - 6x^6 + 5x^5 - 4x^4 + 3x^3 - 2x^2 + x - 1$

[www.a-pdf.com](http://www.a-pdf.com)  
**WILLIAM SAROYAN**

**SELECTED WORKS**

**IN FOUR BOOKS  
BOOK FOUR**



**MAMA, I LOVE YOU  
PAPA, YOU'RE CRAZY  
MEMOIRS**

**YEREVAN "NAIRI" 1991**

# ՎԻՅԱՍ ՍԱՐՈՅԱՆ

## ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ  
ՀԱՏՈՐ ՉՈՐՐՈՐԴ



ՄԱՅՐԻԿ,  
ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՍ ՔԵՉ  
ՀԱՅՐԻԿ, ԴՈՒ ԽԵՆԹ ԵՍ  
ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄՆԵՐ

Կազմեց, խմբագրեց, վերջաբանը գրեց  
ՆԱՏԱԼՅԱ ԳՈՆՉԱՐԸ

**ՍՍՐՈՅԱՆ Վ.**

*Ս 269 Ընտիր երկեր: 4 հատորով (Վիլյամ Սարոյան, [Կազմ. և խմբ. Ն. Գոնչարը].— Եր.: Նաիրի, 1991.*

*Հրատ. է 1986թ.:*

*Հ. 4: Մայրիկ, ես սիրում եմ քեզ: Հայրիկ, դու խենթ ես: Հուշապատումներ [Թարգմ. Զ. Բոյաջյան և ուրիշ.]— 1991.— 432 էջ:*

*Չորրորդ հատորը կազմված է հեղինակի կյանքի վերջին տարիների ստեղծագործություններից:*

4703040100 (36)

Ս  $\frac{4703040100 (36)}{705(01)90}$  114—90

ԳՄԴ 84.7ԱՄՆ—4



# ՄԱՅՐԻԿ ԵՍ ՄԻՐՈՒՄ ԵՍ ԲԵԶ



## ՄՆԱՍ ԲԱՐՈՎ, ՄԱՔԸՐՈՆԻ ԼԵՅՆ

Աղջիկ մայրիկը ցամքոցով մի թեթև ծածկված՝ լողասենյակից դուրս եկավ ու ասաց.

— Ժամը քանի՞սն է:

— Ութը, — ասացի ես:

— Թե՞ տաս է պակաս:

— Չէ, ուղիղ ութն է:

— Ո՞ր ժամացույցով:

— Բոլոր ժամացույցներով: Արդեն ութն է, և դու ուշացել ես, բայց ե՞րբ չես ուշանում որ:

— Քեզ բերելիս՝ չեմ ուշացել:

— Ե՛ս չեմ ուշացել: Իսկ դու ուղղակի սպասում էիր ինձ:

— Դա ե՛ս գիտեմ, — ասաց Աղջիկ մայրիկը, — և հավատա ինձ, երկուսիցս հենց ես չեմ ուշացել:

— Դե, ոչ էլ ես:

Իմ ծնված օրն ենք Աղջիկ մայրիկն ու ես առաջին անգամ իրար հանդիպել ու ընկերացել: Դրանից հետո անբաժան ընկերուհիներ ենք դարձել, բայց օր չկա, որ գոնե մի անգամ չկռվենք: Թեպետ միշտ էլ հաշտվում ենք: Մենք երկուսով ենք ապրում ու ամեն տեղ երկուսով գնում, բացի փոքրերին արգելված տեղերից, դե, էդպիսի տեղերն էլ Աղջիկ մայրիկը մենակ է գնում, իսկ ես տանն եմ մնում՝ կամ վարձու դայակի հետ, կամ էլ՝ Վիոլա մայրիկի. նա տասնմեկ մեծ տղայի ու աղջրկա մայրիկ է և ամեն շաբաթ-կիրակի գալիս է մեր տունը հավաքելու, ճաշ էլ է եփում ու հեռուատացույց նայում:

Ես սպասում էի Աղջիկ մայրիկի ննջարանում, որ տեսնեմ, թե նա ոնց է հագնվում, որովհետև Աղջիկ մայրիկը դրա ձևը գիտի: Կյանքումս նրանից սիրուն հագնվող չեմ տեսել: Աղջիկ մայրիկը լրիվ վարդագույն է, կարմրաշեկ մազեր ունի ու հագնվելու մասին ամեն ինչ գիտի: Սկզբում պետք է լողանք ընդունես, հետո երեսիդ դիմափոշի քսես, հետո

էլ աչքերդ ու շրթունքներդ ներկես, հետո նոր արդեն սկսես հագնուել: Էս բոլորն անում, վերջացնում ես թե չէ, մեծ աղջիկ ես դառնում: Ես էլ կարող եմ էդ բոլորն անել, բայց դեռ չոր շոփ եմ՝ փայտի պես ուղիղ, փոխանակ մի քիչ գոնե փափլիկ լինեմ: Քաշս քսանյոթ կիլո է, իսկ Աղջիկ մայրիկինը՝ համարյա հիսունհինգ: Աղջիկ մայրիկը երեսուներեք տարեկան է, բայց հենց որ դրա մասին խոսում եմ, բարկանում է:

— Ես քսաներկու տարեկան եմ, և դու լավ գիտես,— ասում է նա:

— Եթե քսաներկու տարեկան ես,— ասում եմ,— ուրեմն ես դեռ չեմ ծնվել, որովհետև իմ ծնվելու ժամանակ դու քսանչորս տարեկան էիր: Ինքդ ես ասել:

— Ստեղ եմ,— ասում է Աղջիկ մայրիկը:— Ուղղակի չէի ուզում խոստովանել, որ քեզ տասներեք տարեկանում եմ ունեցել:

— Ա՛յ թե հնարեցիր,— ասում եմ ես, իսկ Աղջիկ մայրիկն ասում է.

— Դու երեսուներեք տարեկան շատ կանանց ես տեսել. ես նրանց նմա՞ն եմ:

Դե իհարկե չէ: Նա ոչ մեկին էլ նման չի ու ամեն շաբաթ գեղեցկուկության սրահից մի նոր տեսքով է տուն գալիս: Ամեն անգամ մաղերն ուրիշ գույնի են, եղունգներն՝ ուրիշ: Նա էնքան շրթներկեր ունի, դիմափոշիներ ու տեսակ-տեսակ բաներ, որ աշխարհում էլ ոչ ոք էդքան չի ունենա:

Աղջիկ մայրիկը մի «Պառլամենտ» սիգարետ վառեց ու նստեց իր անկողնու կարմիր, թավշե ծածկոցին: Նայեց ինձ, ժպտաց, ծուխը ներս քաշեց ու բաց թողնելով, ավելի հարմար տեղավորվեց:

— Գոնե շտապեիր,— ասացի ես:

— Զէ՛, արդեն մի ժամ ուշացել եմ: Կես ժամ էլ կտևի մինչև տեղ հասնեմ, էնպես որ լավ է շտապեմ. թե ուշացել եմ, կարգին ուշանամ:

— Քո գործն է:

— Վիոլա մայրիկն ի՞նչ է քեզ տալու ընթրիքին:

— Նա չկա:

— Ո՞ւր է:

— Ի՞նչ իմանամ: Դեռ չի եկել:

— Ա՛յ քեզ բան,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ինչպե՞ս թե՛ չի եկել: Ախր գիտի՛ հույսս իր վրա է: Զգուշացրի, որ ուղիղ յոթին անպայման կստեղ լինի: Ես էլ կարծում էի լողանալուս ընթացքում եկել է:

— Զի եկել:

— Իսկ ո՞ւմ հետ էիր խոսում:

— Դեքի:

— Միսիս Շլոմբի աղջկա՞:

— Դեբորա Շլոմբի:

— Այդ երբվանի՞ց եք մեծերի պես խոսում:

— Մեծերի պե՞ս:

— Բա ինչ: Կարծեցի Վիոլա մայրիկի հետ ես խոսում: Չէ, պիտի պարզել, թե ինչ է պատահել: Նա ինչո՞ւ չի եկել:

Աղջիկ մայրիկը մեր երկար լարով հեռախոսը վերցրեց, հավաքեց համարն ու սպասեց, բայց պատասխանող չկար:

Նա սիգարետը հանգցրեց վարդագույն մոխրամանում, որի մեջ ֆրանսերեն ինչ-որ բան է գրված, ու մտքերով տարվեց: Ես միշտ էլ գլխի եմ ընկնում, թե Աղջիկ մայրիկը երբ է մտքերով տարվում, որովհետև նա սուսիկ-փուսիկ է դառնում ու լրիվ փոխվում:

— Ի՞նչ է եղել, Աղջիկ մայրիկ:

Աղջիկ մայրիկը մի թեթև ժպտաց, հետո թևերը բացեց ու ինձ գիրկն առավ, մենք փաթաթվեցինք իրար, ու Աղջիկ մայրիկն ասաց.

— Գորտուկս: Իմ սիրուն խատուտիկ: Այ իմ փոքրիկ Բզեզ:

Ու ես հասկացա, որ Աղջիկ մայրիկը տխուր է: Երբ նա տխուր է, ինձ միշտ էլ քնքուշ անուններ է դնում:

Նա նորից լսափողը վերցրեց ու արագ-արագ համար հավաքեց: Հետո մի տեսակ անսովոր ձայնով խոսեց. ինքնաթիռների մասին էր հարցնում, թե որ ժամերին են թռչում, բայց վաղը չէ, այսօ՛ր: Երևի նրա հետ խոսողը մանրամասն չգիտեր, բայց քիչ անց իմացավ: Աղջիկ մայրիկը լսափողը դրեց, իսկ հետո նորից արագ-արագ համար հավաքեց:

— Կլարա,— ասաց նա,— երևի բան դուրս չգա: Հազար ափսոս, կներես... Ծրագրերս փոխվել են: Գիշերը Նյու Յորք եմ թռչում... Հա, գիշերը... Կարևոր գործ կա... Ա՛հ, չգիտեմ ինչքան ժամանակով: Գուցե մի ամսով, գուցե ավելի շատ կամ քիչ... Իհարկե, միսիս Նիժինսկուն<sup>1</sup> էլ հետս եմ տանում:— Նա մի քիչ լսեց, իսկ հետո ասաց.— Սպասիր հարցնեմ:— Նայեց ինձ ու ասաց.— Կլարան առաջարկում է, որ մի քանի շաբաթով կամ թեկուզ մի ամսով իր մոտ մնաս, քանի դեռ ես Նյու Յորքում կլինեմ: Ուզո՞ւմ ես:

— Չէ, շատ շնորհակալ եմ, չեմ ուզում,— ասացի,— ինքդ էլ գիտես: Ինչո՞ւ ես հարցնում՝ ուզում եմ, թե չէ: Նա անունս միսիս Նիժինս-

<sup>1</sup> Ակնարկվում է ռուսական բալետի նշանավոր մենապարող Վաչլավ Նիժինսկին (1889—1950):

կի է դրել, թուղթ խաղալիս խաբում է, հետո էլ ասում, թե ես եմ իրեն խաբում:

— Նա իմ ամենալավ ընկերուհին է,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Քոնն է, հո իմը չի,— ասացի ես:— Չէ, հետդ կգամ:

Աղջիկ մայրիկը Կլարային ասաց.

— Դեմ է ընկել, շեռ համոզի, բայց միևնույն է, շատ զգացված եմ առաջարկիդ համար: Հենց որ վերադառնամ, կզանգեմ: Առայժմ:

Նա լսափողը դրեց ու սկսեց դեսուդեն վազվզել, ճամպրուկներն էր հանում, վրաս գոռում, թե՛ էս արա, էն արա, գազի ծորակը փակիր, սառնարանն անջատիր, հետնամուտքի դուռը, մյուս դռներն ստուգիր, շորերդ ու ատամի խոզանակը վերցրու...

Այ, էսպես եղավ, որ ես ու Աղջիկ մայրիկը թռանք Նյու Յորք՝ փոխանակ նա զնար հերթական հրավերքին, իսկ ես Վիոլա մայրիկի հետ տանք նստեի:

«ԻՌԼԱՆՎԻՍԻ ԱՍՏՂԸ»

Աղջիկ մայրիկը դերասանուհի է. ահա թե ինչի համար էինք մենք Նյու Յորք թռչում: Ախր իսկական թատրոնը հենց Նյու Յորքում է: Մեր ինքնաթիռի անունը «Իռլանդիայի աստղ» էր. ես ինքս կարդացի, երբ բոլորի հետ սանդուղքով բարձրացանք ու մտանք թիթեռի պես թևերը փռած ինքնաթիռի մեջ, որ տեղներս նստենք: Աղջիկ մայրիկն ասաց.

— Ես պետք է անպայման լավ դեր ստանամ մի լավ պիեսում, որովհետև տարիքս անցնում է, գնալով շեմ ջահելանում: Խաղաշրջանը ուր որ է կբացվի, և լավ դեր ստանալու համար հարկավոր է Նյու Յորքում լինել: Գիշեր-ցերեկ տանջվել պարապել եմ և գիտեմ, որ արդեն պատրաստ եմ. էլ անցյալ տարվա նման չի լինի, երբ մեն-մենակ Նյու Յորք զնացի, իսկ դու երկու ամիս Բես մորաքրոջ հետ տանք մնացիր: Կարդում էի, կարդում, բայց կդպես էլ ոչ մի դեր շատացա, որովհետև անպատրաստ էի: Հիմա՝ ուրիշ բան, արդեն պատրաստ եմ. ահա թե ինչու քեզ հետս վերցրի՝ փոխանակ Բես մորաքրոջը խնդրեմ Լիլի մոտը մնա. ուղղակի այս անգամ համոզված եմ՝ պիտի հաջողության հասնեմ, մեծ հաջողության, իսկ երբ որ հասա, քեզ համար ինչքան ասես նոր շորեր կառնեմ ու ինչ սիրտդ տա, բայց հիմա քնիր:

Ես էնպես էի հուզվել՝ քունս չէր տանում: Ինքնաթիռը անընդհատ օրորվում էր ու դժժում, մարդիկ էլ գնում-գալիս էին միջանցքով:

— Վա՛յ, ոսկե ձկնիկներս,— ասացի ես:— Բա ձկնիկներս ի՞նչ են լինելու:

Մի օր Աղջիկ մայրիկը ապակե գնդակների նման երկու ակվարիումի մեջ՝ մի-մի ոսկե ձկնիկ էր ինձ համար խանութից առել, հատը՝ երեսունհինգ սենթ, ու հիմա նրանք մնացել էին անտեր՝ իմ ննջարանի փոքրիկ սեղանին, ձկան կերի տասը սենթանոց փաթեթն էլ կողքներին, ու ոչ ոք չկար, որ նրանց կեր տար:

— Գրողի ծոցը ոսկե ձկնիկներդ,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Հե՛տ վերցրու ասածդ,— վրա տվի ես:— Բա կարելի՞ է կռպես խոսել Ձկնիկ տղայի ու Ձկնիկ աղջկա մասին. նրանք իմ ամենալավ ընկերներն են, չէ՞. ամբողջ տարին պահել, փայփայել եմ:

— Ամբողջ տարի՞ն. մի ամիս էլ չկա, որ մոտդ են: Մտքովս երբեք չէր անցնի, որ այդքան երկար կապրեն: Ես դրանք առա, որովհետև միայն ակվարիումները՝ առանց ձկների, քառասունհինգ սենթից ավելին արժեն:

— Ինձ համար մեկ է, թե ինչու ես առել: Ես սիրում եմ իմ ոսկե ձկնիկներին, ու դու խոսքերդ պիտի հետ վերցնես:

— Վերցնում եմ,— ասաց Աղջիկ մայրիկը:— Կլարային հեռագիր կտամ, որ շաբաթը մի անգամ գնա, նրանց կերակրի:

— Շաբաթը երկո՛ւ անգամ:

— Լավ, երկու անգամ:

— Զմոռանաս:

— Զեմ մոռանա:

— Մոտդ գրիր:

Եթե Աղջիկ մայրիկը մի բան չգրի, անպայման կմոռանա, բայց մեկ-մեկ գրած բանն էլ է մոռանում: Ամբողջ օրը գրում է ու գրում: Նա պայուսակը բացեց, իր նոթատետրն ու արծաթագույն մատիտը հանեց ու սկսեց գրել. «Կլարային՝ հեռագիր, որ ձկնիկներին կերակրի»:

— էլի ասելիք ունե՞ս,— հարցրեց նա:

— Հա: Իսկ եթե դու հաջողության չհասնե՞ս:

— Ավելի լավ է նման հարցեր շտաս: Այս անգամ պե՛տք է հաջողության հասնեմ, թե չէ արդեն ուշ կլինի:

— Ինչի՞ համար ուշ կլինի:

— Մեծ դերասանուհի դառնալու:

— Իսկ դու մեծ չե՞ս:

— Մեծ եմ, բայց իմ պիեսը գեռ չեմ գտել: Հեռուստաթատրոնում քիչ թե շատ խաղացել եմ, բայց դա հաջիվ չէ: Անմիտ դերեր էին: Ան-

միտ պիեսներ, անմիտ ռեժիսորների անմիտ ներկայացումներ: Զզվել եմ հեռուստատեսութունից: Պետք է իսկական թատրոնում խաղալ:

— Ինչո՞ւ:

— Հոշակավոր գառնալու համար:

— Իսկ դու հոշակավոր չե՞ս:

— Այնքան էլ չէ: Ուզածդ հավաքույթում ես ամենագեղեցիկն եմ, բոլոր պրոդյուսերների, ռեժիսորների, գրողների և դերասանների հետ նստում-վեր եմ կենում, բայց ոչ ոք ինձ տեսնելիս ստրի չի թաչում ու ասում, թե իր պիեսում հենց ես պիտի խաղամ. ո՛չ ոք: Արդեն հոգնել ու զզվել եմ դրանից: Այս անգամ, ինչ էլ որ լինի, պիտի հաջողության հասնեմ: Եվ դու էլ պիտի սրան հավատաս, որովհետև եթե հավատացիր, բախտս կբերի:

— Ուրեմն՝ հավատում եմ:

— Այ, ապրես, անուշիկս:

— Ես հավատում եմ, որ դու ամենալավ դերը կստանաս ու Մերիլին Մոնրոյից տասն անգամ հայտնի կդառնաս:

— Ոմանց բախտը ո՛նց է բերում:

— Մերիլինը քեզ դուր է գալիս, չէ՞:

— Իհարկե: Ես իսկական գեղեցկուհի է, բայց տես բախտը ո՛նց է բերում:

— Բոնն ավելի շատ կբերի:

— Դե, հիմա մտքումդ ազդե՞իր ու քնիր: Արդեն կեսդիշեր է:

Ես աչքերս պինդ փակեցի ու նարնջագույն լույսի փունջ-փունջ շողեր տեսա, բայց սրտովս չէր, որ ինքնաթիռը դեռ մինչև Նյու Յորք պիտի էդպես դժժա:

— Այ, ապրես, անուշիկս, — ասաց Աղջիկ մայրիկը: — Աղոթք արեցի՞ր:

— Հա, — ասացի ես առանց աչքերս բացելու, որովհետև սիրում եմ, երբ նարնջագույն շողերը հայտնվում են, իսկ հետո արդեն խավարն է իջնում:

— Ի՞նչ աղոթք արեցիր:

— Թող Աղջիկ մայրիկը իր ուզածի պես հաջողության հասնի ու հոշակավոր գառնա, իսկ ես որդերի հետ լավ կվերաբերվեմ:

— Բայց դու որդերի հետ վատ չես վերաբերվում, չէ՞:

— Դե, իհարկե չէ: Ես միշտ էլ որդերի հետ լավ եմ վերաբերվում:

— Է՛հ, ուրեմն էլ ինչո՞ւ ես ասում, թե լավ կվերաբերվես:

— Վա՛ճ, Աղջիկ մայրիկ, շփտե՞ս ոնց են աղոթում: Միշտ մի բան ես խնդրում, հետո էլ մի բան խոստանում:

— Պարզ է: Բայց ի՞նչ որդեր են հանկարծ միտքդ ընկել:

— Պարտեզի որդերը: Ես երբեք չեմ տրորում նրանց: Ուղղակի նայում եմ, իսկ նրանք սողալով գնում են, թաքնվում:

— Քնա՞ծ ես:

— Թե քնած լինեի, ո՞նց կխոսեի:

— Ուղում եմ ասել՝ արդեն քնո՞ւմ ես:

— Հա երևի:

— Դե ուրեմն՝ բարի գիշեր:

— Բարի գիշեր:

Բայց ինքնաթիռի դժժոցը դիմանալու բան չի, համ էլ ամբողջ ճանապարհին՝ մինչև տեղ հասնելդ, անվերջ օրորվում ես ու նեղվում, իսկ այ, անկողնու մեջ, ոտքերս հանգիստ մեկնում եմ, հով-հով պառկում ու տարբեր հեքիաթներ հիշում: Աղջիկների մեծ մասը շեն սիրում վրահուկներին: Բայց ես սիրում եմ: Հենց վհուկներն են ամեն ինչ հետաքրքիր դարձնում: Առանց վհուկի հեքիաթն ո՞ւմ է պետք: Դեքն ասում է՝ վհուկներ չկան: Ես ասում եմ՝ կան: Մեկ-մեկ մենք կովում ենք ու համարյա մի օր իրարից խոռվ մնում, հետո Դեքն ասում է. «Դե լավ, վհուկներ կա՛ն»: Կամ էլ ես եմ ասում. «Դե լավ, վհուկներ չկան, բայց ի՞նչ տարբերություն: Մեկ է՝ առաջ եղել են, որովհետև բոլոր ամենահետաքրքիր հեքիաթներում կան»: Ու մենք հաշտվում ենք:

Մի իսկական վհուկ՝ երկար, սուր քթով ու մազմզոտ գորտնուկներով, նայեց ինձ ու հռհռաց: Ես վախեցա. ախր գիտեմ, որ վհուկներ կա՛ն, ու քունս տարավ:

### ՈՂՋՈՒՅՆ, «ՊԻՆՈ»

Լու Գարդիա օդանավակայանից մենք տաքսիով գնացինք Հինգերորդ պողոտա, Նյու Յորքի ամենալավ ու ամենաթանկ հյուրանոցներից մեկը՝ «Պինո», բայց օրական քսան դոլարով մի մեծ սենյակ վերցնելու փոխարեն, Աղջիկ մայրիկը միշտ էլ շատ փոքրիկ, երեք դոլարանոց սենյակ է վերցնում. էղպիսի սենյակները հարուստ մարդկանց ծառաների կամ քարտուղարների համար են: Իսկ հարուստ մարդիկ մեծ սենյակներում են մնում:

— Ես չէի ուզի մեկնումեկն իմանա, որ աղքատ եմ,— ասաց Աղ-



ջիկ մայրիկը:— Բացի ինձանից, ոչ ոքի գործը չէ, թե ինչքան եմ վարձ տալիս:

- Բա որտե՞ղ եմ քնելու:
- Հենց էստեղ, հիմարիկ:
- Իսկ դո՞ւ:
- Ես էլ հետդ:

— Վա՛յ, Աղջիկ մայրիկ, ինչ ուրախ եմ, որ եկանք Նյու Յորք:

Ամբողջ սենյակը Փասիֆիք Փալիսեյդսի մեր տան նախասրահից մեծ շեր, բայց քսանմեկերորդ հարկում էր, Ջ109-րդը: Լավ լոգարան ուներ, շատ լավ մահճակալ, մի լավ պահարան շորերի համար, մի լավ պատի պահարան էլ՝ ամանեղենի համար ու իհարկե, հեռախոս, բայց սա վարդագույն շեր, սև էր, ու զանգը՝ մեղմ, մեր տան վարդագույն հեռախոսի պես ոռնոց շեր հանում:

Աղջիկ մայրիկը նստեց մահճակալին ու զանգեց, որ սպասավորը սուրճ բերի իրեն, իսկ ինձ՝ կակաո, բոված հաց ու երկու թերխաշ ձու. ո՛ւֆ: Զգվում եմ թերխաշ ձվից, սուրճ եմ շատ սիրում, բայց ո՛վ է թողնում խմեմ:

Աղջիկ մայրիկը լոգարանի մեջ ջուր լցրեց ու ասաց.

- Դե՛, միսիս Նիժինսկի, ջուրը մտեք, խնդրեմ:
- Ի՞նչ կլինի ինձ միսիս Նիժինսկի շասես:
- Բայց դու պարի էիր գնում, չէ՞:

— Ի՞նչ անենք: Կլարա Քուլբոն է անունս միսիս Նիժինսկի դրել, իսկ նա ինձ ատում է, ես էլ իրեն եմ ատում ու չեմ ուզում, որ դու նրա նման ինձ միսիս Նիժինսկի ասես: Ավելի լավ է անունս Մարգրրեթ Ռոզ դնես:

— Դե լավ, թող լինի Մարգրրեթ Ռոզ, միայն թե շորերդ հանիր: Ես կուզեի, որ լողանաս, կարգին նախաճաշես, հետո կուզեի մտնես անկողին ու հանգստանաս. դու բոլորովին չես քնել:

- Քնել եմ:
- Եթե նույնիսկ քնել ես, միևնույն է՝ վատ, ինձ պես: Ինչո՞ւ ես ուզում, որ անունդ Մարգրրեթ Ռոզ դնեմ:

— Ինչո՞ւ. որովհետե ես անգլուհի եմ, Անգլիայի թագուհու փոքրիկ քույրը:

- Օ՛:
- Դու Անգլիայի թագուհին ես, իսկ ես՝ քո քույրիկը:
- Ա՛յ թե հիանալի կլինեիր, չէ՞:

— Բայց, մայրիկ, ախր հենց էդպես է: Մենք ուղղակի աղքատ ենք ձևանում:

— Չէ, դա որ հաստատ չենք ձևանում:

— Բա ո՞նց դառնանք Անգլիայի թագուհին ու նրա քույրիկը:

— Զուրը մտիր, հա՞... ու լսիր ինչ եմ ասում, Բզեզ, դու պետք է լավ ուտես, թե չէ կաշի ու ոսկոր ես: Սրանից հետո՝ սկսած այսօրվա նախաճաշից, էլետք է շատ լավ ուտես: Եղա՞վ:

— Եղավ, Աղջիկ մայրիկ, ինչքան ուժս պատի՛ կուտեմ:

Ես մտա ջուրը, լողանում էի ու երգում, իսկ Աղջիկ մայրիկը դեսու՛ դեն էր զանգում: Տարբեր մարդկանց հետ նա տարբեր ձևով էր խոսում: Մի քանիսի հետ խոսելիս՝ ծիծաղում էր, բացականչում ու սրանից անունով դիմում, մյուսների հետ էլ էնպես էր խոսում, կարծես ինքը շիներ: Հետո ես լսեցի, որ սպասավորը ներս բերեց ակներով սեղանն ու դնաց, իսկ հետո Աղջիկ մայրիկը եկավ լողասենյակ, ինձ ջրից հանեց, շորացրեց, ես խալաթս հագա ու նստեցի սեղանի մոտ: Աղջիկ մայրիկը ձվերը կճպեց, մեկը՝ դարչնագույն, մեկն էլ՝ սպիտակ, մի քիչ կարագ դրեց ամեն ձվի մեջ, կարագը սկսեց հալվել, ու Աղջիկ մայրիկն ասաց.

— Դե՛, քեզ տեսնեմ, ես ուզում եմ, որ սրանից հետո իսկական քկլիկ դառնաս. սեղանի վրա ինչ կա չկա՝ կեր և արագ-արագ:

— Կճեպներն էլ ուտե՞մ, ափսեները, դանակը, պատառաքաղն ու գդալներն է՞լ:

— Ինչ կա չկա:

— Բա անձեռոցիկներ՞ըր:

— Դրանք էլ:

— Իսկ բաժակներ՞ըր:

— Ասացի՛ ինչ կա չկա և վերջ, կատակ չեմ անում: Երիտասարդ մորը շատ խեթ են նայում, եթե նրա աղջիկը գնդիկ բոբոնիկի պես չի, իսկ դու ի՞նչ գնդիկ բոբոնիկ, կաշի ու ոսկոր ես:

— Ես չեմ ուզում գնդիկ բոբոնիկ լինել:

— Երիտասարդ մորը, որն իր փոքրիկ աղջկանից բացի, աշխարհում ոչ ոք չունի, բոլորն էլ շա՛տ խեթ-խեթ են նայում:

— Մենք Տղա հայրիկ էլ ունենք:

— Չէ, Գորտուկ: Դո՛ւ ունես Տղա հայրիկ: Նա քոնն է, իմը չէ: Մենք բաժանված ենք:

— Դե, հո Տղա հայրիկը չի՞ մեռել: Նա հո չի՞ մեռել ու քանի դեռ կա, իմն էլ է, քոնն էլ:

- Վախենում եմ, որ չէ: Եվ ընդհանրապես, հայրդ Փարիզում է ու որոշել է առայժմ էնտեղ մնալ:
- Բայց, Աղջիկ մայրիկ, նա փող է ուղարկում:
- Հա, ուղարկում է... եթե ձեռքն է ընկնում:
- Հետո՞ դու իմ եղբայր Փիթին էլ ունես:
- Է՛հ, եղբայրդ հորդ մոտ է:
- Ինչո՞ւ հայրիկը եղբորս տարավ Փարիզ:
- Դու լավ գիտես. մի տարի առաջ բոլորս համաձայնության եկանք, որ հայրդ Փիթին վերցնի, եթե նա ուզի հորդ մոտ մնալ, և նա ուզեց, իսկ դու, պայմանավորվեցինք, որ ինձ մոտ մնաս, եթե ուզես, և դու ուզեցիր:
- Ես ուզում եմ, որ հայրիկն էլ հետս լինի:
- Զվերը կեր:
- Զէ, իրոք, Աղջիկ մայրիկ, Ես ուզում եմ, որ հայրիկն ու Դաշտապահ Փիթեր Բոլիվիան ինձ հետ լինեն և ուզում եմ դու էլ մեզ հետ լինես:
- Դե, ես էստեղ եմ, դու էստեղ ես, իսկ հայրդ ու Փիթը Փարիզում են և վերջ:
- Ինչո՞ւ:
- Գլուխ՞ս, ես հազար ու մի մտածմունք ունեմ և հարյուր անգամ բացատրածս բանը նորից բացատրողը չեմ: Քո հայրն ու մայրը իրարից բաժանված են, այ թե ինչ: Երբ տղամարդն ու կինը իրարից բաժանվում են. . դե, այլևս միասին չեն ապրում, պա՞րզ է:
- Դու աշխարհում ամենից շատ հայրիկին ես սիրում, ինքդ էլ գիտես:
- Միգուցե, բայց և ամենից շատ նրան եմ ատում:
- Զե՛ս ատում, մայրիկ: Դու նրան սիրում ես:
- Ատում եմ:
- Նա էլ քեզ է սիրում:
- Նա էլ ինձ է ատում:
- Ախր ո՞նց կարող եք իրար սիրել ու ատել:
- Դրանից էլ հեշտ բա՞ն:
- Ես հայրիկին սիրում եմ ու, Աղջիկ մայրիկ, քեզ էլ եմ սիրում:
- Իսկ ո՞ւմ ես ատում:
- Փիթին:
- Դաշտապահ Փիթեր Բոլիվիայի՞ն:
- Հա՛, հենց Դաշտապահ Փիթեր Բոլիվիային:
- Դու լավ գիտես, որ սիրում ես նրան:

— Ատում եմ:

— Է՛, ուրեմն կհասկանաս քո հորն ու մորը: Դե, քեզ տեսնեմ, ոչ հուցից պիտի մի փշուր մնա, ոչ էլ կակաոյից թեկուզ մի կաթիլ:

— Զանդիր հայրիկին ու ասա, որ երկուսով գան էստեղ:

— էստե՞ղ:

— Այո, հենց էստեղ: Հենց այս սենյակը: «Պիեռի» 2109-րդ համարը: Մենք բոլորս էստեղ միասին կապրենք մինչև մեռնելը:

— Զորսս էլ այս սենյակո՞ւմ... Մի ժամից կմեռնենք: Երբ դու փոքր էիր, մենք Օյսեր Բեյում շորսս միասին մի քսան սենյականոց տան մեջ վեց ամիս ապրեցինք, ու դա քիչ մնաց մեզ սպաներ:

— Ի՞նչը քիչ մնաց սպաներ:

— Մի հարկի տակ, ընտանիքով ապրելը:

— Ինչո՞ւ: Դժվա՞ր է ընտանիքով ապրել:

— Ինձ ու հորդ համար դժվար է: Երևի բոլորի համար էլ դժվար է, բայց գուցեև սխալվում եմ: Ես իմ տեսածով եմ դատում: Այ, օրինակ, վերցնենք ամենամոտ ընկերուհուն՝ Կլարա Քուլբոյին: Քսան տարի է՝ ինքը, ամուսինը և երեք երեխան մի հարկի տակ են ապրում, ու տես, թե նրանք ինչ օրն են ընկել:

— Ի՞նչ օրը:

— Է՛հ, բոլորն էլ արդեն մեռած մարդիկ են, վերջացավ գնաց: Առաջվա նման քնում-վեր են կենում, ուտում են, քայլում, բայց արդեն մեռած են: Ահա և ընտանեկան կյանքը:

Հետո հեռախոսը զնգաց, ու ես շկարողացա Աղջիկ մայրիկին խընդրել, որ իր ասածը մի կարգին բացատրի: Էլի ուղած-չուղած պիտի սպասեի:

— Գլե՛ղիս,— գոռաց Աղջիկ մայրիկը լսափողի մեջ:— Լսիր, կամ՝ հիմա, կամ՝ երբեք: Ես պետք է թատրոնից սկսեմ... Անցած օրը, երեկոյան պատրաստվել էի, որ հերթական հրավերքին գնամ, բայց հանկարծ որոշեցի ամեն ինչ գրողի ծոցը ճամփել: Բոլոր հրավերքներն էլ ընդմիջտ գրողի ծոցը կորչեն: Ես միտք չունեմ ամբողջ կյանքս վասնել հրավերքներին շուք տվող սիրուն աղջկա դերում: Առանձնապես մի հաճելի բան չի: Դրա համար էլ թոել եմ եկել ու մի ժամից Մայք Մաքքլեչի՛ հետ պիտի հանդիպեմ «Քսանմեկում»<sup>1</sup>:

Աղջիկ մայրիկը խոսում էր ու խոսում, սուրճը քիչ-քիչ խմում ու մ'ի սիգարետը մյուսի հետևից վառում, քանի որ Գլեղիսը Գլեղիս Դյուբարի՛ն

<sup>1</sup> Նյույորքյան հայտնի սրճարան-ակումբ, արվեստագետների հավաքատեղի:

է, իսկ ո՞վ շնորհի, թե նա ով է. աշխարհի ամենահարուստ աղջիկներից մեկը, այ թե ով, ու մայրիկի ամենամոտ ընկերուհին, նույնիսկ Կլարայից էլ մոտ, որովհետև մայրիկն ու Գլեդիսը իրար ճանաչում են շատ վաղուցվանից, երբ երկուսն էլ դեռ փոքր են եղել ու երկուսն էլ՝ դժբախտ:

Գլեդիսի հետ մի կուշտ խոսելուց հետո Աղջիկ մայրիկը շտապ-շտապ հանվեց, որ լողանք ընդունի, հետո էլ ջրից դուրս եկավ ու հագնվեց: Նա սպասավորի բերած սեղանը դուրս հրեց միջանցք, ինձ անկողին դրեց ու մի գիրք տվեց, վերնագիրը՝ «Երազի մեջ, թե արթուն»։ գիրքը մեծ մարդկանց մասին էր, երբ սրանք դեռ փոքրիկ երեխաներ էին եղել, ու համարյա նկարներ շուներ: Աղջիկ մայրիկն ասաց.

— Կարդա ու հանգիստ քնիր, մինչև ես միստր Մաքքլեչիի հետ ճաշեմ: Ուշանում եմ, բայց երկուսն անց կես պետք է էնտեղ լինեմ, շորսն անց կես կվերադառնամ, և մենք կմտածենք, թե երեկոյան ինչ անենք: Եղա՞վ:

— Եղավ, Աղջիկ մայրիկ: Իսկ ո՞վ է միստր Մաքքլեչին:

— Պրոդյուսեր է, պիեսներ է բեմադրում: Երկու տարի առաջ հանդիպել ենք մի հյուրասիրության ժամանակ, և պատկերացրու, նա ինձ շի մոռացել:

— Քեզ ոչ ոք էլ չի մոռանում, Աղջիկ մայրիկ:

— Ես նրան ասացի, որ հասել եմ նյու Յորք՝ թատրոնում աշխատելու, իսկ նա ասում է. «Ճիշտ եք արել, եկեք ճաշենք ու ամեն ինչ միասին քննարկենք»: Մատներդ խաշիր:

— Խաշեցի: Հաջողութուն քեզ, Աղջիկ մայրիկ:

Աղջիկ մայրիկը երեսս պաշալեց ու գնաց, ես էլ գիրքը բացեցի: Տեսնեմ մի փոքրիկ տղա է նկարած, խեցին դրել է ականջին, ու ես էնպե՛ս ուղեցի, որ խեցի ունենամ, դնեմ ականջիս ու լսեմ, այ, հենց հիմա: Բայց դե շունեի: Իսկ հետո հեռախոսը զնգաց. միստր Մաքքլեչին էր: Նա ասաց, որ շատ ներողութուն է խնդրում, բայց դեռ չի կարողացել իր հիմնարկից դուրս գալ և կուշանա ճաշից: Ես ասացի՝ ավելի լավ, որովհետև մայրիկն էլ է ուշացել: Նա սկսեց իմ մասին հարցնել, իսկ հետո ասաց.

— Լսիր, փոքրիկ օրիորդ, քո ձայնը ինձ դուր է գալիս: Կուզենայի՞ր դերասանուհի լինել:

— Ոչ, սըր,— ասացի ես:— Մայրիկս է ուզում:

— Գիտեմ, որ ուզում է,— ասաց նա,— բայց ինձ հաճելի ձայնով փոքրիկ աղջիկ է պետք:

— Մայրիկս էլ հաճելի ձայն ունի:

— Ինչ խոսք, բայց մայրիկդ քեզ նման ինը տարեկան չէ, իսկ պիեսում ինը տարեկան աղջիկ է: Մտածիր առաժիս մասին, հա՞:

— Կամտածեմ, սրբ:

է՛, չէ մի: Ինձանից ի՞նչ դերասանուհի:

## ԵՐԱՋԻ ՄԵՋ, ԹԵ ԱՐԹՈՒՆ

Ես կարդացի «Երազի մեջ, թե արթուն» գրքի ոտանավորները, բայց գլուխս ոչ մի բառ չմտալ, սկսեցի ուղղակի էջերը բացել ու նկարների տեղ նայել: Հետո գիրքը փակեցի, դրի հասուակին, մտա վերամտկի տակ, ոնց որ գիշերը քնելիս ու կնքան նայեցի առաւտաղին, մինչև առաստաղը կամաց-կու մաց կորավ:

Երազիս մեջ մայրիկը պատրաստվում էր հյուր գնալ ու հանկարծ միտքը փոխեց, որոշեց նյու Յորք մեկնել, ինձ էլ հետը տանել: Մենք նստեցինք «Իռլանդիայի աստղն» ու թռանք նյու Յորք, հետո տաքսիով եկանք «Պիեո», տեղավորվեցինք 2109-րդ սենյակում, լողացանք, մի լավ նախաճաշեցինք ու հեռախոսով դեսուդեն էինք զանգում: Ինչ որ արել էինք, նույն ձևով տեսա, միայն թե երազում, տեղս հանգիստ պառկած, ոչ թե իսկական:

Քիչ հետո երազս վերջացավ, բայց ինքնաթիռը դեռ օրորվում էր ու դժժում, ես էլ շատ էի ուզում, որ նրա դժժոցը կտրվի, իսկ դժժոցը չէր կտրվում: Անընդհատ ինքնաթիռում էի, հետո տաքսիով գալիս, հայտնվում էի 2109-րդ սենյակում, հետո էլի նույնը, մինչև որ դուռն բացվելու ձայնը լսեցի ու արթնացա, տեսնեմ՝ Աղջիկ մայրիկը:

— Ի՞նչ է եղել, Գորտուկ: Կարմրել, վառվում ես:

Նա վազեց ինձ մոտ ու ձեռքը դրեց ճակատիս, հետո վազելով գնաց լողասենյակ, ջերմաչափը ձեռքին վազելով եկավ, դրեց թևիս տակ, շտապ մոտեցավ հեռախոսին ու ինչ-որ մեկին բժշկի մասին հարցրեց, հետո էլ բժշկի հետ խոսեց, ջերմաչափը հանեց թևիս տակից, նայեց ու հեռախոսով բժշկին ասաց.

— Ջերմությունը երեսունինը աստիճան է:

Աղջիկ մայրիկը մի քիչ էլ խոսեց, հետո լսեց, լսեց, վերջապես լսափողը դրեց, եկավ, ինձ մոտ նստեց ու ձեռքերս առավ իր ամբի մեջ, ես էլ ասացի.

— Աղջիկ մայրիկ, ախր հիվանդ չեմ:

— Չէ, հիվանդ ես,— ասաց Աղջիկ մայրիկը:— Բայց հիմա բժիշկը կգա ու քեզ կլավացնի:

— Ես հիվանդ չեմ: Ուղղակի չգիտեմ ինչ անեմ, որ ինքնաթիւոր կանգնի: Անընդհատ դժժում է ու դժժում:

— Որտե՞ղ:

— Ականջներիս մեջ: Ես հասկանում եմ, որ էստեղ եմ, ինքնաթիւ-  
ռում չեմ, բայց դժժոցը չի կտրվում:

— Բժիշկը դեղ կտա, կանցնի: Ես ամեն ինչ կհետաձգեմ ու ամբողջ  
երեկո կողքիդ կնստեմ:

— Չէ, մայրիկ, ես չեմ ուզում, որ դու ամեն ինչ հետաձգես:

— Դե, դա արդեն քո ուզելով չի, որոշողը ես եմ: Իսկ հիմա հան-  
գիստ պառկիր ու ոչ մի բանի մասին չմտածես:

Հեռախոսը զնգաց, էլի Գլեդիս Դյուբարին էր: Աղջիկ մայրիկը սկսեց  
սրան պատմել, թե միտք Մաքքելիի հետ ճաշն ինչպես է անցել:

— Նա ինձ համար դեր չունի,— ասաց Աղջիկ մայրիկը,— բայց  
Բզեզին հանդիպելու ցանկություն հայտնեց... Չայնը հավանել է և ուզում  
է տեսնել, թե նա հարմա՞ր է պիեսի փոքրիկ աղջկա դերին... Է՛հ, չեմ  
հասկանում: Ես եկել, հասել եմ էստեղ, որ ի՛նքս բեմ բարձրանամ, ոչ  
թե աղջկաս բարձրացնեմ... Չեմ սիրում, որ երեխաները բեմ են դուրս  
դալիս: Եվ հետո՝ նա ջերմություն ունի... Երեսունինը աստիճան է, բայց  
ասում է՝ հիվանդ չեմ... Դե, երեխաներին գիտես: Ամեն ինչում էլ մե-  
ծերից լավն են, նույնիսկ հիվանդանալիս... Չէ, չէ, պետք չի, որ բժրշ-  
կիդ ուղարկես, ես արդեն բժիշկ կանչել եմ... Հա, իհարկե, քոնը արտա-  
կարգ կլինի, բայց կարիք չկա նրան ուղարկել...

— Թող ուղարկի,— ասացի ես:— Ուզում եմ Գլեդիս Դյուբարիի  
բժշկին տեսնել:

— Ասում է՝ կուզենար բժշկիդ տեսնել,— հայտնեց Աղջիկ մայրի-  
կը:— Բայց մի ըոպե ինձ լսիր, Գլեդիս, նա ուղղակի ջերմություն ունի,  
թե չէ իրեն լավ է զգում, իրոք լավ է զգում, ու ես չէի ուզի, որ ավե-  
լորդ իրարանցում գցենք... Ճիշտ է, շարժի վտանգը անտեսել, բայց  
համոզված եմ, որ ոչ մի լուրջ բան չկա... Ինչո՞ւ պիտի մանկական  
կաթված լինի... Լսիր, նրան պարզապես հանգստանալ է պետք... Բժշկի  
գնալուց հետո կզանգեմ:

— Մանկական կաթված,— ասացի:— Վա՛յ, Աղջիկ մայրիկ, ուրե-  
մըն ես կմեռնե՞մ:

— Տես ինչ եմ ասում,— վրա բերեց Աղջիկ մայրիկը:— Գլեդիս  
Դյուբարին սիրում է ամեն ինչ շափազանցել: Ամբողջ կյանքում դրա-

նով է զբաղված: Դեռ երեխա ժամանակվանից է էղպես: Չէ, դու ոչ մի կաթված էլ չես ստացել ու մի վախենա չես մեռնի: Գլեդիսը ինքն է կաթված ստացել, ուղեղի կաթված, ուրիշ ոչինչ: Նա միշտ ուզում է առատաձեռն ու մեծահոգի երևալ, իսկ դա ահավոր ձանձրալի է: Կարծես աշխարհում իր բժիշկն է, որ կա, ինչ է թե՛ հանգստացնող դեղ-մեղ է տալիս, երբ նրա հիստերիկ նոպան բռնում է, իսկ նա տարին տասնհերկու ամիս նոպայի մեջ է: Դե լավ, հանգիստ պառկիր ու մոռացիր, որ հիվանդ ես:

— Հիվանդ չեմ,— ասաց:— Դու ես անընդհատ կրկնում, թե հիվանդ եմ:

— Ինքնաթիռի դժոնցը դեռ չի՞ կտրվել:

— Մի քիչ:

— Հենց որ լրիվ կտրվի, ուրեմն էլ հիվանդ չես:

— Բա ո՞նց անենք, որ կտրվի, Աղջիկ մայրիկ:

— Բժիշկը քեզ քնաբեր կտա, մուշ-մուշ կքնես ու չես էլ իմանա, թե ոնց կտրվեց:

Բժիշկը մի պատլիկ ծերուկ էր, պատլիկ ձեռքեր ունի ու պատլիկ ժպիտ: Սկզբում նայեց երեսիս, ժպտաց, հետո ինձ հետ խոսեց, հետո էլ՝ Աղջիկ մայրիկի հետ ու ասաց.

— Նա լարվել է ու հոգնել:

— Չե՞ք ուզում ջերմությունը շափել:

— Հարկ չկա,— ասաց բժիշկը,— բայց ամեն դեպքում, եկեք շափենք: Կարծում եմ, քիչ թե շատ իջած կլինի:

Ջերմությունս արդեն երեսունյոթ էր դարձել, ուրեմն՝ իջել էր հրկու աստիճան. արի ու մի զարմացիր:

— Անվերջ ինքնաթիռի դժոնցն է լսում,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Հասկանալի է,— ասաց բժիշկը:— Դե, մի կես ասպիրին տվեք, կեսն էլ ավելի ուշ կտաք:

— Կես ասպիրին: Ընդամենը:

— Նա պարզապես հոգնած է ու հուզված:

— Ես էլ կարծում էի մի հանգստացնող դեղ կտաք:

— Կես ասպիրինը հենց հանգստացնող դեղ է: Նա շատ պինդ աղջիկ է, ոսկորներն ու մկանները՝ ամուր, հռանդն էլ՝ տեղը:

— Վատ է ուտում:

— Դե, ուտելը ձանձրալի գործ է:

— Օ՛, իզուր եք այդպես ասում,— վրա բերեց Աղջիկ մայրիկը:— Հիմա հոգիս դուրս կգա, մինչև ստիպեմ, որ մի բան ուտի:



— Մի անհանգստացիք, սիրելիս,— ասաց բժիշկը։— Իսկապես, Շատ պինդ աղջիկ է։ Եվ արդեն գրեթե լավ է. այ, հիմա մեզ է լսում, ոչ թե ինքնաթիռի դժոնցը։ Ինչո՞ւ չեք ներքևից մի ռադիո բերել տալիս, որ նա որևէ մեղմ երաժշտություն լսի, կամ, ավելի շուտ, ինչո՞ւ չեք ինքներդ նրա համար հրգում։

— Ե՞ս։

— Իհարկե։ Շատ կամացուկ։ Նա սյլևս ինքնաթիռի դժոնցը չի լսի։

— Եվ ուրիշ ոչի՞նչ։

— Դե, եթե քնի, հիանալի կլինի։ Զգուշացրեք, որ հեռախոսավարուհին ձեզ ոչ մեկի հետ չմիացնի։ Կամացուկ կերգեք, մինչև նա քնի։ Երբ որ արթնանա, ջերմությունը մի անգամ էլ չափեք։ Եթե նորմալ լինի, թող հագնվի, և գնացեք զբոսայգի։ Ձեր սենյակը շատ է փոքր ու նեղլիկ, ինքնաթիռի ներսն է հիշեցնում։

— Իսկ ի՞նչ հրգեմ,— ասաց Աղջիկ մայրիկը։— Ես մանկական երգեր համարյա չգիտեմ։

— Օ՛հ, պարտադիր չէ, որ մանկական լինեն,— ասաց բժիշկը։

Նա ասպիրինը հրկու կես արեց ու մի կեսը բերանս դրեց, Աղջիկ մայրիկն էլ մի բաժակ ջուր տվեց, ես դեղը խմեցի, իսկ աստիկ բժիշկը հրեսս շոյեց, ժպտաց ու ասաց.

— Օրո՞ր, օրո՞ր, իմ բալիկ։

Նա շերգեց, ուղղակի ասաց, իսկ հետո ավելացրեց.

— Ես ինքս եմ հաճախ ցանկություն ունենում, որ մեկնումեկը գոնե հրքեմն ինձ օրոր ասի։

Աղջիկ մայրիկը էնպես նայեց նրան, կարծես թե նա շատ տարօրինակ մարդ էր, հետո պայուսակը բացեց ու իր դրամապանակը հանեց.

— Ինչքա՞ն պիտի ձեզ վճարեմ, բժիշկ։

— Էէ՛հ, սիրելիս,— ասաց բժիշկը։

— Ոչ, ոչ,— ասաց Աղջիկ մայրիկը։— Բժշկին պետք է վարձատրել նրա աշխատանքի դիմաց։

— Դե որ այդպես է, մի դուլար,— ասաց բժիշկը, ու Աղջիկ մայրիկը նրան մի դուլար տվեց։

— Իսկ դու,— ասաց բժիշկը ինձ,— բոլորովին էլ հիվանդ չես, լավ իմանաս։

— Գիտեմ։

Աղջիկ մայրիկը բժշկին մինչև դուռն ուղեկցեց։ Նրանք մի քիչ է.

խոսեցին, հետո բժիշկը գնաց, իսկ Աղջիկ մայրիկը եկավ, նստեց կողքիս, սկսեց երգել:

Նա իր սիրած երգն էր երգում: Խոսքերն էլ սրանք էին. «Ժամանակը դանդաղ է սահում, բայց ժամանակն է ամեն ինչ փոխում...»: Որտեղ որ նա բառերը շէր հիշում, ուղղակի մոմսում էր, ու ես մտածում էի՝ ի՞նչ լավ է էսպես: Ես մտածում էի, որ Աղջիկ մայրիկը ամենալավն է աշխարհում: Մտածում էի, որ ամբողջ աշխարհն էլ լավն է: Հետո հեռախոսը զնգաց, Աղջիկ մայրիկն արագ ու կամացուկ խոսեց, իսկ հետո լսափողը դրեց, էլի եկավ, նստեց ու էլի սկսեց երգել:

Կյանքումս սրանից լավ երբեք չէի եղել:

## ԵՐԿՈՒՍՈՎ

Ես Աղջիկ մայրիկի անուշ հոտն առա, ու բունս տարավ: Աղջիկ մայրիկից միշտ նույն հոտն է գալիս, նույն հարազատ հոտը, մի քիչ էլ բուրավետ օժանելիքի, ծխի ու իր շորերի հոտը:

Նա անընդհատ երգում էր ու երգում, մեկ բառերով, մեկ առանց բառերի, հետո էլ քնիս մեջ զգացի, որ պառկում է կողքիս: Կարծես լսեցի՝ ինչ-որ բան ասաց, հետո համբուրեց ինձ ու պինդ գրկեց:

Ա՛յ թե լավ էր, շտեմնված:

Մենք հրկար մնացինք էդպես, իսկ հետո ես ամեն ինչ մոռացա, բայց գիտեի, որ հիվանդ չեմ, ուրախ եմ ու շտեմնված լավ:

Հետո ցածր ձայներ լսեցի ու աչքերս բացի արի, տեսնեմ՝ Աղջիկ մայրիկը, Գլեդիս Դյուրարին ու նրա բժիշկը:

Գլեդիսի վրայից խեղույն երևում էր, որ նա հարուստ է: Ինչքան ասես հարուստ: Նա շատ նիհար էր, Աղջիկ մայրիկի պես չէր: Իսկը չոր տախտակ կամ էլ թանկ շորերի կախի: Նրա մազերը տղայավարի կրտսրած էին, ու կուրծքն էլ ոնց որ տղայի լիներ: Նա զիլ ու հուզված ձայնով, արագ-արագ խոսում էր:

— Վա՛հ, չեմ հասկանում,— վրա էր տալիս:— Էստեղ նույնիսկ կանգնելու տեղ չկա, ինչ մնաց, թե նստես: Չէ, ես հենց հիմա վարիչի հետ կխոսեմ, որ ձեզ տեղափոխեն վերնահարկի շքեղ համարներից մեկը: Սա հիմարությունն է: Էսպիսի խցում ապրել չի լինի: Ես թույլ չեմ տա, որ իմ բարեկամների հետ նման ձևով վարվեն:

— Սպասիր մի րոպե,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ես ինքս եմ այս սենյակը վերցրել:

— Բայց ինչի՞ համար, ի սեր աստծո:

— Վարձը երեք դոլար է, ոչ թե քսան կամ երեսուն, այ, դրա համար:

— Վա՛յ, ինչ հիմարութուն: Քեզ ինչքա՞ն է պետք:

— Մի միլիոն,— ասացի ես, և Գլեդիսը շրջվեց ու ճչաց.

— Ախ, Բզե՛զ: Շատ ուրախ եմ, որ Աղջիկ մայրիկի հետ եկել ես Նյու Յորք, ես քո պատվին հրավերք եմ կազմակերպելու պարտեզում: Նա մոտեցավ ինձ, գրկեց ու համբուրեց, ու ես զգացի նրա հոտը: Դե, Գլեդիսի վրայից էլ է լավ հոտ գալիս, ճիշտ է, բայց Աղջիկ մայրիկի անուշ հոտը չի, ասեմ ձեզ: Չգիտեմ ինչ է: Նրա վրայից ամեն լավ հոտ էլ գալիս է, բացի Աղջիկ մայրիկի հարազատ հոտից: Հա, նրա թանկերը, թանկ շորերը, ադամանդներն ու սուտակները լավ հոտ ունեն, բայց Աղջիկ մայրիկից եկող հոտն ուրիշ է:

Բժիշկը բռնեց Աղջիկ մայրիկի ձեռքը, իսկ Աղջիկ մայրիկը նայեց բժշկին, հետո՝ Գլեդիսին, սա գլխով արեց, ու ես էլ նայեցի բժշկին: Նա բարձրահասակ էր ու գեղեցիկ, բայց նրան էլ էր ինչ-որ բան պակասում:

— Իմ զարկերա՞կն ինչու եք ստուգում,— հարցրեց մայրիկը:

— Գլեդիսն ասաց, որ դուք հիվանդ եք:

— Օ՛, հիվանդը ես չեմ: Աղջիկս է: Բայց նա արդեն լավացել ե՞լէ՞, Գորտուկ:

— Լրիվ,— ասացի ես:

— Համարյա մի ժամ քնել է,— ասաց մայրիկն ու ձեռքը հետ քաշեց:

— Իմ կարծիքով, հարկավոր է ձե՛ր ջերմութունը շափել,— ասաց բժիշկը:

Նա ջերմաչափը դրեց Աղջիկ մայրիկի թևի տակ, իսկ քիչ հետո հանեց ու ջերմաչափին նայելով ասաց.

— Այգպես էլ կարծում էի: Մոտ երեսունութ աստիճան է: Է՛հ, ձե՛զ ինչ է պատահել:

— Լա՛վ է,— ասաց Աղջիկ մայրիկը:— Բժիշկը դուք եք, ի՞նչ էջ հարցնում: Ես գաղափար չունեմ:

— Շատ բարի,— ասաց բժիշկը:— Անմիջապես՝ անկողին, լիակատար հանգիստ ու քուն:

— Անկողի՞ն. էստե՞զ,— ճչաց Գլեդիսը:— Երկուսով պիտի պառկեն այս հավաքաբարի անկողնո՞ւմ:

— Օօ՛հ, քեզ քիչ երևակայիր,— ասաց մայրիկը:— Ես եկել եմ

Նյու Յորք բեմում խաղալու, ոչ թե ճոխ անկողիններում քնելու: Քոնը հաստատ արքայական է, չէ՞:

— Իհարկե,— ասաց Գլեդիսը:— Դու պետք է հենց հիմա աղջկադ վերցնես ու այս պահարանի պես խցից իսկույն կեթ դուրս գաս:

— Վերջ տուր,— առաց մայրիկը:— Նյու Յորքում սա է իմ տունը, և խնդրում եմ շնորհակալ, որ ես քեզ չեմ հրավիրել էստեղ: Հույս ունեմ Նյու Յորքով մեկ լուրը չես տարածի: Ես «Պիեռում» եմ ապրում, վերջապակ գնաց:

Դուռը զանդեցին. միջանցքի սպասավորն էր՝ ձեռքին էլ մի փաթեթ ինձ համար: Փաթեթի միջից տիկնիկ դուրս եկավ, մի պատլիկ հնդկուհի, կրնկի տակ տպված. «Գինը՝ 1 դոլար»: Մի բացիկ էլ կար, գրված էր. «Քաղցր ու անուշիկ աղջկան»: Իմ բժշկից էր:

Գլեդիսն ու մայրիկը խոսում էին ու վիճում, Գլեդիսը անընդհատ ճշում էր, մեր սենյակում նոր-նոր թերություններ գտնում ու փող առաջարկում, բայց մայրիկը հրաժարվում էր, իսկ հետո, վերջապես, Գլեդիսն ու նրա բժիշկը գնացին:

Աղջիկ մայրիկը հյուրանոցի հեռախոսավարուհուն պատվիրեց, որ ոչ մեկի հետ մեղ շմխացնի, հետո եկավ, էլի կողքս պռկեց, էլի գրկեց ինձ, ականջիս քնքուշ խոսքեր շնչաց, ծիծաղեց ու ասաց.

— Ա՛հ, Գորտուկ, սկզբում դու ջերմություն ունեիր, հիմա էլ՝ ես, երևի մեռնում ենք:

— Մեռնում ենք՝ մեռնենք,— ասացի ես:— Ինձ դուր է գալիս:

Քիչ հետո Աղջիկ մայրիկը քնեց, իսկ ես նայում էի նրան ու լսում, թե ոնց է շնչում:

Արդեն հանգիստ էի, շատ լավ: Ականջ էի դնում մեքենաների խուլ ազդանշաններին ու մյուս ձայներին. փողոցի աղմուկին, երթևեկությունը կարգավորող ոստիկանների սուլոցներին, բայց ինքնաթիռի դժոցն էլ չէր լսում, չէ:

Գործում էի նորից լսել, բայց չէր ստացվում, ուղղակի հիշում էի, թե ոնց էր դժոցը լսվում, ու ես ինչ էի զգում, բայց չէր ստացվում, որ ինձ առաջվա տես զգամ:

էլ չէր ստացվում, որ ինձ լավ շղգամ:

Մայրիկը կողքիս պռկած քնել էր: Իսկ ես արթուն էի, ու մենք երկուսով էինք՝ մայրիկը ու ես:

Մենք երկուսս էինք ու ամբողջ աշխարհը: Մի մեծ, փափուկ մայրիկ ու մի փոքր, լղարիկ աղջիկ, ու ես սիրում էի մայրիկիս: Սիրում էի նրա ամեն ինչը. նույնիսկ վրայից մի քիչ եկող սիգարետի հոտը, որ սո-

վորաբար ինձ դուր չէր գալիս: Ես նայում էի նրան, շնչում մայրիկի անուշ հոտն ու սիրում նրան: Ես շոյում ու սիրում էի նրան: Հենց որ մատնեիս դրի շրթունքներին, մայրիկը քնի մեջ մի թեթև ժպտաց, իսկ հետո ձեռքը դանդաղ բարձրացրեց ու իմ ձեռքը բռնեց, ու ես հասկացա, որ նա պինդ քնած է, բայց մեկ է, գիտի՝ իր կողքինը ես եմ:

Վեր կացա անկողնուց, որովհետև արդեն շոգ էր. ու սկսեցի ման գալ 2109-րդ սենյակում՝ Նյու Յորքի մեր տանը, որի վրա Գլեդիս Դյուբարին էդպես քիթը տնկեց, բայց նա ի՞նչ է հասկանում: Գիտի՞ ինչ բան է, հրբ վեց միլիոն դոլարի փոխարեն ընդամենը վեց դոլար ունեւ, կամ վաթսուն, կամ էլ ամենաշատը՝ վեց հարյուր:

Չէ, իրոք որ սենյակը նեղ էր: Բայց ինձ դուր էր գալիս: Սենյակի ամեն ինչն էլ ինձ դուր էր գալիս, որովհետև Աղջիկ մայրիկն ու ես էստեղ միասին էինք, իրար մոտի՛կ-մոտիկ: Հետո ես գնացի, դուռն էլ բացեցի, որ տեսնեմ դրսում ինչ կա. պարզ է, միջանցքն էր: Մի քանի քայլ արի միջանցքում ու հանկարծ լսեցի, որ դուռը շրկոցով փակվեց: Վազեցի դուռն մոտ, ներսից փակվել էր. էլ ո՞նց սենյակ մտնեի: Չէի ուզում Աղջիկ մայրիկին արթնացնել, բայց դե մի բան պիտի անեի: Մըտքովս չէր անցնում, թե դուռը կփակվի: Լսեցի, որ վերելակը մեր հարկում կանգնեց: Հետո լսեցի, որ բացվեց: Ոտնաձայներ եկան, ու ես ամոթից մեռա, բայց թաքնվելու տեղ չկար: Քիչ հետո փաթեթներով բեռնված մի շատ բարձրահասակ լեդի երևաց ու ինձ տեսնելով ասաց.

— Դեռատի օրիորդ, չե՞ք օգնի այս փաթեթները տունել, Լս ձեզ թեյ կհյուրասիրեի:

— Խնդրեմ, մեմ:

Ես ձգվեցի ու փոքրիկ փաթեթներից մի շորս հատ վերցրի: Մենք քայլեցինք մինչև միջանցքի ծայրը, լեդին բանալիով փականքը բացեց, հետո դուռը հրեց, ու մենք մտանք ներս: Նա փաթեթները լցրեց մի ցածիկ, ապակե սեղանի վրա, ես էլ նույնն արի: Նա նստեց, խոր շունչ քաշեց, իսկ հետո ասաց.

— Դե, հիմա սպասիր քեզ կարգին նայեմ:

Ինձ ոտից գլուխ նայեց ու ասաց.

— Շրջվիր, խնդրեմ:

Ես շրջվեցի, նա էլ ասաց.

— Սարսափելի նիհար ես, բայց քո մեջ մի բան կա, որ ինձ դուր է գալիս: Իսկ իմ մեջ մի բան կա՞, որ քեզ դուր է գալիս:

Ես ասացի՝ այո, լեդին էլ վրա բերեց.

— Այ, դա լավ է, դու հետաքրքրութունս շարժեցիր... դե՛, ինձ մի սպասեցրու, ասա տեսնենք՝ ինչը:

— Չգիտեմ, — ասացի ես:

— Ահա՛, մեծերն էլ են այդպես, միայն թե ընդհակառակը. ես նրանց դուր չեմ գալիս, բայց ինչու՞ չգիտեն: Որտե՞ղ ես ապրում:

— Մաքրրոնի Լեյնի թիվ 1001 տանը, Փասիֆիք Փալիտեյդսում:

— Իսկ ինչպե՞ս ես հասել այստեղ:

— Ինքնաթիռով:

— Հայրդ ո՞ւր է:

— Փարիզում:

— Իսկ մա՞յրդ:

— 2109-րդ համարում:

— Դա միջանցքի մյուս կողմի փոքրիկ սենյակը չէ՞:

— Այո:

Լեդին մի պահ մտածեց ու ասաց.

— Հիմա գիտե՞ս ինչ... արի թեյե՛նք:

— Լավ:

## ՄԱՐԴ ԻՐ ՀԱՄԱՐ ԹԵՅ Է ԽՄՈՒՄ, ԻՍԿ ՆՐԱՆ ՈՒԶՈՒՄ ԵՆ ԲՈՆԵԼ

Բարձրահասակ Լեդին թեյնիկ էլ ունի, մատուցարան էլ, շաքարաման ու սերաման էլ. մի ամբողջ արծաթե սպասք՝ վրան վաղդեր ու տերևներ փորագրված և նուրբ, համարյա թափանցիկ բաժակներ՝ իրենց պնակնեղով:

Նա թունդ թեյ էր խմում, առանց շաքարի, ընդամենը կիտրոնի մի բարալիկ շերտով, որը կեղևի հետ կերավ:

Ինձ համար էլ բաժակի մեջ մի քիչ թեյ լցրեց, հետո՝ բերնեբերան սերուցքը: Վա՛յ, ինչ համով էր: Հազար անգամ համով, քան թե սերուցքն առանձին, իսկ դա իմ շսիրած բաներից մեկն է: Նա մի ափսե լիքը ամեն տեսակ խանութի թխվածքների ունի կամ իր ասածի պես՝ բլիթներ, հետո ինչ-որ հայտնի հրուշակարանից հենց նոր բերած տորթ, խորիզի մեջ՝ ռոմ: Ինքը տորթից մի փոքրիկ կտոր կերավ, մի կտոր էլ ինձ տվեց:

Թեյը լավն էր, թխվածքներից մի քանիսն էլ, բայց ինձ ամենից շատ ռոմով տորթը դուր եկավ: Համը մի տեսակ խոնավ ու սառն էր:

Ս հնք ուտում էինք ու թեյում, իսկ Լեդին ինձ հետ էնպես էր խոսում,

կարծես ինքն էլ է իմ տարիքին, ու մենք ուղղակի խաղում ենք միասին, խաղալիք սպասքով իբր թեյ խմում: Ծս նկատեցի, որ նա Գեորգիա Շլամբի նման է խոսում, հետո նկատեցի, որ «Պիեռի» ամենաբնատի Տամարներից մեկում ենք, ու հստեղի կահույքը երևի լեզին է հետք բերել, կաշկա հենց նրա սեփականն է, մանավանդ պատերի սիրուն նկարները, որովհետև դրանցից երկուսում ինքն էր, մյուս երկուսում՝ հրեխաներ, էնպես որ պարզ էր՝ նա իմ թայը չի, կարևոր լեզի է: Բայց շատ դուրեկան էր, ամենադուրեկանը բոլոր մարդկանցից, ում որ կյանքումս տեսել եմ ու նույնիսկ ում մասին կյանքումս լսել եմ:

Մենք անդադար խոսում էինք, թեյներս խմում, տորթ ու բլիթներ ուտում, ծիծաղում, ու ժամանակն անցնում էր: Աղջիկ մայրիկը պինդ քնած էր, իսկ նա պետք է անպայման քներ: Ծս արդեն լավացել էի: Երբ որ ուզեի, մի րոպեում 2109-րդ սենյակը կհասնեի, դրա համար էլ զնալու մասին շատ շէի մտածում: Բայց ավելի լավ էր մտածել:

Պատկերացնում եմ՝ ոնց է Աղջիկ մայրիկը արթնացել: Թե ինչից՝ չգիտեմ: Միգուցե զգացել է, որ ես սենյակում չեմ: Թեպետ սկզբում հրևի մտածել է, թե ես թաքնված եմ, որովհետև մենք հաճախ ենք էդպես պահմտոցի խաղում, մեկ ես եմ թաքնվում, մեկ նա, իսկ հետո իրար փնտրում ենք ու գտնում: Դե, նա երևի անկողնուց վեր չի կացել, հենց պռկած տեղն էլ սկսել է խոսել՝ կարծելով, թե ես լսում եմ իրեն, բայց ես, իհարկե, ո՞նց պիտի լսեի, եթե էնտեղ չէի. միջանցքի մյուս ծայրի սենյակում, բարձրահասակ լեզիի հետ թեյում էի ու ռոմով տորթ ուտում: Երևի Աղջիկ մայրիկն ասել է, որ դուրս գամ թաքստոցից՝ պահարանի միջից կամ լողասենյակից, մահճակալի տակից կամ էլ գրասեղանի հետևից, մի խոսքով, չգիտես որտեղից, բայց ես դուրս չեմ եկել: Աղջիկ մայրիկը վեր է կացել անկողնուց ու ինձ ամենուրեք փրնտրել, բայց պարզ բան է՝ չի գտել: Ահն ընկել է սիրար: Խնդրել է, որ էլ թաքնված չմնամ, ի՞նչ կլինի դուրս գամ, հետո պատահաբար նայել է լուսամուտին, տեսել, որ բաց է օդափոխության համար, ճիշտ է, ոչ լրիվ, բայց դե կիսով չափ, ու ճշացել է, գժի պես իրեն պատեպատ տվել: Հետո մի կերպ խելքը գլուխն է հավաքել, զանգել է հյուրանոցի վարիչին ու հանգիստ ձայնով հղածը պատմել: Վարիչը իր օգնականին է ասել, օգնականը՝ մյուս ծառայողներին, սրանք էլ՝ միջանցքի սպասավորներին, ու բոլորը սկսել են ինձ փնտրել: Վարիչը անձամբ դուրս է եկել փողոց, որ շորս կողմը նայի, իսկ էնտեղ, իհարկե, ամեն բան նույնն է եղել, ինչ կա: Նա Աղջիկ մայրիկին ասել է, թե հյուրանոցում վաղուց է ւշխատում, բայց ոչ ոք մայրիկի պես իրեն չի վախեցրել:

Ասել է՝ «Պիեռ» հյուրանոցում փոքրիկ աղջիկները լուսամուտից երբեք ցած չեն ընկնում:

Ես դեռ թեյ էի խմում ու ռոմով տորթ ուտում, երբ միջանցքից ոտքերի թփթփոց լսվեց, բայց մտքովս չէր անցնում, թե ես դրա հետ կապ ունեմ: Այնինչ լավ էլ ունեի: Դու մի ասա՝ գնացող-եկողները միջանցքի սպասավորներն են ու հյուրանոցի խուզարկուները, մեկը՝ տղամարդ, մյուսը՝ կին: Նախ և առաջ նրանք 2109-րդ համարն էին գնացել ու Աղջիկ մայրիկին ամեն ինչ հարցուփորձ արել, նա էլ նկարս էր ցույց տվել, իսկ հետո սրանք սկսել էին ման գալ միջանցքներում: Որոշել էին ինձ բռնել:

Վերջապես կին խուզարկուն բարձրահասակ լեզիի դռան զանգն էր սեղմել: Լեզին ինձ խնդրեց, որ տեսնեմ ով է, ես էլ գնացի, դուռը բաց արի, բայց հենց դուռը բացվեց, կին խուզարկուն կանգնած տեղը ցատկեց ու մի ծիծաղելի ձայն հանեց, իսկ լեզին ասաց.

— Դե՛, ո՞վ է:

Կին խուզարկուն ասաց, թե ինքը ով է, բարձրահասակ լեզին էլ ջղայնացավ.

— Բայց ի՞նչ նպատակով եք իմ դուռը զանգում:

— 2109-րդ համարից մի փոքրիկ աղջիկ է կորել:

— Ո՞վ է ասում:

— Նրա մայրը:

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ,— ասացի ես,— լավ կլինի գնամ:

Ժամանակ էլ չեղավ, որ քաղաքավարի շնորհակալություն հայտնեմ ու ասեմ՝ ցտեսություն: Կին խուզարկուի կողքով ծլկեցի ու մի բոպե շանցած՝ մեր դռան մոտ էի: Բայց դուռը փակ էր: Ուզում էի ինչքան կարելի է շուտ ներս ընկնել, որովհետև շորս կողմը սպասավորներ էին գնում-գալիս, իսկ իմ հագին վարդագույն գիշերանոցիցս բացի ուրիշ բան չկար, գիշերանոցս էլ շատ էր թափանցիկ: Արագ-արագ դուռը ծեծեցի ու ձայն տվի.

— Աղջի՛կ մայրիկ:

Դուռն իսկույն բացվեց, կարծես պայթեցրին: Աղջիկ մայրիկը վրաս մի հայացք դցեց ու էնպես ծանր հառաչեց, կարծես նրա շնչած օդը լրիվ դուրս եկավ: Նա ոչ մի բառ չասաց: Ուղղակի հետ դարձավ ու նորից աշտակեց անկողնում: Ես ներս մտա, դուռը իմ հետևից փակեցի ու մոտեցա նրան, ասացի՝ ներողություն եմ խնդրում, իսկ նա ասաց, որ ես չսկսեմ է գնայի, որ մահու շափ վախեցրել եմ իրեն ու հիմա բարի լինե՛ս, ինքս զանգեմ հյուրանոցի վարիչին և հայտնեմ, որ ինձ արդեն գտել



են, ու ես մայրիկիս հետ մեր սենյակում եմ. դե ինչ, նրա սասածով էլ արի:

Հետո Աղջիկ մայրիկը ոտից գլուխ փախաթվեց վերմակով:

Ես շատ տխրեցի դրա համար, որովհետև երբ նա էղպես փաթաթվում է, ուրեմն տրամադրությունն ընկած է, իսկ նրա սրամադրությունը հենց իմ պատճառով էր ընկել: Ասացի.

— Լա՛վ, Աղջիկ մայրիկ, ի՞նչ կլինի, որ տրամադրությունդ չզրցես, խնդրում եմ, երեսդ մի ծածկիր, ինձ ներիր:

Բայց Աղջիկ մայրիկը դուրս շեկավ վերմակի տակից: Նա ինչ-որ բան փնթփնթաց, կարգին շտեցի:

— Ինչ սասացի՞ր, Աղջիկ մայրիկ:

— Ասացի, որ դու ինձ սարսափելի հիմար վիճակի մեջ դրիր:

— Զէ, չէ, Աղջիկ մայրիկ, իսկի էլ չեմ դրել: Ի՞նչ կլինի, երեսդ բացիր:

— Զէ՛: Փրփրած եմ: Քեզ վրա եմ փրփրել: Հո՛րդ վրա: Դաշտապահ Փիթեր Բոլի՛վիայի վրա: Կլարա Քուլբոյի ու Գլեդիս Դյուբարիի՛ վրա, բայց ամենից շատ՝ Վիոլա մայրիկի՛, որովհետև եթե նա ժամանակին գար, ևս Նյու Յորք չէի հասնի, իսկ հիմա, երբ Նյու Յորքում եմ, երանի եմ տալիս, որ Կալիֆոռնիայում լինեի:

— Վայ, չէ՛, սա աշխարհի ամենալավ տեղն է:

— Ոչ, ամենավա՛տն է: Երանի մեռնեի:

— Է՛, Աղջիկ մայրիկ, էղպես մի ասա, էլի, փորձանք կուլատա՞ի: ՄԼԿ էլ տեսար՝ սստված ձայնդ լսեց, հավատաց խոսքերիդ ու քեզ իր մոտ տարավ՝ երկինք. բա ես ի՞նչ կանեմ:

— Կմնաս «Պիեռի» քսանմեկերորդ հարկի միջանցքում՝ անսերանտիրական, — ասաց Աղջիկ մայրիկը. — Ախր ինչո՞ւ էղպիսի հիմար բան արիր:

— Դե լա՛վ, խնդրում եմ, երեսդ բացիր:

— Զէ: Փրփրած եմ: Գնա:

— Ո՞ւր գնամ:

— Փարիզ: Հորդ մոտ: Բայց շհամարձակվես գիշերանոցով գնալու Բաժանված մորն առանց այդ էլ խեթ աչքով են նայում: Մարդիկ կասեն՝ քեզ ճիշտ չեմ դաստիարակել:

— Է՛հ, բայց դու ինձ ճիշտ ես դաստիարակում, չէ՞, Աղջիկ մայրիկ:

— Գլխովդ եմ երդվում՝ շատ ճիշտ, ու պատկերացրու՝ իմ հիվանդ տեղով:

— Դու դեռ հիվա՞նդ ես:

— Եան պես սատկում եմ: Այո, հիվանդ մեռնում: Մտտիցս ուղղա-  
կի արյուն է գնում:

— Ախր քեզ ի՞նչ է պատահել, Աղջիկ մայրիկ:

— Ես ձախորդի մեկն եմ: Աննշան մեկը: Լրիվ ոչնչություն:

— Դո՞ւ, Աղջիկ մայրիկ: Չէ, չէ: Դու հաջողակ ես: Դու ոչնչություն  
չես: Դու ամեն ինչ ես:

Աղջիկ մայրիկը հանկարծ երեսը բացեց ու ասաց.

— Դու իրո՞ք էդպես ես կարծում, Գորտուկ:

— Կարծո՞ւմ,— ասացի ես:— Ի՞նչ կարծել, գիտե՛մ: Դու ամբողջ  
աշխարհում ամենագեղեցիկն ու ամենահաջողակն ես:

— Հա՞, դե ուրեմն արի հագնվենք ու գնանք ման գալու:

— Ո՞ւր:

— Մի գոռա: Սա ձեր դպրոցը չի: «Պիեռ» հյուրանոցն է: Բաժան-  
ված մորն առանց այդ էլ խեթ աչքով են նայում:

— Դե լավ, կամաց «ուր»:

— Հա, Գորտուկ, կամաց ասա՛ «ուր»:

— Կամա՛ց-կամաց «ուր»:

— Այ, ապրես:

— Ամենակամա՛ց-կամաց «ուր»-ը:

— Հիանալի է:

Ես էնպես կամա՛ց-կամաց ասացի «ուր», որ Աղջիկ մայրիկը  
հարցրեց.

— Ինչ ասացի՞ր:

— Ո՞ւր:

— Հա, բայց կամաց, Գորտուկ: Դե՛, ի՞նչ հագնենք, միանման  
շորե՞ր:

— Ո՞ւր:

— Կամաց: Կապույտները շահնե՞նք՝ կարմիր ու սպիտակ ծաղիկ-  
ներով:

— Կամա՛ց «ուր»:

Մենք հագնվեցինք, արդեն լավացել էինք ու հանգստացել, իսկ  
Նյու Յորքում արդեն համարյա երեկո էր, ու մենք էլ՝ էստեղ: Երկուսս  
էլ էստեղ էինք, Նյու Յորք քաղաքում, ոչ թե Մաքրրոնի Լեյնի մեր տա-  
նը, Փասիֆիք Փալիսեյդսում:

Ո՞ւր:

Հենց մտանք վերելակ, որ հյուրանոցի նախասրահն իջնենք, վերելակավարը՝ մի հիսուն-վաթսուն տարեկան մարդ, կամ գուցեև յոթանասուն-ութսուն, ապշած նայեց մեզ, որովհետև Աղջիկ մայրիկը միշտ արտակարգ գեղեցիկ է, դե, երևի ես էլ կարգին տեսք ունեի:

Երբ հարկերից մեկում վերելակը կանգնեց, և մի տղամարդ ու կին ներս մտան, նրանք էլ նայեցին մեզ, հետո կինն իր ամուսնու ականջին ինչ-որ բան շնչաց: Ես ուշադիր հետևում էի նրանց, ու ինձ թվաց, թե տղամարդը ուզում է շուռ գալ ու էլի մեզ նայել, բայց սիրտ չի անում, իսկ հետո սրա փոխարեն կինը շուռ եկավ մի թեթև: Աղջիկ մայրիկը կարծես դրան էր սպասում, նա ուղիղ կնոջ երեսին նայեց, ինչպես միշտ, երբ մտքով անցնում է, թե դիմացինը դիտմամբ անկիրթ բան է անում: Աղջիկ մայրիկի ջղայնությունը չի գալիս, եթե մեկնումեկը պատահմամբ կամ առանց հասկանալու է անկիրթ բան անում, բայց եթե դա դիտմամբ են անում, շատ է փրփրում: Վերելակը նորից կանգնեց. հիմա էլ երկու տղամարդ ու երկու կին ներս մտան: Սրանք էնպես էին հրճված ծիծաղում, ոնց որ մի ուրախ տեղից դուրս եկած լինեին: Աղջիկ մայրիկին ու ինձ իսկույն նկատեցին և շատ սիրալիր վերաբերմունք ցույց տվին, թեպետ ոչ մի բառ չասացին ու շուռ շեկան, որ մի անգամ էլ նայեն, բայց նրանց փոխարեն, շնչացող կնոջ ամուսինը շրջվեց, էլի Աղջիկ մայրիկին նայեց, ու ես գլխի ընկա, որ Աղջիկ մայրիկը հիմա մի բան կասի, ձեռքը պինդ սեղմեցի, իսկ նա ցած նայեց, ժպտաց ու հոնքերը բարձրացրեց: Ես հասկացա, որ դա նշանակում է. «Դե լավ, լավ, ոչինչ չեմ ասի, բայց «Պիեռում» ապրողներից ոմանք էնպես են իրենց պահում, կարծես ախոռում ապրելիս լինեն»:

Վերելակը նորից կանգնեց, ու երեք հոգի մտան, իրար անծանոթ մարդիկ, երեքն էլ՝ սուսուփուս: Բոլորը հետ քաշվեցին, մեր կողմը եկան, որ նրանց տեղ տան:

Քիչ անց վերելակն էլի կանգնեց, երկու հոգի էլ մտան, ու արդեն վերելակում ազատ տեղ չկար, դրա համար էլ, երբ մի ուրիշ հարկում վերելակն ուր որ է նորից պիտի կանգներ, ուրախ տղամարդկանցից մեկն ասաց.

— Հերիք է, Զո, արի ամբողջ Նյու Յորքը էստեղ շխցկենք: Հաճելի խումբ է հավաքվել, հենց իսկն է, որ կա, բեր գործը շփչացնենք:

Աղջիկ մայրիկը ծիծաղեց, ես էլ ծիծաղեցի, բայց շնչացող կինը էնպիսի հայացքով նայեց տղամարդուն, կարծես թե սա հիմարի գլուխ է:

Վերելակավարը շսելու տվեց, նորից կանգնեցրեց վերելակն ու գոները բացեց, էս անգամ էլ մի բեղավոր ծերուկ էր միջանցքում, գավազանը ձեռքին: Նա տեսավ, թե վերելակում ինչքան մարդ է հավաքվել ու ձեռքը թափահարեց, որ առանց իրեն իջնենք, բայց վերելակավարն էլի սպասելով ասաց.

— Իջնում ենք, խնդրեմ ներս եկեք:

— Դուք առանց ինձ էլ բավականին ուղևորներ ունեք: Ես մյուսով կիջնեմ:

— Հիմա միայն մեկն է աշխատում,— ասաց վերելակավարը:

— Ոչինչ, կսպասեմ,— ասաց ծերուկը:

— Ավելի լավ է սրանով իջնեք: Տեղ շատ կա:

— Ես նեղվածքին չեմ դիմանում, գնացեք, գնացեք:

Բայց վերելակավարը չէր գնում: Դեռ սպասում էր: Կանչի ազդանշանը մի քանի անգամ գողգաց, ու վերելակավարը տեսավ, որ տարրեր հարկերից իրեն են կանչում, ասաց.

— Ինձ շատ մարդիկ են սպասում: Ներս անցեք:

Սա ծերուկին համբերությունից հանեց: Նա նույնիսկ ձեռքի գավազանը բարձրացրեց:

— Լսեք, գո՛ւր,— ասաց,— փակեք ձեր դռներն ու ճամփա ընկեք:

Բայց վերելակավարը դռները չէր փակում:

Չորս ուրախ-զվարթները դուրս եկան վերելակից, իսկ մեկը նրանց խմբից, որ մինչև հիմա լուռ էր, ասաց.

— Միշտ ուզեցել եմ ման գալ «Պիեռի» տասնմեկերորդ հարկում. այ, բախտս բերեց: Խնդրում եմ սպասավորներից մեկին պատվիրեք, որ մի շիշ շամպայն ու շորս բաժակ ուղարկի վերև: Մենք հենց էստեղ՝ միջանցքում կլինենք:— Հետո նա շրջվեց գավազանով ծերուկի կողմն ու ասաց.— Դուք միանգամայն իրավացի եք: Մենք շատ ենք տանջվել վերելակների ու վերելակավարների ձեռքին: Ես կոչ եմ անում. «Կորչե՛ն վերելակները»:— Նա դարձավ վերելակավարին ու ասաց.— Չքվեք, սըր:

Վերելակավարը դռները փակեց: Ես համոզված էի, որ արդեն մինչև վերջ առանց կանգառի կիջնենք, բայց դրա փոխարեն սկսեցինք բարձրանալ վերև, ու բոլորը նայեցին իրար: Մենք տասնիններորդ հարկից մի քանի մարդ վերցրինք, մի քանիսին էլ՝ տասնվեցերորդից, հետո իջանք ցած՝ մինչև իններորդ հարկ, իսկ էնտեղ լիքը մարդիկ էին հավաքված, ու դրանից հետո՝ վերջապես, առանց կանգնելու հասանք նախասրահ:

Բոլորը դուրս եկան, նոր՝ ես ու Աղջիկ մայրիկը:

Սպասավորները աչք չէին կարում մեզնից, իսկ երբ մոտեցանք ծառայողական սեղանին, սրա հետևում կանգնած տղամարդն էլ աչքերը չորս արևց ու նրա հետի մյուս կանգնածներն էլ: Առաջին հերթին նայեցին Աղջիկ մայրիկին, հետո՝ ինձ, ու բոլորը սկսեցին ժպտալ:

Շնչացող կինը սեղանի հետևում կանգնած ծառայողին ասաց.

— Իմ կարծիքով, ձեր վերելակավարը խելքը թոցրեչ է:— Ու ամուսնու հետ արագ հեռացավ:

Ծառայողը հարցրեց.

— Վերելակում բա՞ն է պատահել:

Աղջիկ մայրիկն ասաց.

— Ուղղակի վերելակավարին մի քիչ օգնություն է պետք, որոշ մարդիկ էլ ուզեցին զվարճանալ, ուրիշ ոչինչ:

Ծառայողն ասաց.

— Նա մեր ամենահին աշխատողներից է:— Հետո նայեց ինձ, նորից՝ Աղջիկ մայրիկին ու ասաց.— Տեսնում եմ՝ գտել եք ձեր դստրիկին:

— Այո, շնորհակալ եմ:

— Էսել եմ՝ միսս Քրենշոյին հյուր է գնացել:

— Ո՞ւմ:

— Միսս Քեյթ Քրենշոյին:

— Դերասանուհի՞:

— Դե, նա արդեն բեմից հեռացել է: Հիմա միայն դասավանդում է:

— Ես էլ կարծում էի, թե մահացել է:

— Չէ, ի՞նչ եք ասում: Քանի տարի է՝ մեզ մոտ է ապրում, քսանմեկերորդ հարկի շքեղ համարներից մեկում, և հավատացեք ինձ, մեռնելու ոչ մի մտադրություն չունի:

— Իսկ ո՞ւմ է դասավանդում:

— Իհարկե աստղերին:

— Բեմի՞:

— Բեմի, էկրանի, հեռուստատեսության և մնացած ամեն ինչի:

— Շնորհակալություն, — ասաց Աղջիկ մայրիկը, ու մենք երկար նախասրահով դուրս եկանք Հինգերորդ պողոտա:

— Խատուտիկ, — ասաց Աղջիկ մայրիկը, — դու գիտե՞ս ում մոտ ես հյուր եղել:

— Ո՞ւմ մոտ:

— Աշխարհի ամենամեծ բեմական ուսուցչի: Քեյթ Քրենշոյի մոտ:

— Նա ի՞նչ է անում:

— Դերասաններին սովորեցնում է, թե ինչպես խաղան:

— Իսկ դերասանները չգիտե՞ն ինչպես խաղան:

— Է՛հ, չէ: Ճշմարիտ դերասանները միշտ էլ սովորելու բան ունեն: Դե, հիմա պատմիր միսս Քրենշոյի մասին:

— Ի՞նչ պատմեմ:

— Լսիր,— ասաց Աղջիկ մայրիկը,— ի՞նչ կարծիքի ես, նա ինձ կհավանի՞:

— Ինձ որ հավանեց, քեզ էլ կհավանի: Իմ մայրիկն ես, չէ՞: Ճիշտ է, համարյա շոր չկար հագիս, երբ հանդիպեցինք:

— Դա նրան զարմացրե՞ց:

— Չէ՛: Իսկի ուշադրություն էլ չդարձրեց:

— Ուրեմն իսկական լեզի է, այ թե ինչ: Լսիր, Գորտուկ, ուզում եմ պատմես նրա մասին:

— Շատ բարձրահասակ է: Շատ նիհար: Շատ նուրբ: Սուր հայացք ունի: Շատ պարզ ու մաքուր է խոսում ու նրա հետ շատ հետաքրքիր է:

— Է՞լ ինչ:

Ես ու Աղջիկ մայրիկը քայլում էինք Հինգերորդ պողոտայով, ու ես փորձում էի ամեն ինչ պատմել Քեյթ Քրենշոյի մասին, բայց դե իհարկե, երբ նրան հյուր էի, անունը չգիտեի: Նա ոչ իր անունն ասաց, ոչ էլ իմը հարցրեց:

Մենք գնում էինք Կենտրոնական զբոսայգու կողմը:

— Չգում ես, չէ՞,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Ի՞նչը:

— Կենտրոնական զբոսայգու ծառ ու ծաղկի հոտը, Գորտուկ: Կենտրոնական զբոսայգու կանաչի հոտը: Թռչնակների ու սկյուռիկների հոտը:

— Կարծես թե զգում եմ:

— Հենց որ հասնենք զբոսայգի, իսկապես կզգաս, մարդկանց հոտն էլ կզգաս:

Շենքերի մի շարք անցնելուց հետո մենք հասանք զբոսայգու մուտքին ու ներս մտանք: Քիչ անց մեքենաներով լցված ծառուղուց թեքվեցինք մի կողմ: Գնում էինք արահետով, որտեղ նույնիսկ հեծանիվ չեն քշում, միայն քայլում են: Հետո կանգնեցինք, ու Աղջիկ մայրիկը նայեց ծառերին, գետնի վրայի սև, մեծ քարերին ու մարգագետնի ծաղկած թփուտներին:

Նա խոր շունչ քաշեց:

— Սիրում եմ Կենտրոնական զբոսայգին,— ասաց:

— Ես էլ: Դու ինչո՞ւ ես սիրում:

— Որովհետև նյու Յորքում է:

— Եթե սիրում ես նյու Նորքը, էլ ինչո՞ւ չես նյու Յորքում ապրում:

— Ատում եմ նյու Յորքը:

— Է՛, Աղջիկ մայրիկ, ի՞նչ կլինի էդպես շխոսես: Համ սիրում ես, համ ատում:

— Ախր դա ճիշտ է, Բզեզ: Ես, իհարկե, սիրում եմ նյու Յորքը, բայց և, իհարկե, ատում:

— Ինչո՞ւ:

— Որովհետև էդպես է: Իրոք էդպես է: Ոչ ոք չի ուզում ասել, բայց դա էդպես է: Ես անգամ խոսել չգիտեի, իսկ Կենտրոնական զբոսայգուն արդեն ծանոթ էի: Ես սիրում եմ սա ու ատում և կուզեի, որ աշխարհն ավելի լավը լիներ:

— Ինչի՞ց լավը լիներ:

— Հենց ինքն իրենից:

— Իսկ ի՞նչ է ինքը:

— Խճճված ու շատ տխուր մի բան:

— Չէ, տխուր չի, ուրախ է:

— Դե, թող ուրախ լինի: Չե՞ս տեսնում, Գորտուկ, ես վախենում եմ:

— Ինչի՞ց:

— Ինձանից, էլ ինչի՞ց: Իմ նիստուկացից: Երկար ժամանակ ապրելու ձևից: Իմ արածներից: Երեսուներեք տարի շարունակ կյանքս փշացնելուց:

— Երեսուներե՞ք: Դու քսաներկու տարեկան ես, Աղջիկ մայրիկ:

— Ա՛խ, Գորտուկ, դու իմ ընկերուհին ես, ամենահարազատ ընկերուհին, բայց ես վախենում եմ:

— Մի վախենա, Աղջիկ մայրիկ:

— Վախենում եմ, որ քո կյանքն էլ իմի պես ստացվի, որովհետև մայրդ ես եմ, և դու անընդհատ ինձ հետ ես, կողքիս:

— Ես ուզո՞ւմ եմ էդպես ապրել:

— Լավ չի, Գորտուկ:

— Իսկ ի՞նչն է լավ:

— Բանն էլ դա է: Ես չգիտեմ: Երանի թե իմանայի: Ոչ մի մարդու չեմ ճանաչում, որ իմանա: Բոլորս էլ դժբախտ ենք կյանքում, բայց չգիտենք, թե ինչ անենք: Երեկ այս ժամին Կալիֆոռնիայում էինք: Իսկ հիմա՞ ուր ենք:

- էստեղ: Կենտրոնական սիրուն զբոսայգում:
- Ինչի՞ համար:
- Որ դու բարձրանաս բեմ ու հռչակավոր դառնաս:
- Ա՛խ, Գորտուկ, սիրտս խառնում է ինձանից: Ի՞նչ կարծիքով ես անտաղանդի մեկն եմ:
- Օ՛, դու մեծ դերասանուհի ես, Աղջիկ մայրիկ:
- Քեզ համար՝ գուցե:
- Իսկ ինձ դուր գալը դու հեշտ մի կարծիր: Եթե մեծ դերասանուհի չլինեիր, երբեք չէիր կարողանա ինձ խաբել: Ես գլխի կրնկնեի: Դու հիանալի դեր կատանաս. այ, սպասիր՝ կտեսնես:
- Բայց ես ճաշեցի ամենալավ թատերական պրոդյուսերի հետ, ու նա ինձ ոչ մի դեր էլ չառաջարկեց, թեկուզ մի շնչին, աննշան դեր, իսկ վաղն առավոտյան մեզ նախաճաշի է հրավիրել, որ հետո ծանոթանա: Գորտուկ, դու կուզե՞ս բեմ բարձրանալ:
- Չէ՛է՛: Ես խաղալ չգիտեմ: Շատ եմ փոքր խաղալու համար:
- Նա մտադիր է քեզ փոքրիկ աղջկա դեր տալ, հենց քեզ նման աղջկա, էնպես որ առանձնապես խաղալու բան չկա: Դու ուղղակի մըտքումդ կպահես, թե ինչ պիտի անես ու ասես:
- Չեմ ուզում:
- Համոզվա՞ծ ես:
- Աղջիկ մայրիկ, դու կուզեի՞ր, որ խաղամ:
- Չգիտեմ: Ես մոլորվել եմ: Միշտ էլ չեմ սիրել իրենց զավակներին բեմ հանող մայրերին, որոնք ապրում են երեխաների վաստակած փողով ու նրանց փոքրիկ կապիկներ դարձնում, բայց հիմա անելիքս չգիտեմ: Իհարկե, չէի ուզի քեզ հեռու պահել նման զարմանալի կյանքից:
- Ո՞ր զարմանալի կյանքից:
- Թատրոնի:
- Իսկ դո՞ւ որտեղ ես լինելու:
- Է՛հ, ես էլ՝ հետին պլանում մի տեղ, բեմում հանդես եկող փոքրիկ հրեշների բոլոր մայրերի պես:
- Աղջի՛կ մայրիկ:
- Օ՛, ես քեզ նկատի չունեմ, Գորտուկ: Ես նկատի ունեմ խեղճ մայրերին ու նրանց խեղճ, դժբախտ զավակներին: Ընդհանրապես, երեխաներին բեմ հանելու միտքը ինքնին զզվելի է, բայց մյուս կողմից էլ, բազմաթիվ լավ պիեսներում երեխաների դերեր կան, իսկ մեկնումեկը դրանք խաղալու է, չէ՞: Ա՛հ, չգիտեմ:



Մենք քայլելով հասանք մի նստարանի, որի վրա ոչ ոք նստած չէր, դե, մենք էլ նստեցինք: Ես բռնեցի Աղջիկ մայրիկի ձեռքը, համարյա իմի պես պատլիկ նրա ձեռքը ու պինդ սեղմեցի, որովհետև նա տխուր էր, իսկ ես չէի ուզում, որ տխուր լիներ:

**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՉԲՈՍԱՅԳՈՒ ԽԵՆՆ ՈՒԿ ԿՈՒԻԲՐԻՆ**

Նյու Յորքում շատ շոգ էր, նույնիսկ Կենտրոնական զբոսայգում, նույնիսկ իրիկնամուտին: Երբ մենք նստած էինք զբոսայգու նստարանին, ես մի թուփ տեսա՝ դեղին, երկարուկ ծաղիկներով, իսկ հետո՝ մի կուլիբրի: Նա ասեղի նման սուրուլիկ կտուցը խոթեց ծաղկի մեջ ու մի քիչ մնաց, թևիկներն էլ էնպես էր թափահարում, որ դրանց տեղը մի թրթռուն պուտ էր երևում: Հետո, մեկ էլ տեսնեմ՝ կուլիբրին վեր թռավ, կարծես մի բանից հանկարծ վախեցավ, բայց չէ, դժվար թե վախեցած լիներ, որովհետև միանգամից ուրիշ ծաղկի մոտ թռավ, էլի կտուցը ներս խոթեց, մնաց ու էլի ծաղկի նեկտարն էր խմում: Չնայած երկար չիմեց: Նորից վեր թռավ, ասես հենց էդպես է պետք, ու ինքը գիտի, թե ինչ է անում: Բայց էս անգամ, փոխանակ վերև բարձրանա, նա մի կողմ սլացավ, մի քիչ օդում մնաց, իսկ հետո մի նոր ծաղկի վրա իջավ:

Ախր ինչո՞ւ էր նա թռչում մի կողմ, ոչ թե մի ուրիշ: Թփի վրա լիքը ծաղիկներ կային բացված: Ինչքան սիրտդ տար: Չլինի՞ կուլիբրին զգում էր, թե որ ծաղիկների նեկտարն է ամենից քաղցր:

Նա էլի գլխապատառ թռավ, հիմա էլ թփի մյուս ծայրը հաւավ, համարյա աչքից կորավ, բայց մի քիչ երևում էր, պոչը տեսնում էի. թևերի պես թափով տարուբերում էր:

Ի՞նչ սիրուն էր ու փոքրիկ. ախր ո՞նց էր անընդհատ էդպես արագ-արագ թռչում: Ուրեմն երբեք չէ՞ր կանգնում: Չէ, հետո կանգնեց: Մյուս թռչունների նման, երկու ոտքի վրա կանգնեց. մի շորացած ճյուղ կար, հենց ճյուղին էլ թառեց, ու շորս կողմը ամեն ինչ անշարժացավ: Նա հանգիստ թառել էր, ու ես իսկապես նրան տեսնում էի, ու նա ընդամենը մի պատլիկ թռչուն էր՝ սուրուլիկ կտուցով: Էլ առաջվա ժիր թռի-վռի չէր: Բայց երկար շմնաց թառած: Հազիվ կհասցնեիր մինչև երեքը հաշվել, երբ նորից գործի անցավ, դեսուդեն էր թռչում ու ամեն անգամ՝ էլի առաջվա պես գլխապատառ, էնպես գծավարի, որ բան չէիր հասկանալ:

- Ես Աղջիկ մայրիկի ձեռքը սեղմեցի: Նա ինձ նայեց ու ասաց.
- Ի՞նչ կա, Գորտուկ:
- Կուլիբրին: Տես:

! — Թ՛ւր է:

— Ա՛յ էնտեղ, դեղին ծաղիկներով թփին:

Աղջիկ մայրիկը նայեց ու ասաց.

— Վա՛յ, ինչ գեղեցիկ է: Շատ եմ սիրում սրանց:

— Ոնց որ խենթուկ լինի, չէ՞:

— Այսի՞նքն:

— Դե, տես: Հանկարծ վրա է հասնում, իջնում մի ծաղիկ ու նրա նեկտարը խմում, հետո վեր է թռչում՝ կարծես մի բանից վախեցած, բայց չէ, վախեցած չի, ուղղակի սլանում է, մի ուրիշ ծաղիկ իջնում ու մեկ էլ սրա նեկտարը խմում: Ինչո՞ւ չի հերթով ծաղկից ծաղիկ անցնում՝ անընդհատ դեսուդեն թռչելու փոխարեն:

— Երեի դրա համար պատճառներ ունի, — ասաց Աղջիկ մայրիկը:

Նա երկար նայեց, հետո նույն խոսքերը կրկնեց:

— Գու տխո՞ւր ես, Աղջիկ մայրիկ:

— Չէ, Գորտուկ: Սա խայտառակություն է, որ իմ երեսից դու ես անհանգստանում: Չէ, իրոք, տխուր չեմ: Իսկ դո՞ւ:

— Տխուր եմ:

— Ավելի լավ, որովհետև իմ գործն էլ քեզ ուրախացնելն է, երբ դու տխուր ես. դե՛, սիրտդ ի՞նչ կուզի:

— Հենց տխուր լինել:

— Չե՞ս ուզում ուրախանալ:

— Եթե աշխարհը խճճված է, դու էլ՝ նրա պես, ուրեմն թող ես էլ տխուր լինեմ:

— Բայց դու չպետք է քեզ ստիպելով տխրես: Դա ինքն իրեն է լինում:

— Ոչ մի բան էլ ինքն իրեն չի լինում:

— Տխրությունը լինում է:

— Իմը չի լինում: Ես ինձ ստիպելով եմ տխրում:

— Նշանակում է՝ դու իսկապես տխուր չես:

— Դե, մի քիչ առաջ՝ հա: Բայց հիմա տխուր եմ:

— Իսկ ի՞նչ եղավ, որ էդպես ստացվեց:

— Մեզավորը կոլիբրին էր, Աղջիկ մայրիկ: Ես պատկերացրի՝ իբր կոլիբրի եմ: Սկզբում շատ ուրախ էի, ազատ, թռի-վռի, ու էնպե՛ս լավ էր: Բայց քիչ հետո հոգնեցի պատլիկ ու թովուան խենթուկ լինելուց: Հոգնեցի անընդհատ դեսուդեն ընկնելուց: Հոգնեցի դեղին, երկարուկ ծաղիկների նեկտարը խմելուց: Ամեն ինչից հոգնեցի, դրա համար էլ սկսեցի տխրել: Ու արդեն շատ տխուր եմ:

— Է՛Տ, երևի մարդ իր կամքով էլ է տխրում:

— Հիմա որ ուզեմ, տխրութիւնս իմ կամքով էլ կանցնի:

— Ինչպե՞ս:

— Է՛, մտքումս կասեմ, որ ես կուլիբրի չեմ ու իզուր տեղը ինչու պիտի տխրեմ:

— Լավ ձե է:

— Այ, էլ տխուր չեմ, բայց ոնց որ թե նորից ուզում եմ տխրել:

— Դե վե՛րջ տուր,— ասաց Աղջիկ մայրիկը:— Արի գնանք մի տեղ, բան ուտենք: Գուցե ավտոմատ ճաշարա՞ն:

— Հա, բայց հիմա՝ չէ:

— Իսկ ե՞րբ:

— Երբ որ մութն ընկնի:

— Գորտուկ, օգոստոսին մինչև ութը չի մթնում. իսկական մութը ութն անց կես է ընկնում:

— Հիմա քանի՞սն է:

— Ութից հինգ պակաս:

— Դե ուրեմն ես ուտել չեմ ուզում, մինչև մութը լրիվ չընկնի:

— Դու ուղղակի ուտել չես ուզում և վերջ:

— Ուզում եմ:

— Ի՞նչ ես ուզում:

— Ապուր:

— Ինչո՞ւ հանկարծ ապուր:

— Բանջարեղենի ապուր:

— Լավ, թող լինի բանջարեղենի ապուր, բայց ինչո՞ւ:

— Ես ապուր շատ եմ սիրում, մանավանդ բանջարեղենի:

— Եթե շատ ես սիրում, ինչո՞ւ չես ոչ մի անգամ ասել: Խանութում ամեն տեսակ բանջարեղենի ապուրներ են լինում՝ մեկը մյուսից համեղ-քեղ համար ես ո՞րը չէի առնի: Ինչո՞ւ չես ասել՝ իմանամ:

— Մտքովս չի անցել, թե գու կուզես իմանալ: Իբր բան ասացի, չէ՞:

— Երբ ասողը գու ես, ուրեմն մեծ բան է, Բզեզ: Միգուցե որ սկսես շատ ապուր ուտել, մի քիչ վրա գաս:

Կամաց-կամաց մթնեց, ու արդեն լրիվ մութ էր: Աղջիկ մայրիկն ասաց.

— Դե՞, հիմա կարո՞ղ ենք գնալ:

— Գնացինք,— ասացի ես, և մենք վեր կացանք ու քայլեցինք այգուց դուրս:

Ամռան երեկոյան Նյու Յորքում էնպես լավ է, որ դրանից լավ ուրիշ ոչ մի տեղ չի լինում: Ամռան երեկոյան Նյու Յորքում շոգ է: Նույնիսկ մութն ընկնելուց հետո, էլի ցերեկվա պես շոգ է. մայթերը, տները, մարդիկ շոգում են, ու տեսնում ես, թե ոմանք ոնց են շոգից նեղվում: Դեմքերից էլ է երևում, մարդկանց քայլվածքից, կանգնելու կամ սպասելու ձևից էլ:

Փողոցի մյուս կողմը, հենց զբոսայգու դիմաց՝ Յոթերորդ պողոտայի անկյունում, սայլակով մի մարդ էր կանգնած: Երևի շոգին չէր դիմանում: Շալվարի հետևի գրպանից մի մեծ, կապույտ թաշկինակ հանեց ու երեսի քրտինքը սրբեց: Հետո, երբ տեսավ ինձ ու Աղջիկ մայրիկին, ասաց.

— Մի բան առեք ձեր դատրիկի համար:

Աղջիկ մայրիկը կանգ առավ, որ նայի, թե նա ինչ ունի, իսկ նրա սայլակում չկճպած գետնանուշ կար, արևածաղկի սերմ, մայրու ընկույզ ու երեք-չորս տեսակ կոնֆետ:

— Դե՛, — ասաց Աղջիկ մայրիկը, — մի քիչ շոգ է սրանք ուտելու համար, բայց ոչինչ, մի բան ընտրենք: Ի՞նչ կուզես, Խատուտիկ:

— Օ՛, — ասացի ես, որովհետև, ազնիվ խոսք, չգիտեի: Ոչ մի բան էլ չէի ուզում, ազնիվ խոսք, բայց սիրտս չէր տալիս, որ մարդուն տրխրեցնեմ: Նայեցի նրա ունեցած-չունեցածին. ամեն ինչ արդեն շոգից տաքացել էր ու կարծես ճլորած լիներ, ես էլ, ազնիվ խոսք, չէի կարողանում որոշել: Վերջը մտածեցի՝ չէ, Աղջիկ մայրիկը պիտի գոնե մի բան առնի, որովհետև խեղճ մարդը էնպե՛ս էր շոգում, նրա սայլակի միջինը շոգից տաքացել էր, ու մութն էլ՝ ընկել, իսկ մարդը ինչ-որ հեռու տեղից էր եկել: Նա նյույորքցու նման չէր, ուրիշ տեղից էր եկել:

— Այ, սրանցից եմ ուզում, — ասացի ես:

— Կարելի է, — ասաց Աղջիկ մայրիկը, — վատը չեն:

— Ուրեմն՝ մայրու ընկույզ, — ասաց մարդը: — Հինգ սենթի՞, թե՞ տասը:

— Թող տասը լինի, — ասաց Աղջիկ մայրիկը:

Մարդը փոքրիկ թին վերցրեց ու ընկույզով լիքը թասը մտցրեց, հետո էլ թիու միջից ընկույզները լցրեց իր փոքրիկ կշեռքին ու տասը սենթի կշռեց: Իսկ հետո ընկույզները թղթե տոպրակը լցրեց ու տոպրակի եզրերը ծալեց: Աղջիկ մայրիկը նրան մի տասը սենթանոց տվեց, նա էլ թղթե տոպրակն ինձ մեկնեց, ու քանի որ հեռու տեղից էր եկել, ես

«շնորհակալության» փոխարեն ասացի՝ «մերսի»: Նա ինձ նայեց ու գլխով արեց: Աղջիկ մայրիկը ժպտաց, ու մենք առաջ անցանք: Ես տուրակը բացեցի, ափիս մեջ մի քիչ ընկույզ լցրի ու ձեռքս Աղջիկ մայրիկին պարզեցի: Նա մի շորս հատ վերցրեց, հինգ-վեց հատ էլ ինձ համար թողեց: Ես ընկույզներից մեկը դրի բերանս ու ատամներով կոտրեցի, հետո կճեպները մյուս ձեռքումս հավաքեցի ու ընկույզը կերա: Շատ լավ համ ուներ, բայց տաք էր: Աղջիկ մայրիկն էլ մի ընկույզ կերավ:

— Երևի սրանք դեղձանիկների համար են,— ասաց նա:

— Չէ, ո՞նց թե:

— Ախր շափից դուրս մանր են, պիտի մի հարյուր հատ կոտրես, որ բերանդ լցվի:

— Իսկ ո՞վ է ուզում, որ բերանը լցվի:

— Իհարկե ոչ դու,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ուրեմն՝ ինչ որ դեղձանիկների համար է, քեզ համար էլ է:

— Նրանք մայրու ընկույզ չեն ուտում, միայն մարդիկ են ուտում:

Մենք ընկույզները իրար հետևից կոտրում էինք, ուտում ու Յոթերորդ պողոտայով գնում Հիսունյոթերորդ փողոց, Քարնեգի Հոլի՝ կողմը: Ամեն անգամ, երբ կճեպները գցում էինք մայթին, փոքրիկ ալավներին համարյա վազեվազ կամ թևին տալով՝ վրա էին հասնում, նայում կճեպներին, կտցում, հետո տեսնում էին, որ իզուր են շարշարվել, ուտելու բան չկա, ես էլ մի երեք-չորս ընկույզ՝ առանց կոտրելու, դժեցի նրանց, բայց աղավնիները չկարողացան կոտրել:

— Այ, տես,— ասացի ես:— Նույնիսկ աղավնիները չեն կարող մայրու ընկույզ ուտել:

Կանգնեցի թե չէ, երկու աղավնի էլ հետս կանգնեցին ու նայում էին ինձ, որ իմանան ինչ եմ անելու:

Մի ընկույզ կոտրեցի, հետո՝ մի հատ էլ ու միջուկները աղավնիներին գցեցի, իսկ սրանք միանգամից կուլ տվին ու էլի էին ուզում, դե, ի՞նչ պիտի անեի, էլի գցեցի: Աղջիկ մայրիկն էլ նույնն արեց, ու դեռ ուշքի չեկած՝ մեկ էլ տեսնենք մի երեսուն-քառասուն աղավնի մեր շուրջը հավաքվեցին, ու բոլորը ընկույզ են ուզում: Ինչ տեսակ աղավնի ասես, որ չկար. սպիտակ, մոխրագույն, շալպտուրիկ, տարբեր-տարբեր շափսի՝ մեծ, միջակ, փոքր, ու բոլորն էլ՝ սոված, բոլորն էլ՝ ժիր ու արագաշարժ, բայց դե ժրությամբ կոլիբրիին չէին հասնի:

Սրանք ոտքերին էին զոռ տալիս, ոնց որ ամբոխի մեջ գնացող-եկող

1 Նյու Յորքի հայտնի համերգասրահներից մեկը:

մարդիկ ու շատ զգույշ էին, անընդհատ շորս կողմն էին նայում, գլուխները վերուվար անում կամ դեսուդեն տանում:

Անցորդներից մի քանիսն էլ կանգնեցին: Մարդիկ սիրում են կանգնել փողոցում ու աչքերը շռել: Թե բան չի լինում, որ աչքերը շռեն, ուրեմըն խանութների ցուցափեղկերին են նայում:

Մի մարդ էլ կար իր տղայի հետ: Նրանք ձեռք ձեռքի էին տվել, բայց հետո տղան հոր ձեռքից պոկվեց ու եկավ աղավնիների մոտ, որ մեկնումեկին բռնի, իսկ հայրը կանգնած հետևում էր: Տղան շատ փոքր էր, դեռ կարգին քայլել չգիտեր, բայց մեկ է՝ ուզում էր աղավնի բռնել: Աղավնիների համար դա արդեն սովորական էր, ո՞վ իմանա՝ քանի անգամ էր էդպես պատահել: Նրանք թողնում էին, որ տղան մոտ գա, հետո իսկույն ծլկում, ու տղան ոչ մեկին չէր կաթողանում բռնել: Բայց աղավնիները հեռու չէին գնում. անհամբեր սպասում էին, թե ես ու Աղջիկ մայրիկը էլ ընկույզ շե՞նք գցի, որ վրա հասնեն: Փոքրիկ տղայի հայրը նրան մի քիչ հետևեց, իսկ հետո մոտեցավ ու ձեռքը բռնեց.

— Թռչուններին մի վախեցրու:

Տղան էնպես նայեց հորը, կարծես շհասկացավ, հետո էլ ասաց.

— Ի՞մ թռչուններն են:

Երևի ուզում էր ասել՝ իր թռչուններն են, ինքն էլ կարող է ընկնել հետևներից, բռնել կամ թեկուզ վախեցնել:

— Ոչ,— ասաց մարդը,— նրանք քոնը չեն:

— Բա ո՞ւմն են,— ասաց տղան:

— Ոչ մեկինը:

— Չէ,— ասաց տղան.— Ի՞մն են:

— Դե, ինչ արած,— ասաց մարդը,— թող քոնը լինեն, բայց մի վախեցրու:

Նրանք նորից ձեռք ձեռքի էին տվել ու կանգնած նայում էին, իսկ հետո դանդաղ գնացին փողոցով, խոսում էին ու մի գլուխ շքջվում: Ի՞նչ լավ մարդ էր, ի՞նչ լավ հայրիկ իր տղայի համար: Մի քիչ էլ իմ հայրիկին էր նման. նա էլ էք ինձ էսպես վերցնում, ման գալու տանում:

Աղջիկ մայրիկը վեց-յոթ ընկույզ կոտրեց, բայց չկերսվ, միջուկները բռան մեջ հավաքեց, հետո ծնկի եկավ ու ափը պարզեց, որ տեսնի աղավնիները իր ափից կուտե՞ն: Սրանք բոլորն իրար խառնվեցին, որովհետև շատ էին ուզում Աղջիկ մայրիկի ափի միջինն ուտել, բայց սիրտ չէին անում: Անընդհատ նայում էին, շորս կողմը պտտվում, մոտենում էին, հեռանում, էլի հետ գալիս, ու շուտով նրանցից մեկն անվախ մոտեցավ մայրիկի ափին ու մի ընկույզ կտցեց, հետո՝ մի հատ էլ: Իսկ

հետո երկրորդ աղավնին մոտեցավ, առաջինն էլ շրջվեց ու նրան քշեց: Հետո մի ուրիշ աղավնի մոտեցավ, սա դրան էլ քշեց, ու կանգնած մարդիկ ծիծաղեցին:

Փոքրիկ տղան ու նրա հայրիկը վերադարձան, տեսնեմ՝ տղայի ձեռքին էլ է ընկույզով տոպրակ: Նա ընկույզները առանց կոտրելու աղավնիներին գցեց, իսկ սրանք, պարզ է, չկարողացան ուտել: Փոքրիկ տղայի հայրը քայլելով, բոլոր ընկույզները մեկ առ մեկ ոտքի տակ կոտրեց, աղավնիներն էլ սկսեցին կճեպների միջից ընկույզները կտցել: Փոքրիկ տղան իր հոր արածից էնպե՛ս ուրախացավ: Ընկույզ կոտրելու ձևը սովորեց, բայց ինչքան էլ կանգնում էր ընկույզների վրա, դրանք չէին կոտրվում, որովհետև նա շատ էր թեթև:

Տղան ջղայնացավ ու սկսեց ընկույզները կոխկրտել, հետո սայթաքեց, ընկավ ու կատաղությունից ճվոցը դրեց: Ես վազեցի ու նրան բարձրացրի: Տղան ինչ-որ բաներ էր ասում, բայց ճվոցը չէր կտրում, ես էլ ասածներից ոչ մի բառ չէի հասկանում: Հայրը տղային հանգրտացնելու համար բոլոր ընկույզները տրորելով կոտրեց, հետո եկավ, փոքրիկին վերցրեց ու ասաց.

— Շնորհակալ եմ, աչիկո:

Նա նայեց Աղջիկ մայրիկին ու ավելալացրեց.

— Իմ կարծիքով, տղաս երբեք սա չի մոռանա:

Աղջիկ մայրիկը ժպտաց, բայց ոչինչ շասաց, ու մենք քայլեցինք դեպի Հիսունյոթերորդ փողոց:

— Իսկ փոքրիկ տղայի մայրի՞կը ուր էր:

— Ո՞վ գիտի, — ասաց Աղջիկ մայրիկը:

— Ծիծաղելի տղա էր, չէ՞:

— Հա, ծիծաղելի էր:

— Հայրիկն էլ լավն էր, չէ՞:

— Կավն էր:

— Մի քիչ մեր հայրիկին էր նման:

— Բոլորովին, — ասաց Աղջիկ մայրիկը: — Քո հայրը մի տասը տոպրակ ընկույզ կառներ, միանգամից շուռ կտար գետնին ու ինչքան ընկույզ կա, հապշտապ կկոտրեր, հետո էլ աղավնիներին բուռ-բուռ փող կդրեր:

— Ինչո՞ւ:

— Հայրդ սիրում է էդպիսի բաներ անել:

— Բայց ինչո՞ւ:

— Դա նրան զվարճացնում է:

— Փողն՝ աղավնիներին:

— Նրա ուշքը գնում է անսպասելի բաներ անելու համար:

— Դու տեսած կա՞ս, որ նա աղավնիներին փող զցի, Աղջիկ մայրիկ:

— Չէ, բայց տեսել եմ, որ դրա պես անսպասելի շատ բաներ անի:

— Ինչի՞ պես:

— Դե լավ, արի գնանք ավտոմատ ճաշարան, գուցե նրա արածներից հիշեմ, քեզ պատմեմ:

## ՃԱՇԱՐԱՆԻ ԲՎԼԻՆՆԵՐԸ

Մենք Հիսունյոթերորդ փողոցում մի մայթից մյուսն անցանք ու հայտնվեցինք Քարնեգի Հոլի առաջ: Էստեղ լիքը մարդ էր հավաքվել, մի մասը հենց մայթին էին կանգնած, մնացածը՝ մուտքի աստիճաններից, շատերն էլ անընդհատ գալիս էին մետրոյով, տաքսիներով ու լիմուզիններով: Յոթերորդ պողոտայում՝ էստեղից քիչ հեռու, հանգիստ էր ու խաղաղ, աղավնիներ կային, սայլակով մի մարդ, փոքրիկ տղայի հետ մի հայրիկ, բայց Քարնեգիի առաջ իրարանցում էր ու շիլաշփոթ:

— Ի՞նչ է եղել:

— Համերգ է, — ասաց Աղջիկ մայրիկը:

— Դաշնամուրի՞:

— Չէ, շատ է շոգ, որ լուրջ երաժշտություն լսես: Ջազ պիտի լինի: Իհարկե, դաշնամուր էլ, բայց բլյուզներ, դիքսիլենդ, բուգի-վուգի ու նման բաներ: Դա էլ է հաճելի, բայց Քարնեգիի համար չի:

— Բա ո՞րտեղի:

— Է՛հ, որեէ կժանազին ժամանցարանի: Ասենք՝ պանդոկի: Կամ Գրինբերգ Վիլիջի նեղլիկ ու խավար սրահներից մեկի:

— Գրինվիչ Վիլիջի:

— Դե, ճիշտ արտասանությունը Գրինիչ Վիլիջի՝ է, բայց մի անգամ ավտոբուսում մի աղջիկ ասաց՝ Գրինբերգ Վիլիջ, ու դա ինձ ավելի դուր եկավ: Համերգը հո միայն դաշնամուրով չէ՞, կորնետ կա, կլաոնետ, տրոմբոն, սաքսոֆոն ու մանավանդ՝ թմբուկներ: Մի խոսքով, ժողովրդական երաժշտություն է:

<sup>1</sup> Նյու Յորքի ինքնատիպ թաղամասերից. ժամանակին հայտնի էր իբրև արվեստագետների բոհեմական բնակատեղի և ամերիկյան Մոնմարտրի համբավ ունեցի:



— Այսինքն՝ մե՞րը:

— Չէ, ժողովուրդը մենք չենք: Երբեք էլ մենք չենք: Միշտ ուրիշներն են:

— Արի գնանք ժողովրդական երաժշտություն լսենք, ումն ուզում է լինի:

— Չարժի,— ասաց Աղջիկ մայրիկը,— երբ Քարենգիում նման համերգ են տալիս, բոլորն էնպես են իրարով անցնում, որ դա ամեն ինչ փչացնում է: Չէ, հիմա մեզ ուտել է պետք, իսկ հետո պիտի տուն գրնանք ու անկողին մտնենք: Մենք շատ ավելի ենք հոգնել, քան երկուսս էլ կարծում ենք: Ախր վատ էինք, հիվանդ ու միգուցե նույնիսկ դեռ չենք լավացել: Հետո՝ Մայք Մաքքելեշի հետ մեր վաղվա նախաճաշին պետք է թարմ տեսքով ներկայանանք: Խնդրում եմ, Գորտուկ, կարգին կրնձրես, հա՞:

— Լավ, Աղջիկ մայրիկ:

— Ապուրդ կուտես, շոկոլադի տաք ըմպելիք կխմես, իսկ հետո՝ ինչ ուզես:

— Պաղպաղակ կուզեի:

— Եղավ:

Հիսունյոթերորդ փողոցի ավտոմատ ճաշարանը լավն է, բայց պտուտադռնով անցնելու ճար չկա: Հենց տեղ է ազատվում, ու դու փորձում ես խցկվել, մեկնումեկն իսկույն առաջ է ընկնում, քեզ էլ մի կողմ հրում: Ես ու Աղջիկ մայրիկը նայում էինք ու սպասում, բայց երևում էր ներս չենք մտնելու: Հետո բանվորական կոշտ շորեր հագած մի աժդահա մարդ դուռը պինդ բռնեց ու իր հաստ, մազոտ ձեռքով ներսուզուրս անողների ճանապարհը փակեց: Նա ինձ գլխով արեց, որ մտնեմ պտուտադռան մեջ, ես էլ մտա ու կանգնեցի: Սա դուռը մի քիչ հրեց, հետո Աղջիկ մայրիկին գլխով արեց, նա էլ եկավ կանգնեց, իսկ հետո մարդը դանդաղ դուռը պտտեց, ու մենք վերջապես հայտնվեցինք ներսում:

Շուռ եկանք, որ գոնե ապակու հետևից նրան շնորհակալություն հայտնենք, բայց տեսանք գնում է: Ինքն էլ ոնց որ թե բարկացած էր թվում: Գուռն արգեն սկսել էր ամբողջ թափով պտտվել, ու ամեն տեսակ մարդիկ էին ներս լցվում: Ասես լարովի տիկնիկներ լինեին, բեմում կամ կրկեսում ինչ-որ խաղ էին խաղում:

Փողը մանրելու դրամարկղի մոտ լիքը ժողովուրդ կար կանգնած, ու Աղջիկ մայրիկը մի քիչ հուսահատ տեսք ուներ:

— Էստեղ ընտիր ապուր են տալիս,— ասաց նա:— Ու զվարճալի է, չէ՞:

Դե, ճիշտ է, զվարճալի էր, բայց հո իրարանցո՞ւմ չէր, ու բոլորն էլ կիսացնդածի պես էին: Բոլորն էլ մայթին հավաքված աղավնիներէ նման, վրա էին հասել, որ կարծես մայրու ընկույզ ուտեն:

— Հա, Աղջիկ մայրիկ, շատ զվարճալի է:

— Կուզե՞ս ուրիշ տեղ գնանք:

— Չէ, չէ: Արի փորձենք, ինչ լինում է՝ լինի:

Աղջիկ մայրիկը բացեց պայուսակը, բայց մի հաստիկ կին նրան հանձարծ հրեց: Պայուսակը մայրիկի ձեռքից դուրս թռավ, ու ես հասցրի ժամանակին բռնել, որ ամեն ինչ միջից շթափվի ու հատակին շաղ գա: Երբ կուացա, ինձ էլ ինչ-որ մեկը հրեց: Համարյա փովելու էի, բայց չէ, լավ արծա: Շտապ-շտապ ուղղվեցի, պայուսակը ձեռքիս էր, ու ընդամենը իրեք բան էր նրա միջից ընկել: Աղջիկ մայրիկը դրանցից երկուսը գտավ՝ դիմապոչու տուփն ու շրթներկը, բայց նրան մի քանի անգամ էլ հրեցին: Հետո մի տղա վաղեվազ մոտեցավ ու պայուսակից ընկած երրորդ բանն էլ տվեց՝ արծաթե շրջանակով սանրը:

— Օ՛, շատ շնորհակալ եմ,— ասաց Աղջիկ մայրիկն ու փորձեց մի կողմ քաշվել, որ սովածների ճամփան չփակի, բայց հնար չկար: Նրանք ամեն տեղ էին ու դեռ անընդհատ գալիս էին ու գալիս: Սանրը բերած տղային մի երկու-երեք անգամ հրեցին, վերջը սա մի ապահով տեղ գտավ, ու Աղջիկ մայրիկը նրան քսանհինգ սենթ մեկնեց, բայց նա դրուխն օրորեց ու հետ-հետ գնաց: Թուխ տղա էր, տասնմեկ-տասներկու տարեկան ու մի քիչ եղբորս էր նման՝ Դաշտապահ Փիթեր Բոլիվիային, մանավանդ երբ որ գլուխն օրորեց ու հետ-հետ գնաց:

Վերջապես, Աղջիկ մայրիկը երկու դուարը մանրեց, ու մենք գնացինք էնտեղ, որտեղից մատուցարաններ, գդալներ ու անձեռոցիկներ են վերցնում: Երկուսիս հաճար մի մատուցարան վերցրինք, հետո՝ մյուս բաներն ու սկսեցինք սպասել մեր հերթին, որ վաճառողուհիներից մեկ-էնամեկին ասենք, թե ինչ ենք ուզում:

— Երեք տեսակ ապուր կա,— ասաց Աղջիկ մայրիկը:— Բանջարեղենի ապուր, բրնձով հավապուր ու լոբով ապուր:

— Դու գիտես որն եմ ուզում:

— Բանջարեղենինը,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ես էլ բրնձով հավապուր կվերցնեմ:

Քիչ անց վաճառողուհիներից մեկը մի խոր ափսեի մեջ բանջարեղենի ապուր լցրեց, մյուսի մեջ էլ՝ բրնձով հավապուր: Ամեն ափսեի կողքին նա մի փոքրիկ տուփ ադահամ բլիթներ դրեց, հետո՝ երկու բաժին ջոկուլադով պաղպաղակ, իսկ Աղջիկ մայրիկը ձեռքի փողը զցեց ապակե

արկղիկի մեջ, որը բռնակ ուներ, ու արկղիկի առաջ նստած կինը, նայելով փողին, բռնակն իջեցրեց, փողն էլ գլորվեց մետաղե տուփի մեջ ու անհետացավ:

Մենք գնացինք էնտեղ, ուր երկու հինգ սենթանոցը գցում ես ճեղքը ու ծորակի տակ մի բաժակ դնում, հետո սեղմում ես բռնակը, ու ծորակից շոկոլադի տաք ըմպելիք է բաժակդ լցվում: Ես իմը լցրի, Աղջիկ մայրիկն էլ՝ իրենը, բայց հենց նա իր բաժակը վերցրեց, որ մատուցարանին դնի, մի մարդ դիպավ թևին, ու բաժակի պոնկից շոկոլադը պնակի մեջ թափվեց, պնակի միջից էլ՝ մատուցարանին:

Հիմա մեզ մնում էր սեղաններից մեկի մոտ երկու տեղ գտնել: Ավտոմատ ճաշարանի ամեն մի սեղանը շորս տեղանոց է, բայց մենք չէինք կարողանում ոչ մի սեղան գտնել, որ երկու ազատ տեղ ունենար: Իսկ մի-մի տեղ ինչքան ասես կար, Աղջիկ մայրիկն էլ ճարը կտրված՝ ինձ մի սեղանի նստեցրեց, ինքն էլ կողքի սեղանին նստեց: Մենք նույն սեղանին չէինք, բայց իրար մոտիկ էինք: Աղջիկ մայրիկն ինձ ժպտում ու գլխով էր անում:

Ես գզալս վերցրի, որովհետև գիտեի՝ մայրիկը իմ բւտելուն է սպասում, ու սկսեցի ուտել: Ապուրը շատ լավն էր, բայց շորս կողմը էնպիսի իրարանցում էր, որ հավատս չէր դալիս, թե իրոք ընթրում են: Ասես մյուս բոլորի հետ ինչ-որ խաղ էի խաղում, բայց առանց խաղի կանոններն իմանալու:

Իմ սեղանի մոտ մի շաղիկ մարդ էր նստած, հետն էլ նրա կինը՝ իր նման շաղիկ, ու սրանց աղջիկը՝ երեխի իմ տարիքին ու էլի շաղիկ: Տեսա մայրիկը կողքի սեղանից շուտ-շուտ նայում է շաղիկ աղջկան, կարծես ուզում է, որ ուշքս նրան գցեմ ու սկսեմ նրա պես ուտել, բայց իմ ուշքն ու միտքը հենց շաղիկ աղջիկն էր, ու ես ինքս էլ էի արդեն նկատել, թե ոնց է արագ-արագ ու շփշփացնելով ուտում: Նրա առաջ մի մեծ, լիքը ափսե էր, մեջը՝ ինչ ասես. տապակած լոբի ու քաղցր կարտոֆիլի պյուրե, տապակած մակարոն ու կարմրացրած մսի մի խոշոր կտոր, վրայից էլ՝ սոուս: Հոր ու մոր առաջ նույն բաներն էին դրված կարծես թե սրանք երեքով որոշել էին իրարից հետ շմնալու ամեն ինչ հավասար կիսել: Էնպես էլ արագ էին ուտում, որ ես ամաշում էի երեսներին նայել, երեխի նույնիսկ վախենում: Դե, վախենում էի տեսնեն, որ իրենց եմ նայում ու սկսեն նախատել: Ես հազիվ էի ապուրիս կեսը վերջացրել, իսկ նրանք ափսեներն արդեն մաքրել էին ու տխուր-տրտում նըստել, որ էլ բան չկա՝ ուտեն: Պարզ էր՝ դեռ սոված էին, ու ես քիչ էր մնում մեկնումեկին կանչեմ ու ասեմ. «Ի՞նչ կլինի, սրանց ափսեները

տարեք, նորից լցրեք»։ Բայց, իհարկե, շէի կարող էդպէս անել և նստած տեղս ինձ հույս էի տալիս, թե շեն նկատի, որ իրենց եմ նայում ու փորձում էի շնայել, ախր մեկ էլ տեսար՝ սկսեցին նախատել, իսկ ես շնմ սիրում, երբ ինձ նախատում են։ Չգիտես ինչ պատասխանես։

Աղջկա հայրը, առանց մի բառ ասելու, հանկարծ վեր կացավ ու վազեց էնտեղ, ուր ուտելիք էին տալիս։ Մի պատլիկ պառավ կին՝ կոթով լի բաժակն ու յուղաբլիթը մատուցարանին դրած, շտապ մոտեցավ ազատված տեղին ու հենց որ մատուցարանն ուզում էր իջեցնել, շաղիկ սղջիկն ասաց.

— Էստեղ զբաղված է։

Ես նրա ձայնից ու խոսելու ձևից համարյա վախեցա։ Ո՞չ որ տղամարդ խոսեր, ոչ թե ինը-տասը տարեկան աղջիկ։ Պատլիկ, պառավ կինն ասաց.

— Ա՛յ, ւերեցեք ինձ,— ու իր մատուցարանով գնաց։ Այ, նա էր փոքրիկ աղջկա պես խոսում, ինքն էլ իսկը փոքրիկ աղջկա էր նման։ Հետո մի շատ վռազկոտ մարդ մոտեցավ սեղանին՝ եղած-չեղածը մի բաժակ սուրճ ձեռքին, ու շաղիկ աղջիկը նորից ասաց.

— Էստեղ զբաղված է։

Բայց մարդը, մեկ է՝ նստեց աթոռին ու սկսեց արագ-արագ իր սուրճը կուլ տալ։

— Հիմա զբաղված չի,— ասաց,— իսկ ես ընդամենը մի բոսկով եմ նստել։

Աղջիկը նայեց մորը. երկուսն էլ գազազած էին։ Ես մտածում էի, թե ինչու չի մարդը իր մի բաժակ սուրճը հենց ավտոմատի մոտ խմել, մեկ էլ տեսնեմ՝ նա պիջակի գրպանից թղթով փաթաթված տանու սանդղիչ հանեց, շտապ բաց արեց ու սկսեց ուտել։ Մի երկու բոպեում լրիվ կերով պրծավ, տեղից վեր կացավ, ուղիղ նայեց շաղիկ աղջկա սլջերին ու ասաց.

— Տեսա՞ր։ Ոչ մի վատ բան չպատահեց։

Հետո նայեց ինձ, ժպտաց, ու ես մնացի զարմացած։ Ախր չգիտեմ ինչ արեց, բայց դեմքը միանգամից փոխվեց, կարծես էլ առաջվա վռազկոտ ու մտահոգ մարդը չլիներ։ Ընդհակառակը՝ շատ հանգիստ էր, շատ լուրջ ու գնալիս ինձ ասաց.

— Շնորհակալ եմ, անուշիկս, որ թույլ տվեցիր քո սեղանից օգտրվել։

Ես, իհարկե, շփոթմունքից չգիտեի ինչ ասեմ, բայց չգիմացա, բերանիս ծայրով ժպտացի, նա էլ ժպտաց ու իսկույն հեռացավ։ Հենց

ճիշտ ժամանակին, որովհետև շաղիկ աղջկա հայրը՝ ուտելիքով լի մի նոր մատուցարան բռնած, արդեն հետ էր գալիս: Ես մտածեցի՝ քաղցրեղեն կլինի, բայց չէ, երեք բաժին տապակած լոբի էր. ո՛նց էլ իմացել էր, թե կնոջ ու աղջկա ուզածը դա է: Նա ամեն մեկի առաջ մի ափսե դրեց, ու առանց խոսքի, նրանք էլի սկսեցին ուտել: Իրք Վերջացրին, ես շուտ եկա ու նայեցի մայրիկին, որ ասեմ՝ սրանց վեր կենալուց հետո տեղափոխվի իմ սեղանին, բայց մայրիկի տրամադրությունն ընկած էր: Շատ տխուր տեսք ուներ: Կողքի տղամարդու բռնած թերթն էր կարդում:

— Ի՞նչ է եղել,— ասացի ես:

— Ա՛հ, Գորտուկ,— շնչաց Աղջիկ մայրիկը,— Ջոն Դուլին է մահացել: Հենց նոր կարդացի թերթում: Նա հեռուստատեսության ամենալավ ռեժիսորներից էր, ում հետ երբևէ աշխատել եմ, ու ես ահավոր վշտացած եմ: Ինչ լավ մարդու հանդիպեմ՝ մեռնում է, դե եկ ու հասկացիր: Նա հիսունմեկ տարեկան էր, բայց ավելի ջահել էր երևում, ու մտքովս չէր անցնի, թե հանկարծ կմեռնի:

Ճիշտ էդ պահին երեք շաղիկները վեր կացան սեղանից, ու ես ասացի.

— Աղջիկ մայրիկ, արի ինձ մոտ նստիր:

Աղջիկ մայրիկը վերցրեց մատուցարանը, վեր կացավ ու իմ սեղանի կողմն եկավ, բայց նույն բոպեին երևր հոգի, որ իսկի միասին էլ չէին, իմ սեղանի ազատ տեղերը գրավեցին, մի հոգի էլ Աղջիկ մայրիկի տեղը գրավեց՝ կողքի սեղանին:

Աղջիկ մայրիկը նայեց շուրջը, որ ուրիշ տեղ գտնի, բայց ոչ մի ազատ տեղ չկար:

— Դու նստած մնա,— ասաց նա,— ես շուտով կվերադառնամ: Տեղիցդ շարժվես ու ապուրդ էլ մինչև վերջ կուտես: Եղա՞վ: Ես շատ վշտացա խեղճ Ջոնի համար:

— Լավ:

Աղջիկ մայրիկը գնաց, իսկ ես ապուրս կերտ վերջացրի, հետո էլ՝ պսղպաղակա ու սկսեցի շոկոլադի ըմպելիքը խմել: Ամեն շաբաթ Աղջիկ մայրիկի ծանոթներից մեկնումեկը մեռնում էր, ու ամեն անգամ նա զարմանում էր ու շատ վշտանում: Ես նույնիսկ մահվան մասին մտածելուց եմ վախենում: Բա որ մի օր էլ թերթում կարդանք, որ հայրի՞կն է մահացել Փարիզում: Հետո ո՞նց կլինի:

Ես խմում էի շոկոլադի տաք ըմպելիքն ու կամաց-կամաց ավելի տխրում:

Իրք վերջացրի. շորս կողմս նայեցի, բայց Աղջիկ մայրիկը ոչ մի

տեղ չկար: Նստած սպասում էի, հետո մատուցարանով մի կին մոտեցավ ու ասաց.

- Դու արդեն վերջացրե՞լ ես, փոքրիկ:
- Այո, մեմ, բայց մայրիկիս եմ սպասում:
- Կթողնե՞ս տեղդ նստեմ: Դու, իհարկե, կարող ես էստեղ մնալ, մինչև մայրիկդ գա:

— Լավ,— ասացի ես ու վեր կացա, կինն էլ մատուցարանը դրեց սեղանին, նստեց ու սկսեց ուտել: Ես նայեցի շորս կողմս, որ Աղջիկ մայրիկին գտնեմ. դե, սեղաններից մեկի մոտ նստած կլինեիր, բայց ինչքան նայեցի, չերևաց: Ուզում էի գնալ, փնտրել, բայց վախենում էի կորչեմ, ես էլ հո գիտեի, որ Աղջիկ մայրիկը էլի շատ կհուզվի, հետո շատ կջղայնանա, դրա համար էլ մնացել էի կանգնած, իսկ կանգնելուց ոտքերս հոգնել էին: Չէ, որոշեցի, ինչ լինում է՝ լինի, գնամ, Աղջիկ մայրիկին գտնեմ, մեկ էլ տեսա՝ հեռվում նստած է: Սեղանների արանքով վազեցի, բայց մինչև Աղջիկ մայրիկին կհասնեի, նա վեր կացավ տեղից ու քայլեց պտուտադռան կողմը: Վազ տվի հետևից, բայց նա ինձնից շուտ հասավ դռանը ու դուրս եկավ փողոց, իսկ ես դեռ ավտոմատ ճաշարանում էի: Մարդկանց միջով վազում, նրանց դեսուդեն էի հրում ու իսկի պետքս էլ չէր, նույնիսկ ներողութուն չէի խնդրում, վերջը մի կերպ դուրս պրծա փողոց, տեսնեմ Աղջիկ մայրիկը գնում է Քարենգի Հոլ:

— Աղջի՛կ մայրիկ,— գոռացի ես:

Նա միանգամից կանգ առավ ու շրջվեց, բայց դա Աղջիկ մայրիկը չէր, ուղղակի հեռվից մի քիչ Աղջիկ մայրիկին էր նման, իսկ մոտիկից ոչ մի նմանություն չունեիր: Ես շրջվեցի, վազելով եկա պտուտադռան մոտ ու նորից ավտոմատ ճաշարան մտա. ո՞նց էի վախեցել: Հետ վազեցի էնտեղ, ուր Աղջիկ մայրիկն ինձ պատվիրել էր սպասել ու մտքումս խնդրում-աղաչում էի աստծուն, որ օգնի իմ սեղանը գտնեմ, որ Աղջիկ մայրիկը արդեն եկած լինի, ու մենք երկուսով վերադառնանք տուն՝ «Պիեոի» 2109-րդ համարը, մտնենք անկողին ու քնենք: Սկզբում սեղանս չէի գտնում, բայց հետո գտա, որովհետև իմ տեղը նստելու թույլտվություն խնդրած կինը դեռ սեղանի մոտ էր: Նրա հետ նստած էին ուրիշ երեք հոգի, իսկ Աղջիկ մայրիկը չկար: Ես մոտեցա կնոջն ու ասացի.

- Մայրիկս չի՞ եկել իմ հետևից:
- Կարծես թե չէ,— ասաց կինը:
- Կարելի՞ է նորից էստեղ կանգնել:
- Իհարկե: Դե՛, դե՛, մի վախենա, աչքդ շթարթած՝ մայրիկդ կգա:

— Ճի՞շտ:

— Հապա ինչպե՞ս:

Հենց էդ պահին էլ Աղջիկ մայրիկին տեսա. նա սեղանների միջով մոտենում էր, ու ես ուրախությունից ճշացի.

— Աղջի՛կ մայրիկ:

Կինը նայեց ինձ, ժպտաց, ու ես մտածեցի՝ ա՛յ թե բարի է նա:

Աղջիկ մայրիկը եկավ, ձեռքս բռնեց, ու մենք դռան կողմը գնացինք:

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ՎԵՃԵՐՈՒՄ ՊԱՐՏՎՈՂՆ ՈՒ ՀՆՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՎԻԿՏՈՐԻՆԱՅՈՒՄ ՀԱՂԹՈՂԸ

Ի՞նչ լավ էր, որ դուրս եկանք ճաշարանից, ի՞նչ լավ էր, որ ազատվեցինք խառնաշփոթ հրմշտոցից. բա մարդ ուտելու համար էդպես իրարանցում կգցի՞: Չէ, ուտել ասած բանը ես չեմ հասկանում: Գիտեմ՝ դա շատ կարևոր է, որովհետև ամբողջ կյանքս ուտելով եմ զբաղված, նույնփսկ եթե չեմ էլ ուզում, ու Աղջիկ մայրիկը լիներ, թե Վիոլա մայրիկը, մի օրով մեր տուն եկած կամ մի գիշերով մոտս մնացած ուրիշ տարբեր կանայք, բոլորն էլ սովորաբար խնդրում էին, որ ուտեմ, կիսատ չթողնեմ, հրամայում էին՝ կե՛ր, իսկ Տղա հայրիկը՝ չէ. նա ինձ երբեք չէր հրամայում, ծիծաղում էր ու ասում. «Դե, քեզ տեսնեմ, կուտերես, կեր, թե չէ գիտես»:

Հետո աչ ձեռքը բարձրացնում էր, իրր որ չկերա, «գիտեմ»՝ շրջմփացնելու է, բայց ես միշտ էլ գիտեի, որ չի շրջմփացնի, ու ինքն էլ դիտեր, որ ես դա գիտեմ, ինքն էլ լավ գիտեր, որ ես սիրում եմ լսել, երբ էդպես է ասում ու սիրում եմ տեսնել, երբ էդպես է անում: Ես միշտ ծիծաղում էի ու մեծ մասամբ ուտում: Հորս կարծիքով՝ ինքն իր Լրեխաներին ոչինչ էլ չպետք է հրամայեր:

Մի օր նա ասաց.

— Գուցե ես սխալվում եմ, բայց դեմ եմ երևխաներին ծեծելուն. ուրիշ բան, եթե խոսքը ինքնապաշտպանությանն է վերաբերում:

Ես հարցրի՝ ինքնապաշտպանությունն ինչ է, նա ասաց՝ այ, ենթադրենք, թե ես գդալը վերցնեմ ու իր վրա թափ տամ, ինքն էլ ինձ բռնի ու սենյակի մյուս ծայրը շարտի. դա իր կողմից հենց ինքնապաշտպանություն կլինի: Ես դիտմամբ գդալը վերցրի ու սկսեցի թափ տալ, նա էլ ինձ բռնեց ու ձեռքերեց, թե սենյակի մյուս ծայրն է շարտում: Աղջիկ

մայրիկը բարկացավ վրան, ու նրանք, սովորականի պես, ճաշի սեղանի շուրջը վեճի մեջ մտան, իսկ ես ու Փիթը նստած նայում էինք:

Մենք սիրում էինք նրանց վիճելիս նայել, որովհետև երկուսն էլ միանգամից փոխվում էին, դառնում կարծես ուրիշ, բայց և մնում նույնը, ու մենք երբեք չգիտեինք, թե նրանց վեճը ինչքան կտևի: Մեկ-մեկ ամբողջ ճաշը վեճի մեջ էր անցնում, մեկ-մեկ էլ վեճը դեռ կարգին չըսկրսած՝ արդեն վերջանում էր, ու ես ու Փիթը մնում էինք հիասթափված:

Մի անգամ Փիթն ասաց.

— Է՛, հայրիկ, բա էդպե՞ս են վիճում:

Աղջիկ մայրիկն էլ ջղայնացավ Փիթի վրա, ասաց՝ անմիջապես վեր կենա սեղանից, գնա իր սենյակն ու աշխարհագրությունը կարդա:

Փիթն ուրախացավ, իսկ Աղջիկ մայրիկը ավելի փրփրեց ու հայրիկին ասաց.

— Տեսնո՞ւմ ես, թե վերջն ինչ է դուրս գալիս: Ուժդ ես փորձում, քո հաղթանդամ տեղով պատեպատ ընկնում, աղջկադ բոլոր ոսկորները սողակի ջարդեցիր: Ես քեզ կանգնեցնում եմ, վեճի ենք մտնում, իսկ երեխաները դրանից հաճույք են ստանում. նրանք հրճվանքով են սպասում, թե երբ ենք կովելու, իսկ հենց որ փորձում եմ պատժել, ավելի են հրճվում: Լավ կլինեք դասընթացների գնայիր ու գոնե քիչ թե շատ գաղափար կազմեիր հայրություն մասին:

Էստեղ արդեն Տղա հայրիկը փրփրեց, ու նրանք իսկականից սկսեցին կովել:

Փիթը թաքուն հետ եկավ հյուրասենյակ ու գրապահարանի հետևը պահ մտավ, որ ամեն ինչ տեսնի ու լսի: Բայց ուտելուց նա գլուխն սշատել էր, իսկ երբ որ էդպես գլուխն ազատում էր, հո չէ՛ր ուրախանում:

Չէ, ուտել ասածը ես չեմ հասկանում ու պրծավ գնաց: Փիթի հետ միշտ խոսում էի դրա մասին, մի օր էլ ասացի.

— Երանի երեխեքը իսկի շուտեին, չէ՞: Երանի առանց ուտելու ապրեինք. երբեք, երբեք շուտեինք: Մեր ամբողջ կյանքում՝ սկզբից մինչև վերջ:

Փիթն ասաց.

— Շատ բան չուզեցի՞ր, — Լնպես որ մենք էլ կովեցինք:

Երբ Աղջիկ մայրիկն ու ես վերջապես դուրս եկանք ճաշարանից ու Հիսունյոթերորդ փողոցում էինք էլի, նայեցինք իրար, հետո Աղջիկ մայրիկը կռացավ ու ինձ պինդ գրկեց, ու նրա աչքերում արցունքներ երևացին:



— Ափսոս, որ ընկերդ մահացել է, Աղջիկ մայրիկ, բայց խնդրում եմ, մի տխրիր:

— Դա կապ չունի, Գորտուկ: Ուղղակի ես քեզ շատ-շատ եմ սիրում: Իհարկե, ափսոս, որ Ջոն Դուլին մահացել է, բայց երբեմն մոռանում եմ, թե քեզ ինչքան եմ սիրում, հետո հիշում եմ ու էնպես ուրախանում, որ աչքերս արցունքով են լցվում:

— Ա՛խ, Աղջիկ մայրիկ,— ասացի ես,— դու իմ մայրիկն ես, ընկերուհիս, իմ մեծ քույրն ու փոքր քույրիկը, դու ամենալավն ես, ամենասիրունն ու ամենաքաղցրը, դու ինձ համար ամեն ինչ ես:

— Ամեն ինչ, բացի Տղա հայրիկից ու Փիթից,— ասաց Աղջիկ մայրիկը, ու դա ճիշտ էր, իսկ հետո Աղջիկ մայրիկն ասաց.— Ինչ արած, ներիր ինձ, Գորտուկ, ներիր, որ էսպես եղավ, բայց նրանք լավ են, ես գիտեմ, լավ են, նրանք միշտ էլ լավ են, դու մի մտածիր, թե հեռացել են, չկան կամ նման մի բան. պարզապես Փարիզում են, իսկ մենք էստեղ ենք, ուրիշ ոչինչ: Երևի հիմա իրենք էլ են մեզ պես փողոցներով քայլում:

Մենք կանգնեցինք մայթին՝ ավտոմատ ճաշարանի առաջ, հետո շուտ եկանք ու նայեցինք ներսի փոքրիկ, քառակուսի սեղանների, շորս-շորոս դրված փոքրիկ աթոռների, ճաշարանի ինքնասպասարկման մասին ու դեսուդեն պտտվող մարդկանց, որ նստում էին, ուտում, վեր կենում, նորից ուտելիքի գնում կամ էլ դուրս գալիս: Մենք կանգնել, նայում էինք ու կարծես դեռ ներսում լինեինք:

- Էլ երբեք,— ասաց Աղջիկ մայրիկը:
- Հա երևի, եթե էսպես շիլաշփոթ լինի:
- Խոսքը դրա մասին չէ, Գորտուկ:
- Բա ինչի՞:
- Ուրիշ բանի:
- Ինչի՞, Աղջիկ մայրիկ:
- Չեմ կարող ասել:
- Կարող ես, ասա՛:
- Դե, էլ երբեք... իմ արած սխալները նորից չեմ անի:
- Ի՞նչ սխալներ:
- Ախր, դիտմամբ էլ անում էի: Համառորեն իմն էի պնդում: Ինչի՞ համար: Սրա՞: Է՛հ, բաժանվող մայրը անխելք է, անխելք:
- Չէ, անխելք չի, Աղջիկ մայրիկ, գեղեցիկ է:
- Դու իսկը մորդ կտորն ես, Գորտուկ:

Մենք էլ շնայեցինք ավտոմատ ճաշարանին ու քայլեցինք մինչև

փողոցի անկյունը, հետո Աղջիկ մայրիկը թերթի կրպակից «Նյուզ» ու «Միրրը» առավ, իսկ հետո Հիսունյոթերորդ փողոցով հասանք Վեցերորդ պողոտա ու գնացինք Հինգերորդ պողոտայի կողմը:

Ի՞նչ լավ էր էստեղ: Շատ լավ: Երաժշտական խանութների ցուցափեղկերից դաշնամուրներ էին երևում, մյուս խանութներում էլ եվրոպական փոքրիկ մեքենաներ էին կանգնած, իսկ պատկերասրահներում լիքը նկարներ կային: Մենք կանգ էինք առնում ու ամեն ինչին նայում: Լավ էր, շատ լավ, որովհետև միասին էինք, որովհետև երկար ժամանակ միասին ապրել էինք Մաքըրոնի Լեյնի թիվ 1001 տանը ու հիմա նյու Յորքում էինք, իսկ երեկ դեռ տանն էինք՝ էստեղից հեռու, ու չգիտեինք, որ այսօր նյու Յորքում կլինենք:

Խանութներից մեկի ցուցափեղկի մոտ մի խումբ մարդիկ էին հավաքվել, մենք էլ կանգնեցինք, տեսնենք՝ հենց ցուցափեղկում, մեծ էկրանով հեռուստացույց է դրված: Էկրանի վրա մի դուրեկան մարդ էր. նա օտարերկրացու նման էր խոսում, աչքերն էլ փայլում էին, որովհետև ինչ-որ բանից կարծես հուզված էր, բայց չգիտեմ ինչից: Նրա կողքին մի երիտասարդ կար, սա էլ էր դուրեկան: Շատ սիրալիր էր, մտերմիկ ու օտարերկրացու պես խոսողին ասաց. «Դե, միստր Պրատո, անցյալ շաբաթ դուք ճիշտ պատասխանեցիք տասնվեց հազար դոլարանոց հարցին և ձեր տրամադրության տակ մի ամբողջ շաբաթ ունեիք, որպեսզի սրոշեք՝ վերցնո՞ւմ եք տասնվեց հազարը, թե՞ փորձելու եք երեսուներկու հազար դոլար շահել: Արդեն որոշե՞լ եք»:

«Այո, որոշել եմ,— ասաց մարդը:— Ես մտա եկեղեցի և աստծուն աղաչանք արի, որ ինձ ճշմարիտ ճանապարհը ցույց տա ու հիմա՝ աստծո օգնությամբ, պիտի սկսածս կիսատ չթողնեմ»:

Երիտասարդը հրճվանքի մեջ ընկավ, և էկրանի վրա բոլորը ծափ տվին, ուրախ-ուրախ բացականչեցին ու իրար հետ քշփշացին: Երիտասարդը շուռ եկավ, նայեց սեղանի մոտ նստած տղամարդուն, որի երկու կողմում ոստիկաններ էին կանգնած, սա էլ սեյֆը բացեց, մի ծրար հանեց ու մեկնեց երիտասարդին: Նա օտարերկրացու նման խոսողին տարավ դեպի անձայնաթափանց խցիկը՝ հեռախոսի խցիկի պես մի տեղ, ու մարդը, որն ուզում էր սկսածը կիսատ չթողնել, մտավ ներս: Տեսքից մեն-մենակ ու վախեցած էր երևում, և էկրանի վրա բոլորը սսկվեցին: Խցիկի միջի մարդը խաչակնքեց, հետո երիտասարդը պատռեց ծրարը, մի թղթի կտոր հանեց ու ասաց. «Դե՛, Դինո, չվախենաք: Ես հարցը ծայրեծայր մի անգամ կկարդամ, և ձեզ երեսուն վայրկյան կտրվի պատասխանելու համար՝ երեսուներկու հազար դոլարի դիմաց»:

Երիտասարդը նայեց թղթի կտորին, ուր հարցն էր գրված ու հետո ասաց. «Դի՛նո, հարցը շորս մասից է բաղկացած»: Նա կարդաց հարցը, ու ետ մտածեցի, որ աշխարհում ոչ ոք թեկուզ մի՛ մասին չի պատասխանի, ինչ մնաց, թե լրիվ շորս մասին, ու թվում էր՝ խցիկի մարդը չի կարողանա նույնիսկ հարցի բոլոր շորս մասերը հիշել: Երեսուն վայրկյան, մինչև խեղճ մարդը հարցի պատասխանը գտներ, նվագախումբը մի փշաքաղվելու երաժշտություն էր նվագում, իսկ հետո երաժշտությունը կտրվեց, ու ամենքն էլ սրտատրոփ սպասում էին:

— Տեսնես կպատասխանի՞, Աղջիկ մայրիկ:

— Իսկ դա հնարավո՞ր բան է:

Օտարեկրացու պես խոսող մարդն ասաց. «Օպերան կոչվում է «Աիդա»: Վայրը, որտեղ այն կատարվեց Արթուրո Տոսկանինիի լեկավարությունամբ, Բրազիլիան է: Առաջին անգամ «Աիդան» բեմադրվեց Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում: Դա նավակատիքին էր»:

«Ճի՛շտ է»,— ճշաց երիտասարդը, և էկրանի վրա բոլորը գոռոռացին, ու փողոցում կանգնածներն էլ ուրախացան: Մարդը դուրս եկավ խցիկից ու երիտասարդի ձեռքը սեղմեց: Նրա աչքերում կարծես թե արցունքներ կային, երբ իրեն ողջունողներին ձեռքով արեց, հետո էլ ինչոր մեկին օգային համբույր ուղարկեց: Երևի տանը մնացած կնոջն ու երեխաներին էր համբույր ուղարկում. դե, արդեն վերջ, պատասխանել էր հարցի բոլոր մասերին ու երեսուներկու հազար դոլարը շահել: Երիտասարդը շատ էր ուրախացել նրա համար ու ասաց, որ մի շաբաթով մեկնի տուն և մտածի՝ վերցնելո՞ւ է երեսուներկու հազարը, թե՞ փորձելու է վաթսունչորս հազար շահել:

Մենք Հիսունյութերորդ փողոցից անցանք Հինգերորդ պողոտա, ու երկուսս էլ կարգին ուրախ էինք մարդու համար, ասես ճանաչում էինք նրան, իր ընտանիքին ու հպարտ էինք, որ նա այդքան բան գիտի օպերայի մասին:

— Հուսով եմ՝ չի փորձի վաթսունչորս հազարը շահել,— ասաց Աղջիկ մայրիկը:— Թե չէ վաթսունչորս հազար մասից կազմված հարց կտան խեղճին:

— Զեն տա,— ասաց ես:— Համ էլ եկող շաբաթ նա իրավունք ունի աշխարհում օպերայի ամենահեղինակավոր գիտակին հետը տանելու. էդպես հայտարարեցին: Ես չեմ համբերում, ուզում եմ իմանալ՝ նա փողը կվերցնի՞, թե՞ կփորձի ավելին շահել:

— Ես էլ չեմ համբերում,— ասաց Աղջիկ մայրիկը:— Մի տես, ի՞նչ պակաս կյանքի նպատակ է:

Մենք քայլում էինք Հինգերորդ պողոտայով, նայում խանութների ցուցափեղկերին ու կամաց-կամաց հասանք մինչև «Պիեռ»: Մտանք հյուրանոց, մեր բանալին վերցրինք, վերելակով բարձրացանք քսանմեկերորդ հարկ, միջանցք անցանք, թեքվեցինք դեպի աջ ու, վերջապես, տանն էինք, մեր հարազատ, մեր լավ 2109-րդ համարում:

Ներս մտանք, հանվեցինք ու մեզ անկողին գցեցինք, Աղջիկ մայրիկը պինդ գրկեց ինձ, ու մենք սկսեցինք խոսել ու ծիծաղել, իսկ ինչ եղավ հետո՝ արդեն չեմ հիշում, որովհետև մուշ-մուշ, անուշ քնած էի:

**ՍԵՐՈՒՅՔՈՎ ԵՆԱԿ ՈՒ ԶՐԿՈՏԵՄՈՎ ԳԱՌԱՆ ՄՍԻ ԿՈՏԼԵՏ.**  
**Ա՜Յ ՔԵՋ ՆԱԽԱՃԱՇ**

Առավոտյան հեռախոսը զնգաց, բայց Աղջիկ մայրիկը տեղից վեր չթռավ, որ լսափողը վերցնի, ես էլ շրթունքներս նրա ականջին մոտեցրի ու շնչացի:

— Հեռախոսը, Աղջիկ մայրիկ:

Առանց աչքերը բացելու, Աղջիկ մայրիկն ասաց.

— Խնդրում եմ, իմ տեղը դու պատասխանիր: Ասա՝ քնած է: Ասա՝ թող վաղը զանգեն:

Ես ցած թռա անկողնուց ու լսափողը վերցրի: Մայք Մաքքլեչին էր, բայց նա կարծեց, թե ես Աղջիկ մայրիկն եմ:

— Ձեր դատրիկի հետ նախաճաշի եկեք, — ասաց: — Ես ներքեվում եմ:

— Միստր Մաքքլեչի, — ասացի, — մայրիկս քնած է ու խնդրում է, որ վաղը զանգեք:

— Միստր Մաքքլեչի՞, — բացականչեց Աղջիկ մայրիկը: Նա վեր թռավ անկողնուց, լսափողը ձեռքիցս խլեց արագ-արագ ու ծիծաղելով ասաց, որ հիմա կիջնենք՝ ընդամենը տասնհինգ րոպեից:

Նա լսափողը դրեց, ու 2109-րդ սենյակում վազվզոցն սկսվեց: Մինչև ատամներս կհասցնեինք լվալ, Աղջիկ մայրիկը լողարանը լցրեց, երկուսով մտանք մեջը, լողացանք-մաքրվեցինք, հետո դուրս եկանք ու սրբվեցինք, հետո էլ մեր միանման շորերից ամենալավը հագանք. սպիտակ, փոքրիկ ծաղիկներով բաց դեղինները:

Երբ դուրս թռանք սենյակից ու վազեվազ վերելակների մոտ հասանք, միսս Քրենշոն էնտեղ կանգնած էր ու ասաց.

— Այդ դու ես, հա՞:

— Այո,— ասացի ես, իսկ նա ասաց.

— Վախենում էի, որ այլևս շտեմանեմ քեզ: Նորից կգա՞ս թեյ խմելու:

— Կգամ: Սա էլ մայրիկս է:

Միսս Քրենշոն ժպտաց Աղջիկ մայրիկին ու աւաց.

— Ես ձեր դստրիկից այնքան բան եմ սովորում: Հուսով եմ այսօր հյուր կգաք ինձ. հինգից հետո, ցանկացած ժամանակ:

Աղջիկ մայրիկը ժպտաց ու ասաց.

— Սիրով:

Վերելակը եկավ, մենք ներս մտանք, բայց առավոտ էր, ու ներսում լիքը մարդ կար: Ես կանգնեցի Աղջիկ մայրիկի ու միսս Քրենշոյի միջև, ու նրանք շէին թողնում, որ ինձ հրմշտեն: Երբ դուրս եկանք վերելակից, շատ աչքի ընկնող մի մարդու տեսա՝ բարալիկ բեղով: Ձեռքին երկու փունջ մանուշակ էր բռնել: Առաջինը վերելակից միսս Քրենշոն դուրս եկավ: Նա մոտեցավ մարդուն, մանուշակի երկու փունջն էլ վերցրեց ու նրան համբուրելով ասաց.

— Ի՞նչ անուշիկ բան ես արել, Մայք Մաքքլեշի:

Մայք Մաքքլեշին վրա բերեց.

— Քեյթ, դու գիտես, որ ես միշտ էլ պաշտել եմ քեզ:

Աղջիկ մայրիկն ու ես մի կողմ քաշվեցինք, որ գնացող-եկողներին շխանգարենք ու կանգնեցինք Մայք Մաքքլեշիի և Քեյթ Քրենշոյի կողքին:

— Եթե ինձ պաշտեիր,— ասաց միսս Քրենշոն,— մանուշակներ չէիր նվիրի: Դու կհիշեիր, որ ես փշոտ կակտուսի կարմիր ծաղիկներն եմ սիրում:

Նա շրջվեց իմ ու Աղջիկ մայրիկի կողմը և ամեն մեկիս մի փունջ մանուշակ տվեց:

— Ուրեմն՝ հինգից հետո,— ասաց:

— Դուք ծանոթ եք,— հարցրեց Մայք Մաքքլեշին:

— Տե՛ր աստված, իհարկե,— ասաց միսս Քրենշոն:— Դու հիանալի գիտես, որ ես ծանոթ եմ տաղանդով օժտված յուրաքանչյուրի հետ: Իսկ այս երկուսը տաղանդի ծով են:

— Երևի քո շնորհիվ,— ասաց Մայք Մաքքլեշին:

— Ամենևին,— ասաց միսս Քրենշոն:— Թե կուզես իմանալ, այդ նա է ինձ դասեր տալիս,— ու միսս Քրենշոն գլուխս շոյեց:— Դե, ձեզ բոլորիդ հաճելի ժամանց եմ ցանկանում:

— Արի մոտ օրերս՝ հնարավորին շափ շուտ, նստենք ու մի կարգին

խոսենք,— ասաց Մայք Մաքքլեչին:— Ձեռքիս նոր պիես կա, քո օգնութեան կարիքն է զգացվում:

— Ես կզանգահարեմ քեզ,— ասաց միսս Քրենշոն:

— Մեր վերջին հանդիսմանն էլ այդպես առաջիք, համարյա մի տարի առաջ: Չի՞ լինի, որ ի՛նքս զանգահարեմ:

— Չհամարձակվես: Այս անգամ ես անպայման կզանգահարեմ:

— Ե՞րբ:

— Վաղն առավոտյան քեզ համար շո՞ւտ է, թե ուշ:

— Ես կսպասեմ, Քեյթ:

Միսս Քրենշոն դիմեց Աղջիկ մայրիկին.

— Թեյի գալիս պիեսն էլ վերցրեք, լա՞վ:

Աղջիկ մայրիկը նայեց Մայք Մաքքլեչին ու հետո ասաց.

— Լավ:

Միսս Քրենշոն երկար նախասրահով գնաց դեպի դուռը: Էնպես էր քայլում, կարծես թագուհի լիներ:

— Բախտներս բերեց,— ասաց Մայք Մաքքլեչին:— Ես գաղափար չունեի, որ դուք Քեյթ Քրենշոյին ճանաչում եք: Եթե կարողանամ նրան համոզել, որ դերակատարների հետ աշխատելուս ժամանակ օգնութիւն ցույց տա, պիեսի հետագա ճակատագրի համար ինձ շատ ավելի ապահով կզգամ:

— Ես չեմ ճանաչում նրան,— ասաց մայրիկը:— Աղջիկս է ճանաչում:

— Պիտի գլխի ընկնեի,— ասաց Մայքը:

Մայրիկը ինձ ներկայացրեց միստր Մաքքլեչին, հետո մենք մտանք մի մեծ, պայծառ ու լուսավոր սրահ: Երեքս էլ նստեցինք սպիտակ, հաստ սփռոցով ծածկված սեղանի շուրջն ու սկսեցինք միասին նախաճաշել:

— Օրվա մեջ ամենից շատ նախաճաշն եմ սիրում,— ասաց Մայք Մաքքլեչին,— հույս ունեմ՝ դուք նույնպես: Ես իսկական հաճույք չեմ ստանա, եթե մնացածներն էլ հաճույք չստանան, և գերադասում եմ կարգին նախաճաշել:

Մենք սկսեցինք սերուցքով ելակից, հետո մատուցողը արծաթե մեծ ավսեի մեջ փխրուն խոզապուխտով ձվածեղ բերեց, մյուս մատուցողն էլ՝ գառան մսի լավ կարծրացրած կոտլետ ու թարմ ջրկոտեմ, իսկ մի ուրիշը՝ տապակած կարտոֆիլ: Մայք Մաքքլեչին նախ Աղջիկ մայրիկին ու ինձ հյուրասիրեց, հետո ինքը վերցրեց ու սկսեց ուտել, Աղջիկ մայրիկը հետևեց նրան, ես էլ՝ Աղջիկ մայրիկին: Մենք ուտում էինք, ուտում, խոսում ու ծիծաղում, ու Մայք Մաքքլեչին իմ տեսած ամենահաճելի

մարդկանցից մեկն էր: Նա երիտասարդ չէր, հիսունհինգ տարեկան էր, ինքն ասաց, բայց բարձրահասակ էր ու ամուր, աչքերն էլ ջահել մաքրու աչքեր էին: Նրա դեմքը երկար էր ու նեղ, իսկ երբ չէր կառակում կամ ծիծաղում՝ շատ լուրջ, բայց նա համարյա անընդհատ կամ կատակում էր, կամ էլ ծիծաղում: Մազերը խիտ էին, ալեխառն ու ձախ կողմից ուղիղ գծով վարս բացած: Հենց որ նախաճաշը վերջացրինք, Մայքը թղթապանակից մի մեծ, դարչնագույն ծրար հանեց ու տվեց Ազջիկ մայրիկին:

— Ահա,— ասաց:— Խնդրում եմ, ինչքան հնարավոր է, շուտ կարդա: Ես նկատի ունեմ՝ բարձրաձայն, որ Լուսերեսն իմանա, թե պիեսը ինչի մասին է: Նա ճիշտ որ Լուսերես է, չէ՞:

— Հայրն է անունը Լուսերես դրել:

— Մազում է:

— Մի ութ-ինը ուրիշ անուններ էլ ունի:

— Դե լավ,— ասաց Մայք Մաքքլեչին:— Կկարդաս ու Քեյթի մոտ թեյի գնալիս հետո կտանես: Նա հավանաբար երկուսիդ էլ կխնդրի կարդալ: Ինչ որ ասի, շատ ուշագիտ կլսես: Նա իրոք մեծություն է: Տասը բողոքում քեզ ավելին կսովորեցնի, քան տասը տարում ինքնուրույն կսովորեիր:

— Մայք,— ասաց մայրիկը,— ես ուղղակի ցնցված եմ, բայց Կալիֆոռնիայից թռել եմ, եկել, որ իմ գործը դասավորեմ, ի՛նքս բեմ բարձրանամ, ոչ թե աղջկաս բեմ հանեմ:

— Ինձ ժամանակ տուր, հա՞:

— Այ թե ինչ. ինձ համար դեր կա՞, թե չկա:

— Տվյալ պահին՝ չկա, բայց եթե ամեն ինչ բարեհաջող գնա, մի բան կմտածենք:

— Իսկ Լուսերեսը քեզ իսկապե՞ս պետք է:

— Այո: Իմիջիպսոց, նրա հայրը ո՞նց է:

— Գերազանց,— ասաց մայրիկը:— Բայց դու չես էլ լսել, թե աղջիկս ինչպես է կարդում:

— Դե, լսեցի, թե ինչպես է խոսում, հիմա էլ իրեն եմ տեսնում,— ասաց Մայքը:

— Դու վստահ ես, որ հենց նա է քեզ պետք:

— Այո: Մնացածը իրենից է կախված ու մեկ էլ՝ քեզնից:

— Այդ դեպքում,— ասաց մայրիկը,— խոսիր նրա հետ:

— Չէ,— ասաց Մայքը:

— Ինչո՞ւ:

— Եթե իմ աղջիկը լիներ, ես նրան թույլ չէի տա, — ասաց Մայքը: — Ճիշտ է, սիրում եմ թատրոնը: Նույնիսկ դերասաններին եմ սիրում, իսկ նրանց, լավ գիտես, սիրելը հեշտ չէ, բայց ես չեմ կարող խղճիս վրա նման պատասխանատվություն վերցնել ու երեխային համոզել, որ թատրոնում խաղա:

— Ես էլ չեմ կարող, — ասաց մայրիկը: — Վերջիվերջո, նա միայն իմ աղջիկը չէ: Հայր էլ ունի, իսկ նա լրիվ անտեղյակ է մեր բռնած գործին:

— Այ, մտքինս դա էր, — ասաց Մայքը: — Գիտե՞ս ինչ, ուղղակի սյրենք բարձրաձայն կկարդաս, ենթադրենք, թե ինչ-որ խաղ եք խաղում: Լուսերեսի հետ քննարկիր, խոսիր: Կպարզես, թե նա ինչպես է ընկալում: Հետո, եթե բանը հասնի հորը տեղյակ պահելուն, նրան զանգ տուր:

— Նա Փարիզում է:

— Լ՛հ, Փարիզում էլ հեռախոսներ կան:

— Ես ցնցված եմ, Մայք: Իրոք ցնցված եմ: Որովհետև հասկացա՝ հենց Լուսերեսն է քեզ պետք, բայց մյուս կողմից էլ՝ ահավոր հիստիափոփված եմ, որ սպասելիքներս շարդարացան:

— Չէ, մի հիստիափոփիր, — ասաց Մայքը: — Միանգամից ամեն ինչ չի լինի: Ես մի երկու մտահղացում ունեմ:

— Օրինակ՝ ի՞նչ:

— Դե, նախ և առաջ, մենք երեքով կարող ենք պիեսի հեղինակի հետ վաղը նախաճաշել: Ի վերջո, տեր ու տիրականը նա է, բայց երևի թե նրա գլխում էլ նույն միտքը ծագի, ինչ որ իմ գլխում, երբ ձեզ միասին նկատ:

— Ի՞նչ միտք:

— Միգուցե նա ավելի լավ բան մտածի: Ես ընդամենը պրոդյուսեր եմ: Եկեք սպասենք: Իսկ հիմա գնացեք զբոսայգում ման գալու: Այսօր տեսքդ շատ ավելի թարմ է, քան թե երեկվա ճաշին:

— Երեկ հիվանդ էի, — ասաց Աղջիկ մայրիկը: — Երկուսս էլ հիվանդ էինք: Ջերմություն ունեինք: Ինքնաթիռ նստելուց էդպես ենք լինում: Հիմա էլ քունս է տանում:

— Դե ուրեմն զբոսնելուց հետո քունդ առ ու գնա Քեյթի մոտ՝ թեյի: Ես ձեզանից լուրի կսպասեմ: Եթե հիմնարկում չլինեմ, զանգիր տուն:

— Ես ուղղակի ցնցված եմ, Մայք:

— Իսկ դո՞ւ, Լուսերես, — հարցրեց Մայքը:

— Ես էլ եմ ցնցված:



— Իսկապե՞ս:

— Այո: Ես սիրում եմ զբոսայգում ման գալ:

Մայր Մաքքլեչին ու Աղջիկ մայրիկը ծիծաղեցին, իմ ծիծաղն էլ եկավ, բայց ես ճիշտ որ շատ եմ սիրում զբոսայգում ման գալ:

Մենք վեր կացանք ու միասին դուրս եկանք Հինգերորդ պողոտա: Մայքը ցատկեց մի տաքսիի մեջ, իսկ Աղջիկ մայրիկն ու ես Հինգերորդ պողոտան անցանք ու մտանք Կենտրոնական զբոսայգին, որ ման գանք:

### ԱՄԵՆ ԻՆՉ ՊԻԵՍԻ ԱՂՋԿԱ ՄԱՍԻՆ

Մենք զբոսայգում շատ լավ ման եկանք, հետո վերադարձանք «Պիեռ» ու բարձրացանք մեր համարը:

Աղջիկ մայրիկը բացեց դարչնագույն ծրարն ու պիեսը հանեց:

— Սա՞ է պիեսը:

— Հա, բայց ձեռագիրն է: Դեռ չեն բեմադրել: Հնարավոր է, որ նույնիսկ դեռ անավարտ է: Հեղինակը կարող է ինչ-որ բան ավելացնել, փոխել կամ ինչ-որ բան կրճատել:

— Վերնագիրն ի՞նչ է:

— «Թուշկոտող գնդակը»: Հեղինակն էլ էմերսոն Թալին է:

— էմերսոն Թալի՞ն:

— Այո, նա է գրել:

— Դու ճանաչո՞ւմ ես նրան:

— Ոչ, չեմ ճանաչում:

— Լսած կա՞ս նրա մասին:

— Չէ, ոչ էլ լսել եմ: Երևի նոր թատերագիր է: Համարյա բոլոր նոր թատերագիրները իրենց պիեսներն ուղարկում են Մայք Մաքքլեչին, որովհետև նա չի վախենում սրանց գործերը բեմադրելուց ու ամեն անգամ մեծ շարժարանք է թափում, որ լավ բան դուրս գա:

Աղջիկ մայրիկը առաջին էջը բացեց ու ասաց.

— Դե, պատրա՞ստ ես, Գորտուկ:

— Կարդալո՞ւ ես:

— Այո:

— Լրի՞վ:

— Մինչև վերջին բառը: Դու հարմար տեղավորվիր: Պառկիր, էթե Լուզես և ուղղակի լսիր:

— Ես էլ կարծում էի, թե նախ կքնես:

— Չէ, քունս փախել է: Շատ եմ լարված, որ քնեմ: Դե, անցնենք դործի:

— Անցնենք, բայց կարողալդ ինչքա՞ն կտեսի:

— Է՛, եթե ինչպես որ հարկն է, կարդամ՝ երեխ երկու ժամ, բայց գուցեև ավելի երկար:

— Պիտի անպայման լրիվ կարդա՞նք:

— Իհարկե, Գորտուկ:

— Ինչո՞ւ:

— Դե գիտե՞ս ինչ կա, օրիորդ, գլխիս դմբո շձևանաս, սա ինձ համար կյանքի խնդիր է:

— Ուրեմն ես իրավունք չունե՞մ հարցնելու, թե ինչու պիտի անպայման լրիվ կարդանք:

— Ո՛չ, չունե՛ս,— գոռաց Աղջիկ մայրիկն ինձ վրա, ու ա՛յ քեզ, սուղորականի պես մեր կռիվն սկսվեց: Օրական մենք ամենաքիչը մի անգամ կովում ենք:

Մայրիկը պիեսը խփեց պատի ճակատով ու ասաց.

— Չե՛մ ուզում: Ոչ մի դեր էլ չե՛մ ուզում: Վերջիվերջո, սա վիրավորական է: Եթե տեսք ու շնորհքից զուրկ եմ, որ դեր ստանամ, ուրեմն ոչ մի դեր էլ ինձ հարկավոր չէ: Եթե աղջկասս պոչը պիտի դառնամ, որ թատրոն ընկնեմ, գրողի ծո՛ցը կորչի թատրոնը:

Նա սկսեց լաց լինել, իսկ հետո բղավեց վրաս.

— Ատո՛ւմ եմ քեզ:

Ես էլ նրա վրա բղավեցի.

— Հա՛, դե ես էլ քե՛զ եմ ատում:

Ու մի քիչ լաց եղա: Բայց ախր լաց լինելուց ամաչում եմ: Միշտ էլ ամաչել եմ: Երեխ որովհետև եղբայրս՝ Դաշտապահ Փիթեր Բուլիվիան էլ է դրանից ամաչում:

Նա ասում էր. «Լաց լինելը մեծերի գործն է, մերը չի: Նրանք են անընդհատ լացուկոծ դնում»:

Աղջիկ մայրիկը լաց լինելով պիեսը հատակից վերցրեց ու սկսեց ճմռված էջերը հարթեցնել:

Ես չեմ սիրում, որ նրա տրամադրությունն ընկնում է, դրա համար էլ ասացի.

— Ներիր: Ես պիեսը կլսեմ: Մինչև վերջին բառը:

— Չէ,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ինչ է, լավությո՞ւն ես անում: Հիմա կզանգեմ Մայք Մաքքլեչիին ու կասեմ, որ դա, պիեսը վերցնի, ասանի իրեն պահի:

— Լա՛վ, խնդրում եմ, պետք չի:

— Ես ամաշում եմ ինքս ինձանից,— ասաց Աղջիկ մայրիկը,— իսկ գա բոլորովին հաճելի բան չի: Ուրիշ պրոդյուսերների մոտ բախտս կըփորձեմ: Թեկուզ ձախողվեմ էլ, ոչինչ, ի՞նչ ունեմ կորցնելու: Հետ կըդառնանք Կալիֆոռնիա ու մեզ համար կապրենք, վերջացավ գնաց: Հեռուստացույց կնայենք ու թերթ կկարդանք, իսկ թատրոնի մասին կմոռանանք:

Բայց նա շմոտեցավ հեռախոսին: Ես չէի կարող նրան ասել, որ ճիշտ է, Նյու Յորքն ինձ դուր է գալիս, բայց Կալիֆոռնիայի մեր տունն էլ եմ սիրում: Մեր թաղն եմ սիրում, իմ բոլոր ընկերներին ու ընկերուհիներին, որոնց ծնողները իրարից բաժանված չեն, որոնց հայրերը հարիզում չեն, իսկ մայրերը բեմ բարձրանալու ցանկություն չունեն, ուղձուկի ամբողջ ընտանիքով ապրում են իրենց տներում:

Ես չէի կարող նրան ոչ մի բան ասել, որովհետև մենք եկել, հասել էինք Նյու Յորք, որ նա մի անգամ էլ բախտը թատրոնում փորձի:

Կամաց-կամաց մայրիկի ձայնը փոխվեց: Էլ առաջվա պես ջղալին, բորբոքված ու տխուր-տրտում չէր: Արդեն հանգիստ էր ու լուրջ, և նա սկսեց պիեսը կարդալ:

— «Այս բոլորը կատարվում է մի փոքրիկ աղջկա հետ,— կարդաց:— Աղջիկը ութ-ինը տարեկան է կամ ընտանիքի և բազմաթիվ բարեկամների ունի, մեծ մասամբ՝ երևակայական: Նա շատ լրջմիտ է, բայց թախծոտ աղջիկ չէ: Ընդհանուր առմամբ, արտակարգ ոչինչ նրան չի պատահում: Պարզապես սիրում է երևակայությամբ տարվել, թեև նրա հետ լինում են նաև իրական դեպքեր: Իրականն ու երևակայականը միահյուսվելով՝ դադարում են միմյանցից զանազանվել: Աղջիկը միան ամայն իրական է, և այն ամենը, ինչ որ երևակայությամբ հնարում է, նույնքան իրական է, որքան նա ինքը»:

Մայրիկը կարդալն ընդհատեց, որ սիգարետ վառի, իսկ հետո ինձ նայեց: Ոչ մի բառ չասաց: Նայում էր ու սպասում: Գիտեմ՝ սպասում էր, որ մի բան ասեմ, ես էլ ասացի.

— Լավ է, ինձ դուր է գալիս:

— Իսկապե՞ս, Գորտուկ: Որովհետև եթե քեզ դուր է գալիս, գոնե կկարողանամ կարդալ, իսկ հետո...

— Միսս Քրենշոյի մոտ թեյի գնալու ժամանակը կգա:

— Նրան շատ ես հավանել, հա՛:

— Շա՛տ: Ինձ՝ չէ՛:

— Ես էլ հավանեցի, բայց նա այնքան խելոք է ու մեծանուն, որ մի քիչ վախենում եմ նրանից:

— Ա՛յ քեզ հիմարություն, դու է՛լ, Աղջիկ մայրիկ...

— Չէ, հիմարություն չի,— ասաց Աղջիկ մայրիկը:— Վախենում եմ նա միանգամից հասկանա, որ ես տեղովս ոչնչություն եմ:

— Վերջ տուր, Աղջիկ մայրիկ: Դու լավ գիտես, որ ինքդ էլ շես հավատում ասածիդ:

— Չէ, իրոք: Ես ուղղակի ուզում եմ հռչակավոր ու հարուստ դառնալ, ոչ տանջվել-սովորել, ոչ էլ աշխատանք թափել: Ուղղակի ուզում եմ, որ սկուտեղի վրա դրված ամեն ինչ մատուցեն: Նա ինձ միանգամից կճանաչի, որովհետև մեծ-մեծ բաներ եմ ուզում... Իսկ դու՝ չէ, դու ոչինչ շես ուզում, դրա համար էլ քեզ, իհարկե, կսիրի:

— Ո՛ւֆ, Աղջիկ մայրիկ, հերիք չի՞ կովենք, ի՞նչ կլինի, արի պիեսսը կարդանք: Ես ներողություն խնդրեցի, չէ՞:

— Ինչո՞ւ պիտի դո՛ւ ներողություն խնդրես,— ասաց Աղջիկ մայրիկը:— Չէ որ ոչ մի վատ բան շես արել: Ընդհակառակը՝ ես եմ արել: Ու ես էլ ներողություն եմ խնդրում, Գորտուկ: Ճիշտ: Հենց ես եմ իմ անմիտ կյանքի վրա կատաղում ու վատը դառնում: Ինչ էլ ուզում եմ, ի՛նձ համար եմ ուզում, միայն ինձ համար: Ուզում եմ ամենադեղեցիկը լինել, ամենահռչակավորը, ուզում եմ հարստանալ. ու դրանից վատն եմ դառնում:

— Չէ, չէ, Աղջիկ մայրիկ: Դու ամենալավն ես ու գեղեցիկը, նույնիսկ երբ վատն ես. Դու միշտ գեղեցիկ ես, ինչ էլ որ մտածես կամ ինչ էլ որ անես:

— Ոչ,— ասաց Աղջիկ մայրիկը, բայց խոսքը բերանում՝ հեռախոսը զնգաց. Գլեղիս Դյուրարին էր: Աղջիկ մայրիկը շտապ-շտապ ու մի քիչ էլ շոր խոսեց, ասաց ցտեսություն ու լսափողը դրեց:

Հետո նա զանգեց հեռախոսալարուհուն, ասաց.

— Խնդրում եմ ինձ ոչ ոքի հետ չմիացնեք, մինչև չզգուշացնեմ: Ես աշխատում եմ:

Նա ամբողջ պիեսը սկզբից մինչև վերջ կարդաց: Տեղ-տեղ ծիծաղելի էր, իսկ տեղ-տեղ՝ տխուր: Մի երկու անգամ էլ մի տեսակ ուրիշ էր, շգիտեմ, թե ոնց, բայց զգացի, որ սիրտս խփում է, ու կարծես դողս բռնում:

Պիեսը լրիվ փոքրիկ աղջկա մասին էր, նրա հնարածների ու հետը կատարվող իրական բաների մասին:

Երբ մայրիկը կարդաց վերջացրեց, աչքերում արցունքներ կային։ Երկար ժամանակ նա ձայն չէր հանում, հետո շատ կամացուկ ասաց.

— Ես ճանաչում եմ այդ փոքրիկ աղջկան, որովհետև դա ես եմ։ Մինչև օրս էլ նույն փոքրիկ աղջիկն եմ։ Պիեսը քեզ դ՞ուր եկավ, Գորտուկ։

— Դուր եկավ, Աղջիկ մայրիկ։

— Ուրախ եմ, բայց հիմա կուզեի գոնե մի քիչ ննջել։ Ուզում եմ քնել ու պիեսը նորից ծայրեծայր հիշել՝ իմ ամբողջ կյանքը։

— Ես էլ եմ ուզում։

Մենք մեկնվեցինք անկողնու վրա, ու մի քանի րոպեից Աղջիկ մայրիկը արդեն պինդ քնած էր։ Ես մտածում էի պիեսի մասին, Աղջիկ մայրիկի ու նրա Լասոնների մասին, իսկ հետո նայեցի մայրիկին, ու ճիշտ որ, նա հենց պիեսի փոքրիկ աղջիկն էր, դեռ նույն աղջիկը, միայն թևերեսուններիք տարեկան էր դարձել ու ինք տարեկան սեփական աղջիկ ուներ՝ ինձ։

Ես հիշեցի, թե պիեսի աղջիկն ինչեր է հնարում ու մի քանի բան էլ ինքս հնարեցի։ Հետո ամեն ինչ խառնվեց իրար, ու արդեն հաստատ չգիտեի, թե որն է իմ հնարածը, որն է պիեսի աղջկանը։

Ես սեղմվեցի Աղջիկ մայրիկին, գրկեցի նրան, ու քունս տարալ։

## ՊԱՐՏԵՂԻ ԱՌՅՈՒԾՆԵՐՆ ՈՒ ՎԱԳՐԵՐԸ

Մի երազ տեսա, շատ վախենալու էր. շորս կողմն ինչ վտանգ ասես որ չկար։

Իբր թե ես վերադարձել էի տուն, Փասիֆիք Փալիսեյդա։ Դերու ա Շլումբը եկել էր, իմ լուսամուտի տակ կանգնել ու ապակին էր ծեծում. դեռ չէի նայել ով է, արդեն գիտեի, որ ամենալավ ընկերուհիս է՝ Դեբը։ Մոտեցա լուսամուտին, Դեբը ծպտուն շհանեց, բայց ես հասկացա՝ ուզում է շուտ դուրս գամ։ Կարծում էի գիշեր է, հետո տեսա՝ չէ։ Ի՞նչ գիշեր, եթե մեր տան դիմացի պարտեզում լիքը թռչուններ էին՝ հազար ու մի տեսակ. կոլիբրիճների պես պատլիկ թռչնակներ, սրանցից մի քիչ մեծ ճնճողուկներ ու սարյակներ, սև կեռնեխներ ու բազանների պես խոշոր թռչուններ։ Ի՞նչ գիշեր, եթե պարտեզի ծայրի նիվենիների միջից արևի նարնջագույն շողերն էին փայլում, ու տասը-տասնմեկ ուրիշ արևներ էլ կային գույնզգույն շողերով։ Դեբի հագին բալետային շոր էր, ու ես գլխի ընկա՝ մի արտակարգ բան է կատարվում։ Վազ տվի պահարանի

մոտ իմ բալետային շորը վերցնելու, որ միշտ հագնում էի պարի դասերին: Արագ հագնվեցի ու վազելով գնացի տեսնեմ՝ Աղշիկ մայրիկը քնած է, թե արթուն. չէ, դեռ քնած էր: Պինդ-պինդ քնած էր, ու Տղա հայրիկն էլ էր քնած, բայց ա՛յ քեզ հրաշք. նա ո՞նց էր հայտնվել էստեղ: Ախր պիտի որ Փարիզում լիներ: Ես վազեցի Դաշտապահ Փիթեր Բոլիվիայի սենյակն ու ի՞նչ տեսնեմ. նա էլ իր անկողնում է պառկած ու էլի պինդ քնած, բայց մոտեցա թե չէ, որ համոզվեմ ինքն է, աչքերը բացեց:

— Ողջույն, Գորտուկ,— ասաց: Հենց նա էր անունս Գորտուկ դրել՝ դեռ փոքր ժամանակ:

— Ողջույն, Փիթ: Էդ ե՞րբ ես Տղա հայրիկի հետ եկել:

— Ի՞նչ ես դուրս տալիս: Որտե՞ղ էինք, որ գայինք:

— Փարիզում, էլ որտե՞ղ:

— Ի՛, գառանցում ես,— ասաց Փիթը:

— Չէ, ի՞նչն եմ գառանցում, այ Փիթ: Եկել եք՝ մնա՞ք:

— Ի՛, գնա քնիր, հա՞: Գիշեր է:

— Նայիր դուրս, նոր կիմանաս՝ գիշեր է, թե ինչ:

Փիթը վեր թռավ անկողնուց ու վազեց լուսամուտի մոտ: Նայեց դուրս, ասաց.

— Օհո՛, այ քեզ բան: Էս մարդի՞կ ինչ են անում մեր պարտեզում:

— Ուզում ես ասել՝ թռչունները, չէ՞:

Ես էլ նայեցի լուսամուտից դուրս ու ոչ մի թռչուն չտեսա: Մարդիկ էին ամեն տեսակ: Իրենց համար կանգնել էին պարտեզում: Ու գիշեր էր արդեն: Դեսուդեն նայեցի, որ Դեբին գտնեմ, բայց նա էնտեղ չէր:

— Գնա, քնիր,— ասաց Փիթը, ու ես էդպես էլ արի, բայց հենց քունս տարավ, լսեցի, որ լուսամուտն էլի են ծեծում, վեր թռա տեղիցս ու վազեցի լուսամուտի մոտ, տեսնեմ էլի Դեբն է, իսկ պարտեզում լիքը առյուծներ ու վագրեր են, բայց Դեբը չի վախենում, ես էլ չվախեցա: Նա ուզում էր դուրս գամ, ու ես շտապ մոտեցա պահարանին, էս անդամ էլ ամենասիրած շորս վերցրի, հագա, բայց չէի մոռացել, որ Տղա հայրիկը տուն է վերադարձել, դրա համար էլ վազեցի նրան նորից տեսնելու, իսկ նա արդեն չկար, Աղշիկ մայրիկն էր ու կարծես իրեն շատ մենակ էր զգում: Վազելազ գնացի Դաշտապահ Փիթեր Բոլիվիայի սենյակը, բայց նա էլ չկար: Դուրս թռա տնից, Դեբն ինձ էր սպասում, իսկ պարտեզում ոչ առյուծ ու վագր էր մնացել, ոչ էլ մի հատիկ թռչուն:

— Էս ո՞ւր կորան բոլորը,— ասացի:

— Գիտե՞ս, մայրիկս թողեց, որ գնամ լքրի խանութն ու տասր

սենթի բան առնեմ ինձ համար,— ասաց Դեբբը:— Քո մայրիկը կթողնի՞:

— Նա քնած է,— ասացի,— ես էլ տասը սենթ շունեմ, բայց ոչինչ, հետդ կգամ:

Մենք գնացինք բլրի խանութն ու ինչ ասես, որ էնտեղ շտեսանք, իսկ հետո Դեբն իր տասը սենթը ծախսեց: Հինգ սենթի կանաչ ժապավեն առավ, հինգ սենթի էլ՝ կարմիր ու խնդրեց, որ ժապավեններից մեկը մազերին կապեմ:

— Ո՞ր մեկը:

— Որն ուզում է լինի,— ասաց նա, ու ես կարմիր ժապավենը նրա մազերին կապեցի, ինքն էլ կանաչը իմ մազերին կապեց, ու ես ասացի.

— Ծնորհակալ եմ, Դեբ, տուն հասնենք թե չէ, կհանեմ, կտամ քեզ:

Մենք բլրից իջանք, մեր թաղն էինք գալիս, ու ճամփին բոլորն իմ ու Դեբի նոր ժապավենները տեսան: Մենք անընդհատ խոսում էինք, ծիծաղում, իսկ հետո Դեբն ասաց՝ արդեն ժամանակն է, պիտի տուն գնա, ես էլ ասացի.

— Լավ, Դեբ, շնորհակալ եմ, որ ինձ հետդ տարար ու քո ժապավենը կապեցիր մազերիս: Ահա, վերցրու:

— Չէ, չէ,— ասաց Դեբբը:— Թող քեզ նվեր մնա:

— Դե ուրեմն՝ երբ որ փող ունենամ, ես էլ քե՛զ համար ժապավեն կառնեմ ու նվեր կտամ:

— Գնացի, առայժմ,— ասաց Դեբբը:

— Առայժմ,— ասացի ես:

Նա գնաց տուն, ես էլ եկա մե՛ր տուն, որ տեսնեմ, թե Մաքրրոնի Լեյնի թիվ 1001 տանը ինչ է կատարվում:

Մայրիկը անկողնում նստած՝ Կլարա Քուլբոյի հետ խոսում էր հեռախոսով:

— Գորտուկ,— ասաց նա,— քեզ նման աղջիկ չի լինի, եթե սուրճ դնես ու հենց որ եռա, մի բաժակ բերես:

— Լավ,— ասացի ես:

Այ թե ինչ երազ էր, ու ես վախեցա ոչ թե առյուծներից ու վագրերից, չէ՛. վախեցա, որ հայրիկս էլ սենյակում չի:

Քնից զարթնեցի, տեսնեմ Աղջիկ մայրիկը՝ կողքիս, «Պիեո» հյուրանոցի 2109-րդ համարում, նստել է մահճակալի եզրին ու Կլարա Քուլբոյի հետ հեռախոսով Նյու Յորքից Կալիֆոռնիա է խոսում:

— Ամենահոյակապ պիեսն է, որ կարդացել եմ,— ասաց նա:

Երևի Կլարա Քուլբոն ինչ-որ ծիծաղելի բան ասաց, որովհետև Աղջիկ մայրիկը ծիծաղից խեղդվելով ճշաց.

— Ա՛խ դու ստոր արարած:

Նրանք անվերջ խոսում էին ու խոսում, կարծես դրա համար պետք չէր վճարել, իսկ հետո վերջապես հրաժեշտ տվին իրար, ու Աղջիկ մայրիկը լսափողը դրեց: Ինձ տեսնելով՝ ասաց.

— Վաղո՞ւց ես արթնացել:

— Երեւի մի վեց-յոթ րոպե կլինի:

— Զանգեցի ասեմ, որ գնա մեր տուն ու ոսկե ձկնիկներիդ կերակրի: Պիեսի մասին էլ ամեն ինչ պատմեցի:

— Աղջիկ մայրիկ— ասացի ես,— ի՞նչ է նշանակում, երբ երազ ես տեսնում, թե իբր տանն ես, ու քո հայրիկն ու եղբայրն էլ են տանը:

— Նշանակում է՝ ուզում ես տանը լինել և ուզում ես, որ նրանք էլ կնտեղ լինեն:

— Դա գիտեմ, բայց ուրի՞շ ինչ է նշանակում:

— Ես ի՞նչ իմանամ,— ասաց Աղջիկ մայրիկը:— Տխրե՞լ ես երազից:

— Մի քիչ:

— Դե՛, դե՛, մի սխրիր: Ուրախ-ուրախ ժպտա: Ուրախ-ուրախ պարիր. դու միշտ պարում ես, չէ՞:

— Մեկ-մեկ ձանձրանում եմ ուրախ լինելուց Վերջիվերջո, ես ինը տարեկան ևմ, հո երեխա չե՞մ:

Աղջիկ մայրիկը իմ կողքին պառկեց, արկեց ինձ, սեղմեց կրծքին ու ասաց.

— Ծնված օրից ոչ ոք արդեն երեխա չէ, Գորատուկ, բայց բոլորս էլ ինչ-որ տեղ մնում ենք երեխա: Այ, էդպես է, բա՛:

— Ինչո՞ւ է էդպես:

— Որովհետև բոլորիս հայրն ու մայրն էլ մեզ պես՝ իրենց ծնված օրից արդեն երեխա չեն եղել: Բայց նրանք էլ են ինչ-որ տեղ երեխա մնացել: Ու էդպես շարունակվում է, անվերջ շարունակվում: Էդպես է և վերջ, մենք ուրիշ ելք չունենք, պիտի ամեն ջանք թափենք ու ձեռքներիցս եկածը անենք:

Նա իր թևի ժամացույցին նայեց, իսկ հետո ասաց.

— Հինգն անց է, գիտե՞ս: Գնալո՞ւ ենք թեյի:

— Դու ուզո՞ւմ ես գնալ:

— Իհարկե: Իսկ դո՞ւ:

— Ես էլ... եթե դու ուզում ես:

— Բայց ես կարծում էի միսս Քրենշոն քեզ դուր է եկել:



— Հա, դուր է եկել, բայց դա չի նշանակում, թե կուզեի նրա մոտ թեյի դնալ:

— Է՛, քեզ ի՞նչ է պատահել, Գորտուկ:

— Երազում եղբորս հետ խոսեցի, բայց հայրիկի հետ՝ չէ: Ախր չգիտեի, որ երազ է: Սիրտս շտվեց նրան արթնացնեմ: Մտածում էի հետո կխոսեմ: Հիմա էլ ուշ է:

— Իսկ ի՞նչ էիր ուզում ասել:

— Ոչ մի բան: Ուղղակի ուզում էի հետը խոսել: Ենթադրենք իմ տեղն ուրիշ աղջիկ լիներ, իր հարազատ հորը ի՞նչ պիտի ասեր: Ուղղակի լավ կզգար իրեն, որ նրան տեսներ: Լսեր նրա ձայնն ու իմանար, որ տանն է: Նրա հոտն էլ առներ: Թե չէ շորս կողմդ մի գլուխ կանայք են. մարդ ձանձրանում է:

— Կարծես տրամադրությունդ ընկած է, հա՞:

— Ուղղակի ամսոսում եմ, որ հայրիկի հետ շխոսեցի:

— Դու էլ զանգիր Փարիզ:

— Բայց դա նույնը չի: Երազումս նա տանն էր: Մենք բոլորս միասին էինք էնտեղ: Համ էլ Փարիզ զանգելը թանկ է, իսկ մենք հարուստ չենք:

— Է՛հ, խնդրիր, թող ինքը վճարի:

— Չէ, Աղջիկ մայրիկ, դա որ իսկի՛ չեմ անի: Գիտե՞ս ինչ, կըսպասեմ, մինչև նրան նորից երազում տեսնեմ ու հենց որ տեսա, հեան անսլայման կխոսեմ:

— Նա ո՞նց էր:

— Տեսքից շատ լավ էր, բայց դե քնած էր:

— Որտե՞ղ:

— Պարզ չի՞, անկողնում:

— Ո՞ւմ անկողնում:

— Էլ ո՞ւմ, իր ու քո անկողնում, Կալիֆոռնիայի մեր տանը: Էնտեղ, ուր որ դու հետո մենակ էիր քնում:

— Օ՛: Իսկ ե՞ս որտեղ էի:

— Դու էլ էիր անկողնում:

— Իմ տե՞սքը ոնց էր:

— Շատ լավ: Արդեն վաղուց տեսքդ էդպես լավ չի եղել:

— Ինչո՞ւ: Հիմա վա՞տն է:

— Չէ, բայց դու ավելի լավ տեսք ունեիր, երբ հայրիկս տանն էր:

— Հայրի՛կդ, — ասաց Աղջիկ մայրիկը: — Մի մոռանա, որ ես էլ քո հարազատ մայրն եմ: Եթե անընդհատ միասին ենք, սա չէեռ չի նշա-

Նակում, թե ես անկարևոր մեկն եմ: Ուրեմն էսպես. պիեսի շուրջը երկար մտածեցի: Վերջրի-դրի, ծանրութեթե արի:

— Գիտեմ. որովհետև ամեն ինչ քո մասին է:

— Դա էլ կա, իհարկե, բայց ես պիեսի շուրջը մտածում էի ոչ թե նրա համար, որ պիեսն իմ մասին է, այլ որովհետև Մայք Մաքքլեյին ուզում է փոքրիկ աղջկա դերում քե՛զ տեսնել, իսկ ես չգիտեմ դու ինչ էս ուզում, նույնիսկ չգիտեմ՝ ի վիճակի՞ ես քո ուզածն ինքնուրույն որոշելու, և եթե թեկուզ հանկարծ որոշես այդ դերը փորձել, անգամ չգիտեմ՝ արժի՞ քեզ թույլ տալ: Վստահ չեմ, թե հայրդ կթողնի, որ փոքրուց դերասանուհի դառնաս: Այ, տեսնո՞ւմ ես ինչքան մտածմունք կա, և հետո՞ եթե մենք մտազիր ենք գնալ միսս Քրենշոյի մոտ թեյի, արդեն ժամանակն է, որ գնանք: Եթե մտազիր չենք, ժամանակն է, որ նրան տեղյակ սլահենք. Ո՞նց ես ուզում, Գորտուկ: Հը՞, ճիշտն ասա: Ես ամեն կերպ պիտի աշխատեմ քեզ կամքիդ հակառակ բան չսարտադրել: Եթե գնանք թեյի, միսս Քրենշոն կսպասի, որ պիեսը տանենք, հետո հավանաբար քեզ կխնդրի կարդալ, ու ես գիտեմ՝ հենց որ կարդացիր, կոգեվորվի և կուզենա քեզ օգնել, եթե օգնութեան կարիք ունենաս, բայց նա դուցեև մտածի, թե դու օգնութեան կարիք չունես ու անպայման ուզի, որ դերը խաղաս: Իսկ դա երկուսիս էլյանքում էլ մեծ փոփոխութիւն կմտցնի: Դե՛, կարծիքդ ասա, ի՞նչ ենք անելու:

— Իմ կարծիքով, մենք պետք է թեյի գնանք, որովհետև խոստացել ենք:

— Իսկ քո կարծիքով, դու կարո՞ղ ես ինքնուրույն որոշել՝ խաղալ, թե չխաղալ Մայք Մաքքլեյի համար:

— Ի՞նչ իմանամ: Երեկ դժվար կլինի ամեն երեկո քեմում՝ մարդկանց աչքի առաջ, ուրիշ աղջիկ դառնալ:

— Այո, շա՛տ դժվար է, բայց ուրիշ աղջիկ դառնալը դեռ ամբողջ դժվարութիւնը չէ. ընդհակառակը՝ դա համեմատաբար հեշտ է: Ամենադժվարը գիտե՞ս որն է. թե ինչպես պիտի այդ աղջիկը դառնաս կամ ինչպես անես, որ այդ աղջիկը դառնա ճիշտ և ճիշտ քեզ նման: Մտածիր՝ ուզո՞ւմ ես փորձել, որովհետև եթե շուզենաս, ես կհասկանամ, և մենք, լավ կլինի, միսս Քրենշոյի մոտ չգնանք: Լավ կլինի ուղղակի Մայք Մաքքլեյիին ասենք, որ դու չես ուզում փոքրուց դերասանութիւն անել:

— Իսկ ինձ փող կտա՞ն:

— Իհարկե կտան: Փաստորեն պիեսն ամբողջութեամբ քո ուսերին է: Ահագին փող կտան:

— Իսկ ես կարո՞ղ եմ ուզածիս պես ծախսել:

— Իհարկե կարող ես: Դա քո փողն է լինելու: Ինչ որ վաստակես, մինչև վերջին սենթը քոնն է լինելու, ոչ թե իմը: Հենց քո անունով էլ բանկ է դրվելու: Երևի տասը տարեկանում արդեն հարստանաս:

— Դե լավ,— ասացի ես,— արի թեյի գնանք:

— Ուրեմն ի՞նչ. որոշեցիր դերը խաղա՞լ,— ասաց մայրիկը:

— Որոշեցի թեյի գնալ, որովհետև պետք է միաս ֆրենշոյի կարծիքն էլ իմանամ: Ախր էսպիսի բաների մասին երբեք չեմ մտածել: Չգիտեմ՝ կկարողանա՞մ բեմում ուրիշ աղջիկ դառնալ, բայց ուզում եմ միսս ֆրենշոյի մոտ գնալ:

— Ես կարծում եմ, որ դա շատ առողջ ու խելացի միտք է,— ասաց մայրիկը,— բայց նախքան մեր գնալը, խնդրում եմ, քեզ էդպես մեծավարի ու տխուր մի պահիր: Թե չէ ինքս իմ աչքին անսիրտ ու անպետք մեկն եմ երևում, երբ տեսնում եմ, որ դու հարյուր անգամ խոհեմ ու ճշտապահ ես ինձնից: Խնդրում եմ, մի ուրախ բանի մասին մտածիր:

— Լավ, Աղջիկ մայրիկ:

Ես ցած թռա անկողնուց ու սկսեցի պարել, որովհետև միշտ պարեմ գալիս, երբ ուրախ եմ լինում, կամ երբ չեմ ուզում էլ տխուր լինել, բայց մայրիկը երբեք գլխի չի ընկնում, որ ես մեծ մասամբ պարում եմ տխուր շիֆնելու համար. նա կարծում է՝ միշտ պար եմ գալիս, որովհետև ուրախությունից չգիտեմ ինչ անեմ, բայց դե էդպես չի: Այ թե ինչու է նրա ամենամոտ ընկերուհին՝ Կլարա Քուլբոն, անունս միսիս Նիժինսկի դրել:

— Աղջիկդ դառնալու է Նիկարագուայի առաջին պարուհին,— մի անգամ՝ շատ վաղուց, ասաց նա մայրիկին:— Անդադար պարում է ու պարում:

Բայց նա ի՞նչ է հասկանում որ: Փոքրիկ աղջիկներից խելքն ի՞նչ է կտրում, շնայած երկու աղջիկ էլ ինքն ունի: Գրագ կգամ, որ իր աղջիկներից ոչ մեկի մասին կարգին բան չգիտի: Նրան թողնես՝ քիթը ցցի ու շուշանակի պես, անհամ-անհամ դուրս տա:

## ՄԵՂՄ ՈՒ ԱՆԿԵՂՄ ԶՐՈՒՅՑ ԹԺՒՇԿ ՍՓՐԵՆԳԻ ՀԵՏ

Մենք արդեն պատրաստվել էինք թեյի գնալ, երբ դուռը ծեծեցին: Պարզվեց իմ բժիշկն է՝ Ա. Զ. Սփրենգը:

Ես ասացի.

— Շնորհակալություն տիկնիկի համար:

Իսկ նա ասաց.

— Այ, հիմա երկուսդ էլ տիկնիկի եք նման. Մայրիկ տիկնիկ և Աղջիկ տիկնիկ: Ինչպե՞ս եք ձեզ զգում:

— Վախենամ, թե ամբողջ օրը վեճ ու կովով ենք անցկացրել,— ասաց մայրիկը:

— Իսկապե՞ս: Ինչո՞ւ:

— Որովհետև բաժանված մորը շատ են մեղադրում, և նա ստիպված է շարունակ արդարանալ, նույնիսկ հարազատ աղջկա առաջ:

— Իսկ ինչո՞ւ չեք ձեզ այնպես պահում՝ իբր բաժանված չեք:

— Ախր ես իրո՞ք բաժանված եմ:

— Հասկանալի է, բայց ի՞նչ է նշանակում՝ բաժանված: Դուք առաջվա պես ձեր աղջկա մայրն եք, և նրա հայրն էլ առաջվա պես իր աղջրկա հայրն է: Երբ մարդ ու կին բաժանվում են, դա դեռ աշխարհի վերջը չէ:

Պատիկ բժիշկը երկու ձեռքն էլ դրեց իմ վզին, շոշափեց ու ասաց.

— Ճի՞շտ է:

— Այո,— ասացի,— բոլորովին էլ աշխարհի վերջը չէ:

— Իհարկե՛ս Դուք լավ կերել եք ու լավ հանգստացե՞լ:

— Երևի թե հենց միայն դրանով ենք զբաղվել,— ասաց Աղջիկ մայրիկը:— Եվ ես կարծես ձանձրացել եմ արդեն:

— Օ՛, ինչպե՞ս կարելի է,— ասաց պատիկ բժիշկը:— Պարզապես հաճելի ուտելիք ընտրեք և հանգստի հաճելի ձևեր: Այ, օրինակ՝ սեխը վերցնենք: Տարվա այս ժամանակ սեխից հաճելի բան չկա:

— Նախաճաշին հլակ ենք կերել,— ասացի ես:

— Եվ ի՞նչ դո՞ւր եկավ:

— Շա՛տ:

— Իսկ կեսօրյա նախաճաշի՞ն ինչ եք կերել:

— Կեսօրյա նախաճաշը բաց թողեցինք, որովհետև առավոտյան կուշտ-կուշտ կերել էինք, հիմա էլ գնում ենք թեյի:

— Թեյի՞,— ասաց պատիկ բժիշկը:— Ինչ խոսք, դա մեծ բավականություն է... Թեյի հարգն իմացողի համար:

Նա նայեց Աղջիկ մայրիկին ու ասաց.

— Դուք վաղո՞ւց եք բաժանված, օհրելիս:

— Երեք տարի է,— ասաց մայրիկը,— բայց սկզբի երկու տարին ամուսինս, այսինքն՝ նախկին ամուսինս, մեզնից բավական մոտ էր ապրում: Հիմա արդեն մի տարի կլինի, ինչ հեռացել է՝ տղաս էլ հետը:

Սա նշանակում է, որ աղջիկս համարյա մի տարի առանց հոր ու եղբոր է եղել, եթե հուշերը չհաշվենք, իսկ նա հիշո՛ւմ է մեր տղամարդկանց, ես կասեի՝ մտովի նրանց հետ է: Դա ինձ ստիպում է պաշտպանական դիրք բռնել, իմ վարմունքն արդարացնել, և մենք հաճախ ենք կռվում:

— Այո, այդպես էլ պիտի լիներ, չէ՞: Իսկ նրանք լա՞վ են: Երկուսն էլ՝ ողջ-առո՞ղջ:

— Դե, երբեք չեն գրում, թե վատ են, ես էլ ենթադրում եմ, որ լավ են, բայց ո՞վ իմանա: Համենայն դեպս, Փարիզից ուղարկված նրանց նամակները շատ ուրախ-զվարթ են: Կարծում եմ լավ կլինեն:

— Փարիզի՞ց: Ի՞նչ գործ ունեն Փարիզում:

— Ամուսինս կոմպոզիտոր է: Ուղղակի խելքին փշեց, որ գնա Փարիզ ու այնտեղ ապրի որոշ ժամանակ:

— Կոմպոզիտոր: Խոսք չկա, դա էլ է մասնագիտություն, բայց մարդ ինչպե՞ս կարող է դրանով ապրուստը վաստակել:

— Իմ ամուսինը միշտ կւրողացել է: Նա անդադար տանջվում է, աշխատում, բայց սիրում է իր գործն ու միաժամանակ սյնդում, որ հարկավոր է փող էլ վաստակել: Նրա կարծիքով՝ փողի ու մեքենաների աշխարհում արվեստը չպետք է ինչ-որ քնքուշ ծաղիկ լինի: Իմ ամուսինը շատ անկոտրում բնավորության տեր է և հանդիպած ամեն մարդու հետ վեճի է բռնվում: Մի անգամ սլարժեցավ, թե երբեք ոչ մի բարեկամ չի ունեցել: Նա գերադասում է թշնամիներին:

— Հիանալի է,— ասաց պստիկ բժիշկը:

— Ես էլ նրա թշնամիներից մեկն եմ,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Չէ՛,— ասացի ես:— Դու գիտես, որ չէ: Հայրիկը հազար ու մի տեսակ մարդկանց է ճանաչում ու նրանց սիրում, բայց բարեկամներ չունի, որովհետև միշտ զբաղված է: Նա իսկական թշնամի էլ չունի, ոչ մի թշնամի ամբողջ աշխարհում: Այնքան զբաղված է, որ բարեկամների ու թշնամիների համար ժամանակ չի գտնում:

— Խնդրեմ,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ես հենց սրա մասին էի խոսում: Մենք շարունակ թեթև վեճերի մեջ ենք, բայց երբեմն էլ մեծ վեճ է բացվում, ու ես ստիպված արդարանում եմ, պաշտպանվում, որովհետև նա հորն ինձանից լավ է հասկանում:

— Ա՛հ, վերջ տվեք,— ասաց բժիշկը,— դուք անշափ հաճելի ընտանիք եք: Ի՞նչ կա որ, հայրն ու տղան Փարիզում են, մայրն ու աղջիկը՝ Նյու Յորքում: Կարող էր ավելի վատ լինել, ճիշտ չէ՞:

— Ընդհանրապես, ճիշտ է,— ասաց մայրիկը:— Համարյա ամեն օր ծանոթներիցս մեկնումեկը մեռնում է: Այ, անցած երեկոյան, ավ-

տումատ ճարարանում նստած՝ հարեանիս թերթում կարդացի, որ Զոն Գուլին է սահացել: Ի՞նչ հիմանաւ, թե հաջորդն ով է լինելու:

— Այո, իրավ է: Ես ավելի շատ մեռած բարեկամներ ունեմ, քան ողջ:

— Բայց միևնույն է, նրանք բարեկամներ են:

— Օ՛, ես եմ պարզապէս նրանց բարեկամ անվանում: Դրանք ինձ պատահած մարդիկ են, որոնց քիչ թե շատ ճանաչել եմ, բայց մոտիկից չդիտեմ: Թեև, այնուամենայնիվ, կարոտում եմ նրանց:

Պատիկ բժիշկը ժպտաց ու քայլեց դիպի դուռը: Նա ամբողջ զրույցի ընթացքում կանգնած էր ու էդպէս էլ ոչ մի բոպէ չնստեց:

— Դե, — ասաց, — դուք երկուսդ էլ արդեն լիովին առողջ եք, բայց եթե առայժմ այստեղ եք մնալու, հուսով եմ շեք առարկի, որ երբեմն հանդիպեմ: Ես հաճախ եմ այցելում միսս Քրենշոյին, միջանցքի մյուս ծայրի սենյակը:

— Մենք հենց այնտեղ էլ գնում ենք թեյի, — ասացի ես:

— Օ, իսկապե՞ս:

— Այո:

— Գիտե՞ք, նա հազվադէպ է հշուր ընդունում, ու ես լսել եմ, թե շատ շատերը ուրախութեամբ հշուր կգնային նրան, մանավանդ թատրոնի բնագավառի մարդիկ, այնպէս որ դուք իրավունք ունեք ձեզ շոյված զգալու:

— Իսկ մենք շոյված ենք:

— Ուրեմն՝ ցտեսութեան, — ասաց, պատիկ բժիշկն ու գնաց:

Աղջիկ մայրիկը նայեց ինձ ու ասաց:

— Գորտուկ, խնդրում եմ, փորձիր հասկանալ, որ քեզնից ուզածս միայն մի բան է. ես ուզում եմ ուրախ ու երջանիկ լինես՝ հիմա է՛լ, երբ կգնանք միսս Քրենշոյի մոտ, հետագայում է՛լ, ամեն օր, մինչև մեծանաս, սիրահարվես ու ամուսնանաս: Ես չեմ ուզում, որ բեմ բարձրանաս, բայց և չեմ ուզում քեզ խանգարել, եթե քո ցանկութեանը դա է:

— Հաւեւանում եմ, Աղջիկ մայրիկ: Մի անճանգստանա ինձ համար: Ես ուրախ ու երջանիկ եմ: Միշտ էլ ուրախ եմ ու երջանիկ:

— Ճիշտ է, չէ՞, — ասաց Աղջիկ մայրիկը, — Եթե ես շհավատայի դրան, երևի ամոթից մեռնեի:

Անէք դուրս եկանք 2109-րդ սենյակից ու ճամփա ընկանք միջանցքի մյուս ծայրը՝ միսս Քրենշոյի մոտ:

Քեյթ Քրենշոն սկզբում ինձ ու Աղջիկ մայրիկի հետ իրան Էույն ձևով էր պահում, ոնց որ անցած անգամ, Երբ ես մենակ էի նրան հյուսիս գնացել. մենք զրուցում էինք, կատակում ու ծիծաղում, թեյ էինք խմում ու տարբեր տեսակ թխվածքների ուտում, սպիտակ հացի եռանկյուն, բարալիկ կտորներին քսած համով-համով բաներ, իսկ հետո միսս Քրենշոն Աղջիկ մայրիկին ասաց.

— Բարեբախտաբար, Մայք Մաքքլեյչին պիեսի մի օրինակն էլ ներբերում՝ ծառայողի սեղանին կը խողով, և աչքով, կեսօրին վերադառնալով, ես որոշեցի կարգալ, իսկ դու, պիտի ասել, որ հաղվադեպ եմ անում: Եվ ահա թե ինչու. ինձ անթիվ-անհամար պրիեսներ են ուղարկում, մինչդեռ մեծ մասը նույնիսկ կարգալու արժանի չեն: Ինչպես գիտեք, ես ամբողջ հոգով նվիրված եմ թատրոնին, բայց սրբին երկար տարիներ ինձ զայրացնում են մեր թատերագիրների գրած պիեսները: Եթե այդ գործերը անգամ ուշադրավ են փոքրիշատե, ապա... նպայման հիվանդ, ջղազրգիռ մարդկանց մասին են, և կներեք, ինձ տաղտկալի են թվում: Ահա թե ինչ գնով պետք է վարձահատույց լինես այն ամենի համար, որ դիլետանտ չես, որ մասնագետ ես, գործիդ լավատեղյակ:

Միսս Քրենշոն իր գրասեղանից վերցրեց պիեսն ու ասաց.

— Կոմպոզիցիայով սա ամենաթույլ պիեսներից մեկն է իմ կարգացած բոլոր պիեսների մեջ, բայց և միաժամանակ ամենապրոբլեմիկ, պարզ ու... իրոք, շիտակ երկերից մեկը: Իսկ ես նախընտրում եմ շիտակ բաները: Դուք կարդացե՞լ եք:

— Այո,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Բարձրաձա՞յն:

— Այո:

Միսս Քրենշոն նայեց ինձ.

— Նշանակում է՝ դու, անշուշտ, լսել ես, թե մայրիկդ ինչպես է կարդացել:

— Այո:

Միսս Քրենշոն սկսեց քայլել իր մեծ սենյակում: Երևի մտքերի մեջ էր: Շուտ-շուտ կանգնում էր, նայում մեկ ինձ, մեկ Աղջիկ մայրիկին, բայց մենք ձայն չէինք հանում:

— Թույլ տվեք անկեղծորեն ասել, թե ինչ եմ մտածում,— փերջապես խոսեց նա:— Իմ կարծիքով, Մայքն այս պիեսը հույակապ կքեմադրի: Ոչ մի միջոց չի խնայի: Պիեսը կկենդանանա, ինչպես որ հարկն է:

Ինձ հսկայակա՞ն հաշույք ու գոհունակություն կպարգևի: Եվ կտապալ-  
վի՛:

Միսս Քրենշոն՝ «կտապալվի» բառն էնպես արտասանեց, որ միան-  
գամից լացս եկավ, բայց դե, իհարկե, ինձ մի կերպ զսպեցի: Ուղղակի  
երեսս ուրիշ կողմ արի ու էնքան նայեցի, մինչև լացս անցավ: Նա «կտա-  
պալվի» բառն էնպես արտասանեց, կարծես սիրտը մղկտաց: «Կտա-  
պալվի»: Եթե մի գեղեցիկ բան է տապալվում, մի պարզ ու շիտակ բան,  
ուրեմն աշխարհում ամեն ինչ տապալվում է, ու բոլորի սիրտը մղկը-  
տում. այ թե ինչ ձևով նա արտասանեց դա:

— Մի ժամ առաջ ղանգահարեցի Մայքին,— շարունակեց միսս  
Քրենշոն:— Նրան էլ նույնն ասացի, ինչ որ ձեզ: Ասացի՝ իրավունք չու-  
նեմ իմ կարծիքը իրենից թաքցնելու: Հարցրի, թե առաջվա պես մտա-  
դիր է պիեսը բեմադրե՞լ: Նա առանց մի վայրկյան տատանվելու ասաց,  
որ մտադիր է: Ես հիացա, բայց մյուս կողմից էլ՝ նրան խղճացի: Մայ-  
քը վարպետ է: Նա կարող էր մեծ հաջողություն բերող պիեսներ բե-  
մադրել, եթե ցանկանար: Դա ամենևին էլ այնքան դժվար չէ, որքան  
շատերը պատկերացնում են: Ընտրության հարց է՝ պարզ ու հասարակ:  
Թե հուսալի պիես ևս ընտրում և տալավորիչ հնարքներով բեմադ-  
րում, հաջողությունն ապահովված է: Իսկ Մայքին հենց հաջողություն  
է հարկավոր: Արդեն երեք թատերաշրջան նա հաջողության երես չի  
տեսել: Եվս մի տապալում, և նա լուրջ բարգոթությունների առաջ կկանգ-  
նի: Բայց շնայած այս ամենին, պիեսը պե՛տք է բեմադրել:

Միսս Քրենշոն շատ մաքուր ու հստակ էր խոսում, կարծես բացի  
մեղնից, ուրիշ մեկն էլ էր նրան լսում:

— Թեև ներկայացումը կտապալվի: Լավագույն քննադատները կը-  
հավանեն, մյուսները՝ ոչ, և շարքային հանդիսատեսն էլ, որ տոմս է  
վերցնում ու գալիս թատրոն, նույնպես չի հավանի. այո, պարզապես  
չի հավանի և վերջ Ես գրեթե յոթանասուն տարեկան եմ: Մանկամարդ  
առջիկ էի, որ մտա թատրոնի աշխարհ: Ես հիմա էլ եմ պատրաստ  
խողալու, եթե դերն ինձ դուր գա, բայց քսան տարուց ավելի ուրիշնե-  
րի: Եմ խաղալ սովորեցնում, կամ, այլ կերպ ասած՝ սովորեցնում եմ  
մւրդ լինել, իսկ դա ինքն իրեն չի ստացվում: Դրան պետք է հասնել:  
Մեզնից ամեն ոք հենց այն է, ինչ որոշել է դառնալ: Ես, իհարկե, ար-  
վեստի տեսանկյունից եմ խոսում: Ամեն ոք, անտարակույս, կամ այս  
է կամ այն, բայց արվեստի տեսանկյունից՝ ոչ ոք պատահաբար չի դար-  
ձել այս կամ այն:

Միսս Քրենշոն հանկարծ լռեց: Գնաց լուսամուտի մոտ ու կանգնած



նայում էր դուրս. ես էլ նայեցի Աղջիկ մայրիկին: Նա շատ ուրախ տեսք ուներ, շիտակացած ինչու, ախր միսս Քրենշոն տխուր բաներից էր խոսում: Քիչ հետո միսս Քրենշոն նորից մոտեցավ սեղանին, մեր բաժակների մեջ էլի թեյ լցրեց ու զվարթ ձայնով ասաց.

— Սիրում եմ կանգնել լուսամուտի մոտ ու նայել ցած՝ զբոսայգու մարդկանց: Ա՛յ թե բեմական դեկոր է զբոսայգին, և ի՛նչ սքանչելի ներկայացումներ են այնտեղ ամեն օր ընթանում: Երեխաներ կան, հայրեր ու մայրեր: Ինչ-որ անձինք ու շնիկներ: Թռչուններ ու սկյուռներ, իսկ զազանանոցում՝ ամենատարբեր կենդանիներ՝ արդեն վանդակների՛ մեջ:

Մենք թեյը դանդաղ խմում էինք ու սպասում: Պարզ էր, որ սպասում էինք, որովհետև Աղջիկ մայրիկը ծայտուն շէր հանում: Դե, ես էլ էի նրա հետ սպասում: Թե Աղջիկ մայրիկն էստեղ շիտեմ, գիտեմ՝ շէի սպասի: Անպայման կխոսեի:

Վերջապես, ինչին էր սպասում էինք, եղավ:

Միսս Քրենշոն նայեց Աղջիկ մայրիկին ու ասաց.

— Դուք ուզո՞ւմ եք, որ ձեր դստրիկը խաղա պիեսում:

— Իսկ դո՞ւք,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Է՛հ, դա ազնվություն չէ,— ասաց միսս Քրենշոն:— Դուք իմ հարցին պատասխանեք, ես էլ ձե՛զ կպատասխանեմ:

— Այդ դեպքում իմ պատասխանը սա է՝ ոչ,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ես չեմ ուզում նա որևէ պիեսում խաղա, որովհետև կարծում եմ՝ հայրը չի ցանկանա:

— Ոչ թե որևէ պիեսում,— ասաց միսս Քրենշոն,— այլ ա՛յս պիեսում: Սա բոլորովին էլ նույնը չէ:

— Դե, թեկուզև այս պիեսում,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ես չեմ ուզում նա խաղա, որովհետև շատ ջանքեր պիտի թափի, իսկ ես իրավունք չունեմ դա նրանից պահանջելու: Բայց եթե որոշի խաղալ, ամեն ինչ կանեմ, որ իրեն ուրախ ու երջանիկ զգա:

— Ինչո՞ւ եք կարծում, թե հայրը կընդգրիմանա:

— Սիրում է աղջկան: Ուզում է, որ նա իր դուստրը լինի, փոքրիկ երեխա և ուրիշ ոչինչ: Արդեն մի տարի է, ինչ ամեն շաբաթ նամակ է գրում: Ոչ թե ինձ, այլ նրան: Տքնում, աշխատում է նրան... և ինձ պահելու համար ու շէր ցանկանա, որ աղջիկը կյանքում հոգս ունենա: Իհարկե, միևնույն է, նա ինչ-ինչ հոգսեր ունի, բայց ո՞ւմ երեխան շունի:

— Իսկ եթե նրա հայրը պիեսը կարդա, հնարավո՞ր է, որ միտքը փոխի:

— Չդիտեմ, բայց վստահ եմ՝ պիեսը կհավանի: Վստահ եմ՝ դրստերը կպատկերացնի՝ փոքրիկ աղջկա դերում, իսկ հետո կասի՝ ոչ, բան դուրս չի գա, դատրիկիս հանգիստ թողեք:

— Հավանական չէ՞, որ նա դստերն առաջարկի իր անելիքը ինքնուրույն որոշել:

— Ոչ մի դեպքում: Ես համոզված եմ: Չկարծեք, թե նա իր երեխաների ցանկությունները հաշվի չի առնում: Ոչ, հաշվի է առնում: Բայց կասկածանքով է վերաբերվում ամեն մի ցանկության, որը հաճույք ստանալու նպատակ չի հետապնդում:

— Իսկ եթե ասենք՝ նրա դուստրը ուղենա խաղալ իր հաճույքի համար:

— Նա չի հավատա, ինչ դուստրն ընդունակ է ինքնուրույն որոշում կայացնելու:

— Նա օրինական իրավունք ունի՞ աղջկան շօղնել, որ պիեսում խաղա:

— Իհարկե՞ չէ: Ոչ նա, ոչ էլ ես ինչ-որ առանձնակի իրավունքներ չունենք: Պարզապես, թեև բաժանված ենք, բայց մնում ենք մեր երեխաների ծնողները: Եթե նա չուզենա, որ աղջիկը պիեսում խաղա, ես ստիպված եմ աղջկաս արգելել:

— Նույնիսկ եթե աղջիկը ցանկանա՞:

— Այո:

Միսս Քրենշոնն ժպտաց, իսկ հետո նայեց ինձ:

— Դե լավ, ուրեմն գանք քեզ, Լուսերես,— ասաց նա:— Երեկ, երբ ես ու դու երկուսով թեյում էինք, կարդին խոսեցինք ու շատ զվարճացանք: Բայց այսօր՝ կարծես չէ: Քանի որ դու համարյա բերանդ չես բացել, հիմա էլ քո խոսելու հերթն է: Պիեսի աղջիկը քեզ դո՞ւր է գալիս:

— Այո,— ասացի ես:

— Ա՛հ, խնդրում եմ,— ասաց միսս Քրենշոն,— մի լռիր: Սա դատարան չէ: Նստած թեյ ենք խմում և հաճելի ժամանակ անցկացնում:

— Ախր,— ասացի,— չգիտեմ ինչի մասին խոսեմ:

— Անշուշտ՝ պիեսի աղջիկս:

— Դե, նա ինձ դուր է գալիս, բայց ես չեմ՝ ճանաչում նրան:

— Իսկ քեզ դո՞ւր են գալիս նրա երևակայած բաներն ու այն բոլորը, ինչ որ կատարվում է հետք:

— Այո:

— Կուզեի՞ր այդ փոքրիկ աղջկա դերը պիեսում խաղալ:

- Կուռքի, բայց չեմ կարող:
- Որովհետև հայրիկդ երևի շուգի:
- Չէ, որովհետև չեմ կարող ուրիշ աղջիկ լինել: Կարող եմ միայն հենց ինքս լինել:
- Չե՞ս կարող ուրիշ աղջիկ ձևանալ:
- Իհարկե կարող եմ: Միշտ էլ ձևանում եմ, բայց ուրիշ աղջիկ՝ չէ: Իմ մայրիկն եմ ձևանում: Մեկ էլ՝ որ իբր գնդակ նետող եմ:
- Գնդակ նետո՞ղ:
- Հա, բեյսբոլի, որովհետև երբ մեծանամ, «Նյու Յորքի հսկաներ» թիմի գնդակ նետողն եմ դառնալու:
- Իսկ ինչո՞ւ ես ուզում հենց նրանցը դառնալ:
- Որովհետև եղբայրս էլ «Բրուքլինի հնարամիտներ» թիմի գնդակ նետողն է դառնալու:
- Պարզ է:
- Հետո՞ ես տարբեր կենդանիներ եմ ձևանում: Դե, ամեն ինչ էլ ձևանում եմ:
- Օրինակ՝ ի՞նչ:
- Օրինակ՝ եթե պայծառ աստղ տեսնեմ, ինձ աստղի տեղ եմ դնում:
- Ինչպե՞ս:
- Իբր համ էստեղ եմ, համ էլ հեռո՞ւ-հեռու. աստղի նման լույս եմ տալիս:
- Դրա համա՞ր է հայրդ քեզ Լուսերես կոչում:
- Չէ: Ես նրան չեմ ասել, որ աստղ եմ ձևանում: Ուղղակի մի օր էլ անունս Լուսերես դրեց ու վերջ:
- Լավ,— ասաց միսս Քրենշոն,— իսկ մայրիկդ ինչո՞ւ է քեզ Գորտուկ ասում:
- Ես սիրում եմ գորտուկներին: Միշտ բռնում եմ ու սիրում: Աղջիկ մայրիկը շատ լուրջ տեսքով ասաց.
- Բացի դրանից, ինքն էլ էր գորտուկի պես թռչկոտում: Դիտմամբ, իհարկե:
- Դուան զանգը տվին, ու միսս Քրենշոն ասաց.
- Մայքը կլինի: Խնդրել եմ՝ հենց որ կարողանա, գա: Նա դուռը բացեց, ու Մայք Մաքքլեչին մտավ ներս:
- Քեյթ,— ասաց նա,— չես պատկերացնի ինչքան ուրախացա, որ այդպես համոզված եմ, թե պիեսը կտալիս:

Հետո նա բարևեց Աղջիկ մայրիկին ու ինձ: Միսս Քրենշոյից մի բոժակ թեյ վերցրեց ու ասաց.

— Ինձ համար դա միայն մի բան է նշանակում. որ պիեսը իրոք քեզ դուր է եկել: Իսկ եթե քեզ դուր է եկել, ես ուզում եմ բեմադրել՝ ինչ խոսք, քո օգնութեամբ:

— Այո՛,— ասաց միսս Քրենշոն,— մենք էլ դրա մասին էինք խոսում:

— Լուսերեսը փոքրիկ աղջկա դերի միակ հարմար թեկնածուն է, չէ՞:

— Օ՛, Երևի բաղձաթիվ աղջիկներ գտնվեն, որոնք խաղալու որոշակի փորձ ունեն,— ասաց միսս Քրենշոն,— և նրանց հետ աշխատելն էլ ավելի հեշտ կլինի:

— Իսկ դու Լուսերեսի հետ կաշխատե՞ս,— ասաց Մայքը:

— Ես արդե՛ն աշխատում եմ:

— Եվ ի՞նչ կարծիքի ես:

— Նա հենց պիեսի աղջիկն է, որ կա:

Մայք Մաքքլեչին նայեց մայրիկին ու ասաց.

— Է՛հ, էլ ինչո՞ւ ենք սպասում: Եկեք ուղախանանք:

— Նա դեռ չի ասել, որ ուզում է այդ աղջիկը լինել:

Մայք Մաքքլեչին նայեց ինձ ու ասաց.

— Բայց դու ուզում ես, չէ՞:

— Ուզում եմ,— ասացի ես,— բայց չեմ կարողանա: Ձեր շփտեմ:

— Միսս Քրենշոն քեզ ձեր կսովորեցնի:

Աղջիկ մայրիկն էլ մեջ մտավ.

— Դե, ի՞նչ կասես, Գորտուկ: Խոսքը քոնն է:

— Ես կփորձեմ, բայց թող հայրիկն ասի՝ նոր:

— Շատ լավ,— ասաց Մայք Մաքքլեչին:— Ահա հեռախոսը: Զանգե՛ք նրան:

Աղջիկ մայրիկը լսափողը վերցրեց ու հեռախոսավարուհուն Փարիզ պատվիրեց: Մենք սպասեցինք, մինչև նա միացնի, ու հենց որ միացրեց, Աղջիկ մայրիկը լսափողն ինձ տվեց.

— Առ, Գորտուկ: Խոսիր հորդ հետ:

— Կարելի՞ է Լոբորս հետ էլ խոսեմ:

— Իհարկե կարելի է,— ասաց միսս Քրենշոն, ու ես հայրիկի հետ խոսեցի, հետո՝ եղբորս, հետո՝ նորից հայրիկի, ու քիչ էր մնացել արդեն ցտեսություն ասեմ, երբ Աղջիկ մայրիկն ասաց.

— Թող ես էլ խոսեմ, հա՛, Գորտուկ:

Աղջիկ մայրիկն էլ նրանց հետ խոսեց, իսկ հետո հայրիկին ասաց.  
— Գորտուկը պիտի քեզնից թուլլտվություն խնդրեր, որ մի պիե-  
սում խաղա, բայց մոռացավ:

Ու Աղջիկ մայրիկը պիեսի մասին հազար ու մի հարցի պատաս-  
խանեց, հետո էլ լսափողն ինձ տվեց ու ասաց.

— Ինքդ խնդրիր, Գորտուկ:

Ես ասացի.

— Կթողնե՞ս, հայրիկ:

Նա ասաց.

— Իսկ դու ուզո՞ւմ ես:

— Հա:

— Իսկապե՞ս:

— Իսկապես:

— Դե ուրեմն,— ասաց հայրիկը,— մորդ խնդրիր, որ պիեսի մի  
օրինակը օղային փոստով ուղարկի: Ես կկարդամ ու իրեն կհեռագրեմ:  
Իսկ առայժմ կարող ես համարել, որ դեմ չեմ, բայց, կուսերես, նախ և  
առաջ պիտի պիեսը կարդամ, չէ՞:

— Լավ, հայրիկ,— ասացի:— Բա ե՞րբ ես տուն գալու:

— Դե, ես էստեղ եմ ինձ տանը զգում,— ասաց հայրիկը,— բայց  
ի՞նչ թաքցնեմ, քեզ շատ եմ կարոտում:— Իսկ հետո կամացուկ ավե-  
լացրեց.— Մորդ էլ եմ կարոտում, բայց իրեն շասես, հա՞:

— Լավ, հայրիկ:

— Փիթն ուզում է հետդ էլի խոսել:

Եղբայրս՝ Դաշտապահ Փիթեր Բոլիվիան, նորից լսափողը վերցրեց  
ու ֆրանսերեն ինչ-որ բան ասաց: Հետո էլ բացատրեց.

— Սա նշանակում է՝ ինչո՞ւ մայրիկի հետ Փարիզ չես գալիս:

Ես ասացի.

— Չեմ կարող: Իսկ դու ի՞նչ ես անում, Փիթ:

— Է՛, մի գլուխ սովորում եմ, բայց ինչքան ասես զվարճանում էլ  
եմ: Հետո՝ պարզ է, ամեն օր պարապում եմ դաշնամուրով: Մի քանի  
փոքրիկ պիես եմ հորինել: Մի օր քեզ համար կնվագեմ: Գիտե՞ս, որ  
հայրիկն իմ տարիքում մի ամբողջ դաշնամուրային կոնցերտ է հորի-  
նել: Ես էլ եմ որոշել, մինչև ծննդյանս օրը պիտի հորինեմ: Դե լավ,  
կուսերես: Թե հաջողվի, ամերիկյան Ա. խմբի թիմերի խաղերից մեկնու-  
մեկը նայիր: Ուժեղ մրցումներ են:

— Լավ, Փիթ,— ասացի ես:— Կնայեմ: Առայժմ:

Ես լսափողը դրի ու բոլորին պատմեցի, թե հայրս ինչ

ասաց, իսկ Աղջիկ մայրիկին նրա անունից խնդրեցի, որ պիեսսի մի օրինակը օրային փոստով ուղարկի: Մայք Մաքքլեչին տեղնուտեղը իր թրղթասյանակից պիեսսի մի օրինակ հանեց ու մի մեծ, դարչնագույն ծրար: Աղջիկ մայրիկը հորս հասցեն ծրարի վրա գրեց, Մայքն էլ պիեսսի օրինակը գրեց ծրարն ու փակեց: Ասաց՝ մի ժամ շանցած, պիեսսը ճանապարհին կլինի ու եթե աստված տա, վաղը Փարիզ կհասնի:

— Բայց դու ի՞նչ կարծիքի ես, — հարցրեց նա ինձ: — Հայրդ կհամաձայնի՞:

— Կհամաձայնի, — ասացի ես:

Մայքը ժպտաց ու ասաց.

— Պատկերացնո՞ւմ ես, Քեյթ, ես անկեղծորեն հովատացած եմ, որ պիեսսը հաջողություն կունենա: — Բայց դու ծիծաղեցին, իսկ նա ասաց. — Դե՛, վաղեցի:

— Մենք էլ, — ասաց Աղջիկ մայրիկը:

— Ո՞ւր:

— Զբոսնելու, — ասաց Աղջիկ մայրիկը. — Հիմա էլ՝ փողոցներում:

Մենք միսս Քրենշոյին շատ շնորհակալություն հայտնեցինք, հրաժեշտ ավինք նրան ու Մայք Մաքքլեչիի հետ զուրս եկանք, որ վերելակ նստենք:

— Ես ուղղակի խանդավառված եմ, — ասաց Մայքը: — Եվ խընդրում եմ շանհանգստանաք. ո՞չ մի բանի համար: Երեկոյան ընթրելու եմ էմբրսոնի հետ: Կասեմ, որ բախտներս բերեց, աղջկա դերակատարին գտել ենք: Հետո կսպասեմ, մինչև խելքը մտնի: Գիտեմ, հաստատ կուղի տեսնել աղջկան և, իհարկե, նրա մորը: Վաղվա նախաճաշի ուրիշ հրավեր հանկարծ չընդունեք, լա՞վ:

— Բայց նախաճաշի ուրիշ հրավեր չի էլ նախատեսվում, — ասաց Աղջիկ մայրիկը:

Հինգերորդ պողոտայում Մայքը ցատկեց առքսիի մեջ, իսկ Աղջիկ մայրիկն ու ես գնացինք զբոսնելու փողոցներում:

### ՄԻ ՔԻՉ ԷՆ ԳԷԵԴԻՍ ԴՅՈՒԲԱՐԻԻ ՄԱՍԻՆ

Աչքս շճպած՝ մի շաբաթն անցավ: Երևի լրիվ շփոթեմ, թե մի շաբաթում ինչքան բան կատարվեց: Հայրիկը ստացավ պիեսսն ու կարդաց, բայց հեռագրելու փոխարեն դանգեց: Նա Աղջիկ մայրիկի հետ երկարբարակ խոսեց, իսկ հետո ինձ ասաց.

— Լուսերես, եթե իրոք ուզում ես խաղալ պիեսում, խաղա, հիանալի պիես է, և մի օր ես դրանից օպերա կսարքեմ:

Աղջիկ մայրիկը ամեն ինչ Մայք Մաքքլեյլին հայտնեց, իսկ մի քանի օր անց հայրիկը հեռախոսով Մայքի հետ էլ խոսեց ու համաձայնեց, որ պիեսի համար երաժշտություն գրի:

Մայքը նրան խնդրեց գալ Նյու Յորք, բայց հայրիկը հրաժարվեց: Ուրիշ բաներ էլ եղան:

Միսս Քրենշոյի մոտ թեյի մեծ հյուրասիրությունից հետո՝ մյուս առավոտյան, Մայք Մաքքլեյին ու պիեսի հեղինակը՝ էմերսոն Թալին, մեզ հետ նախաճաշեցին «Պիեռում», իսկ կեսօրից հետո Մայքը զանգեց Աղջիկ մայրիկին ու ասաց, որ էմերսոն Թալին երկուսիս էլ շատ է հավանել և միտք ունի ամբողջ պիեսը ծայրեծայր փոխել, որովհետև ուզում է փոքրիկ հերոսուհու մոր դերն Աղջիկ մայրիկը խաղալ:

Աղջիկ մայրիկի ուրախությունը շատ չկար:

— Դե՛, Գորտուկ, — ասաց, — ես ու դու իսկական դերասանուհիներ ենք դառնում, պիտի անընդհատ աշխատենք, աշխատենք, աշխատենք, ու գիտեմ՝ մեզ ավելի լավ կզգանք, առաջվանից անհամեմատ լավ:

Երեկոյան մենք աաքսիով գնացինք Հիւզերորդ պողոտա՝ Մայքի հիմնարկը, տեսնենք նրա աշխատակիցներից մի քանիսն էլ են էստեղ, փաստաբանն էլ: Մայքն ու Աղջիկ մայրիկը միասին պայմանագրերը նայեցին, սրանք պետք է ստորագրեինք, հենց որ հորիցս պատասխան ստանայինք: Ես մայրիկին երբեք չէի տեսել էդքան հուզված ու երջանիկ, կամ ավելի ճիշտ՝ ուրախությունից ապշած: Հետո, երբ մնացինք երկուսով, նա ասաց.

— Գորտուկ, քեզ էնպես են վերաբերվում, կարծես աստղ լինես, այ թե ինչ:

— Բայց աստղը դու ես, — ասացի: — Իսկական աստղը դու ես, ոչ թե ես:

— Դու կճարաստանաս, — ասաց Աղջիկ մայրիկը, — իսկ դա ինձ համար էլ վատ չի: Իճարկե՛, իմ փողի մեծ մասը ես կծախսեմ, բայց քոնը համարյա լրիվ բանկ է գնալու: Ինչ լավ է, որ մենք ընկերուհիներ ենք:

— Ընկերուհիներ՞ր, — ասացի: — Բայց դու հո միայն ընկերուհիս չե՞ս, Աղջիկ մայրիկ: Եթե դու չլինեիր, ես նույնիսկ չէի ծնվի:

— Դե, հայրդ էլ է դրանում: Երբ դեր ունեցել:

— Եթե դու չճանդիպեիր: Նրան ու հետը շամուսնանայիր, ես հիմա որտե՞ղ էի լինելու:

— է՛հ, արդեն շատ ուշ է, որ քեզ չծնվածի տեղ դնես, — ասաց Աղջիկ մայրիկը: — Հայրդ քո հայրն է, մայրդ քո մայրն է, իսկ դու էլ դու ես. ոչինչ չես փոխի: Բայց սա դեռ մի կողմ. դու շուտով աստղ կդառնաս ու պատկերացրու՝ Վիոլա մայրիկի շնորհիվ:

— Նա՞ ինչ կապ ունի:

— Մմենամեծ կապը: Եթե նա ժամանակին գար Մաքըրոնի Լեյն, ես կգնայի Կլարա Քուլբոյի ճաշկերույթին, ու մենք նյու Յորք չէինք ընկնի:

— Հա՛, ճիշտ որ: Մոռացել էի: Մենք պետք է նամակ գրենք Վիոլա մայրիկին ու շնորհակալություն հայտնենք:

— Ես նրան շնորհակալություն ցույց կտամ: Անամոթը պիտի գար՝ չեկավ:

— Ուրախ չե՞ս, որ չեկավ:

— Իհարկե ուրախ եմ, բայց չեմ սիրում, որ մարդ իր խոսքի տերը չի:

— Գուցե հիվանդացել էր, գուցե Լրեխաներն էին հիվանդ, կամ գուցե թոռները:

— Թող զանգ տար, ասեր: Չէ, ես շատ եմ բարկացած նրա վրա:

Ամեն օր մեկը մյուսից հետաքրքիր բաներ էին լինում, իսկ ամեն գիշեր ես ու Աղջիկ մայրիկը պառկած խոսում էինք ու եղած-չեղածը հիշում, բայց ո՞նց բոլորը մտքումս պահեի. ախր հորս համաձայնությունից հետո Լնքան բան էր կատարվել, որ գլուխդ կպտտվեր:

Նախ՝ միսս Քրենշոն սկսեց հետներս լուրջ պարապել: Աղջիկ մայրիկն ու ես ամեն առավոտ՝ ութին, գնում էինք նրա սենյակն ու մինչև տասն աշխատում: Միսս Քրենշոն մեզ ինչ ասես, որ չէր սովորեցնում. թե ինչպես կանգնես, քայլես ու պարես, ինչպես դրած իրը վերցնես ու նայես, ինչպես խոսես, իսկ խոսելու հազար ու մի ձև կա:

Միսս Քրենշոն մեզ համար կարգուկանոն էր մշակել: Առավոտյան վեցին վեր էինք կենում: Կես ժամ ման էինք գալիս զբոսայգում, հետո «Պիեռում» նախաճաշի նստում. ես շատ պիտի ուտեի, իսկ Աղջիկ մայրիկը՝ քիչ, որովհետև միսս Քրենշոն ուզում էր, որ նա նիհարի:

— Ես չեմ ուզում միայն ոսկորներդ մնան, — ասաց միսս Քրենշոն մայրիկին, — բայց կուզենայի, որ Գորտուկի պես ճկուն լինես. դա միանգամայն անհրաժեշտ է պիեսում: Գու և Գորտուկը պիտի գրեթե նույն մարդը դառնաք, ավելի նման, քան թե հիմա եք. մի խոսքով, այնպես, որ հանդիսատեսը նայի ու հասկանա: Իսկ դա չի ստացվի, եթե ուտելուց օրեցօր կլորանաս, եթե շարունակ վհատվես ու մտա-



հոգվես: Դու այլևս չպետք է ոչ մի մտահոգություն ունենաս, բացի մի բանից՝ քո ապագա դերակատարումից. սա՛ պիտի լինի քո մշտական հոգսը:

Ամեն առավոտ՝ «Պիեռի» սրճարանում նախաճաշելուց հետո, մենք բարձրանում էինք մեր սենյակը, ու Աղջիկ մայրիկը քիչ-քիչ կարգում էր պիեսը՝ նորից ու նորից, ես էլ լսում էի: Միսս Քրենշոն դեմ էր, որ իմ դերը նստեմ-սովորեմ, մինչև մի քանի անգամ չլսեմ, թե Աղջիկ մայրիկն ինչպես է կարգում, մինչև համարյա դերս անգիր չանեմ:

Յոթն անց կես մենք հանգստանում էինք, բայց որ ճիշտը վերցնենք, ես ի՞նչ հանգստանայի: Մեկ-մեկ Աղջիկ մայրիկը ննջում էր, իսկ ես պառկում էի ու տարբեր բաներ հիշում: Մեկ-մեկ էլ ութի մոտերքը միսս Քրենշոն էր գալիս մեր սենյակը:

Հենց նույն օրը, երբ Աղջիկ մայրիկը Մայք Մաքբլեչի հիմնարկում բոլոր թղթերը ստորագրեց, ինձ ասաց.

— Դե՛, Գորտուկ, մենք էլ փողի տեր դարձանք:

Եկանք «Պիեռ» թե չէ, նա վարիչի հետ խոսեց մի ուրիշ սենյակ վերցնելու համար: Մի ժամ հետո արդեն տեղափոխվել էինք. ի՞նչ լավ էր էստեղ՝ երեսուներեքերորդ հարկում:

Բայց ա՛յ թե սխալ արինք:

Միսս Քրենշոն մյուս առավոտ գնացել էր 2109-րդ սենյակը, իսկ մենք, իհարկե, էնտեղ չէինք եղել: Նա զանգել էր վարիչին, սա էլ ասել էր, որ արդեն 3336-րդ սենյակում ենք մնում, ու միսս Քրենշոն եկավ, մեզ գտավ: Ես կարծում էի շատ ուրախ կլինի մեր նոր տան համար, բայց նա իսկի էլ չուրախացավ: Ընդհակառակը՝ բարկացավ, շնայած փորձում էր Աղջիկ մայրիկին ցույց շտալ: Դե, իսկական դերասանուհի էր, գիտեր, թե բարկությունը ոնց են թաքցնում:

— Սա հյուրանոցի ամենաշքեղ սենյակներից մեկն է,— ասաց նա:— Սովորաբար միսիս Քիզանն էր այստեղ իջևանում, բայց գիտե՞ք, ձեզ ամենևին չի համապատասխանում: Օ՛, ես հասկանում եմ, ձեր միջոցները հիմա թույլ են տալիս այս սենյակը վարձել, սակայն սա բնավ էլ աշխատելու տեղ չէ, իսկ երբ պատրաստվում ես խաղալ թատրոնում, հարկավոր է անընդմեջ աշխատել, գիշեր ու ցերեկ:

— Բայց 2109-րդում նույնիսկ երկու մահճակալ չկա,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Պարզ է,— ասաց միսս Քրենշոն:

— Ես չեմ կարողանում բարեկամներին հյուր կանչել:

— Պարզ է:

— Այստեղ ինձ ավելի երջանիկ եմ գտում:

— Ստիպված եմ բացեիրաց խոսել,— ասաց միսս Քրենշոն:— Ես չեմ կարծում, թե ներկայումս ճիշտ ժամանակն է, որ քեզ երջանիկ զգաս: Մի շտապիր հաղթանակի պտուղները վայելել, նախքան հաղթանակի հասնելը: Հռչակն ու հարստությունը վայելելու դեռ շատ ժամանակ կունենաս: Իսկ հիմա աշխատելու ժամանակն է, անհարմարություններից փոքր-ինչ նեղվելու, փոքր-ինչ մտահոգ չլինելու ժամանակը՝ անընդհատ, ամեն օր:

Աղջիկ մայրիկը լսափողը վերցրեց, վարիչի հետ խոսեց, ու մի ժամ հետո մենք նորից շ109-րդ սենյակում էինք: Չգիտեմ ինչու, բայց ես ուրախ էի:

Գլեդիս Դյուրարին իր անձնական բժշկի հետ եկավ ու ձայնը գլուխը զցած՝ սկսեց գոռոգոռալ, որ էլի նույն հեղինակ սենյակում ենք:

— Վա՛հ, բոլոր թերթերը միաբերան ձեր արտակարգ հաջողության մասին են գրում,— ասաց նա:— Իսկ չուք, ո՞վ կպատկերացնի, կպել եք սրա պես խցին, մնացել:

— Խնդրում եմ, մի բոպե ինձ լսիր,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ես րեզ փոքրուց եմ ճանաչում: Աչքդ բացել, չես բացել՝ լող ես տալիս հարստության մեջ: Բացի փող մսխելուց, ուրիշ անելիք չունես: Ստիպված չես ամուսնանալ ու կյանքդ մի կերպ դասավորել, դրա համար էլ չես ամուսնացել: Ստիպված չես բաժանվել անհաջող ամուսնությանը սլատճառով, որովհետև չես էլ ամուսնացել: Ստիպված չես ընտանիք քայքայվելուց հետո կաշվից դուրս գալ, որ ինչպես հարկն է մայրություն անես տղայիդ ու աղջկադ, որովհետև տղան կամ աղջիկը որտեղի՞ց է քեզ: Գու ոչ մի անելիք չունես, բացի թանկ փալաս-փուլուս ու թանկ իրերով լեփլեցուն տներ առնելուց և անվերջ ձեռուտ ընկնելուց, որովհետև ունեցած-չունեցածդ միայն դու ես ու բո փողը, իսկ ինչ վերաբերում է ինձ, եթե դեռ հոգիս շատ պիտի ուտես, կարճ ասեմ՝ ուրախ եմ քեզ համար, ունեցվածքդ բարո՛վ վայելես, բայց 'ես մտադիր եմ ապրել իմ ուզած տեղում, իմ ուզածի պես և հիմա ուզում եմ հե՛նց էստեղ ապրել ու հենց ճիշտ էսպես:

Գլեդիս Դյուրարին ասաց.

— Կյանքում էլ երբեք հետդ չեմ խոսի:

Նա շուտ եկավ իր բժշկի կողմն ու սկսեց լաց լինել: Իսկ հետո գոռաց սրա վրա.

— Գրո՛ղը տանի, ի՞նչ ես բերանդ քաց ցցվել: Թե բժիշկ ես, նրա ջերմությունը չափիր: Չե՞ս տեսնում, որ խեղճ աղջիկը հիվանդ մեռնում

է: Այո, հիվանդ, հիվանդ, հիվանդ: Ես նրան երբեք չեմ տեսել էսպես հիվանդ:

Բժիշկը գրկեց Գլեդիս Դյուբարիին ու ասաց.

— Դե լավ, պատլիկս: Լավ, հանգստացիր:

Գլեդիս Դյուբարին դուրս պրծավ նրա գրկից ու բռնակեց.

— Չհամարձակվես ինձ պատլիկ ասել, լսեցի՞ր, հեքի՛մ, հարուստ հարսնացուների: որսո՛րդ, խաբեբայի մե՛կը: Ա՛խ, ես քեզ գիտեմ, պարոն Լողլող, Սեզլուխ, Լպտաժ երես, Վախկոտ նապաստակ ու Չանձրույթի տոպրակ. ես քեզ հի՛նգ մատի պես գիտեմ: Չհամարձակվե՛ս մյուս անգամ ինձ պատլիկ ասել:

Գլեդիս Դյուբարին նայեց շուրջը՝ բոլորիս, իսկ հետո սկսեց ոտքերը գետնով տալ, ձեռքի պայուսակը բզկտել ու ճշալ: Նրա բժիշկը գրպանից մի տուփ դեղահաբ հանեց, ասաց.

— Միսս Դյուբարի, խնդրում եմ այս հաբերից երկուսը խմեք:

Գլեդիս Դյուբարին նրա ձեռքին շփացրեց: Տուփը թռավ մինչև առաստաղ, ու հաբերը թափվելով՝ շաղ եկան: Բժիշկը սկսեց դրանք հավաքել: Հեռախոսը զնգաց, Աղջիկ մայրիկն էլ լսափողը վերցրեց:

— Ոչ,— ասաց նա:— Բան չի պատահել... Կարող եք հարևաններիս հայտնել, որ ես դերս եմ փորձում, և թող ներեն ինձ, եթե անհանգստացրել եմ: Այլևս չի կրկնվի:

Նա լսափողը դրեց, ուղիղ իր ընկերուհու աչքերին նայեց, ասաց.

— Ա՛յ քեզ անամոթություն. գալիս ես էստեղ ու ծղրատոցդ դնում, կարծես շուկայում լինես: Խնդճ աղջկա սիրտը վախից կանգնել է:

— Իմ սիրտը չի կանգնել,— ասացի ես:

— Տեսա՞ր,— ասաց Գլեդիս Դյուբարին:— Նրա սիրտը բոլորովին էլ չի կանգնել: Շատ լափ հասկանում է, թե ինչ խորն եմ վիրավորված, թե ամենամոտ ընկերուհիս ինչ սոսկալի վիրավորանք հասցրեց ինձ: Դե, եթե դու արդեն իմ ընկերուհին չես, նա ընկերուհիս է, չէ՞, Գորտուկ:

— Ես կգերադասեի, որ նրան հիմար հարցեր չտաս,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Ես եկա երկուսիդ աչելու, թե ինչքան ուրախ եմ ձեզ համար,— վրա տվեց Գլեդիս Դյուբարին:— Եկա ձեր ուրախությունը հեաներդ բաժանելու: Ափսոս, որ հենց առաջին փոքրիկ հաջողությունը քեզ էդպես միանգամից փոխել է, սրտացավ ընկերուհուց դարձել ես անգութ թըշնամի:

Բժիշկը մոտեցավ Գլեդիս Դյուբարիին ու ձեռքը նրան մեկնեց՝ ափի մէջ երկու դեղահաբ:

— Սա ի՞նչ է,— ասաց Գլեգիս Դյուբարին:

— Հանգստաբեր,— շնչաց բժիշկը:

Գլեգիս Դյուբարին նրա ձեռքին շապացրեց: Հարերը թռան մինչև առաստաղ ու ընկնելով՝ փշրվեցին:

— Ի՛նքդ խմիր,— ասաց Գլեգիս Դյուբարին, բայց էլ չէր ճվճվում:— Ես հանգստաբերի կարիք չեմ զգում. պա՞րզ է, հարուստ հարսնացուների որսորդ: Իմիջիայլոց, դա չի էլ հանգստացնում: Եթե հանգստացներ, էսպես դյուբարագրգիռ չէի լինի: Մի տարի է՝ ամեն օր վեց-յոթ հատ խմում եմ: Ի՛նչ հանգստաբեր, կավիճ է, այ թե ինչ: Ուղղակի կավիճ: Ախր կավիճն իմ ինչի՞ն է պետք:

Բժիշկը գլուխ տվեց Աղջիկ մայրիկին, հետո՝ ինձ ու շրջվեց, որ գնա:

— Ո՞ւր ճամփա ընկար,— ասաց Գլեգիս Դյուբարին:

Բժիշկը կանգնեց դռան մոտ: Շուռ եկավ ու երկար նայեց նրան: Ոչ մի բառ չասաց: Դուռը բաց արեց ու գնաց:

Գլեգիս Դյուբարին աչքերը պեղծեց իր ճմռթված ու պատառոտված պայուսակին, բայց լաց չէր լինում:

— Ինչո՞ւ չես հետն ամուսնանում,— ասաց Աղջիկ մայրիկը: Նա համարյա շշուկով էր խոսում:

— Իսկ ինչո՞ւ պիտի ամուսնանամ,— ասաց Գլեգիս Դյուբարին: Սա էլ էր համարյա շշուկով խոսում:

— Նախ՝ որովհետև նա սիրում է քեզ,— ասաց Աղջիկ մայրիկը:

Գլեգիս Դյուբարին չէր նայում Աղջիկ մայրիկին: Անընդհատ պայուսակն էր ձեռքերով հարթեցնում:

— Դու իրո՞ք էդպես ես կարծում,— ասաց նա:

— Իհարկե սիրում է: Երբ առաջին անգամ ձեզ միասին տեսա, իսկույն նկատեցի:

— Ես չեմ կարող հաշտվել մի տղամարդու հետ, որը թույլ է տալիս ինչ-որ կնոջ իր գլխին նստել:

— Երևի մո՞րը նկատի ունես,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Չէ,— ասաց Գլեգիս Դյուբարին:— Մայրն ի՞նչ: Ի՛նձ նկատի ունեմ: Մայրը պաշտում է նրան: Ինձ էլ հաշվի չի առնում:

— Ոչինչ, ամուսնացիր:

— Նա հարուստ հարսնացուների հետևից վազող չի: Հենց էնպես ասացի: Զղայնությունից: Բայց հասկանո՞ւմ ես, չգիտի, թե ինձ պես աղջկա հետ ինչ ձևով վերաբերվի:

— Դու էլ սովորեցրու:

— Բա քո կարծիքով մի ամբողջ տարի ի՞նչ է արածս:

— Իսկ ինչպե՞ս ես ուզում, որ հետդ վարվի:

— Ուզում եմ ինձ սովորական աղջկա տեղ դնի: Չեմ ուզում բոլոր ասածներս լսի ու բերանիցս ինչ դուրս գա՝ անի: Նա պետք է ինձ ստիպի, որ ամուսնանամ հետը:

— Դու էլ էնպես արա, որ ստիպի:

— Ո՞նց:

— Չգիտեմ, բայց վստահ եմ, որ դու կարող ես:

— Վախենում եմ:

— Ինչի՞ց:

— Սխալվելուց:

— Գիտե՞ս, շսխալվելն էլ է երբեմն սխալ:

— Վախենում եմ ինձ թունավորի:

— Ինչի՞ համար:

— Ունեցվածքիս:

— Օ՛ֆ, վերջ տուր, հա՞,— ասաց մայրիկը:— Դու է՛լ, քո ունեցվածքն է՛լ... Թե կուզես իմանալ, դու նյու Յորքի ամենաշունևոր աղջիկն ես:

— Իրոք, իբր ճիշտ չի՞:

— Բա ինչ է: Մոռացիր ունեցվածքդ ու նրա հետ ամուսնացիր:

— Համոզված ես, որ ինձ չի թունավորի:

— Ախր ինչո՞ւ պիտի թունավորի:

— Եթե ամուսնանալիք, ու նա ինձ հետ էնպես վարվեր, ոնց որ ինքս եմ նրան վերաբերվում, ես, օրինակ՝ նրան կթունավորեի:

— Դե, դու էլ էդպես մի վերաբերվիր:

— Չեմ կարող: Ուզում եմ, բայց չեմ կարողանում:

— Միգուցե հոգեբույժի մոտ գնաս:

— Լավ հոգեբույժի տեղ գիտե՞ս:

— Իհարկե չէ, բայց նա կիմանա:

— Ես չէի ուզի, որ նա դրա մասին իմանա: Հետո՞ երեխա ունենալուց եմ վախենում:

— Ախ, ի՞նչ կլինի, գնա էստեղից, հա՞,— ասաց Աղջիկ մայրիկը, շնայած արդեն առանց բարկանալու:

— Կգնամ,— ասաց Գլեդիս Դյուբարին,— բայց դու մի բան շմուռանաս. կյանքում էլ երբեք հետդ չեմ խոսելու:

— Եղավ,— ասաց Աղջիկ մայրիկը:

Գլեդիս Դյուբարին գնաց դեպի դուռը:

— Սրանից հետո քեզ միայն նամակ կգրեմ,— ասաց նա,— չհարձակվես հետս խոսել... Եթե շատ ուզես, ինձ պես նամակ գրիր:

— Եղավ, եղավ:

— Ցտեսություն, Գորտուկ,— ասաց նա:— Ես քեզ սիրում եմ ու միշտ կսիրեմ:

— Ես էլ քեզ եմ սիրում,— ասացի:

— Գիտեմ, որ սիրում ես, Գորտուկ, ու գիտեմ, քեզ համար ոչ մի նշանակություն չունի՝ կաակիս մեջ անունդ կհիշեմ, թե չէ, բայց մեկ է՝ հիշելու եմ:

— Օ՛ֆ, դուրս արի էստեղից,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Ես ուրախ եմ, որ դու հռչակավոր ես դարձել,— շշնջաց Գլեդիս Դյուբարին,— բայց հազար ափսոս, որ դա խելքդ տարել է: Երբեք չէի պատկերացնի, թե հենց հռչակավոր դառնաս, քո ամենամոտ ընկերուհուց պիտի հրաժարվես:

— Ես հռչակավոր չեմ,— ասաց Աղջիկ մայրիկը:— Բայց դու մեկ-մեկ աշխարհի ամենաձանձրալի մարդն ես:

— Գուցե՞ էֆեննայում մի լավ բժիշկ ճարվի,— ասաց Գլեդիս Դյուբարին:— Ես նրան բերել կտամ:

— Բա իհարկե, իհարկե. դա շատ կարևոր է:

— Ախր ինձ լավագույն բժիշկն է պետք, չէ՞:

— Լսիր, երբ որ ցած իջնես, Յառայողից հեռախոսագիրքը խնդրիր,— ասաց Աղջիկ մայրիկը:— Հոգեբույժների ցանկը կգտնես: Հետո՝ ում աշխատանքի տեղը ամենից մոտն է տանդ, նրան էլ կընտրես: Զանգ կըտաս: Կասես՝ անունդ Գլեդիս Ամիթ է, որ կարողանաս քո մասին ինչ միշտն է, պատմել: Միակ միջոցը դա է, որով քո մեծամոլությունից վերջնականորեն կաղատվես:

— Ես ոչ մի մեծամոլություն էլ չունեմ:

— Օ, իսկապե՞ս: Դե, հապա փորձիր առանց ունեցվածքիդ մի ամիս ապրել: Նոր կիմանաս՝ ինչ ունես, ինչ՝ չէ: Քեզ ընդամենը հիսուն դոլար հատկացրու և մի փոքրիկ սենյակում ապրիր, մինչև աշխատանք գտնես:

— Ի՞նչ կա որ, ես կարող եմ ձեր սենյակի պես մի սենյակ վարձել. թեև ուզեցի հենց էստեղ՝ «Փիեռում»,— վրա տվեց Գլեդիս Դյուբարին:— Դու վարիչի հետ խոսիր, ասա՝ մի շատ շքալոր ընկերուհուդ սրա պես սենյակ է հարկավոր, մինչև աշխատանք գտնի:

— Ո՛նց չէ:

— Կյանքում էլ երբեք հետդ չեմ խոսի,— ասաց Գլեդիս Դյուբարին:— Փառքն անցողիկ է, բայց ընկերությունը՝ մնայուն: Գիտեմ, դու

դեռ կզղչաս ու ամոթից գետինը կմտնես, երբ դաս, ինձանից օգնութիւն խնդրես, իսկ ես դուր երեսիդ փակելու փոխարեն՝ քեզ նմանին օգնեմ: Մնաս բարով ընդմիջտ:

— Գնաս բարով ընդմիջտ, — ասաց Աղջիկ մայրիկը:

Գլեղիս Դյուբարին գնաց:

Աղջիկ մայրիկը նորից վերցրեց պիեսն ու սկսեց կարդալ, կարծես ոչինչ չէր պատահել: Նրա ձայնը նույնիսկ ավելի լավ էր հնչում, քան առաջ: Ես լսում էի, բայց Գլեղիս Դյուբարին մտքիցս դուրս չէր գալիս: Երանի նա էդպես դժբախտ շլիներ:

Դռան զանգը տվին: Աղջիկ մայրիկը գնաց, բաց արեց, էլի Գլեղիս Դյուբարին էր, ձեռքին էլ՝ մի կապ փող:

— Սա պատահաբար դռա պայուսակիս մեջ, — ասաց նա, — ուղիւմ եմ Գորտուկը ծախսի, նախքան մեռնելս՝ լր համար շոր-մոր ու մեքենա առնի:

Աղջիկ մայրիկը նրա ձեռքը հրեց, բայց չբարկացավ, ասաց.

— Օ՛Ֆ, հեռացիր, հա՛:

Հետո փակեց դուռն ու շարունակեց կարդալ:

Էսպես անընդհատ՝ մի բանին մյուսն էր հաջորդում. անընդհատ եկող-գնացողներ կային, անընդհատ՝ խոսք ու զրույց, մենք աշխատում էինք, սովորում, ման գալիս, ուտում, քնում էինք ու վարժնում: Չէ, հույս էլ չունեմ, թե եղած-չեղածը մեկ առ մեկ կհիշեմ, բայց ամեն ինչ լավ էր, որովհետև Աղջիկ մայրիկը երջանիկ էր:

Չնայած շատ էինք աշխատում, բայց նա երջանիկ էր: Չնայած Գլեղիս Դյուբարիի պես ընկերուհիներ ունեք, որոնք մեզ հյուր էին գալիս կամ իրենք հյուր կանչում, զանգում ու շատախոսում, նա երջանիկ էր. միգուցե հենց սրա՛նց շնորհիվ: Չգիտեմ:

Միայն գիտեմ, որ նա երկար ժամանակ անց առաջին անգամ իրոք երջանիկ էր: Ոչ թե մի քանի րոպեով, ասենք՝ հազարից մեկ, չէ՛, անընդհատ երջանիկ էր:

Նույնիսկ առավոտյան ուրիշ ձևով էր վեր կենում: Չէր համբերում, թե երբ է վեր կենալու, իսկ առաջ ո՞վ էր էդպիսի բան տեսել, ախր նա չէր սիրում վեր կենալ, չէր սիրում իր համար սուրճ դնել: Ստիպված ե՛ս սովորեցի սուրճ եփել ու նրան անկողնում մատուցել:

Բայց հիմա, հենց որ առավոտյան վեցին հեռախոսը զնգար, նա արդեն գիտեր, թե ինչն ինչոց է, գիտեր՝ նոր օր է սկսվում, մի ամբողջ երջանիկ օր, ու անկողնուց վեր էր թռչում, լսափողը վերցնում, շնորհակալութիւն հայտնում մեզ արթնացնելու համար, հետո անդնուտեղը

մտնում լողարան, կանչում ինձ, ու մենք լողանում էինք, հետո էլ հագնվում:

Գնում էլինք զբոսայգի, ու էնպե՛ս լավ էր, որովհետև նա ինչ էլ անէր, սիրով էր անում, անհամբերությամբ էր դրան սպասում: Ամեն ինչ արդեն նպատակ ուներ, էլ աննպատակ չէր: Աղջիկ մայրիկը գիտեր ինչ է անում և ինչու է անում: Նա ինքն էլ արդեն նպատակ ուներ, ու նպատակը նրա սրտովն էր: Իհարկե, պիտի շատ ու շատ աշխատեր, ամեն օր, համարյա բոլոր ժամերին, բայց նա ոգևորված էր իր աշխատանքով, էնպես էր սիրում իր աշխատանքը, որ դա նրա համար կարծես աշխատանք էլ չէր, ուրախություն էր, հաճույք:

Մեկ-մեկ միսս Քրենշոն խոսքը կիսատ էր թողնում ու ժպտալով նրան ասում.

— Գիտե՞ս, ես հիմա գրեթե հավատում եմ, որ պիեսը հաջողություն կունենա, և իմ կարծիքով՝ հենց քո դերակատարման շնորհիվ, եթե այս թւիով աշխատես: Ինձ թվում է՝ քեզ փայլուն կդրսևորես:

— Բայց ինչ խոսք, Գորտուկին չեմ հասնի,— ասում էր Աղջիկ մայրիկը:

— Դե, անհնարին բաներ շերագենք,— ասում էր միսս Քրենշոն, ու մենք լավ գիտեինք, որ կատակ է անում:

Ես միսս Քրենշոյին ընդամենը մի անգամ տեսա Աղջիկ մայրիկի վրա բարկացած, երբ նա բացատրում էր, որ մենք պիտի անպայման 2109-րդ սենյակում ապրենք: Բայց նույնիսկ բարկացած ժամանակ նա էլի սիրալիր էր: Աղջիկ մայրիկն ու ես մի լավ մտածելուց հետո հասկացանք, թե ինչու էր միսս Քրենշոն ուզում, որ դուրս գանք 3336-րդ սենյակից ու վերադառնանք 2109-րդը:

— Պիեսի համար էդպես է պետք, այ թե ինչու,— ասացի ես:

— Բա իհարկե,— ասաց Աղջիկ մայրիկը:— Հետո էլ՝ եթե ճիշտը խոստովանեմ, մեր սենյակն ինձ ավելի է դուր գալիս: Բացի դրանից, փողներս կխնայենք:

Միսս Քրենշոն Աղջիկ մայրիկին խնդրեց, որ ինչքան հնարավոր է, շատ ժամանակ անցկացնի ինձ հետ ու ինչքան հնարավոր է, քիչ տեղ գնա առանց ինձ: Աղջիկ մայրիկն ու ես սրա վրա էլ մտածեցինք ու հասկացանք ինչու պարզ էր, նույն պատճառով:

Բայց միսս Քրենշոն ասաց, որ վեց-յոթ օրը մեկ, շաբաթ երեկոյան, Աղջիկ մայրիկին հարկավոր է հրավերքների գնալ, ասել-խոսել ու զվարճանալ, թեկուզև ուշ տուն վերադառնալ, միայն թե վեց-յոթ օրը մեկ:



Հետո նա ասաց, որ ամեն կիրակի ես պետք է մենայն գրոսալի գնամ ու ժամը տասներկուսից մինչև երեքը ձան դամ. ա՛յ թե լավ էր, հենց իմ սրտով: Զբոսայգուց մեր հյուրանոցը միշտ էլ երևում էր, ու ես նայում էի, գուշակում, թե 2109-րդ սենյակը ուրը կլինի: Գիտեի՝ Աղջիկ մայրիկը հիմա էնտեղ է, դեռ քնած, որովհետև շարաթ երեկոյան հրավերքի է եղել ու գիշերվա երեքին-չորսին կամ էլ գուցե լուսադեմին անկողին մտել: Զբոսայգում ես ընկերներ ու ընկերուհիներ էի ճարում, հետները խաղում: Գրպանումս միշտ ելեր դուրս կար, իմ ուղածի սէս կարող էի ծախսել, բայց էնպես, որ կեսօրյա նախաճաշի համար անպայման փող մնա: Ժամը մեկին պիտի գազանանոցի մոտի սրճարանը մտնեի, հացուպանիր առնեի, ելակ կամ էլ ուրիշ միրգ, իսկ հետո պիտի մի բաժակ կաթ խմեի, հա՛, ուտելիս էլ շտապեի: Կոնֆետին զոռ տալու իրավունք չունեի, բայց ընկերներիս ու ընկերուհիներիս կարող էի ինչ-ժան ասես կոնֆետ, ընկույզ կամ ադիբուզի հյուրասիրել, մինչև փողս պրծներ, իսկ փողս երբեք չէր պրծնում: Միշտ ամենաքիչը մի դուրս տուն էի տանում, մեկ-մեկ էլ՝ երկու դուրս: Աղջիկ մայրիկը վերցնում էր, պահում մյուս անգամվա համար: Մի տեսոր՝ մեջ էլ ամեն ինչ գրում էր: Այսինքն՝ նա մեր բոլոր ծախսերը հաշվում էր:

Մի երեկո Հիսունյոթերորդ փողոցով Աղջիկ մայրիկի հետ գնում էի Հինգերորդ պողոտա ու նրան հարցրի.

- Ի՞նչ օր է այսօր:
- Երկուշաբթի, — ասաց Աղջիկ մայրիկը: — Ինչո՞ւ:
- Արդեն ինչքա՞ն ժամանակ է, որ նյու Յորքում ենք:
- Դե՛... երեկ մի շաբաթ դարձավ, ինչ Կալիֆոռնիայից եկել ենք:
- Տեսնես վիկտորինայի հաղթողը վերցրե՞ց փողը, թե՞ կփորձի ավելին շահել:
- Օպերայի գիտա՞կր:
- Հա:

Մենք մոտեցանք հենց նույն խանութին, որի ցուցափեղկում հեռուստացույց էր դրված: Փողոցում մարդիկ էլի հավաքվել, նայում էին: Քիչ հետո մեզ ծանոթ տղամարդը երևաց էկրանին ու ասաց, որ խորհրդակցել է Իտալիայում ապրող իր հոր հետ: Ասաց՝ միշտ հիշում է հորը, և նա իրեն խորհուրդ է տվել, որ շահած փողը վերցնի, չփորձի ավելին շահել, ու էդպես էլ արեց:

Ես ու Աղջիկ մայրիկը շատ կուզեինք իմանալ, թե վաթսունչորս հազար դուրարանոց հարցն ինչ է լինելու, շատ կուզեինք իմանալ՝ մեր ծա-

Տոճը կկարողանա՞ հարցին պատասխանել, բայց էլ ի՞նչ, երբեք չէինք  
իմանա:

Մի ուշ երեկո էլ Մայք Մաքքլիչին զանգեց ու մեզ քնից հանեց:  
Աշշիվ մայրիկը երկար խոսում էր: Երբ վերջացրեց, ես էլ էի արդեն  
լրիվ արթնացել, որովհետև քունս չի տանում, երբ մեկնումեկը սենյակում  
խոսում է:

— Ի՞նչ կա, — ասացի:

— Անշափ կարևոր գործ, — ասաց, Աշշիվ մայրիկը: — Վաղը կեսօ-  
րին ես ու դու պետք է որոշ մարդկանց հանդիպենք Մայքի հիմնարկում:

— Ի՞նչ մարդկանց:

— Կրպորողների ու լուսանկարիչների: Նրանք կգրուցեն մեզ հետ  
ու կնկարեն: Մայքն ուզում է հնայես ասել, որ հետո էլ միսս Քրենշոն  
գա էնտեղ և ներկաներից ոմանց հրավիրի իր մոտ թեյի:

— Ինչի՞ համար:

— Ռեկլամի: Դա ամենակարևոր հարցերից մեկն է թատրոնում:  
Քնդհանրապես՝ ամբողջ աշխարհում: Նույնիսկ թագավորներն ու թագու-  
հիներն են մարդիկ վարձում իրենց ռեկլամելու համար:

— Ինչո՞ւ:

— Ամեն մեկն էլ ցանկանում է, որ մյուսներն իր մասին լավ բա-  
ն՝ թ իմանան:

— Իսկ դրանք ճի՞շտ են:

— Դե, ոչ միշտ, համենայն դեպս, հաղչուր տոկոսով ճիշտ չեն,  
բայց ռեկլամի կարգին մասնագետը համալրյա ում ասես: Կարող է լավը  
դուրս բերել: Եթե ուզենա, բանկ կտրողին էլ լավը դուրս կբերի:

— Ո՞նց:

— Ո՞նց. այ, տես. կխոսի բանկ կտրողի հետ ու նրա կյանքում մի  
լավ բան կգտնի: Դրա վրա ճոխ պատմություն կսարքի և կուղարկի  
թերթերին: Սրանք կտպեն, և բոլորը կկարդան, որ բանկ կտրողը ասենք՝  
Միսուրիում անցած իր մանկության տարիներին կիրակնօրյա դպրոց է  
հաճախել, բարի, ու հնազանդ գավակ եղել և աչլն, և աչլն:

— Ա բոլորը կմոռանա՞ն, որ նա բանկ է կտրել:

— Մոռանալը՝ չեն մոռանա, բայց, առաջվա պես վատ չեն վերա-  
բերվի: Իսկ հետո ինչ-որ մեկը Հոլիվուդից կզանգի նրան ու կառաջարկի  
հանդիպել, խոսել նրա կյանքի պատմությանը և կիրանավորելու շուրջը:

— Բա մեր մասի՞ն ինչ են գրելու:

— Դե, մերն ուրիշ է: Ինչևէ, կտրելու հետ մենք, ոչ մի: Կապ չունենք,  
մեր մասին ուրիշ ձևով կգրեն:

— Ի՞նչ ձևով:

— Օ՛, դեռ կտեսնես ինչ լավ է լինելու: Նրանք բոլորն էլ հաճելի մարդիկ են: Ուզում են ծանոթանալ մեզ հետ և լուսանկարել, նախ՝ Մայքի մոտ, իսկ հետո՝ էստեղ՝ մեր սենյակում, միսս Քրենշոյի մոտ, զբոսայգում և էլի մի քանի տեղ:

— Բայց ախր ինչո՞ւ:

— Որովհետև ես ու դու, Գորտուկ, հիմա նորություն ենք: Մեծ նորություն ենք թատրոնի աշխարհում:

— Ա՛յ քեզ բան. երբ վանի՞ց:

— Հենց այն օրվանից, երբ Մայք Մաքքլեչին որոշեց զործի անցնելու ես ու դու էլ՝ նրա հետ միասին, միսս Քրենշոն էլ՝ մեզ հետ:

— Իսկ ինչ է, առաջ մենք նորություն չէի՞նք:

— Ճիշտ է, նորություն էի՛ք, բայց ոչ հիմիկվա պես: Մենք պիտի խաղանք մի պիեսում, որը Մայք Մաքքլեչին է բեմադրում: Սա թատերաշրջանի ամենակարևոր ներկայացումներից մեկն է լինելու: Մենք նորություն ենք, որովհետև դեռ հս յանի չենք, իսկ պիեսի բեմադրությունից հետո շատ հնարավոր է, որ հս յանի դառնանք:

— Բայց եթե դառնանք, կիմանա՞նք:

— Ո՞նց չէ: Մենք էլ կիմանանք, բոլոր մյուսներն էլ:

— Ու մենք կփոխվե՞նք:

— Իհարկե կփոխվենք: Երբ ինչ-որ գոտծ հաջող ես անում, ու դա դուր է գալիս բոլորին, երբ դու ինքդ ես փողդ վաստակում, արդեն փոխվում ես, էլ առաջվանը չես:

— Դե լավ, արի քնենք,— ասացի ես:

— Արի,— ասաց Աղջիկ մայրիկը:

## ՄԱՄՈՒԼԻ ՏԻԿՆԱՅՔ ԵՎ ՊԱՐՈՆԱՅՔ

Մայք Մաքքլեչիի հիմնարկը Հիսգերորդ պողոտայի բարձրահարկ շենքերից մեկում է, հիսուներորդ հարկում: Վերևից, թե ուզես, Իսթ գետը կտեսնես, նրա նավերն ու կամուրջները: Թե ուզես, Նյու Յորքի մեծ մասն էլ կտեսնես: Մայքի հիմնարկում ես կամ առավոտյան եմ եղել, համ երեկոյան՝ մութն ընկնելուց հետո, երբ քաղաքի բոլոր լույսերը վառվում են: Ամեն ինչ էնտեղից շատ պարզ է երևում՝ առավոտյան լինի, թե երեկոյան: Հինգ սենյակ կա էնտեղ, ու դրանցից ամենամեծը

Մայքինն է: Մյուս սենյակներում նրա քարտուղարներն են ու մնացած աշխատակիցները:

Երբ Աղջիկ մայրիկն ու ես առաջին սենյակի դուռը բացեցինք, Հելենն Գոմեսը՝ Մայքի անձնական քարտուղարուհին, արդեն սպասում էր մեզ:

— Բոլորը միաստր Մաքքլեշի մոտ են,— ասաց նա:

— Ես վախենում եմ,— ասաց մայրիկը:

— Մյուս վախենա,— ասաց Հելենն Գոմեսը:— Մայր ու աղջիկ հրաշալի տեսք ունեք: Չորս կողմը միաբերան ձեր մասին են խոսում, մեկ էլ պիեսի: Ես երևի մի տասը անգամ պիեսը կարդացել եմ, բայց չեմ համբերում, թե նոր տարբերակը երբ պիտի տեսնեմ: Իսկ դու տեսե՞լ ես:

— Դեռ ոչ,— ասաց մայրիկը,— շեշտած մեռնում եմ անհամբերությունից:

— Որքան ինձ հայտնի է, պիեսը սլատրաստ է, բայց նա ուզում է էլի աշխատել: Թեև գտնում է, որ նոր տարբերակը նախկինի համեմատ շատ ավելի լավն է:

— Նախկին տարբերակը արդեն իսկ հոշակապ էր:

— Այո, բայց տատկերացրու, թե նո՛րն ինչ հոշակապ կլինի: Դե, ներս դնացեք:

— Չգիտեմ էլ՝ ինչ եմ խոսելու,— ասաց Աղջիկ մայրիկը:

Հելենն Գոմեսը ծիծաղեց:

— Դրա մասին տեսք չէ մտածել: Սմենն ինչ բարեհաջող կանցնի, մի անհամբերության: Ձեր գալուց հետո մեր ամբողջ հիմնարկը կենդանացել է:

— Գու ուղղակի հաճոյախոսում ես, Հելենն:

— Հաճոյախոսելու հարկ չկա: Ես ճշմարիտն եմ ասում: Միաստր Մաքքլեշին ու էմերսոնն թալին ձեր գալուց առաջ, շաբաթներ շարունակ նստում էին ու անվերջ պիեսը դնում-վերցնում: Չգիտեին ինչ անեն, և Մայքը... միաստր Մաքքլեշին անգամ վստահ չէր, թե պիեսի բեմադրությանը ձեռնամուխ կլինի: Իսկ եթե միաստր Մաքքլեշին ոչինչ չի բեմադրում, մեզ մոտ բոլորովին հետաքրքիր չէ: Նա բնածին պրոդյուսեր է: Միայն բեմադրելիս է իրեն երջանիկ զգում: Ես տասը տարի է, աշխատում եմ նրա հետ ու երբեք չեմ տեսել, որ էլավես երջանիկ լինի:

Հելենն Գոմեսը ժպտաց ինձ ու ասաց.

— Եվ դա, փոքրիկ օրիորդ, որջան գիտեմ՝ քո շնորհիվ, քո գեղեցկուհի մայրիկի շնորհիվ: Տեսնո՞ւմ եք, ես էլ եմ ինչ-որ բաներից տեղյակ:

— Հելեն,— ասաց Աղջիկ մայրիկը,— լավ չէ, որ նրանց սպասեցնում եմ, բայց օգնիր ինձ, հա՛: Դու մեծ փորձ ունես: Իսկ ես դեռ երբեք նման վիճակում չեմ եղել: Իսկապես, ի՞նչ եմ անելու:

— Ուրեմն ե՞ս պիտի քեզ ասեմ, թե ինչ ես անելու,— ծիծաղեց Հելեն Գոմեսը:— Տասնհինգ տարի առաջ Արիզոնայից եկա, որ մեծ դերասանուհի դառնամ: Է՛հ, ինչե՛ք, Մայքի մոտ ընկա ու շատ ուրախ եմ դրա համար: Եթե Մայքի... միտքը Մաքքլեյի հետ շաշխատեի, տեղնուտեղը տուն կվերադառնայի: Հավատա ինձ, դու անհանգստանալու ոչինչ չունես:

— Հելեն, հոգյակս, քեզ պես ուրիշը աշխարհում չկա,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ես գիտեմ, դու Մայքի... միտքը Մաքքլեյի մոտ հաստատ բարեխոսել ես մեզ համար:

— Իհա՛րկե, անուշիկս, նույնիսկ չկասկածես,— ասաց Հելենը:— Ես չեմ ուզում իմ երկարամյա աշխատանքից զրկվել: Իսկ եթե միտքը Մաքքլեյին անհաջողութեան մատնվի, ոմսն՞ ստիպված պիտի լինեն հեռանալ: Ես մեկ առ մեկ կսրդում եմ մեր ստացած բոլոր ձեռագրերը, բայց սա մի շքնաղ գործ է. թե՛ բեմադրելու համար ինչ-որ բան էր պակասում: Այո, այո, հենց դուք. Երկուսդ: Հիմա ներս գնացեք, թող ձեզնով մի լավ հիանան:

— Ինձ յո՞ւրջ պետք է պահեմ,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Կարևոր չէ: Ինչպես էլ պահես, կլինի: Դե, շտապեք: Միտքը Մաքքլեյին ինձ խայտառակ կանի, եթե իմանա, որ ձեզ ուշացրել եմ՝ թեկուզ մի վայրկյան, իսկ ես չեմ ուզում ինձ խայտառակ տեսնել:

Աղջիկ մայրիկն ու Լս Հելեն Գոմեսին ժպտացինք, հետո Աղջիկ մայրիկը ձեռքս պինդ բռնեց, ու մենք ներս մտանք:

Սենյակում շատ տղամարդիկ կային ու մի քանի կին: Մայք Մաքքլեյին մեղ տեսավ թե չէ, դուրս թռավ իր գրասենյանի հետևից ու շտապ-շտապ եկավ ընդառաջ, մի շեղծով Աղջիկ մայրիկին գրկեց, մյուս ձեռքով էլ՝ ինձ, ու մենք բոլորս ժպտացինք, իսկ լուսանկարչական ապարատով մի տղամարդ ասաց.

— Հենց էդպես էլ մնացեք, Մայք:

Մենք անշարժացանք, ու տղամարդը շխկացրեց ապարատը: Մի վառ բոց բռնկվեց ու միանգամից հանգավ նա ապարատի լամպիկն արագ հանեց, իսկ հետո երկու ուրիշ տղամարդ ու մի կին ապարատները գործի դրեցին: Մայքն ասաց.

— Դեռ շատ ժամանակ կա, տիկնայք և պարոնայք: Թույլ տվեք

ներկայացնել իմ ապագա բեմադրության աստղին: Ես աստղ եմ ասում, որովհետև աստղը նրանք երկուսով են:

Մայքը մեզ ամեն մեկին հերթով ներկայացրեց, հետո էլ բոլորին հրավիրեց պատի տակ դրված մեծ սեղանի մոտ՝ կերուխումի, իսկ սեղանը լիքն էր, վրան՝ շեր ու բաժակներ, տապակած հնդկահավ ու ապուխտ, մի խոր, ապակե սկահակով սալաթ, մի սկահակ էլ թարմ միրգ՝ կճպած, կտրտած ու իրար խառնած, ու էլի տեսակ-տեսակ համով ուտելիքներ:

— Պետք է խոստովանեմ ձեզ,— ասաց մի ծերուկ սիրալիր ժպտալով,— որ մենք՝ լրագրողներս, մշտաբաղց մարդիկ, ոչ մի բանի նույնիսկ մատով չենք դիպել, որովհետև չէինք ուզում առանց ձեզ կերուխումն սկսել:

Բոլորը ծիծաղեցին ու ափսեներ վերցրին, իսկ ծերուկը Աղջիկ մայրիկին ասաց.

— Զուր չանհանգստանաք: Դուք մեզ դուր եկաք:

Նա Մայք Մաքքլեշիի պես գրկեց ինձ ու Աղջիկ մայրիկին, սեղմեց կրծքին ու ասաց.

— Մայքը փորձում էր մեզ պատմել ձեր մասին, բայց, իհարկե, մենք սպասում էինք, որ երկուսիդ էլ սեփական աչքերով տեսնենք և սեփական եզրակացությունների գանք: Սա ձեզ համար դժվարին պարտականություն չի լինի: Պարզապես բարեկամներով ուտելու ենք, խմենք: Գիտե՞ք, թերթերին ու հանդեսներին ձեզ նման մարդիկ շատ անհրաժեշտ են: Հավատացե՛ք հին ու բազմափորձ լրագրողիս խոսքին. երբ հարցերին պատասխանելու ժամանակը գա, ավելորդ ճիգ ու ջանք չթափեք: Դուք դրա կարիքը չունեք: Լա՞վ:

- Լավ,— ասաց Աղջիկ մայրիկը:
- Լա՞վ,— հարցրեց ինձ ծերուկը:
- Լավ,— ասացի ես:

Նա մեզ բաց թողեց, մոտեցավ սեղանին, շշից արագ-արագ ինչ-որ բան լցրեց բաժակի մեջ, բայց սառույց չգցեց: Հետո աչքերը ման ածեց, գտավ մեզ, բաժակը բարձրացրեց, ժպտաց ու մի շնչով խմեց: Նրա ծեր դեմքը միանգամից լրջացավ, համարյա տխուր դարձավ, ու նա նորից բաժակը լցրեց, մի կտոր էլ սառույց ավելացրեց:

— Ես սիրահարվեցի նրան,— շնչաց Աղջիկ մայրիկը:— Ով էլ որ լինի, սիրահարվեցի, դու էլ, չէ՞, Գորտուկ:

— Նա Արչի Փալմերն է՝ «Յունայթիդ Փրեսից»:

— Գորտուկ,— ասաց Աղջիկ մայրիկը,— չի՞նի՞ Մայքը ում հետ ծանոթացրեց, բոլորի անունները մեկ առ մեկ հիշում ե՞ս, հը՞:

— Չէ, հա՛,— ասացի ես:— Նրանն եմ հիշում ու «Վոգի» էլիզաբեթ Քորբիթինը:

— Բայց ինչո՞ւ ես նրանցը հիշում:

— Որովհետև նրանք ինձ դուր եկան: Բոլորն էլ դուր եկան, բայց նրանք՝ բոլորից շատ:

— Ո՞րն է էլիզաբեթ Քորբիթը:

— Այ, էնտեղ կանգնածը,— ասացի ես, ու մենք որոշեցինք էրան մոտենալ, նա էլ, հենց տեսավ, որ մոտենում ենք իրեն, դարձավ դեպի մեզ:

— Ա՛հ, ինչ հաճելի է,— ասաց,— որ եկաք ինձ հետ գրուցելու:

— Հաճելին ձեզ այստեղ տեսնելն է,— ասաց Աղջիկ մայրիկը:

Միսս Քորբիթը մեզ մի-մի ափսե տվեց, ու երեքս էլ սեղանի կողքից քայլելով՝ ափսեների մեջ ուտելիք էինք դնում, իրար հետ խոսում, ծիծաղում:

Վա՛յ, էնպես լավ էր, հավատս չէր գալիս: Մենք բա՛րձր-բարձր էինք, համարյա ամպերում, ու շորս կողմը բոլորն էլ շատ սիրալիր էին. թե ինչու՞ չէի հասկանում, բայց մեկ է՝ ուրախ էի: Ես ուրախ էի, որ հայրիկը համաձայնեց իմ բեմ դուրս գալուն, որովհետև եթե նա չհամաձայներ, ես էստեղ չէի լինի: Ուրախ էի, որ Վիոլա մայրիկը շեկավ Մաքըրոնի կենց՝ մեր տուն, որովհետև եթե գար, ես էլի էստեղ չէի լինի:

Միայն թե ասե՞մ ինչի համար էի տխուր. որ Դեբը հետս չի, որովհետև Դեբորա Շլոմբը իմ ամենամոտ ընկերուհին է, ու եթե ինձ մի լավ բան է պատահում, ես ուզում եմ նա էլ հետս լինի:

### ՊԻԵՍԻ ՆՈՐ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Կերուխումն ու խոսակցությունները երկար տևեցին, իսկ հետո հանկարծ լուռություն իջավ:

Մայք Մաքքլեյին ասաց.

— Տիկնայք և պարոնայք, այժմ կարող եք գրոհի անցնել:

Տիկնայք և պարոնայք իրար հետևից հարցեր տվեցին: Մայքին էին տալիս, Աղջիկ մայրիկին ու ինձ: Նրանցից մի երկուսը ծոցատետրերի մեջ նշումներ էին անում, բայց մեծ մասը՝ չէ: Հետո, շատ շանցած, մի

քանիսը Մայքին շնորհակալութիւն հայտնեցին, մեզ էլ հրաժեշտ տվին ու գնացին:

Արչի Փալմերն ասաց.

— Մնացինք մերոնցով: Եթե Մայքի ընտրած պիեսը իրոք հիանալի գործ է, ինչպես ինքն է գտնում, եթե դուք ներկայացման մեջ այնքան տպավորիչ լինեք, որքան առհասարակ կաք, ուրեմն ամեն բան կարգին է:

Էլիզաբեթ Քորբիթը ասաց.

— Ինչ էլ որ պատահի,— իսկ թատրոնում, գիտեք, ամեն ինչ էլ կպատահի,— միևնույն է՝ դուք հաղթանակ տարաք: Եթե պիեսը ձախողվի, եթե ձեր դերերը վատ խաղաք, եթե նույնիսկ պարզվի, որ դուք ուղղակի խաղալ չգիտեք, եթե ներկայացումը անգամ Բրոդվեյ չհասած արդեն բեմից հանվի, լավ հիշեք, միևնույն է՝ դուք հաղթանակ եք տարել: Ցտեսութիւն:

— Օ՛, խնդրում եմ,— ասաց Աղջիկ մայրիկը,— մի գնացեք: Դուք ինձ մահու շափ վախեցրիք: Ներկայացումը պետք է անպայման հաջողվի: Մենք պետք է անպայման հաջող խաղանք: Ընդհանրապես, ամեն ինչ պետք է հաջող լինի: Պե՛տք է. ուրիշ ելք չկա:

Էլիզաբեթ Քորբիթը ժպտաց ու շոյեց Աղջիկ մայրիկի ձեռքը, հետո իմն էլ շոյեց ու դրեց մայրիկի ձեռքին:

— Իհարկե, իհարկե,— ասաց նա,— բայց դուք շատ ավելի հաջող կխաղաք, եթե իմանաք, որ պիեսը կարող է ձախողվել, եթե իմանաք, որ կարող եք այնպես շխաղալ, ինչպես հարկավոր է: Անհաջողութիւններին պետք է միշտ պատրաստ լինել: Անհաջողութիւններն ավելի հաճախ են պատահում, քան հաջողութիւնները, բայց մենք բոլորս, անկախ դրանից, շարունակում ենք ճանապարհ հարթել: Դուք արդեն իսկ գլխապտույտ հաջողութեան հասաք: Անդուլ ու անխոնջ աշխատեք, բայց առանձնապես շմտահոգվեք: Ես գիտեմ, դուք հասկանում եք, թե ինչ եմ ասում և ինչու եմ հենց այժմ ասում, մի այսպիսի պահի, երբ բոլորը մտտահուծվածք ու հույսերով են լցված: Զանգահարեք ինձ ուզած ժամանակ:

Նա մեր այտերը համբուրեց ու արագ քայլերով գնաց:

Աղջիկ մայրիկը նայեց ինձ թե չէ, ես գլխի ընկա, որ շատ անհանդիստ է, ահուդողի մեջ:

— Ա՛խ, Գորտուկ,— ասաց,— հիմա ի՞նչ անենք: Մենք ձախողվելու իրավունք չունենք:

— Միգուցե չձախողվենք:



— Ի՞նչ օգուտ «միգրացիոն»-ից:

— Դե, էլի բան է:

— Վա՛յ, ո՞նց եմ անհանգստանում,— ասաց Աղջիկ մայրիկը:

Ներս մտավ էմերսոն Թալին, ու Մայքը նրան բոլորին ներկայացրեց, ովքեր դեռ չէին գնացել: էմերսոնին մի քանի անգամ նկարեցին, իսկ քիչ հետո մտավ միսս Քրենշոն, ու նրան էլ մի քանի անգամ նկարեցին:

Բայց Աղջիկ մայրիկի տրամադրությունն ընկել էր, ու ես դրանից ջղայնանում էի:

— Վերջ տուր,— շնջացի:

— Ձեմ պարող,— շնջաց Աղջիկ մայրիկը:

— Քեզ ստիպիր: Թե չէ տեսքդ վատանում է:

— Ախր ի՞նչ անեմ:

— Մոռացիր ձախողվելու մասին:

— Հա, իրոք, պիտի հավատալ, որ ամեն ինչ շատ լավ կլինի, ու ես կհավատամ:

Նա կարծես ուրախ ու վստահ դարձավ, շնայած երբ էլ նայեի երեսին, տեսնում էի, որ առաջվա պես էլի անհանգիստ է: Քիչ էր մնում ջղայնությունս գար էլիզաբեթ Քորբիթի վրա, բայց դե գիտեի՝ նրա ասածները ճիշտ են:

Ամբողջ օրը մենք լրագրողների ու լուսանկարիչների հետ անցկացրինք. նախ՝ Մայքի հիմնարկում, իսկ հետո՝ 2109-րդ համարում, հետո էլ՝ միսս Քրենշոյի մոտ ու զբոսայգում:

Երբ ամեն ինչ ավարտվեց, Մայք Մաքքլեյին մեզ տարավ «Քսանմեկ»՝ ճաշի, բարձրացանք վերնահարկ ու մի առանձին սենյակում նըստեցինք: Սալաթով բիֆշտեքս կերանք, իսկ ճաշից հետո Մայք Մաքքլեյին ասաց.

— Սա շատ կարևոր օր է: Առաջինը. մենք հանդիպեցինք մամուլի ներկայացուցիչների հետ ու նրանց դուր եկանք: Էվ երկրորդը. էմերսոնն այսօր ավարտել է պիեսի նոր տարբերակը:

էմերսոն Թալին ժպտաց, միսս Քրենշոն էլ ասաց.

— Կեցցե՛ք, երիտասարդ: Այս տարբերակը արդեն ձեր սրտո՞վ է:

— Դե իհարկե ոչ,— ասաց էմերսոնը:— Մարդ ինչ էլ գրի, երբեք իր ուղածի պես լավ չի ստացվում, բայց, իմ կարծիքով, հիմա պիեսը նախկինից լավն է:

— Է՛հ, իսկ ե՞րբ կկարդանք,— ասաց միսս Քրենշոն:

— Մի քանի օր կտևի, մինչև մեքենագրեն,— ասաց էմերսոնը:

— Բայց առայժմ,— ասաց Մայքը,— գուցե էմերսոնը կարգա՞ մեղ համար:

— Օ՛,— ասաց Աղջիկ մայրիկը,— չլինի՞ ձեռագիրը ձեզ մոտ է:

— Հապա ինչպե՞ս,— ասաց էմերսոնը:

Նա Մայքի նման չէր՝ թղթապանակը թևի տակ: Ոչ տեսքն էր թատերագրի, ոչ էլ շարժումներ: Եթե նրան փողոցում տեսնեիր, մտքովդ չէր անցնի, թե կարող է նստել ու պիես գրել: Նա շատ ջանք էր ու ոնց որ ֆուտբոլիստ լիներ: Լայն թիկունք ուներ ու մեծ-մեծ ձեռքեր: Ոտքերն էլ էին մեծ-մեծ: Չայնը ուժեղ էր, ու երբեմն, անկախ իրենից, էնպես բա՛րձր էր խոսում:

էմերսոն թալին ձեռքը տարավ շալվարի հետևի գրպանն ու երկու տակ ծալած ձեռագիրը հանեց: Բաց արեց պիեսն ու դրեց սեղանին՝ իր առաջ:

— Ես բարձրաձայն վատ եմ կարգում,— ասաց:— Մայք, ավելի լավ չի՞ դու կարդաս:

— Չէ,— ասաց Մայքը:— Կուզեի դո՛ւ կարդաս, ես էլ կարդալուդ ընթացքում խորհեմ: Բոլորը հարմա՞ր են տեղավորված:

Բոլորն էլ իհարկե հարմար էին տեղավորված և իհարկե՝ հուզված:

— Մի երկու ժամ կտևի,— ասաց էմերսոնը:

— Եկեք ամենքս էլ ուշագիր լսենք,— ասաց միսս Քրենշոն,— և ոչինչ չքննարկենք, մինչև որ պիեսի ընթերցանությունը շավարտվի:

— Համաձայն եմ,— ասաց էմերսոնը,— բայց նախքան սկսելս ուզում եմ լուսերեսն իմանա, թե ինչու եմ այս պիեսը գրել:— Նա ինձ նայեց, ժպտաց, հետո շատ լրջացավ ու ասաց.— Ես սա գրել եմ քեզ համար:

Նրա առաջ մի բաժակ էր դրված, մեջը՝ մի քիչ կոնյակ: Մի կում խմեց, իսկ հետո ասաց.

— Դե՛, սկսեցիք:

Ու ամբողջ պիեսը ծայրից ծայր կարդաց. պարզ ու հստակ էլ կարողում էր: Երբ վերջացրեց, ոչ ոք ձայն չհանեց, բայց Աղջիկ մայրիկը քիթի սրբեց ու թաշկինակը տվեց ինձ, որ իմն էլ սրբեմ:

Մայք Մաքքլեյին հազաց ու աչքերը մաքրեց, որովհետև չէր ուզում աչքերի արցունքները տեսնենք, բայց մեկ է՝ բոլորս էլ տեսանք:

Միայն միսս Քրենշոյի աչքերում արցունքներ չկային: Նա ասաց.

— Երիտասարդ, դուք սիրտս կտոր-կտոր արիք: Մայք, լավ կլինի միտքը թալին տեղեկանա, որ ես հավատացած էի, թե պիեսի առաջին տարբերակը կտապալվի:

— Այո, դա ճիշտ է,— ասաց Մայքըր էմերսոնին:— Իսկ հիմա՞ ինչ կարծիքի ես,— հարցրեց նա միսս Քրենշոյին:

— Ես ապշած եմ,— ասաց միսս Քրենշոն:— Նույնիսկ ենթադրություններ չեմ կարող անել: Վախենում եմ: Պարզ է. այս պիեսը պիտի որ խոշոր իրադարձություն լինի ամերիկյան թատրոնում: Ես անգամ համոզված եմ. պիտի որ մեծ հաջողություն բերի: Բայց հիմա ուղղակի մնացել եմ ապշած: Ոչինչ չգիտեմ և վերջ: Իսկ սա նշանակում է, որ մենք պետք է անդադար աշխատենք, ավելի շատ, քան երբևէ աշխատել ենք: Միսս Քրենշոն ժպտաց Աղջիկ մայրիկին ու ասաց.

— Մանավանդ դու, սիրելիս, որովհետև քո դերը Գորտուկի դերի շափ կարևոր է դարձել, և նրա խաղը կախված կլինի այն բանից, թե դու ինչպես կխաղաս: Ես պարզապես ուշքի չեմ գալիս, երիտասարդ Մայք, մենք ուրիշ հարցեր ունե՞նք քննարկելու:

— Իհարկե ունենք,— ասաց Մայքըր,— բայց այսօր բավական է: էմերսոն, և թե ձեռագիրը թողնես ինձ մոտ, ես կհասցնեմ Հելեն Գոմեսին: Նա բազմացնել կտա, հենց այս երեկո: Իսկ վաղն առավոտյան երեք օրինակ «Պիեսում» կլինեն:

— Վստա՞հ ես,— ասաց միսս Քրենշոն:

— Հելեն Գոմեսը ամեն ինչ կանի, գիտեմ,— ասաց Մայքըր:— Եկեք բոլորս էլ վաղն առավոտյան՝ հնարավորին շափ շուտ, պիեսը կարդանք ու գործի անցնենք:

— էմերսոն,— ասաց Աղջիկ մայրիկը,— ես անշափ շնորհակալ եմ ձեզ:

— Ե՛ս եմ ձեզ շնորհակալ,— ասաց էմերսոնը:

— Ամբողջ օգոստոսը մենք կպարապենք,— ասաց Մայք Մաքքլիշին.— հետո մյուս դերակատարներին կընտրենք: Սեպտեմբերի սկզբից փորձերը սկսենք. ինչքան շուտ՝ այնքան լավ: Իսկ սեպտեմբերի վերջին երկու շաբաթով կզնանք Ֆիլադելֆիա՝ բախտենքս փորձելու, այնտեղից էլ՝ երկու շաբաթով Բոստոն: Առաջին ներկայացումը Նյու Յորքում նույնամբերի սկզբին կտանք, շատ հավանական է, որ «Բելս սիոյում»:

— Ուրեմն իմ աշխատանքը արդեն ավարտված է, չէ՞,— ասաց էմերսոնը:

— Ի՞նչ ավարտված, դեռ նոր է սկսվում,— ասաց Մայքըր:— Ես ուզում եմ, որ պիեսի ռեժիսորը դու լինես:

— Ես ռեժիսորություն անել չգիտեմ,— ասաց էմերսոնը:

— Դժվար թե որևէ մեկը աշխարհում պիեսը քեզնից լավ բեմադրի,— ասաց Մայքըր:

-- Ախր, Մայք,— ասաց էմերսոնը,— ի՛նձ լսիր, ես ունեւորութիւն անել չգիտեմ:

— Դե, ես էլ ուզում եմ, որ պիեսդ բեմադրելով սովորես:

— Միսս Քրենշոն,— ասաց էմերսոնը,— հավատացեք ինձ, Մայքը սխալ քայլի է դիմում:

— Համոզված եմ, որ ոչ,— ասաց միսս Քրենշոն:— Դուք անհոգ մնացեք:

— Եվ հետո,— ասաց Մայքը,— դու մի մոռանա, որ Քեյթ Քրենշոն օգնելու է քեզ: Ճիշտ չէ՞, Քեյթ:

— Ես մինչև վերջ պիեսից հեռացողը չեմ,— ասաց միսս Քրենշոն:

Մենք վեր կացանք: Ես մի տեսակ համ ոգևորվել էի, համ էլ քունս էր տանում: Միսս Քրենշոն ասաց, որ ուզում է ոտքով տուն գնալ, Մայք Մաքքլեյին էլ Աղջիկ մայրիկին ու ինձ նստեցրեց տաքսի, ասաց.

— Ձե՛զ տեսնեմ, միանգամից անկողին կմտնեք. ուրախ ու զվարթ եղեք, վստահ, որ անհանգստանալու ոչինչ չկա: Քո աչքերի մեջ ամբողջ օրը ինչ-որ մտահոգութիւն էր նկատվում: Ինչո՞ւ:

— Ա՛խ, Մայք,— ասաց Աղջիկ մայրիկը,— ես հրճվանքից մեռնում եմ, բայց սա ահավոր պատասխանատու գործ է:

— Գոհ եմ, որ էդպես ես կարծում,— ասաց Մայքը:— Դու մեծ դերասանուհի կդառնաս: Դե, բարի գիշեր:

Մենք հասանք մեր սենյակը, Աղջիկ մայրիկն ինձ պառկեցրեց, հետո էլ նստեց կողքիս ու սկսեց կամացուկ երգել: Նրա երգը որ/լսեցի, իմ երգելն էլ եկավ, հետը երգեցի, իսկ հետո քունս տարավ:

### ԲԵՄ ԴՈՒՐՍ ԳԱՆՈՒ ՎԱԵԸ

Ես արդեն զարթուն էի, երբ առավոտյան վեցին հեռախոսը զնգաց: Աղջիկ մայրիկը զանգին պատասխանեց ու նորից վերմակի տակ մտավ: Սպասեցի, որ մի խոսք ասի, տեղից վեր կենա, բայց մեկ էլ տեսնեմ՝ էլի քնել է: Արթնացրի նրան, ասաց.

— Ի՞նչ կա, Գորտուկ:

— Բա չե՞նք վեր կենում:

— Ինչո՞ւ,— ասաց նա:

Հավատալու բան չէր, բայց նա ամեն ինչ մոռացել էր: Կարծես չհիշեր էլ, որ Նյու Յորքում ենք:

Ես նորից արթնացրի նրան:

— Աղջիկ մայրիկ, ուրեմն շե՞ս հիշում:

— Ի՞նչը շեմ հիշում:

— Էմերսոնն Թալիին:

— Ո՞ւմ:

— Պիեսի հեղինակին:

— Ի՞նչ պիես:

— Է՛, Աղջիկ մայրիկ, դե արթնացիր, էլի:

Աղջիկ մայրիկը նստեց:

— Ի՞նչ է պատահել, Գորտուկ, — ասաց նա: — Գիտեմ, որ մի բան է պատահել: Բայց ի՞նչ:

— Դու շես արթնանում, էլ ի՞նչ:

Նա հայացքը շորս կողմ դարձրեց, ու ես տեսա, որ վերջապես ամեն ինչ հիշեց: Սպասում էի, թե տեղից վեր կթռչի, ու մեր նոր օրը կսկսվի, բայց դրա փոխարեն՝ նա ինձ նայեց ու տնքաց:

— Ա՛խ, Գորտուկ, — ասաց, — ի՞նչ եմ անելու:

— Վեր կաց, — ասացի ես:

— Վախենում եմ:

— Աղջիկ մայրիկ, — ասացի, — հենց հիմա վեր կաց, հերիք է հիմարություններ անես:

— Ես ոչ մի հիմարություն էլ չեմ անում: Տուն եմ ուզում գնալ:

— Դու շե՞ս կարող տուն գնալ: Մենք խաղալու ենք պիեսում: Էմերսոնն Թալիին ամբողջ պիեսը նորից է գրել: Ու դա մեզ համար է արել, հենց քե՛զ:

— Ես ուզում եմ տուն գնալ ու ամեն ինչ մոռանալ:

— Դե՛, վե՛ր կաց, — գոռացի ես: Էնպես գոռացի, որ Աղջիկ մայրիկը իսկույն ոտքի թռավ: Նույնիսկ վախեցա:

— Վեր եմ կենում, վեր, — ասաց նա: — Տես, վեր կացա, Գորտուկ: Կներես: Գիշերը մի վայրկյան հանգիստ շեմ քնել: Ամեն ինչ տակնուվրա էր եղել. իբր ոչինչ չի ստացվում: Խաղալ չգիտեմ: Դերիս մեջ բոլորովին շեմ կարողանում մտնել: Պիեսը լրիվ փշացրի: Ներկայացումը հիմնովին տապալվեց, ու քննադատներն ասում էին, որ մեզքը իմն է: Ես այստանակվեցի ընդմիջտ: Այ, վեր կացա, Գորտուկ, բայց սարսափելի վախենում եմ:

— Ուղղակի վատ երազ ես տեսել, — ասացի: — Հենց որ լողանաս, ու գնանք զբոսայգում ման գալու, քեզ լավ կզգաս: Դեռ պիեսն էլ պիտի կարդանք:

— Գիտեմ:

— Դե, լողարանը ջուր չե՞ս լցնում:

— Կլցնեմ, Գորտուկ, ապրես, դու խսկական ընկեր ես:

Նա դնաց լողասենյակ, ու ես քիչ հետո լսեցի, որ ջուրը ծորակից լողարանն է թափվում: Նա հետ եկավ սենյակ՝ մեզ համար նոր շորեր հանելու:

— Դեռ վախենո՞ւմ ես:

— Ցավն էլ դա է,— ասաց նա:— Արդեն սթափվել եմ: Գիտեմ, որ քնած չեմ: Գիտեմ՝ վատ երազ չեմ տեսնում, բայց դեռ վախենում եմ, առաջվանից էլ շատ:

— Ինչո՞ւ, Աղջիկ մայրիկ: Դու միշտ ուզում էիր, որ էսպես լինի, չէ՞:

— Ճիշտ է, Գորտուկ: Սա իմ ուզածից նույնիսկ ավելին է: Սա իմ կյանքում ամենահարմար առիթն է: էսպիսի առիթ էլ երբեք չի վիճակվի: Եվ սրա համար ես քեզ եմ պարտական: Բայց ի՞նչ անեմ, վախենում եմ: Ախր ես կարգին փորձ չունեմ, իսկ դերս մեծ է, պիեսն էլ՝ սուանձնահատուկ: Մայրը կարող էր իմ դերը հանձնել Ամերիկայի ամենահայտնի դերասանուհուն: Չեմ կարծում, թե ես պատրաստ եմ նման դեր խաղալու:

— Պետք է պատրաստ լինեիր:

— Իհարկե, պետք է լինեի, բայց արի ու տես, որ չեմ: Ուղղակի պատրաստ չեմ:

— Վերջ տուր,— ասացի ես:

— Դու ինձ կօգնես, չէ՞, Գորտուկ: Չես թողնի հուսահատվեմ:

Մենք երկուսով լողացանք, իսկ հետո հագնվեցինք ու ցած իջանք: Աղջիկ մայրիկը ծառայողին հարցրեց, թե մեզ համար ծրար չե՞ն բերել. պարզվեց՝ չեն բերել:

Մտանք գրոսսայգի, սկսեցինք ման դալ, բայց շատ արագ-արագ, որովհետև Աղջիկ մայրիկը հուզված էր: Սովորաբար, երբ նա հուզված է լինում, անընդհատ խոսում է, խոսում, իսկ հիմա ծպտուն չէր հանում, մինչև որ վերադարձանք «Պիեռ»:

— Ինձ արդեն հավաքեցի,— ասաց:— Դեռ վախենում եմ, բայց դա կարևոր չէ: Ուժերս լարած կաշխատեմ: Ջանք չեմ խնայի, ձեռքիցս եկածը կանեմ: Եթե էմբրսոն Թալին կարծում է, որ դերն իմ ուժից վեր չէ, եթե Մայք Մաքքլեյին կարծում է, որ բոլորովին վեր չէ, եթե միսս Քրենշոն կարծում է, որ իրոք վեր չէ, ուրեմն ոչ մի նշանակություն չունի, թե ես ինչ եմ կարծում. պետք է դերս խաղամ և կխաղամ, վե՛րջ:

Ես ուրախ էի, բայց ինքս էլ Աղջիկ մայրիկի պես վախեցած, միայն թե չէի կարող նրան ցույց տալ: Մենք նորից մոտեցանք ծառայողի սե-

ղանին: Սա շապասեց էլ, որ ծրարի մասին հարցնենք, միանգամից վերցրեց ու Աղջիկ մայրիկին մեկնեց: Մենք ծրարը տարանք «Պիեռի» սրճարանը, մի սեղանի մոտ նստեցինք, ու Աղջիկ մայրիկը ծրարի միջից պիեսի երկու նոր օրինակ հանեց: Ամեն մեկի կապույտ շապիկին մի մեքենագիր երկտող էր կապրած: Հելեն Գոմեսն էր գրել:

Աղջիկ մայրիկը իր երկտողը կարդաց. «Ի՞նչ գեղեցիկ դեր է, իսկը քեզ համար ստեղծված: Ամենայն սիրով՝ Հելեն»:

Ես էլ իմը կարդացի. «Լուսերես, ուրախ ես, չէ՞, որ քո պիեսում գեղեցկուհի մայրիկդ նման հրաշալի դեր է խաղալու: Ամենայն սիրով՝ Հելեն»:

— Իմ պիեսում,— ասացի ես:

— Այո,— ասաց մայրիկը:— Բոլորն էլ պիեսը քոնն են համարում: Վերջիվերջու, փոքրիկ աղջիկը պիեսի ամենակարևոր դեմքն է:

Ես էնպե՛ս վախեցա, բայց մայրիկին, պարզ է, ցույց չտվի:

Մենք սեղանի մոտ երկար նստեցինք. չէ, հո ժամերով չէի՞նք նախաճաշում, ուղղակի Աղջիկ մայրիկը պիեսից տարբեր էջեր էր կարդում, ինքն իրեն հարցեր տալիս ու կարդացածի մասին մտածում: Նա մեկ անհանգիստ էր, մեկ վստահ էր երևում:

Գու մի ասա՛ մատուցողուհի Ռոզին թաքուն մոտեցել է մեզ. հանկարծ ի՞նչ լսենք.

— Է՛յ, դո՛ւք, հապա մի ձեր նախաճաշը կերե՛ք:

Ռոզին քրքշաց, որովհետև Աղջիկ մայրիկը սկսեց շտապ-շտապ ուտել:

— Ի՛, կատակ եմ անում,— ասաց Ռոզին:

— Կատա՛կ ես գտել,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Միծաղելու համար արեցի: Մի բան էլ եմ անում. մտքերով տաքված մարդ տեսնեմ թե չէ, կամաց մոտենում եմ ու ասում՝ բոո՛:

— Ինձ երբեք չասես,— զղուշացրեց Աղջիկ մայրիկը:— Էդպիսի բաներից ես վախենում եմ, մի երկու-երեք օր ուշքի չեմ գալիս. նյարդերս լարվում են:

— Իրո՞ք:

— Հա, իրոք: Ես շատ զգայուն եմ:

— Իսկ դո՞ւ, Լուսերես:

— Ես էլ,— ասացի:— Եթե մեկնումեկը ականջիս տակ թեկուղ շրշրնջա՛ բոո՛, սիրտս կճաքի:

— Դե լավ, չեմ անի,— ասաց Ռոզին:— Բայց կյանքումս տեսած

չկամ, որ մարդ ձեզ պես սեղան նստի ու թողնի ուտելիքը իր առաջ սառչի: Հիմա ամեն ինչից տաք-տաք կբերեմ:

— Չէ, Ռոզի,— ասաց Աղջիկ մայրիկը:— Սրանից էլ ենք գոհ:

Մենք շարունակեցինք ուտել, չնայած սառն ուտելիքը Ռոզիի սրբ-տովը չէր, իսկ սեղանին, ճիշտ որ, ամեն ինչ սառել էր: Մեր նախաճաշը խոզապուխտով ձվածեղ էր ու տապակած կարտոֆիլ, որովհետև ես շատ եմ սիրում տապակած կարտոֆիլ, ու դա ինձ համար էր, ոչ թե երկուսիս, քանի որ միսս Քրենշոն չէր ուզում Աղջիկ մայրիկը շաղանա: Մենք համարյա կերել էինք վերջացրել, երբ Ռոզին եկավ ու մեր ափսեները տարավ, Աղջիկ մայրիկն էլ նորից կարդալուն անցավ: Աչքներս շնչած տեսնենք Ռոզին էլի խոզապուխտով ձվածեղ բերեց:

— Սա ես եմ հյուրասիրում,— ասաց:— Այ, տաք-տաք կերեք, համից չեք կշտանա:

— Լավ, Ռոզի,— ասաց Աղջիկ մայրիկը:— Շատ շնորհակալ ենք:

Մենք ձվածեղը տաք-տաք էլ կերանք, ու մի նախաճաշի տեղ երկուսը դուրս եկավ. մեկը՝ սառը, իսկ մյուսը՝ տաք-տաք, հետո Աղջիկ մայրիկը Ռոզիին խնդրեց, որ իր համար բաժակ բաժակի հետևից սև, տաք սուրճ բերի, որովհետև ուզում է աշխատել՝ հենց սեղանի մոտ:

— Միայն թե երբ ութից հինգ պակաս դառնա, ինձ իմաց արա,— ասաց նա:

Աղջիկ մայրիկը սկսեց աշխատել, իսկ ես նայում էի ու լսում: Համ էլ բաժակներն էի հաշվում: Նա վեց բաժակ սև սուրճ էր խմել, բայց փոխանակ վատանա՝ հանգստացել էր: Դեռ հետն էլ ծխում էր, մի սիգարետը մյուսից կպցնում:

— Ինչ ուրախ եմ, որ վախդ արդեն կորել է,— ասացի ես:

— Է՛, ուր էր թե, Գորտուկ, ուղղակի աշխատում եմ, իսկ աշխատելիս՝ ժամանակ չկա հիշելու, որ վախենում եմ: Ես միայն գիտեմ, թե ինչ եմ անում ու ինչու եմ անում և գիտեմ, որ դա պետք է ավելի լավ անեմ, քան աշխարհի ամենամեծ դերասանուհին:

— Ու կանե՛ս, Աղջիկ մայրիկ:

— Դե, պիտի ջանամ: Պիտի բոլոր ուժերս հավաքեմ, ինչպես Լամանշը լողալով անցնող աղջիկը, կամ կրկեսի լարախաղացը, կամ էլ նոր ամուսնացած կինը:

— Ո՞վ:

— Նոր ամուսնացած կինը:

— Ինչ է, նա է՞լ պիտի ուժերը հավաքի:

— Բոլորից շատ նա պիտի հավաքի,— ասաց Աղջիկ մայրիկը:—



Եթե, իհարկե, շի ամուսնացել էնպիսի տղամարդու հետ, որն ընդհանրապես կնոջից ոչ մի սպասելիք չունի:

— Աղջիկ մայրիկ, ուրեմն կին լինելը էդպես դժվա՞ր է:

— Այո, Գորտուկ: Ես հո գիտեմ: Այ թե ինչի համար է ահր սիրտս ընկել: Որպես կին ես անպիտանի մեկն էի: Եթե թատերական քննադատներին կանչեին իմ դերակատարման գնահատականը տալու, վախենում եմ, որ նրանք ինձ լրիվ ջախջախեին ու թերևս՝ տեղին:

— Ինչո՞ւ, Աղջիկ մայրիկ: Ի՞նչն էիր սխալ անում:

— Է՛հ, արածներս կարծես թե ճիշտ էին: Խնդիրը դա չէր. ուղղակի ես շատ բան չէի անում, անելիս էլ՝ ձանձրույթից մեռնում էի, եթե արածըս իմ օգտին չէր, ի՛մ:

— Իսկ հայրի՞կը:

— Օ՛, թե քննադատները նրա դերակատարումն էլ գնահատեին, հաստատ կջախջախեին, բայց սա արդեն ինձ չի վերաբերում: Ներկայացման մեջ կամ ուր որ լինի, ամեն մարդ իր դերն է կատարում: Ես իմն անտանելի վատ կատարեցի, և որ հայրդ էլ լավ չկատարեց, դրանից ոչինչ չի փոխվում:

— Իսկ նա՞ ինչն էր սխալ անում:

— Ո՞վ իմանա: Իմ կարծիքով, համարյա ամեն ինչ, որովհետև ամուսնական կյանքը երեք գործողությունամբ պիես չէ:

— Բա ի՞նչ է:

— Երեք միլիոն գործողությունամբ պիես. որ սկսվեց, էլ վերջ չկա, միակ փրկությունը կամ մահն է, կամ բաժանվելը: Ես ատում եմ մահը, դրա համար էլ որոշեցի բաժանվել:

— Հայրիկը կատաղե՞ց:

— Էն էլ ո՞նց: Կատաղությունից խելքը թռցրել էր:

— Մինչև հիմա էլ էդպես կատաղա՞ծ է:

— Հա... երևի առաջվա պես թունդ չի կատաղած, բայց ավելի սրտանց:

— Իսկ դո՞ւ:

— Իհարկե, ես էլ եմ կատաղած:

— Նրա վրա՞:

— Այո, Գորտուկ, նրա, բայց ավելի շատ՝ ինձ վրա:

— Չէ, ես ամուսնությունից բան չեմ հասկանում:

— Պարզ է, չես հասկանա:

— Ախր ոչի՞նչ չեմ հասկանում. դե տես, դու իմ մայրիկն ես, իսկ

Նա իմ հայրիկն է, դու սիրում ես ինձ, հայրիկս էլ է սիրում, բայց երկուսդ էլ իրար վրա կատաղած եք:

— Դա հեշտ չէ հասկանալ, Գորտուկ: Ես հենց ինքս կարգին չեմ հասկանում, միայն գիտեմ, որ սրտովս չի, երբ իմ կյանքն ուտում են, կամ էլ ես եմ ուրիշի կյանքն ուտում, վերջացավ գնաց:

— Կմեծանաս՝ կհասկանաս,— ասացի ես, որովհետև Դեբն էր միշտ էդպես ասում, եթե կինոյում մի անհասկանալի բան էինք տեսնում, բայց դե ինչ էլ տեսնեինք, Դեբը ձեռ էր առնում:

Մենք խոսում էինք ու պիեսի վրա աշխատում, մեկ էլ Ռոզին մոտեցավ ու ասաց.

— Ժամանակն է, աղջիկներ, ութից հինգ է պակաս:

Մենք շտապ վեր կացանք, Աղջիկ մայրիկը շեկը դրամարկղ մուծեց, ու վերելակով բարձրացանք, գնացինք ուղիղ միսս Քրենշոյի մոտ:

### ԳԼԵԴԻՍ ԴՅՈՒԲԱՐԻՆ՝ ՀԱՐՍՆԱՅՈՒ

Լոս Անջելեսի միջազգային օդանավակայանում մենք ինքնաթիռ նստեցինք օգոստոսի առաջին օրը, երեկոյան ժամը տասնմեկին:

Իսկ օդոստոսի վերջին օրը Գլեդիս Դյուբարին ամուսնացավ իր սուսնական բժշկի հետ: Նրա անունը Հոբարթ Թափենս էր: Գլեդիսը գնացել էր հոգեբույժի մոտ, որի ընդունարանը Յոթանասունյոթերորդ փողոցի իր տան կողքին էր եղել ու սրան ներկայացել որպես Գլեդիս Սմայթ,— դե, Սմիթ ազգանունը նրա կարծիքով շափից դուրս հասարակ կլինեիր,— վերջը, իբր թե ինքը Գլեդիս Սմայթն է, նստել էր, իր կյանքի պատմությունն արել, բայց հետո՝ փոխանակ շատերի նման շաբաթը մի անշամ դնա, սկսել էր ամեն օր գնալ, մեկ-մեկ էլ՝ օրական երկու անգամ: Դեռ հարսանիքից առաջ, երբ պսակադրությունը նոր էր ավարտվել, Գլեդիսն ամեն ինչ Աղջիկ մայրիկին պատմեց:

— Ես ուղղակի խոսում էի ու խոսում,— ասաց նա:— Հոգեբուժությունն էլ հենց դա է, որ կա: Խոսում ես, խոսում ու աստիճանաբար պարզում, թե ով կուղեիր լինել և ինչ կուղեիր անել: Դե, ես պարզեցի, որ ուզում եմ Գլեդիս Դյուբարին լինել և Հոյի կլինը դառնալ: Բայց, իհարկե, «Պիեռի» քո բնակարանում հետը կովելուց հետո նրան չէի տեսել:

— «Պիեռի» իմ սենյակում,— ուղղեց Աղջիկ մայրիկը:

— Հա՛, — շարունակեց Գլեդիսը:— Ուրեմն Սիգիին ասացի, այսօրինքն՝ հոգեբույժիս. «Խնդրում եմ, իմ փոխարեն դուք զանգեք Հոբարթ

Թափենսին», բայց նա հրաժարվեց: Գիտե՞ս, սրանք քո փոխարեն ոչինչ չեն անում: Միայն լսում են քեզ: Դու համոզված ես, թե մտածում են քո մասին, ամեն ինչ հասկանում, բայց հավատա ինձ՝ չէ՛: Իմ կարծիքով, նույնիսկ չեն լսում, թե ինչ ես խոսում: Պարզապես քեզ մի ժամ են տրամադրում, իսկ դու դրա դիմաց պարտավոր ես քսանհինգ դոլար վճարել: Բայց իրենք մատը մատին չեն խփում: Ուղղակի հետո նստած են, ուրիշ ոչինչ, դու էլ խոսում ես, խոսում և ինքնուրույն ինչ-որ բաներ պարզում: Հա՛, ուրեմն, ես պարզեցի, որ ուզում եմ Հոյի կինը դառնալ, ու եթե Սիզին իմ փոխարեն չի զանգում նրան, ի՛նքս կզանգեմ: Հոյի համարը հավաքեցի, և իհարկև, լսափողը հենց ինքն էլ վերցրեց, որովհետև ոչ քարտուղարուհի ունի, ոչ բուժքույր: Ի՞նչ կարծիքի ես, նա ամենագեղեցիկ տղամարդն է, չէ՞:

— Հա, բայց ի՞նչ ասացիր նրան:

— Ա՛հ, հասկանո՞ւմ ես,— ասաց Գլեդիսը,— Լրբ քեզ վերլուծության են ենթարկում, էլ պոչ չես խաղացնում: Ասացի՛ շատ լավ:

— Դա ի՞նչ է նշանակում:

— Ի՞նչ պիտի նշանակի, որ շատ լավ, կամուսնանամ իր հետ:

— Բայց նա երբեք քեզ ամուսնության առաջա՞րկ է արել:

— Դե, բառերով՝ չէ, որովհետև նրան վերլուծության չեն ենթարկել, բայց ես միշտ էլ զիտեի, որ դա մտքում կա և իրավացի դուրս եկա. խնդրե՛մ, ամուսնանում ենք, չէ՞:

Հարսանիքը Գլեդիսի տանն էր, որը հինգ հարկ ուներ ու տանիքին էլ՝ մի ճոխ վերնահարկ: Մենք վերնահարկում էինք, որովհետև Գլեդիսն ուզում էր մի րոպե շունչ քաշել, մինչև կիջներ հինգերորդ հարկ՝ ամենակարևոր հյուրերին ողջունելու: Իսկ Հոգարթ Թափենսը առաջին հարկի նախասրահում էր, որ բոլորի՛ն ողջունի:

Աղջիկ մայրիկն ու ես տեղ հասանք թե չէ, տեսնենք կանգնած է:

— Գնացեք վերնահարկ,— ասաց Հոն:— Նա էնտեղ մենակ՝ ձեզ է սպասում: Միջանցքի ծայրին՝ ձախ թևի վրա, վերելակ կա:

— Ես էնպե՛ս ուրախ եմ երկուսիդ համար,— ասաց Աղջիկ մայրիկն ու Հոյի այտը համբուրեց:

— Ես սիրում եմ նրան,— ասաց Հոն,— բայց ուղղակի չզիտեմ, թե հետն ինչ ձևով վարվեմ: Նա կարծես ձգտում է, որ ամեն բան իր ուղածով լինի, իսկ ես իմ նկատառումներն ունեմ, չի ստացվում...

— Կամաց-կամաց կստացվի,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Միգուցե ես պետք է ո՞ւժ գործադրեմ,— շտապ ասաց Հոն, որովհետև մի քանի հոգի էլ ներս մտան:

— Այո,— ասաց Աղջիկ մայրիկը:— Մեծ ուժ... բայց կամաց-կամաց:

Երբ Գլեդիսն արդեն պատրաստ էր հյուրերի մոտ գնալու, դուրս եկավ, կանգնեց հինգերորդ հարկ իջնող մարմարե ոլոր-մոլոր աստիճանների գլխին: Կանգնեց ու սպասում էր: Ամբողջ մեծ սրահը լիքն էր զուգված-զարդարված մարդկանցով, սրանք ուտում-խմում էին ու խոսում: Հենց որ մի մարդ նայեց վեր ու տեսավ Գլեդիսին, բոլորը վեր նայեցին: Գլեդիսն սկսեց դանդաղ ու զգույշ իջնել աստիճաններից:

Քիչ էր մնում ես էլ հետևից գնամ, բայց Աղջիկ մայրիկը ձեռքս բռնեց ու ինձ հետ քաշեց:

— Աստծո՛ւ սիրուն,— ասաց նա:

Վեց-յոթ լուսանկարիչ միանգամից նկարում էին: Սրանցից մեկն էլ հսկայական կինոխցիկով էր:

— Գնացի՞նք,— ասաց Աղջիկ մայրիկը:

Հետ դարձանք վերնահարկ ու տեղնուտեղը մտանք վերելակ:

— Ի՞նչ է եղել:

— Մենք պետք է էստեղից ծլկենք:

— Չենք կարող,— ասացի:— Գլեդիսի տրամադրությունը կրնկնի:

— Չէ,— ասաց Աղջիկ մայրիկը:— Չի էլ նկատի:

Նա վերելակի կոճակը սեղմեց, դռները փակվեցին, ու մենք սկսեցինք դանդաղ ցած իջնել: Ամեն հարկից խառնաշփոթ ծխար էր լսվում: Վերելակը կանգնեց, դռները բացվեցին, ու մենք դուրս եկանք: Նախասրահում լիքը մարդիկ էին հավաքված, բոլորն էլ՝ Աղջիկ մայրիկին անծանոթ, ու նա շորս կողմը նայեց մի հետնադուռ գտնելու հույսով, բայց հետնադուռ չերևաց: Որոշեցինք մի կերպ ճամփա բացելով՝ շքամուտքից դուրս գալ, բայց հենց որ հասանք երկրորդ հարկ տանող աստիճաններից, մարդիկ մեզ հետները քշեցին վերև: Երկրորդ հարկում էլ Աղջիկ մայրիկին ծանոթ ոչ մեկը չկար: Մենք փորձեցինք հավաքվածների միջից դուրս պրծնել, բայց մեզ քշեցին, տարան երրորդ հարկ: էստեղ էլ ոչ մի ծանոթ չկար: Նույնն էլ՝ չորրորդ հարկում: Երեխ ամեն հարկում մի հարյուր մարդ կլինեին, բայց հինգերորդում հաստատ երկու հարյուրն էին ու երկու հարյուրն էլ՝ հիացած Գլեդիսի վրա: Իսկ նա բարձրաձայն խոսում էր, ծիծաղում ու կողքի բոլոր տղամարդկանց մոտ խունջիկ-մունջիկ անում:

— Մենք պետք է անպայման էստեղից դուրս գանք,— ասաց Աղջիկ մայրիկը:— Սա իմ տեսած ամենաշքեղ հարսանիքն է, բայց ես պարզապես եկա, որովհետև Գլեդիսը հեռագրում գրել էր՝ եթե չգամ,

իր ամուսնությունը տեղի չի ունենա և հենց իմ մեղքով: Դե, շուգեցի՝ մեղքի տակ ընկնել: Ես միայն ուզում էի, որ նա իմանա, թե ինչ ուրախ եմ իր համար, բայց հիմա պետք է դնանք, գործներս մնաց:

Վերնահարկ տանող մարմարե ոլոր-մոլոր աստիճաններին ինչքան ասես մարդ կար. մենք նրանց միջով հազիվհազ անցանք ու վերև հասանք: Համարյա վերնահարկ մտնելու վրա էինք, որ նորից վերելակ նստենք, երբ Գլեդիսը նկատեց մեզ ու ձեռքը թափահարեց:

«Այ, այ, այ, — մտածեցի ես, — հիմա ստիպված կմնանք»:

Բայց Գլեդիսն արդեն ձեռքը չէր թափահարում, նորից էր տղամարդկանց մոտ խունջիկ-մունջիկ անում, ու մենք առիթից օգտվելով՝ վերնահարկ մտանք: Դեռ վերելակին չհասած, տեսանք անկյունում՝ մի փոքրիկ բարի մոտ, ինչ-որ մեկը կանգնել, խմում է: Հոն էր:

— Դուք ինչո՞ւ եք էստեղ, — ասաց Աղջիկ մայրիկը:

— Խմում եմ, — ասաց Հոն: — Մի օրվա մեջ կշտացա, համբերությունս էլ չի հերիքում: Նրա բարեկամները, եթե ճիշտը կուզեք, ինձ տեսնելու շեն եկել: Կարծեցին, թե ես ծառայապետն եմ. Ոչ էլ եկել են նրան տեսնելու: Չգիտեմ ինչի համար են եկել: Ու չեմ հասկանում՝ ինչու ավելորդ ցավի մեջ ընկա: Եվ ընդհանրապես, նա ի՞նչ տեսակ կին է:

— Է՛, շեղավ, լսո՞ւմ ես, — ասաց Աղջիկ մայրիկը: — Բաժակը ցած դիր ու քեզ հավաքիր: Մի երկու ժամից հարսանիքը կավարտվի, և դու մենակ կլինես մի հազվագյուտ ու գրավիչ աղջկա՝ քո սեփական կնոջ հետ:

— Իբր էսպիսի հարսանի՞քն ինչի համար է:

— Ուրախանալու, — ասաց Աղջիկ մայրիկը: — Դե լավ, լավ, իջիր ցած ու ամենքի հետ ուրախացիր: Նրանք բոլորը ամուսնացած են, և, իհարկե, յուրաքանչյուրը մտովի իր հարսանիքն է տոնում. դու էլ քոնը ատնիր:

— Եթե էդպես է, դու ինչո՞ւ ներքևում չես, — ասաց Հոն:

— Ես ամեն հարկում էլ եղա, — ասաց Աղջիկ մայրիկը: — Արդեն հինգն անց է, իսկ հինգն անց կես փորձ ունենք: Ըստ երևույթին, կուշանամ: Ես ընդամենը մի ժամով եկա, որ երկուսիդ էլ երջանկություն մաղթեմ:

— Մայրս մնացել է առաջին հարկում, օտար մարդկանց մեջ, — ասաց Հոն: — Հորս կորցրել է: Ուզում եմ ասել՝ հենց էստեղ՝ հարսանիքում, իրենց զալուց երկու բոպե հետո: Չգիտեմ նա որտեղ է: Բայց կընոջս տեղը գիտեմ ու իմն էլ գիտեմ. ես ոչ մի տեղ չկամ, գոյություն չունեմ, այ թե որտեղ եմ:

— Լսիր,— ասաց Աղջիկ մայրիկը,— խնդրում եմ, քեզ հավաքիր ու մորդ համար մի մտահոգվիր: Ամենքից շատ երեւի նա է ուրախանում: Հորդ համար էլ մի մտահոգվիր: Ամբողջ տունը լիքն է գեղեցիկ կանանցով ու աղջիկներով: Եվ գիտե՞ս, լավ կլիներ, որ քեզ համար էլ շրմտահոգվեիր: Դա ամուսնական կյանքի սկիզբը գնելու միակ ճանապարհն է: Ուզղակի ուրախացիր, թեկուզ անծանոթների հետ:

— Չեմ հասկանում՝ ի՞նչ է ստացվում,— ասաց Հոն:— Ես երեսունյոթ տարեկան եմ: Սա իմ առաջին ամուսնությունն է: Այսքան սպասել եմ, որովհետև երկար ժամանակ է պետք, եթե մտադիր ես կարգին բժիշկ դառնալ: Եվ հետո՝ ամուսնությունը ես միշտ համարել եմ ամենակարևոր բանը աշխարհում: Իսկ սա ամուսնությունն է:

— Առայժմ հարսանիքն է,— ասաց Աղջիկ մայրիկը:— Հավատա ինձ, սա ամուսնական կյանքն սկսելու մյուս ձևերից վատ չէ, եթե ի վիճակի ես էսպես սկսելու: Դու պիտի վերջ տաս մեկուսանալուդ: Դա՛ առաջին հերթին: Շուտով նա ընդմիշտ կողքիդ կլինի, քո տրամադրության տակ: Դեռ ուշքի չեկած՝ երկուսով կմնաք: Իսկ հիմա ես պետք է գնամ, բայց գնալուց առաջ կուզենայի իմ աչքով տեսնել, որ իջնում ես ցած՝ կնոջդ մոտ:

— Ես էնտեղ մոլորվում եմ:

— Ոչինչ, էնտե՛ղ մոլորվիր,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ոչ թե էստեղ: Վաղն առավոտյան կհասկանաս, թե ես ինչքան իրավացի եմ:

— Ես գծերի հետ ամուսնանալու փորձ չունեմ,— ասաց Հոն:— Իսկապես, նա գի՞ժ է:

— Իհարկե չէ,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ուզղակի խճճվել է և հույսը կապում է քեզ հետ, որ իրեն օգնես ճիշտ ճանապարհը գտնել: Դու ամուսնացած ես...

Հոն նայեց թևի ժամացույցին ու ասաց.

— Մի ժամ երեսունհինգ րոպե:

— Այո,— ասաց Աղջիկ մայրիկը:— Որքան շուտ նրան օգնես ճիշտ ճանապարհը գտնել, այնքան լավ:

— Բայց ինչպե՞ս:

— Կամաց-կամաց,— ասաց Աղջիկ մայրիկը,— հենց այժմվանից սկսած: Դե, իջ՛ր, իջիր կնոջդ մոտ ու նրա ամուսինը եղիր:

Հոն ցած դրեց բաժակն ու երեսը ծոմոեց: Հետո գլուխը թափ տվեց, կարծես ուզում էր գլխից ինչ-որ միտք գնն գցել, իսկ հետո գնաց, դուռը բաց արեց ու սենյակից դուրս եկավ:

Աղջիկ մայրիկն ու ես վերելակ մտանք: Երբ հասանք առաջին հարկ,

էլ շատ մարդ չկար, ու մենք մի քանի ընկերացիք արդեն փողոցում էինք: Մինչև փողոցի անկյունը քայլեցինք, տաքօսի պատահեց: Նստեցինք տաքսին ու գնացինք «Պիեո»: Աղջիկ մայրիկը նախասրահից միսս Քրենշոյին զանգեց, որ նրան բացատրի, թե ինչու ենք ուշացել, իսկ հետո վերև բարձրացանք: Աղջիկ մայրիկն ու միսս Քրենշոն մի քիչ խոսեցին հարսանիքից, հետո աշխատելու ժամանակն եկավ:

Միսս Քրենշոն առաջարկեց.

— Սկսենք երկրորդ գործողության սկզբից: Բանալին սա է. մայրը ուրախ բաներ է ասում, բայց ըստ էության, բնավ էլ ուրախ չէ: Հիմա մեզ հետաքրքրողը ձայնի հնչերանգներն են: Կեցվածքը, շարժումն ու ժեստերը հետո կմշակենք: Դե լավ, ուրեմն անցնում ենք կարդալուն:

— Մենք արդեն անգիր ենք արել սեր դերերը, — ասաց Աղջիկ մայրիկը:

— Իրո՞ք, — ասաց միսս Քրենշոն: — Այ, ապրեք, ես պիտի խոստովանեմ, որ դուք գնալով շատ ավելի մեծ տպավորություն եք թողնում, քան մենք բոլորս կսպասեինք կամ իրավունք ունեինք սպասելու: Ես գիտեմ, դուք ամեն ընկերացի պիտե՞ստվ եք ապրել: Այո՛, ճիշտ այդպես է հարկավոր ապրել, եթե պիտե՞ստվ քեզ դեր է վստահված:

Մենք համարյա մի ժամ աշխատեցինք: Հետո հեռախոսը զնգաց. Մայք Մաքքլեյին էր: Նա ուզում էր, որ անմիջապես իր մոտ գնանք, մենք էլ գնացինք:

Երբ Հելեն Գոմեսը Աղջիկ մայրիկին տեսավ, աչքով արեց ու ժրպտաց. պարզ էր՝ մի կարևոր անակնկալ կար:

Մտանք Մայքի մոտ թե չէ, նա էլ սկսեց ուրախ-ուրախ ժպտալ:

Գրաւեղանին մի մեծ կույտ նոտաներ էին դրված, ու ես գլխի ընկա՞ն հայրիկն էր գրել, որովհետև կյանքումս տեսած առաջին բաներից մեկը հայրիկի նոտաներն էին, նա հենց իմ աչքի առաջ էր գրում, ու ես ճանաչում եմ նրա ձեռագիրը, ինչ էլ որ գրի՞ նոտաներ, թե բառեր:

— Դե՛, ո՞վ կմտածեր, — ասաց Մայքը: — Կեսօրից հետո նոտաները օդային փոստով Փարիզից եկան: — Նա նոտաների կույտը սեղանից վերցրեց: — Խնդրեմ: Ընդամենը երկու շաբաթ է անցել, ինչ նա ստացել է պիեսի նոր տարբերակը: Երբ թո՞ւա Փարիզ ու հետը խոսեցի, ասաց՝ ինքը դանդաղ է աշխատում, և բնականաբար, առաջիկա երկուերեք շաբաթում, գուցեև ավելի երկար, ես ոչինչ չէի սպասում: Նոտաներն իմ սպասածից շուտ ստանալով, մտածեցի՞ երաժշտությունը դրժվար թե շատ լավը լինի: Տրամադրությունս սարսափելի ընկավ: Ես միշտ ձգտում եմ հասնել լավագույնին, անկախ նրանից, թե դա որքան ժա-

մանակ կիսի: Ահա թե ինչու իմ ներկայացումներից մի քանիսը միայն երեք-չորս ամիս խաղացվելուց հետո են նյույորքյան բեմ ելել: Ի՞նչ ասեմ, ես աշխարհի ամենամեծ դաշնակահարը չեմ, բայց նոտաները կարգալ ու նվագել գիտեմ: Արդեն ամբողջ երաժշտությունը ծայրեծայր նվագել եմ:— Միստր Մաքքլեչին ինձ ժպտաց ու ավելացրեց.— Դե, Լուսերես, հայրդ ճիշտ և ճիշտ մեր պիեսին հարմար երաժշտություն է գրել: Քեյթ, կուզե՞ս մի քիչ լսել:

— Պարապ հարցեր մի տուր,— ասաց Քեյթ Քրենշոն:— Դու հիանալի գիտես, որ երաժշտությունը դեռ ամենասկզբից մեր մտահոգության առարկան էր: Դժվար է հավատալ, թե դա ավարտուն բան է, բայց եկեք լսենք:

— Երաժշտությունը շատ-շատ է,— ասաց Մայքը,— ավելին, քան ես նրա հետ պայմանավորվել էի: Ինքն էլ է նամակում գրել, որ պետք եղածից շատ է ստացվել, բայց կարծում է՝ ամեն դեպքում, այդպես ավելի լավ է: Մենք պիտի կարգին աշխատանք թափենք անհրաժեշտ հատվածներն ընտրելու վրա:— Մայքը նստեց փոքրիկ դաշնամուրի մոտ ու ասաց.— էջ առաջին: Թերևս առաջին էջից էլ սկսենք:

Ու Մայքը նվագեց հայրիկի երաժշտությունը, որ նա հորինել էր պիեսի համար: Սկզբում երաժշտությունը մեղմ էր ու մտածկոտ, իսկ հետո էնպես զվարթ ու կայտառ դարձավ՝ էլ շղիմացա, պարելս եկավ, կարծես մեր տանն էի, դեռ ճստիկ երեխա, ու հայրիկը հատուկ ինձ համար իր նոր դաշնամուրային պիեսն էր նվագում:

Երբ ես պարում էի, միսս Քրենշոն պտտվում էր շուրջս, Մայքն էլ շուտ-շուտ իմ կողմն էր նայում: Հետո նա նվագն ընդհատեց ու մոտեցավ Աղջիկ մայրիկին:

- Հը՛,— ասաց,— հավան՞ում ես:
- Անշափ,— ասաց Աղջիկ մայրիկը:
- Մայքը մոտեցավ միսս Քրենշոյին.
- Քե՞յթ:

— Սա հենց այն է, ինչ հարկավոր է,— ասաց միսս Քրենշոն,— բայց, իհարկե, ինձ համար նոր գործ է բացվում: Դու անշուշտ տեսար Լուսերեսի պարը:

- Այո,— ասաց Մայքը:
- Դե ուրեմն,— ասաց միսս Քրենշոն,— դա էլ կմտնի իմ անելիքների մեջ: Ես չեմ ուզում պարուսույց հրավիրենք, եթե ծայր անհրաժեշտություն չլինի: Նա այնպես է պարում, որ ես կուզենայի այդպես էլ պա-



րեր ներկայացմանը, սակայն անկասկած պատկերացում չունի, թե ինչ է անում կամ ինչպես է անում: Ճիշտ չէ՞, Լուսերես:

— Ճիշտ է,— ասացի ես:— Բայց ես միշտ պարում էի հայրիկիս երաժշտության տակ:

— Կաշխատեմ մի բան մտածել,— ասաց միսս Քրենշոն:

— Ես մարդ եմ ուղարկել Օսկար Բեյլիի հետևից,— ասաց Մայքը:— Խնդրել եմ դա ու երաժշտությունը սկզբից մինչև վերջ մեզ համար նվագի, որպեսզի իսկապե՛ս լսենք: Ես նրան կհանձնարարեմ, որ մի փոքրիկ նվագախումբ կազմի և ամբողջ երաժշտությունը ձայնագրի. միայն այդ դեպքում կկարողանանք լսել ու որոշել, թե ինչպես պիտի վարվենք, որքան մասը ի վիճակի կլինենք օգտագործել: Շուտով էմբրսոնն էլ կգա: Իսկ առայժմ, ասեք տեսնեմ, ոչ ոք քաղցած չէ՞: Ես սովից մեռնում եմ: Նա մի կոճակ սեղմեց, ու երբ Հելեն Գոմեսը ներս մտավ, ասաց.

— Հելեն, խնդրում եմ, մեզ համար ուտելիք բերել տուր, և, իհարկե, հենց որ Օսկար Բեյլին ու էմբրսոնը տեղ հասնեն, անմիջապես ուղարկիր ներս:

Քանի դեռ սպասում էինք, Մայքն էլի նվագեց, ու ես նորից պարեցի, իսկ հետո միսս Քրենշոն ասաց.

— Այդպես էլ կարծում էի: Ամեն անգամ նա մի փոքր այլ ձևով է պարում, բայց, ըստ իս, փուլթ չէ: Ինձ թվում է՝ ներկայացումներին էլ այդպես լավ կլինի:

Օսկար Բեյլին նիհա՛ր-նիհար մարդ էր: Նրա ամեն ինչն էլ նիհար էր. երեսը, վիզը, ձեռքերը, մատները, բայց աչքերն աշխույժ էին ու կարծես ծակող, համենայն դեպս, մինչև խոսելը, որովհետև ձայնը ցածրիկ էր ու մեղմ: Նա հայրիկի գրած նոտաները թերթեց, իսկ էմբրսոն Թալիի ներս մտնելուց հետո նայեց շուրջն ու ասաց.

— Եթե դուք պատրաստ եք, ես էլ եմ պատրաստ:

— Բայց հիմա ուր որ է ուտելիք կբերեն,— ասաց Մայքը:

— Ոչինչ, դուք նվագելուս ընթացքում կերեք,— ասաց Օսկարը:— Վերջացնելուն պես՝ ես էլ մի բան կուտեմ:

Նա նստեց դաշնամուրի մոտ: ու մի պահ քարացած մնաց. Իսկ հետո սկսեց նվագել, բայց ո՛նց էր նվագում. Մայքից հարյուր անգամ լավ, նույնիսկ հայրիկից էլ լավ: Միսս Քրենշոն, աչքը չէր կտրում ինձնից: Երևի սպասում էր, որ նորից պարեմ, բայց ես չէի կարողանում աեղիցս շարժվել: Ուզում էի պիեսի համար հայրիկիս գրած երաժշտությունը լսել: Օսկար Բեյլին նվագում էր, նվագում, ու բոլորը նայում էին իրար

երեսի, ժպտում, մեկմեկու գլխով անում, իսկ երբ նա վերջացրեց, բոլորը ծափահարեցին: Օսկարը վեր կացավ ու նույնիսկ շփախաց:

— Ա՛յ ինչ եմ ասել,— բացականչեց նա:

Ու հետո՝ մի քանի բոպեից, նույնը կրկնեց:

Օսկարը համարյա մի ժամ նվազել էր, բայց ոչ ոք նստած տեղից չէր շարժվել: Նրա վերջացնելուց քիչ անց, Հելեն Գոմեսը ակներով մի սեղան ներս հրեց, վրան՝ լիքը ուտելիքներ, ու Մայքը ասաց.

— Ինչո՞ւ ուշացար:

— Մի՞թե կարծում եք, որ ես նման երաժշտությունը կընդհատեի,— ասաց Հելենը:

— Դու է՞լ էիր լսում,— ասաց Մայքը:

— Իհարկե, ներքին հեռախոսով,— ասաց Հելենը:— Խնդրեմ, ահա և ուտելիքը:

Հելենը երկու-երեք փոքրիկ սանդվիչ վերցրեց ու սկսեց ուտել: Բոլորս էլ ուտելիք վերցրինք, իսկ Մայք Մաքքլեչին, Ադջիկ մայրիկը, Օսկար Բեյլին, էմերսոն Թալին ու Քեյթ Քրենշոն խոսում էին հայրիկիս գրած երաժշտության մասին:

Ես շատ հպարտ էի, որ նա իմ հայրն է ու երաժշտությունը հենց ինքն է գրել:

### ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻՑ ԵՎ ԶՎԱՐՃԱՆՔՆԵՐ ՔՈՆԻ ԱՅԼԸՆԴՈՒՄ

Ամբողջ ամիսը նյու Յորքում շոգ էր, բայց իմ պետքն էլ չէր, որովհետև շոգը ինձ դուր է գալիս: Յուրտն էլ է դուր գալիս, բայց երբ շոգ է լինում, շոգն է դուր գալիս: Շոգին ամառվա շորեր եմ հագնում:

Դե, ձյունն էլ է ինձ դուր գալիս, բայց Կալիֆոռնիայում մենք ձյուն չենք տեսնում: Էնտեղ անընդհատ արև է, մեկ-մեկ էլ՝ բարալիկ անձրև: Մի անգամ անձրևը վարարեց, ու ես ամառվա շորիս վրայից անձրևանոց հագա, որ դպրոց գնամ: Կեսօրին անձրևը կտրվեց, ու երբ Դեբորա Շլոմբի հետ տուն էի վերադառնում, մայթերն արդեն շոր էին, ու ամեն ինչ էլի առաջվա պես էր:

Զէ, Կալիֆոռնիայում իսկի ձյուն չկա: Նույնիսկ մի կարգին անձրև էլ չկա: Միայն Կալիֆոռնիան է, օրը օրին՝ նույն Կալիֆոռնիան, ու ասածս էլ սա է. ինձ դուր է գալիս Կալիֆոռնիան: Շատ լավ է էնտեղ: Պնդերես կեռնեխները ծառերի վրայից թռչում են, իջնում կանաչին ու կտուցնե-

րով խոտը քշփորում, որ շգիտես ինչ գտնեն, իսկ թե մոտենաս, պոչնե-  
 րը շեն էլ քաշի, ծլկեն, ուղղակի մի քիչ հեռու կոճան ու աչքերը երեսիդ  
 կպշեն: Սարյակները թառում են նիվենիների ճյուղերին ու մյուս թրո-  
 շունների տնազը անում: Մի սարյակը կարող է կես ժամ ծլվլալ ու նույն  
 երգը երբեք չկրկնել: Պատլիկ խլուրդները գետնի տակ փնշացնելով՝ փա-  
 փուկ հողը դուրս են ածում, ու թե բախտդ բերի, նրանց կտեսնես, երբ  
 գլուխները հանկարծ հանում են ու էլի իսկույն թաքնվում: Ես ոչ մի  
 խլուրդի կարգին չեմ տեսել: Նրանք շեն սիրում, որ իրենց տեսնես: Սպի-  
 տակ թիթեռնիկները թևին են տալիս, վեր ու վար անում, որտեղ ասենք  
 թե մի բան է աճում, էնտեղ են թռչում, իսկ ամեն տեղ էլ մի բան աճում  
 է. ծաղիկներ, խոտեր, թփեր ու ծառեր: Շագանակագույն թիթեռնիկներ  
 էլ կան ու տեսակ-տեսակ ցայգաթիթեռներ. սրանք, ճիշտ է, թիթեռնիկ-  
 ների պես են, բայց նրանց նմա՛ն շեն թռչում, պտույտներ են տալիս,  
 կարծես ցերեկվա լույսից մոլորված լինեն ու ջղայնացած: Հետո՝ մո-  
 դեսներ ու բզեզներ կան, ինչ տեսակ ասես: Իսկ երեկոյան հովին հան-  
 կարծ կտեսնես, թե խխունջները ոնց են խեցիների միջից իրենց պողա-  
 վոր գլխիկները ցցում: Եթե կռանաս ու մատով փակես խխունջի ճամ-  
 փան, նրա մի պողն էլ դիպչի մատիդ թե չէ, գլուխը ներս կքաշի, կզառ-  
 նա լպրծուն գունդուկծիկ ու ոտով-գլխով կմտնի խեցու մեջ, չի շարժվի  
 տեղից: Խխունջի անցած ճամփան միշտ երևում է. դե, նա ուր էլ գնա,  
 մի բարակ, խոնավ հետք է թողնում գետնին: Հետո՝ այգու օձեր կան,  
 բայց ով նրանց տեսնի, գոռգոռոց է դնում, որովհետև բոլորը օձերից  
 վախենում են: Իսկ սրանք, գոռգոռոց լսելիս՝ արագ-արագ սողում են,  
 փախչում, ու ինչքան էլ նայես, արդեն շեն երևա:

Մաքրոնի կեյնում՝ մեր տան կողքին, բլուր է. այ թե որտեղ շատ  
 տեսնելու բան կա, մարդ նայելուց չի կշտանա: Էնտեղ լայն ու ընդար-  
 ձակ կալվածք է, մի մեծ տուն կալվածքի տեբերի համար, մի փոքրիկ  
 տուն էլ՝ պահակի համար: Նրանք վեց ձի ունեն, քշում են կալվածքում  
 կամ իրենց բլրից իջնում են հովիտ, մի ուրիշ բլուր ելնում: Հետո՝ նրանք  
 ոչխարի հոտ ունեն. բոլոր ոչխարները սև մուրթով են, ու հետները միշտ  
 գառնուկներ են լինում: Մեկ էլ կլսես՝ սրանք մայում են՝ մեեեե՛. կար-  
 ծեմ որ էսպես: Կալվածքի տերերը ոչխարների հետ երկու զամփո են  
 պահում, երկուան էլ սովորել են, անցնում են ցանկապատի լարերի արան-  
 քով ու հյուր գալիս Մաքրոնի կեյնի երեխեքին: Նույնիսկ ձիերն են սո-  
 վորել, կանգնում են ցանկապատի մոտ ու նայում երեխեքին, մենք էլ  
 նրանց ենք նայում:

Հետո՝ կալվածքի տերերը վեց հատ այծ ունեն. որտեղ խոտը լավն

է, սրանց բերում են կապում, որ արածեն: Բայց այծերը հենց երեխեքին տեսնեն, ուտելը մոռանում են ու աչքերը պլշում:

Մի ծիծաղելի տղա կա, անունը՝ Նեդ Գեյջ, սովորաբար ճվճվալով է խոսում: Մի անգամ տեսավ, որ այծերը կանգնել նայում են տասը-տասներկու հնդկահավերի, իսկ դրանք կալվածքի տերերն էին առել Գոհարանության օրվա՝ առթիվ: Ուրեմն՝ այծերը պլշած նայում են հնդկահավերին ու լսում, թե սրանք ոնց են բլբլում ու կլկլացնում: Նեդ Գեյջն էլ կանգնել է Մաքըրոնի Լեյնի ծայրին ու նայում է, թե այծերը ոնց են նայում հնդկահավերին:

— Գիտե՞ս այծերն ինչ են ասում իրար հնդկահավերի մասին, — հարցրեց նա: — Չգիտե՞ս. ասում են՝ ա՛յ քեզ օյին, էս ի՞նչ տեսակ այծեր են:

Մի ուրիշ անգամ էլ, երբ փոքրիկ աղջիկներից մեկը՝ Գեյլ Դոնին, գոռաց՝ օ՛ձ, օ՛ձ, ու բոլորը վազեցին նրա ցույց տված տեղը ու տեսան որդ է, Նեդ Գեյջը վրա հասնելով ասաց.

— Հեռու կանգնեք, թունավոր է:

Նա որդը գետնից վերցրեց, աղջիկներն էլ ճշալով փախան: Իսկ Նեդ Գեյջն ասաց.

— Այսինքն՝ եթե ուտես: Բայց ես հո չե՞մ ուտի:

Նա փափուկ հողի մեջ մատով փոս փորեց ու որդը դրեց էնտեղ:

Բա ո՞նց էինք Մաքըրոնի Լեյնում մեր անվաշմուշկներով սահում: Ո՞նց էինք հեծանիվ քշում: Ո՞նց էինք վազում: Ո՞նց էինք պարան թըռչում: Ո՞նց էինք ինչ ասես խաղում:

Ես անընդհատ հիշում եմ Կալիֆոռնիան:

Իսկ օգոստոսի կեսին Նյու Նորքում փոթորիկ եղավ, բայց հենց Նյու Յորք չմտավ, մոտերքով անցավ: Մի երկու օր հետո վարար անձրև եկավ: Տեղ-տեղ էլ էնպես վարար էր եկել, որ գետերը դուրս էին հորդել ափերից, ու շատ քաղաքներում ջուրը փողոցներն էր լցվել: Հեղեղը մեծ միասաներ տվեց, ու ես լսեցի՝ մի քանի հոգի էին խեղդվել: Տխրեցի նրանց համար, բայց զոնե լավ էր, որ խեղդվողը ես չէի: Վա՛յ, ես իսկի չէի ուզի խեղդվել: Երբեք: Ու չեմ էլ ուզում մտածել, որ մեկնումեկը խեղդվել է: Վայ, չէ՛, խեղդվել ասածը գլուխս չի մտնում: Ինչ սարսափելի է, երանի շիներ: Երանի ոչ մի մարդ երբեք չխեղդվեր: Ախր դա շատ վախենալու բան է: Երբ էլ միտքս գա, փշաքաղվում եմ:

1 Պաշտոնական տոն՝ ի հիշատակ Մասաչուսեթսի առաջին գաղութաբնակների (նոյեմբերի վերջին հինգշաբթին):

Սեպտեմբերի առաջին շաբաթը Նյու Յորքում մի քիչ հով էր, բայց դեռ իսկական հովը չէր ընկել:

Մայք Մաքքլեյչին սկսել էր պիեսի մյուս դերակատարներին ընտրել: Նա հարյուրավոր մարդկանց էր ընդունում, որովհետև ձևն էր պես է: Հենց որ դերասաններն ու դերասանուհիները լսում են, թե մեկնումեկը պիես է բեմադրելու, գալիս են նրա մոտ: Մեր պիեսում ինը դերակատարներ էին պետք, բայց Մայք Մաքքլեյչին պատմեց, որ ինը հարյուրից ավել մարդ է ընդունել:

Մի առավոտ, երբ նա դերակատարներ էր ընտրում, Աղջիկ մայրիկն ու ես նրա հիմնարկում էինք, ու ամբողջ նախասրահը լիքը ժողովուրդ էր. ամեն տեսակ մարդ էլ եկել էր: Սրանց տեսա թե չէ, էնպե՛ս տխրեցի: Զգիտեմ ինչու, բայց համարյա հիվանդացա: Նրանք իրար գլխի էին հավաքվել, մի քանիսը նստած էին, մեծ մասը՝ կանգնած, ու ոչ մեկը լավ վիճակում չէր: Ախր բոլորն էլ ինչ-որ բան էին ուզում: Շատ-շատ էին ուզում, բայց կարծես համոզված էին, որ չեն ստանա, իսկ դրա վրա ո՞ւմ ծիծաղը կգա:

Երբ ես փոքր էի, մի անգամ հիվանդացա ու ինչ-որ բան էի ուզում, բայց ինչ՝ չգիտեի: Հայրիկը նստեց մահճակալիս կողքին ու խոսեց ինձ հետ:

- Ուզում եմ,— ասացի:
- Գիտեմ, կուսերես:
- Իսկ ի՞նչ եմ ուզում:
- Ամեն ինչ, կուսերես:
- Բայց ես կարո՞ղ եմ ամեն ինչ ունենալ:
- Կարող ես:
- Ե՞րբ:
- Հենց որ լավանաս:
- Հիմա՞:
- Մի քիչ ուշ:
- Վա՞ղը:
- Վաղը՝ անպայման:
- Իսկ ամեն ինչը ո՞րն է:

— Դու ես, կուսերես: Լավացար թե չէ, ինքդ քեզ կգտնես: Ու նույնիսկ չես հիշի, որ քեզ կորցրել էիր: Ա՛յ, դա էլ կլինի ամեն ինչը:

- Ու վե՞րջ: Ես ի՞նքս:
- Այո, կուսերես: Ամեն ինչը հենց դու ես, որ կաս և ուրիշ ոչինչ:
- Բայց ես միշտ էլ կամ ու կամ, հայրիկ:

— Հիմա՛ չէ, որովհետև հիվանդ ես: Որովհետև երբ մարդ հիվանդ է, իրեն կորցնում է, թեկուզ կարճ ժամանակով: Հիվանդությունն էլ դա է: Հանկարծ պարզվում է, որ դու այլևս չկաս, քեզ կորցրել ես, ու հասկանալի է, սկսում ես հազար ու մի բան ուզել... ամեն ինչ... բայց իրականում ուզածդ միշտ մեկն է՝ դու քեզ ես ուզում, որովհետև եթե սրտումրդ սեր կա, ուրեմն ամեն ինչ ունես... ախր ամեն ինչը դու ես ու քո սերը, իսկ ես սիրում եմ քեզ, կուսերես:

Երևի դրա համար էլ ինձ հիվանդ զգացի, երբ Մայք Մաքքլեչիի մոտ հավաքված մարդկանց տեսա: Դե, պարզ երևում էր՝ նրանք ինչ-որ բան էին ուզում, իսկ իմ ուժը չ'ր պատի նրանց ուզածը տամ: Չեմ սիրում, որ մեկնումեկը մի բան է ուզում ու շի կարողանում ստանալ: Էնպե՛ս ամաչեցի, հենց որ տեսա: Բոլորը նստած ու կանգնած՝ սպասում են, սպասում, ասես հիվանդ լինեն՝ անկողնում սլառկած, ու հայր էլ շունեն, թե նստի կողքներին, բռնի նրանց ձեռքն ու ասի՝ շուտով կլավանան:

Երբ ինչ-որ բան ես ուզում, կարծես մի տեղդ ցավի: Ուրիշ ոչ մի ցավ էդպես ուժեղ չի: Է՛, ավելի լավ է ոչինչ էլ չուզեմ, մի կերպ դիմանամ: Մեկ է՝ ինչ էլ լինի, ես միշտ կամ ու կամ, համարյա երբեք ինձ չեմ կորցնում:

Հելեն Գոմեսը մեզ անմիջապես Մայրի մոտ ուղարկեց, ու Աղջիկ մայրիկն ասաց.

— Ա՛խ, Մայք, երանի կարողանայիր նրանց բոլորին աշխատանք տալ:

— Ես էլ եմ երանի տալիս,— ասաց Մայքը,— բայց իհարկե չեմ կարող:

— Դե գոնե մի սպասեցրու:

— Նրանք նախընտրում են, որ սպասեցնեմ, քան թե դուրս դամ չե՛նջակից ու իրենց հետ ուղարկեմ: Քեյթը մտադիր է մի քանի օրով քաղաքից մեկնել: Նրա կարծիքով, վատ չէր լինի, եթե դուք էլ հանգստանայիք: Ո՞ւր կուզեիք գնալ մինչև կիրակի երեկո: Չեր տրամադրություն տակ համարյա չորս օր կա: Երկուշաբթի օրվանից սկսում ենք ամբողջ գել ասանախմբով պիեսը կարդալ. ինձ մոտ, ժամը իննին: Հը՛, որտե՞ղ եք ուզում: Ատլանտիկ Սիթի՞: Քոնեքթիքո՞ւթ, թե՞ ուր:

— Փս ըիզ,— ասացի ես:

Մայք Մաքքլեչին ծիծաղեց ու ասաց.

— Չէ, չէ, խնդրում եմ, ոչ այդքան հեռու:

— Դե,— ասաց Աղջիկ մայրիկը,— ես կարծում եմ, որ լավ կլինի Նյու Յորքում մնամ ու մի քանի ներկայացում նայեմ:

— Պետք չէ,— ասաց Մայքըլը:— Քեզ պիտի խնդրեմ թատրոնից խուսափել: Լուրջ բան եմ ասում: Ես չէի ուզի որևէ ներկայացում նայեք: Թե չէ նոր-նոր մտահղացումներով կտարվեք, իսկ դրա կարիքը չկա:

— Համոզվա՞ծ ես,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Միանգամայն: Քեյթն ամեն ինչից գո՛հ է, ես էլ՝ նույնը, էնպես որ թատրոնից ձեզ հեռու պահեք:

— Լավ,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ես ամենից շատ սիրում եմ մեքենայով ուղևորություններ անել, բայց արի ու տես, որ մեքենա չունեմ:

— Կվարձեմ,— ասաց Մայքըլը:— Ձեր հյուրանոցի գարածում կրկանգնի: Վարորդ է՞լ ես ուզում:

— Դրա մասին չեմ մտածել,— ասաց Աղջիկ մայրիկը,— թեև հաճելի է մեքենայում հանգիստ տեղավորված՝ երկար ուղևորությունների մեկնել ու երեկոյան տուն վերադառնալ:

— Ուրեմն՝ մեքենա, վարորդն էլ հետը,— ասաց Մայքըլը:— Իսկ պիեսը մոռացության տվեք: Ամեն ինչ մոռացեք: Ուղղակի շորս օր անհոգ զվարճացեք:

— Մենք շորս օրն էլ զբուսանքի կգնանք:

— Հիանալի է,— ասաց Մայքըլը:— Ուրիշ ի՞նչ է պետք:

— Ուրի՞շ,— ծիծաղեց Աղջիկ մայրիկը:— Սրանից ավել ի՞նչ կարող է լինել:

Մենք հետ եկանք նախասրահ, որտեղ մարդիկ հավաքված սպասում էին: Հելեն Գոմեսն ասաց.

— Դե՛: Ո՞ւր եք գնալու:

— Ջբոսանքի,— ասացի ես:— Ամեն օր գնալու ենք Ջբոսանքի:

— Դու էլ արի մեզ հետ,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Երանի չէ՞ր կարողանայի, բայց ո՞ւր է թե,— ասաց Հելենը:

— Է՛... կիրակի արի:

— Կիրակին ամենածանր օրն է ինձ համար: Դե, հասկանո՞ւմ եք, իմ աշխատանքը միայն դրասենյակի շորս պատերի մեջ չէ: Մի լավ զվարճացեք: Երկուշաբթի առավոտյան կտեսնվենք:

Մենք դուրս եկանք փողոց ու Հինգերորդ պողոտայով ճամփա ընկանք տուն: Որոշեցինք ոտքով գնալ, ճանապարհին խանութների ցուցափեղկերը նայելով: Երբ հյուրանոց հասանք, առաջին հարկի ծառայողն ասաց, որ մեքենան ու վարորդը մեզ են սպասում, ասաց՝ մեր սենյակում էլ մի զամբյուղ բան կա՝ Ջբոսանքի գնալիս հետներս տանելու համար: Բարձրացանք սենյակ, ու իրոք, շորերի ցածրիկ պահարանին մի

դմեծ, հյուսածո զամբյուղ էր դրված, մեջը՝ ուտելիք, իսկ ամբողջ զամբյուղը փաթաթված էր կանաչ ցելոֆանով, վրայից էլ՝ կանաչ ժապավենով կապված:

Աղջիկ մայրիկը փոքրիկ ծրարի միջից մի բացիկ հանեց ու կարդաց. «Իմ Աստղին՝ ձեզ երկուսիդ: Սիրով՝ Մայք»:

- Ո՞ւր գնանք,— ասաց Աղջիկ մայրիկը:
- Քոնի Այլընդ,— ասացի ես:
- Է՛հ, չէ՛:
- Է՛հ, լավ էլի, հա:
- Բայց ինչո՞ւ, Գորտուկ:

— Որովհետև դու փոքր ժամանակ էնտեղ եղել ես, իսկ ես փոքր ժամանակ էնտեղ չեմ եղել: Որովհետև մի վեց-յոթ անգամ Քոնի Այլընդը կինոյում տեսել եմ ու հիմա ուղում եմ իսկապես տեսնել: Համաձա՞յն ես:

Աղջիկ մայրիկը ծիծաղելով ասաց.

— Ինչ արած, համաձայն եմ: Միևնույն է՝ հույս չունեի, թե մեքենան վաղվանից շուտ կգա, էնպես որ թող քո ասածը լինի, գնանք Քոնի Այլընդ:

- Ու զվարճանանք:
- Ու զվարճանանք:
- Ինչքան կարուսել կա՝ բոլորը կնստենք:

— Դե, համարյա բոլորը: Ուղղակի մի քանիսը կան, դրանք նրատելիս՝ խելքս մաղվում է, բայց մեծ մասը կնստենք: Ամեն մեկս հինգ դոլար կվերցնենք, մեր ուզածի պես կծախսենք ու տուն կվերադառնանք:

Աղջիկ մայրիկը ինձ հինգ դոլարանոց տվեց, որ դնեմ պաշուսակիս մեջ, մի հինգ դոլարանոց էլ ինքը դրեց իր պաշուսակի մեջ, իսկ մնացած փողը թողեց պահարանի վերևի դարակում: Նա էլ էր զվարթ ու ոգեվորված, ես էլ: Չէի համբերում, թե երբ եմ Քոնի Այլընդը տեսնելու:

— Պատկերացրու,— ասաց Աղջիկ մայրիկը,— միսս Քրենշոն գոհ է մեղանից:

- Իսկ ինչո՞ւ պիտի գոհ չլիներ:
- Որովհետև նրան գոհացնելը հեշտ չէ. նա պահանջում է կատարելության հասնել: Ու ես ուրախ եմ, որ պահանջում է: Կյանքումս էսպես լուրջ աշխատած չկամ:
- Դա համարում ես աշխատա՞նք:
- Իհարկե:
- Ինձ համար դա ոչ մի աշխատանք էլ չի:



— Քեզ համար՝ այո, որովհետև դու ընդամենը ինը տարեկան ես, ու քո աչքին ամեն ինչ խաղ է, զվարճանք: Դու կորցնելու ոչ մի բան չունես:

— Դու էլ չունես:

— Չունե՞մ: Ես կարող եմ ամե՛ն ինչ կորցնել,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Չէ՛:

— Ո՞նց թե չէ. ասելդ ի՞նչ է:

— Դու կորցնելու ոչ մի բան չունես, այ թե ինչ է:

— Դե լավ, լավ,— ասաց Աղջիկ մայրիկը,— օրիորդ Ամենագետ:

— Հե՛տ վերցրու խոսքերդ, թե չէ Քոնի Այլընդ շեմ գա:

— Վերցնում եմ,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ես Քոնի Այլընդ գնալու առիթը ոչ մի դեպքում բաց չեմ թողնի ու չէի ուզի դու էլ բաց թողնես:

Աղջիկ մայրիկը զանգեց առաջին հարկի ծառայողին, որ նա վարորդին պատվիրի մեքենան շրամուտքի մոտ բերել: Մենք զամբյուղը ձեռքներս առանք ու ցած իջանք:

Մեքենան նոփ-նոր, կանաչ կադիլակ էր, իսկ վարորդը՝ մի սևամորթ տղա. ասաց՝ անունը Լերոյ է:

— Մեզ Քոնի Այլընդ շե՞ր տանի, Լերոյ,— ասաց Աղջիկ մայրիկը:— Եվ կխնդրեի՝ առանց շտապելու, որովհետև ուզում ենք ճանապարհին ամեն ինչ տեսնել:

— Աչքիս վրա, մեմ,— ասաց Լերոյը, ու մենք ճամփա ընկանք:

Գրինիչ Վիլիշը տեսանք, Բրուքլինյան կամուրջը, հետո՝ Բրուքլինն ու շատ ուրիշ տեղեր:

Ճանապարհին Աղջիկ մայրիկը զամբյուղի ժապավենը քանդեց, ինձ տվեց: Հետո կանաչ ցելոֆանը հանեց, խնամքով ծալեց ու էլի ինձ տվեց: Մենք նայեցինք զամբյուղի ներսը, տեսնենք՝ ինչ ասես որ չկա: Հենց մեքենայի մեջ՝ գնալիս, մի քանի սանդվիչ կերանք: Զամբյուղում սառը կաթով լի մի թերմոս կար ինձ համար, մի ուրիշն էլ՝ կոճապղպեղի գարեջրով լի, Աղջիկ մայրիկի համար:

Չորսն անց էր, երբ Քոնի Այլընդ հասանք: Ժամը յոթին դեռ էնտեղ էինք, ու ամեն մեկս ծախսելու դեռ մի դուլար ունեինք, մենք էլ որոշեցինք հենց էնպես՝ կատակով, հրաձգարան գնալ ու քսանհինգ սենթի դիմաց կրակել ջրում լողացող թիթեղյա բազերի վրա: Հրաձգարանի աշխատողը ցույց տվեց, թե հրացանը ոնց պիտի բռնենք, ոնց նշան բռնենք ու հրահանը սեղմենք, իսկ հետո հերթով սկսեցինք կրակել:

Աղջիկ մայրիկը մի բաղի վրա կրակեց, շղիպավ, ե՛ս կրակեցի՝ շը-  
ղիպա: Բայց երկուսս էլ մի երեք անգամ կրակեցինք թե չէ, ձեռ սովո-  
րեցինք ու արդեն խփում էինք բաղերին:

էնպե՛ս ես հրճվում, երբ թիթեղյա բաղին նշան ես առնում ու մինչև  
նրա լողալով անցնելը, հրահանք սեղմում. մեկ էլ կտեսնես՝ բաղը շը-  
րրմփաց: Նախ՝ կրակոցն ես լսում, հետո՝ թիթեղյա բաղին դիպչող զըն-  
դակի թրխկոցը, հետո էլ՝ շրը՛մփ, բաղն ընկնում է:

Մեր ձեռքին դեռ յոթանասունհինգ սենթ էր մնացել, բայց որոշե-  
ցինք պահել, որ տուն վերադառնալու ճանապարհին, եթե ուզենանք,  
կանգնենք ու մի բան առնենք: Մենք դուրս եկանք Քոնի Այլընդից, մո-  
տեցանք մեքենային, տեսնենք՝ Լերոյը դեկին նստած գիրք է կարդում:

Բրուքլինյան կամրջին էինք, երբ Նյու Յորքի լույսերը վառվեցին.  
ա՛յ քեզ տեսարան: Զորս կողմը Նյու Յորքն էր՝ մթնում լույսերը վա-  
ռած: Մենք նայեցինք իրար, հետո Աղջիկ մայրիկը ի՛նձ գրկեց, ես՝ նրան:

Երբ «Պիեռի» դռանը մեքենայից իջանք, Լերոյը Աղջիկ մայրիկին  
հարցրեց, թե ինքը վաղն առավոտյան շո՞ւտ պետք է պատրաստ լինի.  
դե, գուցե մտքներովս անցնի հեռու տեղ գնալ: Աղջիկ մայրիկը մի պահ  
մտածեց ու ասաց.

— Վաղը չէ, Լերոյ: Թերևս մյուս օրը: Իսկ վաղը շատ հարմար կլի-  
նի, եթե առավոտյան ժամը տասին գաք:

Մենք վամբյուղը ձեռքներիս վերև բարձրացանք ու կանգնեցինք  
մեր սենյակի պատուհանի մոտ: Միծաղում էինք ուրախ-ուրախ, որով-  
հետև կայծակը կարմրաշեկ լույսով բռնկվում էր, մարում ամռան եր-  
կընքում, իսկ մենք երկուսով կանգնած նայում էինք, հետո ամպերի որո-  
տը լսեցինք, իսկ մենք երկուսով Նյու Յորք քաղաքում էինք, հետո սկսեց  
մեղմիկ անձրև մաղել, իսկ մենք երկուսս էլ զվարթ էինք, անհոգ, եր-  
կուսս էլ՝ ողջ-առողջ, ու սպասում էինք լավ-լավ բաների:

### ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՏԵՈՒՐ ԿՅԱՆՔ

Մեղմիկ անձրևից Նյու Յորքն ու երեկոն լցվեցին անուշ հոտերով:  
Երևի ամեն մարդ աշխարհում վերջապես լավ էր՝ երեք տարեկան Գեյլ  
Գոնիի նման, երբ նա գիշերանոցով կանգնում էր Մաքքրոնի Լեյնի իրենց  
տան պարտեզում: Վաղ առավոտյան կանգնում էր էնտեղ ու կարծես  
ոչինչ չէր տեսնում: Կարծես արթուն լիներ, որովհետև աչքերը բաց էին,  
բայց թվում էր՝ քնած է, դեռ երս դի մեջ: Ես սենյակիս լուսամուտից

միշտ նայում էի նրան: Կարծես ուզենաք շփտես ինչ հիշել: Ու նյու Յորքի մեղմիկ անձրևն էլ ինձ նրա՛ն հիշեցրեց:

Աղջիկ մայրիկը լույսն անշատեց: Մենք մթնում կանգնել էինք պատուհանի մոտ, նայում էինք անձրևին ու լսում կաթկթոցը:

Հետո հեռախոսը զնգաց, ու ամեն ինչ փոխվեց:

Գլեզիս Դյուբարին էր. Աղջիկ մայրիկի խոսքերից հասկացա, որ նրան բան է պատահել: Համարյա մի ժամ խոսեցին:

— Ի՞նչ է եղել:

— Կռվել է ամուսնու հետ,— ասաց Աղջիկ մայրիկը,— նա էլ խփել է: Գլեզիսն ուզում է ոստիկանություն կանչել: Ասում է՝ չէր պատկերացնում, որ գծի հետ է ամուսնացած: Ասում է՝ նա սպառնացել է իրեն, թե կսպանի: Վախենում է հետը նույն հարկի տակ մնալ: Խնդրում էր, որ դա, մեզ մոտ գիշերի, բայց ես ասացի՝ դա անհնար է: Ուղղակի շփտեմ ինչ անեմ նրա համար: Հոն կնոջը ծեծող տղամարդկանցից չի: Երևի պարզապես հրել է նրան: Գլեզիսն էլ հիստերիկայի մեջ է, ասում է՝ հանգստաբեր դեղի կարիք ունի, բայց մոտը չկա, վերջացել է, իսկ Հոն չի տալիս, որովհետև ասում է՝ նա դրա կարիքը չունի, ու միակ դեղը, որի կարիքն իսկապես ունի, քոթակ ուտելն է: Գլեզիսը խնդրում է, որ տաքսի նստեմ ու գնամ էնտեղ:

— Գնո՞ւմ ես:

— Չէ, ի՞նչ գնամ: Ամուսնական կյանքը էնպիսի բան է, որ կնոջը կամ հաջողվում է իր ուժերով ստեղծել, կամ էլ չի հաջողվում: Բացի դրանից, մենք արձակուրդում ենք: Ես միայն կուզեի լողանալ ու անկողին մտնել: Իսկ դո՞ւ:

— Ես էլ: Բայց նա մեղքս գալիս է:

— Է՛հ, կարծում ես իմ մեղքը չի՞ գալիս: Վեց-յոթ ս.արեկանից նրան ճանաչում եմ: Ծիշտ է, միշտ էլ անտանելի է եղել, բայց հոգով լավն է:

— Գիտեմ: Ես նրան սիրում եմ: Թե մոտը գնալու միտք ունես, գնա: Ես մենակ չեմ վախենա: Կլողանամ ու կպառկեմ:

— Չէ,— ասաց Աղջիկ մայրիկը.— Մենք, իհարկե, ընկերուհիներ ենք, բայց հիմա նրա մոտ գնալը սխալ է: Այո, ազնիվ քայլ չէ խեղճ Հոբարթի նկատմամբ ու ոչ էլ նրա: Ախր ի՞նչ մի արտասովոր բան է կատարվել: Վաղ թե ուշ դա պատահում է բոլոր ամուսինների հետ: Դա էլ է ամուսնական կյանքի մեջ մտնում, իսկ ամուսնական կյանքը բոլորովին հեշտ չէ. այո, ոչ ոքի համար հեշտ չէ: Եթե երկուսդ էլ շատ

աղքատ եք, դժվար է: Եթե շատ հարուստ եք, էլի դժվար է: Եթե մեկը հարուստ է, մյուսը՝ աղքատ, միևնույն է, դժվար է:

— Ինչո՞ւ:

— Որովհետև մեկը տղամարդ է, մյուսը՝ կին:

— Իսկ ավելի հեշտ չէ՞ր լինի, եթե երկու կին ամուսնանային:

— Դա արդեն ամուսնություն չէր լինի:

— Ինչո՞ւ: Ամուսնանալու համար երկու հոգի են պետք, չէ՞: Դե թող երկուսն էլ կին լինեն:

— Երկու կինը չեն կարող երեխա ունենալ:

— Թող որդեգրեն, չե՞ն կարող:

— Ոչ, որովհետև երեխաներին նրկու մայր պետք չեն: Նրանց մի հայր ու մի մայր են պետք, երկուսն էլ՝ հարազատ: Մի մայրը հերիք է երեխաներին: Երբեմն նույնիսկ շատ է: Ու ես արդեն պատկերացում եմ կազմել, թե վեճ ու կռվի բուն պատճառը որն է:

— Դե ասա՛՛ ո՞րն է:

— Երեխաները:

— Նրանք երեխաներ ունե՞ն:

— Չէ, դրա համար որոշ ժամանակ է պետք, բայց ոնց էլ վերցնես, նրանք երևի հենց երեխաների պատճառով են կռվում, չնայած գուցե կարծում են, թե իրենց վեճ ու կռվի պատճառն ուրիշ է: Ես համոզված եմ՝ Հոբարթն ուզում է, որ նա իսկական կին լինի ու երեխա ունենա, իսկ նա ուղղակի դեռ չի կարողանում իսկական կին դառնալ:

— Տեսքից նա իսկական կին է:

— Դա ներքուստ է լինում, աչքով չես տեսնի: Շատ դժվար հարց է:

— Բայց դու իսկական կին էիր, երբ ամուսնացար, չէ՞:

— Ի՞նչ իմանամ,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ես եղբորդ ունեցա, հետո էլ՝ քեզ, բայց դեռ վստահ չեմ, ի՞նչ իմանամ: Պատահում է, որ նույնիսկ երեխաներ ունենալը դրան չի օգնում:

— Չեմ հասկանում:

— Իհարկե չես հասկանա: Ես երեսուներեք տարեկան եմ, բայց նոր եմ սկսում հասկանալ:

— Բա լավ, իսկական կինը ո՞րն է:

— Ամուսնական կյանքում իսկական կինը ասլրում է ամուսնու համար, ամուսինն էլ՝ կնոջ, որովհետև մեկը մյուսի համար ապրելը հենց նշանակում է ընտանիք ու երեխաներ, իսկ ընտանիքը ամենակարևոր բանն է, որ տղամարդիկ ու կանայք, տղաներն ու աղջիկները պետք է ունենան: Ընտանիքն ամեն ինչ է: Ու միշտ սմեն ինչ է եղել: Դե, ընտա-

նիքն էլ կազմվում է միայն ամուսնանալով, բայց ցավն այն է, որ ամուսնական կյանքը դժվար է, գրեթե անհնար:

— Ինչո՞ւ:

— Չգիտեմ, բայց դա կապված է նրա հետ, թե մարդիկ ինչ ձևով են մտածում ու ինչպես են ապրում. ասենք՝ ինչին են հավատում, ինչ են ուզում: Կավ, արի լողանանք ու քնենք:

— Հա, բայց դու ինձ վրա չես բարկանում, չէ՞:

— Իհարկե՞ չէ: Ինչո՞ւ պիտի քեզ վրա բարկանամ: Ուղղակի անհանգիստ եմ, խեղճ Գլեդիան ու խեղճ Հոն մտքիցս դուրս չեն գալիս: Շատ վատ կլինի, եթե մի հիմարություն անեն:

— Միգուցե դու պետք է նրանց մոտ գնաս.

— Չէ, ես գիտեմ, որ դա սխալ է:

Մենք լողացանք ու պառկեցինք: Ես արդեն համարյա քնած էի, երբ Աղջիկ մայրիկը հանկարծ տեղում նստեց, միանգամից վերցրեց լսափողն ու հյուրանոցի հեռախոսավարուհուն Գլեդիսի համարը տվեց: Նա երկար սպասեց, բայց պատասխան չեղավ: Աղջիկ մայրիկը վեր կացավ անկողնուց ու մի սիգարետ վառեց: Հետո հեռախոսավարուհուն խրնդրեց Գլեդիսի համարը նորից հավաքել, բայց նորից պատասխան չեղավ:

— Ի՞նչ անեմ, Գորտուկ:

— Չգիտեմ, Աղջիկ մայրիկ:

Նա մի սիգարետը վերջացրեց, մյուսը կպցրեց: Հետո պահարանից իր շորերը վերցրեց ու շտապ-շտապ հագավ, խկ հետո հագից ամեն ինչ հասկց ու էլի տեղը դրեց:

— Չէ,— ասաց:— Իմ ի՞նչ էորձն է: Ես եկել եմ էստեղ աշխատելու, վերջացավ գնաց: Բացի պիեսից, ուրիշ ոչ մի բանի մասին մտածելու իրավունք չունեմ: Ամենաժամը աշխատանքը նոր է սկսվում: Գլեդիան ու Հոբարթը թող իրենց հարցերը երկուսով լուծեն, ինչպես որ բոլոր մյուսներն են անում:

Նա լույսն անջարեց ու նորից անկողին մտավ, բայց հանգիստը կորցրել էր: Ես էլ՝ նրա հետ: Դե, ո՞նց հանգիստ մնայի: Ճիշտ է, լսում էի անձրևի կաթկթոցը, բայց դրանից արդեն ինձ լավ չէի զգում: Անընդհատ ուզում էի Աղջիկ մայրիկին դռնե մի խոսք ասել, որ սիրտը թեթեւվանա, բայց չգիտեի ինչ մտածելի:

— Միայն մի բան կասեմ,— նորից խոսեց Աղջիկ մայրիկը,— աստված օգնի բոլոր ամուսնացածներին, մանավանդ Գլեդիսին ու Հոբարթին: Նրանց օգնություն է պետք: Շատ-շատ է պետք: Ավելի շատ, քան ուզածդ կնոջն ու ամուսնուն ամբողջ աշխարհում:

— Հա,— ասացի ես:— Թող աստված նրանց օգնի: Բայց ինչո՞ւ հենց նրանց է շատ օգնութիւն պետք:

— Որովհետեւ Գլեդիսը դեռ մնացել է Գլեդիս Դյուբարին՝ մի հարուստ աղջիկ, իսկ քանի նա առաջվա Գլեդիս Դյուբարին է՝ մի հարուստ աղջիկ, գեղեցիկ, վերին խավի աղջիկ, որի անունը հաճախ հիշատակվում է թերթերում, ուրեմն իսկական ընտանիք չի լինի:

— Բա ի՞նչ կլինի:

— Էլ ի՞նչ. երկու հոգի,— ասաց Աղջիկ մայրիկը:— Մի տղամարդու կին, որոնք անվերջ ու անօգուտ վեճերով սպանում են իրար: Փառք աստծու, որ ես բաժանված եմ: Ինը տարի դիմացա, բավական է: Ես դառնացրել եմ հորդ կյանքը, բայց, ազնիվ խոսք, դիտմամբ չեմ արել: Նա էլ իմ կյանքն է դառնացրել, բայց գիտեմ, որ ինքն էլ դիտմամբ չի արել, երբեք: Ուղղակի էդպես էր ստացվում, ի՞նչ կարող ես անել:

— Հոբարթն ուզում է սպանե՞լ Գլեդիսին:

— Իհարկե չէ: Գլեդիսն է գլխից դուրս տալիս: Դու քնած ես, Գորտուկ:

— Համարյա, Աղջիկ մայրիկ: Դե լավ, վատ մի զգա:

— Վատ չեմ զգում: Իրոք: Պարզապես տխրեցի մի քիչ... որ ուրախանում եմ ամեն ինչ վերջանալու համար, մինչդեռ դու առաջվա պես իմն ես ու հայրիկինդ, և Փիթն էլ է առաջվա պես իմն ու հայրիկինդ, իսկ մենք ձեր երկուսինն ենք:

— Ու մեկդ մյուսինը: Դու և հայրիկն էլ եք առաջվա պես մեկդ մյուսինը, չէ՞:

— Այո, թերեւ, — ասաց Աղջիկ մայրիկը:— Մենք բաժանված ենք, բայց միայն բաժանվելուց հետո բարեկամներ դարձանք:

Աղջիկ մայրիկը երկար ժամանակ չէր խոսում, ու ես արդեն քնելու վրա էի, բայց հանկարծ ասաց.

— Մենք շորսս էլ առաջվա պես մեկս մյուսինն ենք:

Զգիտեմ՝ ուրիշ բան ասաց, թե շասաց, որովհետեւ քնեցի:

Մինչև քնելս, Քոնի Այլընդը կարուսելի նման անընդհատ պտտվում էր գլխումս: Դա իսկը զվարճանալու տեղ էր՝ այսօր ու լուսավոր, մեծ ու աղմկոտ: Ման գալու ամենալավ տեղն էր. ինչ ասես կտեսնեիր ու կըլսեիր, ինչի վրա ուզես, նստած կպտտվեիր, ինչ որ սիրտդ տա, կառնեիր ու կուտեիր. է՛լ շաքարած խնձոր, ադիբուդի ու պաղպաղակ, է՛լ հացով նրբերշիկ ու փրփրուն լիմոնադ: Դա աշխարհի ամենալավ տեղն էր:

Իմ քունը տարավ, իսկ Քոնի Այլընդը դեռ պտտվում էր, ու ես էլ

էի հետը պատվում, մեկ էլ ի՞նչ տեսնեմ՝ հայրիկն ու եղբայրս են կանգնած, Փարիզից ուղիղ էստեղ են ընկել:

Երբ շորսս էլ իրար տեսանք, մնացինք ապշած՝ մեկմեկու նայելիս, հետո ծիծաղելով վրա վազեցինք, պինդ-պինդ փաթաթվել ու համբուրվում էինք, ու ես մտքումս ասացի. «Թեկուզե կնոջ ու տղամարդու համար դժվար է ապրել ամուսնական կյանքով, թեկուզե նրանք ստիպված են բաժանվել, որ շլինի թե մեկը մյուսին սպանի, միևնույն է՝ արժի ամուսնանալ ու բաժանվել, եթե նրանք հանդիպելու են Քոնի Այլընդում. միևնույն է՝ ամեն ինչ արժի, ամեն, ամեն ինչ, եթե տղամարդն ու կինը, եթե նրանց տղան ու աղջիկը հանդիպելու են Քոնի Այլընդում, երբ դա իրենց մտքով էլ չէր անցնում, ու համարյա մի տարի իրար չէին տեսել: Միևնույն է՝ արժի, եթե նույնիսկ երազում են նրանք հանդիպում, այ, հիմիկվա պես»:

Հենց որ արթնացա, իսկույն գլխի ընկա՝ դեռ վաղ առավոտ է: Դե, ամեն րան ուրիշ է վաղ առավոտյան: Փողոցից ուրիշ ձայներ են լսվում. ինչքան էլ որ լուսաբացին վեր կացող մարդիկ, ասենք՝ հավաքարարներն ու աղբահավաքները փորձեն շատ աղմուկ շահնել աղբարկղերը դատարկելիս, էլի քիչ թե շատ աղմուկ կլսես:

Հետո հերթը մեծ մեքենաներին է գալիս, որ հատակ մաքրելու խողանակի նման իրենց պատվող խողանակները միացրած՝ փողոցներն են սրբում: Մեքենայի շարժիչի դռոցն ու պատվող խողանակների քրստքրստոցը հեովից հասնում են ականջիդ: Լույսը հազիվ է բացվել, իսկ մեքենաներն արդեն քաղաքն են մաքրում:

Հետո կլսես, թե ոնց են հյուրանոցների ու ռեստորանների համար ուտելիքով լի արկղերը բեռնաթափում, մեկ-մեկ էլ բեռնակիրների ձայներն են լսում.

— Հե՛յ, Լուի: Բա սրա՞ն ինչ կասես:

— Չէ, դու իսկը ծաղրածու ես: Մնում է հևուստացույցով ելույթ ունենաա:

Մեկ էլ խաղաղ փողոցով մի մեքենա է անցնում, ու նրա աղմուկն էս լսում:

Ճիշտ է, նլվենիների ճյուղերին թառած սարյակների ծլվլոց չես լսի, բայց ոչինչ, ի՞նչ անենք, լսածդ ձայները դրանից վատը չեն:

Երբեմն էլ մեքենայի ազդանշան է լսվում, շնայած եթե ուզես նորից լսել, պիտի երկար սպասես: Սուլոցներ էլ իսկի շես յսի՝ ոչ մի տեսակ, բայց որ ուշադիր ականջ դնես, մայթով անցնող մեկնումեկի քայլերը կլսես:

Լուսաբացի ձայները միշտ էլ հաճելի է լսել, որովհետև արդեն նոր օր է, ու դու երազումդ տեսած ամեն ինչ արդեն մոռացել ես: Ամեն ինչ, որ լավն ու զարմանալի է եղել, կամ վախեցրել է քեզ, կամ էլ էնպես տևրեցրել, որ դու հասկացել ես՝ քնած կլինեմ, թե չէ արթուն ժամանակ կսպես չէի տխրի: Ես միայն Քոնի Այլընդոն էի հիշում ու մի բան, բայց ի՞նչ: Աղջիկ մայրիկն ու ես էնտեղ էինք, դա՛ հաստատ, բայց ախր ի՞նչն էր, որ չէի կարողանում հիշել ու քնած տեղս էլ դեռ համոզված էի, թե արթնանալուց հետո երբեք չեմ մոռանա: Ինչքան զոռ տվի գլխիս, չկարողացա հիշել, իսկ հետո, երբ դրա մասին էլ չէի մտածում, հանկարծ հիշեցի:

Հայրիկն ու եղբայրս էին Փարիզից եկել ու երազումս կանգնած էին մեր առաջ: Հենց հիշեցի, թե ինչ կատարվեց, երբ իրար տեսանք, չնայած հո իսկապես չէի՞նք տեսել իրար, երազ էր, էլի, բայց մեկ է՝ նորից ինձ շատ երջանիկ զգացի: Ինչ որ է, վերջը ուզածս հիշեցի, ու երազումս դա իրոք եղել էր, իսկ էսքանն արդեն չեղածից լավ է: Դե, երազումդ տեսածն ու իսկապես եղածը նույնը չեն, ճիշտ է, բայց ավելի լավ է երազում տեսնես, քան իսկի շտեսնես:

Աղջիկ մայրիկը էնպե՛ս տաքուկ էր ու խորը քնած: Ես փորձում էի անշարժ մնալ, որ նրան շարթնացնեմ, բայց երբ կամաց շուռ եկա, նա աչքերը լայն բացած ժպտում էր:

- Ի՞նչ ես անում, Գորտուկ:
- Լսում եմ:
- Ես էլ: Լսեցի՞ր ոնց էր Լուին ընկերոջ հետ խոսում:
- Լսեցի:
- Գիտե՞ս, երբ նրանց ձայներն ականջիս ընկան, ես հպարտացա:
- Ինչի՞ համար:
- Ինչի՞. որ Նյու Յորքում եմ, որ պիտի խաղամ ներկայացման մեջ ու հնարավորություն ունեմ բեմում այնքան իրական լինելու, որքան նրանք են փողոցում:
- Հա՛:
- Ոմանք այնքան իրական են, Գորտուկ, որ նույնիսկ պարտադիր չէ նրանց տեսնես: Ձայներից էլ է զգացվում: Նրանք կենդանի մարդիկ են: Ծանր, սևագործ աշխատանք են անում, բայց շատ իրական են, ու երբեմն թվում է, թե դրանք են ամենանշանավոր մարդիկ:
- Իսկ ինչ է, նշանավոր չե՞ն:
- Իհարկե չէ: Նրանց ոչ ոք չի ճանաչում:
- Բա նշանավորներն ովքե՞ր են:



— Ովքեր հայտնի են: Բոլորը ճանաչում են նրանց:

— Մեկնումեկն էլ սրա՛նց կճանաչի. ի՞նչ անենք, թե նշանավոր չեն:

— Ո՞վ:

— Դէ, ում որ իրենք են ճանաչում,— ասացի:— Եթե Լուին կի՛ ունի, ուրեմն կինը ճանաչում է նրան, եթե երեխաներ ունեն, ուրեմն երեխաները հո կճանաչե՛ն իրենց հորն ու մորը: Հետո՛ ուրիշ ճանաչող- ներ էլ կլինեն: Ես չգիտեի, որ դու էլ ես լսում:

— Ես ժամը վեցից արթուն եմ,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ուղիղ վեցին արթնացել եմ, առանց հեռախոսային զանգի: Արդեն համարյա յոթն է:

— էլի՞ ես քնելու:

— Չէ՛: Շատ եմ երջանիկ, որ քնեմ:

— Ես էլ չեմ քնելու:

— Գիտե՞ս ինչ մտածեցի. արի հենց էստեղ էլ նախաճաշենք ու մեր ազատությունը վայելենք: Համաճա՞յն ես:

— Դե լավ:

— Ես կպատվիրեմ նախաճաշի հետ էլի ուտելիք բերեն, որ զբո- սանքի գնալիս տանենք:

— Մենք դեռ զամբյուղում ահագին քան ունենք: Արի մեր ունեցածն ուտենք:

— Ճիշտ է: Իսկ ո՞ւր ենք գնալու:

— Ուր որ ուզես:

— Այդ դեպքում Ձորջ Վաշինգտոնի կամրջով կանցնենք ու կգնանք Ջերսի, հետո էլ մի քանի քաղաք կմտնենք:

— Ո՞ր քաղաքները:

— Դե, ասենք, Փաթըրսոն, Յունիոն Սիթի, Ռաուեյ, դուցե մի վեց- յոթ փոքրիկ քաղաք էլ:

— Սիրո՞ւն քաղաքներ են:

— Չէ, ի՛նչ սիրուն:

— Բա էլ ինչո՞ւ ենք գնում տեսնելու:

— Օ՛, իմ կյանքի մի մասը էնտեղ է անցել, իսկ ես երկար ժամա- նակ այդ կողմերում չեմ եղել: Հետաքրքիր է նայել հնուց ծանոթ փողոց- ներին ու հրապարակներին:

— Դու ի՞նչ երազ ես տեսել, Աղջիկ մայրիկ:

— Չեմ հիշում, բայց գիտեմ, որ մի քան տեսել եմ:

- Չլինի՞ Քոնի Այլընդում էիր:
- Սիգուցե, համոզված չեմ:
- Իսկ ես էնտեղ էի:
- Բւ լա վ էր:
- Եվելի լավ, քան երբ որ իրոք էնտեղ էինք:
- Իսկապէ՞ս:
- Հա, իսկապես: Այ, գուշակիր, թե էլ ո՞վ կար էնտեղ:
- Ո՞վ:
- Հայրիկն ու եղբայրս:
- Իսկ ե՞ս ուր էի:
- Պարզ է՝ ինձ հետ:
- Ո՞նց էին հայրիկն ու եղբայրդ:
- Հիանալի:
- Իսկ մե՞նք:
- Մենք էլ: Երբ լրար տեսանք, ուղղակի ապշել էինք: Հետո ծի-  
ծաղելով վրա վազեցինք, պինդ-պինդ փաթաթվել ու համբուրվում էինք:
- Ինչ քաղցր երազ է: Հույս ունեմ՝ շուտ չի վերջացել:
- Չէ, ոչ էլ թե վերջացել է, որովհետեւ դեռ մտքիս է, բայց սկըզ-  
բում մոռացել էի: Երազն ի՞նչ է, Աղջիկ մայրիկ:
- Ըհ, դժվար հարց է, Գորտուկ, ես պատասխանողը չեմ: Դա էն-  
պիսի հարց է, որ ամեն մեկն էլ փորձում է պատասխանը գտնել՝ հենց  
այն օրվանից, ինչ մարդիկ սկսել են երազներ տեսնել:
- Իսկ ե՞րբ են սկսել:
- Հաստատ չգիտեմ, բայց երևի երբ որ ցանկացել են մի ուրիշ ու  
ավելի լավ կյանքով ապրել:
- Աղջիկ մայրիկը վեր կացավ անկողնուց ու զամբյուղի միջից ամեն  
ինչ հանեց:
- Հա՛, ճիշտ որ,— ասաց նա,— այսօրվա համար ահագին ուտե-  
լիք կա: Ես ուղում եմ տեղը տեղին նախաճաշել ու կուզենայի, որ դու  
էլ նույնն անես: Մենք սալորի շիր ունենք: Վարսակի շիլա: Խաշած ձու:  
Բոված հաց: Ու տաք կակաո:
- Ի՞հ, չի՞ լինի ուրիշ բան ուտենք:
- Սալորի շիրն ու վարսակի շիլան մեզ շատ օգտակար են:
- Առաջ չէինք ուտում: Հիմա ինչո՞ւ պիտի ուտենք:
- Որովհետեւ Զերսի ենք գնում, իսկ ես, էնտեղ ապրելիս, հենց  
սրանք էի ուտում: Հոյակապ է: Սա մեր ջերսիական օրը կլինի: Համա-  
ձա՞յն ես:

— Դե լավ, Աղջիկ մայրիկ: Ոչ սալորի շիրն եմ սիրում, ոչ վարսակի շիւան, բայց մի կերպ կուտեմ:

— Ես էլ չեմ սիրում, բայց համոզված եմ, որ քսանհինգ տարի անց համեղ կթվան:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ ես հիմա երջանիկ եմ:

— Իսկ առաջ երջանիկ չէի՞ր:

— Է՛հ, չէ, Գորտուկ:

Աղջիկ մայրիկը զանգեց ու պատվիրեց, որ նախաճաշ բերեն: Նա պատվերներն ընդունող կնոջը խնդրեց նախաճաշի հետ առավոտյան թերթերն էլ ուղարկել:

— Նույնիսկ վախենում եմ թերթերը նայել, — ասաց:

— Ինչո՞ւ:

— Հուսով եմ, խեղճ Գլեդիսի ու խեղճ Հոբարթի նկարները թերթերի առաջին էջերը չեն բռնել:

Երբ նախաճաշն ու թերթերը բերեցին, Աղջիկ մայրիկը վերցրեց «Միրրըն» ու շտապ-շտապ նայեց, հետո դրեց մի կողմ ու նստեց:

— Փառք աստծու, — ասաց նա: — «Միրրըում» բան չկա, իսկ եթե «Միրրըում» չկա, ուրեմն ոչ մի տեղ էլ չկա: Դե, արի մեր ջերսիական նախաճաշն ուտենք:

Մենք, իհարկե, սալորի շրից սկսեցինք, ու պարզվեց, որ սա իսկի էլ վատը չի: Կարծես նույնիսկ լավն է: Հավեսդ գալիս է. փափուկ միջուկից կորիզն անջատում ես, մի քիչ լսլստում, հետո նոր գդալով բնրանիցդ հանում: Մենք վարձակի շիւային շաքար ու սերույցք ավելացրինք, ու սրա համն էլ վատը չէր:

— Վայ, ո՞նց էի առաջ երկուսն էլ ատում, — ասաց Աղջիկ մայրիկը, — բայց հիմա՝ արդեն չէ: Հիմա սովորական ուտելիք է թվում: Դու է՞լ ես ատում, Գորտուկ:

— Չէ: Սրանց համար ուշքս չի գնում, բայց չեմ էլ ատում:

Հաճելի նախաճաշ էր, ու դեռ ութը չեղած՝ կերանք, վերջացրինք, իսկ մեր դիմաց դեռ մի ամբողջ երջանիկ օր կար:

### ԴԵՐԱՍԱՆՆԵ՛Ր, ԳՈՐԾԻ ԱՆՑԵՔ

Հինգշաբթի էր, որ մենք գնացել էինք Քոսի Այլընդ, ուրբաթ օրն էլ գնացինք Ջերսի, շաբաթ՝ Քոննեքթիկութ: Կիրակի Մանհեթընը լրիվ պտրտեցինք, որովհետեւ մյուս օրը երկուշաբթի էր:

Արձակուրդը շատ հետաքրքիր անցավ: Մենք անընդհատ խոսում էինք ու խոսում. դե, ամեն ինչի մասին, իսկ ամեն ինչը միշտ էլ պիեսն էր:

Երկուշաբթի առավոտյան հեռախոսը ժամը վեցին զնգաց, մենք վեր կացանք, ու սովորական բանուզործն սկսվեց: Ման եկանք զբոսայգում, «Պիեսի» սրճարանում նախաճաշեցինք, բարձրացանք մեր սենյակն ու դերերը կրկնեցինք: Ութին միսս Քրենշոն զանգեց. խնդրում էր, որ ի՛ր հետ գնանք Մայքի մոտ, ոտքով, ու մենք էզպես էլ արինք:

Կարծում էինք առաջին եկողները կլինենք, բայց վերջիններն էինք, շնայած դեռ ութն անց կես էր, իսկ մենք իննիս պետք է սկսեինք աշխատել:

Բոլորը նստած էին մեծ սեղանի շուրջ, որը Մայք Մաքքլեչին պատի տակից քաշել էր սենյակի կենտրոն:

— Ուրախ եմ, որ բոլորս այստեղ ենք և ժամանակից շուտ,— ասաց Մայքը,— որովհետև իմ համոզմամբ, լավ կլիներ, եթե երաժշտության ձայնագրությունը նախօրոք լսեինք: Օսկար Բեյլին արդեն դա գլուխ է բերել: Հետո անմիջապես կանցնենք ընթերցմանը:

Մայքը գլխով արեց Օսկար Բեյլիին, իսկ Օսկարն ասաց.

— Ես հեռախոսով կոմպոզիտորի հետ խոսել եմ երաժշտության մասին և նվագախմբի կազմը ձշտել. սրա մեջ մտնում են դաշնամուրը, ջութակը, շեփորը, թմբուկներն ու հարվածայինները, բանջոն, հոբոյը, էլեկտրական երգեհոնը, քսիլոֆոնը և մի շարք մանր-մունր բաներ: Գործիքների մի մասը կոմպոզիտորն ինքն է մատնանշել, մի մասն էլ մեր զրույցի ընթացքում ենք որոշել: Մտադիր էինք նաև մարդկային ձայնն օգտագործել, թե՛ տղամարդու և թե՛ կանացի ձայներ՝ ավելի շատ կանչերի, քան երգի ձևով, բայց ես առայժմ չեմ կարողացել իմ ցանկացած ձայները գտնել: Սա դեռ լիովին այն երաժշտությունը չէ, որը կհնչի մեր ներկայացմանը, սակայն գործի սկիզբն է և, ըստ իս, բավական հաջող սկիզբ է, եթե այս ամենը նկատի առնենք:

Օսկարը ձայնագրված ժառանգները դրեց, ու մենք սկսեցինք երաժշտությունը լսել, բայց արդեն նվագախմբի կատարմամբ, ոչ թե միայն դաշնամուրի: Չէ, իմ կարծիքով, Օսկարը գլուխգովաններից չի, որովհետև երբ նա դաշնամուրով նվագում էր, երաժշտությունը ուղղակի հրաշալի էր, բայց հիմա ավելի հրաշալի էր դարձել, տեղ-տեղ էլ էնքան ուրախ ու զվարթ էր, որ ծիծաղը շէիր կարող զսպել:

Հենց երաժշտությունը վերջացավ, բոլորը ծափահարեցին, իսկ Մայք Մաքքլեչին գրկեց Օսկարին ու ասաց.

— Շնորհակալ եմ, Օսկար: Սա իմ լսած լավագույն երաժշտութիւնն է իր տեսակի մեջ:

— Իսկ ի՞նչ կտորներ ենք հանելու,— ասաց Օսկարը:

— Դեռ կտեսնենք,— ասաց Մայքը:— Դե՛, գործի անցնենք: Օսկարը գնաց դեպի դուռը, բայց Մայքը ասաց.

— Ոչ, ոչ, ես կուզեի, որ առաջին ընթերցմանը դու ներկա լինես, խնդրում եմ: Ընթերցումից անմիջապէս հետո դերասանները կզնան ընդմիջման, իսկ մնացածներս կքննարկենք... մեր հարցերը:

Մայքը մի կոճակ սեղմեց, Հելեն Գոմեսը մտավ ներս:

— Հելեն,— ասաց նա,— հետևիր խնդրեմ, որ մեզ չխանդարեն: Գուցե երկու ժամ զբաղված լինենք, գուցեև՝ երեք:

Հելենը զլխով արեց, ժպտաց, դուրս եկավ սենյակից ու դուռը հետևից ծածկեց:

Մայքն արագ-արագ բոլորին մեկմեկու ներկայացրեց, իսկ հետո էմերսոն Թալիֆն խնդրեց, որ երկու խոսք ասի.

էմերսոնն ասաց.

— Ուրեմն՝ սա պիես է: Առայժմ՝ ձեռք դիր: Մենք որոշել ենք պիեսին բեմական կյանք տալ: Առաջին ներկայացումը թատերասեր հասարակութեան առջև տեղի կունենա Ֆիլադելֆիայի «Ֆորիսթ» թատրոնում, մի երկու-երեք շաբաթից, նայած թե գործերն ինչպէս կընթանան ու նաև դանազան տեխնիկական պատճառներով: Դե՛, եկեք կարդանք:

Բոլորս նստած էինք, հետևերս էլ Ջո Թրեփ անունով մի կարճ, հաստիկ մարդ, որը բեմի և հագուստների ձևավորողն էր, ու բոլորիս առաջ պիեսի մի-մի օրինակ էր դրված:

էմերսոնն ասաց.

— Գործող անձանց ցանկն ու ռեմարկները ի՞նքս կկարդամ:

Մի վայրկյանից՝ ժամացույցին նայելուց հետո, նա սկսեց կարդալ: Ժամր ինն անց կես էր:

Հերթը հասավ ինձ, որ ես էլ կարդամ: Բոլորը լուռ էին, ու իմ կարծիքով, ես էնպէս լավ կարդացի, որ դրանից լավ երբեք չէի կարդացել, բայց պարզ է՝ դերս անգիր գիտեի: Թե չիմանայի, ո՞նց կարող էի բռնուն իրար հետևից շարել, ախր ես ընդհանրապէս դանդաղ կարդացող եմ:

Հետո հերթը հասավ մի ծերուկի, որը պիեսի փոքրիկ աղջկա պապն էր լինելու: Նա կրծքի խորքից եկող ձայն ունէր ու շտեմնված հաճելի էր խոսում:

Մերուկից հետո՝ Ազնես Հոգան անունով մի աղջիկ կար, հերթը նրանն էր:

Իսկ սրանից հետո Աղջիկ մայրիկի հերթն էր, ու նա շատ լավ կարգաց, բայց ես զգացի՝ մի քիչ անվստահ էր, որովհետև լսել էի՝ հենց նույն տողերը քանի-քանի անգամ ավելի լավ էր կարգացել:

էսպես փոխնիփոխ ամբողջ պիեսը կարգացինք, պրծանք:

Մի րոպե ոչ ոք ձայն չհանեց, իսկ հետո բոլորը միանգամից սկսեցին խոսել, մասնավանդ նրանք, ովքեր պիեսը չէին կարգացել:

Մայքն ասաց.

— Բոլորիդ էլ սրտանց շնորհակալ եմ, տիկնայք և սյարոնայք: Եթե մեկուկես ժամից՝ երկուսին վերադառնաք, պիեսը նորից կկարդանք:

Բոլորը վեր կացան գնալու, Աղջիկ մայրիկն ու ես էլ, բայց Մայքը ասաց.

— Խնդրում եմ դուք մնալ:

— Ես անհուսալի էի,— շնչաց Աղջիկ մայրիկը Մայքին: Նա շատ դժբախտ էր երևում:

Մայքը միայն ժպտաց:

Երբ մյուս դերակատարները գնացին, Մայքն ասաց.

— Ժամանակն է, որ անկեղծ ու բացեիքաց արտահայտվենք, ամեն մեկս՝ մեր անունից: Էմերսոն:

Էմերսոն Թալին կզակը շփեց, իսկ հետո կամացուկ ասաց.

— Ես դեռ անչափ անելիք ունեմ, Մայք:

— Ի՞նչ անելիք:

— Պիեսը պիտի վերամշակել:

— Ես համաձայն չեմ, բայց դրա շուրջը հետո կխոսենք: Ի՞նչ կասես դերակատարների մասին:

— Մի քանիսին շատ հավանեցի... Թերևս շատ-շատ: Բայց իմ կարծիքով, բոլորն էլ գնրազանց են:

— Կա՞ թեկուզ մեկը, որ չի համապատասխանում:

— Չէ: Ինձ դուր եկան:

— Օսկար,— ասաց Մայքը:

— Ես երաժիշտ եմ,— սկսեց Օսկարը,— բայց ահա թե ինչ կասեմ. Մատրոնի բնմից հրքեք չեմ լսել ոչինչ, որ ինձ այսքան հաճույք պարվեր:

— Իսկ դա մեր երաժշտության հետ լա՞վ կհամակցվի:

— Կարծում եմ՝ այո: Ես նույնիսկ մտածում եմ, որ ամբողջ երա-

ժըշտությունը կարելի է օգտագործել, բայց, իհարկե, տեր ու տնօրենը դու ես, Մայք:

-- Ես չեմ ուզում տեր ու տնօրեն լինել,— ասաց Մայքը:— Մի մոռացեք, խոսքս ամենքին է վերաբերում. մենք հիմա որոշում ենք, թե պիեսն ի՞նչ ձևով պետք է բեմադրել, այնպես որ խնդրում եմ արտահայտվեք: Ի՞նչը ձեզ դուր չեկավ, ի՞նչն է սխալ թվում, և առհասարակ, ձեր դիտողությունները հայտնեք: Օսկար, ի՞նչ կասես ձայների մասին:

— Բոլոր ձայները տարբերվում են, Մայք, և ես գտնում եմ, որ այդպես էլ պիտի լինի: Գա պատահակա՞ն է:

— Ոչ բոլորովին,— ասաց Մայքը:— Իսկ ի՞նչ կասես խոսելակերպի անհատական տարբերությունների մասին, շատ չե՞ն աններդաշնակ: Այսինքն՝ երաժշտական հնչողության տեսակետից:

— Չէ,— ասաց Օսկարը:— Ինձ դուր է գալիս:

— Իսկ առաջարկներ ունե՞ս:

— Ունեմ: Կարելի՞ է երկրորդ ընթերցումը կանգնած անցկացնել: Ուզում եմ ասել՝ ես դերակատարներին որպես պարողներ եմ ընկալում:

— Մի ըոպեից դրան կանդրադառնանք: Քե՞յթ, քեզ ենք լսում:

— Է՛հ, ի՞նչ ես ակնկալում ինձնից լսել, Մայք:

— Ինչ որ մտքիդ կա, իսկ ես գիտեմ, որ շատ բան կա: Ասա՛ իմանանք: Բոլորս լսենք:

— Էմբրսոնից հսկայական ջանքեր կպահանջվեն, բայց ես պիեսի վերամշակումը նկատի չունեմ: Իմ կարծիքով, ոչ մի բառ փոխելու կարիք չի զգացվում: Գիտե՞ք, Էմբրսոն, ես բազմաթիվ թատերագիրների հետ եմ աշխատել, և հենց որ տեքստը հարկ եղած տպավորությունը չէր թողնում, նրանք առաջին հերթին մտածում էին, թե պատճառը պիտի տեքստի մեջ փնտրել, ու երբեմն դա իրոք այդպես էր, բայց այս անգամ՝ ոչ: Դուք դերակատարների հետ աշխատելի՛ս պետք է մեծ ջանքեր թափեք:

— Ո՞ւմ չես հավանել, Քեյթ,— ասաց Մայքը:

— Չկար թեկուզ մեկը, որին հավանած չլինեմ: Փաստորեն դու հոյակապ թատերախումբ ես կազմել, բայց լավ իմացիր՝ Նյու Յորքում մենք իսկական թատրոն չունենք, ոչ էլ իսկական դերասաններ, եղած-չեղածը հավակնոտ մարդիկ են, իսկ սա այլ բան է: Էմբրսոնը պետք է մի երկու շաբաթվա մեջ յոթ նրբանկատ, հավակնոտ մարդու դարձնի իսկական դերասաններ:

— Քո օգնությամբ,— ասաց Մայքը:— Հնարավոր է, չէ՞:

— Հուսով եմ,— ասաց Քեյթը:— Իհարկե, պիեսն ամբողջովին փոք-

րիկ աղջիկն ու նրա մայրն են, սակայն եթե մյուսներն իրենց դերերը համարձակ չխաղան՝ ողջ երեակայությունը գործի դնելով, ավելին, նույնիսկ մեծ տաղանդով, ուրեմն պիեսից ոչինչ դուրս չի գա:

— Բայց դու առանձնապես շեռ վախենում, հը՞,— ասաց Մայքը:

— Այն էլ ինչպե՞ս եմ վախենում,— ասաց Քեյթը:— Եթե շվախե- նայի, ի՞նչ ունեի այստեղ: Ինձ դուր է գալիս էմերսոնի պիեսը: Վերջին տարիներին հանդիպածս պիեսների մեջ սա միայն է իմ կարծիքով, որի բեմադրության վրա արժե ժամանակ ու եռանդ ծախսել:

— Շատ լավ, Քեյթ,— ասաց Մայքը:— Զո, հիմա էլ քեզ լսենք:

— Ես ոչ մի թերություն չեմ տեսնում,— ասաց Զո Թրեփը:— Ինչ վերաբերում է նկարչակա՞ն ձևավորմանը, բեմը համարյա դատարկ էմ պատկերացնում. դատարկ բեմ և յույս: Առարկաների աննշան ուրվա- գծեր և լույս: Ուղղահայաց լույս, հավանաբար երկու-երեք գույնի, բայց ոչ շափաղանց ուժեղ: Եվ, իհարկե, սավերներ: Մեկուսի, կրկնակի, եռակի, մեծ ու փոքր. ամեն տեսակի, բայց ոչ թե ամբողջ ներկայացման ըն- թացքում, այլ միայն ու միայն անհրաժեշտության դեպքում: Գալով հա- գուստներին՝ ասեմ, որ գլխումս անթիվ մտքեր ծնվեցին, անթիվ, բայց փոքրիկ աղջիկը մեծ մասամբ պետք է տաբոբիկ լինի:

— Ինչո՞ւ,— միաժամանակ հարցրին էմերսոնն ու Մայքը:

— Դեռ ինքս էլ չգիտեմ,— ասաց Թրեփը: Նա պիզակի գրպանից մի մեծ թաշկինակ հանեց ու երեսը սրբեց:— Ես ներքուստ համոզված էմ սրանում, բայց դեռ չգիտեմ, թե ինչ նկատառումներով: Գու աչդ կարծիքին չե՞ս, որ աչքիկը պետք է ոտաբոբիկ լինի, Քեյթ:

— Ես չեմ մտածել դրա մասին,— ասաց միսս Քրենշոն,— թեև հիմա, քո խոսք բացելուց հետո, կարծում եմ, որ այո:

— Իսկ ինչո՞ւ, ինչո՞ւ,— ասաց Մայքը:— Այդ միտքը կարծես իմ սրտովն էլ է, բայց էմերսոնի պիեսում նշված չէ, ու ես կուզեի իմանալ, թե դա ինչով է ձևվ գրավում:

— Գեե՞,— ասաց Թրեփը,— աղջիկը պարուհու է նման: Նրա երե- վակայության մեջ ծնված ամեն ինչ պարի է վերածվում: Խոսվածքն էլ է մի տեսակ պարային: Բայց սա բալետ չէ, մանկությունն է պարում: Իսկ ոտաբոբիկ պարը թեթև է ու սահուն:

— Շատ բարի,— ասաց Մայքը:— Մենք դեռ կանդրադառնանք դրան:

Հետո նա հարցրեց, թե Աղջիկ մայրի՛կն ինչ ասելիք ունի: Ես վա- խեցա, որ կասի՝ դերը վատ կարդաց, բայց լավ էր՝ շասաց: Ուրիշ բան ասաց.



— Մայք, ես եկել եմ այստեղ սովորելու: Իմ կարծիքով, ամեն ոք յուրովի իրավացի է, բայց ե՞ս եմ, որ պիտի դրա մասին դատեմ:

— Եղավ,— ասաց Մայքը:— Այդ հարցի շուրջն էլ հետո կխոսենք: Փաստորեն վաղվանից սկսած՝ մենք երևի թե առաջնորդվենք հենց այդ սկզբունքով: Ամեն ոք յուրովի իրավացի է: Ճիշտն ասած, ես հակված եմ մտածելու, որ ամեն ոք իսկապե՛ս իրավացի է: Բայց հիմա մի որոշման հանգելո՛ւ ժամանակն է: Լուսերես, դո՛ւ ինչ կարծիքի ես այս բոլորի մասին:

— Շատ լավ,— ասացի ես:

— Ապրես,— ասաց Մայքը:

Նա կոճակը սեղմեց, Հելեն Գոմեսը մտավ ներս

— Հելեն, հերթը ուտելուն հասավ, խնդրում եմ, ինչ որ ունենք, բեր,— ասաց Մայքը:

Հելենն ուտելիքով լի սեղանը ներս հրեց, ու բոլորը սանդղիչներ վերցրին, սուրճ, բայց շարունակում էին խոսել:

Հետո, երբ ես մենակ էի Աղջիկ մայրիկի հետ, ու մենք պատուհանի մոտ կանգնած նայում էինք Նյու Յորքին ու Իսթ գետին, ասացի.

— Դու հոյակապ էիր, Աղջիկ մայրիկ:

— Չէ, կաշկանդված էի,— ասաց Աղջիկ մայրիկը:— Պիտի մի հնար գտնեմ, որ էլ չկաշկանդվեմ:

— Շատ մի մտածիր,— ասացի:— Ո՞նց չկաշկանդվես, եթե անընդհատ դրա մասին ես մտածում:

Աղջիկ մայրիկը ձեռքս բռնեց ու շնչաց.

— Դու իսկական ընկեր ես, Գորտուկ: Ամբողջ աշխարհում քեզ պես ընկեր չունեմ: Մյուս անգամ էլ չեմ կաշկանդվի, այ, կտեսնես:

Բոլորը նշանակված ժամից շուտ վերադարձան, որովհետև բոլորն էլ հուզված էին, պիեսով տարված, ու Մայքը ասաց.

— Դե ինչ, քանի որ բոլորդ հավաքվել եք, եկեք պիեսը վերստին կարդանք՝ սկզբից մինչև վերջ:

— Միայն թե կանգնած,— ասաց Օսկարը:

Մենք էլ կողք-կողքի կանգնեցինք ու պիեսը նորից կարդացինք: Աղջիկ մայրիկը արդեն կաշկանդված չէր, ու բոլորը նկատեցին, թե ինչ լավ կարդաց: Մյուսներն էլ վատը չէին:

Համարյա հինգն էր, երբ վերջացրինք: Մայքը բոլորին առաջարկեց մնալ, սուրճի սեղանի շուրջը մոտիկից ծանոթանալ, դե, բոլորս էլ նրստեցինք, ու զրույցն սկսվեց:

Մայքը հարցրեց, թե կուզե՞նք էլի երաժշտութիւնը լսել, բոլորս ուզում էինք, ու Օսկարը նորից ձայնագրութիւնը միացրեց, բայց ասաց.

— Խոսեք, խոսեք: Մի լռեք:

Ու մենք խոսում էինք, հետն էլ երաժշտութիւնը լսում:

Երբ գնալու ժամանակը եկավ, փոքրիկ աղջկա պապի դերակատարն ասաց.

— Միտար Մաքքլեյի, դուք սքանչելի պիես եք գտել, և ես հպարտ եմ, որ պիտի խաղամ պիեսում:

— Ինձ համար պատիվ է, որ դուք էլ եք պիեսում խաղալու, միտար Մանգո, — ասաց Մայքը: — «Փելիս» թատրոնի հին-հին օրերին, երբ ես երեխա էի, դուք իմ սիրելի դերասանն էիք, սլաշտում էի ձեր երգերն ու սպարերը, բայց մտքովս երբեք չէր անցնի, թե իմ բեմագրութիւններն ինչ մեկում ձեզ հետ համագործակցելու պատիվը կունենամ:

— Ենթահակալ եմ, — մեղմ ձայնով ասաց միտար Մանգոն: Հետո ժպտաց, բոլորին գլուխ տվեց ու գնաց:

Միսս Քրենշոն ու Մայքը նայեցին իրար:

— Նրան հավասարը չկար, — ասաց Քեյթը:

— Հիմա՞ ինչ պակասն է, — ասաց Մայքը:

Աղջիկ մայրիկն ու ես ոտքո՛վ տուն գնացինք, բայց երբ ս եղ հասանք, վերև շքարձրացանք, որոշեցինք մի քիչ էլ ման գալ:

Մեղիսոն սուրճատայով քայլեցինք մինչև Հաուլեմ, իսկ սա ինձ համար ման գալու նոր տեղ էր: Նախորդ օրը մեքենան նստած՝ անցել էինք Հաուլեմի միջով, ու կերոյը մեզ պատմել էր տարբեր փողոցների ու վայրերի մասին, բայց հիմա մենք ինքներս էինք եկել Հաուլեմ, կինոքս պողոտա:

Հաուլեմում լիքը երեխաներ են. նրանցից ոչ ոք տանը չի մնում, բոլորը դուրս են թափվում փողոց: Տղաներն ու աղջիկները հենց մայթերին խաղում են: Պարան են թռչում, երգում, պարում են ու զվարճանում: Երեք տղա տեսանք՝ տասը-տասներկու տարեկան կլինեին. երեքից մեկը բանջո էր նվագում: Նու նվագում էր ու երգում, մյուսներն էլ ձայնակցում էին ու պարում: Նրանք ամենալավն էին ամբողջ Հաուլեմում:

Մի ճաշարան մտանք, ուր ինչքան ասես մեծ-մեծ, եփած խնձորներ կային, ամեն մեկս մի հատ սեղուչքով կերանք, իսկ հետո դուրս եկանք, էլի քայլեցինք, բայց շուտով մութն ընկավ, ու մենք տաքսի նստեցինք:

Տան ճանապարհին Աղջիկ մայրիկն ասաց.

— Դե, Գորտուկ, վերջապէս ճիշտ ուղին գտանք:

— Հա:

— Ամբողջ օրը վախենում էի, բայց, միևնույն է՝ ամեն ինչ իմ սրբատով էր, ու էլ չեմ վախենում:

Հետո մենք, ուղղակի մեքենայում նստած՝ փողոցների մարդկանց էինք նայում: Ես վախեցած էի, բայց ձայն չէի հանում, որովհետև անտեր վախը կարծես վարակիչ լինի: Ինձ դուր էր գալիս, որ խաղալու եմ պիեսում, դուր էր գալիս, որ Աղջիկ մայրիկն էլ է խաղալու, որ հայրիկի երաճշտությունն է պիեսում լինելու, բայց դե մեկ է՝ վախս չէր անցնում:

Ու նույնիսկ շփտեի ինչից եմ վախենում:

**ՔԱՐՈՉԻՉԸ ԲԵՄ Է ԲԱՐՁՐԱՑԵԼ, ԳՆԴԱԿ ՆԵՏՈՂԷ՝ ՕՔՅԱԿՈՒՄ ԲԱԶՄԵԼ**

Մի լրիվ շաբաթ ուրիշ բանուզործ շունեիք՝ աշխատում էինք, քնում, աշխատում, քնում, ու մինչև ուշքի կգայի, կիրակին եկավ: Շաբաթ օրը միսս Քրենշոյի մոտ գիշերեցի. Աղջիկ մայրիկը զնացել էր հրավերքի, որը Մայք Մաքքլեյին էր կազմակերպել ինչ-որ մարդկանց պատվին. սրանց աջակից ֆինանսավորողներ են ասում: Միսս Քրենշոն չզնաց, որովհետև հրավերքները չի սիրում: Նա ինձ բացատրեց, որ աջակից ֆինանսավորողներն այն մարդիկ են, ովքեր փող են տալիս պիեսի բեմադրության համար, որպեսզի հետո եկամուտ ստանան:

Նրա թույլտվությամբ ես համարյա մինչև տուսը զարթուն մնացի: Երբ առավոտյան սրիթնացա, միսս Քրենշոն արդեն վեր էր կացել: Մենք միասին նախաճաշեցինք, իսկ հետո նա ասաց, որ կարող եմ դրոսայգում վազվզել:

— Եթե ուզում ես ինձ հետ եկեղեցի գալ, ինն անց կես վերադարձիր, և մենք կզնանք,— ասաց նա:

Ես անցա մեր սենյակի կողքով, բայց ոչ կանգնեցի, ոչ էլ դուռը ծեծեցի, որովհետև գիտեի՝ Աղջիկ մայրիկը դեռ քնած կլինի:

Զրոսայգում մի լավ ման եկա, խաղացի, իսկ հետո վերադարձա միսս Քրենշոյի մոտ: Տեսնեմ՝ Աղջիկ մայրիկն էլ է էստեղ. ա՛յ քեզ անսպասելի բան:

— Զանձրալի հավաքույթ էր, ուղղակի շղիմացա,— ասաց նա,— դրա համար էլ շուտ եկա տուն ու անկողին մտա:

— Զանձրալի՞. քեզ համա՞ր,— առացի ես զարմացած:

— Այո, այնքան ձանձրալի, որ շղիմացա,— ասաց Աղջիկ մայրի-

կը, հետո էլ միսս Քրենշոյին դարձավ.— Հույս ունեմ՝ Մայքը շի նեղացիլ, որ շուտ տուն եկա:

— Ինչո՞ւ պիտի նեղանա,— ասաց միսս Քրենշոն:

— Դե, հրավիրել էր այդ բոլոր մարդկանց և, իմ կարծիքով, սպասում էր, որ նրանց առաջ դերիցս հատվածներ կարգամ:

— Ամենևին: Ես դեմ կլինեի, եթե նրանց առաջ կարդայիր, և Մայքը տեղյակ է դրա մասին:

— Մի խոսքով, էմբրսոնը փորձեց պիեսը նկարագրել, Օսկարն էլ նստեց դաշնամուրի մոտ ու երաժշտությունից որոշ կտորներ նվագեց: Մայքին իսկապե՞ս աջակից ֆինանսավորողներ են պետք:

— Այո, իսկապես: Սովորաբար նրանց պատվին Մայքը հրավերք է կազմակերպում բեմադրությունը ձեռնարկելուց շատ վաղ, բայց ես կարծես հասկանում եմ, թե ինչու է այս անգամ հրավերքը ուշ կազմակերպել:

— Ինչո՞ւ:

— Որովհետև եթե բեմադրությունը արդեն ձեռնարկած չլիներ, նրանք կվախենային փող ներդնել: Սա յուրահատուկ պիես է:

— Իսկ եթե նրանք փող չներդնե՞ն:

— Պիեսը շի բեմադրվի:

— Օ՛, աստված շանի,— ասաց Աղջիկ մայրիկը:— Այ, հիմա ես իրոք անհանգստացա: Ինչ է, Մայքը այդքան փող շունի՞, որ պիեսն առանց աջակից ֆինանսավորողների բեմադրի:

— Վախենում եմ, որ ոչ,— ասաց միսս Քրենշոն:— Բայց մի անհանգստանա, նրանք փող կտան, այն էլ ինչպե՞ս կտան:

— Իսկ եթե հանկարծ ու շտա՞ն:

— Սա է թատրոնը, և նրա այս կողմը ես միշտ էլ ատել եմ:

— Ուրեմն ձեր ամբողջ տքնաջան աշխատանքը ապարդյո՞ւն կանցնի: Եվ էմբրսոնի, Մայքի, իմ, Գորտուկի ու բոլոր մյուսների աշխատանքը նույնպե՞ս:

— Մենք՝ թատրոնի սպասավորներս,— ասաց միսս Քրենշոն,— միշտ հավատում ենք, որ պիեսը կբեմադրվի՝ անկախ ամեն ինչից:

— Ես լուրջ անհանգստացա,— ասաց Աղջիկ մայրիկը:— Այդ մարդկանց կերպարանքներն ինձ բոլորովին դուր չեկան: Համոզված եմ՝ նրանք տասն անգամ կմտածեն բեմադրության մեջ փող ներդնելուց առաջ:

— Իմիջիայլոց, ես ու կուսերեսը պատրաստվում ենք եկեղեցի գնալ: Գուցե լավ կլիներ, որ հետներս գայիր:

— Ես էլ եմ այդ կարծիքին: Կաղոթեմ, որ փողատերերը քսակը բա՛նտան մեր պիեսի համար:

— Մոռացիր նրանց,— ասաց միսս Քրենշոն:— Արի գնանք, կներստես, կնայես: Նստած տեղդ թատրոն կուսումնասիրես: Մարդ եկեղեցում իսկական թատրոն է տեսնում:

— Անհանգիստ եմ,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Մի անհանգստանա,— ասաց միսս Քրենշոն:— Մենք պարտավոր ենք հավատալ, որ բեմադրությունն ըստ պատշաճի կֆինանսավորվի, և պիեսն էլ բարեհաջող կներկայացվի: Իսկ առայժմ պետք է մեզ գործով զբաղվենք: Անհանգստանալը հիմարություն է:

— Լավ,— ասաց Աղջիկ մայրիկը:— էլ չեմ անհանգստանա:

Մենք Հինգերորդ պողոտայով իջանք Հիսունյոթերորդ փողոց, հետո Հյուսնյոթերորդն անցանք, եկանք Քրոզվեյ հասանք, հենց Քրոզվեյով էլ գնացինք, ու ես տեսա եկեղեցին: Մենք ներս մտանք ու սկսեցինք ներկայացումը նայել: Սա մեղմ ներկայացում էր՝ մեղմիկ ու քնքուշ, ու մի քիչ էլ տխուր, բայց դրանից ցավ չէիր զգում: Ամբողջ եկեղեցու ներսը բեմն էր, մի մեծ բեմ: Այնքան մեծ ու կարևոր էր, որ ոչ ոք էտտեղ չէր կարող ավելի կարևոր լինել, քան պետք է լինի կամ իսկապես կա: Բոլորն էլ էտտեղ ներկայացման մասնակիցներ էին, բայց ներկայացումը շատ ավելի կարևոր էր, քան ամեն մի մասնակից: Ներկայացումը նույնիսկ ավելի կարևոր էր, քան բոլոր մասնակիցները միասին վերցրած: Ու դա նույնիսկ մարդկանց սոսածները չէր, ոչ էլ նրանց արածները: Չէ, գիտե՞ք որն էր ներկայացումը. հենց այն, թե ինչպես է ամեն ինչ էտտեղ մարդկանց տրամադրում մտքերի մեջ ընկնել, ապրումներ ունենալ ու հուշերով տարվել, իսկ եկեղեցում ամեն ինչ մեղմ է, բարի ու քնքուշ, ոչ թե զայրալի, հապճեպ, կոպիտ ու աղմկոտ: Ես եկեղեցում կարծես տանք լինելի: Ի՞նչ լավ էր էտտեղ: Թատրոնում տարբեր հայտնի դերասաններ կան, բայց եկեղեցում՝ չէ: էտտեղ ոչ մի դերասան չկա: Ամեն ինչ կազմում է մի ներկայացում, և այդ ներկայացումը ծնվում է թախծից ու անդորրից, սիրուց ու հրճվանքից, բայց ոչ հպարտությունից: Եկեղեցում հպարտանալու ցանկությունդ կորչում է:

Մենք երկար մնացինք ներսում, բայց ինձ դուր եկավ: Ներկայացումը սկզբից մինչև վերջ ինձ շատ դուր եկավ ու, իմ կարծիքով՝ Աղջիկ մայրիկին էլ: Նա արդեն հանգիստ էր ու տրտում: Հա, երևի «տրտում» բառն է սազում, բայց դա տխուր տրտմությունն չէր, մի տեսակ ուրիշ էր: Չէ, ուրախ էլ չէր, մի ուրիշ տրտմություն էր: Էնպիսի տրտմություն, որ երևի ուզածդ ուրախությունից լավ է: Երևի ոչ ոք չի կարող երկար

ժամանակ էրպես տրտում լինել: Ասենք՝ մեկ-մեկ մի ժամ, երկու ժամ, երբ եկեղեցում ես: Գուրս եկար թե չէ, քեզ նորից սովորականի նման ես զգում:

Հենց որ ամեն ինչ վերջացավ, միսս Քրենշոն ասաց.

— Եկեք ուղղակի նստենք ու նայենք:

Մենք էլ նստեցինք ու նայում էինք եկեղեցուց հեռացող մարդկանց, և շուտով ամբողջ եկեղեցին շատարկվեց: Միսս Քրենշոն վեր կացավ, ու մենք կողքի սյունասրահը մտանք, բայց, փողոց ելնելու փոխարեն, սյունասրահով քայլեցինք մինչև եկեղեցու ճակատը, կանդ առանք ու մեր շուրջն էինք նայում: Հետո շուտ եկանք, գնացինք սյունասրահի խորքը, ու միսս Քրենշոն նայեց վեր՝ եկեղեցու դմբեթին, ես էլ՝ նրա հետ: Գմբեթը շատ բարձր էր, բարձր ու շքեղ, իսկ նրա շորս կողմը շքեղ պատերն էին, առաստաղն ու լուսամուտները: Երբ դուրս եկանք փողոց, մի քանի հոգի դեռ կանգնած էին արևի տակ՝ եկեղեցու աստիճաններից, կարծես չէին ուզում հեռանալ էստեղից:

Մենք տաքսի նստեցինք, ու միսս Քրենշոն ասաց.

— Պոլոյի մարդադաշտ, խնդրեմ, և կայծակի արագությամբ, այլապես առաջին հ: Վաժը բաց կթողնենք:

Վարորդը թեքվեց ու ժպտաց, շատ շրջվելով՝ քշեց մեքենան, բայց կայծակի արագությամբ շէր քշում: Ճիշտ է, թափով էր գնում, բայց զգույշ:

— Դե՛, — ասաց միսս Քրենշոն, — ինչպե՞ս էր, հավանեցի՞ք:

— Շա՛տ, — ասաց Աղջիկ մայրիկը: — Եկեք մյուս կիրակի էլ գանք:

Սրանից հետո, Գորտուկ, արի ամեն կիրակի, ուր էլ որ լինենք, եկեղեցի գնանք:

— Ինչ է, էստե՞ղ չենք լինելու:

— Մի ութ-ինը օրից Ֆիլադելֆիայում առաջին ներկայացումն ենք տալիս, — ասաց միսս Քրենշոն:

— Անպայման կտանք, չէ՞, — ասաց Աղջիկ մայրիկը:

— Դու դեռ անհանգիստ ես, — ասաց միսս Քրենշոն:

— Իսկ դո՞ւք, — հարցրեց Աղջիկ մայրիկը:

— Իհարկե, ես նույնպես: Մի տարի կլինեք, ինչ եկեղեցում չէի եղել: Մայքը թաքցնում է իր մտահոգությունը, բայց ես քանի օր է, զգում եմ՝ նա նյութական դժվարությունների մեջ է: Մինչդեռ խոսքը մի պիեսի մասին է, որը ես կուզեի նյույորքյան բեմահարթակին տեսնել: Մենք պետք է ամեն կերպ հաջողության հասնենք, որպեսզի ներկայա-

ցումը նյու Յորք բերենք, և ես սարսափով եմ մտածում, թե հանկարծ ու շատացվի:

— Այ, դա արդեն հասկանալի է, — ասաց Աղջիկ մայրիկը: Նա նույնիսկ կամացուկ ծիծաղեց: — Թե չէ ես իրոք սկսել էի հավատալ, որ դուք ընդհանրապես չեք անհանգստանում, ու սա ուղղակի իմ հասկացողությունից վեր էր: Կարծում էի ինձ հետ է ինչ-որ բան կատարվում: Բայց դուք ինչո՞ւ չգնացիք Մայքի հրավերքին՝ նրան օգնելու:

— Որովհետև ինձնից օգնող դուրս չէր գա, — ասաց միսս Քրենշոն: — Ավելի շուտ, ընդհակառակը. ես մեր դեմ կլարեի բոլոր նրանց, ովքեր բեմադրությունը գուցեև ֆինանսավորեին: Մայքը ինքն էլ զիտի ու թեթևացած շունչ քաշեց, երբ ասացի, որ չեմ կարող իրեն օգնել: Նման հարցերում ես առհասարակ անզոր եմ օգտակար լինելու: Հրավերքի մասին քո պատմածից դատելով, Մայքը թերևս գործը գլուխ բերի: Եվ հետո, էմբրսոնն էլ ջերմ ու սիրալիր է մարդկանց հետ շփվելիս, ինչպես և րիտաձարդ գրողներից շատերը: Չնայած տարիքն առնելով՝ նրանք կորցնում են այդ հատկանիշը: Ես մեծ հաճույք ստացա եկեղեցում, իսկ դո՞ւ, Լուսերես:

— Օ՛, ես էլ, — ասացի, — բայց հիմա չեմ համբերում, թե երբ եմ բեյսբոլի խաղը տեսնելու:

— Վարո՞րդ, — ձայն տվեց միսս Քրենշոն: — Ավելի արագ, խընդրեմ:

Վարորդը թեքվեց ու նորից ժպտաց:

— Եկեղեցուց՝ ուղիղ մարզադաշտ, — ասաց: — Լա՛վ է:

— Կիրակի օրվա համար իսկն է, որ կա, չէ՞, — ասաց միսս Քրենշոն:

— Խոսք չունեմ, — ասաց վարորդը:

Նա շատ վարպետ քշող էր ու մեզ ժամանակին մարզադաշտ հասցրեց: Խաղի սկզբից ամենաքիչը մի ընդհանուր առաջ արդեն մեր տեղերում նստած էինք, իսկ հետո՝ խնդրեմ, մի ուրիշ ներկայացում սկսվեց. եկեղեցու ներկայացման պես մի բան, բայց մաքուր օդում, հենց արևի տակ, երբ շորս կողմը ժխոր է, հուզմունք, ու բոլորը նստած տեղերից ձգվելով՝ նայում եք, սպասում, կամ էլ գոռում-գոչում: Ի՞նչ հրաշալի ներկայացում էր, եկեղեցում տեսածս լրիվ մոռացա: Բեյսբոլի ներկայացումը ինձ նույնիսկ ավելի դուր եկավ, քան եկեղեցուներ: Սա ավելի աշխույժ է, հետաքրքիր, ու էլ գլխիդ զոռ չես տալիս՝ ուրախ ես, տխուր, թե չգիտես ինչ: Ուղղակի նայում ես ու հրճվանքից կամ ջղայնությունից ճշում: Ես «Հսկաների» կողմն էի, իսկ միսս Քրենշոն՝ «Հնարամիտների»:

Աղջիկ մայրիկը ոչ մեկի կողմը չէր: Նա խաղը խսկի շէր էլ հասկանում, երեսուներեք տարեկան էր, բայց արի ու տես, որ շէր հասկանում: Ես բեյսբոլի մասին ամեն ինչ եղբորիցս եմ սովորել, Դաշտապահ Փիթեր Բոլիվիայից: Դե, միսս Քրենշոն խաղը Աղջիկ մայրիկին բացատրեց, ես էլ օգնեցի, բայց նա էլի չհասկացավ: Զեացրեց, թե հասկանում է, բայց մենք գիտեինք, որ չէ. ախր ո՞նց սլիտի հասկանաւոր, եթե մտածում էր, թե ահավոր բան է, երբ գնդակ նետողը մականորդին հանում է խաղից, հենց որ սա իրեն ուղարկված գնդակը երեք անգամ բաց է թողնում, կամ էլ սխալ ուղղութեամբ խփում: Ամեն մի գնդակ նետող. ամեն մի մականորդի: Նա շէր հասկանում, որ դա շատ մեծ հաջողութիւնն է գնդակ նետողի համար, թեկուզև մականորդի համար վատ է: Այ թե ինչու է բեյսբոլը միշտ էլ հետաքրքիր: Մեկի հաղթանակը միշտ էլ մյուսի պարտութիւնն է, ու բոլորը ձգտում են հաղթանակ տանել:

«Հնարամիտները» խաղը շահեցին, բայց միայն իններորդ հարվածից հետո. դրանից առաջ երկու թիմերն էլ հավասար միավորներ ունեին: Սիսս Քրենշոյի ուրախութեանը շափ չկար, բայց ես էլ էի ուրախ: Մեկ է՝ ինչ էլ լինի, «Հսկաները» իմ սիրած թիմն է, իսկ բեյսբոլը՝ սիրածս խաղը: Սա ամենալավ մրցումն էր, որ ես կյանքումս տեսել էի, բայց երանի եղբայրս՝ Փիթն էլ ինձ հետ լիներ, իսկ հայրիկը՝ մայրիկի կողքին. ո՞նչ անենք, թե նրանք բաժանված են:

Բեյսբոլից հետո տուն վերադառնալիս միսս Քրենշոն ասաց.

— Գիտե՞ք ինչ, եկեք այսօր մինչև վերջ զվարճանանք, միևնույն է, վաղվանից մեր հոգսերն սկսվում են: Ի՞նչ կարծիքի եք, կինո շմբտնե՞նք:

Կինոնկարը իտալական էր, «Նրբանցք» վերնագրով, ու շնայած ոչ մեկի ասածից բան չէի հասկանում, էկրանին գրվող անգլերեն բացատրություններն էլ չէի հասցնում կարգալ, բայց կինոնկարը ինձ շատ դուր եկավ, որովհետև աղքատ մարդկանց մասին էր ու նրանց տանջանքների, հատկապես նիհար դեմքով ու մեծ, հոգնած աչքերով մի հայրիկի:

Է՛հ, խեղճի գլխին ինչ ասես, որ չեկավ:

Սկզբում նրան տարան իտալական բանակ կամ դրա պես մի տեղ՝ հաստատ շգիտեմ: Նա համազգեստ կը հագել, ու տեսքը էնպե՛ս տխուր էր:

Մի օր մոլորվեց ու իրենց իտալացիներից մեկին հարցրեց, թե ոնց գնա, որ գերմանացիների կամ, մի խոսքով, թշնամու ձեռքը չընկնի, իտալացին էլ ասաց՝ աստիճաններից իջնի ու դեպի աջ թեքվի, բայց երբ նա սրա ասածով արեց, գերմանացիները արդեն կանգնած սպասում էին



ու նրան գերի վերցրին: Տարան հեռու մի բանտ ու էնտեղ երկար պահեցին:

Նրա բացակայության ժամանակ կինը սիրահարվեց մի ուրիշ իտալացու, իսկ աղջիկը՝ մի ամերիկացի զինվորի, որը հեռացավ, աղջկան էլ տղա երեխայի հետ թողեց, ու բոլորը մնացին աղքատ, սոված-ծարավ:

Շատ լավ կինոնկար էր՝ սկզբից մինչև վերջ, ու ես երբեք չեմ մոռանա հորը, մանավանդ երբ նա տուն վերադարձավ ու տեսավ ամեն ինչ փոխված, առաջվանից էլ վատ: Խեղճն էլի անցավ իր նախկին գործին ու անընդհատ տանջվում, շարշարվում էր կնոջ, աղջկա, մեկ էլ որդու հետ, իսկ սա մեծացել էր: Մի օր տղան գոռգոռաց հոր վրա, որովհետև նրա հացը չկար, ու տղան ասում էր, թե հայրն է կերել: Չեմ հիշում՝ նա իրոք կերել էր, թե չէ, բայց երբեք չեմ մոռանա նրան ու իր ընտանիքին: Բոլորն էլ ինձ հարազատ դարձան, ու ես սիրեցի նրանց:

Կինոյից հետո ճամփա ընկանք տուն: «Պիեռին» շհասած՝ Հիսունիններորդ փողոցում, մտանք ավտոմատ ճաշարան ու ընթրեցինք:

Ամբողջ օրը շտեսնված հետաքրքիր անցավ, բայց ես գիտեի, որ Աղջիկ մայրիկն անհանգիստ է, միայն Քրենշոն էլ՝ նրա հետ:

### ՓՈՂ

Երկուշաբթի առավոտյան, դեռ ինը չկար, բոլորս արդեն Մայք Մաքքլեչիի մոտ էինք՝ պատրաստ, որ նորից աշխատանքի կաշենք: Միստրը Թրեփը ցույց տվեց Մայքին բեմի ձևավորման մակետը: Սա էնպես էր շինված, որ պտտելիս մի վեց-յոթ տարբեր դեկորներ էին ստացվում: Էմբրսոն Թալին նայում էր, թե մակետն ինչպես է պտտվում, Օսկար Բեյլին էլ՝ նույնը, բայց ոչ ոք դրանից չէր ուրախանում, ընդհանրապես ոչ ոք ուրախ չէր երևում, ու ես գլխի ընկա, որ մի բան է եղել: Միստր Թրեփը սենյակի հատակին գծեց, թե ներկայացման սկզբում դեկորները որտեղ են լինելու: Հետո հերթը հասավ մեզ. Էմբրսոնը բացատրեց, թե տեքստն ասելիս՝ ուր պիտի կանգնենք ու ինչ պիտի անենք: Էսպես՝ մինչև տասներկուսն անց կես աշխատեցինք, իսկ հետո բոլոր դերակատարները, բացի Աղջիկ մայրիկից ու ինձնից, գնացին կեսօրյա նախաճաշին:

Քեյթ Քրենշոն նայեց Մայքին ու ասաց.

— Դե՛, Մայք, պատմիր տեսնենք:

— Վախենում եմ, որ աջակից ֆինանսավորողների հետ գործերս այնքան էլ լավ չդասավորվեց:

— ԹՎԱՐՔԱՆՈՐԵՆ Ի՞Նչ է դուրս գալիս:

— Մեզ հարկավոր է յոթանասունհինգ հազար դուլար, — ասաց Մայքը: — Ես ներդրել եմ ամբողջ ունեցածս. մոտ տասնյոթ հազար: Տասը հոգուց ևս տասը հազար ստացա, մի երեք-չորս հազար էլ խոստացել են տալ. սա է ընդամենը: Հուսով էի, թե աջակից ֆինանսավորողներից մեկ-երկուսը տասներկու կամ տասներեք հազար կդնեն՝ որպես գլխավոր ավանդատուներ, բայց նրանք չդրին և, ըստ երևույթին, մտադիր էլ չեն:

— Ի՞նչ ծրագրեր ունես:

— Մենք ամեն դեպքում Ֆիլադելֆիայից կսկսենք, այդ մեկն՝ անկասկած:

— Եվ ե՞րբ:

— Կտեսնենք: Եթե ներկայացումը հանդիսատեսին դուր գա, եթե թատերախոսականները դրական լինեն, մենք առանց որևէ դժվարություն անհրաժեշտ գումարը ձեռք կբերենք:

— Իսկ եթե թատերախոսականները բացասական լինեն՞:

— Չգիտեմ, — ասաց Մայքը: — Երբեք չեմ հանդիպել այդքան վարանոտ ու անվճռական ֆինանսավորողների: Հրավերքս լրիվ ձախողվեց:

— Նաև իմ մեղքով, — ասաց էմերսոն Թալին:

— Ամենևին, — ասաց Մայքը:

— Ես անտեղյակ եմ, թե ինչպես են խոսում այդ կարգի մարդկանց հետ, — ասաց էմերսոնը: — Գիտեմ, անհարկի բաներ դուրս տվի: Հայտարարեցի, որ պիեսն ըստ իս լավն է, բայց ի՞նչ իմանամ՝ հաջողություն կունենա, թե չէ: Դա սխալ էր, Մայք: Բոլորը ասածս լսեցին: Ես կարծում էի իմ խոսքերն այնպես կընկայվեն, թե ոչ ոք նախօրոք լիավատահ չէ որևիցե պիեսի հաջողության վրա, բայց հավանաբար նրանց վախեցրի: Կներես: Գուցե դու էլի մի փորձ անես, Մայք, ես չեմ խառնելի:

— Չէ, — ասաց Մայքը: — Ես ում որ հրավիրել էի, ամենքն էլ եկել էին: Մենք պետք է հույսներս Ֆիլադելֆիայի հետ կապենք: Թերահավատ ֆինանսավորողները պրեմիերային իհարկե ներկա կլինեն, իսկ եթե ամեն ինչ բարեհաջող անցնի, իրենց ծառայությունները իրենք կառաջարկեն:

Մենք Մայքի մոտ նախաճաշեցինք, ու հենց որ դեղատարները նորից հավաքվեցին, շարունակեցինք դերերը փորձել: Բոլորն էլ գիտեին՝ ինչ-որ բան է պատահել, բայց մեկ է՝ միևնույն եռանդով աշխատում էին:

Իսկ երբ վերջացրինք ու պիտի ցրվեինք, բուրն էլ մի տեսակ կամացով  
իրար հրաժեշտ տվին, ոչ սովորականի պես:

Աղջիկ մայրիկն ու ես հասանք «Պիեռ» թե չէ, պարզվեց, որ մեզ նա-  
մակներ են եկել. իմք հայրիկից էր ու մի նամակ էլ նույն ծրարի մեջ՝  
Դաշտապահ Փիթեր Բոլիվիայից: Հայրիկը պատմում էր, որ Օսկար Բեյ-  
լին երաժշտության ձայնագրությունը ուղարկել է իրեն, բայց ինքը ստիպ-  
ված է եղել դեսուդեն ընկնել, ինչ է՝ ձայնարկիչ ճարի, կարողանա լսել:  
Վերջապես, ճարել է ու երաժշտությունը լսել, բավականին գոհ է, բայց  
Օսկարին մի երկար նամակ է գրել, թե ինչպես կարելի է երաժշտությու-  
նը ավելի կատարյալ դարձնել: Իսկ եղբայրս պատմում էր, որ փարիզեցի  
մի քանի աղերքի բեյսբոլ է սովորեցրել, ու նրանցից մեկը՝ Ջեք անունով  
մի տղա, կարգին գնդակ նետող է հիմա: Ես որոշեցի հենց տեղնուտեղը  
հայրիկին ու եղբորս պատասխանել: Ուզում էի եղբորս ասել, որ ես էլ  
բեյսբոլի ուժեղ խաղ եմ տեսել, «Հնարամիտների» ու «Հսկաների» խա-  
ղը: Իսկ հայրիկին ուզում էի ասել, որ Քոնի Այլընդում իրեն եմ տեսել:  
Ինքն ինձ չի՞ տեսել:

Աղջիկ մայրիկին եկած նամակը մի հսկայական ծրարի մեջ էր,  
ծրարի թուղթն էլ շոշափելիս՝ կարծես մետաքս լիներ ու բաց երկնագույն  
էր: Վրան ձեռքով գրված երկու մեծ տառ կար. «Գ. Գ.»:

— Հապա մի լսիր,— ասաց Աղջիկ մայրիկը:— «Հանուն վաղեմի  
օրերի, հանուն մեր գեղեցիկ անցյալի, նամակս ստանալուն պես՝ զան-  
գահարիր ինձ: Կյանքի ու մահվան հարց է, բայց ես չեմ կարող երբեք  
նորից ստորանալ՝ ինքս զանգելով, որովհետև դու պարզ ու մեկեն հաս-  
կացրիր, որ իմ զանդը քեզ համար շատ տհաճ կլինի: Գլեդ»:

— Գլեդն ով է:

— Գլեդիսը, էլ ո՞վ,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ես էի սովորաբար  
նրան էդպես կոչում, երբ մենք դեռ փոքր էինք: Չի էլ ամաչում, տես ինչ  
վիրավորական երկտող է ուղարկել:

— Չանգ տուր նրան:

— Ոչ մի դեպքում: Հիմա որ իրոք վրան կատաղեցի:

— Չէ, զանգ տուր:

— Բայց ինչո՞ւ զանգ տամ:

— Կյանքի ու մահվան հարց է:

— Ոչ մի հարց էլ չկա, նրա հին երգն է, նորություն ասա: Կթող-  
նե՞ս քո նամակները կարդամ:

— Իհարկե,— ասացի:— Երկուսն էլ քեզ ջերմ բարևներ են ուղար-  
կում:

Մենք նամակները փոխանակեցինք, ու ես Գլեդիս Դյուբարիի գրածը կարդացի: Նրա ձեռագիրը խոշոր էր՝ երկու տակ ծալված մեծ, երկնագույն, ընտիր թղթերը, ծայրերին էլ՝ կարմիր, բարալիկ զուկեր, նա լրիվ գրոտել էր: Մի քանի բառ ամբողջ առաջին էջում, մի քանիսն էլ՝ ամբողջ երկրորդ էջում, երրորդում էլ՝ միայն իր անունը:

Հեռախոսը զնգաց. միսս Քրենշուեն էր, Աղջիկ մայրիկը նրա հետ խոսեց, իսկ հետո ասաց.

— Ես գնում եմ միջանցքի մյուս ծայրը՝ միսս Քրենշույի մոտ... ընդամենը մի րոպեով:

Հենց որ նա գնաց, ես հյուրանոցում տրվող թղթերից գտա ու սկսեցի հայրիկին նամակ գրել, բայց դանդաղ եմ գրում ու էնքան շատ ասելիք ունեի, որ համարյա ոչինչ չկարողացա ասել: «Իմ լավ հայրիկ,— գրեցի,— ես քեզ սիրում եմ»: Ու վերջ՝ կանգ առա:

Մոտեցա հեռախոսին, լսափողը վերցրի, բայց երևի նույնիսկ չգիտեի, թե ինչ եմ ուզում անել: Ճիշտը որ ասեմ, սրտիս ուզածը մի բան էր. զանգել հայրիկին ու խոսել նրա հետ, բայց գիտեի, որ դա չպետք է անեմ, ու երբ հեռախոսավարուհին սատասխանեց, ոչ մի համար գլուխս չեկավ, բացի Գլեդիս Դյուբարիի համարից, դե, ես էլ նրա համարը տվեցի:

Չանգը մի անգամ զնաց, ու լսափողը իսկույն վերցրին: Չանգի սպասողներն են էդպես իսկույն վերցնում Տեսել եմ, Աղջիկ մայրիկն էլ է մեկ-մեկ էդպես անում, բայց մեծ մասամբ թողնում է, որ զանգը մի քանի անգամ գա: Ես Գլեդիսի ձայնը սկզբում չճանաչեցի: Կարծես ծերացած ու հոգնած լիներ:

- Գլեդիս:
- Այո: Դո՞ւ ես, Գորտուկ:
- Ես եմ, Գլեդիս:
- Ի՞նչ ուրախ եմ, որ գանգեցիր, ես պետք է խոսեմ մորդ հետ: Չգիտեի ինչ պատասխան տամ, ասացի.

— Նա մի րոպեով միջանցքի մյուս ծայրը զնաց: Նամակդ հենց նոր է ստացել:

— Միջանցքի մյուս ծայրը,— ասաց Գլեդիսը:— Ինչ է, ձեր սենյակում զուգարան էլ չկա՞:— Այ, հիմա նա արդեն ինքն իր նման էր, ու էս դրանից ինձ լավ զգացի:

- Կա, ո՞նց չկա,— ասացի:— Մայրիկը միսս Քրենշույի մոտ զնաց:
- Ո՞ւմ:
- Քեյթ Քրենշույի: Աշխարհի ամենամեծ բեմական ուսուցչի: Նա

մեր դասատունն է: Ամեն ինչ գիտի դերասանության ու մնացած բաների մասին: Ես սիրում եմ նրան:

— Դու բոլորին սիրում ես:

— Չէ, ո՞վ ասաց: Մի քանի հոգու եմ սիրում: Շատերն ինձ դուր են գալիս: Մյուսներին էլ շեմ ճանաչում:

— Իսկ ո՞ւմ ես ատում:

— Ոչ մեկին:

— Ես բոլորին ատում եմ,— ասաց Գլեդիսը:

— Չես ատում:

— Բացի քեզնից, բոլորին ատում եմ, Գորտուկ: Իսկ բոլորից շատ հենց ինձ եմ ատում:

— Չե՛ս ատում:

— Ատում եմ:

— Ախր ինչո՞ւ:

— Ատում եմ ու վերջ: Իմ կարծիքով, միշտ էլ ատել եմ: Ես հոգնած ու զզված եմ ինքս ինձանից ու չգիտեմ ինչ անեմ:

— Ինչո՞ւ շես կոկա-կոլա խմում:

— Նոր խմելի: Օգուտ չի տալիս:

— Դու էլ եկեղեցի գնա, ինչո՞ւ շես գնում:

— Երկուշաբթի օ՞րը: Նույնիսկ կիրակի չգնացի:

— Իսկ երկուշաբթի շի՞ կարելի գնալ:

— Ինչի՞ համար: Էնտեղ մարդ չկա:

— Եկեղեցին էլ հո կա:

— Հետո՞ ինչ:

— Դե ոչ գնաս, արդեն մարդ կլինի՝ հենց դո՛ւ, կաղոթես ու էլ շես ստի բոլորին:

— Իսկ ես ուզո՞ւմ եմ ատել: Ինձ դուր է գալիս, որ բոլորին ատում եմ: Միայն դուր չի գալիս, որ ինձ էլ եմ ատում: Հետո՞ գիտե՞ս, ես եկեղեցու բան չեմ: Գնում եմ թե չէ, ծիծաղս բռնում է:

— Ճի՞շտ: Իմ ծիծաղը եկեղեցում փոքր ժամանակ էր բռնում: Քեզ ին՞չ է եղել, Գլեդիս:

— Հոն է մեղավոր: Մեր կովելու օրվանից հետս չի խոսում:

— Բայց դու ուզո՞ւմ ես, որ խոսի:

— Իհարկե ուզում եմ: Մենք ամուսիններ ենք:

— Է՛հ, բա ինչո՞ւ շես դո՞ւ հետը խոսում:

— Չեմ կարող: Դա շատ ստորացուցիչ կլինի:

— Հետո՞, ուրիշ ի՞նչ կա:

- Սա հերիք չի՞: Ես բոլորին ատում եմ, Հոն էլ հետս չի խոսում:
- Դու դեռ տղա շունե՞ս:
- Մի ամիս չկա, որ ամուսնացել եմ:
- Դե, թեկուզ աղջիկ:
- Մի ամսում անկարելի է տղա կամ աղջիկ ունենալ:
- Չէ, կարելի է, եթե ուզես: Դու չե՞ս ուզում:
- Նույնիսկ ուզեմ էլ, չեմ կարող մի ամսում:
- Իսկ դու զարմացրու նրան: Ուրախությունից կշշմի:
- Շշմելը՝ գրազ կգամ, որ իրոք կշշմի:
- Դու ուղղակի տղայիդ ձեռքը բռնած՝ գնա նրա մոտ, ու ամեն ինչ նորից կարգին կլինի:

— Նորի՞ց... Ձեռքը բռնած... Գորտուկ, մեռնեմ, թե դու բան ես հասկանում:

— Շատ լավ էլ հասկանում եմ: Աշքովս եմ տեսել, էդպես են անում: Հազիվ ման եկող փոքրիկ տղայի կամ աղջկա ձեռքը բռնում են ու երեխային իր հոր մոտ տանում, նա էլ հրճվում է, վերցնում երեխային, ու նրանք իրար գրկում են, համբուրում:

- Ուլքե՞ր են իրար գրկում, համբուրում:
- Հայրիկն ու երեխան, հետո էլ՝ մայրիկը:
- Որտե՞ղ ես դա տեսել: Կինոյո՞ւմ:

— Չէ, ինչո՞ւ, հենց մեր տանն եմ տեսել: Երեխան ես էի: Դու էլ էդպես արա, ու Հոն կդրկի, կհամբուրի երեխային, իսկ հետո արդեն՝ քեզ:

— Դե հիմա, Գորտուկ, — ասաց Գլեդիսը, — լսափողը տուր, մորդ հետ խոսեմ:

- Նա դեռ չի եկել:
- Ուրեմն երբ որ գա, խնդրում եմ, անպայման թող ինձ զանգի, հա՞:
- Լավ: Առայժմ, Գլեդիս:
- Առայժմ, Գորտուկ:

Ես նորից նստեցի, որ նամակս շարունակեմ ու հայրիկին գրեցի. «Կարոտել եմ քեզ: Ուզում եմ գալ Փարիզ»: Բայց գիտեի, որ իզուր եմ էսպես գրել, դրա համար էլ գրածս շնչեցի: Նամակը կեղտոտվեց, ես ճրմըռթեցի ու անպետք թղթերի զամբյուղը գցեցի: Հետո սկսեցի Աղջիկ մայրիկին նամակ գրել, որովհետև նա էլ էր գնացել:

«Զանգիր Գլեդիսին: Սիրով՝ Գորտուկ»:

Նամակը գրի Աղջիկ մայրիկի բարձին: Նա սիրում է, որ իրեն եկած նամակները բարձի վրա լինեն: Նայեցի շորս կողմս, հետո լուսամուտից

մի քիչ նայեցի, իսկ հետո բարձին դրած նամակս տեսա, վերցրի ու կարդացի: Կարճ էր: Էլի կարդացի: Ու սա էլ անպետք թղթերի զամբյուղը գցեցի:

Հետո մի ուրիշ նամակ գրեցի. «Գնում եմ»: Նորից բարձին դրի ու պատրաստվեցի թաքնվել, հենց որ բանալու ձայնը դուրս մեջ լսեմ: Երկար մնացի էդպես պատրաստ կանգնած, բայց ոչ մի ձայն էլ չլսեցի, ու երբ Աղջիկ մայրիկը վերադարձավ, արդեն մոռացել էի թաքնվելու մասին:

Նա միանգամից մոտեցավ բարձին, նամակը վերցրեց ու կարդաց: — «Գնում եմ», — ասաց: — Սա ի՞նչ է նշանակում:

— Ուղղակի փոքրիկ նամակ է, էլի, — ասացի:

Նա նամակը գցեց անպետք թղթերի զամբյուղը, հետո մյուս նամակներս էլ տեսավ: Հանեց բոլորն ու մտքում կարդաց:

Իսկ հետո մեկը բարձրաձայն կարդաց. «Իմ լավ հայրիկ, ես քեզ սիրում եմ: Կարոտել եմ քեզ: Ուզում եմ գալ Փարիզ»:

Նա առանց ինձ նայելու ասաց.

— Դու իսկապե՞ս ուզում ես Փարիզ գնալ:

— Չէ՛, Աղջիկ մայրիկ, — ասացի, որովհետև չէի ուզում նրա տրամադրությունն ընկնի, բայց, իհարկե, միշտ էլ ուզել եմ Փարիզ գնալ: Ոչ թե հենց էնպես, Փարիզում լինելու համար, այլ հայրիկին ու եղբորս տեսնելու համար:

— Ուրեմն ինչո՞ւ ես սա գրել:

— Չգիտեի ուրիշ ինչ դրեմ:

— «Ձանգիր Գլեդիսին», — կարդաց նա:

— Հա, ինչո՞ւ շեռ գանգում, — ասացի:

— Որովհետև ինձ պետք չէ ավելորդ գլխացավանքի մեջ ընկնել: Սևփական հոգսերս հերիք են, հազար ցավ ունեմ: Դու: Ես ինքս: Պիեսու:

— Ի՞նչ է պատահել, Աղջիկ մայրիկ:

— Միսս Քրենշոն նոր միտք հուշեց երկրորդ գործողության համար, ես էլ գնացի, մի քիչ աշխատեցիք: Հետո ներկայացման ու փողի մասին խոսք բացվեց, և ես սաքսափելի հուսահատված եմ: Ահավոր հարված կլինի, եթե ներկայացումը Ֆիլադելֆիայում տապալվի:

Մենք զրուցում էինք, երբ ինչ-որ մեկը հանկարծ դուռը դմբդմբուցրեց: Աղջիկ մայրիկը վեր թռավ տեղից ու շատ բարկացած էր դուռը բացելիս:

Նմրգմբացնողը ?լեդիս Դյուբարին էր:

— Քեզ ո՞վ է թույլ տվել, որ դուռս ջարդես,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Հա՛,— ասաց Գլեղիսը,— սրանից ջերմ ընդունելութուն կյանքումս չեմ տեսել:

— Օ՛Ֆ, ի՞նչ ես ուզում:

Մեկ-մեկ Աղջիկ մայրիկը կարող է դառնալ աշխարհի ամենակոպիտ մարդը: Հենց որ նա կոպիտ մի բան է անում, ջղայնությունս դալիս է վրան: Էնպես եմ ջղայնանում, որ մտքումս ասում եմ. «Նա իմ մայրիկը չի: Եթե իմ մայրիկը լիներ, երբեք չէր կոպտի: Սա ուրիշն է: Փոքր ժամանակ ինձ գողացել են իմ մայրիկից: Այ, էս կինն է գողացել, ով է՝ չգիտեմ: Նա լրիվ օտար է ինձ: Էլ չեմ ուզում Լրեսը տեսնել: Ուզում եմ իսկական մայրիկիս գտնել»: Բայց մի րոպեից, երբեմն էլ դեռ ջղայնությունս շանցած՝ արդեն չեմ հավատում, թե ինձ գողացել են: Էլի հավատում եմ, որ նա իմ իսկական մայրիկն է, բայց Լրանի կոպիտ բաներ շաներ:

— Երանի կոպիտ բաներ շաների,— ասացի ես:

— Իսկ քո կարծիքով ի՞նչ պիտի անեի, եթե դուռս էնպես են ջարդում, կարծես հանցագործ եմ:

— Ես քեզ վախեցնելու մտադրություն չունեի,— ասաց Գլեղիսը,— բայց երբ դուրս եկա վերելակից, մի տղամարդ, որը պիտի քսանհինգերորդ հարկում իջներ, հետևիցս եկավ, իմ ահ ու դողն էլ բռնեց: Վազեվազ հասա ձեր դռան մոտ և շնորհակալ եմ, գոնե շուտ բացեցիր: Երևի նա հիմա էլ է միջանցքում կանգնած:

— Մեկ՝ դո՛ւ, մեկ՝ քո երկրպագունե՛րը... — ասաց Աղջիկ մայրիկը: Նա դուռը լայն բացեց ու գնաց միջանցք:— Շատ լավ, օրիորդ Անդիմադրելի, դուրս արի, ինքդ տես:

— Խնդրում եմ, այդ սոսկալի տոնով հետս մի խոսիր,— ասաց Գլեղիսը:

— Դուրս արի,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Լսիր, ի՞նչ ես օձութուն անում, ներս եկ,— ասաց Գլեղիսը:

— Դե, եթե դուրս չես գալիս,— ասաց Աղջիկ մայրիկը,— մնա՛, քե՛զ լինի ամբողջ սենյակը:

Նա մի պահ սպասեց, հետո շուտ եկավ ու գնաց:

— Աղջի՛կ մայրիկ,— ձայն տվի ես: Բայց նա հետ չդարձավ, ու ես ասկապես կատաղեցի վրան:

— Ա՛խ, Գորտուկ,— ասաց Գլեղիսը,— ներիր: Էնպե՛ս եմ ամա-



չում: Բայց մի տղամարդ իրոք հետապնդում էր ինձ: Խնդրում եմ, թող դուռը փակեմ:

Գլեղիսը փակեց դուռն ու մի րոպե կանգնած՝ ականջ էր դնում: Նրբ նա շրջվեց, շրթունքները դողում էին, ու ես շատ խղճացի նրան:

— Ի՞նչ է պատահել մայրիկիդ, Գորտուկ: Մենք առաջ էլ ենք կըռվել, բայց նրան երբեք չեմ տեսել էսպես... խելքը կորցրած: Ի՞նչ է եղել նրան:

— Նեղվում է պիեսի համար:

— Պիեսի՞ն ինչ է եղել:

Բայց Գլեղիսը արդեն լաց էր լինում, կարծես փոքրիկ աղջիկ էր, ոչ թե մեծահասակ կին, մի անշափ հարուստ, ամուսնացած կին, ինքն էլ բժիշկ Հոբարթ Թափենսի կինը:

— Վա՛յ, Գլեղիս,— ասացի ես,— լավ էլի, լաց մի լինի:

— Ո՞նց լաց չլինեմ,— ասաց Գլեղիսը:— Բոլորն ատում են ինձ:

— Նա քեզ չեմ ատում:

— Բոլորը, բացի քեզանից, Գորտուկ: Ի սրտե շնորհակալ եմ, դու ես իմ միակ իսկական ընկերուհին: Կարծում էի մայրդ է միակ իսկական ընկերուհիս, բայց դա նախկինում էր: Փառք աստծու, որ զոնե քեզ աշխարհ է բերել: Եթե ես տղա ունենամ, ու նա քեզ արժանի լինի, շատ կուզեի, որ դու նրա կինը դառնաս:

— Դե լավ,— ասացի ես:— Բայց ե՞րբ պիտի ունենաս:

— Հենց դրա մասին էի եկել մորդ հետ խոսելու, բայց քո աչքով տեսար, թե ինձ ինչպես ընդունեց:

— Նա դիտմամբ շարեց,— ասացի:— Ուղղակի տրամադրությունն ընկած է: Անընդհատ նեղվում է, տանջվում:

— Ինչի՞ համար: Ի՞նչն է նրան պակասում, որ նեղվի: Դեռատի աղջիկ էր, երբ ամուսնացավ: Հրաշալի ամուսին ուներ, որը պաշտում էր նրան: Տաղանդավոր կոմպոզիտոր, ոչ թե ինչ-որ բժիշկ՝ դեղերը գրպաններում: Նա հոյակապ որդի ունի: Հիանալի աղջիկ: Բաժանվեց, բայց դեռ գեղեցիկ, երիտասարդ կին է: Էլ ի՞նչն է նրան պակասում, որ նեղվի:

— Մեծ հաջողությունը:

— Մեծ հաջողությո՞ւնը: Նա վաղուց է իր մեծ հաջողությունը ձեռքից բաց թողել: Իսկ թե ինչպես հաջողեցրեց հորդ իր հետ ամուսնացնել, այ, սա է, որ ես երբեք չեմ հասկանա:

— Դե, գիտես ինչ, Գլեղիս Դյուբարի, հե՛տ վերցրու խոսքերդ:

— Լավ, Գորտուկ: Ներիր: Հետ վերցրի: Ներո՞ւմ ես:

— Ներում եմ, բայց ինչո՞ւ են բոլոր մեծահասակները էդպէս անտանելի:

— Ո՞վ իմանա. ահա՞վոր բան է, չէ՞: Այ, ես շուտով մայր եմ դառնալու, իսկ ամուսինս նույսրսկ չի խոսում ինձ հետ: Եկա մորդ խնդրեմ՝ զնա, նրան ասի:

— Ի՞նչ ասի:

— Որ հղի եմ:

— Ի՞նչ-ի՞նչ:

— Շուտով մայր եմ դառնալու:

— Երբ՞վանի՞ց:

— Հենց ամուսնութեան առաջին գիշերվանից, բայց ես չգիտեի, ընդամենը մի շաբաթ առաջ եմ իմացել: Համոզված չէի, ինչ ասեմ: Պատահում է, ընկնում ես լյուրիսացութեան մեջ, դրա համար էլ սպասում էի, բայց սա թյուրիմացութեան շէր: Գնացի լժշկի, ու նա հաստատեց:

— Հոն գիտի՞:

— Իհարկե ոչ: Ախր շենք խոսում: Ամբողջ ամսում միայն մի անգամ ենք մարդ ու կին եղել, բայց անվերջ կովել ենք: Ես մայր դառնալու ոչ մի մտադրութեան չունեի: Դու միակն ես, որին գաղտնիքս ասացի: Եկա մորդ ասելու, բայց նա նույնիսկ չթողեց բարևեմ: Ես գլուխս կորցրել նմ, Գորտուկ: Չգիտեմ ինչ անեմ:

— Ե՞րբ ես մայր դառնալու:

— Դե, եթե ամեն ինչ հարկ եղած ձևով ընթանա, եկող տարվա ապրիլ-մայիս ամիսներին:

— Չե՞ս կարող արագացնել:

— Ոչ, անհնար է: Ես անգամ վստահ չեմ, թե դա ուզում եմ:

— Դու վստահ չե՞ս, թե ուզում ես տղա կամ աղջի՞կ ունենալ:

— Այո, վստահ չեմ: Ամուսինս ինձ չի սիրում:

— Ո՞նց թե. սիրո՞ւմ է: Նա քեզ շատ է սիրում:

— Տեսնես իրո՞ք սիրում է, Գորտուկ:

— Բա ինչ, դու էլ գիտես:

— Իսկ ինչո՞ւ չի հետս խոսում:

— Որովհետև ուզում է, որ հիմա՝ իր կինը դառնալուց հետո, դու փոխվես:

— Ինչպե՞տ:

— Ուզում է, որ իր կինը լինես:

— Բայց ես նրա կինն եմ:

— Իսկակա՛ն կինը:

— է՛հ, եթե հիմա էլ նրա իսկական կինը չեմ, արդեն չգիտեմ, թե իսկականը որն է: Նույնիսկ չգիտեմ՝ իսկ ես ուզո՞ւմ եմ էդպիսի կին լինել:

— Պետք է լինես:

— Ինչո՞ւ:

— Քո տղայի կամ աղջկա համար:

— Ճիշտ է,— ասաց Գլխորդը:— Ես պետք է գտնեմ դրա ձևը: է՛, հետո՞, մայրդ էլ չի՞ վերադառնալու:

— Իմ կարծիքով, գնացել է միսս Քրենշոյի մոտ:

— Չե՞ս զանգի, նրան ասես, որ ներողություն եմ խնդրում ու աղաչում, որ գա:

— Դո՞ւ զանգիր:

— Ես չեմ կարող, Գորտուկ: Նա ինձ էնպե՛ս ստորացրեց:

— Չէ, ի՞նչ ստորացնել: Չանգիր:

Գլխորդը հեռախոսավարուհուն խնդրեց, որ իրեն միսս Քրենշոյի հետ միացնի, բայց Աղջիկ մայրիկը էնտեղ չէր: Միսս Քրենշոն մեզ իր մոտ թեյի հրավիրեց:

— Դե լավ,— ասացի ես,— գնանք, բայց արդեն անհանգիստ եմ, մայրիկը չեկավ: Արի գոնե մի երկտող թողնենք, որ նա իմանա ո՞րտեղ ենք:

Գլխորդը երկտող գրեց ու Աղջիկ մայրիկի բարձի վրա թողեց, իսկ հետո ես նրան տարա միսս Քրենշոյի մոտ:

— Գիտե՞ք, այնքա՛ն եմ լսել ձեր մասին,— ասաց Գլխորդը:

— Բայց ո՞ւր է մայրիկդ, Լուսերես,— հարցրեց միսս Քրենշոն:

— Ներքևում կլինի,— ասացի:— Իջել է սուրճ խմի, որովհետև շատ է նեղվում պիեսի համար:

— Բոլորս նեղվում ենք,— ասաց միսս Քրենշոն:

— Ինչո՞ւ, հաջող պիես չէ՞,— հարցրեց Գլխորդը:

— Հիասքանչ պիես է: Ուղղակի մե՛զ չի հաջողվում անհրաժեշտ գումարը հավաքել, որպեսզի ներկայացումը նյու Յորք էլ բերենք: Չեղբներին տակ եղածը Ֆիլադելֆիայի փոքրձևական հյուրախաղերին կբա՛լականացնի, բայց ոչ ավելին:

Միսս Քրենշոն թեյ լցրեց երեքիս համար, ու մենք սկսեցինք խմորեղենով թեյ խմել, բայց ես ոչ մի բանից հաճույք չէի զգում, նույնիսկ ու՛մով տորթից:

— Քեզ ի՞նչ է պատահել, Լուսերես,— ասաց միսս Քրենշոն:

— Ես երևի գնամ մեր սենյակն ու մի քիչ քնեմ:

— Իսկապե՞ս:

— Սյո:

— Բայց բանալին վերցրե՞լ ես:

— Վերցրել եմ:

— Ինչ արած, գնա: Իսկ մենք, եթե դեմ չես, դեռ կնստենք. չէ՞, միսիս Թափենս:

— Սյո, ես կուզենայի մի քիչ էլ մնալ, եթե կարելի է:

— Օ՛ր, իհարկե կարելի է,— ասաց միսս Քրենշոն:— Ես շատ ուրախ եմ, որ ինձ հյուր եք եկել:

— Իրո՞ք,— ասաց Գլեդիսը: Նա հրճվանքի մեջ էր:

Ես գնացի մեր սենյակն ու փոփեցի անկողնուն: Ա՛խ, երանի Աղջիկ մայրիկի հետ տանը լինեի, Մաքրրոնի Լեյնում: Երանի հայրիկի ու եղբորս հետ Փարիզում լինեի: Երանի շորսս էլ Փարիզում լինեիք: Երանի շորսս էլ միասին Մաքրրոնի Լեյնի մեր տանը լինեիք: Երանի շորսի փոխարեն մենք հինգը լինեիք: Երանի վեցը լինեիք, հետո յոթը դառնայինք, իսկ հետո՝ ութը: Ես էնպե՛ս կուզեի մի փոքրիկ եղբայր ունենալ ու մի փոքրիկ քույր, հետո էլ՝ մի ուրիշ փոքրիկ եղբայր ու մի ուրիշ քույր: Երանի մեծահասակները միշտ հազար ու մի հոգս ու ցավ չբաշեին:

Ա՛խ, երանի շնեղվեի, որ խաղալու եմ պիեսում: Իսկ ես նեղվում էի: Դե, մեկ-մեկ շատ շէի նեղվում: Մեկ-մեկ համարյա դա սրտովս էր, բայց մեկ-մեկ էլ աշխարհում ամենաշատը դրանից էի նեղվում: Ախր ես երբեք չեմ ուզել պիեսում խաղալ: Երանի հեռախոսով երբեք շխոսեի Մայք Մաքքլեչիի հետ, որովհետև եթե շխոսեի, նա իմ ձայնը շէր լսի, իսկ ես ձայնիս պատճառով պիեսում դեր ստացա: Երանի ձայնս փոխվեք: Այ, մայրիկի ձայնը անընդհատ փոխվում է: Մեկ լի է սիրով, մեկ՝ չէ: Մեկ աշխույժ է ու ծիծաղկոտ, մեկ՝ հոգնած ու բարկացկոտ: Է՛հ, երանի ոչ մի ձայն էլ չունենայի: Ախր ես երբեք չէի ուզում սովորել, թե բեմում ոնց պիտի խոսես ու տարբեր բաներ անես նստած մարդկանց առաջ: Միշտ ուզեցե՛լ եմ հայրիկի, մայրիկի, եղբորս հետ լինել, ընկեր-ընկերուհիներիս հետ, ու պրծավ գնաց:

Քունս շէր տանում, ու ես իսկի ուրախ շէի, որ պիտի խաղամ պիեսում: Աղջիկ մայրիկը պահել էր թերթերի բոլոր գրածները մեր մասին՝ իմ ու իր բոլոր լուսանկարներով, բայց ես դրանից էլ չէի ուրախանում: Ի՞նչ կլիներ, եթե վեր էենայի, իջնեի ցած՝ հյուրանոցի սրճարանն ու ասեի. «Աղջիկ մայրիկ, ես չեմ ուզում պիեսում խաղալ»: Կսրո՞ղ էի էդ սյեռ անել:

Զէ, իհարկե չէ, ու ես մտածեցի, որ ավելի լավ է փորձեմ մի կերպ ուրախանալ:

Փորձեցի, փորձեցի, բայց դե շատացվեց: Իսկ հետո արդեն, ճիշտ է, դեռ ուրախ չէի, բայց գոնե տխուր էլ չէի:

Ես վեր կացա, դուրս եկա սենյակից ու գնացի վերելակների մոտ: Կոճակը սեղմեցի, քիչ հետո վերելակներից մեկը կանգ առավ, ու ես ներս մտա: Իջա սրճարան, տեսնեմ իրոք որ, Աղջիկ մայրիկը մենակ նստած՝ սուրճ է խմում ու «Պառլամենտ» ծխում: Ես մոտեցա ու նստեցի նրա դիմաց: Ժպտացի, ինքն էլ ժպտաց, հետո թեք սեղանի վրայով մեկնեց ու իմ ձեռքը բռնեց:

— Ամոթ էր,— ասաց:— Չգիտեմ ինչ է հետներս կատարվում: Սիրտըդ ի՞նչ կուզի:

— Ոչ մի բան:

— Զէ, ասա՛: Պաղպաղա՞կ:

— Դե, կարելի է:

Աղջիկ մայրիկը մատուցողուհուն կանչեց,— Ոոլին չէր աշխատում, նրա հերթը չէր,— ու սա ինձ համար պաղպաղակ բերեց:

Հետո վերև բարձրանալու տեղ՝ մենք գնացինք փողոցներում շրջելու: Երբ վերադարձանք, արդեն մութ էր, ու երկուսս էլ հոգնած էինք: Մենք միանգամից անկողին մտանք, ու քունս տարավ:

Մյուս օրը շատ ավելի լավ էինք մեզ զգում ու կարգին աշխատեցինք:

## ԱՆՍ, ՖԻԼԱԴԵԼՖԻԱ, ՖԻԼԱԴԵԼՖԻԱ

Շաբաթ էր, որ 2109-րդ սենյակին հրածեշտ տվինք ու գնացքով հասանք Ֆիլադելֆիա, «Բենջամին Ֆրանքլին» հյուրանոցը: Մեր խմբի բոլոր անդամներն էստեղ էին մնում:

Կիրակի առավոտյան բոլորս գնացինք «Ֆորիսթ» թատրոնն ու բեմի վրա պիեսը փորձեցինք: Միստր Թրևիսի դեկորները բեմում էին: Դեռ լրիվ տեղադրված չէին, բայց մենք փորձն անում էինք, իսկ բանվորները դեկորներն էին ամրացնում ու սարքի գցում:

Ամբողջ ցերեկն ու գիշերվա մի մասն աշխատեցինք: Ոչ կարողացանք և կեղեցի գնալ, ոչ բեյսբոլի խաղի. ուղղակի դուրս չէինք գալիս թատրոնից: Մեր ճաշն էլ բերեցին թատրոն, ընթրիքն էլ: Բոլորից շատ էմբրսոն Թալին էր շարշարվում: Օսկար Բեյլին համարյա մինչև երեկո, իր երաժիշտների հետ թատրոնի մի ուրիշ մասում էր փորձ անում,

իսկ նրանց վերջացնելուց հետո, ամեն ինչ նորից սկսեցինք, հիմա էլ երաժշտութիւն տակ: Զգեստները մյուս օրն էին պատրաստ լինելու, իսկ երեկոյան առաջին ներկայացումն էինք տալու:

Բոլորը ոգևորված էին, բայց և վախեցած, իսկ ամենից շատ՝ ուրախ ու երջանիկ:

Սա էլ էի երջանիկ: Էդպես է, երբ որ խաղում ես պիեսում: Ինչ կա շկա՝ խառնվում է իրար, շիլաշփոթ դառնում: Բոլորը հուզված են, անհանգիստ, բայց հենց որ հասնում է առաջին ներկայացման ժամանակը, բոլորն էլ իրենց երջանիկ են զգում:

Երկուշաբթի առավոտյան վեց հավաքարար և կան ու թատրոնը մաքրեցին, պլպլացրին առաջին ներկայացման համար: Նվագախումբը իր տեղը գրավեց, դեկորսներն էլ արդեն լրիվ սարքին էին: Զգեստները հանգանք, էմբրսոնը, Մայքն ու Զո թրեփը մեզ մի լավ նայեցին, Զոն արագ-արագ շտկումներ արեց զգեստների վրա, հետո էմբրսոնն ասաց.

— Դե՛, սկսեցինք. ծայրեծայր խաղում ենք, ինչպես հանդիսատեսի առաջ:

Մենք սլիեսը խաղացինք:

էմբրսոն Թալին ցատկեց բեմ ու ասաց.

— Շնորհակալութիւն, տիկնայք և սլարոնայք: Հիմա եկեք փորձենք, թե վերջում ինչ կարգով եք գլուխ տալու, եթե հանդիսատեսը մի քանի անգամ բեմ կանչի:

Մոտ հինգ րոպե էլ դրանով զբաղվեցինք, իսկ հետո էմբրսոնը, Մայքն ու միսս Քրենշոն իրար հետ խորհրդակցեցին, ու էմբրսոնն ասաց.

— Մենք որոշեցինք այլևս չփորձել: Խնդրում եմ բոլորը գնան տուն, հանգստանան, և մի խնդրանք ևս. ձեզ վրա վստահ եղեք, լա՞վ: Ներկայացումը ավելի հարթ է ընթանում, քան մենք սպասում էինք: Ուրեմն՝ մինչև երեկո, բոլորիդ հաջողութիւն եմ ցանկանում:

Աղջիկ մայրիկն ու ես դուրս եկանք փողոց, արևի լույսին:

Ոտքով հասանք հյուրանոց, բարձրացանք վերև ու պառկեցինք, որ հանգստանանք: Շուտով Աղջիկ մայրիկը քնեց, հետո էլ իմ քունը տարավ:

Յոթն անց կես արդեն բեմի հետևն էինք, մեր հանդերձասենյակում: Հուզմունքից դողում էինք: Զգեստները հագանք, Աղջիկ մայրիկը իմ գրիմն արեց, հետո՝ իրենը: Մեկ էլ լսեցինք, որ նախերգանքն են նվագում, իսկ հետո ներս մտավ Մայք Մաքքլեյին ու ասաց.

— Ժամանակն է: Զեզ հաջողութիւն:

Աղջիկ մայրիկն ու ես դուրս եկանք սենյակից ու կուլիսների հետևում կանգնեցինք: Քիչ անց վրա հասավ բեմ մտնելու ղոպեն, ու ես մտա բեմ: Շատ անսովոր էի զգում ինձ, որովհետև զիտեի՝ ամբողջ դահլիճը լիքն է մարդկանցով, ու հենց վարագույրը բարձրանա, բոլորը կսկսեն ինձ նայել: Ինչ որ անեմ, կտեսնեն: Ինչ որ ասեմ, կլսեն:

Ա՛խ, երանի շէ՞ր Փարիզում լինեի, մտածեցի ես, հետո վարագույրը բարձրացավ, ու ներկայացումն սկսվեց: Ամեն ինչ սովորածիս նման արեցի, բայց կարծես իմ տեղը մի կողմնակի մարդ էր, իսկ ես մտածում էի ուրիշ բաների մասին, մտածում, թե ինչ լավ կլիներ, եթե Փարիզ ընկնեի՝ հայրիկի մոտ, թե ինչ լավ էր, երբ մայրիկի հետ Մաքըրոնի կենում էի ու էլի տարբեր բաներ:

Դեռ ուշքի չէի եկել, որ ներկայացումն ավարտվեց:

Վարագույրն իջավ, ու մի պահ ամեն ինչ լուռ էր: Ներկայացման բոլոր մասնակիցները վազելով եկան բեմ, ու մենք կողք-կողքի շարվեցինք, ինչպես էմբրսոնն էր հետներս նախօրոք փորձել: Վարագույրը բարձրացավ, ու ծափեր լսվեցին: Բոլորս իրար հետ գլուխ տվեցինք, ու վարագույրն իջավ: Նորից ծափեր, ու վարագույրը նորից բարձրացավ: Մենք էլի գլուխ տվեցինք, ու վարագույրն իջավ: Դերակատարներից հինգը արագ հեռացան, մնացինք Աղջիկ մայրիկը, ես, միստր Մանգոն ու միսիս Քոուլը: Վարագույրը բարձրացավ, շորսս միասին գլուխ տվեցինք: Վարագույրն էլի իջավ, հիմա էլ միստր Մանգոն ու միսիս Քոուլը հեռացան, արդեն Աղջիկ մայրիկն ու ես պիտի գլուխ տայինք, բայց ծափերը շատ շէին: Մենք սպասում էինք, թե վարագույրը մի անգամ էլ կբարձրանա, բայց չբարձրացավ, ու մենք շրջվեցինք, եկանք մեր հանդերձասենյակը: Գալիս լսեցի, որ Աղջիկ մայրիկը քթի տակ ասաց.

— Գրո՛ղը տանի:

Երբ մտածեք հանդերձասենյակ, նա ինչ-որ շշից իր համար վիսկի լցրեց ու միանգամից խմեց. ես նույնիսկ չզիտեի, որ վիսկի ունի: Նա մի «Պառլամենտ» վառեց ու ծուխը խոր շնչեց: Հայելու առաջ կանգնած՝ իրեն էր նայում:

— Չէ, ես բանի պետք չեմ, — ասաց:

— Ոչինչ, Աղջիկ մայրիկ: Ես էլ բանի պետք չեմ: Էստեղ ոչ ոք բանի պետք չի:

Նա նստեց:

— Ես իրավունք չունեմ մեր պիեսում խաղալու, — ասաց: — Ո՛չ մի պիեսում իրավունք չունեմ:

— Ես էլ:

— Ա՛յ քեզ, խնդրեմ,— ասաց նա:— Սա էր իմ մե՛ծ հաջողութիւնը:

— Արի գնանք Փարիզ,— ասացի ես:

— Մենք շե՛նք կարող գնալ Փարիզ,— ասաց Աղջիկ մայրիկը:—

Ոչ մի տեղ էլ չենք կարող գնալ: Մենք պիտի Ծիլադելֆիայում մնանք:

Ու պիտի խաղանք մարդկանց համար, իսկ նրանք մեզ չեն հավանում:

— Է՛, ուրեմն մենք էլ իրենց չենք հավանում:

Աղջիկ մայրիկը նորից վիսկի լցրեց ու էլի մի շնչով խմեց:

— Կներես, Գորտուկ,— ասաց:— Ախր ինձ ո՞վ էր իրավունք տվել, որ քեզ էլ խառնեմ սրա մեջ:

— Դե լա՛վ, թքած, Աղջիկ մայրիկ:

— Թե հայրդ էստեղ ներկա կլինե՛ր. հիմա փրփրել էր վրաս:

— Նա սիեսը կարդացել է: Ինքն ասաց, որ խաղամ:

— Ճիշտ է, ասաց, որովհետև գիտեր՝ եթե դու շխաղաս, ես էլ չեմ խաղա: Դա ինձ համար արեց:

— Նա ինքն է պիեսի երաժշտութիւնը գրել:

— Դա էլ ինձ համար արեց: Ես լրիվ խայտառակ եղա: Վախենում եմ մարդկանց Լրեսին նայել:— Նա էլի վիսկի լցրեց, մի շնչով խմեց ու ասաց.— Է՛հ, երևում է ինձանից դերասանուհի դուրս չի գա, ուրիշ ոչինչ Երևում է Լս նրանցից չեմ, որ փառքի են հասնում, ուրիշ ոչինչ: Աստված է վկա, թե ինչքան տանջվեցի: Ինչքան աշխատանք թափեցի: Գիշեր-ցերեկ շարաշար աշխատեցի: Վեց շաբաթ շարունակ միայն պիեսով ու իմ դերով էի ապրում: Եվ հանուն ինչի՞: Որ հասարակութեան առաջ ծաղրատեղ դառնամ, ահա թե ինչի:

Դուռը շատ կամացուկ ծեծեցին, ու Աղջիկ մայրիկը շիշը թաքցրեց: Հայելու մեջ նայեց իրեն, հետո դեմքն իսկույն փոխվեց: Էլ խենթի նման չէր:

Դուռը բացեց, տեսնենք Գլեդիս Դյուբարին է՛ կարմիր վարդերի մի մեծ փունջ ձեռքին:

— Ես որքան կարող էի, կամաց թակեցի,— ասաց Գլեդիսը:— Կարելի՞ է ներս գալ:

— Ախ, Գլեդի՛ս,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ես գաղափար չունեի, որ դու Ծիլադելֆիայում ես: Խնդրեմ, ներս արի:

Գլեդիսը մտավ նեղլիկ սենյակը: Վարդերը պարզեց Աղջիկ մայրիկին: Նրանք փաթաթվեցին, հետո Գլեդիսը ինձ էլ փաթաթվեց, ու բոլորս մնացինք հենց Լնպես կանգնած: Ոչ ոք ձայն չէր հանում, իսկ հետո Գլեդիսը վերջապես խոսեց.

— Զգիտեմ ինչ ասեմ:



— Ոչինչ էլ մի ասա,— վրա բերեց Աղջիկ մայրիկը:— Ուզո՞ւմ ես խմել: Ես որ ուզում եմ:

Աղջիկ մայրիկը նորից շիշը հանեց, մի բաժակ Գլեդիսի համար լցրեց, մի բաժակ էլ՝ իր: Նա արդեն խմելու վրա էր, բայց Գլեդիսը բաժակը մեկնեց, իրար հետ շրխկացրին, ու Գլեդիսն ասաց.

— Իմ ամենահարազատ ընկերուհու կենացը:

— Հարազատ ընկերուհի՛ ես գտել,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ես անամոթ շան պես եմ քեզ վերաբերվել: Հուսով եմ ամուսնական կյանքըդ կարգին է, որովհետև միակ բանը դա է, որ նշանակություն ունի:

— Իրոք, չէ՞,— ասաց Գլեդիսը:

— Է՛, ո՛ւր էր թե այսօրվա իմացածս տասը տարի առաջ իմանայի,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ինչպե՞ս ես, լա՞վ ես: Հոբարթը լա՞վ է:

— Օ՛, երկուսս էլ շատ լավ ենք: Եվ իհարկե, ամենամեծ նորությունը գիտես:

— Ի՞նչ նորություն:

— Դու նրան չե՞ս ասել, Գորտուկ:

— Ի՞նչը չեմ ասել:

— Որ մայր եմ դռնալու:

Վա՛յ, հեմա Աղջիկ մայրիկն ու Գլեդիսը փաթաթվել են իրար, ո՛նց են քրքշում, հետո էլ աչքերն էին սրբում:

Աղջիկ մայրիկն ասաց.

— Ի՛նչ ուրախ եմ քեզ համար, ու շատ ապրես, շա՛տ, որ Ֆիլադելֆիա ես եկել

— Եթե մենք նույնիսկ երբեք չխոսեինք,— ասաց Գլեդիսը, թեկուզ մի վայրկյան մտքովդ կանցնե՞ր, որ ես բաց կթողնեմ ձեր ներկայացման պրեմիերան:

Դուռը նորից ծեծեցին. միտար Մանգոն էր:

— Հինգ բոպեից բեմում հավաքվում ենք,— ասաց նա:

— Եղավ,— ասաց Աղջիկ մայրիկը:

Մենք գրիմն ու զգեստները հանեցինք, մեր սովորական շորերը հագանք:

Գլեդիսն ասաց.

— Ես ու Հոն «Բենջամին Ֆրանքլին»-ում ենք մնում: Հենց որ տուն գաք, խնդրում եմ զանգ տուր:

— Մենք էլ ենք էնտեղ,— ասացի ես:

— Գիտեմ,— ասաց Գլեդիսը:— Դրա համար ենք էնտեղ կանգ առել:

Նա ու Աղջիկ մայրիկը մի անգամ էլ փաթաթվեցին, հետո Գլեղիսը գնաց, իսկ Աղջիկ մայրիկը էլի վիսկի լցրեց:

— Այ, սա է խկական ընկերուհին,— ասաց:— Ամենախկակա՛ն:

Մենք գնացինք բեմ: Վարագույրը բարձրացրած էր, դահլիճը՝ դատարկ, միայն բեմում էր մի փոքրիկ լապտեր վառվում, ու բոլորը հավաքվել էին լապտերի լույսի տակ: Պարզ է, թե բոլորն էլ ոնց էին իրենց դգում: Մենք կանգնեցինք խմբի մյուս դերասանների կողքին ու սպասում էինք: Վերջապես Մայք Մարքելչին առաջ եկավ:

— Սրտանց շնորհակալ եմ ձեզ, տիկնայք և պարոնայք,— ասաց նա:— Մենք հյուրախաղերը ճիշտ ժամկետին սկսեցինք ու այսօր առաջին ներկայացումը տվինք: Որպես ճշմարիտ պրոֆեսիոնալներ, իսկ մէղնից ույզքանն էլ պահանջվում էր անել: Վաղը երեկոյան Երկրորդ ներկայացումն ենք տալիս: Ինչ էլ որ քննադատներն ասեն պիեսի և ներկայացման մասին, ես վստահ եմ՝ ձեզնից յուրաքանչյուրն իր դերը կկատարի ամբողջ կարողությունը գործի դնելով: Եթե հանդիսասրահը կիսով չափ թափուր լինի, եթե նույնիսկ ընդամենը երեք հանդիսատես գան, միևնույն է, մենք կտանք այն լավագույն ներկայացումը, որին ընդունակ ենք: Բոլորդ էլ լարված աշխատել եք: Այնուամենայնիվ, ես համոզված եմ, որ դուք կհասկանաք՝ պետք է աշխատանքը շարունակել: Այդ իսկ պատճառով վաղը՝ ժամը մեկին, փորձ է նշանակված: Կրկին ու կրկին շնորհակալ եմ ձեզ, տիկնայք և պարոնայք:

Աղջիկ մայրիկն ու Լս խմբի մյուս անդամները՝ հետ բեմից հեռացանք: Հետոնաբեմի աստիճաններից լքնելիս՝ Աղջիկ մայրիկը սայթաքեց, բայց չընկավ:

— Վիսկին գլխիս է խփել,— ասաց:

Մենք ոտքով շենքերի Լշկու շարք անցանք: Ես պինդ բռնել էի նրան, որովհետեւ չէր կարողանում ուղիղ քայլել:

— Սերտս խառնում է, ու ամաչում եմ,— ասաց:

Ես ձեռքով տաքսի կանչեցի, վարորդը մոտեցավ ու դուրը բացեց: Աղջիկ մայրիկին օգնեցի, որ նստի, հետո էլ, երբ տեղ հասանք, օգնեցի, որ դուրս գա, ու մենք բարձրացանք մեր սենյակը: Հանվեցինք ու անկողին մտանք:

— Երանի քնեի ու էլ շարթնանայի,— ասաց Աղջիկ մայրիկը:

Ես մթնում ականջ էի դնում նրա շնչառությանը, մինչև համոզվեցի, որ քնեց: Հետո մոտեցա հեռախոսին ու զանգեցի Գլեղիսին:

— Մենք պառկել ենք քնելու,— ասացի:— Նրկուսս էլ շատ ենք հոգնած:

Հյուրանոցի հեռախոսավարուհուն խնդրեցի, որ առավոտյան ժամը իննից շուտ շքանգի: Էլի եկա, մտա անկողին ու քնեցի, բայց երազում անընդհատ դերս էի խաղում, ոնց որ Կալիֆոռնիայից Նյու Յորք գալուց հետո, երբ անընդհատ թռչում էի ինքնաթիռի մեջ:

Առավոտյան իննին հեռախոսը զնգաց, ու Աղջիկ մայրիկը էնպես վեր թռավ, անկողնում նստեց, կարծես կայծակնահար եղավ: Տեսքը բանի նման չէր: Նա գլուխը թափահարեց, հետո վեր կացավ անկողնուց ու լսափողը վերցրեց: Իսկ հետո ուղղակի շվարած կանգնել էր, ասես փորձում էր ամեն ինչ հիշել կամ գուցե մոռանալ:

Վերջապես նա զանգեց ու իր համար սուրճ պատվիրեց, ինձ համար՝ թերխաշ ձու, բոված հաց ու շոկոլադի ըմպելիք, հա՛, մեկ էլ՝ առավոտյան թերթերը:

Երբ մատուցողը ներս բերեց սեղանը, Աղջիկ մայրիկը մի բաժակ սուրճ լցրեց ու սկսեց խմել: Նա մի թերթ բացեց, թատերախոսականը կարդաց, հետո մյուսը բացեց, սրա թատերախոսականն էլ կարդաց:

Զվերը կճպեց, վրան կարագ դրեց ու ասաց.

— Պիեսը շեն հավանել:

— Դրանք ի՞նչ են հասկանում որ,— ասացի ես:

— Երեկ մոռացա Գլեդիսին զանգել:

— Ես զանգեցի:

— Ապրես, Գորտուկ: Անցած երեկոյան ես շատ դժբախտ էի:

— Իսկ դու դժբախտ մի եղիր:

— Դե, ջանում էի: Ամեն կերպ:

— Ժամը մեկին փորձ ունենք:

— Գիտեմ, երանի շունենայինք: Երանի այսօր ներկայացում էլ չլիներ:

Մինչև կեսօր Ֆիլադելֆիայի բոլոր թերթերը լույս տեսան, ու Աղջիկ մայրիկը բոլոր թատերախոսականները կարդաց: Ոչ մի քննադատի ներկայացումը դուր չէր եկել:

— Դեկորներն են մի քիչ հավանել,— ասաց Աղջիկ մայրիկը,— հետո՝ երաժշտությունը: Մի քիչ էլ միտք Մանգոն է դուր եկել ու սրանով կարճես թե վերջ:

— Շատ պե՛տքս է,— ասացի ես:

— Լավ էլ պետքդ է:

— Իսկի էլ չէ: Ազնիվ խոսք:

— Ախր ո՞նց կարող է պետքդ չլինել:

— Դե՛, հա, պետքս է, բայց բանի տեղ չեմ դնում:

Ժամը մեկին մենք բեմում էինք:

էմերսոն Թալին ասաց.

— Ես գիտեմ, որ բոլորդ կարդացել եք թատերախոսականները և առանձնապես աշխատելու տրամադրություն չունեք, բայց համենայն դեպս, գուցե աշխատենք, հա՞: Ուրեմն՝ առաջին գործողություն:

## ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆՔ, ԱՇԽԱՏՈՒՄ, ՏԱՆՋՎՈՒՄ ԵՆՔ ՈՒ ՍՊԱՍՈՒՄ

Մենք սկսեցինք աշխատել, ու երևի հիմա էր, որ իրոք աշխատում էինք: Ամեն մի մանրուք նորից ու նորից էինք մշակում, որովհետև էմերսոնը, Մայքն ու միսս Քրենշոն արդեն գիտեին, թե որտեղ ենք սխալ արել:

Ներկայացումից առաջ, երբ վարագույրը բարձրանալու վրա էր, իսկ ես՝ բեմում կանգնած, հասկացա, որ դահլիճում քիչ մարդ կա, բայց սլատրաստ էի դրան: Վարագույրը բարձրացավ թե չէ, տեսա պարտերի կեսից ավելին դատարկ է, բայց վերնահարկը՝ լեփլեցուն: Դե, վերնահարկի տոմսերը համեմատարար էժան են: Պարտերում նստածներին ներկայացումը դուր չէր գալիս, բայց վերնահարկի մարդկանց դուր էր գալիս: Պիեսի բոլոր դերակատարներն էլ լավ էին խաղում, երեկվանից շատ ավելի լավ, ու վերջում ծափերն ավելի ուժգին էին, քան անցած երեկո, երբ ամբողջ դահլիճը լիքն էր: Միստր Մանգոն, միսիս Քոուլը, Աղջիկ մայրիկն ու ես առանձին գլուխ տվեցինք: Հենց որ վերագարձանք մեր հանդերձասենյակը, Աղջիկ մայրիկը էլ վիսկի շիմեց, իմ գրիմը մաքրեց, հետո՝ իրենը, շորներս փոխեցինք ու դուրս եկանք թատրոնից: Բեմո՞ւմ չհավաքվեցինք, բայց հայտարարությունների տախտակին մի երկտող էր կպցրած: Վաղն առավոտյան ժամը տասնմեկին էլի փորձի էինք:

Երրորդ երեկոյան պարտերում նույնիսկ ավելի քիչ մարդ կար, բայց վերնահարկը նորից լեփլեցուն էր, ու մենք խաղացինք առաջվանից էլ լավ, ուղղակի գերազանց: Ես էնպես էի խաղում, որ ամեն ինչ ճիշտ բնականի նման ստացվեր, ու մյուս բոլորն էլ էին ինձ նման խաղում, մանավանդ Աղջիկ մայրիկը: Ծափերի էդպիսի տարափ դեռ ոչ մի ներկայացման վերջում չէր եղել, ու շորս դերակատարներս մեկի փոխարեն երկու անգամ դուրս եկանք գլուխ տալու: Հայտարարությունների տախտակին էլի երկտող էր կպցրած. հաջորդ փորձը վաղն առավոտյան ժամը տասին էր:

Շաբաթ օրվա ցերեկային Ներկայացմանը պարտերը լիքն էր. լրիվ կանայք էին նստած ու երեկոյան ներկայացմանն էլ՝ նույնը, բայց կանանց հետ արդեն տղամարդիկ կային: Ներկայացումից հետո բեմում հավաքվեցինք, ու Մայք Մաքքլեչին ասաց.

— Առաջին շաբաթը բարեհաջող անցավ: Ներկայացումը հետզհետե ավելի կատարյալ է դառնում, բայց մենք դեռևս հեռու ենք հաղթանակից: Թատերախոսականները նկատի առնելով՝ մեր պիեսը բավականին հանդիսատես է հավաքում: Ես գտնում եմ, որ հարկավոր է վաղն էլ փորձ անել, բայց վերջնական վճիռը թողնում եմ ձեր կամքին: Միստր Մանդո, խնդրում եմ խմբի կամքն իմացեք:

Միստր Մանդոն, որը հիսուն տարուց ավել բեմում էր ելել, հերթով նայեց սմեն մեկին, ու բոլորս գլխով արինք:

— Մենք ուզո՞ւմ ենք աշխատել, միստր Մաքքլեչի,— ասաց նա:

— Շատ շնորհակալ եմ, տիկնայք և սյուրոնայք,— ասաց Մայքը:— Ուրեմն՝ փորձը ժամը երկուսին է, այնպես որ բոլորս էլ կարող ենք կուշտ քնել կամ եկեղեցի դնալ: Դե, բարի գիշեր:

Աղջիկ մայրիկն ու ես ոտքով տուն եկանք: Հենց հյուրանոցում, արդեն լույս տեսած կիրակնօրյա թերթերը առանք, որովհետև Աղջիկ մայրիկն ասաց, թե հնարավոր է, որ քննադատները անդրադարձած լինեն մեր ներկայացմանը, բայց ոչ մի թատերախոսական չկա:

Երկուշաբթի Լրեկոյան պարտերի կեսից ավելին էլի դատարկ էր, ու առաջին անգամ՝ վերնահարկի կեսից ավելին էլ: Ներկայացումից հետո Մայք Մաքքլեչին եկավ մեր հանդերձասենյակն ու մի պահ լուռ լավ՝ ասաց.

— Վախենում եմ, որ ստիպված ենք ներկայացումը փակել:

— Ափսոս, Մայք,— ասաց Աղջիկ մայրիկը:— Հազար ափսոս:

— Հույս ունեի, թե կիրակնօրյա թերթերում ներկայացմանը կանդորադառնան, ու այս շաբաթ ավելի շատ հանդիսատես կհավաքենք,— ասաց Մայքը,— բայց տոմսարկղում փող չկա. ոչ մի տեղ էլ չկա:

— Իսկ ֆինանսավորողները:

— Նրանք առաջին ներկայացումը նայել են, թատերախոսականները կարդացել ու Նյու Յորք վերադարձել: Ամեն օր զանգում եմ բոլորին: Չեմ կարողանում նույնիսկ համոզել, որ մի անգամ էլ զան ու ներկայացումը նայեն:

— Մայք,— ասաց Աղջիկ մայրիկը,— խնդրում եմ, միտքս սխալ չհասկանաս: Ես կարծում եմ, որ եթե իմ դերը տայիր մի անվանի դերասանուհու, ամեն ինչ բոլորովին այլ կերպ կդասավորվեր:

— Ես հենց սկզբից էլ կարող էի անվանի դերասանուհու վերցնել,— ասաց Մայքը:— Բայց քե՛զ ընտրեցի:

— Իմ մասնակցությունից ներկայացումը ոչինչ չի շահում: Ես ջանքեր եմ թափում ու կշարունակեմ թափել, բայց արի ճշմարտությունը շիտակ նայենք. իբրև դերասանուհի՝ ես առանձնապես մի բան չեմ:

— Ճիշտ նույն խոսքերը ես լսել եմ մեծ դերասանուհիների շուրթերից, երբ նրանք խաղում էին այս կամ այն պիեսում, որը դուր չէր գալիս քննադատներին,— ասաց Մայքը:

— Իսկ ինչո՞ւ մեր պիեսը դուր չեկավ քննադատներին,— ասաց Աղշիկ մայրիկը:— Ախր դիտենք, որ լավ պիես է, հրաշալի պիես, թերևս՝ մեծատաղանդ: Պիեսը նրանց դուր չեկավ, որովհետև գլխավոր դերերից մեկը՝ իմ դեղը, չի ստացվել: Օ՛, ես խաղում եմ, իհարկե: Ելնում եմ բեմ, տեքստն արտասանում, բայց դերս չի՛ ստացվել, Մայք: Դեռ առաջին ներկայացումից հետո, նախքան թատերախոսականների լույս տեսնելը, ես արդեն ուզում էի թողնել ու փախչել: Եվ կփախչեի, եթե ինձ փոխարինող լիներ: Կներես, Մայք: Ես զգում եմ, որ փշացրի մի հրաշալի պիեսի հաջողությունը:

— Բացարձակապես սխալվում ես,— ասաց Մայքը:— Դու իսկական դերասանուհի ես և քո դերը վարպետորեն ես կատարում: Ես այդ դերի համար ուրիշ ոչ մեկին չէի վերցնի:

— Ինչ արած, շատ զգացված եմ,— ասաց Աղշիկ մայրիկը:

— Ես մազաշափ չեմ զղջում, որ քեզ եմ ընտրել,— ասաց Մայքը:

— Եթե մենք ներկայացումը չփակենք,— ասաց Աղշիկ մայրիկը,— եթե քրտնաջան աշխատենք, եթե երկու շաբաթով գնանք Բոստոն, հաջողության հույս կա՞:

— Սովորաբար նման պարագաներում,— ասաց Մայքը,— ես պատասխանում եմ՝ ոչ, բայց քանի որ խոսքը ա՛յս պիեսի մասին է և այս թատերախմբի, պետք է ասեմ՝ այո: Նույնիսկ հիմա էլ՝ բեմում, պիեսը լավ է նայվում, սակայն ամեն մի պիես պիտի դառնի իր հանդիսատեսներին: Բոլորս գիտենք, որ պիեսը մեծ տպավորություն չթողեց մեր հանդիսատեսների վրա, բայց դրանից շարժե եզրակացնել, թե պիեսն առհասարակ տպավորություն չի թողել հանդիսատեսում նրստածներից ոչ մեկի վրա: Մեր յուրաքանչյուր ներկայացման հանդիսատեսում միշտ էլ բավականաչափ մարդիկ կգտնվեն, որոնց վրա պիեսը մեծ տպավորություն է թողել: Մենք լիովին համոզված ենք՝ պիեսը հաջող գործ է, ուշագրավ թե՛ բեմադրությամբ, թե՛ դերասա-

նական կատարումներով: Պարզապես տեղի՝ հանդիսատեսների մեծա-  
մասնությանը անհամապատասխան է, ահա և ամբողջը: Սա բնավ չի  
նշանակում, որ պիեսը Բոստոնում էլ չեն նայի, կամ ասենք՝ Նյու Յոր-  
քում: Ես ճիշտ հակառակ կարծիքին եմ: Մենք շատ բան սովորեցինք  
ու դեռևս շարունակում ենք սովորել: Փաստը մնում է փաստ, որ հիմա  
մեզ միմիայն փողն է պակասում:

- Դու իրո՞ք էդպես ես կարծում, Մայք:
- Ոչ թե կարծում եմ, այլ գիտեմ:
- Ինչքա՞ն փող է պետք:
- Օ՛, երևի մի քսանհինգ հազար:
- Շատ է:

— Լոկ մի դեպքում. եթե դրա կարիքն ունես, իսկ ձեռքիդ չկա,—  
ասաց Մայքը:— Ինչ խոսք, ես դեռ կփորձեմ մի հնար գտնել: Ոչ մե-  
կին չեմ ասել, որ ներկայացումը փակվելու վտանգի տակ է, բայց իմ  
կարծիքով, բոլորն էլ տեղյակ են: Իսկ քեզ ասում եմ, որովհետև հա-  
վատուցած էի, թե ւյս պիեսը մի մեկնարկ կդառնա քո հետադա վերել-  
քի համար ու հիմա զգում եմ, որ գոր՝դ ձախողեցի:

- Զլինի՞ լուրջ ես ասում, Մայք:
- Ամենայն անկեղծությամբ,— վրա բերեց Մայքը:— Եթե ճիշ-  
տը կուղես, եկա, որ սա՛ քեզ ասեմ:

Մայք Մաքքլենչին ժպտաց ու գլխով արեց Աղջիկ մայրիկին, իսկ  
հետո ասաց.

— Ինչ վերաբերում է քեզ, Լուսերես, ես միշտ խուսափել եմ երե-  
խաների մասնակցությամբ պիեսներ բեմադրելուց, որովհետև շորս  
երեխա էլ ես ունեմ՝ իհարկե, արդեն մեծ, ու երբեք մտքովս չի անցել,  
որ նրանց բեմ թողնեմ: Ցավոք սրտի, շատ մեծարժեք պիեսներ հաճախ  
երեխաների մասին են, իսկ երեխաների դերերը կարող են միայն երե-  
խաները կատարել: Դու միանգամայն համապատասխանում ես քո դե-  
րին և անթերի էլ դերդ կատարում ես. ոչ թե երեխայի չման, այլ ար-  
տիստորեն: Ապրես, շնորհակալ եմ քեզ: Կանցնի մի քանի տարի, ու  
մինչ այս, մինչ այն, այլևս երեխա չես լինի, բայց միշտ կլինես արտիս-  
տիկ և իսկական կին: Բարի գիշեր ձեզ:

Մենք տաքսի նստած հասանք հյուրանոց, տեսնենք Գլեդիսն ու  
Հոբարթը և ախարահում են:

- Զեզ ենք սպասում,— ասաց Գլեդիսը:— Եկեք դնանք, մի կուշտ  
պաղպաղակ ուտենք:

Գնացինք հյուրանոցի ռեստորանն ու բոլորս բաճանով պաղպաղակ

վերցրինք: Նստել էինք, տարբեր բաներից էինք խոսում, բայց բոլորից շատ Գլեդիան էր լեզվին տալիս, Աղջիկ մայրիկին հարցուփորձ անում մայր դառնալու մասին, ուզում ամեն ինչ իմանալ: Թեպետ հետո նա պիեսի մասին էլ հարցրեց, ու Աղջիկ մայրիկը նրան ճիշտը պատմեց:

— Մենք արդեն երեք անգամ ներկայացումը նայել ենք,— ասաց Հորարիթը,— և ամեն անգամ ավելի ու ավելի ենք հավանել:

— Իսկ քննադատները շեն հավանել,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Ապուշներ են,— ասաց Գլեդիսը:— Եվ բացի սրանից, ձեր պիեսը Ֆիլադելֆիային հարմար չի: Նյու Յորքին է հարմար:

— Է՛հ, դժվար թե Նյու Յորքում դա երբևէ տեսնեն,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Ներողություն, ես մի բոսիցի կգամ,— ասաց Գլեդիսը հանկարծ: Նա վեր կացավ ու ռեստորանից դուրս եկավ: Մի հինգ բոպե չկար: Հետո վերադարձավ: Իսկ տասը բոպեից մեր սեղանին մոտեցավ Մայք Մաքքլեչին ու նստեց:

— Ես ուզում եմ փող ներդնել բեմադրության մեջ,— ասաց Գլեդիսը:

— Դուք շատ բարի եք,— ասաց Մայքը,— բայց վախենում եմ, որ ուրիշ ոչ ոք ձեր օրինակին չհետևի, իսկ մեզ մոտավորապես քսանհինգ հազար դոլար է հարկավոր:

— Ես կուզենայի այդքան էլ ներդնել,— ասաց Գլեդիսը:

Մայք Մաքքլեչին կարծես շփոթվեց: Նա առաջին անգամ էր Գլեդիսին տեսնում ու շփտեր ինչ եզրակացնի:

— Չեմ հավատում,— ծիծաղելով ասաց Մայքը:

— Հենց այս երեկո ևս կզանգահարեմ իմ փաստաբանին,— ասաց Գլեդիսը:— Վաղն սոսվոսյան նա այստեղ կլինի, և դուք միասին մանրամասները կքննարկեք:

— Աջակից ֆինանսավորողներին թատրոնում հրեշտակներ են անվանում,— ասաց Մայքը,— բայց դուք հանդիպածս առաջին մարդն եք, որ իրոք հրեշտակի եք նման և ավելի՛ն. հրեշտակի նման էլ վարվում եք:

— Առաջ էդպես չէի,— ծիծաղեց Գլեդիսը:— Վերջերս եմ փոխվել, ամուսնանալուցս հետո:

— Անշուշտ, եթե պիեսը հաջողություն ունենա՝ իմ սպասածի պես,— ասաց Մայքը,— ձեր բախտը կբերի. մի ամբողջ կարողություն կվաստակեք:

— Իմ բախտը միշտ էլ բերել է,— ծիծաղեց Գլեդիսը,— բայց դեռ երբեք այսքան բախտավոր չեմ եղել:



— Օ՛հ,— ասաց Մայքըր:

— Այո,— ասաց Գլեդիսը:— Ես պատրաստվում եմ մայր դառնալ:

— Կարող եմ ավելացնել,— ասաց Հոբարթը,— որ երբ նա մայր դառնա, ես էլ հայր կդառնամ: Տեսնո՞ւմ եք, ես էլ եմ բախտավոր:

Բոլորս զբաղված էինք պաղպաղակի երկրորդ բաժինն ուտելով: Անընդհատ խոսում էինք, խոսում, իսկ հետո Աղջիկ մայրիկն ասաց.

— Ժամանակն է, որ գնանք քնելու:

Մենք բարձրացանք վերև՝ մեր սենյակը, բայց չէինք շտապում անկողին մտնել:

— Գու շես փողմանել պիեսում խաղալուդ համար, չէ՞,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Ոչ:

— Հո չե՞ս շղայնանում վրաս, որ քեզ էլ եմ մեջ դցել:

— Չէ, հա՛:

— Եթե պիեսը հաջողություն ունենա, կուզե՞ս խմբում մնալ. ասենք՝ մի վեց շաբաթ Նյու Յորքում խաղալ կամ գուցեև ավելի երկար:

— Չգիտեմ: Դա պարտադի՞ր է:

— Չէ, ո՞վ ասաց, Գորտուկ, բոլորովին էլ պարտադիր չէ: Իհարկե ոչ: Եթե դու հողնես, մենք ուղղակի Մայքըին կասենք, ու նա որևէ փոխարինող կգտնի: Ճիշտ է, քեզ նմանին երբեք չի գտնի, բայց մեկնումեկը կճարվի:

— Հենց որ Նյու Յորք գնանք, նոր կորոշեմ,— ասացի:

— Ես կյանքումս ինձ չէի ների, եթե ղզայի, որ քեզ ստիպում եմ շուգածդ անել:

— Գիտեմ, Աղջիկ մայրիկ:

Մյուս երեկոյան մենք ամենից լավ խաղացինք: Ներկայացումը վերջացավ թե չէ, Գլեդիսն ու Հոբարթը եկան կուլիսների հետևը, իսկ ավելի ուշ ամբողջ խումբը բեմում հսվաքվեց:

Մայք Մաքքլեչին Գլեդիսին ու Հոբարթին ներկայացրեց, հետո էլ ասաց.

— Մեր ծրագրի համաձայն, պիեսը երկու շաբաթով տանում ենք Բոստոն: Ապա, ինչպես և նախատեսված էր, Նյու Յորքում կցուցադրենք, «Բելասկոյի» բեմում: Իսկ առայժմ ես հեռագրել եմ Ֆիլադելֆիայի բոլոր թատերախոսներին, պնդել, որ վաղը երեկոյան պիեսը մի անգամ ևս նայեն, թեև նոր թատերախոսականները մեզ առանձնակի օգուտ չեն բերի Ֆիլադելֆիայում, որովհետև մեր հյուրախաղերը համարյա ավարտին են մոտեցել: Ես ուղղակի դտնում եմ, որ քննադատները պար-

տավոր են պիեսը նորից նայել. դա նրանց պարտքն է սեփական խղճի առաջ: Նախ՝ ըստ իս, մենք բոլորս կատարելագործվել ենք, բայց այն էլ ասեմ, որ պրեմիերային քննադատները շարդարացրին իրենց: Չեմ կարծում, թե նույնը մեզ է վերաբերում: Նման բաներ երբեմն պատահում են: Ես մեծ հավատ ունեմ մեր պիեսի և ձեռնից յուրաքանչյուրի նկատմամբ: Անշափ երախտապարտ եմ ձեզ բարեխիղճ աշխատանքի համար, երբ ամեն ինչ թվում էր անհույս: Հենց դրանով էլ պրոֆեսիոնալները տարբերվում են ինքնուսներից:

Բոլորը սրտանց հուզված էին: Հաջորդ երեկոյան քննադատները ամենքն էլ եկել էին ներկայացմանը, իսկ մյուս օրը թատերախոսականներ գրեցին թերթերում: Սրանցից Լուսերը լավն էին, բայց մեկն էլի վատն էր: Հեղինակը գրել էր, թե պիեսը չի հավանել առաջին անգամ, իսկ երկրորդ անգամ՝ առավել ևս:

Ինչ որ է, մնացած բոլոր ներկայացումներն էլ անցան լավ լեցուն գահ լիճում:

Շաբաթ երեկոյան, Ֆիլադելֆիայում տված մեր վերջին ներկայացումից հետո, ամբողջ խմբով թատրոնից ուղիղ ճանապարհ վեցինք կայարան՝ գնացք նստելու, իսկ կիրակի օրն արդեն Բոստոնում էինք:

«ԹՌՉԿՈՏՈՂ ԳՆԴԱԿԸ» ԳԱԼԻՍ Է ԲՈՍՏՈՆ

Կիրակի առավոտյան միսս Քրենշոն, Աղջիկ մայրիկն ու ես Բոստոնում դնացիներ եկեղեցի, բայց հետո բեյսբոլի խաղի շգնացիներ, որովհետև ժամը երկուսին «Փլիմութում» փորձի էինք:

Եկեղեցուց վերադարձանք «Ռից» հյուրանոցն ու նախասրահում Գլեդիսին տեսանք:

— Հոբբսը գործ ունի նյու Յորքում, — ասաց նա, — բայց շուտով կգա:

Մենք ճաշեցինք, իսկ հետո ոտքով հասանք «Փլիմութ»: Գլեդիսը՝ ծոցատետրն ու մատիտը ձեռքին, նստեց առաջին կարգում, որ նշումներ անի: Մայքը դնում-գալիս էր շարքերի մեջտեղով, հետևում ամեն ինչին ու մտածմունքի մեջ էր: Էմերսոնն թալին վազվզում էր ամբողջ թատրոնով: Մեկ րեմին էր, մեկ՝ պարտերի խորքում, մեկ էլ՝ վերնահարկում: Չէիր իմանա, թե հիմա որտեղ կհայտնվի: Հանկարծ հեռվից ձայնը մեզ էր հասնում:

— Բա՛րձր, բա՛րձր, — ասում էր նա: — Էստեղից բան չի լսվում:

Բոլորիդ խնդրում եմ հիշել. սա մեծ թատրոն է, Նյու Յորքի «Բեկամկոյի» նման: Մեր լավագույն բարեկամները հենց էստեղ են նստում, ուրեմն եկեք համոզված լինենք, որ մեզ կլսեն:

Օսկար Բեյլին նվագախմբի հետ էր աշխատում, իսկ Ջո Թրեփը՝ բեմի բանվորների ու լուսավորողների:

Բոլորս երջանիկ էինք, որ Բոստոնում ենք, մի նոր ֆաղաքում, որովհետև դա նման էր բախտը երկրորդ անգամ փորձելուն: Մենք երկար աշխատեցինք՝ մինչև ժամը յոթը. այնուհետև մանրասառն խաղում էինք, մշակում:

Հինգին կես ժամով ընդմիջում արինք, և Գլեդիսն իր նշումները կարդաց էմերսոնի, Մայքլի ու միսս Քրենշոյի, Օսկարի, Ջո Խրեփի, Աղջիկ մայրիկի ու ինձ համար: Նրա նշումները շատ խելամիտ էին: Է՛մերսոնն ասաց: Նա Գլեդիսին խնդրեց նշումներն իրեն տալ, որ քրննության առնի: Աղջիկ մայրիկն ու ես Գլեդիսի հետ ման եկանք դատարկ թատրոնում: Գնացինք ճեմասրահ, շորս կողմը մի լավ նայեցինք, իսկ հետո վերադարձանք բեմի հետևը՝ մեր հանդերձասենյակ: Աղջիկ մայրիկն ու Գլեդիսը սուրճ խմեցին, ես էլ՝ մի շիշ կաթ: Նրանք ուրախ էին, որ նորից են քնկերացել:

— Եթե ներկայացումը հիմա էլ ձախողվի,— ասաց Աղջիկ մայրիկը,— երբեք չեմ ների ինձ, որովհետև դու մի ամբողջ կարողություն ես ներդրել:

— Չի ձախողվի,— ասաց Գլեդիսը:— Ոչինչ էլ չի ձախողվի, և թե մտքումդ դնես, որ չնկատեմ է ձախողվի: Ահա թե ինչն է կարևորը: Օրինակ՝ ես, մտքումս դրի, որ ամուսնությունս չպետք է ձախողվի ու չձախողվեց: Իհարկե, ինձ շատ օգնեցին: Ամեն մարդ օգնության կարիք ունի, և շարժի, որ օգնությունից երես դարձնի:

— Է՛հ, մեկը՝ ես, ոչ մի բանով քեզ չեմ օգնել,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ո՞վ է օգնել:

— Չէ, ո՞նց թե, դու էլ ես օգնել,— ասաց Գլեդիսը:— Առաջ ես չէի հասկանում, բայց հետո հասկացա:

— Կե լավ, թող էդպես լինի, եթե ուզում ես,— ասաց Աղջիկ մայրիկը:— Է՞լ ով է օգնել:

- Այ, ասենք՝ Գորտուկը:
- Է՞լ ով:
- Քեյթը:
- Քե՞յթն ինչով է քեզ օգնել:
- Նախ և առաջ՝ նա թողեց, որ ես մինչև վերջ արտահայտվեմ,—

սկսեց Գլեղիսը:— Հետո ասաց՝ անընդհատ խաղում ես, մի բան, որ ինքնին սխալ չէ, ասաց, միայն թե վատ ես խաղում և այդ պատճառով էլ շարունակ անախորժություններ ձեռք ես: Նա ինձ բացատրեց, թե ինչպես պետք է խելացիորեն խաղալ, և դրանից հետո ես էդպես եմ անում: Ասաց՝ հիմա, երբ մայր ես դառնալու, ժամանակն է, որ խելացիորեն խաղաս, հասուն կնոջ պես, ոչ թե շփացած աղջկա: Սկզբում ես վիրավորվեցի, բայց հենց որ տեսա, թե խելացիորեն խաղալիս ինչ լավ եմ զգում ինձ, վիրավորանքս անցավ: Նա ասաց՝ զնա տուն և ամուսնուդ կինը եղիր, ես էլ նրա ասածով արեցի: Հոբարթն էնպես էր ինձ նայում, կարծես առաջին անգամ էր տեսել: Իմ ամուսնությունը արդեն չի ձախողվի, որովհետև ես համոզվեցի, որ չեմ ուզում ձախողվի:

— Հա՛, — վրա բերեց Աղջիկ մայրիկը, — ինչ ասեմ, դու սարսափելի շուտ հասունացար:

— Գու՛ չէ՞:

— Վախենում եմ, որ չէ: Բայց ջանք եմ թափում: Ու անկեղծ ասած, դա բուրոտվին սրտովս չի: Մարդ ձանձրույթից կմեռնի:

Գլեղիսը նայեց Աղջիկ մայրիկին, ու նրանք երկուսն էլ քրքջացին:

— Ես կգժվեմ, — ասաց Գլեղիսը: — Ախր չեմ ուզում խելացիորեն խաղալ: Չեմ ուզում լավ կին լինել: Չեմ ուզում երեխա ունենալ: Սրանք չեն իմ սրտի ուզածը, չէ՛, բայց ի՞նչ անեմ: Խրվել եմ: Է՛հ, շատ տխուր բան է, շատ: Մեկ-մեկ ուզում եմ ոտքերս գետնով տալ, ճշալ, լացս դնել ու ձեռքս ընկածը շարտել, բայց էլ չեմ կարողանում. ուղղակի չեմ կարողանում ու այ, դրանից եմ վառվում: Հոբարթը անհամի մեկն է, դե՛, ես էլ պակասը չեմ, մանավանդ երբ շափից դուրս բարի ու խելոք եմ: Ոչ, սա իսկապես ահավոր բան է, բայց ես ուզեմ-չուզեմ պիտի շարունակեմ խելացիորեն խաղալ, ճիշտ չէ՞:

— Ճիշտ է, ճիշտ, — հաստատեց Աղջիկ մայրիկը: — Ա՛հ, ինչպես ասում են՝ կյանքն էլ հենց դա է:

— Գրող ու ցավ է, թե կյանք է, — ասաց Գլեղիսը: — Սա ոչ մի կյանք էլ չի: Չգիտես ինչ է ու ինձ դուր չի դալիս: Երբեք դուր չի եկել: Ես միշտ ձգտել եմ կյանքին մասնակից լինել, բայց ե՞րբ եմ իսկական կյանք տեսել, որ մասնակից լինեմ: Մինչև հիմա էլ գոյություն չունի:

Ես նրանց վրա շատ ուշք չէի դարձնում: Նստած՝ նայում էի Աղջիկ մայրիկի ալբոմը, որ լիքն էր մեր նկարներով, թերթերից ու հանդեսներից կտրած նյութերով: Ականջիս ծայրով էի նրանց ասածները լսում: Չայներից զգում էի՝ երկուսն էլ ուրախ են, իսկ ամենակարևորը դա էր, բայց հետո ես վերջ տվի ալբոմը նայելուն: Նրա՛նց նայեցի: Երկուսն

էլ փոքրիկ աղջիկներ ի էին նման, որ կարծես մեծացել են, բայց դեռ փոքր են: Երկուսն էլ արդեն երեսուներեք տարեկան էին, բայց դեռ իրոք մեծ չէին: Խոսում էին, ծիծաղում, բայց սրտի խորքում ոչ մեկն էլ ուրախ չէր:

— Բա լավ, իսկական կյանքը ո՞րն է,— հարցրի Գլեդիսին:

— Է՛, Գորտուկ,— ասաց Գլեդիսը:— Այ, դա է ամբողջ հարցը: Ես չգիտեմ: Ոչ ոք էլ չգիտի, եթե ճիշտը խոստովանենք: Թերևս բոլոր պիեսներն ու վեպերը, բոլոր օպերաներն ու սիմֆոնիաները, բոլոր նկարներն ու մնացածը դրա մասին են: Ու բոլորն էլ ստեղծվում են, որովհետև ամեն ոք ուզում է կյանքին մասնակից լինել, բայց չգիտի կյանքը որն է: Քանի փոքր ես, մտածում ես, թե շուտով կիմանաս, ասենք՝ եկող տարի, կամ երբ տասնվեցդ լրանա, կամ էլ անկասկած, երբ սիրահարվես, երբ մի տղա խենթի պես տարվի քեզանով ու համբուրի քեզ, բայց նույնիսկ այդ ժամանակ էլի չես իմանա: Նույնիսկ այդ ժամանակ դա դեռ իսկական կյանքը չի, այլ չգիտես ինչ:

— Օրինակ՝ ի՞նչ,— ասացի ես:

— Նորանոր սխալներ,— ասաց Գլեդիսը:— Նոր խոսվք, նոր ցավ ու էլի նորանոր բաներ, որ կուզենայիր վոխված տեսնել: Օ՛, ամեն բան փոխվում է, ինչ խոսք: Անընդհատ փոխվո մ է, բայց շարունակ վատեց՝ դեպի ավելի վատը, երբեք չես տեսնի, որ լավից փոխվի դեպի ավելի լավը, կամ ավելի լավից՝ ամենալավը, եթե միայն դու ստախոս չես, եթե չես կարող ինքդ քեզ խաբել, ինչ որ ես միշտ վոքձել եմ անել, բայց չի հաջողվել:

— Է՛հ, դուք ցնդել եք, երկուսդ էլ՝ ցնդել,— ասացի ես:

Գլեդիսն ու Աղջիկ մայրիկը ուրախ քրքջացին, հետո Գլեդիսն ասաց.

— Դու էլ դրանում կհամոզվես, Գորտուկ: Սպասիր՝ կտեսնես:

— Ինչի՞ս է պետք, որ սպասեմ,— ասացի:— Ինձ էսպես էլ է ամեն ինչ դուր գալիս:

— Իրո՞ք,— ասաց Աղջիկ մայրիկը:— Հենց էսպե՞ս:

— Հա՛: Հենց էսպես,— ասացի:

— Ուրեմն քեզ դո՞ւր է գալիս, որ եկել ես Բոստոն՝ պիեսում խաղալու:

— Սյո, դուր է գալիս:

— Ինչո՞ւ:

— Որովհետև եկել եմ Բոստոն՝ Պիեսում խաղալու: Ինչո՞ւ պիտի դուր չգար:

— Իսկ քեզ դո՞ւր էր գալիս, որ Ֆիլադելֆիայում էիր:

— Այո:

— Թեկուզև պրեմիերայի երեկոյան հանդիսատեսները ոչ պիեսը հավանեցին, ոչ մե՞զ: Թեկուզև քննադատները շասացին, որ դու հիանալի՞ ես խաղում, շնայած դա էդպես է:

— Հա՛, թեկուզ:

— Բայց ինչո՞ւ, Գորտուկ: Եթե իհարկե, դու ճիշտ ես ասում:

— Որովհետև ես գիտեմ, որ շեմ կարող եմ ուզածն անել:

— Իսկ ուզածդ ի՞նչ է:

— Գե, ես անընդհատ Մաքրրոնի Լեյնն եմ հիշում, մեր թաղի երեկսերին ու կուզեի նրանց հետ լինել, բայց նրանց հետ չեմ, ուրեմն մնում է ուրախանամ, որ էստեղ եմ: Մեկ է՝ ես էլի առաջվանն եմ, հո մի ուրիշը չեմ:

— Էլ ի՞նչ կուզեիր, — հարցրեց Աղջիկ մայրիկը:

— Սմենից շատ կուզեի Փարիզում լինել՝ հայրիկի ու եղբորս հետ:

— Որ ի՞նչ անեիր:

— Լողակի որ էստեղ լինեի:

— Առանց ի՞նձ:

— Ես էստեղ առանց հայրիկի եմ, — ստացի, — ու հարմարվել եմ: Կարող էի նրա հետ էլ առանց քեզ լինել ու էլի հարմարվել, չէ՞:

— Ա՛խ, դու ատելի, — ծիծաղեց Աղջիկ մայրիկը: — Այ, տես, — ասաց նա Գլեդիսին, — սա է երևեսան:

— Բայց ամենից ավելի կուզեի, — ասացի ես, — որ մենք շորսս էլ միասին լինեինք՝ մեր տանը, ու հետո կուզեի շատանանք. մի փոքրիկ եղբայր ունենայի ու մի փոքրիկ քույր:

— Օհո՛, իսկապե՞ս:

— Հա՛, հենց էլ իսկապես:

— Չէ, շատ կներեք, — ասաց Աղջիկ մայրիկը, — դա արգեն եղելվերջացել է ու ինձ համար չէ:

— Բա ի՞նչն է քեզ համար:

— Գլուխս մի տար, — ասաց Աղջիկ մայրիկը: — Դու գիտես, որ ինքս էլ չգիտեմ, ինչո՞ւ ես հարցնում: Ինչ-ինչ, համենայն դեպս, դա ինձ համար չէ: Եվ իմ կարծիքով, գործի անցնելու ժամանակն է:

Մենք գնացինք բեմ, իսկ Գլեդիսը վերադարձավ դա՛լիճ՝ իր տեղը: Էմերսոն Թալին Գլեդիսի նշումներն աչքի անցնեացրեց, ու մենք փորձը էլի սպսեցինք:

Պիեաի մեացած մասն էլ խաղացինք, իսկ երկուշաբթի առավոտ-  
յան ամբողջ պիեսը՝ սկզբից մինչև վերջ, նորից փորձեցինք:

Ես դերս էնպես էի սերտել, որ առանց մտածելու կարող էի խաղալ, բայց ո՞նց կլինեիր առանց մտածելու. ախր տեսնում էի, թե միստր Մանգոն ու միսիս Քոուլը՝ մեր խմբի ամենափորձված դերասանները, ինչպես են անվերջ աշխատում իրենց դերերի վրա: Նրանք նոր-նոր բաներ էին հորինում ու նախ՝ առանձին, հետո էլ՝ միասին փորձում: Պիեաի մեջ միսիս Քոուլը պապիկի ընկերուհին էր. նա ուզում էր, որ պապիկը ամուսնության առաջարկ անի իրեն, որովհետև մենակ էր ու զիտեր՝ պապիկն էլ է մենակ: Նրա հետ պապիկը միշտ սիրալիր էր, բայց սիրտ չէր անում առաջարկել, որ իր կինը դառնա: Միսիս Քոուլը անընդհատ խոսում էր պապիկի կնոջ մասին, որը վաղուց էր մեռել, պապիկն էլ անընդհատ խոսում էր նրա ամուսնու մասին, որն իր ամենամոտ ընկերն էր եղել, բայց բաժանվել էր կնոջից ու ինչ-որ տեղ մեկնել:

Երկուշաբթի օրը փորձը վերջացավ ցերեկվա ժամը չորսին:  
Բոլորը հուզված էին, երջանիկ ու վստահ:

Երկուշաբթի երեկոյան լեփ-լեցուն դահլիճում պիեսը խաղացինք:

Ոչ ոք իր դերը չմոռացավ, ոչ ոք սխալ չարեց, իսկ հանդիսատես-  
ների վերաբերմունքը ջերմ բարեկամական էր:

Վերջում մեզ անդադար կանչում էին բեմ, ու դա առաջին ներկա-  
յացումն էր, որ Աղջիկ մայրիկն ու ես առանձին գլուխ տվինք. ուղիղ  
երեք անգամ:

Ներկայացումից հետո շատ հանդիսատեսներ եկան բեմի հետևը, ու  
բոլորն էլ ասում էին, որ հրաշալի ներկայացում էր:

Կարձեա մի մեծ ընտանիք լինեինք:

Մայք Մաքքլեյին մտավ մեր հանդերձասենյակը, իսկ նրանից հե-  
տո՝ էմերսոն Թալին, Քեյթ Քրենշոն, Օսկար Բեյլին, Ջո Թրեփը, միստր  
Մանգոն ու միսիս Քոուլը:

Ամենքն էլ ասացին, որ Աղջիկ մայրիկն ու ես շտենսված ենք խա-  
ղացել: Ասացին՝ հենց դրա համար են հանդիսատեսները մեր ներկա-  
յացումը հավանել:

Մյուս օրն Աղջիկ մայրիկը բոստոնյան թերթերի թատերախոսա-  
կանները կարդաց: Բոլորն էլ դրական էին: Բոլորի մեջ ասվում էր, որ  
Աղջիկ մայրիկը ուղղակի հոյակապ է: Ասվում էր՝ թեև իմ դերը երկար  
է ու դժվար, բայց ես լավ եմ խաղում, իսկ Աղջիկ մայրիկը աստղ դառ-

նալու ճանապարհին է, և վերջիվերջո, նրանից մեծ դերասանուհի դուրս կգա:

Նա շշմած էր մնացել:

Ինքն ու Գլեդիսը մի կուշտ խոսեցին. իրենց վաղուց անցած մանկությունն էին հիշել:

Դրանից հետո ինձ համար հեշտ էր ամեն երեկո իմ դերը խաղալ, իսկ շորեքշաբթի ու շաբաթ օրերը՝ դեռ ցերեկներն էլ: Լրիվ խաղ ու սլար էր: Եթե մի բան թեկուզ ուրիշ ձևով էի ասում՝ փոխանակ իմացածիս պես ասեմ, մեկ է, էլի լավ էր ստացվում: Ու թվում էր՝ ոչ մի սխալ չեմ կարող անել:

Մի երեկո, երբ իմ կարծիքով լիքը սխալներ արի, միստր Մանգոն ասաց, որ ավելի լավ երբեք չեմ խօսացել: Էլ նեղված ու կաշկանդված չէի, ոնց որ Ֆիլադելֆիայում, իսկ էնտեղ պետք է շատ ու շատ աշխատեի, այնինչ չէի ուզում: Ես համարյա մոռացել էի պիեսի գոյությունը, մոռացել, թե ինչն ինչոց է: Արդեն քանի-քանի անգամ դերս խաղացել էի ու ջրի պես գիտեի. դա ինձ համար արդեն զբոսանքի նման էր, երբ գնում ես ման գալու, հետո վերադառնում ու չես էլ հիշում, թե ինչ ես տեսել ճամփին, նույնիսկ զբոսանքի գնալդ չես հիշում, որովհետև անընդհատ ուրիշ մտքերով ես տարվել:

Մի երեկո էլ, գլուխ տալիս, վարագույրը իջավ թե չէ, միստր Մանգոն ինձ ասաց.

— Ես կարող էի քեզնից խաղարվեստի դաս առնել, Լուսերես:

Շենց որ վարագույրը նորից բարձրացավ ու իջավ, նա ավելացրեց.

— Դու այնպես ես խաղում, կարծես բոլորովին բեմում չլինես, ու ես էլ պիտի փորձեմ դա սովորել:

Նա շատ դուրեկան ծերուկ է ու միշտ պար է գալիս բեմի հետևվում, ոնց որ էստրադային ներկայացումներում է պարել, երբ թատրոնի ամենամեծ աստղերից մեկն էր: Պարելիս նա ասես փոխվի, էնպես ջահել ու կայտառ է թվում. ոտքերով կտկտացնում է ու պտտվում, կատակներ անում ու երգում: Ես անչափ ուրախ եմ, որ հանդիպեցի նրան:

Մեր հյուրախաղերը Բոստոնում իսկական հաջողութուն ունեցան: Լրագրողները իրար հերթ չէին տալիս, Աղջիկ մայրիկի ու ինձ հետ հարցազրույցներ էին անցկացնում, մեզ հրավիրեցին տարբեր ռադիո-հաղորդումներում ու հեռուստատեսային ծրագրերում հանդես գալու, որ պատմենք պիեսի, մեր մասին ու ներկայացման մյուս մասնակիցների մասին:



Բոստոնյան թերթերի թատերախոսականները կարդալուց հետո, նյույորքցի ֆինանսավորողները իսկույն հասան Բոստոն: Նրանք հարցուփորձ էին արել Մայքին, թե կարելի՞ է փող ներդնել ներկայացման մեջ: Մայքն ասել էր, որ Գլեդիսին դիմեն, որովհետև ամենաշատ փողը նա էր ներդրել ու փուստորեն ներկայացման տերն էր, եթե Մայքին չըհաշվեինք: Գլեդիսը Աղջիկ մայրիկին հարցրեց, թե իր ներդրածի մի մասը շահույթով չվաճառի՞, Աղջիկ մայրիկն էլ ասաց.

— Խելքդ թոցրե՞լ ես, ինչ է: Իհարկե չէ: Քո տեղը լինեի, հետները նույնիսկ մի բառ չէի խոսի: Դեռ Մայքի հրավերքին դրանց ատեցի, իսկ հիմա ավելի եմ առում: Ամոթից զուրկ են: Ո՛նց էլ երեսները բռնում է, գալիս, քեզ խնդրում են, որ ներդրածիդ մի մասը վաճառես:

— Դե ուրեմն,— ասաց Գլեդիսը,— ես ոչ մի բառ չեմ խոսի:

«Լայֆի», «Լուքի» պես մեծ հանդեսների թղթակիցներն ու լուսանկարիչները եկան Բոստոն, բոլորիս հետ զրույց ունեցան ու մեզ նկարեցին:

Էմերսոն Թալին, որ անդադար լարված աշխատում էր, սկսեց խմել ու միշտ մի թեթև հարբած էր երևում Բայց էյի ամեն օր նույն թափով աշխատում էր: Բոստոնյան հյուրախաղերի ժամանակ մենք առաջվա նման ջանք չէինք խնայում, որ ներկայացումը ավելի ու ավելի լավը դարձնենք: Էլ երկար ու ձիգ փորձեր չէինք անում, բայց շարշարվում էինք պիեսի առանձին կտորների վրա, որոնք, միսս Քրենշոյի, Մայքի ու Էմերսոնի կարծիքով, հարկավոր էր մշակել: Ամեն մի ներկայացում նախորդից տարբեր էր ու մի քիչ ավելի լավը:

Մի օր ցերեկը, երբ Էմերսոնն աշխատում էր միստր Մանգոյի ու Աղջիկ մայրիկի հետ, բեմով անցնելիս՝ հանկարծ վայր ընկավ: Միստր Մանգոն ու Աղջիկ մայրիկը փորձեցին նրան օգնել, որ վեր կենա, բայց չկարողացան: Մայք Մաքքլեյին վազեվազ վրա հասավ, Էմերսոնին ոտքի կանգնեցրեց, իսկ հետո նստեցրեց աթոռին: Էմերսոնն ինքը մնացել էր ապշած:

Մայքն ասաց.

— Խնդրում եմ, մեկնումեկդ բժիշկ կանչեք, հա՞:

Էմերսոնն էլ ասաց.

— Պետք չէ, Մայք, ուղղակի խմած եմ, ուրիշ ոչինչ:

Բայց Մայքը նրան շթողեց վեր կենա ու նորից գործի անցնի: Գլեդիսը վազեց հեռախոսի մոտ, զանգեց Հոբարթին, իսկ նա արդեն եկել էր Նյու Յորքից ու մի տասը րոպե անց ներս մտավ թատրոն, մոտե-

ցավ բեմում նստած էմերսոնին ու սնտեց քննել որան: Լսափողակով լսեց: Զարկերակը շափեց ու լապտերիկի լույսով աչքերն ստուգեց:

Հետո Մայքին ասաց.

-- Ուժերի անկում:

— Դուք համոզված եք,— ասաց Մայքը: — Ինձ թվաց սրտի նույնի է նման:

— Ես շատ եմ խմել, ուրիշ ոչինչ,— ասաց էմերսոնը:

— Ինչ-որ հատուկ առիթով,— հարցրեց Հոբարթը:

— Այո,— ասաց էմերսոնը:— Մա իմ առաջին պիեսն է: Մտքովս երրիք չէր անցնի, թե ինքս էլ կբեմադրեմ: Խմել եմ, որովհետև ահավոր հոգնած եմ ու օ ագնապած:

— Չե ք կարծում, որ ժամանակն է վերջ տալ մտահոգվելուն ու հանգստանալ:

— Դա անհնար է մինչև նյույորքյան պրեմիերան,— ասաց էմերսոնը:— Իսկ ի՞նչ կա: Չի՞ կարելի մտահոգվել: Ես քսանյոթ տարեկան եմ: Թատերադրի իմ ամբողջ վարկը բախտախաղի է դրված: Ես չեմ ուզում հանգստանալ, քանի դեռ դրա իրավունքը չունեմ:

— Մայք,— ասաց Հոբարթը,— հենց ներկա վիճակով պիեսը բավական հաջող չէ:

— Հաջողն ու անհաջողը թող էմերսոնը որոշի,— ասաց Մայքը:— Իր պիեսն է, ինքը գիտի: Նախ և առաջ՝ նա հիանալի պիես է գրել և հետո՝ բեմադրական վիթխարի աշխատանք կատարել: Ես չեմ ճանաչում ուրիշ ոչ մեկի, որը կարողանար այդպես դերազանց աշխատել: Եթե նա այսքան բանի է հասել, ես չեի ուզենա, որ աշխատանքը դադարեցնի:

— Շատ բարի,— ասաց Հոբարթը,— այդ դեպքում այսօր դուցե էլ շաշխատե՞ք:

— Չէ, ես արդեն կարգի ընկա,— ասաց էմերսոնը:

— Ավելի լավ է մինչև օրվա վերջը հանգստանաք,— ասաց Հոբարթը:— Ես կուզեի, որ տուն դնաք ու ներկայացման մասին ամեն ինչ մոռանաք: Թերևս մի բաժակ էլ խմեք և անկողին մտնեք: Քուններդ առեք: Երբ արթնանաք, որևէ ապուր կերեք ու մի կտոր տապակած միս: Իսկ վաղվա համար դեռ կմտածենք:

— Իրո՞ղը տանի,— ասաց էմերսոնը,— ես հիվանդ չեմ: Ուղղակի բոստոնյան թատերախոսականներից հետո քիչ-քիչ սկսեցի խմել:

— Ուրեմն էսպիես,— ասաց Մայքը:— Բոլորը շտ՞ամ են. այսօր քավական է: Երեկոյան ես սովորապեսի նման, և առաջին կարգում նրս-

տած՝ ներկայացումը կնայեմ: Վստահ եմ, որ այսօրվանը նախորդների համեմատ ամենահաջողն է լինելու:

Բոլորը ցրվեցին, բայց Աղջիկ մայրիկն ու ես մնացինք: Օսկար Բեյլին էմերսոնին ասաց.

— Կսիր, ես էլ եմ մի քիչ խմել: Ի՞նչ կարծիքի ես, եթե մինչև «Ռից» հանգիստ քայլելով գնանք ու բժշկի պատվիրածն անենք:

Օսկարն ու էմերսոնը միասին դուրս եկան թատրոնից, իսկ հետո Մայքը դիմեց Հոբարթին.

— Դե, հիմա ասեք տեսնենք:

— Ըստ երևույթին, սրտի նոպա էր,-- ասաց Հոբարթը,-- բայց ես մտածեցի, որ առայժմ պետք չէ նրան տեղյակ պահել: Փաստորեն նա ուժեղի անկման նշաններ էլ ունի և իմ համոզմամբ, վերջերս վատ է սնվել: Սա շատ անխոհեմ վարք է նույնիսկ այն մարդու համար, որը մտադիր է իր պիեսը նյույուրքյան բեմ հասցնել: Իհարկե, ավելի ուշ ես նորից կքննեմ նրան:

— Դուք իսկապե՞ս ուզում էիք, որ նա մի բաժակ էլ խմի,-- ասաց Մայքը:

— Ոչ, բայց ես չէի ուզի, որ ինչ-ինչ կտրուկ փոփոխություններից նրա վիճակը վատթարանա: Պետք է աստիճանաբար՝ իրեն հավաքի: Ես այն տեսակետին եմ, որ եթե ինձ չկանչեիք, ընդհանրապես, եթե բժիշկ չկանչեիք, և նա էսպես ասած՝ իր հույսին մնար, ինքնուրույն էլ ուշքի կգար: Նման մեղմ նոպաներն ավելի հաճախ են պատահում, քան մեղքից շատերը պատկերացնում են: Քուլեջում սովորելիս, մի անգամ էլ ինձ հետ պատահեց, թեև, իհարկե, այն ժամանակ ես գլխի չընկա: Նա պինդ է ու քաջաոռոջ, սակայն կարիք չկա ուսերը չափից դուրս ծանրաբեռնել:

— Ախր նա կուզենա երեկոյան ներկայացումը նայել,-- ասաց Մայքը:

— Ես կնախընտրեի, որ չնայեր, բայց եթե պարտադիր է, թող հայի:

— Դուք նրան հանգստաբեր կտա՞ք:

— Ոչ, սա տանան տանի,-- ասաց Հոբարթը:-- Դա հիստերիկ կանանց համար է:

Դլեդիսը նայեց Աղջիկ մայրիկին: Զղայնացած էր, բայց Աղջիկ մայրիկը միայն ժպտաց ու վերջ:

— Վստահ եք, որ նա պարզապես հարբած չէր,-- ասաց Մայքը:

— Միանգամայն,-- ասաց Հոբարթը,-- բայց մեզնից ոչ ոք չի կա-

րող որևէ բան անել, նույնիսկ ես՝ բժիշկս. մնում է հուսալ, որ էմեր-  
սոնն ինքը կհոգա իր մասին: Բոլորիս նման, ի՛նքը կպարզի, թե իր  
սահմանափակ հնարավորությունները ինչպես համադրի իր իսկ նկատ-  
մամբ ունեցած պահանջմունքների հետ: Ֆիլադելֆիայից սկսած, նա այն-  
պես է աշխատել պիեսի վրա, որ ես կասեի՝ հրաշքներ է դործել: Ան-  
ցած երեկոյան ներկայացումը կրկին նայեցի. իմ կարծիքով, ուղղակի  
անթերի է: Բոլորդ էլ հրաշքներ եք դործել, բայց պետք է սովորեք նաև  
ինքներդ ձեզ շկործանել:

— Ինչ է, ուզում եք բոլորիս քննե՞լ,— ասաց Մայքը:

— Օ՛, ոչ, — ասաց Հոբարթը:— Ձեր բոլորի վիճակն էլ շատ լավ  
է: Դուք լիովին առողջ եք:

— Ես վերջերս գլխացավ ունեի,— ասաց Մայքը:

— Հետո՞ ինչ,— ասաց Հոբարթը:— Ձէ որ տքնաջան աշխատել  
եք: Մի մտածեք գլխացավի մասին:

Մենք միասին դուրս եկանք թատրոնից ու ոտքով հաստնք «Ռից»:  
Ճանապարհին Գլեդիսը մի քիչ Հոբարթի հոգին կերավ հիստերիկ կա-  
նանց տրվող հանգստաբերի համար, բայց ուրախ էր, որ նա վերադար-  
ձել է Նյու Յորքից, ուրախ, որ նա իր ամուսինն է, ոչ թե առաջվա պես՝  
անձնական բժիշկը Հոբարթն էլ էր ուրախ:

Մեզ մնացել էր ընդամենը չորս ներկայացում տալ Բոստոնում.  
հենց նույն երեկոյան, հետո՝ ուրբաթ երեկոյան, շաբաթ օրը՝ ցերեկն ու  
էլի երեկոյան, իսկ հետո մեր խումբը գնալու էր Նյու Յորք:

էմերսոն Թալին հինգշաբթի օրվա ներկայացումը չնայեց, բայց  
ամբողջ ուրբաթ օրը աշխատեց՝ առավոտյան ժամը տասից մինչև երե-  
կոյան վեցը: Մենք պիեսը ծաշրից ծայր խաղացինք:

— Սա մեր վերջին հնարավորությունն է,— ասաց էմերսոնը բո-  
լորիս՝ փորձն սկսելուց առաջ:— Եկեք սկզբից խաղանք, շտապելու  
ոչինչ չունենք: Ամեն անգամ խաղացվելով՝ ներկայացումը նոր թափ է  
առնում, և նրա արժանիքները ավելի հստակ են գծագրվում. այդպես  
էլ պետք է:

Փորձի ավարտին նա ասաց.

— Դե, ահա և վերջ՝ մինչև երկուշաբթի օրվա ժամը տասը, Նյու  
Յորքի «Բոլյասկո» թատրոնում: Կիրակի բոլորս կհանգստանանք: Իսկ  
երկուշաբթի շեշտը կդնենք դեկորների, լուսավորման ու երաժշտության  
վրա, այնպես որ գործնականում սա մեր վերջին փորձն էր նախքան  
Նյույորքյան պրեմիերան: Ես բոլորիդ լոկ մի բան կասեմ, դուք հիաս-  
քանչ էիք: Ջանադիր աշխատել եք: Ես պատիվ եմ համարում, որ խա-

դում եք իմ պիեսում, պատիվ եմ համարում, որ համագործակցել եմ ձեզ հետ: Խորին շնորհակալություն, տիկնայք և պարոնայք:

Շաբաթ առավոտյան էմերսոնն ու Մայքը հետ դարձան Նյու Յորք, իսկ երեկոյան, վերջին ներկայացումից հետո, մենք թատրոնից ուղիղ մեկնեցինք կայարան ու գնացք նստեցինք: Կիրակի առավոտյան արդեն Նյու Յորքում էինք:

## ԻՍԿԱԿԱՆ ԽԱՂԸ

Աղջիկ մայրիկն ու ես վերադարձանք «Պիեո», բայց Ձ109-րդ սենյակը վերցնելու փոխարեն շատ ավելի մեծ մի սենյակ վերցրինք՝ հրկու մահճակալով:

Դեռ գնացքում Աղջիկ մայրիկը խոսք բացեց դրանից, միսս Քրենշոն էլ ասաց.

— Փոքրիկ սենյակը իր նպատակին ծառայել է, իսկ հիմա ձեզ ավելի մեծն է հարկավոր: Եթե պիեսը հաջողություն ունենա, կարելի է տեղափոխվել մի ուրիշ հարկաբաժին, որն իրոք հարմարավետ լինի:

— Եթե՞,— ասաց Աղջիկ մայրիկը:— Եթե պիեսը հաջողություն ունենա: Ուրեմն՝ հաջողությունը դեռևս հարցակա՞ն է:

— Մեր պիեսի հաջողության հեռանկարներն ակնհայտ են,— ասաց միսս Քրենշոն,— բայց իհարկե, Նյու Յորքում, մինչև առաջին ներկայացումն ու թատերախոսականները չլինեն, անհնար է որևէ պիեսի մասին պնդել, թե հաջողություն կունենա: Նյույորքյան առաջին ներկայացումից հետո ամեն ինչ պարզ կդառնա: Եթե մենք լավ ներկայացում տանք, այսինքն՝ եթե պրեմիերային եկած հանդիսատեսն ինքը մեզ հնարավորություն ընձեռի լավ ներկայացում տալ, եթե իր աջակցությամբ քաջալերի, այդ դեպքում, իմ կարծիքով, պիեսը հաջողություն կունենա: Չեմ պատկերացնում, թե այլ կերպ ստացվի: Ներկայացումը ավելի հոյակապ դուրս եկավ, քան ես ենթադրում էի: Էմերսոնը ռեժիսորական ստեղծագործ աշխատանքի փայլուն օրինակ դրսևորեց:

— Իսկ կա՞ մի բան, որի մասին ես պետք է մտածեմ կամ աշխատեմ հղկել,— ասաց Աղջիկ մայրիկը:

— Բացարձակապես ոչինչ,— ասաց միսս Քրենշոն:— Եթե նույնիսկ լինեք, ես չէի թողնի, որ նորից տքնեիր: Անշուշտ, միշտ էլ հարկ է տքնել, և դու, անշուշտ, պիտի տքնես, բայց ես ջանացել եմ քեզ սո-

վորեցնել, որ տքնանքդ թաքցնես, իսկ դու հիանալի յուրացրել ես դա: Անհանգի՞ստ ես:

— Մահու շափ վախենում եմ,— ասաց Աղջիկ մայրիկը:— Հիմա կվերադառնամ,— հանկարծ ասաց նա:

Տեղից վեր կացավ ու գնաց:

— Դո՞ւ ինչ կասեիր, Լուսերես,— հարցրեց միսս Քրենշոն:— Դու է՞լ ես անհանգիստ:

— Դե՛... ես կուզեի, որ պիեսը հաջողութիւն ունենա,— ասացի:

— Ինչո՞ւ,— հարցրեց միսս Քրենշոն:

— Ինչո՞ւ,— ասացի:— Զարմանալի հարց է:

— Ոչ,— ասաց միսս Քրենշոն:— Իհարկե, բոլորս էլ կուզեինք, որ պիեսը հաջողութիւն ունենա, բայց ինձ հետաքրքրում է, թե դո՞ւ ինչու ես ուզում: Հենց դու:

— Որովհետև բոլորը երջանիկ կլինեն, իսկ երբ բոլորը երջանիկ են, ինձ ավելի են դուր գալիս:

— Ուրիշ պատճառ չկա՞:

— Դե, եթե պիեսը հաջողութիւն ունենա, ուրեմն հենց որ ուզեմ, խմբից դուրս կգամ, ու դա անշնորհք բան չի լինի:

— Օ՛,— ասաց միսս Քրենշոն:— Նշանակում է՝ դու չէի՞ր ցանկանա անշնորհք բան անել:

— Չէ՛:

— Իսկ ի՞նչ ես կարծում, կուզե՞ս խմբից դուրս գալ:

— Հաստատ չգիտեմ, բայց եթե պիեսը հաջողութիւն ունենա, ու ես ուզեմ խմբից դուրս գալ, գոնե կիմանամ, որ կարող եմ. ես էլ դա եմ ո գում իմանալ:

— Ասենք՝ դուրս եկար, ի՞նչ ես անելու:

— Առանձնապես ոչինչ: Կգնամ դպրոց, ինձ համար կխաղամ, դպրոցից կգամ տուն ու կընթրեմ, գիրք կկարդամ ու հեռուստացույց կնայեմ: Էլ ի՞նչ պիտի անեմ: Եթե պիեսը հաջողութիւն ունենա, ես հենց որ ուզեմ, իրոք կարող եմ խմբից դուրս գալ, չէ՞:

— Ինչպե՛ս չէ, Լուսերես,— ասաց միսս Քրենշոն:— Դերն արդեն մշակված է ու ձևավորված, կարելի է մի ուրիշին սովորեցնել, որ խաղա, բայց վախենում եմ ոչ ոք էլ չկարողանա քեզ նման խաղալ:

— Ընկերուհիս՝ Դեբորա Շլոմբը, ինձնից լավ կխաղա:

— Այդ կարծիքի՞ն ես: Եվ ո՞վ է Դեբորա Շլոմբը:

— Իմ ամենամոտիկ ընկերուհին, Կալիֆոռնիայից: Ես գիտեմ՝ նա ինձնից լավ կխաղա, որովհետև մենք միշտ ներկայացումներ էինք տա-

լիս, ու Դեբբ միշտ էլ ավելի լավ էր խաղում: Նա բոլորից սիրուն է ու գիտի ամենից լավ խաղալու ձևը:

- Իսկ ի՞նչ ներկայացումներ էիք տալիս:
- Իմ ու Դեբի հնարածները:
- Մեր պիեսի նմա՞ն:

— Չէ, չէ: Ավելի շուտ «էննի Օուբլիի» նման, երբ նա կանգնում է ձիու թամբին, միանգամից երկու ատրճանակով կրակում ու հետո ավազակներին գերի վերցնում:

— Է՛հ, ինչ արած, եթե դու որոշես խմբից հեռանալ, երևում է մենք ստիպված Դեբին պիտի կանչենք:

- Նա չի գա:
- Չի՞ գա:
- Ո՛չ: Մայրիկը թույլ չի տա:
- Ինչո՞ւ:

— Ախր պարզ չի՞, նրանք ասլրում են էնտեղ: Բոլորն իրար հետ: Դեբի հայրիկն ու մայրիկը, նրա մեծ ու փոքր եղբայրներն ու փոքրիկ քույրը: Շուտով էլի մի պատվիկ կունենան: Դեբը ինչ-որ պիեսի համար նրանց չի թողնի գա, մեկ է՝ իր պիեսներում անընդհատ խաղում է, էլ ինչի՞ն է պետք:

— Այո, երևի չգա,— ասաց միսս Քրենշոն:— Բայց այդ դեպքում միգուցե դո՞ւ շուզես մեր խմբից հեռանալ:

— Չգիտեմ,— ասացի:— Խմբի հետ ուրախ է, ու ես շատ լավ-լավ մարդկանց ճանաչեցի, իսկ առաջ նույնիսկ չէի պատկերացնի, որ նրանց պես մարդիկ կան, բայց ես չեմ ուզում մեծանալուց հետո դերասանուհի դառնալ:

- Չե՞ս ուզում: Ինչո՞ւ:
- Դե, չեմ ուզում ու վերջ:
- Իսկ ի՞նչ կուզեիր դառնալ:

— Սկզբում՝ իհարկե, բեյսբոլի գնդակ նետող: Ուզում եմ գոնե մի ուժեղ մրցաշրջան գնդակ նետող լինել. ա՛խ, մի քսան հաղթանակ տանեինք թեկուզ մեկ-երկու պարտության դիմաց, կամ էլ ոչ մի անգամ չպարտվեինք: Իսկ հետո ես կուզեի ամուսնանալ ու ընտանիք կազմել:

— Լուսերես, գնդակ նետելն էլ է նշանակում խաղալ, իր դերը կատարել:

— Բայց բեյսբոլի դաշտում, իսկակա՛ն խաղի մեջ: Ա՛յ, խաղը բեյսբոլն է. երբեք նույնը չի, միշտ էլ տարբեր է, ու ոչ ոք ոչ մեկին

ասելու բան չունի: Ուզողակի դուրս ես գալիս դաշտ, քո տեղը կանգնում ու գնդակը նետում: Կամ մականով խփում: Կամ պատրաստ սպասում ես գնդակը բռնելուն: Կամ էլ փոխանցում: Բեյսբոլը հրաշալի խաղ է:

— Բայց մեր պիեսն էլ է հրաշալի, չէ՞:

— Դե հա, հրաշալի է, բայց ես մեր պիեսը երբեք չեմ տեսել, իսկ երբ ինքդ ես խաղում, ամեն ինչ միշտ նույնն է:

— Հանդիսատեսներն են տարբեր:

— Ճիշտ որ, մեկ-մեկ շատ են տարբեր իրարից. օրինակ, մի քանի օր առաջ՝ Բոստոնում, մի մարդ մեծ հաճույք էր ստացել ներկայացումից, սրտանց հավանել: Հիշո՞ւմ եք: Նա մեր արածները լրիվ հասկացել էր, դրա համար էլ ամբողջ խումբը ավելի լավ խաղաց: Բայց բեյսբոլում բոլորը այդ բոստոնցու պես են: Ու խաղն էլ ամեն անգամ տարբեր է: Ես ուզում եմ «Հսկաների» գնդակ նետողը լինել: Ուզում եմ էնպես խաղալ, որ նրանք Ազգային լիգայի փոխանցիկ դրոշը շահեն, ախր չորս-հինգ մրցաշրջան է, դրոշից զրկվում են: Ա խմբի թիմերից ոչ մեկում աղջիկ խաղացող չկա:

— Բ խմբում նույնպես: Փաստորեն ոչ մի տեղ աղջիկ խաղացող չկա:

— Ուրեմն կլինի՛: Երևի հենց ես էլ լինեմ Ա խմբի առաջին աղջիկ խաղացողը:

— Բայց դու պետք է արտակարգ խաղաս,— ասաց միսս Քրենշոն:

— Բա ինչ,— ասացի:— Պետք է բոլոր տղաներից էլ լավ գնդակ նետեմ, թե չէ ինձ չեն վերցնի: Ես պետք է էնպես խաղամ, որ առանց ինձ բան չստացվի:

— Դու պարապո՞ւմ ես:

— Դե, վերջերս՝ քիչ, որովհետև պիեսով նմ զբաղված:

— Իսկ ինչպե՞ս ես պարապում:

— Այ, հիմա ասեմ. կանգնում նմ տեղս, մի բոլակ նայում մականորդին ու գնդակ բռնողին, իսկ եթե վազող կա, ամենից առաջ նրան եմ նայում, հետո գնդակը ձեռքիս մեջ սեղմած՝ տանում եմ, բերում ու թափով շարտում. էնպե՛ս եմ շարտում, որ թռչող գնդակը իսկի չեն էլ տեսնի: Թե ուզենան բռնել, պիտի սպասեն ուրիշ առիթի. իմ նետած գնդակը բռնել չի լինի: Մեկ բարձր եմ նետում, մեկ՝ ցածր, մեկ՝ դաշտի մեջ, մեկ՝ դուրս ու էդպես շարունակ:

— Այդ որտե՞ղ ես պարապում, Լուսերես:

— Որտեղ պատահի, բայց իհարկե, երբ եղբայրս՝ Դաշտապահ



Փիթեր Բուլիվիան, մեզ հետ էր՝ Մաքքրոնի Լեյնի մեր տանը, սովորաբար հետնաբսկում էինք երկուսով պարապում:

— Ո՞վ-ո՞վ:

— Իմ եղբայր Փիթը: Հայրիկը միշտ նրան Դաշտապահ Փիթեր Բուլիվիա էր ասում: Նա էլ է լավ գնդակ նետող: Երևի ինձնից մի քիչ լավ նետի, դե, որովհետև ավելի մեծ է: Հետո՝ նա Փարիզում անընդհատ պարապում է, որ միշտ կազմ ու պատրաստ լինի, իսկ ես կարգին չեմ պարապում: Նա փարիզեցի մի քանի տղաների էլ է խաղալ սովորեցրել:

— Գիտե՞ս, Լուսերես, անգամ մի վայրկյան ես չեմ կասկածում, որ մի օր կխաղա՛ս «Հսկաների» կազմում: Եվ չեմ կասկածում՝ դրանից հետո, շուտով կամուսնանաս ու հիանալի ընտանիք կունենաս:

Աղջիկ մայրիկը հետ եկավ ու ասաց.

— Դե, Գորտուկ, արդեն տասներկուսն անց է: Կարծում եմ՝ ժամանակն է, որ պառկենք քնելու:

Ամբողջ կիրակի օրը 3132-րդ համարում՝ «Պիեռի» մեր նոր սենյակում, պարապ-սարապ էինք: Աղջիկ մայրիկը համարյա մինչև երեկո խոսում էր հեռախոսով: Նույնիսկ Կալիֆոռնիա ղանգեց՝ Կլարա Քուլբոյին: Կլարան հայտնեց, որ իմ ոսկե ձկնիկները լավ են, իսկ հետո, պարզ է, նա ու Աղջիկ մայրիկը աշխարհում ամեն ինչի մասին խոսեցին: Աղջիկ մայրիկը Կլարային ասաց, որ անպայման ինքնաթիռ նստի ու գա Նյու Յորք: Կլարան խնդրեց լսափողը շղնել ու ամուսնուն հարցրեց, թե դա հնարավո՞ր է, ամուսինն էլ ասաց՝ հնարավոր չէ, բայց նույն օրը՝ ավելի ուշ, Աղջիկ մայրիկը Կլարայից հեռագիր ստացավ, որտեղ նա գրել էր. «Երկուշաբթի, ցերեկվա ժամը մեկին Նյու Յորքում կլինեմ: Երկուսից երեքը «Պիեռում» կհանդիպենք: Համբուրում եմ»: Աղջիկ մայրիկը հրձվանքի մեջ էր, որովհետև իր երկու ընկերուհիները առաջին կարգում նստած՝ նյույորքյան սլոնիերային պիտի իրեն նայեին. երկու ամենամոտ ընկերուհիները՝ Գլեդիս Դյուբարի Թափենսն ու Կլարա Մաքգուայր Քուլբոն: Մաքգուայրը Կլարայի սեփական աղ-գանունն էր մինչև Սեմ Քուլբոյի հետ ամուսնանալը, իսկ Սեմը անշարժ գույքի ապահովագրության գործակալ է:

— Աշխարհում էլ մարդ չմնաց՝ բոլորին զանգեցիր, — ասացի Աղջիկ մայրիկին: — Ի՞նչ կլինի, որ ես էլ մի երկու հոգու զանգեմ:

— Ո՞ւմ ես ուզում զանգել, — հարցրեց Աղջիկ մայրիկը:

— Դու գիտես:

— Ո՞ւմ:

— Հայրիկիս, էլ ո՞ւմ:

— Դե լավ, Գորտուկ,— ասաց Աղջիկ մայրիկը:— Զանգիր հայրիկիդ:

Ես լուսնոտը վերցրի ու հյուրանոցի հեռախոսավարուհուն հայրիկի փարիզյան համարը տվի, բայց կես ժամից հեռախոսավարուհին զանգեց ու ասաց, որ ոչ ոք չի պատասխանում, գուցե քսան թույլի՞ց փորձի: Ես ասացի՝ փորձեք, բայց քսան թույլից էլ ոչ ոք չպատասխանեց: Հեռախոսավարուհին երկար ժամանակ դեռ փորձում էր զանգել, իսկ հետո Աղջիկ մայրիկն ասաց.

— Է՛հ, կիրակի է, երեի քաղաքում չեն:

Իրիկնամուտին Աղջիկ մայրիկն ու ես դուրս եկանք հյուրանոցից ու ձիով կառք վարձեցինք, կառապանն էլ մի համազդեցատավոր ծերուկ էր: Մենք ամբողջ Կենտրոնական դրոսայզին պտտեցինք: Դա շատ թանկ արժեք, բայց հաշվի չառանք:

— Մի քիչ կյասք քաշենք, մենք իրավունք ունենք,— ասաց Աղջիկ մայրիկը.— Տանջվել-չարչարվել ենք ու վաղը երեկոյան պիտի ամենալավ ներկայացումը տանք:

— Դու էլի վախենո՞ւմ ես առաջվա նման, երբ դեռ չէինք էլ սկսել միսս Քրենշոյի մոտ մեր դերերը կարգալ:

— Ձէ,— ասաց Աղջիկ մայրիկը:— Վախենում եմ, բայց ոչ առաջվա նման:

— Բա ո՞նց:

— Հիմա էլ ուրիշ վախ ունեմ. թե վաղվա ներկայացմանն ինչ հանդիսատեսներ կգան, որովհետև եթե կարգին հանդիսատեսներ չգան, եթե վարագույրը բարձրանալուն պես՝ նրանք պիտեւ շիրեն, ուրեմն մեր գործերը վատ են. հաջողության փոխարեն՝ թերևս ձախողման հանդիպենք: Պիտեւ հաջող է: Հարցն այն է, թե հանդիսատեսն էլ հաջող կլինե՞ր: Դու վախենո՞ւմ ես, Գորտուկ: Ճիշտն ասա:

— Ամենաճի՞շտը:

— Իհարկե:

— Ամենա-ամենա-ամենաճի՞շտը:

— Դե ասա՛, Գորտուկ:

— Չեմ վախենում, չէ՛:

— Ու չե՞ս էլ անհանգստանում, թե առաջին ներկայացմանն ինչ հանդիսատեսներ կգան:

— Ձէ:

— Իսկ եթե նրանք անտանելի լինե՞ն: Նյույորքյան պրեմիերանե-

րին հանդիսատեսները սովորաբար հենց էդպիսին են: Ուշացումով են ժամանում: Մեծ մասը խմած են: Շատերը ճաշին կուշտ Եւտում են ու հետո նստած տեղն անվերջ շուտումուռ գալիս: Փաստորեն ներկայացումը նրանց չի էլ զբաղեցնում: Բա որ էդպիսի հանգիստատեսներ լինե՞ն:

— Լինում են՝ լինեն: Մենք էլ մեր գործը կանենք ու կգանք տուն:

— Է՛, Գորտուկ, Գորտուկ,— ասաց Աղջիկ մայրիկը:— Վաղը Լրեկոյան Գլեդիսն իր տանը մեծ հրավերք է կազմակերպում մեր ամբողջ խմբի պատվին: Բոլորս արթուն ենք մնալու, մինչև առավոտյան թերթերը լույս տեսնեն: Իսկ դրանք գիշերվա երեքն անց կեփից շուտ լույս չեն տեսնի, հետո էլ, եթե պարզվի, որ թատերախօսականները դրական են, ու ներկայացումը լիակատար հաջողութուն է գտել, ինչ խոսք, ոչ ոք չի շտապի հեռանալ: Ես նկատի ունեմ, որ բոլորս կուզենանք հաջողութունը նշել:

— Է՛հ, նշեք,— ասացի:— Իսկ ես ներկայացումից հետո կդամ տուն ու կպառկեմ: Չեմ վախենա մենակ:

— Օ՛, ոչ մի դեպքում: Իմ ասելիքը դա չի, Գորտուկ: Գլեդիսն ուզում է իր մոտ գիշերենք, էնպես որ հրավերքին դու իհարկէ կմասնակցես, համենայն դեպս, մինչև կեսգիշեր, ու թե կուզես, մի քիչ էլ ավել: Ես գիտե՞ս ինչը նկատի ունեի. եթե ներկայացումը իրոք հաջողութուն գտնի, քեզ արթնացնե՞մ, ասեմ:

— Արթնացրու, բայց մի բռնե՛մ: Ասա՛ լավ է, ու ես կհասկանամ: Բայց եթե ամեն ինչ անհաջող լինի, շարթնացնես, թեկուղ մի բռնե՛մ:

— Եղավ, բայց սիրտդ ի՞նչ է վկայում. հաջողութւյան կհասնե՞նք, թե չէ:

— Կհասնենք:

— Դու ուրա՞խ ես:

— Շատ:

— Ինչո՞ւ:

— Միսս Քրենշոն էլ նույն հարցը տվեց: Ես ուրախ կլինեմ, եթե ներկայացումը հաջողութուն գտնի, որովհետև դու երկար ժամանակ կխաղաս մի հիանալի պիեսում: Կարգին փող կաշխատես: Հայտնի կը դառնաս: Ես էլ, հենց որ ուզեմ, կարող եմ խմբից դուրս գալ:

— Իսկ դու կուզե՞ս:

— Դեռ չգիտեմ, բայց հետո երևի ուզեմ:

— Բա ինչո՞վ կզբաղվես:

— Ոչ մի բանով, Աղջիկ մայրիկ:

— Ես մտածեցի, որ կա-չկա ուզում ես Փարիզ գնալ:

— Դու կուզեի՞ր գնամ:

— Եթե պիեսը հաջողութուն ունենա, ու դու որոշես խմբից դուրս գալ, ուզենաս Փարիզ գնալ, ես էլ կուզեմ գնաս:

— Իսկ եթե ձախողվի՞:

— Իհարկե չեմ ուզի:

— Ինչո՞ւ եթե հաջողութուն ունենա՝ կուզես, իսկ եթե ձախողվի՝ չես ուզի:

— Որովհետև եթե պիեսը ձախողվի, ես առանց քեզ կկորչեմ, այ թե ինչու, դու էլ լավ գիտես:

— Դե ուրեմն՝ եթե պիեսը հաջողութուն ունենա, ու ես որոշեմ խմբից դուրս գալ, կուզեմ Փարիզ գնալ, բայց եթե ձախողվի, չեմ ուզում գնալ Չեմ ուզում քեզ մենակ թողնել:

— Դու իսկակա՞ն ընկեր ես, Գորտուկ:

— Բա ի՞նչ կանենք, եթե պիեսը ձախողվի:

— Է՛հ, արի շմտածենք:

— Չէ, Աղջիկ մայրիկ, ասա՛՛ ի՞նչ կանենք:

— Դե, շգիտեմ դու ինչ կանես, բայց ես ինձ կսպանեմ:

— Ո՞նց:

— Ո՞նց: Դա է ամբողջ ասելիքդ, հա՞:

— Է՛, Աղջիկ մայրիկ, ես գիտեմ, որ հենց էնպես խոսում ես, բայց եթե իրոք ուզես... եթե մարդ իրոք ուզի, ո՞նց պիտի անի:

— Վերջերս շատ խելառ կանայք դրա համար քնաբեր են խմում:

— Ճիշտ որ խելառ են, չէ՞:

— Իհարկե, բայց մեկ է՝ ես նրանց բոլորին խղճում եմ:

— Աղջիկ մայրիկ, իսկ քո մտքով անցած կա՞, որ դու էլ խմես: Ասենք, պատահե՞լ է՝ ուղղակի մտածես:

— Օ՛, այո, Գորտուկ: Ես համարյա թե խմելու վրա էի: Բաժան-վելուց առաջ, երբ հորդ ու իմ հարաբերությունները ահավոր վատ էին, շատ էի մտածում դրա մասին, բայց հետո՝ ավելի շատ:

— Հետո՞: Ե՞րբ:

— Երբ դեռ տանն էինք: Երբ իմ միակ անելիքը հրավերքների գր-նալն էր:

— Ես էլ կարծում էի՝ հրավերքները քեզ դուր են գալիս:

— Հա, դուր էին գալիս, բայց միայն նրա՞ծով, որ օգնում էին ժա-մանակը գլորել, մի քիչ էլ անպտուղ ժամանակ վատնել: Բայց երբ էլ տուն դառնայի՝ գիշերվա ժամը երկուսին լիներ, երեքին, թե առավու-

յան շորսին կամ հինգին, երբ էլ նորից մենակ մնայի՝ տակնուվրա եղած, շգիտես ինչի համար լրիվ տակնուվրա եղած, անընդհատ մտածում էի քնաբեր խմելու մասին, Գորտուկ:

— Իսկ մոտդ կա՞ր:

— Կար:

— Բա հիմա ո՞ւր է:

— Խմել եմ:

— Սուտ է, շես խմել:

— Խմել եմ, հատ-հատ, ինչպես որ կարգն է, դեռ Ֆիլադելֆիայից սկսած: Արդեն վերջացել է:

— Ուրեմն՝ էլ շառնես:

— Չեմ առնի, լավ:

Կառապանը մեզ բերեց Հինգերորդ պողոտա ու «Պիեռի» մուտքի մոտ կանգնեց: Մենք իջանք կառքից, Աղջիկ մայրիկը ծերուկին վճարեց, մի ևրեք դուլար էլ ավել փող սովեց, նա շնորհակալ եղավ, ու մենք մտանք ներս:

Աղջիկ մայրիկին լիքը հեռախոսազրեր էին եկել, բայց ոչ մեկն էլ մի առանձին բան չէր: Մենք վերև բարձրացանք ու նորից փորձեցինք զանգել հայրիկիս՝ Փարիզ, բայց էլի պատասխան չկար:

Հենց համարում էլ ընթրեցինք, հեռուստացույց նայեցինք, իսկ հետո ևս պառկեցի քնելու, բայց Աղջիկ մայրիկը դեռ մթնում նստած՝ հեռուստացույցի էկրանին էր նայում:

## ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ, ԹՆ ԱՆՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ. ԻՆՉ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ես երբեք չեմ մոռանա մեր առաջին ներկայացումը Նյու Յորքում: Վարազույրը պիտի ուղիղ ութն անց կես բարձրանար, բայց շբարձրացրին, որովհետև կարևոր մարդկանցից շատերը առայժմ չէին եկել, հատկապես երկու մեծ քննադատներ:

Մայք Մաքքլեյին վարազույրի մեջ բացած փոքրիկ անցքից շուտ-շուտ նայում էր դահլիճ: Նա գիտեր, թե քննադատները որտեղ են նրստնելու, բայց իննից տասնհինգ պակաս սրանց տեղերը դեռ դատարկ էին:

— Իմ բախտից երկուսն էլ վթարի ենթարկված չլինե՞ն, — ասաց նա:

էմերսոն Թալին անվերջ գնում-գալիս էր մեն-մենակ:

— Սպասող հայրը, — ասաց Քեյթ Քրենշոն, ու էմերսոնը հան-

կարծ կանգ առավ, էնպես նայեց նրան, կարծես առաջին անգամ էր տեսնում:

Իսկ միտոր Մանգոն պարում էր ու իր վազուցվա ներկայացումներից քառյակներ երգում.

Հենց չեղ տեսա, էանաչեցի,  
Գանդոկի իմ կողմ:  
Ո՞վ շեր, ո՞վ շեր քեզ ճանաչի,  
Կարմրահերթի՞ Ոոզ...

Միսիս Քոուլն ասաց.

— Փառք քեզ, աստված, նյույորքյան ևս մեկ պրեմիերայի համար: Քսան տարի ինձ էսպես շահել չեմ զգացել: Ջահել և ուժասպառ:

Աղջիկ մայրիկը ծրագիրն էր թերթում. սա գովազդներով լի ամսագրի պես բան է, նա էլ կարգում էր, թե ինչ է գրված մեր խմբի դերասանների մասին:

— Բոլորը, բացի մեղանից, Գորտուկ, հռչակավոր են,— ասաց նա:— Միսիս Քոուլը քո տարիքում Շեքսպիր է խաղացել, իսկ երբ ինձանից շատ փոքր է եղել, արդեն համաշխարհային համբավ է վայելել:

— Լավ կլինե՞ր սկսե՞ինք,— ասաց Մայքը,— լայց շենք կարող: Պիտի այդ երկու քննադատներին սպասենք:

Ջո Թրեվիը պտտվում էր, ստուգում մեր զգեստները, գրիմը, բեմի դեկորներն ու մնացած ամեն ինչ:

Անընդհատ հեռագրեր էին գալիս բոլորի անունով, նույնիսկ իմ: Ով որ կապ ուներ ներկայացման հետ, ինձ հեռագիր էր ուղարկել, Հելեն Գոմեսն էլ: Նա Մայք Մաքքլեչիի կողքից շեր հեռանում, որ օգնի ամեն բանի հետևել, ինչ պետք է՝ հիշեցնի ու պարզապես զրուցրնկեր լինի: Նա զուգված էր ոտից գլուխ, տեսքն էլ ևրիտասարդ ու գեղեցիկ էր:

— Ժամը քանի՞սն եղավ,— հարցրեց Մայքը:

— Իննից տաս է պակաս,— ասաց Հելենը:

— Հարկավոր է սկսել, վե՛րջ:

— Բայց հանդիսականները շեն մտահոգվում: Բոլորն էլ ուրախ են ու անհոգ: Եկեք սպասենք քննադատներին:

— Ընդմիջա՞տ:

— Հիմա ուր որ է կերևան:

էմերսոնը մոտեցավ Մայքին ու Հելենին, վարագույրի ճեղքից մի հայացք գցեց հանդիսատեսների վրա:

— Ահա՛վոր նշարդային են,— ասաց նա:— Տեղները մի վայրկյան հանգիստ չեն նստում: Աշքիս պիտանի հանդիսատեսներ չեն:

— Ընդհակառակը,— ասաց Հելենը:— Սրանից ընտիր հանդիսատես չէինք էլ կարող երազել:

— Ներկայացումը չի հետաքրքրում նրանց,— ասաց էմերսոնը,— Իրենցով են տարված:

— Կա՛վ, հերիք է անհանգստանաք,— ասաց Հելենը:— Ծա շատ պրեմիերաների հանդիսականներ եմ տեսել, և անհանգստանալու տեղիք կա միայն մի դեպքում. երբ նրանք խոժոռ ու լուռ են: Իսկ մեք հանդիսականները ուղղակի հրաշք են:

— Բայց ներկայացումը նրանց չի հետաքրքրում:

— Նրանք ներկայացումը գեռ չեն էլ տեսել:

— Գե, եթե վարագույրը շուտով շքարձրացնենք,— ասաց էմերսոնը,— երբեք չեն սեսնի: Եվ դա մաղաչափ նրանց չի հուզի: Թե կուզեք իմանալ, ներկայացումը հենց իրենք են տալիս: Իմ հաջորդ պիեսում, Մայք, վարագույրը ժամը իննին կբարձրանա և հինգ ռոպեով: Բեմում երկու-երեք մարդ նստած կլինեն, ոչինչ չեն անի ու ոչինչ չեն խոսի: Երկրորդ անգամ վարագույրը դարձյալ հինգ ռոպեով կբարձրանա, բեմում զարձյալ ոչինչ չի լինի, լոկ մի քանի մարդ, որ նստած են, կարդում են, դեսուդեն նայում ու ոչ մի բան չեն ասում: Հետո քառասունհինգ ռոպեով նորից վարագույրը կիջնի, որպեսզի հանդիսատեսները շարունակեն ժամանակ անցկացնել, շարունակեն թատրոնում իրենց կյանքով ապրել: Իսկ երրորդ գործողությանը վարագույրն ընդամենը երեք ռոպեով կբարձրանա: Ներկայացումն իր գագաթնակետին կհասնի, երբ մի մեծ, քնկոտ շուն մտնի բեմ, նայի ժողովրդին, վհատվելով պառկի ու քնի մի կատվի կողքին: Այ թե ինչպիսին կլինի իմ հաջորդ պիեսը: Գրողի ծոցը կորչի ամեն մի տխմար պիես, որը պահանջներ է ներկայացնում թատրոն եկող մարդկանց: Ես էնպիսի պիես կգրեմ, որ հանդիսատեսները սիրեն: Հոգիս դուրս եկավ, մինչև այս պիեսը նշույրբջյան բեմին վայել տեսքի բերեցի, բայց դուք սրա՛նց նայեք: Չէ, անհույս բան է, ոչ մի պիես աշխարհում չի կարող նրանց մեջ այն հետաքրքրությունն արթնացնել, որ նրանք ունեն սեփական անձի նկատմամբ: Եվ սա նյու Յորքն է: Ես պեսք է մի խուլ քաղաքում ժընվեի:

— Ահա՛. եկան,— ասաց Մայքն ու ձեռքով արեց էլեկտրիկին: Նա կոճակը սեղմեց, ու նախերգանքն սկսվեց:

Հետո Մայքը էմերսոնի ուսերը գրկեց, ու նրանք մոտեցան մեզ՝  
Էմբով կանգնածներին:

— Ամեն ինչ կարգին է, — ասաց Մայքը: — Սկսում ենք, տիկնայք  
և պարոնայք: Հանդիսատեսներն առույգ են: Քննադատները բոլորն  
իրենց տեղերում են: Ես գիտեմ, նրանք ինձ նման՝ կսիրեն ձեզ: Գի-  
տեմ, դուք, ինչպես հարկն է, կխաղաք այն ներկայացումը, որի համար  
ամենքս էլ այսքան տքնել ենք. նյույորքյան մեր անդրանիկ ներկայա-  
ցումը: Հաջողութուն ձեզ:

Ես բեմ մտա, իսկ միստր Մանգոն կանգնեց կուլիսներում: Մայքը  
գարծավ բեմի բանվորին, որը բարձրացնում ու իջեցնում էր վարա-  
գույրը: Նա ձեռքը վեր պարզեց, իսկ մի բուպե անց, նախերգանքն  
ավարտվեց: Մայքը մի պահ սպասեց, հետո ձեռքը ցած բերեց, բան-  
վորն էլ վարագույրը բարձրացրեց, ու ես բեմում մնացի մենակ:

Ամբողջ դահլիճում ոչ մի ազատ տեղ չկար: Ես չէի կարող նայել  
դահլիճ, բայց զգում էի, որ չկա: Գիտեի՝ Գլեդիսն ու Հոբարթը առաջին  
կարգում են, իսկ անցատեղի մյուս կողմում Կլարա Քուլբոն է իր ամուս-  
նու հետ. նա Սեմին էլ էր քարշ տվել Նյու Յորք: Հանդիսատեսներից  
ուրիշ ոչ մեկի ես չէի ճանաչում, բայց ովքեր էլ որ նրանք լինեին, բո-  
լորը իսկույն լռեցին:

Երբ վարագույրը բարձրացավ, դահլիճից կարծես մի ալիք եկավ  
ու բեմով անցավ, ծփացող բազմության, տաք օդի կամ հուզմունքի  
ալիք: Ու հետն էլ՝ շրշյուն: Չէ, խոսակցության շրշյուններ չէին դրանք:  
Շնչառության ձայն էր կամ վերից վար լեփ-լեցուն դահլիճում, կողք-  
կողքի նստած շատ մարդկանց շրշյունը: Դա վրա հասնող լռության  
ձայնն էր, երբ բոլորը միանգամից ընդհատում են իրենց խոսակցու-  
թյունները: Հետո՝ աթոռների ճոճոց էլ կար. մարդիկ շուռումուռ էին  
գալիս, ավելի հարմար տեղավորվում, ու մեկ էլ փոքրիկ լույսեր էին  
բռնկվում. հսկիչները անաղմուկ անցուղարձ էին անում շարքերի մի-  
ջով և ուշացածներին տեղները նստեցնում:

Մի երկու բուպե ես պիտի բեմում ոչինչ չանեի ու ոչ մի բառ չա-  
սեի, միայն լուսամուտից դուրս էի նայելու՝ մեջքով դեպի հանդիսատե-  
սը: Իսկ հետո, հենց որ ինձ ու ինձ որոշեի, թե ժամանակն եկավ,  
պետք է քթիս տակ մի քիչ երգեի՝ կամ բառերով, կամ էլ առանց բա-  
ռերի, ուղղակի մոմոռայի. էմերսոնն ասում էր՝ ինչպես սիրտս տա, էն-  
պես էլ անեմ:

— Որքան մեղմիկ, այնքան լավ, — դեռ Բոստոնում ասաց նա:

Հետո ես պետք է շրջվեի լուսամուտից, հայացքս ամբողջ սենյա-



կում պատեցնեի, իսկ սենյակը խղճուկ էր, մի խղճուկ տան մեջ, Իրիկ-նամուտ էր, ու տանը էլ ոչ ոք չկար: Ես նարնջից երկու անգամ մեծ մի կարմիր ու սպիտակ գնդակ ունեի. սա ծակ էր ու կարգին չէր թռչկոտում: Պետք է գնդակը վերցնեի ձեռքս, տնտղեի ու փորձեի խաղալ գետնին խփելով, բայց հենց էնպես, մի թեթև: Իսկ հետո պիտի ուժեղ գետնով տայի, շնայած պարզ է, գնդակը համարյա չէր թռչում: Ընդամենը մի խուլ շրմփոց էր հանում ու հաղիվ տեղից պոկվում:

Բայց անմիջապես դրանից հետո սենյակի հետ հրաշք էր կատարվում: Պատերը հեռանում էին, իսկ սրանց հետևում մի լրիվ ուրիշ, պայծառ ու լուսավոր աշխարհ էր: Իմ երևակայական ընկերներն էստեղ էին. ճիշտ է, բոլորն էլ՝ անտեսանելի, բայց ձայները ականջիդ էին հասնում: Մենք զրուցում էինք, երաժշտություն լսում, պարում ու երգում: Հետո ոտնաձայներ եկան, ու ես իմացա, որ դա պապիկս է՝ միստր Մանդոնո:

Ինչ, սենյակի իսկական տեսքը վերականգնելու համար ես նորից պետք է գնդակը գետնով տայի, բայց չկարողացա գտնել: Միստր Մանդոնո մտավ ներս, նայեց շորս կողմն ու հարցրեց, թե ինչու է ամեն ինչ փոխվել: Ես ասացի՝ բայց ամեն ինչ միշտ էլ էսպես չէ՞: Գնդակը գտա, գետնով խփեցի, ու ամեն ինչ էլի առաջվանը դարձավ: Միստր Մանդոնո ձեռքը դրեց ճակատին: Նա մտածում էր, թե միգուցե իրեն էլ ինչ-որ բան պատահել: Մենք մի քիչ խոսեցինք, իսկ հետո միստր Մանդոնո ասաց՝ ինչքան մեծանում է, այնքան ավելի է իր մանկության գիրկը վերադառնում. ես համոզված եմ, որ ամեն ինչ էսպես էր իր մտնելու պահին: Խոստացավ, թե ոչ մեկի չի ասի, գաղտնի կպահի, ես էլ ճիշտն ասացի: Նա շոշափեց գնդակը, որը ինքն էր ինձ վաղուց նվիրել ծնրնդյանս տարեդարձին: Գնդակը գետնով տվեց, բայց ոչինչ էլ չեղավ, ու նա խնդրեց, որ ե՛ս փորձեմ: Ասացի՝ չգիտեմ՝ կստացվի, թե չէ, ախր մենակ չեմ, բայց դե կփորձեմ:

Վերցրի գնդակը, մտածեցի ընկերներիս մասին, հետո գնդակը գետնով տվեցի, ու ամեն ինչ փոխվեց: Միստր Մանդոնո բաճկոնակի գրպանից հանեց իր մեծ ժամացույցն ու նայեց: Ասաց՝ կես ժամ կա, մինչև մայրիկը աշխատանքից տուն գա:

Ու մենք միասին էինք մի ուրիշ աշխարհում, ընկերներիս հետ:

Իսկ հետո հայտնվեց միստր Մանդոնոյի ծանոթներից մեկը, բայց սովորականի պես՝ քայլելով ներս մտավ:

Դա մի աղջիկ էր, որին միստր Մանդոնո ճանաչել էր, երբ ինքը տասնյոթ տարեկան էր եղել, իսկ աղջիկը՝ տասնհինգ, ու նա մահացել

էր, բայց հիմա առաջվա նման էլի սիրունիկ էր, իսկ միստր Մանգոն արդեն ծերուկ էր: Աղջիկն ինձ շատ դուր եկավ, բայց ես ուզեցի իմանալ, թե ինչու իմ ընկերները շեն կարող նրա պես գալ: Միստր Մանգոն ասաց՝ կգան, դրա համար ժամանակ է պետք: Աղջկա անունը Ռոզ էր, ու նա ամենքից էլ լավ էր պարում ու երգում, հենց միայն նրա ձայնը լսելիս կուրախանայիր, որ ապրում ես աշխարհում: Դե՛ռ ապրում ես, ասաց միստր Մանգոն: Երբ վրա հասավ աղջկա հեռանալու պահը, երկուսս էլ տխրեցինք, ու միստր Մանգոն սրբեց ճիթն ու մաքրեց աչքերը:

Առաջին գործողությունը թեթև ու հանգիստ առաջ էր գնում:

Աղջիկ մայրիկը տուն եկավ իր հին, մշտական շորերը հագին, բայց իհարկև, մենք արդեն գնդակը գետնով էինք խփել, ու սենյակը նորից նախկինն էր դարձել: Մենք զրուցում էինք, իսկ Աղջիկ մայրիկը դրա հետ մեկտեղ՝ տունն էր հավաքում, որովհետև սովոր չէր պարապ նստելուն: Խոսեցինք Լոլանակի, հօրեականների մասին, հետո՝ թե ինչ ենք ուտելու ընթրիքին, հետո էլ խոսք բացվեց միստր Մանգոյի որդու մասին, որը Աղջիկ մայրիկի ամուսինն էր ու իմ հայրիկը, բայց տարիներ առաջ թողել, հեռացել էր: Քիչ անց Աղջիկ մայրիկը հատակից մի կանաչ թաշկինակ գտավ. սա Ռոզի ձեռքից էր ընկել, Աղջիկ մայրիկն էլ հարցրեց, թե թաշկինակն ումն է: Միստր Մանգոն ու ես նայեցինք իրար, իսկ հետո նա ասաց, որ դա իր ընկերուհունն է՝ միսիս Քրուլինը: Աղջիկ մայրիկը ծիծաղելով թաշկինակը տվեց նրան, հետո շատ ուրիշ բաներ էլ եղան, ու առաջին գործողությունը ավարտվեց:

Ծափահարությունները էնպես բարձր էին, որ ես նույնիսկ վախեցա: Դեռ երբեք էդպիսի ծափեր չէինք լսել, թեկուզ ներկայացման վերջում: Հենց որ գնացինք մեր հանդերձառանյակը, Մայքը, էմերսոնը, Քեյթն ու Հելեն Գոմեսը եկան ասացին, թե ներկայացումը շատ սովոր է ընթանում, ավելի լավ, քան երբևէ, իսկ հետո Մայքը խնդրեց Հելենին, որ քանի ընդմիջում է, դուրս գա հասարակության մեջ և ուշադիր լսի, թե ինչ են խոսում: Արդեն վարագույրը բարձրանալու վրա էր, երբ Հելենը վերադարձավ ու ասաց.

— Մինչև ականջները սիրահարված են պիեսին, ուրիշ ոչինչ: Ուղեղակի սիրահարված:

Երկրորդ գործողությունում Աղջիկ մայրիկը պատահամբ գնդակը գետնով տվեց, ու ամեն ինչ նորից փոխվեց: Եկավ միստր Մանգոյի սրդին, ու միստր Մանգոն սկսեց լաց լինել փոքրիկ տղայի պես: Սկզբում ես չգիտեի ինչու, բայց հետո հասկացա. նրա սրդին մեռած էր, ու

քիչ մնաց ես էլ լաց լինեմ, բայց ինձ զսպեցի: Դե, որովհետև մեռած ե  
իմ հայրն էր, իսկ ես ու նա շատ հպարտ էինք, որ լաց լինեինք:

Հայրիկս նայեց ինձ, ես էլ նայեցի նրան, հետո գիրկը նետվելու  
փոխարեն՝ սուսուփուս մոտեցա, կողքին կանգնեցի, ու նա ձեռքս բռ-  
նեց: Ասաց՝ պետք է գնա արդեն, ես էլ ասացի՝ ուզում եմ հետը գնալ:  
Աղջիկ մայրիկը սա լսեց թե չէ, կարծես ցնորվեց: Ինձ խլեց հայրիկիս  
ձեռքից, գոռաց նրա վրա ու գնդակը գետնով խփեց, բայց ոչինչ էլ չը-  
փոխվեց: Ու ամբողջ երկրորդ գործողության ընթացքում ես չէի ուզում  
գնդակը ձեռքիցս բաց թողնել, որ հայրիկը հանկարծ չգնա, իսկ նա  
ծնկի իջավ ու նայեց երեսիս, ինձ հետ մեղմ ու կամացուկ խոսեց, հե-  
տո ոտքի ելավ, գնդակը վերցրեց, ի՛նքը գետնով խփեց, ու ամեն ինչ  
դարձավ առաջվա նման. նա գնաց ու գնդակն էլ հետը տարավ:

Հանդիսատեսներն ավելի բարձր ծափահարեցին, քան առաջին ան-  
գամ, ու բեմի հետևում բոլորը ցնծության մեջ էին:

Վերջին գործողությունում միստր Մանգոն ու ես փորձում էինք մի  
հնար գտնել Ռոզին հետ բերելու համար, բայց ինչքան փորձեցինք,  
ոչինչ չստացվեց: Միստր Մանգոն հիվանդացավ ու անընդհատ սլառկած  
էր: Միսիս Քոուլը եկավ նրան տեսուիջան, խնդրեց, որ լավանա ու յո-  
թանասունյոթ տարեկան խելահաս տղամարդու պես իր հետ ամուսնա-  
նա, բայց միստր Մանգոն էնպիսի բաներ ասաց, որ նա չհասկացավ,  
նույնիսկ երբ խոսում էր նրա ամուսնու՝ իր հին ընկերոջ մասին: Նա  
էլ խոսեց միստր Մանգոյի կնոջ մասին, իսկ հետո տուն գնաց: Միստր  
Մանգոն ու ես էլի փորձեցինք Ռոզին հետ բերել, բայց էլի ոչինչ չըս-  
տացվեց: Նա ինձ կես դուլար տվեց, որ գնամ ու հորս տարած գնդակի  
նման մի ուրիշը առնեմ:

Քանի դեռ ես կուլիսներում էի, միստր Մանգոյին մեկը հյուր եկավ.  
դուռը ծեծեց ու սովորական մարդու պես իրոք ներս մտավ, բայց դա  
սովորական մարդ չէր: Ինքն էլ սիրալիր վերաբերմունք ուներ ու միստր  
Մանգոյին ասաց՝ ժամն է, նա պետք է շուտ գա ու քնի, բայց միստր  
Մանգոն ասաց, որ սա գոնե մի քիչ ժամանակ տա իրեն, որովհետև  
թոռնիկն իր համար պիտի բան բերի, շատ կարևոր բան, մարդն էլ  
ասաց՝ դե լավ ու թողեց, գնաց: Երբ էս վերադարձա գնդակը ձեռքիս՝  
ձիշտ նախկինի նման մի գնդակ, միայն թե նորը, միստր Մանգոն  
վերցրեց գնդակը, գննեց ու մտքերի մեջ ընկավ, հետո գնդակը մեկնեց  
ինձ ու խնդրեց, որ գետնին խփեմ, ես էլ էդպես արի, բայց ոչինչ դուրս  
չեկավ, ու մենք երկուսով մեզ շատ վատ զգացինք: Իսկ հետո գուռը  
նորից ծեծեցին, միստր Մանգոն շրջվեց ու հայացքը գցեց դռանը, հե-

տո ձայն տվեց, որ մտնեն, ու նույն մարդը դանդաղ ներս մտավ: Նա ժպտաց ինձ, հետո էլ՝ միտոր Մանգոյին, վերցրեց գնդակն ու սկսեց գետնին խփելով խաղալ: Վերջապես նայեց միտոր Մանգոյին ու ասաց՝ արդեն ժամն է, բայց միտոր Մանգոն ասաց՝ ինքը վախենում է: Նա ուզում էր, որ մեկնումեկն իր կյանքից անպայման հետը լինի, ուզում էր, որ դա հենց Ռոզը լինի, իր պատանեկան սերը:

«Դե լավ», — ասաց մարդը, գնդակը գետնին խփեց, ու ի՞նչ տեսնենք. մեր ուղածն եղավ: Ամեն ինչ էլի փոխվեց, ու Ռոզը նորից երեւեւաց: Միտոր Մանգոն տեղում նստեց, աղջիկը մոտեցավ նրան ու ձեռքը բռնեց:

«Գնացի՞նք», — ասաց մարդը: Միտոր Մանգոն վեր կացավ, հրաժեշտ տվեց, և նա, չքնաղ աղջիկն ու մարդը գնացին:

Սա գնդակը հեռվից շարտեց սենյակ, ու հենց որ գնդակը դիպավ հատակին, ամեն ինչ միանգամից սկսեց փոխվել, դառնալ առաջվա նման: Ես վերցրի գնդակը, մի քանի անգամ գետնին խփեցի, որ բան չփոխվի, մնա, ինչպես կա, բայց ոչինչ գուրս չեկավ: Զորս կողմը մըթնեց, իսկ հետո, մի վայրկյան անց, երբ ամեն ինչ արդեն սովորականի պես էր, անկյունի թախտին պռակած էր միտոր Մանգոն՝ երեսը դեպի պատը: Ես մոտ գնացի, բայց նա շրջվեց: Թափ տվի նրան, փորձեցի շրջել, բայց չկարողացա: Ներս մտավ Աղջիկ մայրիկը: Նայեց ինձ, հետո՝ միտոր Մանգոյին ու թուլացած նստեց:

«Պապիկդ մահացել է», — ասաց: Մենք լացուկոծ շարինք: Ուղղակի նստել էինք փոքրիկ սեղանի շուրջն ու նայում էինք իրար:

Հետո վրա հասավ երջանիկ առիթը, որ Աղջիկ մայրիկն իր խաղով փայլի: Նա ինձ ուղարկեց միսիս Քոուլի հետևից, ու քանի դեռ ես կուլիսներում էի, վերցրեց գնդակն ու գետնին խփեց, բայց էլի ոչինչ չփոխվեց: Իջավ երեկոն, ու սենյակում կիսամութ էր, երբ հանկարծ միտոր Մանգոն հայտնվեց, հետո էլ՝ նրա որդին, ու նրանք երեքով խոսքի բռնվեցին: Սրանք ուզում էին, որ Աղջիկ մայրիկն էլ իրենց հետ գնա, բայց Աղջիկ մայրիկն ասաց՝ ինքը չի գա: Հանեց իր բանկային գրքուկը, որ տեսնի, թե ինչքան փող ունի տնտեսած, իսկ հետո հաշվեց գրամապանակում եղածը, շօգտագործվող թեյամանի մեջ պահածն ու նրանց հետ խոսելով՝ մեր խոզուկանման խնայատուփն էլ ջարդեց, ամեն ինչ հաշվեց, հետո սկսեց իմ ու իր շորերը ճամպրուկում դասավորել: Լրիվ պատրաստվեց թե չէ, մոտեցավ նրանց, երկուսին էլ շրջեց դեպի դուռն ու կամացուկ գուրս հրեց: Նրանք գնացին:

Երբ միսիս Քոուլն ու ես եկանք, սենյակում շատ մութ էր, միսիս

Քոուլն էլ լույսը վառեց, հետո մոտեցավ թախտին պառկած միսոր Մանգոյին, բռնեց նրա ձեռքը, ասի մեջ պահեց, իսկ Աղջիկ մայրիկն ասաց, որ ինքն ու ես հենց հիմա պիտի հեռանանք: Ասաց՝ գնալիս կրմտնի անկյունի թաղման բյուրոն, կվճարի ամեն ինչի համար, ու մենք վաղը չէ մյուս օրը կգանք թաղմանը, բայց հիմա հեռանում ենք: Ասաց՝ կահկարասին միսիս Քոուլին է թողնում, մեզ այլևս հարկավոր չէ: Աղջիկ մայրիկն ու ես դուրս եկանք բեմից, մնացին միսոր Մանգոն ու միսիս Քոուլը: Նա տեսավ հատակին ընկած գնդակը, վերցրեց ու վազեց մեր հետևից, որ ինձ տա, բայց մենք արդեն գնացել էինք: Նա վերադարձավ, գնդակը ցած ընկավ ձեռքից, ու հանկարծ ամեն ինչ նորից փոխվեց, միայն թե առաջվանից էլ պայծառ ու գեղեցիկ էր, հետո վարագույրն իջավ, ու ներկայացումը վերջացավ:

Ինչ-որ մեկն ասաց, որ մեզ տասնյոթ անգամ կանչել են գլուխ տալու: Երեք անգամ Աղջիկ մայրիկին ու ինձ կանչեցին, երեք անգամ էլ՝ Աղջիկ մայրիկին առանձին, իսկ հետո մի քանիսը սկսեցին զոռալ. «Հեղինակի՛ն, հեղինակի՛ն», ու Մայք Մաքքլեյին ստիպեց, որ էմերսոն թալին դուրս գա գլուխ տալու: Երբ նա բեմ մտավ, ծափերը դադարեցին, որ երկու խոսք ասի:

էմերսոնն ասաց.

— Սա իմ անդրանիկ պիեսն է: Ես ինձ անսահման երջանիկ եմ զգում, որ հիմա կանգնած եմ պիեսիս դերակատարների կողքին և պիեսը դիտած հանդիսատեսների առաջ: Խորին շնորհակալություն:

Հետո նա դուրս փախավ բեմից, իսկ հանդիսատեսները սկսեցին ավելի ուժեղ ծափահարել: Մայքն ու Քեյթ Քրենշոն էմերսոնին ու բոլոր դերակատարներին էլի ուղարկեցին բեմ, մի քանի անգամ էլ գլուխ տվեցինք, ու մեր պրեմիերան սրանով ավարտվեց:

Իհարկե, ես ներկայացումը միայն բեմից տեսա ու շփտեմ ինչի էր նման, երբ դահլիճից ես նայում: Բայց ինձ դուր էր գալիս, թե ինչպես է Օսկար Բեյլին նվազախումբը ղեկավարում, թե ինչպես են միսոր Մանգոն ու միսիս Քոուլը իրար հետ խոսում, թե ինչպես է Ազնես Հոգանը՝ Ռոզի դերակատարուհին, պարում ու երգում, թե ինչպես է Աղջիկ մայրիկն իր ամբողջ գերը խաղում:

«Բելասկոյի» կուլիսների հետևը դեռ երկար ժամանակ իստոնաշփոթ էր ու իրարանցում: Կարծես ով կար շկար թատրոնում, եկել էր էստեղի Երբ մենք հասանք մեր հանդերձասենյակը, Աղջիկ մայրիկին ամեն տեսակ հեռագրեր էին սպասում, ու սենյակը լիքն էր ծաղիկներով, բայց

ևս շատ հուղված էր, որ հեռագրերը կարդա կամ հետաքրքրվի, թե ծագիկներն ումից են:

— Ահա և վերջ, Գորտուկ,— ասաց Աղջիկ մայրիկը:— Ի՞նչ կարծիքի ես ներկայացման մասին:

— Կավ էր, ինձ դուր եկավ, բայց նրանք ո՞ւր են գնում:

— Ովքե՞ր:

— Մայրն ու աղջիկը, երբ որ թողնում են, հեռանում. մեր պիեսում, էլի:

— Նրանք գնում են... մի ուրիշ տեղ:

— Ու պը՞րժ:

— Գե, հասկանո՞ւմ ես դրա իմաստը որն է. հակառակ ամեն ինչի, հակառակ իրենց կյանքի ողջ անհրապույր գորշությանը, նրանք շարունակում են ապրել: Շարունակում են ի՛նչ-որ բանի ձգտել:

Մեկ էլ տեսնենք՝ բոլորն իրար հետևից լցվեցին մեր հանդերձասենյակը. միստր Մանգոն, միսիս Քոուլն ու Ագնես Հոգանը, հետո՝ Մայք Մաքքելչին, էմերսոն Թալին, Օսկար Բեյլին, Ջո Թրեփն ու Հելեն Գոմեսը, հետո էլ՝ Գլեդիսն ու Հոբարթը, Կլարան ու Չարլին... Իսկը գժանոց բացվեց:

Բայց վերջապես, մենք դուրս պրծանք հանդերձասենյակից, տաքսի նստեցինք, եկանք Գլեդիսի տուն, ու խնջույքն սկսվեց: Ինչ ուտելիք ու խմելիք ասես, որ չկար, բայց հիմնականում շամպայն էր ու ինչքան ուզես՝ խավիար:

Ժամը տասներկուսի կողմը ես հոգնեցի ժխորից ու Աղջիկ մայրիկին խնդրեցի, որ ինձ իմ սենյակը տանի: Մենք բարձրացանք վերնահարկ, ես անկողին մտա, իսկ Աղջիկ մայրիկը նստեց մահճակալիս ու ասաց.

— Գորտուկ, դու իմ ընկերն ես, իմ միակ ընկերը: Մի կարծիր, որ շեմ հասկանում, թե ինձ համար ինչ արեցիր:

— Բայց ես ոչինչ էլ չեմ արել, Աղջիկ մայրիկ:

— Ընդհակառակը. ավելին հնարավոր էլ չէր անել,— ասաց Աղջիկ մայրիկը:— Գու ամե՛ն ինչ արեցիր: Ես չգիտեմ՝ ինչ ես իրոք մտածում պիեսի մասին ու չգիտեմ՝ խաղալիս քեզ ինչպես ես զգում, բայց գիտեմ, որ բախտս բերելու համար քեզ եմ պարտական:

— Պիեսն ինձ դուր է գալիս,— ասացի:— Դե, սկզբում շատ էր դուր գալիս, ու ես կարծում էի, թե դա ամենալավ պիեսն է, բայց հիմա քնց որ մի քիչ հոգնել եմ: Ախր անվերջ նույնն է՝ նորից ու նորից. իսկի նման չի բեչսբոլին: Ես ուզում եմ գնդակ նետող լինել:

- Գիտեմ,— ասաց Աղջիկ մայրիկը:
- Բայց մտածում ես, որ երբեք էլ չեմ լինի, չէ՞:
- Ես էդպիսի բան չասացի:
- Չասացիր, բայց մտածեցիր:
- Ոչ էլ մտածեցի:

— Չէ, ես անպայման պետք է գնդակ նետող լինեմ: Ու հաստատ կլինեմ: Պիեսներում մարդկանց կյանքն է, մարդիկ էլ միշտ հոգս ու ցավի մեջ են: Իսկ բեյսբոլում խաղն է ու խաղացողները. ճիշտ է, մեկնումեկն էլի հոգս ու ցավի մեջ է, ասենք՝ նեղն ընկած, բայց մի ուրիշը՝ չէ, ու սա է ամբողջ խաղի եղածը, դե, խաղից հետո էլ մտնում ես ցնցուղի տակ, լողանում, սափրվում, հետո «Չեսթրրֆիլդ» կամ «Քեմբլ» ես ծխում, մի շիշ գարեջուր խմում՝ «Բադվայզեր» կամ «Շլից», մյուս օրն էլ արդեն նոր խաղ է սկսվում: Ես կուզեի անընդհատ գնդակ նետել, մինչև որ ձեռքս թափը կորցնի, իսկ հետո կամուսնանամ ու երեխաներ կունենամ:

— Իհարկե, Գորտուկ: Դե, հիմա քնիր ու քաղցր երազներ տես:

— Չմոռանաս ինձ մի բոպեով արթնացնել, որ ասես՝ լավ է, ևթե ամեն ինչ հաջող վերջանա:

— Չեմ մոռանա:

— Որովհետև եթե իսկապես հաջողության հասնենք, ես ուզում եմ շուտ դուրս գալ խմբից ու գնալ Փարիզ:

— Պարզ է, Գորտուկ... ու շատ շնորհակալ եմ քեզ նորից:

Աղջիկ մայրիկը լույսը հանգցրեց, ու ես սկսեցի մտածել, թե ոնց եմ մի տասը-տասնմեկ տարի հետո «Հսկաների» գնդակ նետողը լինելու, իսկ ես արդեն իրոք շտեմնված էի գնդակ նետում: Պինդ-պինդ քնել էի, երբ ինչ-որ մեկը այտու համբուրեց ու ասաց՝ լավ է: Ուրեմն՝ հաջողության էինք հասել: Ուրեմն՝ ներկայացումը վերջնական հաջողություն էր գտել, ու ես կարող էի դուրս գալ մեր խմբից ու գնալ Փարիզ, բայց ինձ համբուրողը Աղջիկ մայրիկը շէր: Բա ո՞վ էր: Թե՞ երազի մեջ էի: Ես նստեցի անկողնում ու աչքերս բաց արի:

Տեսնեմ՝ հայրիկն է, հասկացա, որ երազի մեջ եմ ու արթնացա, լրիվ արթնացա, բայց հայրիկը դեռ նստած էր իմ դիմաց:

— Այո, ես եմ, Լուսերես:

Նա ինձ սեղմեց կրծքին ու համբուրեց, ես էլ ասացի.

— Իսկ ո՞ւր է Դաշտապահ Փիթեր Բոլիվիան:

— Հիմա առավոտյան շորսի մոտերքն է,— ասաց հայրիկը:— Նա խոր քնած է:

— Դուք ե՞րբ եք եկել:

— Ճիշտ ժամանակին, որ ներկայացումը տեսնենք: Մայք Մաքք-լեչին մեր պատվին է սկիզբը ձգձգել:

— Պիեսը հավանեցի՞ր:

— Քե՛զ հավանեցի պիեսում, Լոսերես:

— Իսկ Աղջիկ մայրիկի՞ն:

— Աղջիկ մայրիկին էլ:

— Սա հաջողութիւն՞ն է:

— Այո, ըստ երևույթին, մե՛ծ հաջողութիւն:

Ես վեր թռա անկողնուց, սկսեցի թռչկոտել ու գոռալ:

— Ո՛ւխ:

— Գիտե՞ս, դու երևի շատ հռչակավոր ու հարուստ դառնաս:

— Հռչակավոր ու հարո՞ւստ, — ասացի ևս: — Ո՞նց թե, Աղջիկ մայրիկը քեզ բան չի՞ ասել:

— Ի՞նչ:

— Ես խմբում չեմ մնալու:

— Չե՞ս մնալու:

— Չէ՛: Աղջիկ մայրիկն է մնում: Ես ձեզ հետ գալիս եմ Փարիզ:

— Առանց կատակի՞:

— Առանց կատակի: Որովհետև ևս գնդակ նետող եմ: Դերասանուհի չեմ:

— Շատ լավ, Լուսերես: Դե, հիմա քնիր:

Ես նորձոյ մտա անկողին, իսկ հայրիկը նստեց կողքիս, ու մենք կամացուկ խոսում էինք, հետո էլ քունս տարավ:

Ես դուրս եկա խաղաղաշտ ու տեղս կանգնեցի: Գնդակն ինձ գցեցին: Ես ձեռքիս մեջ ամուր սեղմեցի, տարա, բերի ու թափով շարտեցի. էնպե՛ս շարտեցի, որ մականորդը նույնիսկ շտեսավ, թե գնդակն ուր թռավ: Ես երեք մականորդի երեքական գնդակ ուղարկեցի ու սրանց բոլորին խաղից հանեցի. մեր թևն ազատվեց:



# ՀԱՅՐԻԿ ԳՌԻԻ ԽՆՆԻԹ ԵՍ



## ԱՐԱՄ ՍԱՐՈՅԱՆԻՆ

Ինչ էլ որ գրողը երբևէ գրի, իրողությունը միշտ մեկն է. նա կարող էր այդ նույն ժամաճակամիջոցում մի ուրիշ բան գրել: Նոր գիրք սկսելը միշտ նշանակում է վճռել, թե ինչի մասին ու ինչպես գրես: Նման վճիռը ամեն մի գրողի համար արդեն գրքի կեսն է, ոմանց համար՝ կեսից ավելին, իսկ ինձ համար՝ դիրքն ամբողջովին: Ինչ մնում է նստել-գրելուն, դա առանձն յի դժվարություն չէ, և գրողը հեշտությամբ զլուխ է բերում: Ես վճռեցի գրել այս գիրքը, որովհետև 1953-ին, երբ տասը տարեկան էիր, դու՛ր խնդրեցիր ինձ, և որովհետև 1918-ին, երբ ես ինքս էի տասը տարեկան, իմ գրողական հմտությունը հավասարազոր չէր այն ամենին, ինչ որ կուզենայի ասել: Հիմա, վերջապես, գրեցի գիրքս, կամ ավելի ճիշտ, հենց դու էլ գրեցիր: Իմ անելիքը շատ չէր. պիտի հիշեի ինձ տասը տարեկանում, քեզ աչքի առաջ ունենայի և ի մի բերելով երկուսիս տասնամյա հասակը, սրան գումարեի քառասունհինգ տարիս: Քո ձայնն ու քայլվածքը այս գրքի ատաղձն են, հայացրդ՝ ո՛հը՝ շիտակ ու անկեղծ, որ երանգավորվում է մերթ լուրջ խոհերով, մերթ հեզնախառն բացակասնչությամբ, մերթ էլ խոբհրդավոր ծիծաղով, նայած ուղադրությունդ զլավող առարկան ինչպիսին կլինի՝ իսկակա՞ն, թե՞ կեղծ, կամ և մեկը, և մյուսը, կամ էլ ընդհանրապես ոչ մեկը, ոչ մյուսը: Այս ամբողջից մի պարզ պատում հյուսելը ամենահեշտ գործն է աշխարհի երեսին, երբ դրան արդեն ձեռնամուխ ես եղել, և ահա, գործն արված է:

Շնորհակալությամբ ու սիրով՝  
ՎԻՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ

## ԳԻՐՔԸ

— Շնորհավոր՛ւ ծննդյանդ օրը,— ասաց հայրս:

Նա մի գիրք հանեց պիջակի գրպանից ու նվիրեց ինձ:

— Շնորհակալություն, հայրիկ,— ասացի:— Ես էլ հենց գիրք էի ուզում:

— «Ստորին ծնոտն» է,— ասաց նա:— Իմ վերջին ու եզրափակիչ վեպը: Ընդունիր գիրքս և դրա հետ մեկտեղ՝ նաև տքնանքս:

Ես «Ստորին ծնոտը» նախ դրսից նայեցի: Հետո բաց արի առաջին էջը, իսկ հետո՝ վերջինը:

Տեսքից հիանալի գիրք էր:

— Ի՞նչ տքնանք,— ասացի:

— Վեպ գրելու տքնանքը:

— Ես չգիտեմ ինչպես են գրում:

— Միայն մեծ գրողն իրավունք ունի պարծենալու, թե ինքը գիտի,— ասաց հայրս:— Իսկ դու դեռ շատ հեռու ես դրանից:

— Դե լա՛վ, բայց ինչի՞ մասին կարող եմ գրել:

— Քո մասին իհարկե:

— Ի՞մ: Ես ո՞վ եմ:

— Գրի՛ր սեփական վեպդ ու պարզիր: Ինչ վերաբերում է ինձ, ես մտադիր եմ խոհարարական գիրք գրել:

Մայրիկն ու քույրս, որ գնացել էին խանութ, վերադարձան տուն, և մայրիկն ասաց.

— Պատկերացնո՞ւմ եք: Նա տասը տարեկան է:

— Այո,— ասաց հայրս:— Մեր աղջիկն էլ արդեն ութ տարեկան է, ես՝ քառասունհինգ, իսկ դու՝ քսանվեց: Չգիտեմ, թե ոնց էսպես ստացվեց, բայց երեխ ուտելն էլ որոշ նշանակություն ունի:

— Այո, մանավանդ որ տղադ շատակերի մեկն է,— **ասաց մայրս։**

**Քաշը դարձել է Երեսուն կիլո:**

— Դե,— **ասաց հայրս,**— Երբ ծնվեց, ընդամենը երեք կիլո էր, ուրեմն տասը տարում ճիշտ տասը անգամ ավելացել է, ինչ հետևություն էլ որ դրանից անենք, գրողը տանի:— **Նա գրկեց քրոջս:**

— **Ախր ուռնիքն էլ թանկ ու կրակ է,**— **ասաց մայրիկը:**— **Ի՞նչ ես կարծում, բերածս մթի ըջի՛ համար ինչքա՞ն եմ վճարել:**

— **Նրկու դուլար:**

— **Քսաներկո՛ւ:**

— **Չէ, դու պիտի եփել-թափել սովորես:**

— **Հայրիկը մտադիր է խոհարարական գիրք գրել,**— **ասացի մորս:**

— **Այո, Փիթն էլ մտադիր է վեպ գրել,**— **ասաց հայրս:**— **է՛հ, այսօր ամսվա առաջին օրն է, բայց ես, շատ ափսոս, նորից անփող եմ:**

— **Իսկ ես ի՞նչ անեմ,**— **ասաց մայրիկը:**— **Տղաս տասը տարեկան է, աղջիկս էլ՝ ութ. պետք է կերակրեմ նրանց, չէ՞:**

— **Այ, պատճառներից մեկը հենց դա է, որ մտադիր եմ խոհարարական գիրք գրել,**— **ասաց հայրիկը:**— **Միգուցե գիրքս քեզ սովորեցնի, թե ուտելիքի հաշվին ինչպես փող խնայես:**

— **Քո կարծիքով ի՞նչ պիտի ուտենք: Բրի՞նձ:**

— **Դեռ լավ չեմ մտածել: Առայժմ բերածդ մթերքով յուրա գնա, տեսնենք:**

— **Երեք օր հետո սրանից փշրանք էլ չի մնա:**

— **Մի կերպ դիմացիր: Նս ստանալիք փող շունեմ, իսկ կանխավճար չեմ կարող խնդրել, մինչև խոհարարական գիրքս չսկսեմ: Գոնե մի ամիս դիմացիր:**

— **Անհնար է,**— **ասաց մայրս:**— **Տղադ էնպե՛ս է ուտում: Ամբողջ ուտելիքի՛ վերջը առլիս է.**

— **Իսկ եթե նրան ինձ մոտ տանե՞մ:**

— **Բայց պետք է կերակրես:**

— **Ինչ լա՞ւք:**

— **Եվ նա պետք է դպրոց գնա:**

— **Ինչ խոսք:**

— **Դե լավ,**— **ասաց մայրս:**— **Տար:**

Մենք հրաժեշտ տվինք մորս ու քույրիկիս և բլրից ոտքով իջանք խճուղի: Հույս ունեինք մի պատահական մեքենա բռնել ու հասնել հորս տուն, իսկ դա տասնմեկ մղոնի վրա է, հենց Մալիբուի ծովափին:

Հայրս չթողեց, որ մայրիկը իր մեքենայով մեզ տանի. ուզում էր վարժվեմ դժվարություններին:

— Կյանքում հաղվաղեալ է ամեն ինչ հեշտ ու հանգիստ լինում,— ասաց սա:— Ավելի լավ է հիմիկվանից սովորես դիմանալ դժվարություններին:

— Համաձայն եմ:

Մենք Մայրամուտի ծառուղով մտա մի մղոն քայլեցինք, դուրս եկանք հանդիպակաց 101-րդ փողոցը, ութ-ինը մղոն էլ բեռնատարով անցանք, հետո մեկ-երկու մղոն նորից քայլեցինք ու վերջապես տանն էինք:

Մակընթացության ժամն էր, երբ հորս տուն հասանք: Ամբողջ ճանապարհին արևը մեր աչքի առաջ ծովն էր սուզվում կամաց-կամաց: Մենք տան հետնասանդուղքով իջանք ծովի ափ, որ տեսնենք ինչ կ'ս բուխարում վառելու, կամ էլ թեկուզ ուղղակի նայելու՝ ջրիմուռ լինի դա, կոպիճ թև խեցի: Կոկա-կոլայի մի արկղ էր ընկած, հայրիկը վերցրեց, ասաց՝ պետք կգա, բայց ես ոչ մի կերպ չէի պատկերացնում, թե բացի մեջը շշեր դնելուց, ուրիշ ինչի է պետք: Գալարածև մի խեցի գտա, և հայրիկն ասաց՝ ա՛յ, իսկական գանձ, մի բան, որին ողջ կյանքում կարելի է նայել ու չհագենալ:

— Այդ գալարածև խեցու մեջ երկնային մարմինների ձևն ու շարժման հետազիծը կա,— ասաց նա, և ես նորից նայեցի խեցուն, դուրսն ու ներսը մի լավ զննեցի: Իրոք որ խեցուն հաճելի էր նայել. մեծ էր, համարյա ափիս կեսի չափ, գորշավուն սպիտակ գույնի, սև-սև բծերով, տեղ-տեղ էլ ծովի ջրից ծակծկված, էնպես որ երևում էր, թե գալարը ոնց է ներսում ոլորվել:

Մենք ծովափին մի քիչ թափառեցինք ու հետ դարձանք, բայց գտածներիս միայն վեց հատ կոպիճ ավելացավ՝ ընկույզից էլ փոքր, ու ջրիմուռի մի կտոր:

Երբ աստիճաններով տան պատշգամբը ելանք, հայրս ծովափից վաղուց հավաքած ջրիմուռների կույսը տակնուվրա արեց, որ բուխարում վառելու շոր կտորներ ջոկի:

— Սրանց մեծ մասը շատ են գեղեցիկ այրելու համար,— ասաց: Ես դուռը բացեցի, որ նա վառելիքը գրկին՝ ազատ ներս մտնի: Գեո

չէր հասցրել ջրիմուռները կիտել պատուած թղթերի վրա, մութն արգեն ընկավ, բայց ես լույսը շվառեցի, որովհետև գիտեի՝ հայրս սիրում է, որ իրիկնային լույսի առաջին ցուրքերը բուխարու կրակից գան: Նա մի սիգարետ դրեց բերանը, կպցրեց, հետո այրվող լուցկին մոտեցրեց թղթերին: Հազիվ էր հայրս մի անգամ ծուխը ներս քաշել ու թողել, որ կրակն իր լույսով սենյակը լցրեց, իսկ կրակի լույսը նման շի էլեկտրական լույսին, ավելի լավն է, թրթռուն ու տաք: Սովերները իսկույն պար բռնեցին պատերին և թովռալով վերուվար էին անում:

### ԼՈՒՍԻՆՁ

— Ես ուրախ եմ, որ դու իմ տանն ես,— ասաց հայրս:

— Ես էլ եմ ուրախ, որ էստեղ եմ,— ասացի:

— Դե, արի տեսնենք՝ ինչ ենք ուտելու: Մի քանի լոլիկ կա. իմ մարգերից եմ քաղել, տան առջևի բլրալանջի փոքրիկ բանջարանոցից: Մի քիչ էլ բրինձ կա ու ձիթապտղի յուղ: Հիմա մի բան կեփեմ. թե ինչ, ես դա կանվանեի փլավ գրողական ձևով, քանի որ երկուսս էլ արդեն գրողներ ենք:

Հայրս գործի անցավ. նա փլավ էր եփում գրողական ձևով, իսկ ես մտածում էի գրքի մասին, որ նրա ասելով՝ պիտի անպայման գրեի. սա իհարկե, կատակ էր, բայց ո՞վ իմանա: Միգուցե ես իրոք վեպ գրեմ, շնայած երբեք լուրջ չեմ մտածել, թե գրող կդառնամ:

Ասե՞մ իսկապես ինչ կուզեի դառնալ. օդաչո՞ւ: Կուղեի հենց առաջին հրթիռով լուսին թռչել. մի անգամ հորս խոստովանեցի, ասաց. «Կարծում եմ կթռչես»:

Երևի մի օր գլխի ընկնեմ, որ իսկի էլ չեմ թռչի, բայց հիմա դեռ գլխի չեմ ընկել:

Ես ուզում եմ առաջին մարդը լինել լուսնի վրա:

Բայց ոչինչ, կարող եմ գրող էլ դառնալ, մանավանդ եթե մեկնումեկը ինձնից շուտ հասնի լուսին. ի՞նչ արած, ուրեմն գրող կդառնամ ու հայրիկի տան նման մի տուն կճարեմ:

Զգիտեմ՝ գուցեև հորս պես անեմ. նախ՝ ամուսնանամ, տղա ունենամ, հետո էլ՝ աղջիկ, իսկ վերջում, հեռախոսի պատճառով թողնեմ, հեռանամ:

— Դու ամուսնացել ես հեռախոսի, ոչ թե ինձ հետ,— մի անգամ ասաց հայրս մայրիկին:

Իսկ մայրիկն ասաց, որ իրեն բարեկամներ ունենալու նույն քան իրավունք է տրված, որքան հորս՝ գրելու: Ասաց՝ ինքը օրհեկ կին է, տնային տնտեսուհի չէ: Ուզում է բարեկամների հետ շփվել, ուրախանալ:

Ես նայում էի հորս գրքերին ու խելքիս զոռ տալիս, թե ոնց է էս բոլոր հատորները գրել, մեկ էլ տեսնեմ՝ մտքերով տարված, արդեն հասել եմ լուսին:

— Ի՞նչ կմտածեն մարդիկ, երբ ես առաջինը լինեմ:

— Առաջին ի՞նչը:

— Լուսին հասնողը:

— Նրանք կհավատան: Երբ դու լուսին հասած առաջին մարդը դառնաս, և աշխարհի բոլոր թերթերը քո թռիչքի մասին հայտնեն, ամենքն էլ կհավատան:

— Իսկ ի՞նչ կա շահավատալու:

— Դե, ոչ ոք չի հավատում, թե ընդունակ ես լուսին հասնելու, մինչև որ չհասնես, բայց հասնելուցդ հետո ամենքն էլ հավատում են: Մարդիկ այդպես են:

— Դու այդպես չե՞ս:

— Ոչ:

— Բա էլ ո՞նց, հայրիկ:

— Ահա թե ոնց. ես չեմ ասում, թե դու լուսին չես հասնի: Ասում եմ՝ ինչի՞ համար ես ուզում հասնել լուսին:

— Որ առաջինը լինեմ լուսնի վրա, պարզ չի՞: Ինչո՞ւ են լեռնագնացները եսնում սարի կատարը: Որովհետև սար կա աշխարհում: Հարցնողներին նրանք էդպես են սլատասխանել: Ես ուզում եմ առաջինը հասնել լուսին, որովհետև աշխարհում լուսին էլ կա, ու դեռ ոչ ոք չի եղել լուսնի վրա:

— Ապրես, — ասաց հայրս:

— Բայց երբեք էլ լուսին չեմ հասնի, չէ՞, հայրիկ:

— Ինչո՞ւ:

— Է՛հ:

— Ի՞նչ է այդ «է՛հ»-ը:

— Գիտե՞ս, հայրիկ, ես ուզզակի ուզում եմ մի բան անել, ուրիշ ոչինչ: Թե չէ ձանձրալի է:

— Զանձրալի՞:

— Իհարկե:

— Իսկ ի՞նչ ես ուզում անել:

- Յավն էլ դա է: Չգիտեմ: Այ թե ինչու եմ լուսնի մասին մտածում:
- Աղնիվ խոսք, կուզեի մի բան անել:
- Բնական է:
- Բայց ախր անելիք չկա: Ոչ մի կարգին անելիք:
- Դե, ուտելն էլ հո կա՞. ահա և մշտական անելիք:
- Հայրս սեղանին երկու ափսե դրեց, երկուսի մեջ էլ՝ փլավ գրողական ձևով, և մենք նստեցինք ու սկսեցինք ուտել:

### ՊՂԻՆՁԸ

Փլավ գրողական ձևով. հենց սա է, որ հորս տանը ամեն տեղ կգտնես. մառանում լինի, թե սառնարանում, սպասքապահարանում, թե խոհանոցի սեղանին, թասիկի, թե թղթե տոպրակի մեջ՝ ամեն տեղ քա է. փլավ գրողական ձևով, այսինքն՝ բրնձից եփած ինչ ասես:

«Բրնձից հազար ու մի բան կարելի է եփել», — ժամանակին փորձում էր հայրս բացատրել մայրիկին, բայց նա ոչ մի կերպ գլուխ չէր հանում ու անընդհատ հարցեր էր տալիս. «Իսկ կարելի՞ է բրնձին պանիր խառնել»: Կամ. «Կարելի՞ է բրնձի վրա տոմատի սոուս լցնել»: Կամ էլ. «Կարելի՞ է վրան կանաչ սոխ կտրատել»:

- Հը՛, լա՞վն է, — ասաց հայրս:
- Սրանից վատ ճաշ կյանքում չեմ կերել:
- Պղինձը դեռ լիքն է:
- Իսկ ո՞ւր է իմ մի բաժակ կաթը:
- Ա՛յ, հիանալի ջուր: Դու արդեն տասը տարեկան ես:
- Բա անուշեղեն:
- Ոչ մի անուշեղեն:
- Է՛, երևում է ուտելիքից հարուստ չես, հայրիկ:
- Ես տանս այնքան ուտելիք ունեմ, որ մի ամբողջ ամիս կհերիքի: Եթե հարկ լինի՝ նույնիսկ երեք ամիս:
- Երկուսի՞ս:
- Իհարկե: Ուտելիքն ի՞նչ է: Մի բան, որ լցնես ստամոքսդ և վերջ: Վաղն էլ մի պղինձ կարմիր լոբի կեփեմ:
- Բա տապակա շի՞ լինելու:
- Ոչ մի տապակա:
- Բա թխվա՞ծք:
- Ոչ մի թխվածք:



— Բա փո՞ղ:

— Վերջ տուր: Ես մտադիր չեմ մի տասնամյա միմոսի առաջ կարգին մարդ ձևանալ:

— Թեկուզ, բայց ասա՝ փող է՞լ չի լինելու:

— Ոչ մի փող:

Հայրս տաք պղինձը բերեց ու սեղանին դրեց: Նա իմ ափսեն նորից լիքը բեռնեց, իսկ հետո՝ իրենը, և պղինձը դատարկվեց:

Դա ամենալավ ուտելիքը չէր, որ ես երբևէ կերել էի, բայց ափսեումս ոչ մի փշուր չթողեցի: Ստամոքսս լցվեց: Սեղան նստելիս սոված էի, ուտելիս սոված էի, սեղանից վեր կացա՝ էլի սոված էի:

— Ինչ որ ուտում եմ, դու էլ հետս կեր,— ասաց հայրիկը,— և ուժեղ ու դիմացկուն կդառնաս:

— Բայց կարմիր լոբին գոնե սրանից համե՞ղ է:

— Երբ վաղը լոբին ուտելու ժամանակը գա, դա աշխարհի բոլոր ուտելիքներից ամենահամեղը կերևա:

— Ո՞նց:

— Ես ու դու,— ասաց հայրս,— գրողներ ենք: Ամեն ինչ մեզ համար ավելի լավն է ու առավել, քան ուրիշ որևէ մեկի համար: Դու շարունակ քո վեպն ես գրում:

— Ես չգիտեմ ինչից սկսեմ:

— Ոչ մի գրող էլ չգիտի: Ու ոչ ոք չի իմացել, թե երբ է սկսել: Մինչդեռ քո վեպը վաղուց է սկսված:

— Առանց կատակի՞:

— Առանց կատակի:

Ես վեր թռա տեղիցս ու պար բռնեցի, հայրս էլ քրքջաց խենթ ու սովահար գրողի քրքիջով, որն ինձ շատ է դուր գալիս:

## ՀԵԾԱՆԻՎԸ

Հայրիկն ափսեները լվաց, հետո միասին դուրս եկանք տնից, աստիճաններով բարձրացանք զարած ու մեր հեծանիվները հանեցինք: Հորս հեծանիվը երկու տարվա «Ռալի» է, իսկ իմը նա Սան Ֆրանցիսկոյում է առել, երբ ես չորս տարեկան էլ չկայի: Սա ամենափոքր երկանիվներից է: Մայրիկը որոշել էր Փրկության բանակին տալ, բայց հայրս ասաց. «Չէ, դեռ պետք կգա»: Ու հեծանիվը բերել, իր զարածում էր դրել: Եվ հիմա մոտեցավ փոքրիկ, կարմիր հեծանիվին, ասաց.

— Եթե կուզես, դու մեծը քշիր, մինչև փոքրը մաքրեմ:

Դե, «Ռալին» իսկական, մեծ հեծանիվ է, բայց ես, մեկ է, քշել գիտեմ: Մի անգամ քշել եմ, երբ հայրիկը դա նոր էր տուն բերել, էնպես որ նստեցի հեծանիվն ու սկսեցի քշել Մալիբուի ճամփին: Քիչ հետո արդեն կարգին քշում էի ու երանի տալիս, որ Երկա՛ր-երկար մնամ հորս տանը: Բայց շէի ուղում հայրիկի գլուխը ցավեցնեք, թե՛ ի՞նչ կլինի մնամ, որովհետև գիտեի՝ դա էնպիսի բան է, որ մայրս է որոշում: Մեկ էլ տեսար՝ դանգեց ու ասաց. «Տղային բեր տուն»: Ու հայրս ինձ վերցնելու էր, տաներ մորս տուն, որտեղ ես իմ մեծ ննջարանն ունեմ, իմ առանձին սենյակն ու առանձին լողարանը: Տան իմ բաժինը ես շատ եմ սիրում: Ամբողջ տունն էլ սիրում եմ, պարտեզն ու հեռնաբակը, մեր խաղալու տեղը՝ բլուրն ու թավուտը, բայց հորս տանը ոչի՛նչ չի հասնի:

Ես շուտ եկա ու հեծանիվը քշեցի գարաժի մոտ. շէ՛, մտածեցի, միգուցե խոսեմ հորս հետ, տեսնենք ինչ է դուրս գալիս: Նա փոքրիկ, կարմիր հեծանիվը շրջած՝ անիվներն ու ճաղերն էր մաքրում:

— Հայրի՞կ:

— Հա:

— Ի՞նչ կարծիքի ես, մայրիկը կթողնի՞, որ էստեղ երկար մնամ:

— Չգիտեմ:

— Եթե նա թողնի, դու համաձայն կլինե՞ս, հայրիկ:

— Ինչո՞ւ չէ:

— Ախր հասկանո՞ւմ ես, հայրիկ, դու քառասունհինգ տարեկան ես, իսկ ես՝ տասը:

— Ճիշտ է:

— Այ, ասենք թե դու գնալու տեղ ունես, իսկ ես պիտի մնամ տանը: Եթե սովորեմ ի՛նքս հոգալ իմ մասին, կթողնե՞ս, որ մի որոշ ժամանակ ապրեմ քեզ մոտ:

— Գուցե դու հենց վաղն առավոտյան ուզես տուն վերադառնալ:

— Չէ, ես չեմ ուզի:

— Կավ, արի էսպես պայմանավորվենք: Դու ուզածիդ շափ կմնաս, այսինքն՝ ինչքան որ մայրդ թողնի:

— Իսկ դո՞ւ:

— Ես ստիպվա՛ծ եմ մնալ:

— Չէ, ուղում էի ասել, իսկ դո՞ւ ինչքան կթողնես մնամ:

— Դե, ես այնքան կթողնեմ մնաս, մինչև որ քուն գնալուդ ժամանակը լինի:

www.a-poi.com  
Հայրս իր մեծ հեծանիվը նստեց ու ամբողջ թափով սլացավ առաջ։ Դեռ տեսած չկայի, որ մեկնումեկն էրպես արագ սլանա հեծանիվով։ Ես էլ իմ կարմիր հեծանիվը նստեցի, շնայած արդեն շատ փոքր էր ինձ համար, ու հորս պես բռեցի ամբողջ թափով, բայց գիտեի, որ երբեք նրան չեմ հասնի։ Նա Մալիբուի ճամփով սուրաց մայրուղի, հետո շրջվեց ու հետ եկավ։

— Ես կուզեի մտքումդ այ թե ինչ պահես,— ասաց։— Պարտադիր չէ, որ քո կյանքում ինչ-որ քան լինի անպայման այսպես ու ոչ թե այնպես։ Դու կարող ես մնալ ինձ մոտ, քանի դեռ տուն գնալու ցանկություն չունես։ Կարող ես վերադառնալ ինձ մոտ, երբ նորից ցանկություն ունենաս։ Քո կյանքում ոչինչ չպետք է լինի անպայման այսպես ու ոչ թե այնպես։

— Հասկանում եմ, հայրիկ։

## ՍՈՒՐԸ

Հայրս գիտի, որ երբեմն կատաղում եմ վրան, երբեմն էլ՝ նույնիսկ ատում . գիտի, որովհետև մի օնգամ իր բերանով ասաց, իսկ ես համոզված էի, թե դա իմ դադուհիքն է։ Նա էնպես ասաց, կարծես խոսքը մեր մասին չլիներ։ Ասաց՝ բնական բան է, որ որդին երբեմն ատի իր հորը ու նաև մորը, երբեմն էլ՝ ամբողջ աշխարհը։

— Եթե մարդ ընդունակ է սիրել,— ասաց նա,— ուրեմն ընդունակ է և ատել։ Իհարկե, մեծ մասամբ սիրում ես, բայց և անհնար է, որ շատես։ Ատելությունը շատ օգտակար զգայում է, եթե ճիշտ ըմբռնես։

Երբ հայրս ասաց, թե դուրեց հենց վաղն առավոտյան ուզեմ տուն վերադառնալ՝ մորս մոտ, ես կատաղեցի վրան ու ո՛նց որ ատելությամբ լցվեցի։ Հայրիկը զգաց դա, ու ես ամռչեցի։

Մենք իջանք գարածի աստիճաններով, մտանք տուն, ու հայրիկն իր սիրած ձայնապնակը դրեց. Մոցարտի կոնցերտը։ Նա կանգնել էր լուսամուտի մոտ ու նայում էր ծովին։ Իսկ ես նրա գործիքների արկղն էի քանդում, որ տեսնեմ բոլոր գործիքներն են տեղում։ Ամեն ինչ լուռ էր։ Ու դաշնամուրն էր մեղմիկ նվագում, բայց նվագն ինչքան էլ որ մեղմիկ լիներ, մեկ է՝ լսում էիր ու ճիշտ գուշակում, թե ինչ ելևէջ է հիմա հնչելու։

Ես հորս ասացի.

— Ուղո՞ւմ ես վաղը տուն գնամ, հայրիկ։

Հայրս շուռ շեկավ: Ու ոչ էլ իսկույն ինձ պատասխանեց, բայց ես գիտեի, որ վաղ թե ուշ կպատասխանի:

— Իմացած եղիր... — ասաց նա վերջապես: Շատ կամացուկ էր խոսում, բայց ես նրա ձայնն էլ էի լսում, դաշնամուրի նվազն էլ, և թվում էր, թե երաժշտությունն ու հորս խոսքերը ներդաշնակ են հնչում:

— Իմացած եղիր, — ասաց նա, — ես ու դու հայր և որդի ենք, իսկ ամեն հայր ու որդի համարյա նույն մարդն են, միայն թե մեկը՝ տարեց, մյուսը՝ երիտասարդ: Բայց միևնույն ժամանակ, մենք շենք ճանաչում իրար. օտարների նման, ինչպես փողոցում հանդիպած անծանոթներ: Իհարկե, ես կուզեի, որ մնաս, բայց սրտնեղությամբ եմ մտածում, թե գուցեև հարկ համարես մնալ իմ հաճույքի համար:

— Չեմ մնա, եթե չուզեմ:

— Ապրես:

## ԽԱՂԱՒԻՔԸ

Դաշնամուրը այնքան նվագեց, մինչև ձայնապնակը հասավ ավարտին:

Նվագարկիչի ասեղը կամաց խզիլում էր պտտվող ձայնապնակի վրա, կարծես ասեր՝ վերջ, բայց հայրս դեռ կանգնել էր լուսամուտի մոտ ու նայում էր ծովին:

Երևի մտքերով էր տարվել:

Ես մոտեցա նվագարկիչին ու ասեղը վերցրի ձայնապնակի վրայից:

— Դե՛, — ասաց հայրս, — դասերդ սովորե՞լ ես:

— Դպրոցում եմ սովորում:

— Ուրեմն վաղվա համար ամեն ինչ պատրաստ է:

— Լրիվ:

— Այդ դեպքում՝ գուցե էլի երաժշտություն լսենք: Թե՞ խաղանք:

— Չի՞ լինի, որ երկուսն էլ անենք:

— Շատ բարի: Ի՞նչ կուզեիր լսել:

— «Խորամանկի երգը»:

Հայրս ձայնապնակը փնտրելով եոզեց.

Զորավարին խորամանկ  
Թող բոլորը ճանաչեն  
Իսկ թե կուզեք իմանալ,  
Ես նրանից պակաս չեմ:

Նա քայլել կտա առաջ,  
 Հետո՝ մերթ ձախ, մերթ էլ աջ,  
 Բայց դուք, տղերք, շխարվեք,  
 Թե չէ անշունչ կփովեք:

Հայրս ձայնապնակը դրեց, ու երգիչն սկսեց.

Ա՛խ, շերիֆին խորամանկ  
 Թե՛ղ բոլորը ճանաչեն:  
 Իսկ թե կուզեք իմանալ,  
 Ես նրանից սլակաս չեմ:

Նա ձեզ ընկեր կդառնա  
 Ու լավ մարդ կձեռնա,  
 Բայց դուք, տղերք, շխարվեք,  
 Թե չէ բանտը կնետվեք:

— Դե հիմա,— ասաց հայրս,— արի խաղանք: Հանդախաղ է: Ես մի բառ կասեմ, դու ի պատասխան՝ ուրիշը, որ հանգավորվի իմ ասածի հետ: Իսկ հետո դո՛ւ կասես, ու արդեն ես հարմար հանգ կգտնեմ, հետո էլ մի նոր բառ կավելացնեմ: Կուզե՞ս դո՛ւ սկսիր:

— Խորամանկ:

— Հրամանք,— ասաց հայրս:— Հույս:

— Լույս,— ասացի ես ու ավելացրի:— Մով:

— Մով: Մուլ:

— Դուլ: Ալիք:

— Գալիք: Տարի:

— Բարի: Դաս:

— Թաս: Քուն:

— Տուն: Երազ:

— Շատ տեղին միտք է,— ասաց հայրս:— Արի անկողին մտնենք, որ կարողանանք լուսաբացից առաջ արթնանալ:

Մենք անկողին մտանք, բայց ես միշտ էլ ղզում եմ, երբ մեկնում եմ կը մթնում արթուն է լինում, ու պարզ էր, որ հենց հայրս է արթուն:

— Հայրի՞կ:

— Հա:

— Հիշո՞ւմ ես, մի անգամ, Սան Ֆրանցիսկոյում ներս ընկա քո առանձնասենյակը, իսկ դու աշխատում էիր:

— Ինչո՞ւ մի անգամ, շատ է պատահել:

— Ասե՞մ որ անգամ էր. երբ դու ձևացրիր, թե չգիտես՝ ով եմ, ես էլ փորձում էի իբր բացատրել քեզ: Ինչքա՞ն էի հրճվել. ախր շնայած դու շարունակ կրկնում էիր, թե չգիտես՝ ով եմ, բայց հասկանում էի, որ գիտես: Չէի հասկանում միայն, որ աշխատում ես:

— Իհարկե, ի՞նչ պիտի հասկանայիր:

— Ես ոչ մի կերպ գլխի չէի ընկնում, թե քո սեղանին ինչ խաղալիք է միշտ. գրամեքենադ: Անքնագհատ ուզում էի պարզել՝ ո՞ր խաղի համար է դա, բայց ամեն անգամ, երբ թույլ էիր տալիս նստեմ գրամեքենայիդ առաջ ու փորձեմ նույնն անել, ինչ դու, մեկ է՝ էլի խելքս ոչինչ չէր կտրում: Ես սպասում էի, թե բացի տկտկացնելուց ու թղթի վրա նշաններ թողնելուց, մի ավելի կարևոր բան է լինելու:

— Դե քնիր, քնիր:

— Լավ, հայրիկ: Բայց ես շատ հուշեր ունեմ, չէ՞:

— Պարզ է, կունենաս:

Ես ականջ դրի ալիքների ձայնին, իսկ հետո քունս տարավ:

### ԱՐԵՎԸ

Գիշերն ինչ երազ ասես, որ շտեսա, բայց մեծ մասը մոռացել եմ: Միայն մեկն եմ հիշում. որ ազատ թռչում էի: Հենց ինքս, այսինքն՝ առանց օդանավի, առանց հրթիռի ու ոչ էլ թռչունի պես. ուղղակի ինքս. ինձ ու ինձ թռչում էի և շատ հպարտ էի, որ կարող եմ էրպես հեշտ ու հանգիստ թռչել: Մայրիկը ապշած էր մնացել:

— Հանկարծ շրնկնես,— ասաց:

Քույրս ավելի էր ապշել, քան մայրիկը: Վազում էր իմ հետևից ու թնգթնգում.

— Ինձ է՛լ սովորեցրու: Ես է՛լ եմ ուզում թռչել:

Հայրս ասաց.

— Վատ չէ:

Ես արթնացա հորս գրամեքենայի տկտկոցից: Քնած էի, որ տկտկոցն ականջիս ընկավ: Մինչև արթնանալս էլ, երկար լսում էի, որովհետև միտքս է՝ դեռ տեսակ-տեսակ երազներ տեսա տկտկոցի տակ, միայն թե քնիս մեջ կարծում էի՝ թմբուկ են զարկում, ու ես մերթընդմերթ համաշափ քայլում էի շքեթի ելած զինվորի նման, թեև մենակ էի, ուրիշ զինվորներ չկային: Իսկ երբ վերջապես արթնացա, վեր թռա անկողնուց ու իսկույն վաղեցի հյուրասենյակ: Հայրս նստել էր թղթախաղի սեղանի

մութ, որն ուղածդ ժամանակ կարող ես ծալել ու պատի պահարանը դնել: Նա էլեկտրական լույսի տակ էր աշխատում, որովհետև դեռ մութ էր:

— Արդեն հագնվե՞մ:

— Իհարկե:

— Ժամը քանի՞սն է:

— Համարյա վեցը: Մի քանի րոպեից լույսը կբացվի: Եթե ուզում ես, իջիր ծովափ, տես ինչ կգտնես, մինչև որ խոհարարական գրքիս առաջին գլուխը ավարտին հասցնեմ:

— Կավ:

Ես շորերս գցեցի վրաս ու վազ տվի ծովափ. ճիշտ ժամանակին, որ տեսնեմ, թե ինչպես է արևը ելնում սարերի կատարին: Երկինքը մոխրագույն թուխպերով էր պատած, ու սրանք փակել էին արևի ճամփան, բայց նրա շողերը դուրս էին սողոսկում թուխպերի արանքից: Եվ լույսը գնալով ավելի էր պայծառանում: Ես սկսեցի ման գալ ծովափին, մի քանի կոպիճ ու խեցի գտա, իսկ հետո՝ մի կտոր ջրիմուռ: Բայց ինչ որ սրտանց ուզում էի գտնել, էդպես էլ չգտա. ոսկով ու գունձերով լիքը մի սնդուկ՝ ծովահենների նավից: Չէ, երբեք էլ չեմ գտալի, պիտեմ. արդեն մեծ եմ սա հասկանալու համար, բայց ամեն անգամ՝ ծովափ իջնելիս, նույնն եմ մտածում ու ինձ հույս տալիս, թե վերջիվերջո, պետք է, որ գտնեմ:

## ԱՇԽԱՐՀԸ

Երբ տուն վերադարձա, հայրս աշխատանքը մի կողմ էր դրել ու թղթախաղի սեղանին լրագիր փոել: Ափսեաները, բաժակներն ու ինչ կա չկա, շարել էր սեղանին և նախաճաշ էր պատրաստում: Ես ցույց տվի հորս իմ գտած կոպիճները, ջրիմուռի կտորն ու խեցիները, իսկ նա ասաց.

— Տեղով հրաշք են: Բոլոր գտածներդ էլ ուղղակի հրաշք են: Տար ծորակի տակ պահիր և ամեն մեկը ուշադիր զննիր: Պիտի ամեն ինչ ուշադիր զննես. հենց դա է գրող դառնալու ուղին:

Քանի դեռ հայրս նախաճաշի հոգսերով էր զբաղված, ես կոպիճները, ջրիմուռի կտորն ու խեցիները լվացի և ամեն մեկը շատ ուշադիր զննեցի, շուռումուռ տվի բոլոր կողմերից նայելու համար ու ինչե՞ր, ինչեր ասես, որ չտեսա: Աչքովս էնպիսի մանրուքներ ընկան, որոնք երբեք չէի տեսնի, եթե ուշադիր չնայեի: Ես տեսա, որ ամեն մի փոքրիկ բան աշխարհում շատ ավելին է, քան թե թվում է: Մի կոպիճ կար՝

կես ընկույզի շափ, սև էր ու տեղ-տեղ կարմիր պուտերով. սպիտակ, մաքուր գիծը նրա մի մասը բաժանում էր մյուսից, կարծես պատլիկ կոպիճը մի ամբողջ աշխարհ լիներ, սպիտակ գիծն էլ ցամաքն էր անջատում ջրից: Կոպիճին նայելիս՝ շատ ու շատ մտքեր գլխովս անցան, ու ես ուրախացա, որ ընդունակ եմ ինձ հանդիպածը էսպես պարզ տեսնելու, փոքրիկ առարկան էսպես մեծ տեսնելու, այնքան մեծ, ոյքան ուզածդ բանը, ինչ էլ դա լինի և ուր էլ լինի:

— Գիշերն ի՞նչ երազ է քեզ եկել, հայրիկ:

— Է՛հ, թե ճիշտը խոստովանեմ,— ասաց հայրս,— այս գիշեր իրոք որ երազի մեջ էի և նույնիսկ հիշում եմ, թե ինչ երազի: Վաղ առավոտյան քայլում էի փողոցով ու հանկարծ նկատեցի, որ հենց ոտքերիս մոտ նոր թղթադրամների մի կապոց է ընկած. երևի մեկնումեկը փողը բանկ տանելիս, պատահաբար գցել էր մայթին, ու ես մտքումս երանի տվի, որ թղթադրամները մեկ դուլարանոցներ շինեն, որովհետև այդ դեպքում ընդամենը հինգ հարյուր դուլար կունենայի, բայց եթե թղթադրամները տասը դուլարանոցներ լինեին, ուրեմն հինգ հազար դուլար կունենայի:

— Ու ի՞նչ դուրս եկան, հայրիկ: Մեկ դուլարանոցնե՞ր, թե՞ տասը:

— Հարյուրանոցնե՛ր:

— Հինգ հարյուր հատն էլ՝ հարյուրանոցնե՞ր:

— Այո:

— Ինչքա՞ն է ստացվում:

— Հիսուն հազար դուլար:

— Պա՛հ: Իսկ ի՞նչ արիր:

— Արթնացա: Դե, գնա լվացվիր, որ նախաճաշենք:

### ՁՈՒՆ

Ես լվացվեցի ու սեղան նստեցի, և շուտով հայրս տաք-տաք թավալով ինչ-որ բան բերեց խոհանոցից ու երկուսիս մեջ կիսեց:

— Սա ի՞նչ է:

— Մալիբուլի ձվածեղ:

— Այսի՞նքն:

— Մալիբուլում պատրաստված ձվածեղ, որի հեղինակը ես եմ:

— Մեջն ի՞նչ կա:

— Նախ՝ ձիթապտղի յուղ, քանի որ ձիթապտղի յուղը կարագից



էժան է, ավելի օգտակար աճող տղայի կամ տղամարդու համար և ամեն դեպքում, ձվին ավելի հարմար: Երեք պճեղ սխտոր, քանի որ ձիթապտղի տժտժան յուղով տապակած սխտորը համեմուն է յուղը և ինքն էլ իր հերթին, շատ ախորժելի համուհոտ ստանում: Մանր կտրտած մի քանի տաքդեղ: Մաղադանոսի երկու-երեք ոստ: Որևէ տեսակի պանիր, ինչ որ ձեռքի տակ լինի՝ կամ փոքր քանակութեամբ, կամ մեծ, կամ էլ ցանկացած քանակի: Երկու ձուն, երկու՛ւտը, ոչ թե շորսը, կտրում ենք թասի մեջ, աղ գցում, պղպեղ, հետո՝ մի քիչ կաթ՝ թարմ կամ խտացրած, մի քիչ էլ՝ ալյուր: Բոլորը խառնում ենք իրար, հարում, թե որքան՝ ոչ մի նշանակութիւն չունի: Մինչ այդ ձիթապտղի յուղը լավ դաղված է լինում, իսկ թավայի ամբողջ պարունակութիւնը՝ արդեն կարմրած: Թասի շաղախը լցնում ենք թշշացող թավան: Հենց որ խառնուրդը մի լավ տապակվում է, ջրային մասը՝ գոլորշիանում, թավայի մեջ գոյացած բոլորակը երկտակ ծալում ենք ու մի կես բոպեից հակառակ երեսը շրջում: Եվս կես բոպեից երկու երեսն էլ հաճելի ոսկեգույն են դառնում, և կերակուրը պատրաստ է. ոչ եփն է անցել, ոչ էլ պնդացել է: Բաժակի միջի հեղուկը, ինչ խոսք, թեյ է: Կեսուրից հետո քեզ համար կաթ կճարեմ, բայց առայժմ թեյն էլ վնաս չի տա: Եթե անշուշտ, շափից շատ շիմես ու շափից շատ թունդ: Իսկ պնակի միջինը բարակ շերտերով կտրտած լոլիկ է: Կարող ես ուտել կամ չուտել: Մեկը՝ ես, սիրում եմ, որ նախաճաշին լոլիկ էլ է լինում:

- Դու իրո՞ք միտք ունես խոհարարական գիրք գրել, հայրիկ:
- Իհարկէ: Իսկ դու իրո՞ք միտք ունես վեպ գրել:
- Է՛, շատ կուզենայի:
- Բայց միտք ունե՞ս:
- Ծս նույնիսկ «ձվածեղ» բառը ճիշտ գրել չգիտեմ:
- Իսկ «ձիթապտուղը»:
- Ոչ էլ «ձիթապտուղը»:
- Լավ, բա ի՞նչ ես կարողանում գրել:
- Իմ անունը:
- Ուրեմն՝ պատրաստ ես վեպն սկսելու:
- Իսկ դու կարողանո՞ւմ ես ճիշտ գրել, հայրիկ:
- Ծս այն բառերն եմ կարողանում ճիշտ գրել, որոնց ուղղագրութիւնը գիտեմ, բայց երբեմն մոռանում եմ, թե անգամ այդ բառերն ինչպես են գրվում:
- Հետո՞, ի՞նչ ես անում:
- Ուրիշ բառ եմ օգտագործում:

— Բառաբան շե՞ս նայում:

— Նայում եմ, բայց ոչ բառերի ուղղագրությունը պարզելու համար:

— Է՛հ, էլ ինչի՞դ է պետք բառաբանը:

— Կարողում եմ. ուղղակի հաճույքի համար: Բառաբանը հրաշալի վեպ է, բանաստեղծությունների մի ամբողջ մեծ հատոր, խորիմաստ մտքերի մի ժողովածու կյանքի և արվեստի մասին:

— Բայց ամենահրաշալի գիրքը Աստվածաշունչն է, չէ՞:

— Պատվական գիրք է:

— Ու ամենաշատն էլ վաճառվում է, չէ՞:

— Ասում են: Հենց որ հրատարակչին սնանկանալու վտանգ է սպառնում, նա տեղնուտեղը Աստվածաշնչի նոր հրատարակություն է ձեռնարկում:

— Ինչո՞ւ է Աստվածաշունչը այդքան տարածված:

— Տրովհետև կարդալու համար չի ըստ երևույթին:

— Բա ինչի՞ համար է:

— Պարզապես ունենալու:

— Ի՞նչ օգուտ ունենալուց:

— Դե, համարվում է, որ էդպես է կարգը: Տանն Աստվածաշունչ ունենալը նույնն է, թե աշքիգ առաջ մարդկային ցեղի առասպելն ունենալ:

— Մարդկային ցեղի առասպելն ի՞նչ է:

— Ես ու դու, որ հիմա նստած ուտում ենք:

— Ու վե՞րջ:

— Դե լավ, արի էսպես ասենք. ես ու դու և քո մայրն ու քույրը: Սա է մարդկության առասպելը: Մի տղամարդ և կին, որ դառնում են մի նոր տղամարդու և կնոջ հայրն ու մայրը: Այ, սա է առասպելը:

— Բա օղանավե՞րը, լուսին թռչելու հրթիռներն ու մնացածը:

— Ամեն ինչ տղամարդն է ու կինը, հետո էլ՝ մի նոր տղամարդ ու կին:

— Ինձ հարկավոր չի էդպիսի առասպելը:

— Իսկ ի՞նչ առասպել է հարկավոր:

— Իմ սեփականը:

— Շատ բարի: Հիմա էլ դպրոցից խոսենք:

— Ես չեմ ուզում դպրոց գնալ:

— Բայց պետք է գնաս:

— Ինչո՞ւ:

- Որ «ձվածեղն» ու «ձիթապտուղը» սովորես ճիշտ գրել ու նաև ուրիշ բաների համար:
- Ուրիշ ինչի՞ համար:
- Որ քո եղբայրներին ու քույրերին տեսնես:
- Ես ընդամենը մի քույր ունեմ, նրան էլ, փառք ասածու, դժվար թե դպրոցում տեսնեմ:
- Բայց բոլոր մյուս տղաներն ու աղջիկներն էլ են քո եղբայրներն ու քույրերը:
- Ես չեմ ուզում, որ նրանք իմ եղբայրներն ու քույրերը լինեն:
- Ուզես, թե չուզես, միևնույն է, նրանք քո եղբայրներն ու քույրերն են:
- Ո՞նց:
- Մարդկային ցեղի առասպելն է դա:
- Գրողի ծո՛ցը կորչի մարդկային ցեղը, հայրիկ: Ես գերմարդկայի՛ն ցեղից եմ:

### ԲԱՆԱԼԻՆ

- Հայրս զանգեց Ջոքի անունով մեկին ու հարցրեց, թե նա չի՞ համաձայնի Փասիֆիք Փալիսեյդս՝ աշխատանքի գնալիս, ինձ էլ վերցնել, իսկ աշխատանքից հետո՝ տուն բերել դպրոցից:
- Ջոքին ինձ տարավ, հետո էլ բերեց, բայց բանից պարզվեց, որ նրա անունը էդուարդո Ջոնֆալա է: Ես բանկի վարչության փոխնախագահ է՝ Դպրոցից տուն եկա ու հորս ասացի.
- Գլխումս մի լավ միտք է ծագել, հայրիկ:
  - Ոչ մի կասկած չունեմ:
  - Արի վաղն առավոտյան Ջոքիի հետ գնանք բանկ, սպասենք, մինչև նա բանալիով դուռը բաց անի, մանի ներս ու սեյֆը բացի, իսկ հետո նրան կապենք աթոռին, ամբողջ փողը հանենք սեյֆից ու տուն բերենք:
  - Ինչի՞ համար:
  - Որ հաշվենք:
  - Եթե հաշվել ես ուզում,— ասաց հայրս,— այ, տոպրակի միջից իննսունինը լոբու հատիկ հաշվիր:
  - Կհաշվեմ,— ասացի,— բայց լոբու հատիկները հո դուլարներ չե՞ն:
  - Իհարկե ոչ:

- Իսկ ինչի՞դ է պետք իննսունինը լոբու հատիկը:
- Պիտի մի բան եփեմ, որ ընթրիքին ուտենք:
- Երեկոյան կաթս կստանամ:
- Կստանաս, այո:
- Զգվում եմ կաթից:
- Պարզ է: Արդեն քանի՞ հատիկ ես հաշվել:
- Երեք կույտ եմ արել, ամեն մեկում՝ ինը հատիկ, բայց մի մասը մանր են մյուսներից, մի քանիսն էլ կամ կոտորված են, կամ խորդուբորդ: Ուզում ես, որ սրանք է՞լ հաշվեմ:
- Ոչ: Միայն անվնաս հատիկները հաշվիր՝ մեծ, թե մանր, կարևոր չի, իսկ կոտորվածներն ու խորդուբորդերը կարող ես մի կողմ դնել:
- Բա դրա՞նք ինչ ես անելու:
- Մնացածի հետ պղինձը կլցնեմ:
- Էլ հաշվելը ի՞նչ միտք ունի:
- Եթե իննսունինը անվնաս հատիկներին, — ասաց հայրս, — ութ-ինը կոտորված կամ խորդուբորդ ավելացնենք, լավ շափ է դուրս գալիս, և բացի դրանից, ես կուզենայի, որ դու ավելի ուշադիր նայես լոբու հատիկներին: Երինակ՝ ուրիշ ի՞նչ ես նկատում:
- Դե, մի քանիսի կեղևը ճաքճքած է, իսկ երկուսինը՝ ուռած: Սրանք է՞լ հաշվեմ:
- Մի կողմ դիր, կոտորվածների կողքին: Ես ուզում եմ ինքս էլ մի հայացք դրել: Վերջացրի՞ր:
- Հա, արդեն տասնմեկ կույտ եղավ, ամեն մեկում՝ ինը անվնաս հատիկ, յոթն էլ կոտորված են կամ խորդուբորդ, երեքի կեղևը ճաքճքած է, իսկ երկուսինը՝ ուռած:
- Բոլորը միասին ի՞նչ միտք են հուշում:
- Որ ճիշտ միանման լոբու հատիկներ չկան:
- Է՞լ ինչ:
- Որ երեկ ճիշտ միանման բաներ աշխարհում չկան:
- Շատ ապրես: Հիմա կարող ես կարճ շալվարդ հագնել ու ծովափ իջնել: Սպասիր ինձ էնտեղ: Հենց որ լոբին դնեմ կրակին, ես էլ կարճ շալվարով կգամ, ու վազքի մեջ կմտնենք, տեսնենք ով է շուտ հասնում Կարմիր քարափին:
- Ո՛ւիս:
- Ես կարճ շալվարս հագա ու մի վայրկյանում դուրս թռա ծովափ: Մի քանի րոպե անց հայրս էլ եկավ:

Կարմիր քարափը երեք հարյուր յարդի վրա է, հորս տնից՝ դեպի արևելք: Որտեղից գիտե՞մ: Հայրս է ասել: Ես ու նա Կարմիր քարափի անունը Հրաշակերտ քարափ ենք դրել, որովհետև միակն է ծովեզրին, որ կարմիր գույն ունի: Ու պես-պես երանգներով միշտ կարմրին է տալիս: Մյուս բոլոր քարափները կամ սև գույնի են, կամ էլ սևավուն: Կարմիր քարափը համեմատաբար հեռու է ջրից, ու միայն շատ ուժեղ մակընթացության ժամին է ծովը նրան հասնում: Մի հսկա քարափ է, ամենամեծ մեքենայից էլ երկու անգամ խոշոր:

Մրցելիս մենք թափ առած վաղում ենք, ինչքան ոտքներումս ուժ կա, ու ով որ առաջինը հասնի քարափի բարձունքին, հաղթող է ճանաչվում և Հրաշակերտ քարափի արքա. Ես ևմ մեր վազքի մրցումն ու դրա կանոնները հնարել: Սկզբում հայրս չէր ուզում վազել. ասում էր՝ ինքն արդեն տարեց մարդ է, բայց ես համոզեցի, որ չէ, նա էլ ի վերջո վազեց, ու իրոք, իմ ասածը ճիշտ էր:

Վազքի մրցումը միշտ ևս ևմ բացում:

Ես ևմ մեկնարկի հրաման տալիս. «Պատրա՛ստ. ուշադրությո՛ւն: Առա՛ջ»:

Հայրս սովորաբար խոսում է վազելիս:

«Այ, բեզ էդպես նեղը կզցեմ» — ասում է նա:

«Պա՛հ, տեսա՞ր»:

Ես միանգամից ուժերս լարում եմ ու նրանից առաջ անցնում, իսկ նա ասում է. «Ձէ՛, իմ համեմատ դու ուղղակի շատ ես արագավազ: Ուղղակի շատ ես ջահել, ուրիշ ոչինչ»:

Ու հիմա էլ, հենց որ հայրս իջավ ծովափ, ես մեկնարկի հրաման տվի: Ա՛յ թե մրցում էր, իսկական մրցում, երևի ամենալավը մեր բոլոր մրցումներից, որովհետև հայրս կարգին վազում էր: Նա երեք սեգամ ինձնից առաջ անցավ, բայց վերջում ես հաղթեցի: Դժվար թե հայրս կարողանար հաղթել, թեկուզ ամբողջ ուժով ճգներ: Ես հարչրի դրա մասին, ու նա ասաց.

— Ամեն անգամ էլ ամբողջ ուժով ճգնում եմ:

Մենք կանգնել էինք քարափի գլխին ու նայում էինք անծայր ծովին: Հետո նստեցինք, որ հանգստանանք ու զրուցենք:

- Դե՛, — խոսեց հայրս, — ի՞նչ կասես:
- Ծովը հենց իմ տեղն է: Օրերից մի օր, հայրիկ, ես էլ քո տան պես մի տուն կունենամ:
- Իսկ դպրոցի մասի՞ն ինչ կասես: Խոսքս դրան է վերաբերում:
- Ի՞նչ պիտի ասեմ:
- Օրդ բարեհաջո՞ղ անցավ:
- Հա, տնօրենի մոտ շուղարկեցին:
- Դա արդեն լավ է: Քրոջդ տեսա՞ր:
- Մեծ դասամիջոցին եկավ, ինձ բակում գտավ:
- Տեսքը ո՞նց էր:
- Սովորականի նման:
- Ի՞նչ էր ասում:
- Թե ինքն էլ է ուզում գալ մեզ մոտ, մի քիչ մնալ:
- Իսկապե՞ս:
- Հա: Ասում է՝ ազնիվ բան չի, որ ես ապրում եմ էստեղ, իսկ իրեն շեմ կանչում:
- Մի օր մորդ կհարցնեմ, թե կարելի՞ է նրան էլ բերել ինձ մոտ:
- Չէ, հայրիկ, թող էնտեղ մնա: Հերիք է, ինչքան որ տանը տեսնում եմ:
- Հիմա՛ շեմ ասի: Հետո:
- Ի՞նչ մի ուրախություն է քույր ունենալը. պոչիցդ կաշում ու պոկ չի գալիս:
- Լավ: Է՞լ ինչ կա:
- Չգիտեմ, հայրիկ:
- Հետո մենք հենց էնպես նստել էինք: Ոչ ես էի խոսում, ոչ հայրս: Ես մեկնվեց քարափի գլխին ու աչքերը փակեց: Ես էլ մեկնվեցի ու հայացքս ուղիղ երկինք դարձրի:
- Վերևում սպիտակ ամպեր էին լողում, ու ես երկար հետևում էի սրանցից մեկին: Ա՛յ ման գալու տեղ, անցավ մտքովս, իսկ հետո արդեն ամպի վրա էի ու վերևում ման էի գալիս ինձ համար: Բարձունքից նայում էի աշխարհին:
- Շուտով քույրս վազեվազ եկավ, ասում է՝ ինքն էլ ինձ նման իրավունք ունի վերևում ման գալու: Ասացի՛ դե որ շարշարվել, հասել է էստեղ, թող մի քիչ մնա:
- «Բայց ի՞նչ կլինի, շատ շԲԼԷԼաս»:

Նա ասաց՝ չի բլբլա, բերանն էլ չի բացի, բայց էնքան բլբլաց, թե բերանը չի բացի, ծպտուն էլ չի հանի, մինչև ասացի՝ կամ ձայնը կտրի, կամ թողնի գնա: Նա ձայնը կտրեց, ու ես ինձ համար էլի ման էի գալիս, նայում աշխարհին, բույրս էլ՝ կողքիս:

Իսկ հնոտ ամպից իջա ու քարափի գլխին էի նորից:

— Արի հետդարձի ճամփան շվազենք, — ասաց հայրս: — Արի ավեզրով գնանք ու սև քարափների վրա խեցեմորթներ փնտրենք. այ, եթե մի քանի թմբլիկ ու տուուզ խեցեմորթ գտնենք, հետս կտանեմ տուն, կեփեմ: Վաղվա ընթրիքս կլինի. դե, գիտեմ, որ դու խեցեմորթ չես սիրում:

## ԽԵՑԻՆ

Մենք իջանք քարափի գլխից և ծովի ծանծաղուտը մտանք. տան կողմն էինք գնում ու սև քարափների մոտ մերթընդմերթ կանգնում, որ թմբլիկ ու տուուզ խեցեմորթներ գտնենք: Ուղիղ մեր դիմաց արևը դանդա՛ղ մայր էր մտնում: Քարափների կողերին ամեն տեսակ փոքրիկ խեցեմորթներ տեսանք, բոլորն էլ՝ շատ մանր, որ հավաքելինք, տուն տանեինք ու դրանց վրա ժամանակ ծախսեինք, բայց հետո հայրս քարափներից մեկի գոգին մի տեղ գտավ, ուր ինչքան ասես խոշոր ու հասուն խեցեմորթներ կային, նա էլ պոկոտում էր քարից ու շավարի գրպանները խցկում, իսկ երբ գրպանները արդեն լիքն էին, պոկոտածների մի մասն ինձ տվեց, որ իմ գրպանները դնեմ, դեռ որոշ մասն էլ ձեռքներիս էինք բռնել ու էդպես հասանք տուն, խեցեմորթները լցրինք խոր լվացարանն ու ջուրը բաց թողեցինք, և հայրս ձկնորսական դանակը վերցրեց ու խեցիները մի առ մի քերելով մաքրեց:

Խեցեմորթներից մի քանիսը երկփեղկանի չէին, փոքր, վարդագույն խեցիներով էին՝ սրանց պինդ կպած, իսկ կոնաձև խեցիներից ամեն մեկը կարծես հրաբխային ցածրիկ լեռ լինե՛ր՝ բաց խառնարանով, մի քանի խեցեմորթներ էլ այգու խխունջների ուր որ պատյանի նման փոքրիկ զրահներ ունեին, և իհարկև, բոլորը՝ մազի պես բարակ ու դարչնագույն թելիկներ: Խեցու ներսում թելիկները կպած են խեցեմորթին, իսկ դրոսից կպչում են քարին, որ խեցեմորթը էդպես կառչած մնա, սնվի ու մեծանա:

Մի անգամ, երբ ես ու հայրս գնացել էինք նրա տան հետևի սև քարափից ձուկ որսալու, հիշում եմ, քարափի կողից երկփեղկանի խեցեմորթներ հավաքեցինք, դրանց խեցիների փեղկերը բաց արինք ու

միջուկները որպես խայծ օգտագործեցինք: Խեցու միջուկը նարնջագույն է, մի քիչ եզրերն են սև: Իսկ խեցին սևախառն մանիշակագույն է ու պիտի ամենաքիչը մի վեց մատնաչափ երկարություն ունենա, թե ուզում ես միջուկը ուտել: Խեցին ու նրա միջուկը միասին հենց խեցեմորթն են, բայց միայն միջուկն է կարևոր, եթե մարդ մտադիր է խեցեմորթից ուտելիք սարքել: Այնինչ խեցու մեջ թաքնված խեցեմորթի համար ամենակարևորը խեցին է, որովհետև նա շի կարող առանց խեցու ապրել ու մեծանալ: Մանրիկ խեցեմորթները ապրում են փոքր խեցիներում, իսկ սրանք, պատահում է, շատ պստիկ են լինում, բայց մեկ է, ուզածդ երկփեղկանի խեցին միևնույն ձևն ունի. կոկլիկ ու համաշափ նշի է նման: Երբեմն խեցեմորթը քարից պոկելիս, հանկարծ կտեսնես՝ վեց-յոթ պստիկներ իրենց թելիկ-մելիկ թաթիկներով կառչել են մեծ խեցուն, ու նրանց տեսքից էլ շեա կշտանա, որովհետև պստիկ խեցիները արտակարգ մաքուր են ու հարթ, և բացի դրանից, գիտես, որ ամենքի ներսում մի պստիկ խեցեմորթ է ապրում: Ես միշտ մտածում եմ խեցիների մեջ ապրող խեցեմորթների մասին, ու մեկ-մեկ զգում, որ անարդար բան է, երբ նրանց քաշում, պոկում ես իրենց ապրելու տեղից, բայց հայրս ասում է՝ դա անարդարություն չէ, համենայն դեպս, էնպիսի անարդարություն, որի համար տխրես:

- Ախր նրանք կենդանի են, չէ՞:
- Այո, կենդանի են:
- Իսկ հենց որ պոկում ենք քարից, արդեն մեռնում են:
- Այո:
- Ուրեմն՝ նրանց ցավ ենք հասցնում:
- Ոչ:
- Ո՞նց թե:

— Նրանք ցավազուրկ են, ցավին անզգա,— ասաց հայրս:— Մենք միակ արարածներն ենք, որ ցավազուրկ չենք: Ապրում ենք՝ մեր ապրածը գիտակցելով, ու երբ ցավ են հասցնում, այդ ցավն զգում ենք:

### ԱՍՏՎԱԾ

Իմ ու հորս միջև երկար զրույց բացվեց, թե ովքեր ենք մենք, և ովքեր են կենդանիները:

Ես հազար ու մի հարց էի տալիս հորս, իմ մշտական սովորության պես, նա էլ ամեն մի հարցիս պատասխանելու հետ մեկտեղ՝ ընթրիքի



պատրաստութիւնն էր տեսնում ու վերջապէս, ինձ ձեռքով արեց, թե՛ սեղանը դիր:

Սա նշանակում էր, որ թղթախաղի սեղանը պիտի քաշեմ հյուրասենյակի հայելապակե լուսամտի տակ: Պիտի աթոռներից երկուսը մոտ բերեմ: Հետո էլ սեղանին պիտի թերթեր փռեմ: Ես աշխատում եմ թերթերն էնպէս փռել, որ կոմիքսները իմ կողմը ընկնեն և ուտելիս աչքի պոչով նայում եմ, իսկ հորս կողմը տարբեր լուրերով ու հողավածներով էջերն եմ գցում: Հին թերթերից լավ սփռոց չկա: Ուտելիս՝ քեզ համար նայում ես, կարդում, հենց որ վերջացրիր, ծալում ես սփռոցն ու բուխարին նետում:

— Այժմ համառոտակի կներկայացնեմ, թե մեր ճաշը ինչից է բաղկացած,— ասաց հայրս:— Մեքսիկական լոբախաշու, այսինքն՝ իննսունինը կարմիր լոբահատիկ, կես լիտր ջուր, մի գլուխ սոխ, մի տաքդեղ, մաղադանոսի շորս ոստ, շորս պճեղ սխտոր, երեք ճաշի գդալ ձիթապտղի յուղ, երեք լոլիկ, աղացած կարմիր պղպեղ և սև պղպեղ:

— Ու ինչքա՞ն ես եփում:

— Մինչև որ հատիկները փափկեն, և ամբողջ զանգվածը շոգեհարվելուց թանձր խյուս դառնա: Երկու ժամ մարմանդ կրակի վրա, բայց երեքն էլ չի խանգարի:

— Իսկ համե՞ղ է:

— Դա ի՛նքդ կասես, երբ համը տեսնես:

— Է՞լ ինչ ունենր:

— Հաց ու ջուր:

— Եվ վե՞րջ:

— Կիովին հերիք է, բայց իհարկե, կաթ էլ կա քեզ համար ու նաև քաղցրեղեն՝ ընկույզ, շամիչ ու նուշ, եթե՛ ճաշդ ուտելուց հետո ուզես անուշ անել:

— Երևում է դու չես սիրում, հայրիկ, որ սեղանին տեսակ-տեսակ ուտելիքներ լինեն, հա՞:

— Չեմ սիրում, այո: Երբ շատ կերակրատեսակներ են առջևդ շարած, ոչ մեկն էլ չես ճաշակի, ինչպէս որ հարկն է:

Հայրս սեղանին երկու ափսե լոբախաշու դրեց, ու մենք նստեցինք, իսկ հետո նա ինձ ուղղակի գարմացրեց. ձեռքերը խաչեց կրծքին ու գլուխը կախեց:

— Ի՞նչ է եղել:

— Հապա աստված: Իմ կարծիքով, անիմաստ բան չէ, որ մարդ երբեմն փորձի աստծու հետ զրույցի մտնել:

- Պարզ է:
- Հայրս մի կես բուպե լուռ էր, հետո ասաց.
- Ամեն:
- Ազոթեցի՞ր:
- Այո:
- Ի՞նչ ասացիր:
- Զգիտեմ: Երևի ոչինչ: Դե, արի ուտենք:

## ՎԱԶՐ

Մենք սկսեցինք ուտել, ու պարզվեց՝ ճաշը կարգին համեղ է:

Եղած-չեղածը, ճիշտ է, լոբի էր, բայց սխտորով ու մյուս համեմունքներով՝ դարձել էր ավելին, քան լոբու հատիկներն էին, որ հաշվեցի տոպրակի միջից. իրոք, շատ ավելին, քան այդ մանրիկ, չոր ու պինդ հատիկները կարող էին լինել:

— Պատմիր ինձ, դու ինչպիսի՞ն էիր իմ տարիքում:

— Ոչինչ չէի հասկանում,— ասաց հայրս:— Եվ չգիտեի՝ ո՞ւմ հարցնեմ: Զգիտեի՝ ինչպե՞ս հարցնեմ: Եվ չէի էլ հարցնում: Պարզապես սպասում էի, կարծես քնի մեջ՝ մի տարօրինակ, բայց հրաշալի երազ տեսնելիս: Ինձ ու ինձ ասում էի՝ սպասի՛ր, ախպերս, այ, գրազ կգամ, որ ամեն ինչ հոյակապ կլինի:

— Ու էդպես էլ ստացվե՞ց:

— Այո, ես կասեի: Նույնիսկ ավելի հոյակապ ստացվեց, քան երազներին մեջ:

— Ի՞նչ գտար. փո՞ղ:

— Զէ: Մի ուրիշ բան:

— Ի՞նչ:

— Հասկանալու կարողությունը:

— Ե՞րբ գտար:

— Մինչև տասներկու տարեկանս, ճիշտն ասած, չէի գտել, բայց շատ վաղուց էի նախազգում, որ դա գոյություն ունի, ու պիտի գտնեմ: Իսկ նախազգացումը, թե ինչ-որ բան կա գտնելու, համաբայա նույնքան հաճելի է, որքան գտնելը. համարյա, բայց ոչ լիովին: Պետք է անշափ համբերատար լինես ու շարունակ փնտրես, թեկուզ ամեն ինչ գնալով ավելի ու ավելի խճճվի: Բայց եթե փնտրածդ մի անգամ գտար, ուրեմն

արդեն քոնն է, ախպերս, ու դու ազատ ես դա ցանկացած ձևով գործի դնելու, ընդունակ ցանկացած հրաշքն արարելու:

— Իսկ դու ինչպե՞ս ես գործի դրել, հայրիկ:

— Դե, ես առայսօր էլ որևէ ձևով գործի եմ դնում, ու մտքովս երբեք չի անցել, որ դրանից հրաժարվեմ, իսկ ընդհանրապես, ամեն կերպ գործի եմ դրել, մեծ մասամբ՝ գրելիս:

— Չլինի՞ խոհարարական գիրքդ գրելիս էլ պիտի գործի դնես:

— Իհարկե:

— Հայրիկ, հասկանալու կարողությունն ի՞նչ է:

— Է՛, շատ կուզենայի բացատրել, բայց ճշմարտությունը քեզնից շեղված է. ոչ մեկն ի վիճակի չէ դա մյուսին բացատրելու, անգամ հայրը՝ որդուն: Ի՛նքդ կիմանաս, երբ այդ կարողությունը ձեռք բերես: Անպայման կիմանաս: Դա ամենամեծ բանն է աշխարհում:

### Գ Ի Ն Ի Ն

Մենք լոբախաշուն կերանք, ամբողջ պղինձը դատարկեցինք, հետո ես ընկույզ ու շամիչ էլ կերա, և հայրս ասաց.

— Ի՞նչ խաղանք, մինչև ամանները լվամ:

— Անվանախաղ:

— Ուրեմն՝ սկսիր:

— Իդա, — ասացի ես:

— Իդան ընկավ անկենդան, — արաց հայրս, — իսկ պատճառը չգտան:

— Հա՛-հա՛-հա՛:

— Կուիզ, — ասաց հայրս:

— Կուիզը պատռել էր փեշի երիզը,

Սառի ճյուղին էր թողել մի թիզը:

— Բզենո՛ւ ճյուղին էր թողել մի թիզը, — ասաց հայրս:

— Բզենի՞ն ինչ ծառ է:

— Ա՛յ, բանի դեռ ամաններն եմ սրբում, նայիր բառարանում:

Ես բառարանը վերցրի, բաց արի «Բ» տառն ու դրա տակ գտա.

«Բզենի. կենազգիների ընտանիքին պատկանող փշատերև, մշտադալար ծառ: Հիշեցնում է սոճին, արժեքավոր բնափայտ ունի: Ամենից հաճախ աճում է Անգլիայի վանքամերձ դամբանատներում»:

— Պա՞րզ է, — ասաց հայրս: — Դե՛, մի ուրիշ անուն մտածիր:

- Ալիս, — ասացի:
- Ալիս, դոյակում ես եղել ապրելիս, — ասաց հայրս ու կանգ առավ:
- Հետո՞:
- Ինչ է, երկրորդ տո՞ղն ես ուզում:
- Բա իհարկե, եթե կարող ես հարմարեցնել:
- Լավ, սպասիր տեսնեմ...

Ալիս, դոյակում ես եղել ապրելիս,  
Բայց ավա՛ղ, միայն երազում, սիրելիս:

- Վատ չէ:
- Գրեյս, — ասաց հայրս:
- Գրեյսը լվաց իր երեսը... Հիմա՝ դժվար մասը...

Գրեյսը լվաց իր երեսը,  
Բայց խեղճն անցավ ճամփի կեսը:

- Ի՞նչ-ի՞նչ:
- Հա՛-հա՛-հա՛, այսինքն՝ մրցման հանդեսում:
- Ի՞նչ մրցման հանդես:
- Որին մասնակցում է ինքը. այ, «հանդես»-ն էլ «երես»-ի հետ է հանգ կազմում.

Գրեյսը լվաց իր երեսը  
Ու բացեց մրցման հանդեսը:

- Բա մի տո՞ղն ինչ եղավ. նա ճամփի կեսն էր անցել, չէ՞:
- Դե լավ.

Գրեյսը լվաց իր երեսը  
Ու բացեց մրցման հանդեսը,  
Բայց խեղճն անցավ ճամփի կեսը,  
Թեկուզ և լվաց երեսը:

- Իսկ էսպե՞ս.

Բայց խեղճն անցավ ճամփի կեսը,  
Թեև թափ առավ մեր Գրեյսը:

- Նարեկի է:
- Մի՛ անուն էլ ասա, արդեն ամանները սրբած կլինեմ:
- Մարգրեթ, — ասացի: — Տեսնենք սրանի՞ց ինչ ես դուրս բերելու:

- Դժվար թե բան ստացվի:
- Ոչինչ, փորձիր:
- Մարգրեթը պատրաստ է ամեն տեղ գնալ...
- Ինչի՞ համար:
- Դե, հենց էնպես: Չպիտեմ:
- Իսկ չի՞ լինի, որ ասենք,

Մարգրեթը պատրաստ է ամեն տեղ գնալ՝  
Ձեռուտը դաջերով նախշելու համար:

- Բայց ո՞ր բառի հետ է «համար»-ը հանգ կազմում:
- Ոչ մի բառի,— ասացի ես:— Ուղղակի նա խելառ աղջիկներից է. ամեն տեղ էլ պատրաստ է գնալ՝ ձեռուտը դաջերով նախշելու համար, ուրիշ ոչինչ:

— Շատ բարի,— ասաց հայրս:— Վե՛րջ: Հիմա ճամփա ընկիր, գնանք հեծանիվ քշելու:

Մենք փոխնիփոխ «Ռալին» քշեցինք, հետո երկուսով ֆուտբոլ խաղացինք, շնայած ոտքերս դեռ փոքր են, որ սովորական ֆուտբոլի գնդակով կարգին հարվածներ հասցնեմ, դրա համար էլ, պարզ է, հարվածներիս մեծ մասը թույլ էին: Ճիշտ է, գնդակն ահագին հեռու եմ խփում, բայց խաբս տալ չգիտեմ, այնինչ իսկական հարվածը խաբս տալով է լինում: Էլի լավ էր, որ վարժվեցի ու հորս խփած գնդակները բռնում էի. ինչքան էլ նա խաբս տար, նետվում էի, բռնում ու քսան, թե երեսուն գնդակից միայն վեցը բաց թողեցի:

## ՁԻՆ

Հայրս ավելի շուտ է հոգնում, քան ես: Նա ասում է՝ ոչ թե հոգնած է իրոք, այլ պարզապես չի ուզում հոգնել: Ասում է՝ եթե ինձ շրնդհատեն, այնքան կխաղամ, որ վերջը ուժասպառ կընկնեմ:

Չէ, ուղղակի ոչ մի ուրախ դբաղմունք ես հոժար կամքով ընդհատողը չեմ, մինչև շատիպեն. այ, օրինակ՝ մի անգամ, ամռանը, հայրս ինձ տարել էր Դայնուբա՝ էնդի Ֆայդոնի ուանչոն, ես էլ էնդի Ֆայդոնի արաբական ձին տեսա ու խնդրեցի, որ թույլ տան հեծնեմ, հետո ձին նստեցի ու համարյա ամբողջ օրը քշեցի. արդեն ընթրիքի ժամն էր, իսկ ես դեռ քշում էի, թեպետ ձին երեք անգամ ինձ գետնով էր տվել:

Հայրս վրա հասավ, ձիու սանձը բռնեց ու ներս քաշեց ախոռ, հե-

տո, երբ ձգվեց, որ ինձ իջեցնի, հանկարծ լացս եկավ, որովհետև չէի ուզում ձիուց իջնել, և հայրս ասաց.

— Դե լավ, լավ, հասկացանք:

Ես լալիս էի ու անշնորհք խոսքեր ասում, իսկ նա ինձ բերեց էնդի Ցայդոնի տուն, պառկեցրեց մահճակալին ու նստեց կողքիս և սպասում էր, որ վերջ տամ լացիս ու անշնորհք խոսքերիս, ես էլ քիչ հետո իրոք վերջ տվի, ու քունս տարավ, բայց դեռ խոր քնած չէի, որ նա ժածկոցը գցեց վրաս: Այն ժամանակ հազիվ ութ տարեկան էի: Վատ երազներ տեսա, իսկ երբ արթնացա, չգիտեի որտեղ եմ, ու ժամը քանիսն է, բայց մեկ էլ ներս մտավ հայրիկն ու ասաց.

— Կսիր, ի՞նչ ես իմացել: Մոտ հինգ ժամ է, քնած ես. երևում է կարգին հոգնել էիր:

— Կներես անշնորհք խոսքերիս համար,— ասացի ևս, բայց հայրիկն ասաց.

— Ա՛հ, չարժի ուշք դարձնել դրա պես դատարկ բաների վրա:

Ես վեր կացա ու հորս հետ դնացի էնդի Ցայդոնի խոհանոցը, և մենք բոլորս սեղան նստեցինք: Ընթրիքն ուշացել էր, որովհետև էնդի Ցայդոնն ու նրա կինը՝ Ոոզը, խոսքները մեկ արած՝ հացի շէին նստել, մինչև ես չարթնանամ: Հայրս ու էնդի Ցայդոնը մանկության ընկերներ են:

## ՄՈՒԱԽՈՏԸ

Երբ հեծանիվ քշելուց հետո ֆուտբոլ խաղալն էլ վերջացրինք, հայրս ինձ ասաց.

— Դե, հիմա ես մի քիչ քաղհան անեմ իմ բանջարանոցում, իսկ դու մեր նախամուտքի աստիճաններին նստիր, կամ էլ գնա ներս և որևէ գրքով զբաղվիր:

— Ավելի լավ է նստեմ:

Ու ես նստեցի, իսկ հայրս, աստիճանների կողքից թեքվելով՝ մտավ բանջարանոց: Նա պպզել էր իր մարգերի մեջ ու մոլախոտերը քաշում էր, հանում:

— Տես,— ասաց հայրս,— իմացած լինես. թեև մոլախոտերն աբ-մատախիլ եմ անում, բայց և հիանում եմ սրանցով:

— Հա՛-հա՛-հա՛:

— Ինչո՞ւ ես ծիծաղում:

— Որովհետև ամեն ինչի մասին դու լավ բան ունես ասելու, նույն-

իսկ բանջարանոցիդ մուխտոտերի, իսկ ո՞վ չգիտի, որ մուխտոտերը ոչ մի օգուտ չեն տալիս:

— Մուխտոտերի գլխին անընդհատ կրակ ու պատիժ է թափվում, — ասաց հայրս, — բայց աչքդ թեքեցիր թե չէ, նրանք տեղնուտեղը նորից են ծլում՝ ճիշտ առաջվա պես սուս-փուս, անշուք ու աննկատ, առանց հպարտության կամ ինքնագոհության և բնավ չչարացած, ինչքան էլ որ ջարդված ու ջախջախված լինեն: Սա ուղղակի հոյակապ հատկանիշ է, կրկին ու կրկին տեսնելու արժանի:

— Ի՞նչ-որ մուխտոտեր: Ա՛յ թե խոսելու բան ես գտել, հայրիկ: Ախր դրանք տեղով զզվանք են: Գարշելի հոտ է վրաներից գալիս:

— Ավելի ճիշտ՝ անսովոր: Եվ զզվելու ոչինչ չկա: Սրանք պարզապես հենց այն հոտն ունեն, որը պետք է ունենան: Եվ դա բոլորովին էլ գարշելի հոտ չէ: Իհարկե, մուխտոտերը բանջարեղենի կամ ծաղիկների անուշ հոտը չունեն, բայց սրանց հոտը պակաս հաճելի չէ մյուս բոլոր հոտերից:

— Հա՛-հա՛-հա՛:

— Ահա և վերջ, այսօրվա քաղհանն արեցի, իսկ հիմա գնանք տուն, մի քիչ պիանուլա լսենք, մի քիչ էլ գիրք կարդանք ու անկողին մտնենք:

Պիանուլայի երաժշտության համար հորս խելքը գնում է. չեմ հիշում մի օր, որ շուգենա պիանուլա լսել:

### ՄԵՔԵՆԱՆ

Ուրբաթ օրը դպրոցից վերադարձա էդուարդո Ջոնֆալայի հետ, տեսնեմ հորս տան առաջ մի փոքրիկ, կարմիր ֆորդ է կանգնած. մտքումս ասացի. «էս ո՞վ է հյուր եկել հայրիկին»:

Բայց երբ բարձրացա պատշգամբ ու ներս մտա տուն, ոչ ոք էլ չկար, բացի հայրիկից, որ թղթախաղի սեղանի մոտ նստած՝ իր խոհարարական գրքի վրա էր աշխատում:

— Ո՞ւմն է դրսի կարմիր ֆորդը:

— Մերը:

— Ո՞նց թե՛ մերը:

— Գնել ենք:

— Բա փո՞ղ որտեղից:

— Շուֆիի արհեստանոցի տղերքը Մալիբուի ճամփին՝ հենց արհեստանոցում, ապառիկ գնով ֆորդը մեզ գիջեցին:

— Իսկ ի՞նչ արժի:

- Հարյուր դուար:
  - Ամսական ինչքա՞ն պիտի տանք:
  - Ինչ դուար՝ մի տարվա ընթացքում: Դուրս է գալիս ուղիղ հարյուր ութ դուար: Ութն էլ տոկոսն է ու ծառայութիւնն մատուցելու վարձը:
  - Բայց քշել կլինի՞:
  - Կարծես թե այո:
  - Ծածկը իջնո՞ւմ է:
  - Մինչ դու դպրոցում էիր, ես երկու-երեք անգամ իջեցրել-բարձրացրել եմ:
  - Իսկ քանի՞ տարվա է:
  - Դե, կարգին հին է:
  - Քանի՞ տարեկան:
  - Տասնմեկ:
  - Ինձնից մի տարով մեծ է: Արի հենց հիմա էլ դուրս գանք ու քշենք:
  - Լավ,— ասաց հայրս:— Միկնույն է, փոստով ուղարկելու բան ունեմ, էնպես որ արի փոստատուն գնանք:
  - Ինչի՞ համար ես դա առել, հայրիկ:
  - Մեզ մեքենա է պետք,— ասաց հայրս:— Սրանից հետո ե՛ս քեզ կտանեմ դպրոց, բայց Մալիբուի դպրոցը, ոչ թե Փասիֆիք Փալիսեյզսի:
  - Ուրեմն՝ երկա՞ր եմ մոտդ մնալու:
  - Դե, քանի որ վերադառնալու մասին ծպտուն չես հանում, ես էլ եղրակացրի, որ ուզում ես մնալ:
  - Իհարկե ուզում եմ:
  - Շատ բարի: Երկուշաբթի օրը քեզ կտանեմ Մալիբուի դպրոցը:
- Հո բան չե՞ս թողել նախկին դպրոցում:**
- Ընդամենը մի խումբ թշնամիներ:
  - Ի՞նչ թշնամիներ են:
  - Ուսուցիչները, աղջիկներն ու խաբեբաները:
  - Պարզ է, արի նամակներս վերցնենք, որ փոստարկղը զցենք:

## ՃԱՄՓԱՆ

Մենք դուրս եկանք Մալիբուի ճամփան ու փոքրիկ, կարմիր ֆորդը նստեցինք: Հայրս շարժիչը գործի դրեց թե չէ, սա հենց նույն վայրկյանին էլ սկսեց աշխատել ու առանց խափանվելու, միալար հոնդում էր:



— Չէ, էժան ենք պրծել, հայրիկ:

— Շուֆիի արհեստանոցի տղերքին մեքենան համարյա ձրի է բաժին ընկել, շարժիչը մի քիչ կարգի են բերել ու խելք-խելքի տվել, որ էսպիսի ֆորդն իսկը իմ բանն է:

— Լավն են Շուֆիի արհեստանոցի տղերքը:

— Ճիշտ որ լավն են:

— Է՛հ, բա ինչո՞ւ չենք առաջ գնում, հայրիկ:

— Միշտ պիտի թողնել, որ շարժիչը մի թեթև տաքանա, մանավանդ եթե նոր է:

— Նո՞ր: Տասնմեկ տարվա շարժիչ է, ի՞նչ նոր: Դա նույնն է, բե մարդ հարյուր տարեկան լինի:

— Երևի: Իսկ պաստառը քեզ դո՞ւր է գալիս:

— Ինչի՞ց է:

— Արհեստական կաշվից:

— Հա՛, շատ է դուր գալիս, հայրիկ: Հիանալի բան է: Դե՛, քշիր մեքենան: Տեսնենք կգնա՞:

Հայրս ազատություն տվեց մեքենային, ու սա տեղից պոկվեց: Չէ, ուղղակի հոյակապ էր գնում, և մենք շաշ ու շառաշյուն դրած՝ սլանում էինք Մալիբուի ճամփով, անվերջ վեր-վեր թռչում, ասես խանձողների վրա էինք նստել, իսկ ոլորաններն էնպես էինք վզզալով անցնում, կարծես մրցարշավի մասնակիցներ լինեինք, այն մրցարշավներից մեկի, որ ամեն տարի կազմակերպվում են Ֆրանսիայի և Իտալիայի ճամփաներին, հետո էլ կինոխրոնիկայում մերթընդմերթ ցուցադրվում: Երբ հասանք Շուֆիի արհեստանոցին, բոլոր տղերքը շուռ եկան մեր կողմն ու ձեռքով արին, ի պատասխան՝ մենք էլ ձեռքով արեցինք, իսկ մի տղա վազեց ճամփամեջ, որ հետևներիցս նայի: Հենց մտանք մայրուղի, ես հորս ասացի.

— Դե, շատ արագ մի քշիր, հայրիկ, թե չէ կբռնեն: Մենք պետք է մի հնար գտնենք, որ ամսական ինը դոլար ճարենք:

— Ես դանդաղ ու զգույշ կքշեմ, — ասաց հայրս: — Առաջին վճարը դեկտեմբերի մեկին եմ մուծելու:

— Բա որտեղի՞ց ես ինը դոլար վերցնելու:

— Այ, դրա համար եմ ծրարներն ուղարկում:

— Ի՞նչ է մեջները:

— Պատմվածքներ են ու երկու գրախոսություն, և հետո՝ խնդրանքով հրատարակչին եմ դիմում, որ խոհարարական գրքիս համար կանխավճար տա:

— Դե ուրեմն՝ գուցե փող ստանաս:

— Ո՞վ իմանա:

Դեռ ուշքի չեկած՝ հասանք փոստատուն: Հայրս վեց-յոթ հատ ծրար տվեց ինձ:

— Տար դու գցիր, — ասաց: — Զեռքդ հաջողակ է:

Ես ծրարները գցեցի փոստարկղը, իսկ հետո մենք ճամփա ընկանք տուն, բայց նախ մի փոքր շեղվեցինք մայրուղուց:

## ՏԱՊԱՆԸ

Մենք բլրաշարի մեջ ձգվող ճամփան էինք բռնել, կալանավորների սարքած ոլորապտույտ ճամփան: Սա մեզ բերեց մի դպրոցի մոտ, որ երկուշաբթի օրվանից ես պիտի հաճախեի՝ նախկին դպրոցի փոխարեն, որտեղ արդեն մի տարի սովորել էի:

Հայրս կանգնեցրեց փոքրիկ, կարմիր ֆորդը: Մենք դուրս եկանք մեքենայից ու թեք բլրալանջով իջանք դպրոցի բակը, իսկ դպրոցը կոչվում էր Ուեբսթերի անվամբ:

— Ո՞վ է Ուեբսթերը:

— Տեղական դատավորը, բայց ես ու դու կհամաբենք, որ դպրոցը կոչվում է ոչ թե նրա, այլ մի ուրիշ Ուեբսթերի անվամբ, այսինքն՝ Նոյի՝:

— Ինչո՞ւ Նոյի, ոչ թե տեղական դատավորի:

— Նոյ Ուեբսթերին այդպես են անվանել ի պատիվ մի մարդու, որին կուլ տվեց կետաձուկը, բայց սա ողջ մնաց, որպեսզի բոլորին պատմի: Սակայն ամենակարևորն այն է, որ նա հսկայական բառարան է գրել:

— Ո՞վ է բառարան գրել:

— Նոյը:

— Ում որ կո՞ւլ տվեց կետաձուկը:

— Չէ, նրա անվանակիցը:

— Հայրիկ, երևում է դու Աստվածաշունչը երբեք ուշադիր չես կարդացել, հը՞:

— Դե, առանձնապես չէ: Ինչո՞ւ:

— Ախր Նոյը տապան կառուցեց ու լողում էր դրանով, և ոչ մի կե-

1 Ուեբսթեր Նոյ (1758—1843)— ամերիկացի նշանավոր բառարանագիր և քերական, «Անշլերեն լեզվի ամերիկյան բառարանի» հեղինակը:

տաձուկ էլ նրան կուլ շտփեց: Ես Աստվածաշունչը կյանքում չեմ կարգացել, բայց գոնե սա գիտեմ:

— Իրոք,— ասաց հայրս:— Հովհանն էր, որին կուլ տվեց կետաձուկը: Իսկ Նոյը տապան կառուցեց և նավարկում էր Մեծ ջրհեղեղին և բոլոր կենդանիներից մեկական զույգ փրկեց, բնդ որում և ցեղը մարդկային: Այս դպրոցն էլ կոչվում է Նոյ Ուեբսթերի անվամբ, որը նավարկում էր անգլերեն լեզվի՝ անծայրածիր ծովում:

— Բա տեղական դատավորն ինչ եղավ:

— Նա ընտրություններին տապալվեց ու արդեն դատավոր չի, բայց եթե նույնիսկ ընտրվեր, եթե նույնիսկ էլի դատավոր լիներ, դարձյալ կմնար տեղական, սահմանափակ հեղինակության տեր մի մարդ, անշափ սահմանափակ, որպեսզի նրա անունը փորագրեին դպրոցի ճակատին, ուր, հուսով եմ, իմ որդին, այսինքն՝ դու, կհայտնաբերես բաների մեծ, անսահման աշխարհի ամբողջ ճոխության գոնե մի մասը, որովհետև երևի հիշում ես ըստ կիրականության դպրոցի հատուկենտ դասերից, որ սկզբում էր Բանը, ասել է թե՛ խոսքն ու բառը:

— Շատ լավ եմ հիշում, բայց դրա իմաստը երբեք չեմ հասկացել:

— Դրա իմաստն այն է, որ ամեն ինչ իր արժեքն ունի, ամեն բան՝ իր խորհուրդն ու նշանակությունը: Փնտրիր բառերի մեջ պահված խորհուրդը, փնտրիր ու ինքդ քեզ համար պարզիր և կթե կարող ես, մի բանի բառ էլ հենց դու հորինիր:

— Պաստակ:

— Ի՞նչ ես ուզում ասել:

— Զգիտեմ, բայց սա նոր հորինեցի:

— Դե, քանի որ կանգնած ենք Նոյ Ուեբսթերի անվան դպրոցի բակում և հայելապակե պատերի միջով դասարաններին ենք նայում, արի խելք-խելքի տանք, թե ասածդ ինչ կնշանակի: Պաստակ: Այսինքն՝ պարզ ու հստակ:

— «Պարզ ու հստակ»-ն էլ վատ չի, բայց «պաստակը» իմ հորինած բառն է:

— Քոնն է, իհարկե: Պարզ ու հստակ՝ պաստակ: Դու այդ իմաստն էիր մտքումդ դրել:

— Ես ոչ մի իմաստ էլ մտքումս չէի դրել:

— Պիտի որ զնեիր: Գուցե կարծում ես, թե ոչ մի իմաստ մտքումդ չես դրել, բայց ուղղակի անհնար է, որ մտքումդ ոչ մի իմաստ չզնեիր ու բառ հորինեիր:

— Ես դրանից գլուխ չեմ հանում:

— Լավ, մի խոսքով, սա է նոր դպրոցդ, — ասաց հայրս: — Ո՞նց է, հավանո՞ւմ ես:

— Ինչո՞ւ: Հո դո՞ւ չես կառուցել:

— Չէ: Ասացի՛ ե՞ս եմ կառուցել:

— Խոսելուդ ձեռք դուրս եկավ, որ հա:

— Ոչ, ես կապ չունեմ, բայց իմ կարծիքով գեղեցիկ դպրոց է. դու այդ կարծիքին չե՞ս:

— Ապակին շատ է:

— Այդպես էլ պետք է: Սովորել՝ նշանակում է նայել ու տեսնել, իսկ մարդուն լիառատ լույս է հարկավոր, որ հստակ տեսնի:

— Այսինքն՝ պաստակ:

— Ի՞նչ:

— Հա՛-հա՛-հա: Քեզ շմեցրի, չէ՞:

— Բնավ: Պարզապես հորինածդ շատ հաջող բառ է, և շատ էլ տեղին օգտագործեցիր:

### ԴՊՐՈՑԸ

Մենք մի պտույտ տվինք դպրոցի շուրջը:

Դե, տեսքից կարգին դպրոց էր երևում, կարծես թե լավը, բայց մեկ է, ինչ ուզում է լինի, ես չեմ սիրում դպրոցը: Հենց որ մի անգամ ոտքդ ներս դրիր, էլ պրծում չկա, պիտի անընդհատ գնաս: Տարին տարու վրա՝ նույն գլխացավանքն է նորից ու նորից, նույն ուսուցչուհին էլ՝ միշտ աչքիդ առաջ:

Ահա, դիմացս էր իմ նոր դպրոցը՝ կարմիր աղյուսից ու հայելապակիներից շինված: Արդեն պատկերացնում էի դատարկ նստարանները զբաղեցնողներին: Ուսուցչուհուն էի պատկերացնում, որ կանգնել է աշակերտների առաջ ու իրեն շատ զուսպ և քաղաքավարի է պահում, եթե նույնիսկ ամենքիս հանդեպ ատելությամբ է լցված. վա՛յ, տեր աստված, երանի էլ երբեք դպրոց չմտնեի:

Ատում եմ դպրոցը, վերջացավ գնաց:

Ինձ մի հրթիռ տվեք ու թողեք լուսին թռչեմ: Թողեք ամերիկյան գրոշը տնկեմ լուսնի վրա, հետո վերադառնամ ու զեկուցեմ պրեզիդենտին.

«Մենք լուսինն էլ նվաճեցինք, սը՛ր»:

Ա՛խ, ինչ փառք ու պատիվ. պրեզիդենտը արշուներն աչքերին վեր է կենում տեղից, սեղմում ձեռքս ու ասում.

«Ամերիկյան ժողովուրդը ձեզ երբեք չի մոռանա»:

Ախր իմ ինչի՞ն է պետք դպրոցը, հը՛:

— Տեսնես ո՞վ է հնարել, — ասացի:

— Ի՞նչը:

— Դպրոցը:

— Լինդեր Դպրանոց անունով մի մարդ, — ասաց հայրս: — Նա բելֆաստցի մեղվապահ էր և փեթակին նայելիս է այդ միտքը հղացել: Լինդերը մի տուն լիքը երեխաներ ուներ, որոնք անընդհատ ջղայնացնում Լին հորը, ոտքի տակ ընկնում, նա էլ մտածեց մարդկանց մեղվանոց սարքել, փեթակի պես մի բան ու երեխաներին իրար գլխի հավաքել, իսկ ավագ դստերը՝ տասներկուամյա մի աղջկա, պատվիրեց, որ կարգ ու կանոն պահպանի: Աղջիկը լավ-վատ գործն առաջ էր տանում: Բայց Բելֆաստում բազմաթիվ այլ բնակիչներ կային, ովքեր, իրենց հերթին, բազում-բազմաթիվ երեխաների տեր էին, և սրանք էլ էին անվերջ ոտքի տակ ընկնում ու ծնողների ջղայնությունը բերում: Երբ մարդիկ տեսան, թե Լինդերն ինչպես է լուծել երեխաների հարցը, որոշեցին հետևել նրա օրինակին, բայց քանի որ հատուկ տեղ չունեին իրենց երեխաների համար, իսկ Լինդերն ուներ, հարցն այսպես լուծեցին. Վեր թռան հանկարծ ու գոռգոռոցը դրին երեխաների վրա. «Դե՛, հերի՛ք եղավ, հապա մի բոլորդ կորե՛ք էստեղից: Գնացեք ուղիղ Դպրանոցի մոտ: Իր երեխեքի հետ էնտեղ կմնաք, մինչև ժամանակը գա, տուն տանեն նրանց»: Այ, սա է ամբողջ պատմությունը.

— Ես ատում եմ դպրոցը, հայրիկ:

— Ատում ես՝ ատիր: Քեզ օգտակար է, որ նման անկոտրում համառություններ ինչ-որ բան ատես, բայց խոստովանիր՝ որոշ իմաստով դու նաև սիրում ես դպրոցը:

— Է՛հ, դե որ պրծում չկա դպրոցից, ես էլ աշխատում եմ օգտուրախ անցկացնել էնտեղ, եթե դա է քո ասելիքը:

— Այո, հենց դա է, և գիտե՞ս, մարդկանց մեծ մասը ճիշտ այդ ձևով է աշխարհն ընկալում:

— Ի՞նչ ինչ, ես լուսին պիտի թռչեմ:

— Բայց վերադառնալու ես, չէ՞:

— Իհարկե վերադառնալու եմ: Ես ուզում եմ մեծ անուն հանել: Ուզում եմ հեռուստացույցով բոլորին պատմել, թե թռիչքն ինչպես գլուխ բերեցի:

— Իսկ ինչպե՞ս գլուխ բերեցիր:

— Ա՛խ, հայրիկ, ես նստեցի հրթիռն ու թռա լուսին, այ թե ինչպես գլուխ բերեցի: Եթե իմանայիր ի՞նչ տեղ է լուսինը... Կյանքում չեմ մոռանա:

## ԴՐՈՇԸ

— Այո՛, լուսինը մոռացվող տեղ չէ,— ասաց հայրիկը:— Ես ինքս երբեք չեմ եղել էնտեղ, բայց Լեդել եմ Կիսալուանի Ծովածոցում:

— Դա ի՞նչ է:

— Մի փոքրիկ քաղաք՝ Սան Ֆրանցիսկոյից հարավ, քսանհինգ մղոն հեռավորության վրա:

— Իսկ ի՞նչ տեսք ունի:

— Չքնաղ:

— Արի գնանք Կիսալուանի Ծովածոց, հայրիկ:

— Ես էլ հենց դրա մասին էի մտածում:

— Հիմա արդեն մեքենայով ենք: Արի՛ գնանք, հա՛: Վաղը շաբաթ է, մյուս օրն էլ՝ կիրակի:

— Իսկ հաջորդ օրը երկուշաբթի է, և դու պետք է դաս քո նոր գպրոցը:

— Է՛, չե՞նք հասցնի մեր մեքենայով գնալ, մի լավ ման գալ էնտեղ ու վերագառնալ:

— Բայց արժի՞ որ:

— Ման գալ Կիսալուանի Ծովածոցո՞ւմ: Բա իհարկե արժի:

— Ախր դու նույնիսկ չգիտես, թե դա ինչ քաղաք է:

— Անունն էլ հո գիտե՞մ: Կիսալուանի Ծովածոց: Ամեն քաղաքի էդպիսի անուն չեն դնի: Եթե դրել են, ուրեմն արժանի է: Դե լավ էլի, հայրիկ, արի մեր փոքրիկ, կառմիր ֆորդով Կիսալուանի Ծովածոց գնանք:

— Պիտի շորս հարյուր մղոն կտրենք, չորս հարյուրն էլ հետ գանք:

— Ի՞նչ է որ, հայրիկ, ընդամենը ութ հարյուր մղոն: Իսկ գիտե՞ս մինչև լուսին ինչքան է:

— Ութ հազա՞ր:

— Ութ միլիոնից ավե՛ր:

— Եվ դու իսկապես ուզում ես այդքան հեռո՞ւ գնալ:

— Ես պարտավոր եմ, հայրիկ:

— Ինչո՞ւ:

— Որ ամերիկյան դրոշը տնկեմ լուսնի վրա:

— Դե լավ, գոնե ճանապարհ ընկնելուց առաջ ինձ զգուշացրու. ես ընտանեկան դրոշ կսարքեմ, որ հետո տանես ու լուսնի վրա մեր դրոշն էլ տնկես:

— Եղավ, կզգուշացնեմ, բայց արի Կիսալուսնի Ծովածոց գնանք:

— Ինչ աքեմ, ես տանք մ'ի տասնութ դուար հոգեպահուստ ունեմ. լրիվ մանր է՝ եղած-չեղածը քսանհինգ, տասը ու հինգ սենթանոցներ, բայց մտադիր չէի այդ փողին ձեռք տալ, քանի դեռ ծայրահեղ անհրաժեշտություն չկա:

— Ա՛յ, հիմա ծայրահեղ անհրաժեշտություն է, հայրիկ: Արի գնանք, հա՞:

— Շատ բարի,— ասաց հայրս:— Փողը հին սրճամանում է: Վերցնենք սրճամանն ու ճամփա ընկնենք: Ամեն անգամ, երբ փող ծախսելու կարիք չգացվի, ձեռքդ կմացնես սրճամանի մեջ ու մի բուռ մանր կհանես:

— Շնորհակալ եմ, հայրիկ: Ես կարծում էի մինչև առավոտ կսպասենք, բայց պարզ է, ուրախ եմ, որ հիմա գնանք: Հիմա ենք գնում, չէ՞:

— Հենց այս բոպեին: Ի վերջո, ես պետք է մի օր պարզեմ՝ բանի նմա՞ն է մեր մեքենան, թե ոչ: Եվ դու էլ, ի վերջո, պետք է մի օր ման գաս Կիսալուսնի Ծովածոցում, ճիշտ չէ՞:

— Իհարկե ճիշտ է:

Մենք վաղքով մտեցանք մեր փոքրիկ, կարմիր ֆորդին ու արագ-արագ տեղավորվեցինք:

## ԱՍՏՂԸ

Դեռ ուշքի չէինք եկել, որ արդեն ճանապարհին էինք, հանդիպակաց 101-րդ փողոցում և սլանում էինք ժամում հիսուն մղոն արագությամբ, հետո էլ՝ վաթսուն, իսկ հետո՝ յոթանասուն, բայց յոթանասունի վրա գնալիս, մեր փոքրիկ հին ֆորդը սկսեց զոզոալ ու ցնցվել, և հայրիկն ստիպված ընթացքը դանդաղեցրեց էլի մինչև վաթսուն: Մենք անցանք Զումայի, Թրանքասի կողքով ու հասանք մի տեղ, տեսնենք ճամփեզրին մարդիկ հավաքվել, հողն են փորփրում: Հայրիկը պարզեց, որ նրանք լոս Անջելեսից են՝ Կալիֆոռնիայի համալսարանի հնագետ ուսանողներ, և շաբաթը մեկ խմբովին գալիս են ու ճամփեզրի սև

հողը ուշադիր փորում, որովհետև մի երեք, թե շորս հարյուր տարի առաջ հնդկացիներն էստեղ իրենց աղբն են լցրել:

Եվ ահա, շաբաթ իրիկնամուտին, հայրս կանգնել էր ու գրույցով ընկել դասախոսի հետ, որն իր ուսանողներից այնքան էլ մեծ չէր. դե, հայրիկը սիրում է ամեն ինչ հարցնել, մանրամասն իմանալ ու պարզել և ջուտով իմացավ, որ ուսանողները արդեն վեց ամիս՝ ամեն շաբաթ օր հողը փորփրելուց հետո, սովորել են բահը խնամքով գործի դնել ու նոթատետրերում գրառումներ անել, բայց առայժմ ոչ մի կարգին բան չեն գտել: Դասախոսն ասաց, որ առանձնապես հույս էլ չեն ունեցել, թե իրոք կգտնեն: Նա հայրիկին երեք հարյուր տարվա խեցի ցույց տվեց: Սա իսկ և իսկ սովորական խեցու նման էր, որ ջրի ափին հիմա էլ ընկած կտեսնես:

Երբ շարունակելով ճամփան՝ մենք Փոյնթ Մուգուի ռազմածովային հրթիռակայանն անցանք ու Օքսնարդի արվարձանների մոտ էինք, ես ծովի վերևը՝ երկնակամարում, մի աստղ նկատեցի, մի մենավոր աստղ, մենավոր ու հեռու:

Հայրիկը ասաց.

— Արի ճանապարհին էսպես անենք. հենց որ սովածանաս, կողքիդ սովարաթղթե տուփից մի բան հանիր ու կեր, իսկ եթե սիրտդ տաք ճաշ ուղի, ինձ զգուշացրու. կկանգնենք մի տեղ, տեսնենք ինչ կճարվի:

— Լավ, բայց հիմա ես դեռ սոված չեմ, իսկ երբ սովածանամ, տուփի միջինն էլ ինձ լիուլի հերիք է: Իզուր փող չծախսենք:

— Ճիշտ է: Տուփի մեջ համարյա մի շիշ կաթ կա, էնպես որ երկույան գոնե կաթ կխմես:

— Տուփի մեջ ամեն ինչ էլ կա: Ու ընդհանրապես, մեր փոքրիկ, հին մեքենան հրաշք է, հայրիկ:

— Ուրախ եմ, որ հավանում ես: Իսկ հիմա քնի հարցը կարգավորենք:

— Չէ, արի քնելուց ձեռ քաշենք:

— Գիտե՞ս ինչ,— ասաց հայրս,— ես մտադիր եմ ողջ գիշեր քշել, բայց մտադրություն չունեմ քեզ էլ արթուն պահել: Մի խոսքով, դու կտեղավորվես մեքենայի հետևում, իմ վերցրած ծածկոցներով պինդ կփաթաթվես ու հանգիստ կքնես:

— Դե որ ասում ես, էդպես կանեմ, հայրիկ, բայց հիմա չէ, հետո... ախր նոր ենք ճամփա ընկել:

— Լավ:



— Ե՞րբ կհասնենք տեղ:

— Տասը ժամվա ճանապարհ է, ընդ որում մի ամբողջ ժամ կանդառների վրա է կորչում: Արդեն յոթն է, հետևաբար առավոտյան հինգի մոտերքը կհասնենք, դեռ լույսը չբացված: Կարծում եմ՝ քեզ համար հաճելի կլինի, որ լուսաբացը էնտեղ դիմավորես:

— Պարզ է, շատ հաճելի կլինի: Բայց հետո՞ ինչ կանենք:

— Է՛, հետո էլ կշարունակենք ճամփան, կգնանք իմ հին, հարազատ Սան Ֆրանցիսկո:

— Հայրիկ, ո՞նց եղավ, որ էլ չուզեցիր Սան Ֆրանցիսկոյում ապրել:

— Ինձ այլևս տանը չէի գտում:

— Ինչո՞ւ:

— Դե, ըստ երևույթին, Սան Ֆրանցիսկոյի հանդեպ սիրահարությունս անցել-գնացել էր, իսկ գրողի համար անիմաստ է ապրել մի քաղաքում, որին նա սիրահարված չէ:

— Ասենք թե գրողը ոչ մի քաղաքի էլ սիրահարված չէ, հետո՞:

— Ուրեմն վայն եկել է նրան տարել:

— Ինչո՞ւ:

— Գրողը պետք է սիրահարված լինի աշխարհին, այլապես չի կարող գրել:

— Ինչո՞ւ չի կարող:

— Որովհետև ամեն մի լավ բան սիրելուց է ծնվում: Երբ գրողը սիրահարված է աշխարհին, կնշանակի սիրահարված է աշխարհում բոլորին և կարող է գրել, եթե լրջորեն աշխատի:

Ես նայեցի երկնքի հեռավոր աստղին:

— Հետաքրքիր է՝ ես սիրահարված եմ աշխարհին:

— Իհարկե: Ի՞նչն է քեզ ստիպում կասկածել:

— Ի՞նչ պիտի լինի. ոչինչ, բացի նրանից, որ ես ատում եմ աշխարհը և վերջ:

— Այո՞, գիտեմ, թե ինչպես ես ատում,— ասաց հայրիկը:

## ՋՈՒԿԸ

Մենք սլանում էինք առաջ, Օքսնարդից ձգվող բլուրների միջով անվերջ սլանում: Տեղ-տեղ ճանապարհը ծովի եզերքով էր անցնում, հետո էլի կեռմաններ տալիս բլուրների ու դաշտերի մեջ, իսկ հետո նորից ծովի եզերքը հասնում:

Ես ու հայրս մի գլուխ խոսում էինք ու խոսում, որովհետև կյանքումս երբեք սրա պես հարմար առիթ չէր եղել, որ ուզածիս շափ խոսեմ նրա հետ:

Մոռացել եմ, թե քունս երբ տարավ, բայց միտքս է՝ մինչև քնելը սովորաթղթե տուփից հազար ու մի բան հանեցի կերպ, իսկ հայրս մի վաթսուն-յոթանասուն հարցի պատասխանեց. ամեն ինչի մասին, որ ես երբևէ ուզեցել էի հարցնել:

Քնած ժամանակ ինձ թվում էր՝ արթուն եմ, ախր կանգնել էի հորս տան դիմացի սև, մեծ քարափին ու կարթս ծովը գցել:

Եվ հանկարծ զգացի, որ կարթը ամենահսկա ու անհնազանդ ձուկն է կուլ տվել: Հրճվանքից աղմուկ-աղաղակ դրի. «Բռնեցի՛, հայրիկ, բռնեցի՛»:

Հայրս մի ձեռքով գրկեց ինձ, քաշեց թևի տակ ու սեղմեց կրծքին, և ես լսեցի, որ ասաց. «Շատ լավ, տղաս, դե քնիր, քնիր»: Սկզբում շհասկացա, թե նա ինչու է հորդորում, որ քնեմ՝ հսկա ձուկը ծովից հանելու փոխարեն, բայց հետո արդեն քիչ-քիչ գլխի ընկա: Գրո՛ղը տանի, ես իսկի էլ սև քարափին չէի, մեր փոքրիկ ու հին, կարմիր ֆորգում էի և հորս հետ Կիսալուսնի Ծովածոց էի գնում: Բայց չէի ուզի ձուկը ձեռքիցս բաց թողնել, դրա համար էլ փորձեցի մոռանալ, որ երազ եմ տեսնում, մինչև գոնե ձուկը ծովից դուրս քաշեմ: Չէ, ինչքան փորձեցի մոռանալ, շտացվեց ու հակառակի պես, մեկ էլ արթնացա:

— Հայրիկ, որ իմանաս ի՞նչ ձուկ էի համարյա բռնել...

— Մենք դեռ շատ ձուկ կբռնենք,— ասաց հայրս ու ինձ ավելի պինդ սեղմեց կրծքին:

— Ախր դա միայն սովորական ձուկ չէր, մի ուրիշ բան էլ էր:

— Ի՞նչ:

— Ա՛հ, վստահ չեմ, թե հաստատ հիշում եմ, բայց իմ կարծիքով, դա հենց բոլորն էր, ինչ որ ձգտել եմ մի օր իմանալ: Երբեք չէի տեսել նման կատաղի ու անհնազանդ ձուկ: Ա՛խ, հայրիկ, երանի ժամանակ լիներ, ու ես հասցնեի դուրս քաշել նրան:

— Ես էլ: Թեև շատ ու շատ ժամանակ է պետք: Ի վերջո, դու անպայման ափ կհանես նրան:

— Իսկ պատահե՞լ է, որ դու ափ հանես:

— Չէ, բայց շարունակ ջանքեր եմ թափել ու մի օր կհանեմ:

— Ուրեմն այդքան ժամանակ է պետք:

— Խոշոր մարդկանցից ոմանք համարում են, որ այդ ձուկը երբեք ափ չես հանի:

— Ինչո՞ւ:

— Ըստ իս, դա կապված է ձկան մեծանալու հետ: Անթիվ-անհամար հմուտ ձկնորսների տքնել են կարթաթելը ձգել և ավելի ու ավելի մոտ քաշել նրան, իսկ հետո իրենք են ծովում հայտնվել, որովհետև ձուկը աստիճանաբար մեծացել, վիթխարի է դարձել և հանկարծ միանգամից կարթը ձիգ տալով՝ սրանց ջուրն է գցել:

— Ասենք՝ ջուրն ընկար, բա ի՞նչ ես անում:

— Կամ էլի կառչած ես մնում ձկանից, կամ էլ բաց թողնում:

— Թե որ կառչած մնացիր, կբռնե՞ս:

— Չգիտեմ: Ոչ ոք չգիտի: Բայց բոլորն էլ գիտեն, որ եթե բաց թողնես Նրան, արդեն չես բռնի:

— Դե գոնե դուրս կգաս ցամաք, չէ՞:

— Այո, դուրս կգաս, բայց նույնիսկ դա էլ է պայքար, և շատ փորձառու ձկնորսներ այլևս չեն վերադառնում ցամաք:

— Է՛հ, երևում է բախտս չբերեց, որ շուտ արթնացա ու շհասցրի ձուկը ափ հանել:

— Չի բերել, իրոք:

— Ինչքա՞ն եմ քնել:

— Հինգ բոպե կլինի:

— Ընդամենը հի՞նգ:

— Այո, երբ քնած ես, հինգ բոպեն էլ քիչ ժամանակ չէ:

## ՀՈՒՐԸ

Ես տեղավորվեցի մեքենայի հետևում, մտա ծածկոցների տակ ու ստքից գլուխ պինդ փաթաթվելով՝ հանգիստ պառկեցի:

Ուզում էի ստուգել, թե քունս կտանի՞, որ ձուկը նորից երազում տեսեմ, բայց քունս չէր տանում: Պարզ է, պատվերով երազ չես տեսնի:

Նախ՝ երկար ժամանակ աչքիս քուն չէր գալիս, թեպետ ավելի շատ կիսաքնած էի, քան արթուն:

Հետո՝ փոխանակ ձկան մասին մտածեմ, սկսեցի ուրիշ բաներ մտածել ու հիշել:

Մի անգամ, դեռ վաղուց, հորս հարցրի, թե ինչ է գրում, նա էլ ասաց՝ վեպ, ու ես խնդրեցի, որ բացատրի, թե վեպը ինչ է, իսկ նա ասաց՝ վեպը հուր է, հրայրք, որին գրողը տալիս է երկարաշունչ պատմրվածքի ձև ու կերպարանք: Ես հարցրի, թե պատմվածքն ինչի մասին

է լինում, ու նա ասաց՝ լավ պատմվածքը միշտ էլ ամեն ինչի մասին է: Ես խոստովանեցի, որ կուզեի օրերից մի օր պատմվածք գրել, իսկ հայրս ասաց. «Դու օրական մի պատմվածք ես գրում»:

Նա ասաց՝ մարդու ապրած ամեն մի օրը ինքնին պատմվածք է: Ասաց՝ դա Աստծուն ուղղված նամակի է նման: Եվ մարդիկ ամեն օր նամակ են գրում, բայց ոչ բառերով: Իսկ ով որ գրողի մասնագիտութունն է ընտրել, բառերով է գրում՝ նրանց բոլորի համար ու բոլորի փոխարեն, սակայն միևնույն է՝ հենց մարդկանց գրածն է իսկական պատմվածքը:

Ես մտածեցի իմ ապրած օրվա պատմվածքի մասին: Ճիշտ որ, դա կարծես պատմվածք լիներ, ու իրոք, ես ամբողջ օրը գրել էի ու գրել: Իմ պատմվածքը դեռ վաղ առավոտյան սկսվեց, երբ ես վեր կացա ու հայրիկի հետ նախաճաշեցի: Իսկ հետո արդեն պատմվածքս շարունակվեց, երբ դպրոցում էի ու վերադարձա, երբ հորս տան առաջ փոքրիկ ու հին, կարմիր ֆորդը տեսա, երբ ուղևորվեցի՝ Մալիբուի դպրոց, որը կոչվում է Նոյ Ուեբսթերի անվամբ, երբ խելքներիս փշեց Կիսալուանի Ծովածոց զնալ, և մենք ճամփա ընկանք ու հիմա գնում ենք:

Բայց ամենալավ բաները պատմվածքի մեջ բոլորովին էլ սրանք չէին: Ամենալավը սրանց հետ մեկտեղ կատարված բաներն էին: Ես, իհարկե, դեմ չեմ էնպես գրելուն, ինչպես որ աշխարհում ամեն մարդ է գրում, բայց ախր ուզում եմ հորս պես էլ գրել: Ուզում եմ նստել սեզանի առաջ, գրամեքենան դիմացս դնել ու բառերով գրել: Մի օր անպայման ուզածիս կհասնեմ: Չգիտեմ, թե երբ, բայց գիտեմ, որ անպայման կհասնեմ: Երևի պետք է մի քիչ համբերեմ, մինչև գրամեքենայով տպել սովորեմ: Հետո՝ ուղղագրութունն էլ պիտի սովորեմ, որովհետև իմ օգտագործած բառերի մեծ մասը, ճիշտ է, հասկանում եմ, բայց սխալ եմ գրում: Դրան գումարած՝ այն բոլորը, որ կուզեի պատմվածքիս մեջ մտնել, չեմ կարողանում պարզ արտահայտել ու միայն մտքումս եմ հստակ պատկերացնում, ասենք, այ էսպես, մեքենայի հետևում՝ ծածկոցների տակ պառկած ու գիշերվա խավարի միջով դեպի հյուսիս սլանալիս, դեպի Կիսալուանի Ծովածոց:

Ոչի՛նչ, ժամանակը կգա, ամեն ինչ կսովորեմ:

Իսկ հենց սովորեցի, էնպիսի մի վեպ կգրեմ, որ դեռ ոչ ոք երբեք չի գրել. ես արդեն գիտեմ՝ ինչ պիտի ասեմ: Զուկ, կասեմ ես: Զուր: Անծայրածիր ծով, որ լի է ջրով, լի է դեսուզեն խայտող ձկներով:

Երբ հիշում եմ կյանքիս բոլոր ուրախութունները, թվում է, թե ես ամենագետ եմ, բայց հետո հանկարծ միտքս է գալիս, որ շատ անգամ

էլ տխուր ու տրտում եմ եղել՝ կարծես աշխարհից մերժված, և ինձ թվում է, թե անգետի մեկն եմ:

Ամեն ինչ էսպես երկու կողմ ունի, ու սա է, որ ոչ մի կերպ գլուխս չի մտնում:

Գիտեմ, թե սրա պատճառով ինչ դժվարություններ կբաշեմ, երբ բառերով գրելու ժամանակը հասնի:

### ՄԱՐԴԸ

Ես նորից քնեցի: Թե երազումս էլ ինչեր տեսա, ոչինչ չեմ հիշում. ոչ ձկան մասին, ոչ պատմվածքիս, ոչ ուրիշ բանի: Ես քնեցի ու եղած-չեղածը մոռացա, նույնիսկ մեքենան և մեր ճամփորդությունը դեպի Կիսալուանի Մովածոց:

Իսկ հետո հանկարծ ամեն ինչ լռեց ու անշարժացավ, և ես արթնացա:

- Որտե՞ղ եմք:
- Համարյա մեր ուզած տեղում:

Մենք կանգնել էինք մի բենզակայանի դիմաց, որի կողքին փոքրիկ խորտկարան կար:

— Ես մի բաժակ սուրճ կուզեի,— ասաց հայրս:— Իսկ դու մի բաժակ կակաո խմիր, հա՞:

Նա դուրս եկավ մեքենայից ու ճմլկոտեց: Ես էլ դուրս եկա ու ճիշտ հորս պես ճմլկոտեցի: Բենզին լցնողը մի ծեփ-ծեր մարդ էր:

— Էլի լավ օր է անելու,— ասաց նա և հետո ավելացրեց, որ ամբողջ գիշեր ինքը չի հերթապահել էստեղ. հազիվ մի ժամ է, ինչ զարթնել է քնից ու իր տղային փոխարինելու եկել. դե, որդին էլ պիտի քունը առնի, չէ՞:

- Քանի՞ տարեկան է ձեր որդին,— հարցրեց հայրս:
- Մերուկը ծիծաղեց:

— Էէ՛հ, ինչ ասեմ, արդեն վաթսունի շեմին է, բայց մի ժամանակ բո տղայի չափ էր: Ես ինքս արդեն ութսունի շեմն եմ ոտք դրել: Տս.սնմեկ տարի առաջ հայրս դեռ ողջ էր: Ո՛նց է ալևորի տեղը զգացվում:

Բենզինը բաքի մեջ լցնելիս՝ մարդը անընդհատ հոր մասին էր պատմում, հետո էլ գործը վերջացնելով, ասաց.

— Ըհը՛, հիմի հաշիվներս փակենք: Այ, ասեմ. ձեր բաքը շորս դուրս տասնյոթ սենթի բենզին լցրեցի:

— Շատ բարի, — ասաց հայրս: — Փիթ, գնա սրճամանը բեր ու միջից շորս դուրս տասնյոթ սենթ հանիր:

Ծս սրճամանը բերի և ծերուկի հետ փողը հաշվեցի: Հետո ես ու հայրս մտանք փոքրիկ խորտկարանը, որ սուրճ ու կակաո խմեմք, ծերուկն էլ սկսեց մեր մեքենայի առջևի ապակին մաքրել:

Խորտկարանը աթոռներով վաճառասեղան ուներ, իսկ վաճառասեղանի հետևում մի ուրիշ ծերուկ էր, ու բացի նրանից, ներսում ոչ մեկը չկար: Սուրճը քամիչով սրճամանի մեջ եփվում էր գազասալիկի վրա: Ծերուկը մի բաժակ լցրեց հորս համար ու ասաց՝ կակաո չի լինում իր մոտ, բայց եթե ուզենք, կաթ կտաքացնի, էնպես որ ինձ տաք-տաք կաթ բաժին ընկա՞մ, իսկ հայրիկը մի պուտ սուրճ ավելացրեց կաթիս: Շատ շտանցած՝ ներս մտավ բենզակաշանի ծերուկն ու ասաց.

— Տուղն էլ ստուգեցի. մի լիտրից պակաս է, բայց վնաս չունի: Կես գալոն ջուր լցրի, որ շարժիչը հովանա, մի քիչ էլ կուտակիչ մարտկոցին էր պեսք: Դողերի փուքը տեղն է, ձեռք տալ շարժի:

— Օ՛հ, — ասաց հայրս, — որքան ուշադիր եք: Գուցե սո՛ւրճ խմեիք ինձ ու տղայիս հետ:

— Ինչ կա որ, կարելի է, — ասաց ծերուկը:

Նա նստեց իմ կողքին: Ես նայեցի նրան, հետո հայացքս դարձրի վաճառասեղանի հետևում կանգնած ծերուկին. սրանք էնպես էին իրար նման, որ ինչքան էլ համեմատեիր, ամեն մանրուքով նույնը կլինեին: Միայն բերաններն էին մի թեթև տարբեր: Վաճառասեղանի հետևում կանգնած ծերուկը բարակ շրթունքներ ուներ, ու բերանի անկյունները մի տեսակ կախ էին: Իսկ կողքիս ծերուկի շրթունքները բարակ էին, բայց բերանի անկյունները՝ մի տեսակ վեր թեքված:

— Հը՛, տղա, — ասաց կողքիս ծերուկը, — չինի՞ գլուխ ես կոտրում, թե մեզնից որն ո՞վ է:

— Ես լավ գիտեմ, թե ձեզնից որն ո՞վ է, ախր նա էնտեղ է, դուք՝ էստեղ, բայց շատ եք նման իրար:

— Ծրկվորչափաների համար սովորական բան է, — ասաց ծերուկը: — Իսկ եղբորս մոռալուժյան պատճառը տարիքն է. նա մեծ է ինձնից: Մի տասը րոպե շուտ է աշխարհ եկել: Գիտե՞ս, ժամանակը, վերջիվերջո, իր կնիքն է թողնում մարդու երեսին:

Երբ հայրս արդեն երեք բաժակ սուրճ էր խմել, իսկ ծերուկը ուրախ պատմություններով մեզ կուշտ ծիծաղեցրել, վեր կացանք տեղներիցս, ու ես հանեցի երեսունհինգ սենթ, դրի սեղանին:

Երկվորյակ եղբայրները մեզ հրաժեշտ տվին և հրավիրեցին նորօրաց  
այցելելու իրենց: Սա ու հայրս դուրս եկանք խորտկարանից, նստեցինք  
մեքենան և ճանապարհվեցինք:

### ՎԱՐԴԸ

Մի ժամի շափ գնալուց հետո, հայրս մեքենան կանգնեցրեց ու  
ասաց.

— Տեսնելու բան կա, արի իջնենք, ցույց տամ:

Մենք իջանք մեքենայից և քայլելով մտանք գեղեցիկ թփուտների  
մի կանաչ պուրակ:

— Արտիճուկներ են:

Հայրս իր գրպանի դանակը հանեց, որն ընդամենը կեռ ծայրով մի  
լայն շեղբ ուներ և փոքրիկ խաղաղնդակի շափսի մի արտիճուկ կտրեց:

— Լավ նայիր,— ասաց:— Սրա մեջ թե վարդ կտեսնես, թե փուշ,  
թե տատասկ, թե ինչ որ ուզես:

Նա էլի ու էլի արտիճուկներ կտրեց և գլխարկն ու ծոցը լցրեց: Հե-  
տո մենք վերադարձանք մեքենայի մոտ:

— Քանի՞ հատ թոցրիիր:

— Տասներկու,— ասաց հայրս,— բայց շթոցրի:

— Դրանք ազարակատիրոջ սեփականությունը չեն:

— Ես միայն էնպիսի թփերից քաղեցի, որոնք էտելու ժամանակն  
է արդեն:

— Չե՞ս ուզում խոստովանել, որ թոցրեցիր:

— Ոչ, սրբ:

Մենք նստել էինք մեքենայում՝ ճանապարհի եզրին, ու հիանում  
էինք արտիճուկների շքնաղ մարգերով: Հարյուրավոր տունկեր ձգվում  
էին զովասուն, սև հողի միջով, և մեղմ, ցածրիկ մեզը դանդաղ ծփում  
էր նրանց արանքներում:

Հայրս գործի պեղեց մեքենան, ու մենք նորից ճամփա ընկանք, բայց  
ես անընդհատ շրջվում, հետ էի նայում, որ սեփականությունը  
մեզ չի՞ հետապնդում: Հայրս հաստատ իմ միտքը գուշակեց, որովհետև  
ասաց.

— Գլխիցդ հանիր: Ամենաթանկ շուկայում էլ առաներկու արտի-  
ճուկը երկու դոլար արժեն: Ժամանակին ես շատ ու շատ մարդկանց ավե-

լին եմ տվել, և նրանցից մի քանիսը պիտի որ անպայման ազարակա-  
տերեր լինեին. այո, ես անհամեմատ ավելին եմ տվել, քան երկու դո-  
լարն է: Մի՛ մտածիր: Մեզ ոչ ոք չի հետապնդի, ինչպես որ մենք չենք  
ոչ ոքի հետապնդում:

### ԵԿԵՂԵՑԻՆ

Որոշ ժամանակ մենք լուռ գնում էինք, ու հանկարծ հայրիկն սկսեց  
երգել «Խորամանկի երգը»:

— Խորամանկն ի՞նչ է:

-- Դե, — խոսեց հայրս, — «խորամանկ» ասելով՝ հասկանում ենք  
«ճարպիկ ու հնարամիտ», բայց գուցե ավելի լավ է ես քեզ բացատրեմ,  
թե ում ենք ասում «ճարպիկ ու հնարամիտ»: Այ, հենց նա է համար-  
վում ճարպիկ ու հնարամիտ, ով ստիպված է մեծ ջանքեր թափելու,  
որպեսզի կյանքում իր ուղին հարթի, և կարևոր չէ, թե նրա թափած  
ջանքերն ինչպիսին են, կամ որն է ընտրած ուղին: Երգիչը շարունակ  
կրկնում է, թե ինքը պակաս խորամանկը չի: Նա երգում է փաստաբա-  
նի, քահանայի, վաճառականի մասին և ում մասին էլ որ աշխարհում  
երգեր, դարձյալ ու դարձյալ իրավացի կլիներ: Ախր բոլորս խորամանկ  
ենք:

-- Հայրիկ, ի՞նչ կլինի, մի տուն էլ հորինիր:

— Սպասիր փորձեմ, տեսնենք կստացվի՞:

Ու նա էլի երգեց.

Ա՛խ, բժշկին խորամանկ  
Թող բոլորը ճանաչեն:  
Իսկ թե կուզեք իմանալ,  
Ես նրանից պակաս չեմ:

Նա ստեր կհնարի  
Ու նշտարը կհանի,  
Բայց դուք, տղերք, շխարվեք,  
Թե չէ կյանքից կզրկվեք:

— Հա՛-հա՛-հա՛, լավ էք:

-- Իսկ իմ կարծիքով՝ վատ էր:

— Մեկն էլ հորինիր, հայրիկ:



— Հապա էնտեղ նայիր:

Ես նայեցի ու հորս ցույց տված տեղում մի սպիտակ եկեղեցի տեսա՝ համարյա ջրի ափին:

— Կիսալուսնի Մովածոցն է,— ասաց հայրս:

Մի բոպե շանցած՝ մենք արդեն քաղաքում էինք: Վաղ առավոտ էր, ու երկու մարդ փողոցի անկյունում կանգնել, զրույցով էին տարվել:

Դե, Կիսալուսնի Մովածոցը Կիսալուսնի Մովածոցն է. սա ոչ լուսինն է, ոչ էլ երկինքը, իսկ ես քիչ էր մնացել, որ հավատայի դրան: Այնինչ եղած-չեղածը մի փոքրիկ քաղաք էր՝ փոքրիկ ծովածոցում, մի փոքրիկ եկեղեցի էլ՝ փողոցի ծայրին:

Ես ու հայրիկը մտանք եկեղեցին, որովհետև հորս ասելով՝ ինչքան եկել էր Կիսալուսնի Մովածոց, միշտ մտել էր եկեղեցին, էնպես որ երկուսով նախ մտանք էստեղ ու ամեն ինչ նայեցինք: Եկեղեցում խաղաղ էր, հանգիստ, ու ես կարծես զգում էի, թե ինչպես են հրեշուակները նստարանների միջով վերուվար անում:

Մենք ուղղակի կանգնել էինք: Ու շմոտեցանք եկեղեցու բեմին: Ես գիտեմ՝ դրա իսկական անունը բեմ չի, բայց ինձ համար ասե՛՛ք բեմ լինի, հենց թատրոնի բեմի պես, ու եկեղեցում կատարվող բաներն էլ ինձ համար ոնց որ ներկայացում լինեն, ճիշտ և ճիշտ թատրոնի ներկայացման պես:

Երբ դուրս եկանք փողոց, հորս հարցրի.

— Եկեղեցին ի՞նչ է, հայրիկ:

— Մարդկության տան ամենալավ սենյակներից մեկը:

— Իսկ աստված ինչ է:

— Տան գլուխը: Սա է թերևս միակ պատասխանը, որ ի վիճակի եմ քեզ իսկույն ևեթ տալ, թե չէ ինչպես հարկն է պատասխանելու համար երևի կյանքիս մնացած մասը անդադար խոսեի և ամեն ինչով ավելի ու ավելի խճճվեի՝ մնալով մոլորված:

## ՀԱՅՐ

Մենք ամբողջ քաղաքը մի լավ շրջեցինք, որովհետև նախօրոք էդպես էինք որոշել: Թե ասեմ արտակարգ ինչ-որ բան կար՝ չէ. սովորական փոքրիկ քաղաք էր՝ իր սովորական բնակիչներով: Չնայած վաղ ժամին, փողոցում մի քանի մարդ տեսանք: Ու ես կարծես թե առաջին անգամ հանկարծ նկատեցի, որ բոլորն աչքեր ունեն:

Իմ հայտնագործությունից ծիծաղս եկավ:

— Հը՛, ի՞նչ է էլի,— հարցրեց հայրիկը:

— Աչքերը,— ասացի:— Մեզ բուռրիս աչքեր են տրված, չէ՞:

— Այ, ապրես, ճիշտ է,— ասաց հայրիկը:

Ու սկսեց երգել.

Ես տեսա ջո աչքերը,

Ա՛խ, քո հրաշք աչքերը...

Քիչ հետո նա ընդհատեց երգն ու ռունգերով օդը ներս քաշեց:

— էստեղ մոտերքում մեկը հաց է թխում: Թարմ հաց կուզեի՞ր:

— Շա՛տ:

Մենք քայլեցինք մինչև փողոցի անկյունը, հետո թեքվեցինք, անկյունն էլ անցանք, բայց մոտերքում ոչ մի հացի փուտ չերևաց, ստիպված հետ դարձանք մեր նախկին տեղն ու վերջը հենց քթներիս տակ մեր ուղածը գտանք, միայն թե դուռը փակ:

Հայրս թխկթխկացրեց, և մի տղամարդ՝ հացթուխի սպիտակ խալաթով, ձեռքերն ու երեսը ալրի մեջ թաթախված, եկավ, դուռը բացեց:

— Մենք յոթին ենք բացում,— ասաց տղամարդը:— Իսկ հիմա դեռ վեցն էլ չկա:

— Բայց ի՞նչ եք թխում:

— Հաց ու բուլկի:

— Մեզ մի բան չէի՞ք տա: Միշտ չէ, որ ինձ հաջողվում է թարմ հաց վայելել:

— Դե, գուցե ներս գաք,— ասաց հացթուխը, ես ու հայրս էլ անխոս ներս մտանք: Նրա հետևից գնացինք խորքի սենյակը, ուր ինքն ու կինը իրոք հաց էին թխում: Սենյակը շատ մաքուր էր՝ ու տաք: Մետաղե տաշտերի մեջ նոր թիված բոբոններ ու բուլկիներ կային:

— Համեցեք,— ասաց հացթուխը:

Հայրս ձեռքը պարզեց ու մի բոբոն վերցրեց, որ հացթուխի կինը լայն փայտե թիով՝ տասը-տասներկու բոբոնների հետ նոր էր հանել փոփ ու նրան մեկնել, իսկ հետո կինը նույն փայտե թիով մեզ համար շարվեշար բուլկիներ հանեց: Հայրս մի տասներկու հատ բուլկի էլ վերցրեց: Մեկը տվեց ինձ, մյուսն ինքը կծեց: Իսկ բոբոնը խցկեց բաձկոնի գրպանը:

— Նստեք,— ասաց հացթուխը:— Մէշանին պանիր կա: Նստեք, անուշ արեք:

Ես ու հայրս գնացինք ՚հեւլի սեղանը, որի մոտ հացթուխն ու կինը

նստել և մինչև մեր գալը հաց ու պանիր էին կերել: Հիմա էլ մենք նստեցինք:

— Հացթուխը քեզ ծանոթ է:

— Կյանքումս առաջին անգամ եմ տեսնում:

Հացթուխը մոտեցավ մեզ, մի բուլկի վերցնելով՝ երկու կես արեց ու մեզը պանիր դրեց: Ես կարծեցի, թե ինքը կուտի, բայց նա բուլկին տվեց ինձ ու ասաց:

— Հաց ու պանիրը երբեք չմոռանաս: Եթե ամեն ինչ աչքիդ զգնելի դառնա, հիշիր հաց ու պանիրը և քեզ լավ կզգաս:

— Եղավ, սրբ:

— Այ, դրա համար եմ հացթուխ,— ասաց նա:— Շատ բաներ եմ փորձել, բայց իմ իսկական անելիքը սա է:

### ԿԻՆԸ

Հացթուխը մի ուրիշ բուլկի կես արեց, էլի պանիր դրեց մեզն ու տվեց կնոջը, որը հենց նոր էր մոտեցել մեզ և գործը վերջացրած՝ ուրախ ժըս, տում էր:

— Ո՞ր կողմերից եք, տղերք,— ասաց հացթուխի կինը:

— Սան Ֆրանցիսկոյից,— ասաց հայրիկը,— շնայած արդեն երկու տարի է՝ Մալիբուի կողմերն ենք ապրում:

— Ի՞նչ զբաղմունքի տեր եք,— հարցրեց կինը:

— Ես գրող եմ,— ասաց հայրիկը:

— Գրքե՞ր եք գրում:

— Այո, այո, գրքեր:

— Մի գիրք էլ իմ մասին գրեք,— ասաց կինն ու ծիծաղեց:— Ինչե՞ր կպատմեմ ձեզ, ինչե՞ր... Ահա՛, գործ, գործ, գործ ու անվե՛րջ՝ ծիծաղ: Հոգսեր, հոգսեր, հոգսեր, ու անվե՛րջ՝ ծիծաղ: Ի՞նչ եք կարծում, քանի՞ երեխա ունենք:

— Երեք,— ասաց հայրս:

— Յոթը,— ասաց կինը:— Ու բոլորն արդեն մեծ են: Ամուսինս քառասունչորս տարեկան է, ես՝ քառասուներկու, իսկ մեր փոքր տղայի տասնութն է լրացել, նավատորմում է: Դե՛, ո՞նց է, հը՞:

— Հիանալի է,— ասաց հայրս:

— Հիմա մենակ ենք մնացել, մենք ենք ու մեր փուռը: Ի՞նչ պակաս կյանք է: Մի գիրք էլ իմ մասին գրեք: Կարծում եք խալուհի՞ եմ.

չէ՛, իռլանդուհի: Ամուսինս է իտալացի: Մի գիրք գրեք Երուբիլինցի Ռոզ Նանիգանի մասին: Ինչե՛ր կպատմեմ ձեզ, ինչե՛ր...

— Պատմեք,— ասաց հայրս:

— Է՛, երկար պատմութիւնն է,— կնոջ փոխարեն ասաց հացթուխը:— Մի ամբողջ ժամ կտևի, մինչև մեր գլխով անցած-դարձածը պատմի:

Հացթուխն ու կինը նստեցին, և զրույցը շարունակվեց, իսկ ես լըսում էի, ու մեկ էլ տեսնեմ՝ ժամը յոթն է արդեն:

Հացթուխը գնաց, մուտքի դուռը բացեց, և գնորդները սկսեցին ներսուդուրս անել:

Ես ու հայրս հրաժեշտ տվինք ու դուրս եկանք նորից շրջելու փողոցներում:

Բայց հո չէի՞նք կարող ընդմիջտ մնալ Կիսալուսնի Մովածոցում, մանավանդ որ էնտեղ չէինք ապրում, դրա համար էլ երբ քաղաքը կենդանացավ, և փողոցները լցվեցին մարդկանցով, մենք էլի նստեցինք մեր փոքրիկ մեքենան ու ճամփա ընկանք հյուսիս՝ դեպի Սան Ֆրանցիսկո:

### ՄԱՀՃԱԿԱԼԸ

Շուտով հասանք տեղ ու կանգ առանք մի երկհարկանի, սպիտակ տան առաջ:

Մեքենայից դուրս գալու պահին հորաքույրս մեզ տեսավ: Նա լուսամուտը բաց արեց ու ասաց.

— Վա՛հ, մի նայեք ովքե՛ր են եկել:

Մենք տուն մտանք, իրար հետ մի քիչ խոսեցինք, հետո ես ու հայրս իջանք ներքևի հարկ՝ հորս առաջվա բնակարանը, որտեղ նրա աշխատասենյակն է՝ հատակից մինչև առաստաղ ձգվող գրադարակներով, պիանոլայով և նվագարկիչով, ու մեկ էլ ննջարանը՝ երկու մահճակալով: Հայրիկը ասաց.

— Լուսամուտի կողքի մահճակալը՝ քեզ, դռան մոտինը՝ ինձ: Հիմա ես պիտի լողանամ ու քնեմ, իսկ հետո կարելի է գնալ Սան Ֆրանցիսկոն նայելու:

— Ես է՞լ պիտի լողանամ ու քնեմ:

Հայրիկը ասաց՝ բնավ պարտադիր չէ, բայց մյուս կողմից էլ՝ շատ անհրաժեշտ է, որովհետև մեքենայում քնելն ու անկողնում քնելը մի-

անգամայն տարրեր բաներ են, կնպես որ առաջինը հենց էս լողացա, նոր շապիկ հաղա ու տեղնուտեղն էլ անկողին մտա:

Երբ արթնացա, հայրիկը պինդ-պինդ քնած էր:

Ես իջա մահճակալից ու սուս-փուս հագնվելով՝ ծլկեցի աշխատասենյակ. պատում էի կնակը և հորս գանձերը ուշադիր զննում. դրքերը, ձեռագրերը, ձայնապնակները, պատերի նկարներն ու հատակի քարերը, անկյունների ջրիմուռներն ու մնացած ամեն ինչ:

Չորս կողմս էդպես զննում էի, տնտղում, երբ հորաքույրս կամուրջուկ եկավ, բացեց աշխատասենյակի դուռն ու շնջաց:

— Ուտել չե՞ս ուզում:

— Ուզում եմ:

— Գիտե՞ս, — ասաց նա, — ընդամենը մի տարի առաջ դու դեռ մանչուկ էիր, իսկ հիմա նայում եմ քեզ ու աչքերիս չեմ հավատում. ախր համարյա տղամարդ էս արդեն:

— Տասը տարեկան եմ, — ասացի ես: — Հա՛-հա՛-հա՛: Հինգ տարեկանում երանի էի տալիս, որ տասը լինեմ, բայց այ, տասը դարձա, երանի եմ տալիս, որ քսան լինեմ:

Մենք բարձրացանք վեր ու սեղան նստեցինք: Մաքուր, սպիտակ սփռոցի վրա նա տեսակ-տեսակ համով ուտելիքներ էր շարել, ու մենք հենց որ սկսեցինք ուտել, ներս մտավ հայրիկն ու հետներս նստեց:

— Ինչ խոսք, — ասաց նա, — հաճելի է նստել իսկական սեղանի մոտ, որի վրա թերթերի փոխարեն մաքուր սփռոց է դրած:

— Թերթերով ավելի լավ է, — ասացի ես: — Փոփոխության համար էսպես էլ վատ չի, բայց մեր սեղանը ամենալավն է:

Հայրս քրոջն առաջարկեց մեզ հետ զբոսնելու գալ, իսկ նա ասաց.

— Չէ, երկուսով գնացեք: Ես մի քիչ գործ ունեմ:

### ԼՈՂԱՓԸ

Ես ու հայրս նրրից նստեցինք մեքենան և ճանապարհվեցինք օվկիանոսի կողմը, որովհետև հայրիկը ուր էլ որ գնա, ուշքումիտքը միշտ ջուրն է, օվկիանոսը. իհարկե, եթե մոտերքում իրոք օվկիանոս կա: Իսկ եթե չկա, սիրտը չի դիմանա, մի գետ կգտնի, թե գետ էլ չկա՝ այգու ջրցանը կմիացնի ու ժամերով կնայի ջրին:

Սան Ֆրանցիսկոյի օվկիանոսը նույնն է, ինչ Մալիբուինը, բայց

Սան Ֆրանցիսկոյում ջուրը շատ սառն է, և ալիքներն էլ ավելի բարձր են ու հուժկու:

Մենք օվկիանոսի մոտ իջանք մեքենայից, ման եկանք լողափին, իսկ հետո էլի նստեցինք մեքենան ու բլրալանջով մինչև Քլիֆ Հաուս բարձրացանք. նայում էինք փոկերին, որ շարվել էին Փոկերի քարափի գոգին, ամբողջ ընտանիքով իրենց քարափին էին. կատաղի ալիքները ցիրուցան գալիս, քարափին էին բախվում, իսկ փոկերն ս նընդհատ սուզվում էին ջուրը, մի քիչ լողանում, հետո առաջվա պես ելնում քարափին, իրենց թափ տալիս ու փնչալով խաղում: Նրանց նայելիս, ես միտք էի անում, թե կենդանիներն ինչ կյանքով են ապրում: Ախր ծնվելու օրվանից մինչև մեռնելու օրը նրանք բոլորն իրար հետ են, մեկմեկուց անբաժան: Ոչ հոգսեր ունեն, ոչ շարշարվում են, տքնում, ոչ ինչ-որ բանի ձգտում կամ նպատակ դնում, ոչ մտածում են երեկվա կամ վաղվա մասին, ոչ էլ գլուխ կոտրում, թե ովքեր են իրենք կամ շփտես ինչ:

— Հայրիկ, ինչո՞ւ ենք մենք էսպես ապրում, իսկ կենդանիները ուղղակի ապրում են ու վերջ:

— Դա ի՞նչ հարց է,— ասաց հայրս:— Նրբերշիկ կուզե՞ս:

— Դու ուզո՞ւմ ես:

— Իհարկե: Ինչո՞ւ պիտի չուզեմ:

— Դե, փողներս քիչ է. այ, տուն կհասնենք ու ինչ որ ուզում ենք, կուտենք:

— Բայց ոչ նրբերշիկ:

— Գուցե նրբերշիկ էլ:

— Բայց ոչ լողափի նրբերշիկ:

— Դրանց հատը քսանհինգ սենթ արժի: Եթե ամեն մեկս մի-մի հատ վերցնենք, կես դոլար կանի: Իսկ կես դոլարով մենք երկու գալսն բենզին կլցնեինք ու մեր ֆորդը քառասուն մղոն կքշեինք:

— Ճիշտ է,— ասաց հայրս,— բայց նրբերշիկի հոտը քիթս է ընկել, ու ես շատ կուզեի գոնե մի հատ ուտել, եթե դու էլ կուզես:

— Կավ, ես էլ եմ ուզում, հայրիկ:

Մենք բլրալանջով ցած իջանք լողափ ու մի-մի նրբերշիկ վերցրինք՝ ամեն ինչն էլ հետը: Իսկ ամեն ինչը նրբերշիկի հետ՝ կտրտած սոխն է, թթու դրած վարունգն ու բուրավետ պղպեղը, մանանեխն ու կծվահամ թանձրուկը, որ լցնում են հացով նրբերշիկի վրա, սա էլ ծորում է բոլոր կողմերից ու եղած-չեղածը ծածկում: Հայրս իր բաժինը երեք բերան արեց:

— Աշխարհը ինքն է համ եւ հոտ տալիս հացով նրբերշիկին, —  
ասաց նա, — և դրա համար էլ համտես անելու իսկական տեղը փողոցն  
է, որ կա:

Նրբերշիկը կրպակում էին ծախում, իսկ հենց կրպակի հետևը մի  
կարուսել էր անվերջ պտույտ գալիս, երաժշտություն էր անդադար հըն-  
չում, երեխաներն էլ գոռում-գոչյունով կանչում էին իրար ու ծնողնե-  
րին, և ես հիշեցի, որ ժամանակին ինքս էլ էի ճիշտ էղպես անում: Կարծես  
գա վաղ՞ուց-վաղուց էր, համարյա մի ուրիշ կյանքում, ախր արդեն մի  
քանի տարի ես կարուսել չէի նստել: Հիմա ոնց որ թե սիրտս ուզում էր,  
բայց իհարկե, լեզուս չէր բռնում ասեմ, որովհետև հայրիկը իսկույն  
կհամաձայներ, թե՛ գնա նստիր, ու մի տասը սենթ էլ անտեղի կկորչեր:  
Հանկարծ հայրս ասաց.

— Զգիտեմ, թե դու ինչ կարծիքի ես, բայց ես պետք է կարուսել  
նսւ եմ:

-- Կատակը մի կո՞ղմ:

— Առյուծին կնստեմ: Իսկ դո՞ւ:

— Վագրին:

Մենք տեղնուտեղն անցանք կրպակի հետևն ու տոմսեր առանք:

### ԳՆԱՅԻՐ

Հայրս, ասածի պես, առյուծին նստեց, ես էլ՝ վագրին, ու ջունդի-  
ների երաժշտության տակ մենք պտտվեցինք:

Ամեն անգամ, երբ վագրը մի լրիվ պտույտ էր տալիս, ինձ թվում  
էր, թե ես ժամանակի միջով մի ամբողջ տարի արշավել եմ հետ, իսկ  
ժամանակը թռել, ուղիղ մի տարի առաջ է ընկել:

Հենց որ վագրը կանգնեց, ցած իջա ու քաշվելով մի կողմ, ասացի.

— Հայրիկ, ես բան չեմ հասկանում, գիտե՞ս:

— Ավելի լավ, — ասաց հայրս:

Մենք խաղարանների մեջ ձգվող ճանապարհով քայլեցինք դեպի  
լողափի ծայրը, իսկ էնտեղ ամեն տեսակ ճոճանակներ կային ու տար-  
բեր տաղավարներ, ուր փողը մուծում ու ներս ևս մտնում, ասեմք՝  
«Գժանոց» կամ «Գաղտնիքների տուն»:

Մարդ ոգևորվում էր բոլորի հրճվանքը տեսնելով, կարծես ամենքն  
էլ հանկարծակի գլխի էին ընկել, որ ողջ են ու առողջ, հրճվալի բա-  
ներով լեփլեցուն աշխարհում, և ուրիշ ոչ մի անելիք չունեն, բացի զվար-

ճանալուց ու նրբերշիկ վայելելուց: Փոքրիկ գնացքը գահավեժ բարձունքից շոնշալով սլանում էր ցած, ոլորապտուլտ մի կեռման տալիս և ուղեվարների աղմուկ-աղաղակի տակ բարձունքը ելնում, իսկ հետո նորից էր արընթաց իջնում, և ուղևորները նորից աղմուկ-աղաղակ էին դնում:

Ես անընդհատ ճգնում էի աշխարհը հասկանալ, ճգնում էի պարզել, թե ինչ է նշանակում ողջ ու առողջ լինել մյուս ողջ ու առողջ մարդկանց մեծ բազմության մեջ:

Մերթ հրճվում էի, ուրախանում, մերթ էլ ինձ մենակ ու տխուր զգում:

Երբ բոլոր խաղարանները մնացին հետևում, հայրիկը ասաց.

— Իսկ հիմա արի գնանք Պատվո լեզեոնի սլալատ ու մի քիչ էլ ուրիշ կյանք տեսներ:

— Ի՞նչ կյանք:

— Արվեստի կյանքը, որն ամենալավն է աշխարհի երեսին:

— Ինչո՞վ է լավը:

— Այդ կյանքում աղմուկ-աղաղակ չկա: Շուտ արա, էլ չեմ համբերում, թե երբ եմ կրկին տեսնելու:

Մենք նստեցինք մեր ֆորդն ու բլրալանջով դեպի վեր բարձրացանք:

## ԳՈՒՈՒՐ

Պատվո լեզեոնի սլալատը բլրի գագաթին է, որտեղից սլարգ երևում է Ոսկե դարպասը թե ծովը, թե նեղուցը և թե կամուրջը: Պալատի դիմաց, ուր էլ որ նայես, շորս կողմդ կանաչ մարգագետին է, ու հենց մարգագետնում երկաթե ձիու վրա մի երկաթե մարդ կա, իսկ մի ուրիշ մարդ մտածկոտ նստած է:

— Ձիավորն ո՞վ է:

— Խելատի մեկը:

— Էս մի խելա՞ռն ով է:

— Սա «Մտածողն» է:

— Ինչի՞ մասին է մտածում:

— Իր մասին: Բոլոր մտածողներն էլ իրենց մասին են մտածում:

— Բա շորե՞րն ուր են:

— Տանը:

— Իսկ ի՞նքը որտեղ է:

— Այ, էստեղ: Արվեստում: Այդ արձանը կերտել է Ռոդեն ազգանու-



և ուլ մի փարդ: Սա համարվում է լավ գործ, բայց հետագայում ստեղծված գրվածքի մեծ մասը այնքան անհաջող են, որ ինչ խղճուկ չէ, թվում է լավը: Եղիտաացիներն ու հնդիկները շարունակ, ոչ թե ժամանակ առ ժամանակ, շատ ավելի լավ գործեր են ստեղծել, ասես նրանց համար դա բնության բան էր, ահա բերիչ կերպ հնարավոր էլ չէր: Մինչդեռ մեր օրերում համարյա չես սեանի, ոչ դոնե մեկնումեկը քիչ թե շատ պաս-շաճ մի գործ ստեղծի:

— Հայրիկ, ինչո՞ւ չես նրանց ամեն ինչ սովորեցնում: Չէ՛ որ դու աշխարհի ամենախելոջ մարդն ես

— Հա՛-հա՛-հա՛,— ծիծաղեց հայրը:— Արի ներս գնանք, քանի՛ դեռ դուր չեն փակել, դնանք սրվեստ նայենք:

— Ի՞նչ է արվեալը

— Ինչ որ կամենաս. ինչին որ առանձնահատուկ հայացքով նայես, ինչ որ առանձնահատուկ լույսի սակ տեսնես, ինչ որ առանձնահատուկ մի ձևով տեսնես և իր առանձնահատուկ շխմբ դատես:

Մենք ներս մտանք, խիկ ներսը կարծես եկեղեցի լիներ: Նույնիսկ երդեսոնի նվազ էր լավում, ու պատերին ամեն տեսակ նկարներ էին կախած:

Ես հաճույքով էի նայում նկարներին: Նայում ես դրանց և աչքիդ առաջ շատ ու շատ բաներ են դալի, որ հաշար անգամ տեսած կլինես, բայց նրբեր էլ կարգին ու ըք չես դարձրել կանաչ, ծառայառ ու քարքարուտ լլուլներ, մարդկանց ու կենդանիների դնմքեր, կահույքով ու իրերով լեփ-լեցուն սենյակներ, նստած ու կանգնած մարդիկ, սեղաններ՝ լքան ամսեններով միրգ, հաց ու պանիր և ուրիշ ուտելիքներ, որ որդների խնամ ու գլխովայր կախված տարրեր թռչուններ, ծովում լողացող նավեր, քաղաքի փողոցներ, ծալքավոր վարագույքով փոքրիկ սենյակներում՝ կիսամերկ կանայք, որ պառկած հանգստանում են, ննջում, կաս էլ հազնվում, մի պատուկ աղջիկ, որ դուլլով պարտեղի ծաղիկներն է ջրում, հայր ու մայր՝ իրենց երեք լրեխայի ու մի մեծ շան հետ, ոտը արան, երկաթ՝ լղր և էլի ինչ ասես:

Սենք մի սլահից անցնում էինք մյուսը, հետո էլ իջանք, տեսնենք ի երբեի հարկում հին ժամանակների ամսաներ են, բաժակներ, դանակ ու պատասուքս ու, խիկ պատերին՝ մարդկանց ու կենդանիներ պատկերող մեծադիր գործվածքներ, որոնք ներկայացնում էին որոշ տեսարաններ:

Ներսում ինչ կար շխար՝ լուրջը սենյանք ու ամեն սրահի անկյունում ոլորված հրշեջ փողբախներն էլ:

Վերջապես դուրս եկանք շենքից ու կանգնելով մարգագետնում, սկսեցինք արևի մայրամուտը նայել, և հայրիկն ասաց.

— Եթե արվեստը չլիներ, մենք վաղուց կջնջվեինք երկրի երեսից:

Բայց ի՞նչ է արվեստն իրականում. ի՞նչ է մարդու կյանքը, ի՞նչ է աշխարհը. չէ՛, ես ուղղակի շեմ հասկանում ու վերջ:

էդպես՝ մարգագետնում կանդնած, ծովի մեջ սուզվող արևին նայելիս, հայրիկը ասաց.

— Ամեն մի տանը պետք է արվեստի ցուցասեղան լինի, և տարբեր առարկաներ փոխնիփոխ դրվեն, որ տանն ապրողներից յուրաքանչյուրը դրանք մանրամասն զննի և իսկասկած տեսնի:

— Օրինակ՝ դու ի՞նչ կդնեիր սեղանին:

— Տերև: Փող Կոճակ: Քար: Կրագրի մի կտոր: Չու: Կոպիճ: Խնձոր: Ծաղիկ: Չորացած միջատ: Պայտ:

— Է՛հ, էդ բոլորն ո՞վ չի տեսել:

— Տեսնելը՝ իրոք որ տեսել են: Բայց ոչ ոք էլ ուշագիտ չի նայել, իսկ արվեստը հենց դա է: Այնպես նայել ծանոթ բաներին, կարծես առաջին անգամ ես տեսնում: Թեկուղ մի հասարակ թղթի կտոր լինի՝ վրան մեքենագրած: Կամ ասենք, փողկապ: Գրպանի դանակ: Բլանալի: Պատ՝ ուքաղ. Գավաթ: Շիշ: Ընկույզ:

— Բա բեյսբոլի գնդա՞կ: Ախր շատ է սիրուն:

— Ինչ խոսք: Ուրեմն՝ սեղանին մի բան ես դնում և ուշագիտ նայում: Մյուս առավոտ դրվածդ վերցնում ես սեղանից ու փոխարենը ուրիշ բան դնում. ինչ ուզում է լինի, որովհետև բնության կամ մարդու կողմից ստեղծված ամեն բան արժանի է առանձնահատուկ ուշադրության:

Արևը համարյա թե սուզվել էր ծովը: Նրա նարնջագույն լույսը բռնել էր երկինքն ու ջրի երեսը: Պատվո լեզեոնի պալատը՝ բլրի հետ միասին, խավարով էր ծածկվում, և հայրս գրպանից սիգարետ հանեց, վառեց, ծուխը քաշեց ներս ու բաց թողնելով քիթուբերանից՝ ասաց.

— Է՛, տղաս, հրաշք աշխարհի մի օրն էլ ահա անցավ ու գնաց:

— Բայց չէ՛ որ վաղը նոր օր կբացվի:

— Ի՞նչ կասես. շգնա՞նք նավահանգիստ ու նայենք բոլոր կողմերից եկած նավերին:

Մենք նստեցինք մեր Փորդն ու բլրից ցած իջնելով, ճամփա ընկանք նավահանգիստ՝ դեպի էմբարկադերո:

— Ես կարող եմ քեզ անթիվ պատմությունների անել այս քաղաքի մասին, — ասաց հայրիկը, — բայց պատմածս ավելի շատ ինձ կամ քեզ է վերաբերում, քան թե քաղաքին: Հինգ-վեց տարի առաջ շորսով ճիշտ էսպես ճամփա էինք ընկել. ես էի, դու, մայրդ ու քույրդ էլ մեզ հետ, և դու հենց որ նավերը տեսար, նրանցից մեկը ուզեցիր:

— Ո՞ր մեկը:

— «Ասիական ճեպընթացը»: Այդ նավի անունը երբեք չեմ մոռանա: Դու ուզում էիր նավը, և քեզ հասկացնելու ոչ մի ճար չկար, որ դա անհնար է:

— Հա՛-հա՛-հա՛: Ինչի՞ համար էի ուզում:

— Ո՞վ իմանա: Ես գլխի չէի ընկնում, դու էլ երևի չես հիշում արդեն: Իսկապես, ինչի՞ համար էիր ուզում:

— Չգիտեմ, հայրիկ: Բա ի՞նչ արեցինք:

— Ի՞նչ պիտի անեինք. վերադարձանք տուն ու ընթրիքի նստեցինք:

— Ճիշտ էլ արել ենք:

Մենք գնում էինք Սան Ֆրանցիսկոյի փողոցներով, մերթ վեր սլանում, մերթ վար, մերթ պտույտների տալիս և վերջապես, հասանք էմբարկադերո նավահանգիստ, որտեղ միշտ նավեր են կանգնած ու սովորականի պես, կանգնած էին էլի.

Տեսնես աշխարհում նավից սիրուն բան կա՞: Զարմառալի չէ, որ ես փոքր ժամանակ նավ եմ ուզեցել ու նույնիսկ առանց իմանալու, թե նավը ինչ է: Տեսնես աշխարհում նավից բնական ու համաշափ բան կա՞. էսպես հոյակերտ կամ խորիմաստ մի բան:

Մենք կանգ առանք հենց նավամատույցի մոտ՝ գերանների մի դարսակի կողքին, դուրս եկանք մերենայից ու սկսեցինք նայել կառանատեղում կանգնած երկկայմ առազաստանավին, որը լրիվ աղատվել էր բեռից, մեծ շէր, բայց ոչ էլ փոքր, հին էր և վրայից ծովի ու փայտի հոտ էր գալիս, ինքն էլ ծայրեծայր մոխրագույն էր ներկված:

— Հայրիկ, — ասացի ես, — արի մի նավ առնենք ու շուրջերկրյա ճամփորդության մեկնենք: Արի հաստատ նպատակ դնենք ու սկսենք փող հավաքել, իսկ հետո արդեն նավի վրա կապրենք և ուր էլ որ ուզենք, հանգիստ կզնանք:

— Նավով լուսին հասնողը չեսք:

— Հա՛-հա՛-հա՛: Հրթիռով էլ շենք հասնի: Դու լավ գիտես, հայ-  
**րիկ**, էնպես որ արի մի փոքրիկ, հին նավ առնենք ու աշխարհով մեկ ման  
**դանք**, ամեն տեղ շրջենք: Կուղե՞ս, ծովահեններ դառնանք: Ես համա-  
**ձայն** եմ: Ծովային ճամփաների ավազակներ լինենք:

— Սպասիր մի քիչ ծանրութեթե անեմ:

— Հայրիկ, արի իրոք նպատակ դնենք: Մեր սեփական նավն ունե-  
**նանք**, հետո էլ հրացաններ ճարենք, հարձակվենք, ուրիշ նավեր գրավենք  
**ու** նման բաներ:

— Հա՛, հոյակապ միտք է: Երանի կարողանայինք:

— Բայց շենք կարող, չէ՞, հայրիկ:

— Դե, հեշտ մի կարծիր:

— Իսկ գրա համար ի՞նչ է հարկավոր:

— Քիչ խելք ու մեծ հաջողակություն, բայց միևնույն է՝ թեկուզ եր-  
**կուան** էլ լինեն, երկար շես դիմանա:

— Ինչո՞ւ:

— Օրենքներին դեմ է:

— Ի՞նչ օրենքներ:

— Իմ ու քո օրենքներին:

— Ես էլ կարծեցի՝ Անգլիայի օրենքներն ես ասում:

— Չէ, Անգլիայի օրենքներից ես գաղափար չունեմ, բայց մեր օրեն-  
**քը** սա է. ամեն տեսակ ուրախություններ վայելել, առանց մեկնումե-  
**կին** վնաս հասցնելու:

— Ո՞նց:

— Չգիտեմ, կմեծանաս՝ ինքդ կիմանաս:

— Ուրեմն՝ ի՞նչ, հայրիկ. արդեն անհնա՞ր է, որ ծովահենների  
**ուրախությունը** մենք էլ վայելենք:

— Համենայն դեպս, դա իսկական ուրախություն չի լինի:

— Չէ, ինչո՞ւ, կլինի՛:

— Եթե անգամ լինի, մեծագույնը չէ:

— Համարյա մեծագույնն է, ու քանի դեռ չգիտենք, թե մեծագույնը  
**որն** է, փաստորեն հենց դա էլ կլինի մեծագույնը, բայց մեկ է՝ իմ ասած  
**ուրախությունը** արդեն անհնար է. դե՛, գրողի ծոցը, ծովահեն շենք դառ-  
**նա** ու վերջ:

— Ափսոս, — ասաց հայրս:

Մենք հեռացանք երկկայմ առադաստանավի մոտից ու առաջ անցանք, որ էմբարկադերոյում կանգնած մյուս նավերն էլ տեսնենք. չէ, նավի պես բան աշխարհում չկա. նայում ես նրան, նայում, ու ա՛յ թե մտքեր են գլխովդ անցնում:

Զգիտեմ ինչ կանեի, եթե նավ ունենայի: Ա՛խ, ո՛ւր էր մի հսկա շոգենավ ունենայի ու ես էլ նրա նավապետը լինեի: Թե շհաջողվի հսկա շոգենավ ունենալ ու նրա նավապետը լինել, ոչինչ, թող սովորական մեծ նավ ունենամ ու նավապետի առաջին օգնականը լինեմ: Թե սա էլ շհաջողվի, ու ես նավապետի օգնական շլինեմ, ոչինչ, միգուցե դբոսանավ ունենամ՝ իր նավապետով ու ամբողջ անձնակազմով, իսկ ես ուղղակի նավի վրա լինեմ, նույնիսկ եթե մենք բեռ չտեղափոխենք, թեպետ ես կուզեի, որ տեղափոխենք, ի՞նչ տարբերություն, թեկուղ դբոսանավով: Բայց թե դբոսանավն էլ հանկարծ շտացվի՞ր, գուցե ձգանավ ինձ բաժին ընկնի. ես ու հայրս գործի կգցենք ու մեծ-մեծ նավերը քաշելով կառանատեղ, նրանց նավաստիներին ողջույններ կուղարկենք: Թե ձգանավ էլ ինձ բաժին չընկնի, ոչինչ, թող փոքրիկ առադաստանավ հասնի, ու ես փոխանակ հեռուները գնամ, գոնե լճոտերքում մի քիչ կլողամ. համաձայն եմ, թող ամենափոքրիկ առադաստանավը լինի, ասենք՝ իմ տեսած մակույկներից մեկը, որ ամեն ամառ հայտնվում են Մալիբուի կողմերում: Բայց թե մակույկ էլ հանկարծ շունենամ...

— Հայրիկ,— ասացի,— արի սրանից հետո ինչքան տախտակ ու գերան սլատահի հավաքենք, մի կողմ դնենք:

— Ինչի՞ համար:

— Լաստ կկառուցենք:

— Լաստն ինչի՞դ է պետք:

— Հենց լաստը շի, որ պետք է, բայց նոր մտածում էի՝ եթե սրտիս ուզածը շտացվի, գոնե լաստ կունենամ. ավելի լավ է մարդ լաստ ունենա, քան թե ոչ մի բան:

— Բայց սրտիդ ուզածն ի՞նչ է:

— Մեծ նավ:

— Նույնը, ինչ որ հինգ տարի առա՞ջ:

— Տեսնես մեծ նավը ինչքա՞ն կարժենա:

— Դե, մի ժամանակ՝ պատերազմից հետո, կարելի էր հարյուր հազար դոլարով պետությունից հին բեռնանավ գնել:

— Դա շատ թանկ շի՞, հը՞:

— Բեռնանավերից ամեն մեկը պետութեան վրա կես միլիոն դոլար կամ ավելին էր նստել, էնպես որ թեկուզ բանեցրած նավը՝ հարչուր հազարով, անշափ ձեռնառու է, բայց նույն հարչուր հազարը ինձ ու քեզ համար վիթխարի գումար է:

— Իսկ հիմա նրանցից մնացած կլինի՞:

— Չեմ կարծում:

— Բա ո՞վ է առել: Մեզ նման սարդի՞կ:

— Ոչ, շոգենավային խոշոր ընկերութեանները: Նրանք են էդպիսի գործարքներ կնքում:

— Լավ նավեր էին, հա՞:

— Իհարկե լավն էին:

— Չէ, արի ինչքան տախտակ ու գերան պատահի, հավարենք ու առանց ժամանակ կորցնելու, մի լաստ լառուցենք:

— Արի,— ասաց հայրս:

## ԱՂԵՂԸ

Մենք կես ժամ ման եկանք նավահանգստում, իսկ հետո բարձրացանք գերանների մի դարսակի վրա ու նստած նայում էինք դիմացի մեծ նավին, որի անունը «Ահեղ բարեկամ» էր: Նստեցինք, որովհետև հայրիկն ուզում էր հասկանալ, թե ինչու է նավը «Ահեղ բարեկամ» կոչվում, ու ես էլ էի հորս հետ մտածում դրա մասին, բայց ինչքան մտածեցի, խելքս բան չկտրեց: Ո՞ր բարեկամն է համարվում ահեղ: Եթե ահեղ է, էլ ի՞նչ բարեկամ: Կամ գուցե խոսքը մարդու մասին՝ չէր, այլ ուրիշ բարեկամի: Եթե էդպես էր, ուրեմն՝ ինչի՞:

— Սա ո՞նց հասկանանք, հայրիկ:

— Չգիտեմ, բայց նավը գեղեցիկ է, չէ՞:

— Շատ գեղեցիկ է, մի տեսակ նեղ ու երկարուկ և ձյան սլես սպիտակ: Ով գիտի ծովում ինչ արագ է լողում:

— Դատելով տեսքից՝ այո, սրընթաց է:

— Երանի մերը լիներ: Առաջին հերթին՝ անունը կփոխեի:

— Ի՞նչ անուն կդնեիր:

— Մի ուրիշ բան:

— Ի՞նչ:

— «Չյունիկ»:

- Դա ավելի շուտ նապաստակին է սազական:
- Հա՞, ուրեմն «Նեառ ու աղեղ» կղնեմ:
- Նեառն ու աղեղը որտեղից վերցրիր, ի՞նչ կապ ունի նավի հետ:
- Դե, նավը նեառն է՝ հենց նեառի նման նեղ ու երկարուկ, ուղիղ ո՞՞

սրընթաց:

- Իսկ աղեղը:
- Մովը: Ինչ է, շի՞ կարող լինել:
- Կարող է: Հետո՞, է՞լ ինչ անուն կառաջարկես:
- «Իմ սևփական նավը»:
- Ուրի՞շ:
- «Եկավ ու գնաց»:
- Վատ չէ:
- «Հիմա կամ երբեք»:
- Դա էլ վատ չէ:
- «Ահա և ես»:
- Հիանալի է:
- Գտա՛, հայրիկ: Ա՛յ, ամենահարմար անունը գտա:
- Ո՞րն է:
- «Հա՛-հա՛-հա՛»:
- Հոյակապ անուն է:
- Էս նավը կարծես տեղով ծիծաղ լինի: Ճիշտ եմ ասում, հայրիկ: Ոչ մի ահեղ բարեկամի էլ սա չես նմանեցնի:
- Այո, իսկապես, ծիծաղ է բերում:
- Բայց «ահեղ բարեկամը» ի՞նչ կլինի, հայրիկ:
- Գուցե մարդու խելքն է,— ասաց հայրս:
- Խելքն ի՞նչ ահեղ բան է:
- Չգիտեմ, բայց հաճախ էղպես է թվում:
- Իսկ ինձ չի թվում:
- Դու ավելի բարվոք վիճակում ես, քան մեծերից շատերը:
- Բայց դեռ փոքր եմ, թղուկի մեկը:
- Է՛հ, կմեծանաս:
- Հույս ունեմ:
- Իհարկե կմեծանաս:
- Հայրս մեկնվեց գերանների վրա ու աչքերը փակեց:

Թե ինչ է խելքը, ինքներդ էլ գիտեք: Հենց խելքով ես բանը պարզում ու հասկանում: Բայց դրա մեջ ի՞նչ կա ահեղ: Ինչ էլ որ մարդ պարզի ու հասկանա, ինչո՞ւ պիտի ահով լցվի:

Հավ, ախր ի՞նչն է, որ եթե հասկացար, ահով կլցվես ու կվախենաս: Չլինի՞ թե՛ որ ի վերջո ամեն մարդ էլ պետք է մեռնի: Է, հետո՞ ինչ: Ես միշտ էլ սա իմացել եմ, բայց երբեք չեմ վախեցել: Երևի ուղղակի դեռ ժամանակը չի, որ մտքովս անցնի, թե դա կարող է պատահել ինձ հետ: Ինչո՞ւ պիտի ինձ պատահի: Ճիշտ է, բոլորի հետ էլ վաղ թե ուշ պատահում է, մեկ-մեկ էլ՝ նույնիսկ երևիսաների: Բայց ամենից հաճախ նրանց է պատահում, ովքեր երկար կյանք են անցկացրել, այ, էն մարդու պես, որ սևամորթների համար մղվող պատերազմում թմբկահար տղա էր եղել ու մինչև հարյուր մեկ տարի ասլրել. բա՛, այսօր կերացրեք. բայց վերջը էդ նախկին թմբկահարն էլ մեռավ: Նա արդեն շատ ծեր էր. երբ իննսունինը տարեկան էր դեռ, հեռուստատեսությունը ցույց տվին նրան շքերթի ժամանակ, ու պարզ երևում էր, թե ինչքան է ծեր:

Ամեն մարդ աշխարհի երեսին գիտի՝ մի օր մեռնելու է, բայց երբեք չես տեսնի, որ մեկնումեկը դրա համար նեղվի: Միգուցե մենակ մնալիս են նեղվում: Ես ի՞նչ իմանամ:

Ասենք, մի անգամ հենց ինքս նեղվեցի: Բլրալանջով սլանում էի ցած, ու հանկարծ հեծանիվիս շղթան կտրվեց: Ես թավալզոր եկա, գլուխս դիպավ գետնին, ու հարվածից ուշքս գնաց: Հայրիկն ինձ տարավ Սուրբ Հովսեփի հեվանդանոց, որ գլուխս ունտեղեցնով նկարեն: Ոչ կարգին հիշում էի, թե հետս ինչ կատարվեց, ոչ էլ միտքս էր, թե հետո ինչ եղավ:

Հայրիկը ասաց.

— Ռենտգենը պետք է. դրանով են որոշելու՝ գլուխդ վնասել ես, թե չէ: Իմ կարծիքով, պինդ գլուխ ունես: Ամենավատը անցած համարենք, հիմա արդեն ամեն ինչ լավ է:

Ես փորձում էի խելքս տեղը բերել:

— Իսկ ե՞րբ հաստատ կիմանանք:

— Հինգ-տասը բուպեից, երբ որ նկարները գննեն:

Մտքումս ասացի՝ եթե գլուխս լուրջ վնասված լինի, ուրեմն կմեռնեմ:

Չգիտեի, թե ինչ մտածեմ ու մի տեսակ նեղվում էի: Չէ, ավելի շուտ,



կատաղել էի վրաս. դե, ո՞նց չկատաղեի, եթե մի հիմար պատահմունքի երեսվց, մի շնչին բանի համար էդպես թանկ էի վճարելու:

Հետո՝ մի տասը-տասնհինգ րոպեից, հայրիկը եկավ ու ասաց.

— Գնացինք:

Ես իջա ունեղենյան սեղանի վրայից ու պինդ-պինդ ոտքի կանգնեցի: Հայրիկը ևրկու ձեռքով գլուխս բռնեց: Նա շոյեց մազերս, իսկ հետո գլուխս համբուրեց ու ասաց.

— Կավ պահիր, եղա՞վ:

Ու հիմա, հենց որ հայրիկը նստեց պառկած տեղից, ես ասացի.

— Հայրիկ, այ, ինձ բացատրիր: Մարդ ի՞նչ կարող է պարզել ու հասկանալ, որ վախեցնի նրան ու ահով լցնի:

— Նստով դու ինքո կպարզես քեզ համար:

— Զի՞ լինի, որ գոնե ակնարկով հասկացնես:

— Ախր մեկին վախեցնող բանը գուցե մի ուրիշին բնավ չվախեցնի:

Յուրաքանչյուր մարդ իրենն է պարզում:

— Ընչ անենք, թեկուղ. դու ասա՛, հայրիկ:

— Դե տես,— ասաց հայրս,— սերն ամեն ինչ է... ու երբ ես սլարգեցի, որ նույնիսկ սիրուց կարող է բլինչ շմնալ, դա ինձ վախեցրեց: Մահու շափ ու ցմահ վախեցրեց, իրոք:

### ՏՈՒՆԸ

Մենք նորից նստեցինք մեր մերենան ու էմբարկաղերո նավահանգրստից հեռացանք: Մարքիթ լիողոցով գնացինք Թուին Փիքս, հետո պտույտ տվինք, մի ուրիշ փողոց էլ անցանք և վերջապես հասանք հորաքրոջս տուն:

Ընթրեցինք ու հայրիկի նախկին բնակարանն իջանք. նստած խոսում էինք, իսկ բուխարիկի մեջ կրակն էր բոցկլտում: Հորաքույրս մի սկահակ միրգ բերեց ներքև, մենք սկսեցինք խնձոր ուտել, տանձ, չորացրած թուզ ու շամիչ, դեղձի ու ծիրանի շիր, խուրմա, ընկույզ ու նուշ:

Հայրս քրոջ հետ հարազատներին էր հիշել, դեռ մանկությունից ճանաչած մարդկանց, որոնք արդեն չկային:

Հետո հորաքույրս բարի գիշեր մաղթեց ու գնաց վերև, ես ու հայրիկն էլ մի-մի գիրք վերցնելով՝ անկողին մտանք և պառկած կարդում էինք, մինչև որ քուններս տարավ, ու հայրիկը լույսը հանգցրեց:

Մեր ուղևորութիւնը դեպի Սան Ֆրանցիսկո հիանալի անցավ, իսկ հետո հրածեշտ տվինք Սան Ֆրանցիսկոյին ու բռնեցինք տունդարձի ճամփան: Մալիբուի ծովեզրը հասանք կիրակի երեկոյան, հենց մայրամուտին: Ներս մտանք մեր տուն, բացեցինք լուսամուտներն ու ջրի ծորակները և դուռս եկանք տան հետևի պատշգամբը, որ էլի նայենք ծովին, հետո երկուսով իջանք ծովեզրը ու Կարմիր քարափի կողմը վազեցինք: Չէ, բուրբոսին էլ մրցման չէինք ելել, ուղղակի վազում էինք մեզ հաճար, որովհետև տանն էինք, միտսին:

Վերադառնալիս հանգիստ քաշկերով եկանք:

Ճանապարհին, սովորականի նման, կոպիւններ հավաքեցինք, մի քանի հատ էլ լեցի ու ջրիմուռ և ւեղ շասնելուն պես՝ վերև բարձրացանք ու տոնական բնթրիք սարքեցինք:

Ընթրիքից հետո հայրիկը ասաց.

— Դե, վաղն առավոտյան դպրոց ես գնալու, մի ասա տեսնենք, թե ինչից ես կազում:

— Ուղղաբութիւնից: Իմ ամենաթաշկ կողմն է: Միևնույն բառը մի օր ճիշտ եմ գրում, մյուս օրը՝ սխալ:

Մենք ուղղաբական վարժութիւններ արինք, շնայած հայրիկը ասաց, որ ուղղաբութիւնի համար շատ շանհանգստանամ: Նա խորհուրդ տվեց սովորել, թե ինչպես են բառերը տեղին օգտագործում, որովհետև ամենից կարևորը սա է: Եթե դու սլարդ ու հստակ արտահայտվես, թեկուզ բառերը սխալ գրելով, մեկ է՝ ասածդ հստակ կլինի, և բոլորը կհասկանան օեզ:

Մենք մի խաղ հորինեցինք, որ ես բառերի վրա միտքս վարժեցնեմ: Օրինակ՝ վերցնում ես մի բառ, ասենք թե՛ «գեր», ու սկզբի տառը շարունակ փոխում այբբենական կարգով, մինչև մի ուրիշ բառ է ստացվում «գեր»-ը դառնում է «դեր», իսկ «դեր»-ը՝ «ծեր» և այլն, և այլն: Հստիս նորանոր բառեր ես դտնում ու մի գլուխ զարմանրից ապշում:

— Քեզ դո՞ւր է ռալիս, որ տանն ենք, — ասաց հայրս:

— Իհարկե, բայց ճամփորդելն էլ է ինձ շատ դուր գալիս:

Մենք բառերով էլի վարժութիւններ արինք, հետո հայրիկի առաջարկով ես Բրիտանական հանրագիտարանի հատորներից մեկը մի ժամ նայեցի, իսկ հետո արդեն պատկեցինք քնելու, և ես երազումս ճիշտ նույնը տեսա՝ նորից մեր ծովը:

Չէ, ծովից լավ բան չկա աշխարհում ու վերջ: Անծայր է նա ու աննման և երբեք էլ դադար չունի: Տարին բոլոր, օր-օրին, առավոտ լինի, ցերեկ, թե գիշեր, ծովը շարժման մեջ է, անդուլ շարժման մեջ: Եթե

Թողնես գնաս, նա հետդ կգա: Հեռո՛ւ-հեռու գնաս՝ մի տեղ, ուր շո՛ւս կողմը ցամաք է, ու ծովի շունչը չի էլ զգացվում, մեկ է՝ նա առաջվա սև քեզ հետ կլինի ու կալեկոծվի հենց քո թիկունքում: Որքան էլ դու հեռու գնաս, թեկուզ քաշվես իՆքդ քո մեջ, ինչպես օրինակ՝ քնելու պահին, մեկ է՝ ծովը միշտ քեզ հետ կլինի:

Չէ, ծովն աշխարհում ամեն ինչից մեծ է, ամեն ինչից լավը. ծովն էնպիսի բան է, որ եթե սիրեցիր, կսիրես ընդմիշտ:

### ԹԻՉՈՒՆԸ

Առավոտյա՛ն վեր կացա թե չէ, վաղեցի տան հետևի պատշգամ, քտեսնեմ հայրիկը կարճ շալվարն է հագել ու բազրիքին հենված՝ նայում է ծովին: Սրևը նոր էր ելնում, և ալիքները հորձանք էին տալիս, շառաչելով բախվում հսկա սև քարափին ու մոտակայքի շարվեշտր խութերին: Անթիվ ճայեր կային. նրանք պատվում էին քարափի շուրջը, ափի երկայնքով դեռուղեն ճախրում: Ինչ-որ փոքրիկ թռչուններ իրենց երկար ու սև կտուցները խոթել էին ծովեզրի ավազուտի մեջ և հորձանքի հետ սարուբերվելով՝ անվերջ փորփրում էին խոնավ ավազը: Իսկ ծովի վերևը, մեզնից հստից յարդ հեռու, հինգ-վեց ոտնաչափ բարձրության վրա, հավալուսների մի ներդաշնակ երամ էր հանդարտիկ թռչում:

— Դե՛, — ասաց հայրս, — վեպդ առա՞ջ է գնում:

— Հայրիկ, դու գիտես, որ ես ոչ մի վեպ չեմ գրում, բայց անընդհատ մտածում եմ դրա մասին: Իսկ քո խոհարարական գիրքը առա՞ջ է գնում:

— Պատկերացրու, որ ես էլ եմ քո օրին: Գիրքս չեմ գրում, բայց անընդհատ խոհարարություն եմ անում: Ի՞նչ ուտենք նախաճաշին: Արինճով բլիթե՞ր: Եզիպտացորենի հա՞ց: Կարկանդա՞կ: Բոլորն էլ պատրաստ է: Թե՞ ուրիշ բան ուտենք: Սրինակ՝ վարսակի շիլա: Եփած ու յուղով տապաղած կարտոֆիլ:

— Իսկ կարտոֆիլը արդեն եփվե՞լ է:

— Իհարկե: Երկու ժամ առաջ՝ վեր կենալուն պես, դրեցի եփվի:

— Ուրեմն՝ դու վաղո՞ւց ևս արթուն:

— Սովորականից մի քիչ շուտ եմ արթնացել: Ուրախ եմ, որ տանն ենք, երևի դրա համար:

— Ես էլ եմ ուրախ, հայրիկ: Տապակած կարտոֆիլ շուտե՞նք:

— Ուրի՞շ:

— Միզուցե արինճով բլիթնե՞ր:

— Հետո՞:

— Հետո էլ՝ կաթ շխմե՞մ, հը՞: Երևի կաթ խմելը պետք է:

— Նույն կարծիքին էլ ես եմ:

Հայրս զնաց կիսատ գործերը վերջացնելու, և, դեռ աչքս շճպած, ասաց.

— Դե լավ, արի ներս. մինչև կարգին լվացվես ու ատամներդ էլ ինչպես կարգն է մաքրես, արդեն սեղանը գցած կլինեմ:

Ես լվացվեցի, և մենք սեղան նստեցինք ու հայելապակե լուսամուտի տակ բազմաժ՝ մեր նախաճաշը կերանք:

— Իսկ հիմա, — ասաց հայրս, — դպրոց գնալուցդ առաջ, բեր մի փոքրիկ, ճախնական զրույց անցկացնենք, ինչպես մանկապարտեզում է ընդունված. ես հարցեր կտամ, դու պատասխանիր: Ի՞նչ է սկիզբը:

— Չ՛եսկացա միտքդ, հայրիկ:

— Հարցը լսիր, ծանրութեթև արա և հետո արդեն ուզածիդ պես պատասխանիր: Ի՞նչ է սկիզբը:

— Ես եմ:

— Ե՞րբ է սկիզբը դրվում:

— Առավոտյան, երբ որ արթնանում եմ:

— Ի՞նչ է վերջը:

— Երբ էլ շարժնանամ առավոտյան, դա կլինի վերջը:

— Շատ լարի, — ասաց հայրս: — Ի՞նչն է սկզբի ու վերջի միջև:

— Ես:

— Դու ո՞վ ես:

— Գետինը մտնեմ, թե իմանամ, հայրիկ: Ի՞նքդ ասա ինձ:

— Չեմ կարող: Ուրա՞խ ես, որ նորից դպրոց պիտի գնաս:

— Հայրիկ, ախր դու գիտես՝ ատում եմ դպրոցը:

— Բոլորովին էլ չես ատում:

— Չէ, ատում եմ, հայրիկ: Ես ատում եմ դպրոցը, ու քեզ չի հաջողվի ինձ հակառակն ապացուցել: Ես ատում եմ դպրոցում անցնող ամեն մի րոպեն: Ատում եմ դպրոցի ամբողջ իմաստը: Ատում եմ շենքը: Ատում եմ բոլոր ուսուցիչներին: Ատում եմ ինձ սովորեցրած ամեն, ամեն ինչ:

— Դե լավ, եթե նախաճաշդ վերջացրիր, վեր կաց, քեզ տանեմ դպրոց, ու սիրտդ ինչքան կուզենա, ատիր:

— Անհոգ մնա, ես էդպես էլ կանեմ:

— Ինչո՞ւ:

- Որովհետև սովորելու տեղը դպրոցը չի ու վերջ:
- Իսկ ո՞րն է սովորելու տեղը:
- Ծովն է, տունը, աշխարհը:
- Բայց ինչո՞վ է վատ, որ մի քանի բան էլ դպրոցում սովորես:
- Անհետաքրքիր է, ա՛յ թե ինչով է վատ:
- Լավ, լավ, գնացինք:

Մենք միանգամից վեր թռանք: Ես նետվեցի դեպի դուռն ու բաց արի իսկույն: Հայրս ձեռքն ընկած թերթերը վերցրեց, հենց տեղնուտեղն էլ ճիւղեց ու գնդակ սարքեց, և թղթե գնդակը իրար շարտելով, մենք աստիճաններից վազեվազ իջանք:

## ԳՆԴԱԿԸ

Հայրիկը գործի գցեց մեքենան, ու մենք քիչ հետո մայրուղի մտանք: Երբ հասանք դպրոցի զառիթափ ճանապարհին, որ բլրալանջով ձգվում էր ներքև, ես ասացի.

— Հայրիկ, ինձ էստեղ իջեցրու: Մնացած ճամփան ոտքով կգնամ:

— Շատ բարի,— ասաց հայրս: Նա «շատ բարին» տարբեր ձևերով է ասում՝ մեկ լուրջ, մեկ կատակով, ու հիմա էլ պետական պաշտոնյայի պես ասաց:

— Դասերից հետո շգաս ինձ տանելու,— զգուշացրի ես:— Ոտքով տուն կգամ:

— Շատ բարի,— ասաց հայրիկը նորից ու էլի պետական պաշտոնյայի նման, բայց դա էնքան գոռոզ ու անմիտ ստացվեց, որ ծիծաղս եկավ. ես քրքջալով ճանապարհ ընկա:

— Սպասիր,— ասաց հայրս:— Բա նախաճաշիդ փաթեթը ուր է:

Ես վերադարձա, մեքենայի դուռը բացեցի ու նախաճաշիս փաթեթը հետևի նստոցից վերցրի:

— Շատ բարի,— նորից կրկնեց հայրս, և արդեն երկուսո՛վ քրքրջացինք: Իսկ հետո նա մեքենան քշեց, ես էլ դպրոցի ճամփան բռնեցի:

Տեղ հասա, տեսնեմ ի՞նչ. ճիշտ նույնը, ինչ որ միշտ. դպրոցն է, բակը, ասֆալտի վրա սպիտակով գծված խաղահրապարակները, բասկետբոլի վահանակը՝ մետաղե օղից կախված զամբյուղով, վոլեյբոլի դաշտը՝ իր մեջտեղի ցանցով, տղերքը, աղջիկները, նրանց նախաճաշի փաթեթները, հեծանիվները, գրքերը, ուսուցիչները, առավոտը՝ դպրոցական ծանոթ առավոտ, երբ բոլորն անհանգիստ են, մտահոգ դեմ-

քերով: Ես նախաճաշս դրի նստարաններից մեկին, վերցրի բասկետբոլի գնդակն ու գետնին խփելով տարա: Երեք անգամ փորձեցի գնդակը զամբյուղի մեջ գցել, երեք անգամ էլ՝ անհաջող: Մի տղա կար Գաս անունով, կանչեցի մի կողմ ու թաքուն ասացի.

— Գաս, դու էլ ես հետդ նախաճաշ բերել, ես էլ: Արի դպրոցը գրողի ծոցն ուղարկենք ու բլուրներում ման գալու գնանք:

Միտքը դուր եկավ Գասին: Աշխարհում ամենից շատ նա կուզեր դպրոցը գրողի ծոցն ուղարկել, բայց վախենում էր: Ես էլ էի կարծես վախենում, որովհետև արի տես, որ չէի բազում մենակ գնալ: Միշտ ինչ-որ մի բան մարդու հետ է պահում: Երևի կանոնները: Ատում ես լրանք, բայց դե շես խախտում:

Զանգը խփեց, բոլորս մտանք դասարան, նստեցինք ու ըհը՝ մեկ էլ ուսուցչուհին դիմացներս ցցվեց. միսս Չոլոփի էր անունը. ա՛խ, մի իմանայի թե սրանք որտեղից են ծլում:

Մի րոպեն դանդաղ հաջորդում էր մյուսին: Անթիվ մտքեր էին գլխովս անցնում, իրար հետևից հայտնվում ու կորչում, իսկ հետո վերջապես մեծ դասամիջոցն եկավ:

Ես նախաճաշս հանեցի: Առաջին սանդղիչը մեղրով ու գետնանուշի կարագով էր սարքած. դրեցի մի կողմ, որ տեսնեմ էլ ինչ կա: Երկրորդ սանդղիչը ապխտած երշիկով էր ու մանանեխով. միանգամից կերա: Երրորդը լոլիկով էր, վրան ձիթապտղի յուղ լցրած: Մովորությանս պես, մեղրով ու գետնանուշի կարագով սանդղիչը ամենավերջում կերա: Գետնանուշի կարագը միշտ դնում եմ մի կողմ, մինչև ուտելու ուրիշ բան չմնա, բայց երբ էլ որ հերթը հասնում է սրան, համից շեմ կշտանում:

Գասն ու ես խոսեցինք մեր սանդղիչների մասին, իսկ հետո մի քիչ բասկետբոլ խաղացինք: Հազիվ էինք բացվել, որ դանգը նորից խփեց, ստիպված մտանք ներս ու տեղներս նստեցինք՝ էլի միևնույն միևս Չոլոփի դիմաց:

### ԿԱՆԱԶԸ

Վերջապես դասերն ավարտվեցին, և ես գառիթափով վերև բարձրացա ու բլուրների միջով ճամփա ընկա տուն: Ամենալավ ժամանակն աշխարհում դասերից հետո է, ամենալավ տեղը՝ բլրալանջերով անցնող ոլոր-մոլոր ճամփան. քայլում ես ու շորս կողմդ ինչ ասես տեսնում: Ահա՛, աչքիդ առաջ թռչուններն են թևում, սլվլիկը իր գեղանափոր բնից

փափուկ, սև հողն է դուրս տալիս, թիթեռները պար են բռնել, թռվում են ծաղկից ծաղիկ, մեղուները բզբզալով նստում-ելնում, ամեն բույսից տուրք են առնում, ու ճպուռները սրբնթաց ուղիղ վրադ են թռչում, մեկ էլ հանկարծ կտրուկ թեքվում և ուղղաթիռի պես կանգնում են օդում, ու մոտակա ինչ-որ տեղից ժանտարիսի հոտն է գալիս. ուժեղ հոտ է, բայց տհաճ չի, իսկ այ, վերևը՝ հեռու բարձունքում, երեք հավալուսներ են դեպի ծովը ճախրում, որ ջրի միջից ձկնիկներ որսան, և շուրջ բոլորդ քարեր են, ապառաժներ ու կանաչ է, ծառ ու ծաղկունք, ու ի՞նչ ազատ տարածություն:

Հենց որ տուն հասա, հայրս դռան մոտ դեմ-դիմացս ելավ:

— Փոստ տանելու բան-ման ունեմ: Կգա՞ս գնանք:

Մենք մեքենայով եկանք փոստատուն, և հայրս վեց, թե յոթ նամակ ուղարկեց օդային փոստով, բոլորն էլ՝ Նյու Յորք, պարզ է, էնտեղի խմբագիրներին ու հրատարակիչներին: Հետո մի դոլարի առևտուր արեց նպարեղենի խանութից, վեց օրինակ էլ «Քրիսթիըն Սայլնս Մոնիթըր» վերցրեց, որ նվիրատու բաժանորդներ են թողնում հատուկ տեղերում ձրի կարդացողների համար, իսկ հետո մենք վերադարձանք ևուն ու վազեցինք ծովափ:

— Դե՛, — ասաց հայրս, — լավ շէ՛ր դպրոցում:

— Հայրիկ, մի բան ասե՞մ քեզ: Երբ էդպիսի հարց ես տալիս, ի՞նչ պատասխան ես սպասում ինձնից:

— Իհարկե ճշմարիտ:

— Ախր ամեն անգամ, երբ որ դրա պես մի հարց ես տալիս, ևս ուզում եմ իսկույն ճիշտը պատասխանել, բայց հետո մտքումս գցում բռնում, թե դու ինչ պատասխան ես սպասում ինձնից ու ճիշտը ասելու փոխարեն փորձում եմ քո սպասածն ասել:

— Եվ ինչքա՞ն ժամանակ է էդպես շարունակվում:

— Ամբողջ կյանքս:

— Ցավալի է: Իմ բոլոր հարցերին դու ճիշտը պատասխանի՞ս:

— Գիտե՞ս, դպրոցում ավելի վատ էր, քան կպատկերացնեի:

— Իրո՞ք:

— Շատ ավելի վատ:

— Դե, ինչ արած, ամեն դեպքում, գոնե այդ հարցի ճշմարիտ պատասխանն ստացանք:

Առափնյա ծանծաղուտով մենք քայլեցինք հսկա քարափներից մեկի կողմը, իսկ սա հրաբխային մի մեծ ապառ է, հայրիկի տնից դեպի արևմուտք, մոտ երկու հարյուր յարդ հեռավորության վրա: Կարմիր քարափը դեպի արևելք է:

Մեր սովորության պես, մի լավ տնտղեցինք հրաբխային ապառը՝ նայելով ծածուկ գրպաններ հիշեցնող ճեղքերն ու խոռոչները, սրանց մեջ գոյացած ջրափոսերը, որտեղ մանր ձկներ կային, փոքրիկ խեց-դետիններ ու ծափկոտրուկ անունով ջրային ծաղիկներ: Ես մի պատշիկ խեցեմորթ գտա, պոկ տվի քարից և մի քիչ պահեցի խոշոր, դեղնակապտավուն ծափկոտրուկի վրա: Հետո բաց թողի խեցեմորթն ու տեսա. մեծ-մեծ պսակաթերթերը մեկեն փակվեցին խեցեմորթի շուրջը, ոնց որ ծաղիկներն են փակվում մայրամուտին, միայն թե ավելի արագ և դիտամամբ. ի՜նչ գեղեցկություն էր ու հանկարծ ա՛յ քեզ, ինչ թակարդ դարձավ: Գլուխս չէր մտնում, թե փոքրիկ, սև խեցու մեջ ամփոփված փոքրիկ կյանքը ինչպես պիտի շուտով կուլ գնա մի ծաղկի, որը կարծես թե նույնիսկ ծաղիկ չէր, այլ բույսի և կենդանու մի տեսակ խառնուրդ: Ես խղճացի խեցեմորթին, շնայած ինքս էի նրան ծաղկի մեջ դրել:

Մարդ դարձանում է, թե ինչեր կան աշխարհի երեսին ու ինչ ձևերով են իրենց կյանքը պահպանում, այ, ծափկոտրուկի պես, որ բուսնել էր քարափի ծանծաղ ջրափոսի ելրին, պսակաթերթերը փռել ու էդպես գեղեցիկ էր, այնինչ հերիք է պատահամար մի բան դիպչի նրան, տեղնուտեղը կբռնի ու կուտի, և ինքն էլ ուրիշ ոչ մի կենդանու նման չի ուտի, ասենք՝ սեղանի մոտ, կամ ինչպես վագրն է ուտում եղջերուին, թռչունը՝ որդին, իսկ սլվլիկը՝ խոտի մատղաշ ցողունները:

Բայց արի տես, որ ծափկոտրուկն ուտո՛ւմ է: Ու նրան կեր դարձած խեցեմորթն էլ՝ նույնը: Ես տեսել եմ հսկա խեցեմորթներ, որոնք մի ոտնաշափ երկարություն ունեն ու կես ոտնաշափ հաստություն. նրանք ասլրում են քարափից կառչած, ասլրում տասը տարի կամ դրանից ավել, որ միևնույն բանն է, թե մարդ հարյուր տարի ասլրի:

Բայց մա՞րդը ինչից է կառչում: Ո՞ր քարափից է նա կառչած մնում, ախր միտքս է, որ սրա մասին երգում էինք կիրակնօրյա դպրոցի դասերին: Հա՛, հիշեցի. Հավերժությա՛ն քարափից:

Ապրել աշխարհում վագրի, թռչունի, որդի, ծափկոտրուկի ու խեցեմորթի հետ միասին. լինել մի արարած, որին, պարզվում է, տեր աստ-



ված նրանց բոլորից տարբեր ստեղծել, վիշտ ու ցավ և կարոտալի հիշողութիւն տվել. է՛հ, խնդութիւն չէ՞ ամեն մարդու համար լինելու հենց այն, ինչ որ ինքը կա:

— Դու իրո՞ք խոհարարական գիրք ես գրում, հայրիկ:

Ես սա հարցրի, որովհետև մտքերս պտտվում էին ծափկոտրուկի ու նրա կերած խեցեմորթի շուրջը և ընդհանրապես ամեն ինչի շուրջը, որ աւրում է աշխարհում՝ ուտելով մի ուրիշի:

— Իհարկե գրում եմ:

-- Թե ինչպես պիտի մասպո՞ւր եփել:

— Ոչ միայն, բայց նաև դրա մասին:

— Է՞լ ինչի մասին:

— Սրինակ, թե ինչպես հոգին սնուցել, այսինքն՝ հոգևոր սնունդ ստեղծել:

— Հոգևոր սնո՞ւնդ: Հա՛-հա՛-հա՛:

— Դա ամենևին էլ հանաք բան չի: Ու ճշմարտութիւնը շատ ավելի մոտ է, քան դու ենթադրում ես: Հարյուրամյակներ են պետք, որ բոլորը հասնեն դրան և շինացիների նման իսկական սնունդ ստեղծեն:

— Իսկ ամերիկացիք չե՞ն ստեղծել, ինչ է:

— Նրանք դեռ ջանում են: Եվ ես էլ եմ ջանում նրանց հետ միասին: Դու էլ:

— Ուրեմն՝ ամերիկացիք հիմա իսկական սնունդ չունեն՞ն:

— Հոգին սնուցելու համար՝ ոչ, դեռ չունեն:

— Հայրիկ, քո խոհարարական գիրքը հանճարեղ կլինի:

— Շնորհակալ եմ: Իսկ քո վե՞պը:

— Իմը դժվար թե հանճարեղ լինի:

— Ինչո՞ւ:

— Դե, հենց որ գրելու ժամանակն է գալիս, մտքերը լրիվ գլխիցս թռչում են:

— Ինչ կա որ, ոչինչ, — ս.սաց հայրիկը:

Նա ցած վազեց քարափի լանջով, ես էլ՝ հետևից:

### ՍԱՌՈՒՅՑԸ

Փոխանակ մեր տան կողմը՝ դեպի արևելք վազի, հայրիկը վազեց դեպի արևմուտք: Ես կարծում էի ուր որ է կկանգնի, որովհետև միշտ ասում է, թե առաջվա նման չի կարողանում վազել, բայց նա ուղղակի

վազքը մի թեթև դանդաղեցրեց: Ես հավասարվեցի նրան, ու մենք վազեցինք կողք-կողքի: Շատ շանցած՝ արդեն ուզում էի կանգնել, բայց ո՞նց կանգնեի, եթե հայրիկը համոզված է, որ ես չեմ հոգնում երբեք: Նա անընդհատ վազում էր ու վազում, ես էլ փորձում էի հեռա շրջանակ: Հանկարծ ինձ էնպես հոգնած զգացի, որ քիչ էր մնում ասեմ. «Հերիք է, հայրիկ, շունչս կտրվեց»: Բայց դե լեզուս չէր բռնում ասեի: Շարունակեցի վազել ու լավ էլ արի, քանի որ շուտով բւթ առա նորից, և մենք վազելով եկանք, մինչև Մալիբուի ճամփագլուխ հասանք, ու էստեղ արդեն հայրիկն ինձ ասաց.

— Ա՛յ թե դիմացկուն արարած ես, Փիթ. Ես բւթանպառ եղա: Ստիպված եմ կանգնել: Հետդարձի ճամփան հանդարտ կգնանք, շորս կողմը նայելով.

— Ուզո՞ւմ ես մի բան ասեմ, հայրիկ:

— Ի՞նչ:

— Ես քեզանից շուտ հոգնեցի, բայց ամաշում էի ճիշտը խոստովանել:

— Շատ բարի: Լավ է, երբ պարզվում է, որ ի վիճակի ես ավելին անելու, քան թե կարծում էիր:

Հիմա նա դանդաղ ու հանգիստ էր քայլում, կոշիկի քթով քարերը շուտումուտ տալիս, ևրբեմն էլ դրանցից մեկնումեկը վերցնում, գրպանն էր դնում ու միաժամանակ խոսում.

— Մենք միշտ ի վիճակի ենք ավելի հեռուն հասնելու, քան թե կարծում ենք: Բայց մեկ էլ տեսար՝ կարող է պարզվել, որ ի վիճակի ենք ավելի քիչ դիմանալու, քան ենթադրում ենք: Պարզապես պետք է մերթնդմերթ սա հիշեցնել մեզ: Ես սկսեցի վազել, որովհետև տրամադրությունս բարձր էր, բայց միտք շունեի երկար ճամփա կտրելու, իսկ հետո հանկարծ որոշեցի ստուգել, թե ինչքան կվազեմ: Դե՛, մի քառորդ մղոն հո կլինի, չէ՞:

— Կարծես տասը լիներ:

— էդպես է թվում, թեպետ երևի քառորդ էլ չլինի: Ինչ որ է, վազեցինք, ոչ մեկս հեռա շրջակավ. ես մի հարյուր անգամ ուզում էի կանգնել ու մտածում էի, թե իրոք, ստիպված կկանգնեմ:

— Ես էլ:

— Եթե ճիշտը վերցնենք, դու իրավունք ունեիր: Քառորդ մղոնը մեծ տարածություն է տասնամյա տղայի համար:

— Հնդկացի տղերքը տասը մղոն էլ են վազում:

— Կվազեն, հնարավոր է: Դա, ըստ երևույթին, մարզվելուց է կախ-

ված և հետո՝ նրանց հայրերի զբաղմունքից. երևի բոլորը լավ վազողներ են: Իսկ ես մեծ մասամբ գրում եմ:

— Խոհարարական գրքեր:

— Եվ բանաստեղծություններ: Արդեն քանի տարի է՝ գրում եմ, թեև առայժմ միայն շորսն եմ տպագրել:

— Ինչո՞ւ:

— Դե, հրատարակիչներին շեմ առաջարկել: Թերևս սա է հիմնական պատճառը, բայց մի ուրիշ պատճառ էլ կա. որոշ գործեր գրողն ուզում է իր համար պահել: Մի նկարիչ գիտեի Սան Ֆրանցիսկոյում, անունը Մեթյու Բարնզ էր. կլոր տարին աշխատում էր այս կամ այն նկարի վրա, անվերջ դնում-վերցնում, իսկ հետո որևէ մեկը նկարը տեսնելով՝ ցանկանում էր գնել, ու թեկուզ Մեթը փողի կարիք ուներ, բայց չէր վաճառում: Ուղղակի անկարող էր նկարից բաժանվել: Պահում էր իր համար: Դա նրան անհրաժեշտ էր:

— Իսկ նկարները լա՞վն էին:

— Արտակարգ: Աշխարհի վերջը՝ սառույցների մեջ: Այ, նույնն էլ իմ գրած բանաստեղծությունները: Լավն են: Բայց ինչ-որ տեղ ինձ չեն գոհացնում:

— Ինչո՞ւ:

— Պիտի ավելի լավը լինեն: Ճիշտ է, շատ լավն են, բայց պետք է հանճարեղ լինեն:

— Դե, գոնե մի մասը հանճարեղ են, չէ՞:

— Միայն առանձին հատվածներ, բայց ոչ մեկն էլ լիովին հանճարեղ չի ստացվել, իսկ ես ուզում եմ հենց հանճարեղ բանաստեղծություն գրել:

— Ասե՞մ ինչ արա, հայրիկ: Ազնիվ խոսք, գիտեմ:

— Ի՞նչ:

— Կարճ բանաստեղծություն գրիր: Շա՛տ կարճ:

— Եղավ,— ասաց հայրս, և մենք շուռ եկանք ու ոտքներս քարշ տալով, ճամփա ընկանք տուն:

### ԱԶՔԸ

Ամեն մարդ տան մասին իր պատկերացումն ունի:

Հորս պատկերացումը ես անգիր գիտեմ, որովհետև նրա հարկի տակ եմ ապրում, տեսնում նրա տունը, շնչում տան հոտը, ման եմ գալիս:

Իրա սենյակներում, աստիճաններով վերուվար անում, ուտում եմ ու քնում հորս տանը, սովորում եմ, խոսում ու մտածում: Սա ամենալավ պատկերացումներից մեկն է տան մասին, որը երբևէ մարդ ունեցել է, եւ ես ուրախ եմ հորս պատկերացման համար, բայց ինքս էլ իմ սեփական պատկերացումն ունեմ:

Ինձ պատկերվող տունը մի կացարան է լեռան կատարին, որտեղ ես պետք է ուղղաթիռով հասնեմ: Իմ տունն ընդամենը միսենյականոց է, արտաքին տեսքով կես ձվի նման, ու պատերն՝ ապակե: Իմ տունը աչք է: Ես ապրում եմ տանս ու կարծես դիտարանից շորս կողմս նայում: Հենց որ ուզում եմ մարդկանց մոտ գնալ, նստում եմ ուղղաթիռս ու իջնում ներքև: Մի քանի ժամ եմ անցկացնում նրանց հետ, իսկ հետո ուղղաթիռով էլի վերադառնում: Իմ պատկերացրած տան մեջ ամեն ինչ էլ կա, որ հարկավոր է աշխատելու համար. սեղան, գրամեքենա, թուղթ, գրբեր, լուսանկարչական ապարատ, գրիչներ, մատիտներ, ներկեր, վրձիններ, դաշնամուր, նվագարկիչ, ռադիո ու հեռուստացույց: Երբ էլ ուզենամ, կմիացնեմ հեռուստացույցն ու կնայեմ մարդկանց, կլսեմ, թե՛ ինչպես են կոկորդիները պատռում, կոչ անում իրար ազնիվ ու առաքինի լինել, սիրել մեկմեկու, կամ ասենք, թեկուզ ածելու սայրեր, դարեջուր ու սիգարետ գնել, մեքենա ու շգիտես ինչեր ձեռք բերել: Ես կնայեմ, կլսեմ ու իմ մեջ կուրախանամ, որ նրանց կողքին չեմ, ինքս էլ՝ ներքևում, և հետները ինչ-որ բաներ չեմ գողում, օրինակ՝ աշխարհ եկած ամեն մարդուն հասանելիք մի պատառ հոդի ու մի բուռ փողի մասին:

Իհարկե, աշխարհ եկած ամեն մարդու գոնե մի պատառ հոդ ու մի բուռ փող է հասնում, բայց ես մտադիր չեմ նրանցից լինել, ովքեր դրա շուրջը կոկորդ են պատռում: Ախր մեկ է, ոչ ոք էլ իր հողն ու փողը չի ստանալու, դե ուրեմն գրողի ծո՛ցը...

Իմ տանը ես կաշխատեմ. մի գործ կսկսեմ ու կվերջացնեմ, իսկ հետո նոր-նոր գործեր կգտնեմ: Միգուցե նույնիսկ նոր լեզու հնարեմ, մի ամբողջ նոր լեզու, որով խոսելիս մարդիկ չկարողանան սուտ ասել: Միգուցե դա էլ անեմ, իսկ անելուց հետո նրանք մի՞թե չեն իմանա, թե ում շնորհիվ ամեն ինչ արվեց:

- Գիտե՞ս, հայրիկ, ես ուզում եմ մի բան անել:
- Վստահ եմ, որ կուզես, անգամ գրազ կգամ:
- Չէ, ես արդեն որոշել եմ:
- Ի՞նչ ես որոշել:
- Դե տես, դու մարդկանց ճանաչում ես, չէ՞, հայրիկ:

- Մի քիչ:
- Այ, ես էնպիսի բան եմ անելու, որ մարդիկ փոխվեն:
- Իրո՞ք:
- Այո, հայրիկ, իրոք: Մի բան եմ անելու, որ մարդիկ էլ շկարո-  
ղանան և ուտ խոսել ու խաբել:
- Ապրես:
- Ի՞նչ կարծիքի ես, կհաջողվի՞, հայրիկ:
- Է՛հ, առայժմ չի հաջողվել ոչ ոքի, բայց ի՞նչ իմանաւ. գուցե քեզ  
հաջողվի:
- Ուրեմն՝ շատերի՞ գլխում է նույն միտքը ծագել:
- Ում գլխում որ երբևէ մտքեր են ծագել:
- Ես էլ կարծում էի՝ լրիվ նոր միտք է: Կարծում էի՝ միայն իմ  
գլխում է ծագել:
- Բոլորն էլ ճիշտ էղպես են կարծել:
- Դուրս է գալիս, որ դա անհնարին բա՞ն է:
- Ո՞վ իմանա: Ուղղակի մինչև օրս չի հաջողվել և վերջ:
- Իսկ ինչ՞ու ես մարդիկ էսպես:
- Չգիտեմ, բայց նրանք այնքան էլ վատը չեն:
- Դու սիրո՞ւմ ես նրանց:
- Սիրո՞ւմ: Տղաս, մարդիկ ասվածը հենց ես եմ. Եթե չսիրեի նրանց,  
ապրելն ինչի՞ս էր պետք:
- Օ՛:
- «Օ»-ն կլո՞ր է, — ասաց հայրս:

## ԱՏԱՄԸ

Տուն հասանք թե չէ, իսկույն գործի անցանք. հայրս տարվեց ճա-  
շի պատրաստութ՛յամբ, իսկ ես՝ բառեր ու անուններ հորինելով: Նստե-  
ցի գրասենյանի մոտ ու մտքովս անցած հենց առաջին բառը, որ  
«օվկիանոս»-ն էր, գրեցի թղթին. ուզում էի պարզել, թե ինչ դուրս կգա  
«օվկիանոս»-ից, մի նոր բառ կամ անուն կստացվի՞ նրա տառերով, բայց  
միայն 'Նանիոփոս անունը դուրս եկավ, հետո՝ Անկովիոսը, հետո էլ՝  
Օկանիովսը: Ոչ մի անուն կամ բառ չստացվեց, որ սրտովս լիներ, ու  
քանի դեռ հայրիկը խոհանոցում էր, ինքն իրեն խոսելով ու քթի տակ  
երգելով իր գործն էր անում, ես որոշեցի մի կարգին անուն հորինել:

Մի անգամ հայրս ինչ-որ մեկին ասաց, թե ամենալավ անուն-ազ-

գանուն հորինողը Չարլզ Դիքենսն է եղել, դրա համար էլ փորձեցի Չարլզ Դիքենսի հորինած անուն-ազգանուններից մի քանիսը հիշել, բայց Սքրուշից՝ բացի, էլ ոչ մի ազգանուն միտքս չընկավ: Գրեցի «Սքրուշ», որ տեսնեմ, թե սրա տառերով ինչ լավ ազգանուն կարող եմ հորինել: Բայց չէ, ուղածս էլի դուրս չեկավ, ու ես ամեն ինչ սկսեցի նորից:

Մի օր հայրիկը բացատրեց. եթե պատմվածքիդ հերոսի համար հաջող անուն-ազգանուն գտնես, ուրեմն պատմվածքդ էլ հաջող կլինի: Դե որ էդպես է, պիտի մի հաջող անուն-ազգանուն գտնեմ:

— Հայրիկ, ես հենց նոր ազգանուն հորինեցի իմ հերոսի համար:

— Ի՞նչ է:

— Անտունի:

— Վատ չէ:

Ես վեր կացա ու գնացի խոհանոց՝ հայրիկի եփածը տեսնելու:

— Իսկ հերոսիդ անունն ինչ է:

— Սովյալ:

— Հիանալի է,— ասաց հայրս:— Սովյալ Անտունին շատ կարևոր հերոս է լինելու քո վեպում:

— Ի՞նչ ես եփել:

— Դեռ անունը չգիտեմ, բայց ինձ թվում է՝ որ ուտենք, դուրներս կգա:

Մենք կեբանք ու իրոք դուրներս եկավ:

Դա մակարոն էր, բայց պատրաստված մի նոր ձևով:

Նախ և առաջ, ասաց հայրս, խաշել է մակարոնն ու ջուրը թափել: Կիսաեփ մակարոնի վրա մի դավաթ ձիթապտղի յուղ է լցրել, հետո տոմատ ավելացրել, իսկ հետո՝ սպիտակ պանիր: Բացել է Մոնթերեյի սարդինաձկան տափակ, ձվաձև պահածոներից մեկն ու վեց ձկներից երեքը մսնրացնելով, խառնել պղնձի պարունակությանը: Ես ասացի.

— Սրա անունն ի՞նչ է:

— Անունն էլ դու դիր:

— Մակարոն գժական ձևով:

— Նորից փորձիր:

— Մակարոնով շիլափլավ:

— Նորից:

1 Չարլզ Դիքենսի «Ծրգ ծննդյան» հուշակալոր պատմվածքի (1843) հերոսը:

- Իսկ էթե երկու բառը միացնենք, որ մեկը դառնա՞. այ, **օրինակ՝ մակլափլավ:**
- Շատ լավ է:
- Թե սրա համար քեզ արտոնագիր տային, երևի միլիոն դոլար վաստակեիր, հայրիկ:
- Բայց նման բանի համար արտոնագիր չեն տա:
- Է՛հ, բա ո՞նց կարելի է միլիոն վաստակել:
- Անկարելի է: Պիտի սովորես առանց միլիոնի յուր գնալ:
- Իսկ ինչքա՞ն է պետք, որ սովորես յուր գնալու փոխարեն եղածով բավարարվել:
- Երկք:
- Երեք հարյո՞ւր:
- Ոչ, երեք փուլ մարդու կյանքում:
- Հայրս մեր ավսենները նորից մակլափլավ լցրեց, ու մենք երկրորդ բաժինն էլ կերանք:

### ՊՍԱԿԸ

Ճաշից հետո հայրիկը մի կապուկ խաղաթուղթ հանեց՝ արդեն հնամաշ ու տեսքից ընկած: Նա խառնեց թղթերը, տվեց, որ կտրեմ ու սկսեց բաժանել: Երկուսս էլ ստացանք մեր հասանելիքը. ամեն մե՛ս՝ յոթ թուղթ: Նախ՝ մի-մի հատ էլի վերցրինք կապուկից ու մի-մի հետո գցեցինք, հետո՝ երկրորդ անգամ՝ վերցրինք ու գցեցինք, նկատի առանք, թե ձեռքներիս ինչ կա, մի տարբերակ փորձեցինք, ոչինչ դուրս չեկա է մյուսը փորձեցինք, նորից մի-մի թուղթ վերցրինք ու մի-մի հետո գցեցինք, սպասում էինք ու հույսեր փայփայում, և կամաց-կամաց էս համոզվեցի, որ պետքական թուղթը կքաշեմ ու խաղը կտանեմ: Չնայած մի թեթև վախ մտավ սիրտս, թե հայրիկը հանկարծ ինձնից առաջ կընկնի, բայց հետո մեկ էլ իննոց քաշեցի ու իրոք հաղթանակ տարա, որովհետև իննոցներս երեքը դարձան, դե, շորս թաղալորն էլ արդեն մոտս էին: Պարզվեց, որ եթե իննոցը քաշեի, ու հայրիկը կապուկի հաջորդ թուղթը վերցնեիր, ինքն էր հաղթելու: Ես վեր թռա տեղիցս ու քրքջացի, իսկ հայրիկն ասաց.

— Մեկ զրո՞ հօգուտ քեզ:

Ես խաղաթղթերը հավաքեցի ու խառնելով՝ էլի յոթ-յոթ բաժանեցի: Երբ հորս հասնող վերջին խաղաթուղթը պատահամբ շրջվեց երեսի վրա, անհամբերությամբ իմը նայեցի, որ տեսնեմ, թե ի՞նձ ինչ է

բաժին ընկել. մնաց ինքինքն էին, ու ես մտածեցի, թե հաստատ կսպաստվե՞մ, բայց թղթերս լքար հեռեկոց փոխվեցին, գործս աչ գնաց, ու դեռ ուղքի չեկած՝ կրկին հաղթանակ տարա, հայրիկն էլ ասաց.

— Երկու գրո՞ հօշուտ քեզ:

Ես նորից վեր թռա ու քրքշացի, որովհետև լավ բան է հաղթելը, կշանքում սրանից հաճելի բան չկա, եթե նույնիսկ հորդ հետ ընդամենը մի ձեռք ուսմի՞ ես խաղում չէ, հաղթելուն ոչինչ չի հասնի, դա ամենալավ բաներից մեկն է աշխարհում: Ես սիրում եմ խաղալ, բայց ամենից շատ սիրում եմ հաղթելու հույսեր փայփայել ու խկապես հաղթել:

Հայրս հավաքեց թղթերը, խառնեց ու բաժանեց, իսկ ես ասուցի.

Գու ջղաչանում ես պարտվելիս, հայրիկ:

Բուլորովին՝ Մարդ պետք է հն սրավորին շափ շուտ, դեռ վաղ հասակից վարժվի պարտվելուն: Ուզում եմ ասել՝ նա պետք է սովորի արժանավայել պարտվել, և թղթախաղը նպատի շունեմ: Այ, դու հաղթելիս արդեն երկու անգամ և բոլորիս ես բնականաբար, բայց պիտի լճանու ս, որ նույն հեշտությանը երկու անգամ էլ կարող էիք պարտվել, իսկ հետո՝ ես երկու անգամ և էգուես էլի ու էլի, թեպուղ մինչև լույս խաղայինք: Դու պետք է հասկանաս, որ դա սովորական բան է ու կեցատահի: Գու պետք է պատրաստ լինես դրան: Եթե ցանկանում ես խաղալ, ուրեմն պարտվելուն պիտի նախօրոք պատրաստված լինես, որովհետև ես հետ էլ խաղաս, ինչի հետ էլ որ խաղի մեջ մտնես, նա հաղթելու նույնքան հավանականություն ունի, որքան և դու, ու տարբերություն չկա, թե ինչ եք խաղում և ինչի վրա:

— Մեկ է, հայրիկ, ես չեմ սիրում պարտվել: Չգիտեմ, ինչ խաղ ուզում է լինի, պարտվելն ատում եմ: Ախր պարտվելիս ինձ խեղճ ու խարված եմ զղում, իսկ հաղթելիս՝ ամենագոր:

— Գե իհարկե.

Ու հենց եստեռ էլ հայրիկը հաղթեց. նախ՝ մի անգամ հաղթեց, հետո՝ երկրորդ, երրորդ անգամ, ու սիրտս արդեն սկսեց նեղվել: Մտքումս դրի, որ էլ չեմ պարտվելու, բայց նորից պարտվեցի, իսկ հետո՝ նորից ու նորից, և հայրս ասաց.

— Հը՛, վարժվո՞ւմ ես պարտվելուն:

— Ոչ, սրբ: Առաջվա պես ատում եմ:

— Աշխատիր վարժվել:

— Երբեք չե՛մ վարժվի: Ես չեմ ուզում պարտվել ու չեմ էլ պարտվի:

1 Ռամի. թղթախաղի տեսակ:



Բայց հաջորդ խաղը էլի պարտվեցի, վեր թռա տեղիցս ու ասացի:

— Դե վե՛րջ տուր, հայրիկ, թե չէ կխփեմ:

Նա հասկացավ, որ լուրջ կատաղել եմ, քահ-քահ ծիծաղեց, ես էլ բռունցքներս թափ տալով վրա հասա, ու մենք կովի բռնվեցինք, և հանկարծ ես նրան գլորեցի դետին, ուղղակի մեջքը մեխեցի հատակին, իսկ նա քրքջում էր, որ ես էնպես էի գազազել, որ քիչ էր մնում արդեն լացս դնեի, հետո մեկ էլ պարզվեց՝ իրոք լաց եմ լինում, որովհետև ես պարտվելուն համաձայն չեմ. նույնիսկ հարազատ հորս պարտվել չեմ ուզում:

### ՍՆՆՅԱԿԸ

Օրերը մեկ առ մեկ անցնում էին հորս տանը, ու ահա մի օր, դիկտեմբերի վերջին, մայրիկն իր մեքենայով եկավ մեզ տեսնելու ու քրոջս հետը բերեց:

Մենք չորսս էլ երկար նայում էինք իրար, լսում մեկմեկու, հետո տարբեր բաներ խաղացինք ու զվարճացանք, միասին ճաշեցինք, իսկ հետո հայրիկն ու մայրիկը վեճի մեջ մտան:

Երբ էլ որ նրանք միմյանց հանդիպեն, վեճի են մտնում, մերթ քաղաքավարի ու հանդիստ, մերթ բարձրաձայն ու զայրալից, բայց շատ շուտով իրենց հավաքում են և էլի քաղաքավարի խոսում:

Մենդյան տոնի նախօրյակին ես ու հայրս գնացինք մորս տուն:

Ես կանգնել էի իմ սենյակում ու մահճակալիս էի նայում, մեկ էլ դուռը բացվեց, ներս մտավ մայրիկն ու ասաց.

— Ի՛նձ լսիր, թե կուզես նորից քո սենյակում քնել, քո մահճակալին, խնդրեմ, ճանապարհը բաց է, ուզածդ ժամանակ: Դա քեզնից է կախված, և մտքովդ շանցնի, որ էլ չես կարող վերադառնալ ու պետք է անպայման հորդ մոտ մնաս: Ուզո՞ւմ ես գիշերը քո լավ, սիրելի մահճակալին քնել:

Ի՞նչ իմանամ, թե նա ոնց գլխի ընկավ, բայց ես ճիշտ որ ուզում էի, ի սրտե ուզում մահճակալիս քնել, թեպետ շգիտեմ ինչու ասացի.

— Չէ, չէ, մայրիկ: Ես հայրիկի տանը կքնեմ, էնտեղի մահճակալիս:

— Է՛հ, կամքը քոնն է, միայն թե շատ հիմար բան կստացվեր, եթե իսկապես ուզենայիր քնել քո մահճակալին ու ամաչեիր ասել:

— Բա հայրի՞կը որտեղ կքնի:

— Ես կարող եմ նրա համար անկողին զցել հենց քո սենյակում, բազմոցին: Միևնույն է, մինչև կեսգիշեր նստելու հնք, իսկ առավոտյան

շուտ ենք արժնանալու, պիտի բոլորիս նվերները բացենք, էնպես որ եթե դու և հայրդ ուզեք քո սենյակում քնել, ինչ խոսք, ես ուրախ կլինեմ, և պարզ է, քույրդ էլ: Դե ասա, ուզո՞ւմ ես:

— Իհարկե, — ասացի, — բայց մի պայմանով, որ հայրիկն էլ ուզի: Մայրս դրա մասին խոսեց հորս հետ, իսկ քույրս, որ նրանց լսում էր, ասաց. «Լա՛վ էլի, հայրիկ, մնա», և հայրս համաձայնեց:

— Հաճույքով, եթե նեղութուն չ' լինի:

— Ի՞նչ իմաստ ունի նորից ճամփա կտրել, իսկ վաղ առավոտյան հետ գալ, — ասաց մայրս — Մենք Մենդյան տոնի գալուստը կնշենք, առավոտյան շուտ վեր կկենանք ու տոնածառի մոտ մեր նվերները կբացենք, հետո հնգկահալը կգնենք ջեռոցն ու ժամը վեցին տոնական ճաշի կնւտենք: Իսկ ուշ երեկոյան արդեն կարող եք գնալ: Լա՛վ:

— Հոյսեկա պ է, — ասաց հայրս:

Ես հուսեցայ, որ իմ մահճակալին եմ քնելու, և տրամադրությունս բարձրացավ: Երևի էդպես է. եթե տարիներ շարունակ քո սենյակն ես ու՛ եցել ու սեփական մահճակալդ, մի օր կհիշես քո սենյակն ու մահճակալը և վաղ թե ուշ անպայման կուզես վերադառնալ:

### ՄԱՌԸ

Մայրիկը կոնյակով էգնոգ<sup>1</sup> պատրաստեց հորս ու իր համար, իսկ ինձ ու քրոջս համար՝ սովորական էգնոգ: Հետո՝ ավելի ուշ, նա մեզ ընթրիք տվեց. սառը ճուրձ ու սուսեցրած սպիտակ գինի, խոշոր հատեկներով տարեկանի թ.սրմ ճաց, կարագ, մանանեխ ու թթու դրած վարո նգ, մանր ձկների պահածոնեք ու խոզապուխտ, մսի պաշտետներ ու մայրսնեղ Դա իսկական խնջույք էր, Մենդյան տոնի հիանալի խնջույք: Հայրս ուտում էր, խմում, կատակում ու երգում: Իսկ պիանոյան դադար չէր տալիս, ծննդյան երգեր էր անվերջ նվագում, քույրս էլ մի գլուխ ինձ հարցուփորձ էր անում իմ ու հայրիկի համատեղ կյանքի, Մալիբուլի դպրոցի մասին, մերթ սրա, մերթ նրա, մերթ ուրիշ բանի մասին:

Հրաշալի երեկո էր, մի հաճույքին մյուսն էր փոխարինում, և ոչ ոք բարկացած չէր ոչ մեկի վրա, ու բոլորը քաղցած էին ու բոլորն՝ ուրախ, որ սեղանին ինչքան ասես համեղ ուտելիքներ կան: Հետո, երբ

<sup>1</sup> Eggnog (էգնոգ) — ըմպելիք. գինուն, երբեմն էլ կոնյակին կամ ոսմին ավելացվում են հարած գեղնուց, շաքարավազ և կաթ:

ժամը տասներկուսն անցավ, մենք բարի գիշեր մազթեցինք իրար, և ես ու հայրս եկանք իմ սենյակը, ես նստեցի մահճակալիս, իսկ հայրիկը նստեց բազմոցին, որի վրա պիտի ջներ ու ասաց.

- Ինչ լավ է էստեղ:
- Իհարկե լավ է, — ասացի:

Ես շուտ-շուտ հանվեցի, մտա անկողնին ու երանության մեջ էի, ի սրտե ուրախ, որ նորից իմ անկողնում եմ: Հայրիկն էլ պառկեց, մենք մի քիչ խոսեցինք, իսկ հետո քունս մխանգամից տարավ, ու ես պինդ քնեցի և երբ արթնացա, տեսնեմ առավոտ է:

Հայրս արդեն վեր էր կացել ու հագնվել: Մայրիկն էլ էր արդեն վեր կացել, բայց դեռ խալաթով էր: Վերջինը քույրս գուրս խոավ իր սենյակից, էլի խալաթով, մայրիկի նման, և մենք երգուսով սկսեցինք մեկ առ մեկ մեր նվերները բացել:

Ես մայրիկից մի մանրագիտակ նվեր ստացա ու անոթներ՝ մեջ դրված ամենատարբեր բաներ՝ մանրագիտակով նայելու համար, հայրիկից էլ՝ ֆուտբոլիստի սաղավարտ ու գնդակ, հետո մայրիկից՝ տասնմեկ շեղբանոց, շվեյցարական ծալվի դանակ, իսկ քույրս կարմիր ու սպիտակ զուլեքով մի շապիկ նվիրեց ինձ, գինը՝ մեկ դոլար. նա հենց ինքն էր փողը հավաքել: Ես մի գույգ կոշիկ էլ ստացա և ուրիշ տեսակ-տեսակ նվերներ, բոլորը՝ մայրիկից ու հայրիկից. Պարզ է, նրանք էլ նվերներ ստացան՝ իրարից, ինձնից ու իմ քրոջից: Ես քրոջս տիկնիկ նվիրեցի, որը համարյա մեկ դոլար արժեք: Տիկնիկը շատ դուր եկավ քույրիկիս, ու նա պինդ-պինդ փաթաթվեց ինձ:

Մտքով օրը մարդիկ էին գալիս, էգնող խմում ու զնում: Հետո ես ու հայրս նոր գնդակով մի քիչ ֆուտբոլ խաղացինք, և վերջապես՝ վեցի մոտերքը, հնդկահավը արդեն պատրաստ էր: Հայրս կտրտեց, մենք սեղան նստեցինք և կուշտ ու պինդ կերանք, որովհետև Ծննդյան տոնին միշտ հաճելի է կուշտ ու պինդ ուտել:

Ճաշից հետո շորսս միասին երգում էինք, զրուցում, իսկ վերջում հայրս ասաց մայրիկին.

— Հա՛, սրանից լավ Ծննդյան տոնակատարություն չէր էլ կարող լինել: Սրտանց շնորհակալ եմ:

Մենք հրաժեշտ տվինք մորս ու քույրիկիս, նստեցինք մեր հին, կարմիր ֆուրդն ու վերադարձանք աուն՝ ծովափի մեր տունը, և տեղ հասանք թե չէ, իսկույն պառկեցինք քնելու:

Այ թե որն էր Ծննդյան տոնը, ու ես երբեք դա չեմ մոռանա, միշտ կհիշեմ, ամբողջ կյանքում:

Ծննդյան հաջորդ օրը արդեն ուրիշ էր, նախորդի համեմատ՝ բոլորովին տարրեր, որովհետև Ծննդից հետո էր: Սովորաբար մարդ այնքան սպասելիքներ ունի Ծննդյան տոնից, որ երբ այն վերջանում է, ակամա զարմանում էս: Ի՞նչ էիր սպասել: Ու ի՞նչ ստացար: Դե, ամեն տարվա պես, երևի ես ինչ-որ սպասելիք ունեի, բայց թե որն էր իմ սպասելիքը, ճիշտն ասած, չգիտեմ. պարզապես ինչ-որ մի բան էի սպասում ու վերջ: Միգուցե նվե՞ր: Երկո՞ւ: Նվեր: Տա՞սը: Հաղարավո՞ր: Հաստատ չգիտեմ, բայց ինչքան էլ մտածում եմ, ուզածս բնավ նվերները չէին: Իմ ուզածն ուրիշ էր: Իսկ ի՞նչ ստացա: Նվերներ: Ու ինձ դուր եկավ ստացածս: Հիանալի նվերներ էին: Բայց ախր սրտիս խորքում ես ուրիշ բան էի ուզում: Ի՞նչ էր իմ ուզածը. երևի թե որ շուտ մեծանամ ու ինքնուրույն դառնամ, բայց դրա համար, դրո՞ղը տանի, տարիներ են պետք: Հենց միանգամից՝ մի ակնթարթում, չեն մեծանում ու ինքնուրույն դառնում, վերջացավ գնաց: Իմ կարծիքով, այ թե ինչու էր Ծննդյան հաջորդ օրը նախորդից տարրեր:

Ամբողջ ցերեկը հորս բարեկամները գալիս էին, գնում, որ մի բաժակ խմեն նրա հետ: Հայրիկը սեղանին երկու շիշ, սառույց ու տարրեր տեսակ բաժակներ էր դրել, և մի քառասուն հոգի եկան ու գնացին. տղամարդիկ, կանայք ու երեխաներ: Նրանք երկար չէին մնում, մի քիչ նստում էին ու գնում: Ամեն մեկն էլ կարծես նույն զգացումն ունեի, ինչ ես, որովհետև արդեն Ծննդյան հաջորդ օրն էր: Ու այդպես ամեն մեկը հեզնում էր ինքն իրեն, ծաղրում իր հոգսերը, ամուսիններին, կատակի տալով՝ կանանց էին ձեռ առնում, կանայք՝ ամուսիններին, իսկ նրանց տղաներն ու աղջիկները ծիծաղում էին ստացած նվերների վրա, և բոլորը հոգնած ու ջարդված էին երևում, ամեն մեկն էլ աշխատում էր հնարավորին շափ շուտ հոգին ազատել Ծննդյան տոնից, ասես եղած-չեղածը մի անխուսափելի գլխացավանք էր կամ ինչ-որ թյուրիմացություն:

Իջիկնադեմին, վերջապես, ոչ մի հյուր չմնաց, ու ես ասացի.

— Հայրիկ, դու ուրա՞խ ես, որ ծնունդը վերջացավ:

— Այո, ուրախ եմ:

— Բայց Ծննդյան տոնը մի տեսակ է, չէ՞:

— Ծննդյան տոնը հրաշալի բան է: Բոլոր տխուր ու անմիտ բաներից սա հավանաբար ամենահրաշալիին է, թեև ինչ խոսք, տխուր է ու

անմիտ: Մարդկության մեծ մասը դեռ երկար ժամանակ պրծում չի ունե-  
նա Մենդյան տոնից:

— Բա էլ ինչո՞ւ ես ասում, թե հրաշալի է:

— Ասում եմ, էլի. հենց էնպես, ձևի համար: Սա աշխարհի ամենա-  
անհեթեթ տոնն է:

— Քրիստոսի ծննդյան օ՞րը:

— Այո, ով էլ որ նա լինի, գրողը տանի, և թե իհարկե, ճիշտը խո-  
սենք, իսկ ես բոլորովին տրամադրություն չունեմ դրա վրա գլուխ ցա-  
վեցնելու:

— Ինչո՞ւ:

— Որովհետև ամբողջ օրը խմել էմ և հետո՝ ճիշտն ասելուց ոչինչ  
չի փոխվի:

— Բայց ո՞րն է ճիշտը:

— Դե, ով էլ որ նա լինի, իր ծննդյան օրը չի ծնվել, հասկանո՞ւմ  
ես: Մնվել է ավելի ուշ, և մենք ամեն տարի նրա երկրորդ ծնունդն ենք  
ս.ոնում, ու ես արդեն մի քիչ ձանձրացել եմ դրանից:

— Դու լամա՞ծ ես:

— Այո, բայց ոչ հարբեցողների նման, որոնց տեսել ես կինոնե-  
րում: Ուղղակի ստիպված էի մի քանի բաժակ խմել, որովհետև  
այսօր Մենդյան հաջորդ օրն է, ու շարունակ մարդիկ են դալիս: Դու տե-  
սար եկածներին: Հենց միայն նրանց տեսքին նայելիս՝ իմ մեջ խմելու  
ցանկություն է առաջանում: Բոլորը կորած մարդիկ են և վերջ. բայց  
ես էլ եմ նրանց պես, ու եթե ոչ դու, ոչ նրանց երեխաները դեռ կորած  
չեք, միևնույն է, շատ շուտով մեզ նման կլինեք:

— Ինչ կա որ, հայրիկ, թեկուզև լինենք:

Հայրս նորից մի քիչ վիսկի լցրեց, փոքրիկ բաժակը վերցրեց սե-  
ղանից, մի շնչով դատարկեց ու ասաց.

— Ահա և վերջ Մենդյան տոնին: Վերջ իմ ապրումներին. էլ չեմ  
դայրանում ու ապշում ծանոթներիս վրա, ինքս ինձ վրա, քո, մայրիկիդ  
ու քրոջդ վրա: Հերիք է: Մնունդը եկավ ու անցավ: Կա՞մ պրծանք:  
Բարության բաժակը վերադառնում է պահարանի իր մշտական տեղը,  
իսկ ես վերադառնում եմ մշտական զբաղմունքիս, ավելի շուտ՝ իմ  
մշտական զբաղվածությունը, որ ժամանակ չի թողնում տրտմելու, թե  
ինչու կյանքս էսպես ահավոր ձախողվեց:

Նա շշերն էլի պահարանը դրեց ու հետո ասաց.

— Դե լավ, տղաս, արի գնանք ծովափ՝ ֆուտբոլ խաղալու:

Ես գնդակը վերցրի, և մենք հետնասանդուղքով շտապեցինք ներքև:

Երբ վազվզում էինք ծովափին ու գնդակն իրար գցում, երկու ուսակտիվ ինքնաթիռ, որ ժամում հինդ, թե վեց հարյուր մղոն են կտրում, ջրի վրայից վզզալով անցան, իսկ քիչ հետո երկու ուղղաթիռ երևացին. սրանք դանդաղ ու ցածր էին թռչում, ծովեզրին շատ մոտ, էնպես որ ուղղաթիռների մեջ նստածներին տեսանք: Ջահել տղերք էին: Ես նրանց ձեռքով արի, նրանք էլ ի պատասխան՝ ի՛նձ ձեռքով արին, իսկ տղերքից մեկը գլուխը հանեց ուղղաթիռից ու թևերը սլարզեց, թե իբր՝ գնդակն ինձ էլ գցեք:

Ուղղաթիռները առափնյա պահակախմբինն են: Նրանք շրջում են ծովափին և կարգ ու կանոնը հսկում, իսկ ուսակտիվ ինքնաթիռները Փոյնթ Մուդուտի ռազմածովային կայանից են գալիս:

Հետո մի ամբողջ էլ ամ ճայեր թռան եկան ու մեր գլխավերևում պտույտներ էին տալիս:

— Ի՞նչ են ուզում,— ասացի ես:

— Մեր գնդակը,— ասաց հայրս:— Կարծում են, թե ուտելիք է:

Ճայերից մի քանիսը բալանիան մոտեցան, մի երկուսն էլ իջան ու աչքները մեզնից շփին կտրում, կանոնած սպասում էին, ասես մենք ուր որ է գնդակը կտոր-կտոր էինք անելու և շորաքած հացի պատանների պես շարտեհներ իրենց:

— Ուտելիք, ուտելիք, ուտելիք,— ասացի:— Կարծես թե կյանքում ուրիշ բան չկա:

— Ես ընթերելու ախորժակ չունեմ,— ասաց հայրս:— Արի գնանք կինո, համաձա՞յն ես: Հենց որ վերջանա, հացով բիֆշտեքս կուտես: Հետո կգանք տուն ու անկողին կմտնենք և Ծննդյան տոնից էլ կպրծենք, տոնական եռուզեռից էլ:

— Իսկ ի՞նչ կնայենք:

— Ինչ որ պատահի: Գնացինք:

Մենք վազելով տուն բարձրացանք ու մեր վերարկուները վերցրինք:

Սանտա Մոնիկայի կինոթատրոններում բնորոշյունը մեծ չէր, դրա համար էլ տվինք-առանք ու որոշեցինք գնալ «Աննապուրնա» անունով մի ֆիլմ նայելու. սա սլատմում էր, թե ինչպես են Ասիայում, Հնդկաստանից դեպի հյուսիս, նեպալ կոչվող երկրում վիթխարի լեռք ելնում, Հիմալայան լեռնաշղթայի ամենաբարձր գագաթներից մեկը: Իրական պատմություն էր, ոչ թե հնարովի, շնայած հաճախ հնարովի պատմություններն էլ են իրականի նման:

Հայրս, որ «նյու Յորք թայմզ» է ստանում, ասաց ֆիլմի մասին հողված է կարդացել թերթի մի համարում, և հողվածագրի կարծիքով կինոնկարը գովեստի է արժանի: Բայց երբ նեպալի բնակիչների, կամ ոնց որ բուլոն են նրանց անվանում՝ շերտերի հասցեին ֆիլմի հերոսը էնպես արտահայտվեց, թե իբր նրանք ստորին էակներ են. հայրս կատաղեց ու ասաց.

— Մի տես, էլի սկսեցին լեզուները շաղ տալ:

Շերտերը թխամաշկ էին. ֆրանսիացի լեռնադնացների մի սրշավախումբ նրանց վարձել էր, որ իր բեռները բարձրացնեն լեռը: Շերտերը բարձրահասակ չէին ու միշտ բոբիկ էին ման գալիս: Նրանք ծանր բեռներ էին շալակած տանում, դեռ բեռների մի մասն էլ փոկերով ամրացված էր գլխներին: Երբ ֆրանսիացի լեռնագագացները ուժասպառ եղան, և ցուրտը նրանց ձեռքերի ու ոտքերի մատները տարավ, շերտերը սրանց կյանքը փրկեցին, լեռան բարձունքից իջեցրին ներքև, բերին գյուղ՝ մարդկանց մոտ, և բժիշկը ստիպված մի քանի հոգու մատները կտրեց:

Հինգ շաբաթ շարունակ,— կարծեմ էդպես ասացին,— ասիացի կարճլիկ, թխամաշկ ու ոտարորիկ լեռնականները հիվանդ ֆրանսիացիներին շալակներն առած՝ բալլ առ բալլ իջեցրալ էի ցած, սառցի ու քարերի, ձյան ու հողմի, վարար գետերի միջով: Բայց ամենալավ բանը ֆիլմում բարձրաբերձ լեռների գոգին ծվարած փոքրիկ գյուղն էր իր բնակիչներով, որոնց կացարանները սարալանջերին կառուցվող մեծ տների պես էին: Ես պատկերացրի, թե նրանց հետ եմ ապրում, լեռնային գյուղում. ի՞նչ հոյակապ էր ապրել նրանց հետ, ի՞նչ բարձր էի ու հեռու, խաղաղ ու գեղեցիկ մի տեղ, բայց շուտով զգացի՝ չէ, տխրում եմ կարոտից և ուրախացա, որ կինոյում եմ, Սանտա Մոնիկայում, Մալիբուի մեր ծովափնյա տնից ընդամենը տասնհինգ մղսնի վրա:

### ԱՐՄԱՏԸ

Կինոյից հետո մենք մտանք սրճարան ու նստեցինք կանգնակի՞ մոտ. ես հացով բիֆշտեքս կերա, շոկոլադի ըմպելիք խմեցի, իսկ հայրս՝ երկու բաժակ սև սուրճ, և սեսք ճամփա ընկանք տուն:

- է՛հ, սա էլ Մենդյան տոնը,— ասաց հայրս:
- Բա հիմա՞ ինչ է լինելու, հայրիկ:
- Նոր տարի:

— Հետո՞:

— Հետո էլ՝ օրը-օրին:

— Լավ է,— ասացի ես,— հա՛-հա՛-հա՛:

Նոր տարի. տեսնես ի՞նչ տարի կլինի: Դե պարզ է, նոր տարում տասնմեկս կլրանա, բայց ինչքա՞ն է տասնմեկը որ: Շատ քիչ: Թե իմ ապրած ամեն տարվա համար մի դոլար ստանայի, հիմա տաւը դոլար կունենայի, եկող տարի էլ՝ տասնմեկ, իսկ տասնմեկ դոլարով ի՞նչ կարող ես առնել մեր օրերում: Բայց թե ապրածս ամեն օրվա համար մի դոլար ստանայի, արդեն կարգին փող կունենայի, որովհետև տարին բաղկացած է երեք հարյուր վաթսունհինգ օրից, իսկ դա տասով բազմապատկած, կլինի...

— Ինչքա՞ն կլինի, եթե երեք հարյուր վաթսունհինգը բազմապատկենք տասով, հայրիկ:

— Երեք հազար վեց հարյուր հիսուն:

— Պա՛հ:

— Ի՞նչ կա:

— Այ, նոր մտածում էի. թե ապրածս ամեն օրվա համար ինձ մի դոլար տային, ուրեմն երեք հազար վեց հարյուր հիսուն դոլար կունենայի ու ինչ ծախսեր կանեի, հա՛:

— Իրոք, ահագին փող է:

— Հայրիկ, գիտե՞ս իմ կարծիքը որն է. ով աշխարհ է գալիս, պետք է իր ապրած ամեն օրվա համար մի դոլար ստանա, մինչև որ քսանմեկ տարեկան դառնա:

— Ասենք թե, հետո՞:

— Իսկ հետո պետք է օրական նրան տասը դոլար տան:

— Քո տնտեսական փիլիսոփայությունը թերևս հիասքանչ է, բայց ո՞վ կվճարի:

— Նրա հայրը:

— Բայց եթե նրա հայրը ոչինչ էլ չի ստացել իր հորից և ի վիճակի չէ տասը դոլար վաստակել նույնիսկ ի՞ր համար:

— Է՛, ուրեմն ո՞վ կվճարի:

— Ոչ ոք:

— Իսկ նա ո՞նց է փողն ստանալու: Հենց ես, ո՞նց կստանամ:

— Դա արդեն քո գործն է: Ավելի լավ է, ես մտածեմ, թե ինչպես պիտի իմ փողն ստանամ, որ եթե քսանմեկ տարեկանից սկսած՝ օրական տասը դոլարով հաշվենք, քսանհինգ տարում կստացվի... սպասիր, ասեմ... դե, մոտավորապես իննսուն հազար դոլար:



— Պա՛հ: Ու դու կարող ես լրիվ ստանա՞լ:

— Եկող տարի:

— Ո՞նց:

— Գրելով:

— Կոհարարական դի՞մքդ:

— Թեկուզ հետն էլ մի ուրիշ բան:

— Օրինակ՝ ի՞նչ:

— Դե, դուցե մի քանի փոքր պատմվածք, մի մեծ պատմվածք, վի-  
ւյակ կամ վեպ, մեծ կամ փոքր պիես: Ո՞վ իմանա: Երբ էլ ասես  
մի բան կգրեմ:

— Իննսո՞ւն հազար դոլար, հայրիկ: Մենք կհարստանա՞նք:

— Ամեն դեպքում, և՛ ես, և՛ դու պետք է վաստակենք մեր փողը,  
որովհետև իմ հայրը հնարավորութիւն չունի ինձ օրական մի դոլար  
տալու, մինչև որ քսանմեկ տարիս յրանար, ինչ մնաց, թե դրանից հետո  
օրական տասը դոլար տար, ու քո հայրն էլ համարյա նույնքան աղքատ  
է, որքան և իմն էր:

— Իսկ ի՞նչ մարդ էր նա, հայրիկ:

— Հիանալի, բայց շուտ մահացավ, ընդամենը երեսունյոթ տարե-  
կանում: Դե, մեռած մարդուց հօ շե՞ս պահանջի, թե՛ օրական ինձ մի  
դոլար տուր:

— Իհարկե, շատ աղետոս, բր հայրդ շուտ է մահացել:

— Ինչ խոսք:

— Բայց միգուցե նա չի՞ մահացել ու ապրում է ինչ-որ հեռու տեղ:  
մեկ էլ տեսար, մի օր տուն եկավ:

— Խնդրեմ, ևս մի արտառոց միտք: Այսօր գլուխդ լիքն է դրանցով:

— Ինչ է, սաւաժս անհավանական է:

— Սղասիր մասձեմ, նոր պատասխան տամ:

Սի՛նք մոտ մի մղոն լուռումունջ անցանք, ու ես հարցրի.

— Հը՛, մտածեցի՞ր հայրիկ:

— Ինչի՞ մասին:

— Հորդ: Այ, դու իմ հայրն ևս ու մեռած չես, կաս: Ես անընդհատ  
սեւնում եմ քեզ, իսկ քո հայրը չիա, մահացել է, և դրանից հետո դու  
չես տեսել նրան, երբևք չես տեսել, բայց հնարավո՞ր է, որ վերջին  
հաշիվով, նա մեռած չլինի, ու դու նորից տեսնես նրան:

— Այո, ահա թե ինչի մասին է խոսքը, — ասաց հայրս: — Դե լսիր.  
չհալած ևս մոտ երեք տարեկան էի, երբ քառասուներկու տարի առաջ  
հայրս մահացավ, բայց նրա մասին շատ բան չեմ հիշում: Երևի քանի՛-

քանի անգամ տեսել եմ նրան, եթե նկատի առնենք, որ դու էլ մինչև երեք տարեկանդ ինձ տեսել ես քանի-քանի անգամ: Հիշում եմ՝ մի օր հայրս նստեց սայլը, մտրակեց ձիուն ու ասաց՝ «գնացի՛նք», սայլը տեղից շարժվեց, բայց ինչ եղավ հետո, ոչինչ չեմ հիշում, ախր ես սայլի հետևն էի նստած ու քնով ընկա: Միայն սա է մնացել մտքիս մեջ: Հետագայում արդեն իմացա, որ հայրս մահացել է, իսկ երբ նման բան ես իմանում, միշտ հավատում ես: Բայց թող մի քիչ էլ մտածեմ, հա՞:

— Լավ, մտածիր, որովհետև ես ուզում եմ դա հասկանալ:

— Է՛հ,— ասաց հայրս վերջապես,— եզրակացությունը կարծես թե մեկն է: Նա իհարկե մահացել է, բայց մեր տան պատին շարունակ կախված էր նրա նկարը: Դու գիտես, թե որ նկարի հետ եմ. վեց տարեկան էիր, երբ քեզ ցույց տվի, և այդ օրվանից նկարը սենյակիդ պատին է, սեղանի վերևում:

— Գիտեմ: Բայց միզուցի նա դեռ ապրո՞ւմ է ինչ-որ տեղ:

— Միզուցի:

— Հետո՞ւ:

— Չէ, շատ մոտիկ:

— Դու տեսե՞լ ես նրան:

— Այո, տեսել եմ: Ամեն անգամ քեզ նայելիս, ըստ էության, հորս եմ տեսնում

— Առանց կատակի՞:

— Ի՞նչ կատակ, մաքուր ճշմարտություն է:

— Բայց իրականում դա հո էդպե՞ս չի:

— Իրականում էդպես չի, ոչ, բայց ես կարծում եմ, որ դու միտքս հասկացար:

— Հասկացա, հայրիկ:

## ՃՅՈՒՂԸ

Մի առավոտ հայրս ասաց.

— Ահա և վրա հասավ տարվա վերջին օրը: Սա քեզ՝ ոստիկանի սուլիչ, իսկ ինձ՝ զինվորական փող: Տարին կավարտվի կեսգիշերին, տասնյոթ ժամից, բայց արի զվարճության համար տարեվերջը հենց հիմա ազդարարենք. դու սուլիչդ կփչես, ես՝ իմ փողը:

Մենք էդպես էլ արեցինք:

— Շնորհավոր նոր տարին,— ասաց հայրս:

— Շնորհավոր,— ասացի ես:

Մյուս առավոտ, երբ վեր կացանք, արդեն Նոր տարվա առաջին օրն էր:

— Ես ոչ մի տարբերութիւն էլ չեմ տեսնում:

— Դե, ըստ երևույթին, չկա, որ տեսնես,— ասաց հայրիկը:— Բայց քանի որ իսկապես Նոր տարվա առաջին օրն է, վատ չէր լինի, եթե մըտնելիք լողարան և մի լավ մաքրվելիք:

Ես գնացի լողասենյակ ու ցնցուղի տակ ցայվելու փոխարեն կարգին լողացա: Դուրս եկա ջրից, ինձ շորացրի ու վերադարձա սենյակ, իսկ հայրիկը, ինչքան շոր բռներ իր տանը, փռել էր մահճակալիս:

— Ուզածդ ընտրիր,— ասաց նա խոհանոցից:

Ես հազնվեցի, մազերս սանրեցի ու մտա խոհանոց:

Հայրիկը մի հայացք գցեց ինձ վրա ու ասաց.

— Օհո՛, ո՞վ է տեսել էսպէս կոկիկ տղա: Ճիշտ ժամանակին էլ եկար:

Սե լանը պատրաստ էր, ուտելիքը՝ վրան, հայրս ամեն ինչ հերթով շարել էր. տաք-տաք բլիթներ, օշարակ, կակաո, սուրճ, ծիրանի պահածո, եփած ձվեր, խոզապուխտ, կարագ, պասիր, դոնդողակ ու կլոր-կլոր կտրտած լոլիկ:

Մենք նստեցինք, և կերուխումն սկսվեց. ես անընդհատ ուտում էի, ուտում, որովհետև լողանալը շատ է ախորժակդ բացում:

— Սրանից լավ նախաճաշ երբեք չեմ կերել:

— Դե ուրեմն շարունակի՞ր ուտել: Ես ջեռոցում էլի բլիթներ ունեմ: Դեռ մի քանիսն էլ հաճույքով կուտակի:

— Իսկ օշարակը որտեղից:

— Ինքս եմ պս տրաստել: Ամբողջ գրաֆիներ երեք սենթ նստեց: Ամեն մանրուքի վրա փող ենք խնայում:

— Ինչ համո՞վ է, մանավանդ խոզապուխտի հետ:

— Ես մտածեցի, որ Նոր տարվա առաջին օրը մեր նախաճաշը պետք է փառահեղ լինի:

— Հենց էդպես էլ կա:

— Մարդ ընդամենը մի անգամ է ապրում, ինչպես ասում են:

— Մի անգամն էլ է հերիք:

— Չէի՞ր ուզենա երկու անգամ ապրել:

— Չգիտեմ, հայրիկ: Օրինակ՝ դու կուզեի՞ր:

— Վստահ չեմ: Մեկ-մեկ մտածում եմ, թե երանի ամբողջ կյանքս

վերստին ապրելի, մեկ-մեկ էլ փառք եմ տալիս ասածուն, որ կյանքիս մեծ մասը արդեն ապրել եմ:

— Բայց ուտելը հաճելի բան է: Հատկապես նա խաճաշին:

— Իհարկե: Առանց ուտելու և առանց քնելու կյանք չկա:

— Ա՛յ քեզ ուրախություն,— ասացի ես:

— Այո:

— Ես կյանքի, ապրելու մասին եմ ասում:

— Գիտեմ,— ասաց հայրս:— Իրոք ուրախություն է, բայց մարդու կյանքում ոչ մի օր չկա, որ ուրախությանը գոնե մի քիչ ցավ, դառնություն ու ափսոսանք չխառնվի:

— Թեկուղ և խառնվի: Ի՞նչ վնաս կա մի քիչ ցավից, դառնությունից ու ափսոսանքից: Արի նստենք մեր մեքենան, դնանք բլուրներն ու թափառենք էնտեղ:

— Կա՛վ,— ասաց հայրիկը:— Այս աշխարհը քոնն է, տղաս, դու հո գիտես:

### ՊՏՈՒՂԸ

Մենք թափառում էինք Մալիբուի բարձրիկ բլուրներում, ու դա հույակապ էր: Կարծես ներկա լինեինք աշխարհի սկզբին, երբ բոլոր կենդանիները երկրի երեսին դեռ թաքնված են զաղտնի տեղերում: Դու չես տեսնում նրանց, բայց գիտես, որ մոտերքում են, կողքիդ: Գիտես, որ նրանց աչքերը բաց են: Գիտես, որ նրանք հետևում են քեզ ու ինչ-որ բան են մտածում քո մասին: Դու զգում ես դա: Կենդանիները երբեք չեն մոտենում մարդուն, նրանք պահ են մտնում ու թաքստոցից ուշադիր նայում: Կենդանիները չեն ուզում ճանաչել մարդուն: Միայն ուղում են, որ մարդիկ իրենց հանգիստ թողնեն:

— Դու վիշապի հետ կովե՞լ ես, հայրիկ:

— Փոքր ժամանակ շատ արյունահեղ կռիվներ եմ արել այդ հրեշի հետ:

— Ի՞նչ վիշապների հետ ես կռիվ արել:

— Ամեն տեսակի: Ե՛վ հրաշունչ վիշապների, և՛ թևավոր:

— Իսկ կա՞ն վիշապներ, որ և՛ հրաշունչ են, և՛ թևավոր:

— Ոչ,— ասաց հայրս:— Ուրախությամբ պիտի խոստովանեմ, որ նման վիշապի երբեք չեմ հանդիպել:

— Ես հանդիպել եմ: Կովի օրը Սամսոնի՛ ուժն անաւ: Բոնեցի վիշապի երախից ու երկու կես արի, իսկ նա, կատաղությամբ լցված՝ դեռ գալարվում էր ու իրեն գետնով տալիս:

— Հիանալի է:

— Երկուսս էլ ստեր ենք պատմում, շէ՞, հայրիկ:

— Դե պարզ է, ինչ խոսք:

— Երանի մի հսկա, աներևակայելի վիշապ հենց հիմա դուրս գար ու հետս կովի բռնվեր. ես տեղնուտեղը մի երկու հնարք կրանեցնէի: Վիշապները խորամանկորեն են կովում, ինքդ էլ գիտես, բայց ես ծանոթ եմ նրանց հնարքներին, իսկ իմ հնարքներին նրանք ծանոթ չեն:

— Որո՞նք են քո հնարքները:

— Ճարպկությունը: Ես աշխարհի ամենամարելիլ արարածն եմ: Ճարպկությունն ու ուժը: Ես ամենաուժեղն եմ բոլոր նրանցից, ովքեր ձեռքերով երբևէ բռնել են վայրի գաղանին ու պատառ-պատառ արել:

— Ապրես,— ասաց հայրս:

Երբ վերագարձանք տուն, հեռախոսը զանգում էր: Ներս մտանք, հայրս լսափողը վերցրեց ու քանի դեռ լսում էր լարի մյուս ծայրից եկող ձայնը, ես հետևում էի նրա դեմքի արտահայտությանը: Նա շատ խոսքեր ասաց շատ բաների մասին, իսկ հետո ցած դրեց լսափողը, ու ես հարցրի.

— Ո՞վ էր զանգողը:

— Նյու Յորքից էին զանգում:

— Ու ի՞նչ են ուզում:

— Մեկը կա՝ ուզում է պիես գրեմ:

— Ինչի՞ համար:

— Որ բեմադրի ու փող աշխատի:

— Գրելո՞ւ ես:

— Եթե հազար դոլար ուղարկի:

— Իսկ նա կուղարկի՞:

— Ասաց՝ կուղարկի, բայց ո՞վ իմանա:

— Ինչո՞ւ է նա ուզում, որ պիեսը գո՛ւ գրես:

— Ուզում է ե՛ս գրեմ, որովհետև իր ասելով, ինձ համարում է մեծ գրող, բայց ես գիտեմ, որ պատճառը բոլորովին էլ դա չէ:

— Բա ո՞րն է:

— Երևի նա ուղղակի որոշել է, թե ես կհամաձայնեմ իր հետ գոր-

1 Սամսոն—Աստվածաշնչի հերոսներից. գերբնական ուժի տեր դյուցազուն, որ անդեն ձեռքով պատառ-պատառ է անում իր ճանապարհը փակած առյուծին:

ծակցել, և ինչպես լսեցիր, ես իրոք դեմ չեմ, եթե նա հազար դուլար կանխավճար տա ու պայմանագիր կնքի, որն առնվազն ինձ նույնքան ձեռնտու լինի, որքան հենց իրեն:

— Հազար դուլարը ահագին փող է:

— Ինձ ու քեզ համար՝ այո, բայց թատյոնի աշխարհում դա համարվում է մանրուք:

— Մանրուք է, թե փշրունք, ի՞նչ կարծիքի ես, կուղարկի՞:

— Հնարավոր է, որ ուղարկի: Ներկա դրությամբ՝ հնարավոր է: Չայնից զգացվում էր՝ հուսահատ վիճակում է: Պիեսը շատ է անհրաժեշտ նրան: Բայց եթե նույնիսկ հազարն ուղարկի, իսկ պայմանագիրը արդար չլինի, ես չեկը հետ կուղարկեմ:

— Գուցե արդար լինի:

— Ես իմ պայմաններն ասացի, բայց նրա պես մարդիկ չեն հիշում, թե ինչ ես ասել, մանավանդ երբ ասածդ իրենց սրտով չէ:

— Եթե նա հազարն ուղարկի, ու պայմանագիրն էլ արդար լինի, մենք կհարստանանք, հայրիկ:

— Չէ, ես պարզապես մի քիչ փող կունենամ ու գոնե որոշ փոքրիկ պարտավորություններ կարող եմ կատարել, ուրիշ ոչինչ:

— Է՛հ, ինչ որ է, հազար դուլարը փող շունենալուց լավ է:

— Շատ ավելի լավ: Ճիշտն ասած, ես ինքս էլ եմ առաջարկից մի փոքր հուզված, քանի որ վաղուց փողի մեծ կարիք եմ զգում:

— Ուրեմն՝ եթե նա փողը ուղարկի, դու պիեսը կգրես, չէ՞:

— Այո:

— Իմ ու քո մասին գրիր, հայրիկ:

— Կգրեմ: Բայց հարցը սա է. նա արդար պայմանագիր կուղարկի՞, թե չէ:

— Գե որ նյու Յորքից էստեղ էր զանգել, հաստատ կուղարկի:

— Չես լմանա: Գնամ մի սրճաման լիքը սուրճ դնեմ ինձ համար ու անելիքս մտմուտմ, որովհետև մեկ էլ տեսար՝ իրոք ուղարկեց:

## ՄԱՐՄԻՆԸ

Հայրս գործի անցավ, մի սրճաման լիքը սուրճ դրեց իր համար, իսկ ես խելքս էի գործի դրել ու մտածում էի «պիես» կոչվածի մասին:

— Նախ՝ ի՞նչ է պիեսը, հայրիկ:

— Շատ ու շատ բաներ: Բայց նաև մի բան, որ մշտական է՝ մարդիկ են հուզմունքի ու հոգսերի մեջ:

— Պիտի անպայման հուզմունքի ու հոգսերի մեջ լինեն:

— Այո, անպայման: Նրանց գոյության ուրիշ ձև չկա: Մարդիկ միշտ էլ հուզմունքի ու հոգսերի մեջ են, միևնույն է՝ իրենց տանը, թե պիեսում:

— Բայց մենք հիմա ոչ մի հոգս չունենք:

— Ինչ-որ առանձնակի հոգս, ճիշտ է, հիմա չունենք: Ոչ մի մանր, անմիջական հոգս, բայց մենք մի մեծ, դասական հոգս ունենք:

— Ի՞նչ հոգս:

— Ապրելու հոգսը, թեև ես չեմ շտապում դրանից աղատվել:

— Ես էլ:

Սուրճը բարձրացավ, արդեն պատրաստ էր, ու հայրս իրեն մի բաժակ լցրեց:

Նա կում-կում խմելով սկսեց քայլել սենյակում ու հարցերիս պատասխանել:

— Հայրիկ, ինչի՞ համար են դրվում պիեսները:

— Գրվում են, որովհետև ամեն մարդ շարունակ ձգտում է լմանալ, թե ինչն է ուրիշներին հուզում, և նրանք ինչ հոգսերով են ապրում: Այ, հենց սա էլ պարզելու համար հարյուրավոր մարդիկ հավաքվում են մեկտեղ ու թատրոնում կողք-կողքի նստում: Հոգսով տարվածները պայծառ լույսի տակ գնում-դալիս են բեմահարթակին, իսկ հանդիսատեսները խավարի մեջ նստած՝ հետևում են նրանց, ու ամեն ոք կարծես առանձնանում է մյուսներից, ամեն ոք իր աթոռով կարծես մեկուսանում և իրեն դնում է մերթ սրա, մերթ նրա, մերթ էլ բոլոր մարդկանց տեղը, ում որ տեսնում է բեմին, պիեսում: Բայց ընդհանրապես, բանի էությունը շատ ավելի պարզ է և միաժամանակ շատ ավելի բարդ, քան ես ասացի:

— Հայրիկ, իսկ ճի՞շտ է, որ մարդ անընդհատ դժգոհ է:

— Իհարկե, անկասկած: Ամբողջ կյանքում մարդ գոնե մի քիչ դժգոհ է ամեն ինչից, նախ և առաջ՝ իր ծնողներից, աշխարհից, իր ժամանակից, երկրից, իր կառավարությունից և վերջապես, նա դրժգոհ է հենց ինքն իրենից, իր անցյալից ու ներկայից, գուցեև նույնիսկ իր զավակներից, բարեկամներից ու սրանց զավակներից: Ինչու է դրժգոհ՞. որովհետև մարդ արարածին ի բնե հատուկ են փնտրելն ու սխալվելը, իսկ հետո՝ սխալը գտնելն ու հիասթափվելը: Բայց չպետք է մոռա-

նանք, որ անգամ սխալը գտնելիս, անգամ դժգոհելիս, նա իրեն լավ է զգում և թեկուղ փոքր-ինչ հպարտ է իրենով:

— Իսկ ճի՞շտ է, որ մարդիկ մի տեսակ մոլոր ու խճճված են:

— Այո, բոլորն էլ մոլոր ու խճճված են և գնալով ավելի ու ավելի են խճճվում:

— Ինչո՞ւ է էդպես:

— Որովհետև մարդ շարունակ նորանոր բաներ է իմանում իր մասին ու ինչքան շատ է իմանում, այնքան ավելի է խճճվում:

— Դու է՞լ ես խճճվել, հայրիկ:

— Այնքան եմ խճճվել, որ խոհարարական գիրք եմ գրում ու հույս ունեմ սրանով և՛ ինձ, և՛ գրքի ընթերցողներին քիչ թե շատ ուղիղ ճանապարհի բերել:

— Բայց դա կստացվի՞ խոհարարական գրքով:

— Դե, խոհարարական գիրքը սննդի մասին է, իսկ սնունդը մարդկային կյանքի հիմքերի հիմքն է: Ըստ իս, եթե ինձ հաջողվի սննդի հարցը կարգավորել, ուրեմն ևս հող կնախապատրաստեմ մյուս բոլոր խնդիրների կարգավորման համար:

— Հայրիկ, սնունդը մնում է սնունդ ու վերջացավ գնաց:

— Ոչ, դա այնքան էլ հասարակ հարց չէ, թեև արտաքուստ հասարակ է թվում: Հենց ի սկզբանե, դեռ ծնվելու օրից մարդ պետք է սննդով ապահովված լինի: Բայց միշտ պարզվում է, որ մեկին շափից ավելի սնունդ է բաժին ընկնում, իսկ մի ուրիշին՝ անհամեմատ քիչ: Հետո պարզվում է, որ մի երկրում սնունդն առատ է, մի այլ երկրում՝ պակաս, իսկ երրորդում՝ գրեթե բոլորովին ուտելիք չկա, և անողոր սով է, որը աստիճանաբար տարածվելով՝ ի վերջո, վերածվում է դժվարին խնդրի: Այդ խնդիրը շուտով այնքան է բարդանում, որ այլևս բերանին ու ստամոքսին վերաբերող մասնակի հարց չէ. սա դուրս է գալիս խոհանոցի ու մառանի սահմաններից և մուտք գործում կրոնի, փիլիսոփայության, իրավունքի, օրինակարգի, քաղաքակրթության ու մշակույթի ոլորտը, մի խոսքով, հենց աչքիդ առաջ կտրուկ թափանցում է այն ամենի մեջ, որ գոյություն ունի մարդու իրական ու երևակայական կյանքում:

— Հա՛-հա՛-հա՛: Հո խոսել չգիտե՞ս, հայրիկ:

— Դու երբեք չես տեսել կարիք ու մերժում: Այ, եթե ես, ասենք՝ ծնվելի Հնդկաստանում ու աղքատ լինելի, գուցե երբեք չիմանայի, թե կուշտ ուտելի ինչ է նշանակում: Եվ դու ինքդ էլ քաղցած



կծնվեիր ու դուցե ամբողջ կյանքում քեզ երբեք չվիճակվեր քաղցր հագեցնել:

— Է՛, հետո՞:

— Հետո էլ՝ սպարդ է, ստիպված կլինեիր ավելի շատ մտածել ուտելու մասին, քան հարկավոր է, ու դա հսկայական փոփոխություններ կառաջացնէր և՛ քո խառնվածքի, և՛ ապրելաձևի մեջ:

— Ուրեմն գրողի ու նրա գրքերի նպատակը ամեն մեկին սնունդ հասցնե՞լն է:

— Նման մի բան, թեև փոքր-ինչ այլ կերպ արտահայտված:

### ՈՍԿՈՐԸ

Հայրս առաջվա պես քայլում էր սենյակում, ու ես էլ մեր կացա, սկսեցի քայլել: Մտածում էի հորս պիեսի մասին, որը պիտի գրեր: Մտածում էի, թե աուսջին հերթին ինչի համար են պիեսները գրվում: Իսկ հետո արդեն, կամա-ակամա, էլի սննդի մասին էի մտածում:

Ի՞նչ է սնունդը: Ինչո՞ւ է սնվելն այդքան կարևոր: Ինչո՞ւ են մարդիկ դրա կարիքն զգում: Օրական երեք-չորս անգամ և դեռ ամեն օր, տարի առ տարի: Ինչո՞ւ են նրանք դրանով ապրում, ոչ թե ուրիշ բանով:

Ավելի լավ չէ՞ր լինի, եթե մարդիկ սննդի կարիք չզգային: Ավելի լավ չէ՞ր լինի, եթե, օրինակ՝ օդով ապրեին: Թող ծովերի կամ լեռների, ամառ ո՞ւրից էի կամ մարգագետինների, խաղողի այգիների կամ մրգաստանների, ցորենի արտերի կամ պարտեզների անուշ օդը շնչեին և մեծանային, ուժ հավաքեին: Կամ չէ՞ր լինի, եթե մարդը էսպես ապրեր:

Իմ կարծիքով, շատ ավելի լավ կլիներ, բայց արի ու տես, որ մարդիկ էսպես չեն ապրում: Նրանք ապրում են մի ուրիշ ձևով. ծնվելու օրից մինչև մեռնելու օրը բոլորն ուտում են, շարունակ ուտում: Ամեն մեկն իր կյանքում հազարավոր ֆունտերով սնունդ է կլանում, տեսակ-տեսակ սնունդ. էլ հաց ու կաթ, էլ միս ու բանջարեղեն, էլ միլիգ ու ընկույզ, էլ պանիր ու ձու, էլ թռչնեղեն ու ձուկ, էլ բրինձ ու բակլա, մի խոսքով, անթիվ-անհամար ուտելիք: Հենց որ պատկերացրի, թե ինչքան ուտելիքներ կան, խկույն հասկացա՝ չէ՛, սնունդը իրոք մեծ բան է: Հինգ-վեց ժամը մեկ միլիոնավոր մարդիկ աշխարհի երեսին ուտելու պահանջ են զգում ու պետք է ինչ-որ տեղից սնունդ հայթայթեն:

— Իսկ եղած սնունդը բոլորին հեղի՞ք է:

— Այո, կարելի է ասել, որ միանգամից հերիք է:

— Դե ուրեմն գործը մի քիչ հեշտանում է, չէ՞:

— Մի քիչ, բայց ոչ լիովին, որովհետև շատերը բավական փող չունեն ըստ պահանջի սնունդ գնելու համար: Կան մարդիկ, որ անկարող են այդքան վաստակել, և դրանով էլ խնդիրն ավելի է բարդանում:

— Մենք դեռ խոսում ենք ջո պիեսի մասի՞ն:

— Այո, պիեսի: Մենք քննարկում ենք ուղածդ պիեսի ելակետային նյութի կարևորագույն մասը: Այսինքն՝ խոսում ենք ամեն մի մարդու, աշխարհում ապրող ամեն մարդ անհատի էական պահանջմունքների մասին: Իսկ էական պահանջմունքներից առավել էականը սնունդն է:

— Հետո՞, մյուս էական պահանջմունքները որն է:

— Օրիւնք: Ամեն մարդու մի տեղ է պետք, որ գլուխը ցած զնի ու քնի:

— Իսկ մարդը է՞լ ինչ պահանջմունք ունի:

— Աշխատանքը: Մնունդ ու օթևան ունեցող մարդուն անհրաժեշտ է նաև աշխատանք ունենալ, ինչ-որ անելիք. հենց աշխատանքի շնորհիվ են ձեռք բերում մնացած բոլոր, բոլոր բարիքները. կին, զավակներ, ժամանակ, առողջություն, ուրախ տրամադրություն... Առաջին բանը, որին մարդ սեփական է հաւանի, առողջությունն է, սա էլ գալիս է այն մտքի գիտակցումից, թե դու վաստակել ես ուտելու, և ան տեր դառնալու իրավունքը: Եթե մարդ չաշխատի, կհիվանդանա:

— Ինչո՞ւ:

— Որովհետև հիվանդությունը առաջանում է անօդուտ լինելուց: Ամեն մարդ պետք է օգտակար լինի:

— Ինչո՞ւ չես պիեսդ դրա մասին գրում:

— Կգրեի, բայց հեշտ չէ, քանի որ թատրոնում, ուսուցանելուց առաջ, հարկավոր է զվարճացնել մարդկանց, իսկ զվարճացնելն ու ուսուցանելը, միաժամանակ՝ ամենևին էլ հեշտ չէ: Պիեսի լինես շատ տաղանդավոր գրող, որ դա հաջողվի:

— Դու շատ տաղանդավոր դրուդ ես, հայրիկ: Քեղ կհաջողվի:

— Շնորհակալ եմ: Թե մի բան կա, որ ինձ հաջողվում է, սուրճ խմելն է ինչքան տես:

Հայրիկը մի ուրիշ բաժակ էլ լցրեց, կարծեմ հինգերորդն արդեն ու սկսեց սուրճը խմել, իսկ ես մտածեցի՝ փոխանակ սլիեսի վրա գլուխ կտարելու, լավ կլիներ գնայինք ծովափին շրջելու:

Ինձ դուր չէր գալիս, որ հայրիկն ստիպված էր անվերջ գլուխ կոտրել, ինչ է՝ փող աշխատեր. դե, գլուխ կոտրելն ո՞ւմ է հաճելի:

— Հայրիկ, չե՞ս կարող մի մեքենա հնարել, որ պիւսներ գրի:

— Ինչ ասեմ, օրինակ՝ Բալզակը ժամանակին մի վեց հոգի էր պահում, որ իր համար գրեն, ու եղել են նույն ուրիշ գրողներ, ովքեր վարձել են այլ գրողների իրենց փոխարեն գրելու համար, որովհետև իրենք ճանաչման էին հասել և գերադասում էին արդեն հանդստանալ, բայց ես երբեք լսած չեմ, որ մեկնումեկը գրելու նպատակով իրեն փոխարինող մեքենա ունենար:

— Մեքենաները ամեն ինչ անում են, հայրիկ: Եթե դու էդպիսի մեքենա ունենայիր, ուղղակի պիտի մոտենայիր նրան ու միացնելով ասելիր. «Մի ղվարճալի պիես է հարկալուր մարդկանց ու սննդի մասին»: Հետո ուզածդ տեղը կգնայիր ու երբ մի Լրեք ժամից վերադառնայիր, ամբողջ պիեսը պատրաստ կտեսնեիր, և քեզ կմնար ընդամենը կարդալ ու պարզել՝ հավանո՞ւմ ես, թե չէ:

— Այո՞, հոյս էս պ մեքենա կլինեիր, եթե մարդ բնենար:

— Դե արի հնարենք:

— Ո՞նց:

— Ախր ամեն տեսակ մեքենաներ են հնարել. ինչ ասես անում են: Հեռուստացույցով եմ տեսել: Սեղմում ես կոճակն ու սրժամ գնաց:

— Չեմ կադրո՞ւմ, թե ես ուղենայի իմ փոխարեն գրող մեքենա ունենալ, եթե նույնիսկ նման մեքենա լիներ:

— Ինչո՞ւ: Պիես գրելու համար ով իմանա ինչքա՞ն ժամանակ է պետք, հայրիկ: Չարժի դրա վրա ժամանակը ծախսել:

-- Սխալվում ես, արժի՛: Եվ հետո՝ այնքան էլ երկար ժամանակ չի ծախսվի: Եթե գրողը իր ամբողջ կյանքում անգամ մէն մի հատ լավ գիրք ստեղծի, միևնույն է, էլի չպետք է համարես, թե նա շատ երկար ժամանակ է ծախսել, թեկուզ մինչև իննսուն տարի ապրած լինի, որովհետև լավ գիրքը մնում է ընդմիշտ, իսկ ամեն մարդ վաղ թե ուշ մեռնում է, գնում ու հենց որ մեռավ, էլ վերջ, կորչում է անհետ, և դեռ ոչ ոք աշխարհին ավելի մեծ բարիք չի թողել, քան լավ գիրքն է:

— Բայց ախր ինչու՞ գրողը չի կարող պիեսն արագ գրել: Ինչո՞ւ պիտի նա անպայման մտածի, հուզվի, քայլի սենյակում ու վրա-վրա սուրճ խմի:

— Գրողն էլ է մարդ բոլորի նման, բայց արվեստի խակական գործ ստեղծելու համար նա պետք է հրեշտակ դառնա:

— Հրեշտա՞կ:

— Այո: Մի պահ կամ ինչ-որ առանձին պահերի մարդ պետք է աստ-ծու միջնորդը դառնա, սիրո, ճշմարտության, գեղեցիկի, ներդաշնակու-թյան, խորունկ գաղափարի և համանման ուրիշ բաների միջնորդն ու առաքյալը:

— Ուրեմն՝ թևերով հրեշտա՞կ:

— Ոչ: Առանց թևերի:

— Ասա ինձ, հայրիկ, երբեք եղե՞լ են իրական հրեշտակներ, այ, հենց նրանց պես, որ նկարված են Աստվածաշնչում:

— Դրանք հաջող պատկերներ են, և հրեշտակները այդ նկարներում ճիշտ որ իրական են, բայց միայն մարդու երևախայության կամ էլ հոգու մեջ գոյություն ունեն:

— Իսկ իրական հրեշտակներ՞, որ հոգու մեջ չլինեն: Երբեք եղե՞լ են:

— Ոչ: Հոգուց դուրս հրեշտակներ չկան: Միայն մենք ենք, որ հո-գուց դուրս գոյություն ունենք, բայց միաժամանակ և հոգու ներսն ենք, ու մերթնդմերթ մեզնից մեկնումեկը դառնում է հրեշտակ:

— Ի՞նչ օգուտ դրանից:

— Ազնում է, — ասաց հայրս:

Ես էլ չգիմացա, վրա հասա ու հորս թափով մշտեցի:

Նրա ձեռքի բաժակը երեբաց, և սուրճը թափվեց: Հայրս բաժակը դրեց սեղանին ու ընդունելով իմ մարտահրավերը, քահ-քահ ծիծաղեց:

Ես հորս կարգին նեղը գցեցի, որովհետև նրանից փոքր ևմ ու ճար-պիկ, բայց նա շուտով ազատվեց ինձնից ու դեռ ծիծաղը երեսին՝ ասաց.

— Դե լավ, դո՛ւ հաղթեցիր: Ի՞նչ է ուզածդ:

— Չի՞ լինի, որ դուրս գանք տնից ու էդ անտեր պիեսը մոռանանք: Արի լջնենք ծովափ ու մի դուլլ լիքը խեցեմորթ հավաքենք, հետո կբե-րենք տուն, քո ձկնորսական դանակով կքերենք խեցիներից ու ճաշ կե-փենք, կուտենք: Քեզ ընդմիջում է պետք, հայրիկ:

— Շատ բարի, համաձայն եմ: Թող լինի ընդմիջում:

### ՇՐՋԱՆԱԿԸ

Ա՛յ թե շաղչիկ խեցեմորթների գտանք: Բոլորն էլ սևախառն մա-նուշակագույն, ուռուցիկ ու երկարուկ խեցիներ ունեին: Նրանք պինդ կսլել ու չէին ուզում պոկվել հրաբխային ապառի փեշից, բայց մենք

պոկոտում ու դուլն էինք գցում: Երբ ուտինե գուլը բերնեբերան լցվեց, հայրս կանթից բռնեց ու նայելով ծովին, որ հորձանք էր տալիս ու հսկա ապառը ջրով ողողում, ասաց.

— Ընտիր խեցեմորթներ հավաքեցինք, տղաս, ու ես ուրախ եմ, որ ինձ հուշեցիր դուրս գալ ծովի ափ, թե չէ տանն ի՞նչ կար. պիտի անընդհատ սուրճ խմեի ու միտքս տանջեի, թե ինչ պիես գրեմ:

— Արի իսկույն սուն շղնանք, խեցեմորթները հետո էլ կեփենք,— ասացի:— Արի ձեռքները, թե չու իմ տեղն ես, իսկ ես՝ քո տեղը: Դու տասը տարեկան ես, իսկ ես՝ քառասունհինգ:

— Եղավ,— ասաց հայրս:

Մի սյոհ ես պատկերացրի, թե ինչ է իրոք քառասունհինգ տարին ու հանկարծ քառասունհինգ տարեկան դարձա. վա՛յ, ինչքան մե՛ծ էլի: Բայց ինձ լավ էի զգում, իսկապես որ լավ: Հետո էլ հայրիկին իմ տեղը պատկերացրի, ու հանկարծ նա աչքիս դարձավ ինձ նման, հենց ես էի, որ կամ: Այ, հիմա կարող էի պիեսի մասին դատել:

Սոաջին միտքը, որ գլխովս անցավ, արդեն քառասունհինգ տարվա իմ գլխով, ջրիմուռի մի կտոր վերցնելն էր ու ավազի վրա լա՛յն շրջանակ գծելը:

— Ինչ համաչափ գծեցիր, — ասաց հայրս:

— Բա իհարկե,— ասացի,— շինի՞ր կասկածում էիր: Ահա և շրջանակ. ես կենտրոնում եմ, իսկ դու՝ գծից դուրս:

— Այո, տեսնում եմ:

— Բայց սա դեռ սկիզբն է: Իմ շրջանակը գիտե՞ս ինչ տեղ է նրա մեջ մտնողը սկսում է մտածել: Ամեն մեկն էլ կուզի մտնել ներս, որովհետև շրջանակի մեջ սկսում ես մտածել:

— Օրինակ՝ դու ի՞նչ ես մտածում,— ասաց հայրիկը:

— Ես մտածում եմ, թե բախտս ինչքան է բերել, որ վերջապես շրջանակի ներսն եմ: Դե, պարզ է, դու էլ ես ուզում մտնել ներս, բայց դա կարող ես միայն մի պայմանով անել. եթե գուշակես, թե ինչ եմ մտածում:

— Դու մտածում ես, թե բախտդ ինչքան է բերել, որ շրջանակի ներսն ես:

— Ոչ: Դա առաջ էր, իսկ հիմա ուրիշ բան եմ մտածում:

— Ուրեմն՝ մտածում ես, թե բախտդ այնքան էլ չի բերել, որ շրջանակի ներսն ես:

— Ոչ:

— Մտածում ես, թե երբեք միտքդ չեմ գուշակի:

— Ոչ:

— Դու մտածում ես պիեսի մասին,— ասաց հայրս:

— Ճիշտ է: Ո՞նց իմացար:

— Չգիտեմ: Միգուցե, որովհետև ես էլ եմ մտածում դրա մասին:

Դե՛, կարելի՞ է ներս գալ:

— Կարելի է, արի:

Հայրս մտավ շրջանակի մեջ, իսկ ես դուրս եկա: Հերթն իմն էր, որ նրա միտքը գուշակեի:

— Դու փողի մասին ես մտածում,— ասացի:

— Ճիշտ է,— ասաց հայրս:

Նա դուրս եկավ շրջանակից, ես էլի ներս մտա, ու նա նորից փորձեց գուշակել, թե ինչ եմ մտածում: Մի տասն անգամ փորձեց, բայց լրիվ ապարդյուն, հետո ես արդեն սկսեցի ծիծաղել, իսկ նա ասաց.

— Դե լավ, հանձնվում եմ: Ի՞նչ ես մտածում:

— Ես մտածում եմ, թե ինչքան տխուր պիտի լինի կյանքից հեռանալը:

— Հա՛, տեսնես ինչո՞ւ չկարողացա միտքդ գուշակել:

— Որովհետև դու ընդամենը տասը տարեկան ես,— ասացի,— ու ինձ նման խելացի չես: Հայրիկ, արի հիմա էլ գոտեմարտի մտնենք շրջանակի մեջ:

Հայրս ներս եկավ, ու մենք իրար հետ մտանք գոտեմարտի:

Քիչ հետո ամպրոպի որոտ լսեցինք, կսլծակը փայլատակեց, ու հայրիկն ասաց.

— Փառք աստծու, մի քիչ անձրև վերջապես:

## ԱՆՁԻՆՆԸ

Գոտեմարտը թողած՝ մենք անձրևի տակ քայլեցինք կողք-կողքի:

— Հայրիկ,— ասացի,— չի՞ լինի, որ դրելու մասին ամեն ինչ մոռանանք: Դու խոհարարական գիրքդ մոռացիր ու նյույորքցու պատվիրած պիեսը, ես էլ վնաս կմոռանամ:

— Է՛հ, իսկ ի՞նչ հիշենք:

— Ոչինչ էլ չհիշենք: Ավելորդ հոգս է: Ի՞նչ ենք գլուխներս ցավի տակ դնում:

— Չէ, անհնար է,— ասաց հայրիկը:— Մարդ պիտի ինչ-որ ձգտում ունենա, կարևոր մի հոգս: Երեի վեպդ շե՞ս ուզում գրել:

— Ի՛հ, եղբոր պես, հայրիկ, իմ խելքն ի՞նչ է կտրում գրանից: Ես կարող եմ ամենքի նման հազար ու մի բանի մասին մտածել, բայց չգիտեմ, թե բառերով ինչպես արտահայտվեմ: Արի գրելը մտքներիցս հանենք:

— Շատ բարի: Ուրեմն գրելը մտքից հանեցինք:

— Ա՛յ, իմ սիրտը արդեն թեթևացավ,— ասացի ես:

— Կարծես իմն էլ,— ասաց հայրս,— բայց փողի մասին դեռ էլի մտածում եմ: Դեռ փողի կարիք ունեմ:

— Լավ, որ կդպես է, մի քիչ մտածիր:

— Ախր մտածելով ձևորդ փող չի բնկնի:

— Դու էլ մտածիր ու հետո ձևոր բեր:

— Ինչպե՞ս. գրելուց բացի, այլ ձև չգիտեմ:

— Է՛, հայրիկ,— ասացի,— համառությունդ բռնել է: Դե, եթե քեզ պետք է, դու դրող եղիր, իսկ ես շեմ ուղում... չէ՛, ինձ հարկավոր չի: Ավելի լավ է շրջմունիկ դառնամ:

— Ինչ արած,— ասաց հայրս:— Իհարկե, ես էլ կուզեի շրջմունիկ դառնալ, բայց արդեն ուշ է, իմ ժամանակն անցել է: Կա-չկա բնդմիշտ պիտի գրող մնամ:

— Ձե՞ս կարող մի ուրիշ ձևով փող աշխատել:

— Վախենում եմ, որ չէ: Ճիշտ է, գրելով հարկ եղածի շափ փող չեմ վաստակում, բայց մի որո՞շ բան գոնե վաստակում եմ:

Մենք լռեցինք: Անձրևի տակ գնում էինք անխոս ու ականջ դնում նրա խշխշոցին: Հանկարծ ես ախրեցի ու ինձ մի տեսակ մենակ դպուցի:

— Հայրի՛կ:

— Հա:

— Ես նորից քեզ հետ եմ:

— Այսի՞նքն:

— Այսինքն՝ նորից գլո՞ղ ե՞, հայրիկ: Դու խոհարարական գիրքդ ու պլեխը գրիր, իսկ ես՝ իմ վեպը: Ինչ կա որ, կսովորեմ, թե ինչպես գրեմ ու պո՞ճավ գնաց:

— Ազնի՛վ խո՞սք:

— Սրևս վկա:

— Բայց ինչո՞ւ:

— Դե պարզ չի՞, հայրիկ, ես պետք է գրող դառնամ, քեզ պես:

— Ա՛խ, սա իմ կյանքի ամենահսկարտ ու երջանիկ պահն է երևի:

— Բայց աստծու սիրուն, հայրիկ, արի ես ու դու էնպիսի բաներ գրենք, որ մարդիկ ծիծաղեն. թեկուզ երկուսս էլ փող չվաստակենք:

որովհետև ի՞նչ ուրախություն կմնա կյանքում, եթե մարդիկ չծիծաղեն:  
— Ոչ մի,— ասաց հայրս:

Մենք քայլում էինք անձրևի տակ ու մտածում մեր ապագա աշխատանքի մասին: Ինչքան էլ դա ծանր աշխատանք լինի, համոզված եմ՝ հայրս իր բաժինը կանի, իսկ ես կփորձեմ իմ բաժինն անել:

Անձրևն ավելի ու ավելի էր վարարում, բայց մենք անձրևին ուշք չէինք դարձնում: Քայլում էինք առաջ ու կամաց-կամաց տնից հեռանում:

Գիտեինք, որ տունը իր տեղն է, մեր հետևում:



# ՀՈՒՐԱԳԵՏՈՒՄՆԵՐ



## Խաղողը

Ըստ պատմածի, ես ծնվել եմ օդոստույսն շոգ մի գիշերով մուլախոտերի ու փշոված ապակու սիգե, մինչ մուռերքում՝ Կալիֆոռնիայի Ֆրեզնո քաղաքի էյչ փողոցով անցնող խաղսղովկիանոսյան երկաթգծից հնչում էր բեռնասար շոգերարշի շշակը:

Հայրս Սանջրրի խաղողի այգիներում էր գտնվում, տասներկու մղոն հեռու, փորձելով ի մի բերել առանց ամբիոնի քարոզիչի և առանց ընթերցողի բանաստեղծի իր փշուրները:

Մայրս սրտնեղած էր մեր մութ խրճիթում, որովհետև տանն ավելացել էր ևս մեկը, երեխաների թիվը հասցնելով շորսի՝ երկու աղջիկ, ծնված Բիթլիսում 1899 և 1902 թվերին, 1905-ին էրզրումում ծնված մի տղա ու էլի մեկը 1908-ին՝ ես:

Նման բաներ դուք առաջ էլ եք կարդացել: Ուրեմն՝ ծնվեցի: Հետո՞ ինչ: Ո՞վ չի ծնվել որ: Անցիր բուն պատմությանը: Բուն պատմությունը, կամ նրա սկիզբն էլ հենց դա է, քանի որ երբ ծնվում ես, էլ պրծում շունես, ընկել ես՝ պիտի քաշես, ոնց կաս-չկաս:

Ես շորսից վերջինն էի, շնայած դա երաշխավորել չէր լինի, մաճավանդ, որ ոչ ոք չգիտեր, թե հորս իր մահից երեք տարուց պակաս է բաժանում: Ֆրեզնոն երկաթուղային մի քաղաք էր՝ ոչ մի ընդհանուր բան Բոստոնի, Նյու Յորքի, Չարլստոնի, Նյու Օրլինզի, Չիկագոյի, Գենվրրի կամ Սան Ֆրանցիսկոյի հետ: Կորած-մոլորած մի ավան՝ տասնմեկ հազար բնակիչով, փողոցներն՝ արևմուտքից արևելք անվանված Ա.-ից մինչև Ու, իսկ հարավից հյուսիս՝ Սան Բենիտո, Սանտա Կլարա, Վենտուրա, Մոնո, Մարիփոզա, Կալիվերաս, Դիվիզադերո, Տուլարե և այլն: Իսպանական, մեքսիկական, հնդկացիական անուններ:

\* Հատվածներ համանուն գրքից:

Մեկ էլ, քաղաքով մեկ՝ հայեր՝ Բիթլիսից, Վանից, Մուշից, Կարբերդից, էրզրումից, Տրապիզոնից ու Դիարբեքիրից: Ֆրեզնո իսպաներեն նշանակում է հացենի, բայց ևս դա տարիներ սնց իմացա, իսկ ծառը մինչև օրս էլ չեմ տեսել: Կալիֆոռնիա բառի իմաստն անհայտ է, ինչպես նաև այն, թե ինչու էր այդպես կոչվել խաղաղովկիանոսյան ափի մի սովոր հատվածը: Թվականը 1908-ն էր, 1907-ին հաջորդող և 1909-ին նախորդող տարին: Օգոստոսի 31-ը տարվա ութերորդ ամսի վերջին օրն էր: Այդ ամենն, իհարկե, կարևոր չէր, բայց ես արդեն կայի, ժամանել էի, ու բոլորովին հայտնի չէր, թե որն է դրա իմաստը:

Մորս մայրը՝ Լյուսի՝ Ղարոզլանյանը, Մինաս Սարոյանի այրին, լուում էր, նա առանձնապես գոհ չէր, որ սղջկան տվել է երիցական քահանայի, այն էլ՝ ոտանավորների գրող: Ամեն մայր այն համոզմունքին է, թե իր սղջիկը բոլորովին այլ կարգի ամուսին պիտի ունենար. Ո՛ւմ է պետք մի փեսա, ուր խելքն ու սխաբը մարդկությանն է տվել և անկարող է մի հարց հասկանալ ու տեղնուտեղը լուծել: Ամերիկայի պես երկրում հայրս ոչ մեքենա էր հնարում, ոչ ձիերի առևտուր անում, ոչ խաբում, ոչ խորամանկում, մի խոսքով՝ չէր դրսևորում հաջողություն ապահովող որևէ բնատուր շնորհք: Լյուսի Ղարոզլանյանը, այն ժամանակ քառասուն տարեկան, իր քսանհինգամյա դստեր համար բոլորովին այլ ամուսին էր փափագել. ունևոր, այսինքն աչքաբաց ու ճարպիկ՝ ճարպիկ հայրն էլ գլխին, բայց հիմա արդեն շատ ուշ էր, մեջտեղը շորս էրեխա՝ երկու աղջիկ, երկու տղա: Սրանք ինչի՞ համար ծնվեցին: Խեղճության ու աղքատության:

Հորս մորը՝ Հռիփսիմեին, մեր տուն չէին թողնում՝ թերևս այն պատճառով, որ ունևոր մարդու մայր չէր: Հռիփսիմե Տեր-Հովհաննիսյանը, Պետրոս Սարոյանի այրին, ավետիսին սպասում էր իր տանը, մեզանից ոչ հեռու:

Մինասը և Պետրոսը, շնայած երկուսն էլ Սարոյան էին, ազգակցական կապ չունեին, Պետրոսը Սարոյան էր դարձել որդեգրվելիս: Չգիտեմ, թե ինչ էր նրա հարազատ հոր ազգանունը, բայց ամեն դեպքում Սարոյան եղած չէր լինի, և այստեղ ծագում է ազգանվան խնդիրը:

Օրենքով ես իմ ազգանունը պիտի ստանայի հայրական կողմի պապից՝ Պետրոսից: Չնայած դա առանձնապես կարևոր էլ չի, որովհետև էլի Սարոյանի պես մի բան պիտի լիներ՝ Գրիգորյան, Ավագյան, Հովսեփյան, Մուրադյան և այլն:

Ինչ որ է, աշխարհ էի եկել, ու հայրս էլ Սարոյան էր, մայրս էլ Սարոյան:

— Կողեթ, Զաբել, Հենրի,— ասաց մայրս,— տեսես, է՞ս մեկին ինչ արտառոց անուն կտա:

Հաջորդ օրը հեծանվով Սանջրրից ժամանեց հայրս և նորածնին անվանեց Վիլյամ, ի պատիվ Նյու Յորքի իր ընկեր դոկտոր Վիլյամ Սթոնհիլի, երիցական քահանայի, որ մեռել էր դրանից երեք ամիս առաջ: Նա ընտանեկան Աստվածաշնչում արձանագրեց անունս, վայրը և տարեթիվը, ու տարիներ անց ես այդ ամենը կարդացի անգլերեն, իսկ ապա ուսումնասիրեցի նույնը՝ դրված հայերենով: Ահավասիկ՝ Վիլյամ Սարոյան և այլն, և այլն, օրհնյալ լինի ու նման բաներ: Ապա հայրս հեծանվով վերադարձավ Սանջրր, իր մորաքրոջ տղաների՝ Մուրադյան եղբայրների խաղողի այգին, ուր փորձում էր գլուխ հանել բերքահավաքին պահանջվող գործից: Կարծում եմ, նա այնտեղ խաղող էր քաղում և հուսով եմ, որ մեկ-մեկ էլ դադար էր առնում մի երկու ողկույզ ուտելու:

Իհարկե, մեր կողմերի լավագույն բանը խաղողն էր՝ խաղողի այգիներն իրենց որթ ու վաղով, թուփ ու ողկույզով: Եթե ինձ համար նշանակութուն ունեցող մի բան կա, ապա դա, անշուշտ, խաղողն է:

1944 թվին Լոնդոնում ես խաղողի ողկույզին մի ֆունտ էի վճարում: Ուտում էի խաղողն ու հիշում Ֆրեդնոն, վաղուց մեռած հորս ու նաև մորս, որ վերջապես ապրում էր սեփական նոր տանը Սան Ֆրանցիսկոյում: Այն օրերին անգլիական ֆունտը հինգ դոլար արժեր, իսկ Լոնդոնում ճարվող միակ խաղողը ջերմոցներից էր: Ես Շոուին տարաւ մի քիչ մուսկատի ու մի քիչ ռիբերայի խաղող, մի գեղին սեխ ու էլի միրգ ու բանջարեղեն, բայց նրա խեղկատակութունը բռնել էր, և մրդերով ու բանջարեղենով լի զամբյուղի գաղափարը տեղ չհասավ: Նա թրոշեց, որ դա պատեհ առիթ է հերթական համբավավոր շոույան սրամտության համար:

— Ինչո՞ւ են Ամերիկայում բոլորը կարծում, թե ես ուտելու բան չունեմ: Ես ամեն ինչ ունեմ: Ես չեմ կարող ավելին կլանել: Ստիպված եմ այս ամենը տալ հարևաններիս: Ինձ դա հարկավոր չէ: Իսկ ինչո՞ւ մի քիչ շրես, խաղաղվես, սպասես ես գնամ, վերցնես մուսկատի ողկույզը, մի հատիկ պոկես, դնես շատախոս բերանդ ու ուտես, փոխանակ խեղկատակութուն անելու, քանի որ խաղողը քեզ իսկապես պետք է, շատ է պետք):

— Դե, ես գիտեի, որ դուք բուսակեր եք, դրա համար էլ բերեցի այն, ինչ ուտում եք: Մտքիս վատ բան չի եղել:

Եթե նա կատակելու տրամադրություն ուներ, ե՞ս ինչով էի պակաս: Ես էմբերսընի անվան դպրոցի ամբողջ պատմության մեծագույն կատակախոսն ու զվարճասերն էի: Ինչո՞վ կարող էր նա դրան համեմատվել:

Մոռացա ասել, որ ծննդաբերելիս Թագուհի Սարոյանը կանգնած էր, բաց դռան եզրից բռնած, և ես դա նշում եմ, որովհետև ոմանց կարող է հետաքրքրել: Տատմերը մեր հեռավոր ազգական Իսկուշն էր, ծեր ու բարեհոգի մի կին, որս իր գործի հմուտ գիտակ էր, լավ էր ճանաչում կանանց և գիտեո, թե ինչու ես եմ մտասուկներն իրենք դուրս գալիս, ինչ է պետք անել, երբ և ինչպես, առանց չափազանցելու պահի կարևորությունը: Նա անդադար մեղմ բռնություն էր բաց ոչ տվյալ պահից, այլ վաղուց ծնված ու արդեն իսկից ընկած ուրիշ մարդկանց մասին: Նա բամբասում էր, ծիծաղում, ձեռքերը հստում ազատվող կնոջ ձեռքերին և շուտով ահա ամեն ինչ ավարտված էր՝ տղան ժամանել էր:

Շոգից թոշնող մուլախոտերի ստվերում պսպղում էր կոտրած ապակին, լավում էր շոգեքարշի շշակը, և Սան Ֆրանցիսկոյի գնացքից հենց նոր իջած մի թափառական անձայն անցնում էր մեր տան կողքով:

Հայրս շփոթեց, թե ինչից կործանվեց: Ըստ իս, նրան կործանեց Ամերիկան, շնայած ես դեմ եմ այս կարգի պնդումներին: Ասում եմ այդպես, բայց հազիվ թե ինքս հավատամ իմ ասածին:

«Ես բանաստեղծ եմ, քարոզիչ, ես խոսում, գրում և կարդում եմ անգլերեն, ես կարող եմ հանպատրաստից մի այնպիսի քարոզ կարդալ, որը մարդիկ երբեք չեն մոռանա, ինչո՞ւ պիտի ես խաղող հավաքելով գրադվեմ Ֆրեզնոյից տասներկու մղոն հեռու ընկած շոգ ու կրակ այգում: Ի՞նչ գործ ունեմ Ֆրեզնո կոչեցյալ կորած-մոլորած քաղաքում»:

Ինչ գործ էլ որ ունենար, այդտեղ էր, որ ես սկիզբ առա՝ էյ՛չ փողոցի մի հյուղակում, ուր նավթի լամպերի հոտին գալիս խառնվում էր ճանճասպան թղթի հոտը:

Գուցե պատճառը ե՞ս էի: Ե՞ս էի նրան Բիթլիսից ինը հազար մչոն քշել մինչև Ֆրեզնոյի էյ՛չ փողոցը:

Որոշողն ո՞վ էր՝ հա՞յրը, թե՞ որդին: Գուցե ոչ մե՞կը:

Լույս աշխարհ գալս ճնշում-հրոցով եղավ, աշխարհ եկա թե չէ՝ ճնշումն այնքան սաստիկացավ, որ պարզապես չգիտեի, թե ոնց դիմանամ: Ինձ վրա ճնշում էին գործադրում ամեն տեսակի մարդիկ ու հանգամանքներ: Երբեմն դա կատաղեցնում էր ինձ, երբեմն պետքս էլ չէր, երբեմն՝ անգամ ուրախացնում էր:

Հետո ինքս անցա ճնշելուն: Ճնշում էի ամենուրեք: Չեմ ասի, թե ուշում էի: Ուղղակի ընտրություն չկար:

Ճնշել են ինձ, ես էլ ճնշել եմ ու ճնշելու եմ:

1960 թվականի օգոստոսի վերջին օրը, ճնշման առկա ընկնելու հիսուներկուերորդ տարեդարձին, Մոսկվայում էի:

Ճնշման պայմաններում շատերը չեն հասնում անգամ հաջորդ օրվան, բայց ես հիսունեոկու տարի շարունակ հասնում եմ: Շարժիչս սկզբից ևեթ լավ էր յուղված, ես հորով-մորով ժամանել էի լույս աշխարհ: Նրանց խալերը մինչև օրս ձեռքերիս են:

Ինչևէ, այս ամենը միայն իմ մասին չէ, ինչպես կփորձեմ ցույց տալ: Այդպես կառոշ է թվալ, բայց պատճառը սոսկ այն է, որ զրոզը ես եմ: Ոչ էլ միայն քո մասին է, կամ միայն մարդկանց մասին, քանի որ ես համարյա անմիջապես տեսա նաև թոշուններին: Իսկ թոշուններից հետո սկսեցի տեսնել այլ էակներու: Առաջին տեսածներիցս մեկը կատու էր, դրա շարժիչի ձայնը լավ էր լսվում: Շուրջը կային նաև շներ, ոչ ոնք անդադար խոսում էին:

Մոսկվայում ես մի կոմպոզիտորի տանն էի, որը նստեց դաշնամուրի առջև ու փոքրիկ մի գործ նվագեց, որ նոր էր հորինել՝ հայկական մի հին երգի եղանակով: Շատ դուրեկան եղանակ էր, վշտի և վայրույթի խառնուրդ, որի ճնշման տակ սրտումդ սեր էր արթնանում:

Ես լսում էի դաշնամուրի նվագը և մտածում հայերի մասին, սկզբում ոռուների հարաբերմամբ, քանի որ Մոսկվան Ռուսաստանում է, հետո՝ ամերիկացիների, քանի որ ծնվել եմ Ամերիկայում: Ռուսների և ամերիկացիների հարաբերմամբ հայերի մասին խորհելուց հետո ես սկսեցի նրանց մտովի քննել անզլիացիների համեմատ,՝ հավանաբար հիշելով Շեքսպիրին, ապա՝ Ֆրանսիացիների, քանի որ մի տարուց ավել է, ինչ ապրում էի Փարիզում և միայն վերջերս էի գնացել Հավր ու նստել այն նավը, որն ինձ տարել էր Լենինգրադ: Հետո սկսեցի հայերին համեմատել իտալացիների, գերմանացիների, իսպանացիների, չինացիների և ճապոնացիների հետ: Չգիտեմ ինչու, հայերին չհամե-

մատեցի հրեաների և հույների հետ: Այն պատճառով գուցէ, որ ըստ իս հրեաներին ու հույներին համարյա նույնքան դժվար է հասկանալ, որքան հայերին: Այդուհանդերձ հաջորդ օրը ես հայերին սկսեցի քննել նաև հրեաների և հույների համեմատ:

Դաշնամուրն, ինչ խոսք, հաճելի էր հնչում, հին հայկական երգից այդ կոմպոզիտորի քամած մեղեդին ուրիշ կոմպոզիտորների, ուրիշ ազգերի երաժշտության համակարգում մի նոր ծիլ լիներ կարծես, և կարելի էր միայն հիանալ, թե ինչպես էր այդ մարդը այդքան նորովի հնչեցրել մի բան, որն իրականում շատ ու շատ հին էր, որի հնությունն անդադար մտրիս էր: Հայերը ուսանների և մեացածների համեմատ միանգամայն նույնն էին, ինչ հայերն սուանց որևէ հարաբերման, բացառությամբ միգուցե՝ հենց հայերի հարաբերմամբ, բայց այդ դեպքում էլ հարկավոր է իմանալ, թե՛ որ հային որ հայի հետ համեմատել, իսկ երաժշտությունը շափից դուրս գրավիչ էր, որպեսզի նման մտորումների տեղ տար: Ասենք, մի հայ կարող էր ամերիկյան կատակներում տեղ դրած գորգավաճառը լինել, իսկ մեկ այլը՝ բանաստեղծ, օրինակ՝ հայրս: Գորգավաճառը գորգ էր վաճառում, իսկ հայրս բանաստեղծություն էր գրում: Բանաստեղծության մեջ հայրս ասում էր, որ շատ հեռու է իր ծննդավայրից, ապա ասում էր, որ հեռու է նաև իր նպատակից, ու վերջապես խոստովանում, որ ամեն ինչից շատ ու շատ հեռու է: Կարճ ասած՝ լիրիկական բանաստեղծություն էր: Գորգավաճառն իր գորգի դիմաց դրամ էր ստանում, հայրս ոչինչ չէր ստանում իր բանաստեղծության դիմաց:

Հենց որ կոմպոզիտորը վերջացրեց, ես ասացի. «Նորից նվագեր»: Կոմպոզիտորի սենյակում երեսուներեք մարդ կար, և խնդրանքս շփտես ինչու բոլորին շփոթեցրեց: Կոմպոզիտորը, սակայն, անմիջապես սկսեց նվագել, և այս անգամ նա շատ ավելի լավ էր նվագում, իսկ ես՝ հիսուներկու տարիս առած, նստած ունկնդրեցի՝ մինչև վերջին հնչյունը:

Երբ երեկույթից հետո գնում էի հյուրանոց, նկատեցի, որ գիշերվա երկուսն անց կես է: Անցա Կարմիր հրապարակն ու քայլեցի կամուրջի վրայով, որովհետև նույն ճանապարհը կտրել էի 1935-ին, երբ քսանյոթ տարեկան էի: Սիրում եմ կամուրջի վրայից նայել գետի ջրերին: Այդպես քայլեցի մինչև լուսաբաց, փորձելով հասկանալ, թե ինչու եմ լաց լինում:

1928 թվականի սեպտեմբերյան մի օր հեռախոսագիրքը թերթելով, ևս հայտնաբերեցի, որ այն մարդու այրին, որի անունով հայրս ինձ կոչել է, ապրում է Բրուքլինում: Ես մետրոյով գնացի նրանց տուն և սեղմեցի դռան զանգը:

Այդ կինը՝ դուկտոր Վիլյամ Սթոնհիլի այրին, բացեց դուռը և ասաց. «Դուք Արմենակ Սարոյանի որդին եք: Ներս համեցեք»:

Ես ասլշեցի և անգամ մտքումս հարցրի. «Ինչպե՞ս կարող է նա ինձ ճանաչել», քանի որ ինձ երբեք չէր տեսել: Ես քսան տարեկան էի, հայրս տասնյոթ տարի է, ինչ մահացել էր, ոչ էլ զանգահարել էի կամ զգուշացրել Մետրոյում ես կարծում էի, թե ուզում եմ պարզապես տեսնել որտեղ է նա ապրում, բայց հետո հանկարծ, շփտեմ թե ինչ պատճառով, որոշեցի, որ պետք է սեղմեմ դռան զանգը: Գուցե նա տանը շիներ ցերեկվա ժամը շորսին:

Ութ տարեկանում տեսել էի նրա նկարը՝ ամուսնու և հորս հետ: Նկարում նա երեսունհինգին մոտ, բարձրահասակ և զեղեցիկ կին էր և բոլորովին չէր փոխվել, երբ դուռը բացեց:

Ինչո՞ւ էի ես դեսոցել այնտեղ: Սիգուցե դա իմ՝ տուն, աշխարհ, ինչ-որ ելք փնտրելու մի մասն էր: Տունը կարձևս ինքնանկար լիներ, որն անմիջապես ճանաչում ես՝ գեղեցիկ, կոկիկ, մի քիչ խիստ, բայց միաժամանակ՝ ջերմ:

Նա իր նման մի հյուր ուներ տանը, որը երևի եկեղեցական գործիչ լիներ: Նրանք թեյ պատրաստեցին, հետո նստեցինք ու թեյ խմեցինք՝ թիվ՝ ծրուեսելով և զրուցելով:

Այդ կինը ճանաչել էր հորս իմ ծնվելուց առաջ, ինչպես նաև՝ մորս ու նաև մորս մորը, բայց, ըստ իս, վերոհիշյալ աիկնայք առանձնապես լավ շեն վերաբերվել նրան, քանի որ նրանց հարկավոր չէր նրա արած լավությունը, և շեն կամեցել ընդունել կամ դեկավարվել նրա առաջարկած նիստուկացով: Նրանք սրտնեղել են այդ կնոջ ու իր ամուսնու հաստատած կանոնավոր մթնոլորտից ու թերևս անգամ փոքր-ինչ արձամարհել այն: Մինչև իր ընտանիքի Նյու Յորք ժամանումը հայրս իրեն շատ լավ է զգացել այդ մթնոլորտում, Վիլյամ Սթոնհիլի և նրա տիկնոջ հետ, և նրանք միշտ համարել են, թե նա մտադիր էր շարունակել հոգևորականի իր կարիերան Նյու Յորքում կամ Պալեոտոնում, որտեղ մի քանի անգամ քարոզ էր կարդացել անդլերեն և հայերեն: Բայց շուտով, Թագուհու և կյուրիի դալով, սխառում էր աիկին



Սթոնհիլը, հայրս սկսում է մտահոգվել, քանի որ նրանք ուղում էին, որ նա թողնի այդ խոստումնալից կարիերան, ամեն բան թողնի, տեղափոխվի Կալիֆոռնիա: Նրանք շէին ուզում ապրել Նյու Յորքում, Նյու Ջրսիում կամ արևելքում՝ որևէ մի այլ տեղ: Նրանք ուզում էին զնալ Կալիֆոռնիա, որովհետև բոլորն ասում էին, թե այնտեղ ամեն ինչ նման է Բիթլլեսի կյանքին:

Վերջապես հայրս տեղի էր արվել, և նրանք գնացել էին Կալիֆոռնիա: Դրանից քիչ անց պարոն Սթոնհիլը հեռացել էր այլ ունայն աշխարհից, մի քանի տարի անց նրան հետևել էր Արմենտիկը, իսկ ապա՝ մյուսները:

Այդ ամենը, իհարկե, շատ լավ էր իմանալ, բայց նաև ճնշող էր:

Թեյ խմելու ժամանակ խոսակցության մեջ տիկին Սթոնհիլը նշեց, որ հայ վտարանդիների հետ աշխատելիս նա և իր ամուսինը երկատող գրություններ են ստացել նրանցից շատերից, բայց հետո էլ ոչ մի տեղեկություն չեն ունեցել: Դա ինձ զարմացրեց: Ի՞նչ կարգի երկատուներ կարող էին գրել հայ վտարանդիները. Արդյո՞ք բոլոր հայերն էին երկատուներ ուղարկում իրենց օգնողներին: Ես պատկերացրի այդ երկատուները՝ պարզունակ և կիսագրագետ. «Ես, Վահան Մկրտչյանս Բիթլիսից, գրկում եմ դուկտոր Վիլյամ Սթոնհիլին և նրա կնոջը մեծ օգնության համար Նյու Յորքում»: Ու նման այլ բաներ: Բայց վստահ չէի, թե ճիշտ եմ հասկացել նրա ասածը: Ես պարզաբանման էի սպասում և փորձեցի իմ լուռյամբ հասկացնել, որ ուզում եմ այդ մասին ավելին իմանալ: Զգում էի, որ այդ կինը տեսնում է իմ շփոթմունքը, բայց նա այդուհանդերձ ոչինչ չէր ասում: Վերջիվերջո ես տեսա, որ պետք է պարզապես հարցնել:

«Ես կարծես թե լավ չհասկացա այդ գրությունների իմաստը: Ի՞նչ գրություններ էին»:

Անշուշտ, սա մի հանգամանք էր, որ միշտ տխրեցրել էր նրան, ու հիմա նա այդ շթաքցրեց:

«Դե, գրություններ այն պարտքերի մասին, որ ես ու ամուսինս նրանց տալիս էինք: Բոլորը խոստանում էին վերադարձնել, բայց նրանցից ոչ մեկը չվերադարձրեց: Ո՛չ մեկը»:

Զղայնությունս եկավ: Ա՛խ, այդ հայերը: Ինչպե՞ս կարող էին նրանք դրամ վերցնել այդ սիրալիր, բարեկիրթ, պատրաստակամ, լուրջ ու ազնիվ մարդկանցից, փոխարենը գրություններ տալ և հետո դրամը չվերադարձնել: Ես ամոթից շփոթվել էի:

«Իսկ իմ հայրը, մայրը, կամ տատը ձեզ այդ գրություններից ուվե՞լ են»:

Մտքիս կար դրամը վերագարձնել լրիվ, անհուպաղ և տոկոսներով: Բայց տիկին Սթոնհիլն ասաց, որ հայրս, մայրս և տատս իրենք են վճարել իրենց ճանապարհածախսը՝ աշխատելով և մի քիչ փող խնայելով, զնացքի տոմս են առել և մեկնել Կալիֆոռնիա:

## Ուտողները

Դպրոցն ավարտելուց ու մի ամբողջ տարի փողոցներում կոշիկ փայլեցնելուց հետո էդի Յարուլյանը ցրիչ դարձավ փոստային ընկերությունում: Էդին տասնինը տարեկան էր, իսկ ես՝ տասնչորս: Նա յուրացրեց հեռագրողի աշխատանքը, և երբ հուշում հայտնվեց հեռատիպը, գործի անցավ երկաթուղային մի փոքրիկ կայարանում:

Սովորաբար, հեռագրերը բաժանելուց հետո նա գալիս էր ու ասում.

«Ըհր, դե տե՛ս, թե ի՛նչ կա մոտս»: Եվ բզուշորեն ձեռքի ափի մեջ հարթեցնում էր կոնֆետի արծաթյա թուղթը, վրան գրած «Ոսկե հորելյան», «Ջունգլիների հրաշք» կամ «Հավերժ քոներ»: Նա նկատի ուներ, որ կերել է սյդ կոնֆետը: Դա միշտ գիշերն էր լինում, երբ հերթապահում էր ժամը չորսից մինչև մեկը:

Մի անգամ, երբ նա եկավ և ոչինչ ցույց չուվից, ևս հարցրի.

— Էդի, այս անգամ ոչինչ չկա՞:

— Անհոգ կաց, ինչ որ պետք էր, ստացա, ես իմ զլխի ճարը լավ եմ տեսնում և գիտեմ, ինչ է համով կոնֆետը ուժերի վերականգնման համար: Բայց ես քեզ հետևում էի աչքիս պոշով և գիտեի, որ դու ծիծաղում էիր ինձ վրա, ձև էիր անում, թե հիանում ես իմ կերած կոնֆետով, բայց ներքուստ ծիծաղում էիր վրաս: Ես լավ եմ ճանաչում ձեզ, բիթլիսցիներե՛դ, միշտ մարդու հոգու հետ եք խաղում: Միամտորեն կարծում ես, թե լավ ընկերդ է, բայց սլարզվում է, որ իսկի էլ չի... Վիլի, դու էլ իմ ընկերը չես լինի, եթե շարունակես հետևիցս վրաս ծիծաղել:

— Ինչ ես ասում, էդի, ես պարզապես նախանձում էի քեզ:

— Գուցե և մի քիչ նախանձում էիր, ճիշտ է, բայց ես ոչ մի անգամ չեմ տեսել, որ դու գոնե մի քանի կոնֆետ առնես քեզ համար: Դուք՝ բիթլիսցիներե՛դ, զուր տեղը փողը քամուն չէք տա, որովհետև կծծի եք, ժլատ, իսկ մենք էլ խարբերոցի ենք և ձեռքնէրս ընկած փողն իսկույն

ծախսում ենք. սրանից հետո գրողի ծոցը կորիւր, Վիլի, էլ ոչ մի անգամ ես քեզ կոնֆետի թուղթ ցույց չեմ տա:

— Դե լավ, էդի, ի՞նչ կլինի, շուտ արա ցույց տուր քո կոնֆետի նոր թուղթը, գիտեմ, որ շատ ընտիրը պիտի լինի, ու ոչ ոքի չեմ պատմի, թե ինչի վրա ես փողդ ծախսում:

Սիրտը փափկած, նա իսկույն ձեռքը տանում էր կապույտ բաճկոնի ներսի գրպանը և, աչքի պոչով վրաս նայելով, հանում ու բացում խնամքով ծալած վառ կապույտ, կարմիր բծերով կոնֆետի մի թուղթ: Եվ այդ պահից արդեն նրան առանձնապես չէր հուզում, թե ես կարող է վրան ծիծաղեմ, իհարկե, ներքուստ՝ մի բան, որ հնարավոր չէր սատույզ լիմանալ: Նա ուղղակի հիացմունքից քարացած նայում էր «Այրող սառույց» կոչվող կոնֆետի թղթին:

— էդի, շատ շնորհակալ եմ, սա երևի ամենից լավ կոնֆետն է:

— Ստանիսլասից մինչև Մարտա ընկած ամբողջ ճանապարհին սա էր բերանումս:

— Երանի քեզ, երևի շատ լա՛վն էր:

— Բ՛հր, տաք ու սառը, ճիշտ վրան գրվածի պես, տաք ու սառը, իսկական այրող սառույց: Բայց գրողը քեզ տանի, Վիլի, ես հաստատ գիտեմ, որ էլի վրաս ծիծաղում ես, շնայած չի եղևում, դուք, բիթլիսցիներդ, միշտ այդպես եք, ամեն ինչ լուրն եք թաքցնում:

— Ծիծաղո՞ւմ եմ: Ի՞նչ ես ասում, էդի: Ուղղակի լա՛ցս է գալիս, որ ես չեմ կարող ինձ թույլ տալ նման մի հրա՛շք ճաշակել:

Բայց այն, ինչը ես կարող էի ինձ թույլ տալ ուտել, սյնքան էլ վատը չէր: Ուտելիք էր, էլի՛՝ կշտանալու բան: Առանց դրա մի օր էլ չես դիմանա, էլ չեմ ասում մի շաբաթ: Չնայած, երբ արդեն քառասուն տարեկան մեծ մարդ էի, ժամանակ եղավ, որ մի ամբողջ ամիս միայն խմում էի, բայց ա՛յ թե խմում էի և մեկ-մեկ էլ մի կտոր միս էի թոցնում:

Որբանոցում ամենահամեղը մսի կարկանդակն էր: Չավարը թույն էր: Բոլորն ատում էին այն, նրա համը կամ, ավելի ճիշտ, համի բացակայությունը, բայց ես միշտ ուտում էի, ամանս սրբում, և եթե ավելացնեին, էլի կուտեի, թեև ատում էի կերածս ամեն հատիկը:

Չէ՞ որ մենք աճում էինք, մեծանում և նրանք էլ դա գիտեին, և գիտեին նաև, որ մենք պիտի ուտեինք ու մարսեինք ձեռքներս ընկած ամեն բան:

Որբանոցին հատկացված դումարը սուղ էր և, իհարկե, մենք մեծ հույսեր չեինք կապում ուտելիքի հետ, այն պիտի լիներ հիմնավոր,

մատչելի, էժան ու կշտացնող: Սուտ կլինի, եթե ասեմ, որ ոչ մի համեղ բան բերաններս չէր ընկնում, և ես չէի ուզենա զուր տեղը շառ գցել որբանոցի վրա:

Օրինակ, ասենք մեր իուլանդուհի խոհարարը: Հնարավոր չէ չհարգել նրա հիշատակը, որովհետև նա սիրում էր մեզ, մեզանից յուրաքանչյուրին, մեր ամեն մի մեծ սոված բերանը և ամեն մի մեծ դատարկ ստամոքսը... Ճաշի ժամին նա կանգնում էր խոհանոցի դռան մոտ և նայում, թե մենք ոնց ենք խժոժում-սրբում այն ամենը, ինչ ինքն էր պատրաստել մեզ համար: Ի միջի այլոց, նա շտենսնված համեղ մակարոն էր տապակում:

Նախաճաշին սովորաբար լինում էր որևէ շիլա, կաթով, ու ոչ ոքի մտքով անգամ չէր անցնի նազ անել: Սրա հետ լինում էր կակաո, թարմ հաց ու կարագ: Ուրեմն, կարագը հարկավոր էր քսել հացին, մտցնել տաք կակաոյի մեջ և արագ դնել բերանը. այդ դեպքում փափկած հացը, հալված կարագը և տաք շոկոլադի համը մեզ շտենսնված հաճույք էին պատճառում: Մեկ-մեկ նա անթի՛վ-անհամա՛ր կարկանդակներ էր թխում, որոնք մենք նույնպես սիրում էինք ուտել հալվող կարագով ու մեղրով, եթե դրանք էլ կային, իսկ եթե ոչ՝ ապա ինչով որ պատահեր, բացի տոմատի մածուկից: Նախաճաշի, ճաշի և մեկ-մեկ էլ ընթրիքի համար նա եղիպտացորենի ալյուրից մեծ-մեծ բոբոններ էլ էր թխում. նա անգերազանցելի էր սլատրաստում խոզի միսը լոբու հետ, և դա, իհարկե, մեր ամենասիրելի ուտելիքն էր: Իսկ մանր կտրտած մսից պատրաստված կերակուրը ամենահամեղն էր իմ երբևէ կեռու՛յն այդպիսի ճաշերից, էլ չեմ ասում ծեծած մսի շերտերի մասին: Երևի նկատեցիք, որ այս ամենը պատրաստվում էր ոչ թանկ մթերքներից, սլարգապես նրա կաթևաներում ու թավաներում դրանք վեր էին ածվում մեր փափագած ճաշերը: Երբեք կարիք չէր լինում որևէ մեկին խնդրել, թե «Կեր, որ կարգին անես» կամ «այս մի քիչն էլ հանուն մայրիկի, մի քիչ էլ՝ հանուն հայրիկի, մի փոքր էլ՝ հանուն Հիսուսի», կամ նման մի բան: Մի քանի վայրկյանում մենք արագ-արագ կուլ էինք տալիս մատուցված ամեն ինչը: Մինչև ճաշի ժամն ազդարարող զանգը կղաղարեր հնչել, և բոլորը կհասցնեին դրազնցնել իրենց տեղերը, ճաշն արդեն իմ ամանից անհետանում էր, և ես, դատարկ ափսեն առջև, լրացուցիչ բաժին էի խնդրում և ստանում: Թռչնեղենը ինչ-որ անհեթեթ ու անհակահնալի պատճառով այնքան էլ հաճախ չէր հայտնվում մեր սեղանին, երևի շատ էր թանկ որբանոցի բյուջեի համար, և բնականաբար ճուտ ուտելը մեր պատկերացմամբ կապված էր հարուստների և հա-

սարակութեան բարձր խավերի կերուխումի հետ: Միայն առանձնահատուկ առիթներով էին մեզ ճուտ կամ հնդկահավ մատուցում, օրինակ՝ Գոհաբանութեան օրը, Սուրբ ծննդյան օրը, մեկ էլ թերևս Սուրբ Զատիկին, շնայած այնքան էլ վստահ չեմ: Կարող եմ միայն ասել, որ դա մեծ իրադարձություն էր մեզ համար: Իմ տոաջինն պիեսում, որը կոչվում է «Իմ սիրտը լեռներում է», բանաստեղծի որդի Զոնին գրուցում է փոստատար տղայի հետ: Նա պարծենում է, որ ինքը հավի ճուտ է կերել, իսկ փոստատարը հպարտութեամբ պատմում է, թե ինքն էլ է կերել, այն էլ՝ երկու անգամ...

... Ինչ ասես որ չէր պատրաստում հիանալի իուլանդուհին: Ես նրան հավերժ կհիշեմ չնքմ ակնածանքով, խորին հիացմունքով և երախտագիտութեամբ: Նա արդեն չկա, այդ անուշ կինը, ուստի ես իմ սերը հղում եմ ողջ Իուլանդիային, իուլանդացի բոլոր խոհարարներին, ընդհանրապես բոլոր այն խոհարարներին՝ իուլանդացի կամ այլազգի, որոնք չեն ատում իրենց լանամյալներին և սիրում են նրանց՝ երեխաներին, հանցագործներին, հիվանդներին, խելագարներին և կամ էլ ծերերին: Ողջունում եմ բոլոր ազատագուրկներին ու բանտարկյալներին, և ամբողջ հոգով աղթում եմ, որ նրանք մի կարգին խոհարար ունենան:

Ախ, իսկ ինչպիսի՞ր ունանդենու հյուսթ էր պատրաստում նա... Եփում էր, բայց չէր փափկեցնում ունանդենու կտորները՝ նրանք հրաշալի կարմիր ու սպիտակ գույնի էին, իսկ նրանց հյուսթը՝ զուլալ և միաժամանակ քաղցրահամ ու թթվաչ: Ծիշտն ասած, որբանոցի համար այդ ամենը այնքան էլ վատ չէր:

Իսկ հետո արդեն հերթը հասավ Ֆրեդնոյին, տնական ճաշերին, Հայաստանի ուտելիքներին և Բիթլիսի հանրահայտ ճաշատեսակներին: Դուք, իհարկե, գիտեք, որ ազգային խոհանոցը նույնատիպ է ինչպես հայերի, այնպես էլ թուրքերի, քրդերի, արաբների, պարսիկների, հույների, վրացիների, ռումինացիների, բուլղարացիների և էլի մի երկու կամ երեք տասնյակ՝ Սև ծովից մինչև խաղաղօվկիանոսյան ափը սփռված ազգերի մոտ: Զեզ, անշուշտ, հայտնի է նաև, որ նշված ազգերի խոհարարական արվեստում ընդհանուր շատ բան կա՝ յուղուրդ և տիլավ, այսինքն՝ մածուն և բրնձի շիլա: Ծաշերի պատրաստման մեջ կարող են աննշան նրբություններ լինել, բայց այս երկու բաղադրամասերը՝ մածունն ու բրնձը անփոփոխ են: Մի բան է այժի կաթից մերած մածունը և բոլորովին այլ բան՝ մեզ համար այդքան սովորական դարձած կովի կաթից մերած մածունը: Ամեն կենդանի յուրահատուկ կաթ ունի: Նշված ժողովուրդների մոտ ընդհանուր է նաև

շամփուրի վրա շարված գառան խորովածը՝ տաք ածուխների վրա, կամ էլ՝ շիշ-քյաբաբը: Shish թուրքերեն շամփուր է, իսկ kebab՝ կտրտած միս: Tass-kebab-ն էլ բնականաբար նույն կտրտած միսն է, այս անգամ պատրաստված թասի կամ թավաչի մեջ, թավաքյաբաբ և այլն: Հաճելի հոտ և յուրահատուկ համ ստանալու համար խորովածն անում են հետևյալ կերպ: Շամփուրին հերթով շարում են մի կտոր միս, մի կծու պղպեղ, մի սոխ, մի լոլիկ, հետո նորից մի կտոր միս և այլն, նայած թե ձեռքի տակ որ մթերքից շատ ուեեք: Պարզ է, որ Ֆրեզնոյում նման սնունդն ինձ համար սովորական մի բան էր, բացի շիշ-քյաբաբից, որը նախատեսված էր միայն ընտանեկան խնջույքի և կամ էլ՝ հայկական կերուխումի համար, քանի որ դա պիտի ճիշտ պատրաստես, եթե ուզում ես, որ լավ ստաչվի:

Բացի այդ, մի բան էլ կա, որ հայերի, քրդերի, թուրքերի, անշուշտ արաբների և նաև այլ ժողովուրդների համար նույնպես հիմնական է— հայերն այն կոչում են բլղուր: Դա շագանակագույն հացահատիկ է, խաշած, արևին շորացրած ու ծեծած: Եթե ցորենը խոշոր-խոշոր է ծեծված, ապա օգտագործում են փլավի համար: Ես դա ավելի եմ սիրում, քան բրնձի փլավը, որից նույնպես չէի հրաժարվի: Բլղուրով ինչ ուզես, կարող ես եփել, ուզածդ բանը խառնել հետք, բայց սովորաբար անում են այսպես. մեկ բաժակ բլղուրը յուղով բովում են, ավելացնում երկու բաժակ քամած արգանակ, եթե չկա՝ եռացող ջուր, մանր կտրտած սոխ, և ուտում տաք-տաք, մածունի հետ: Սա ամենուրեք գյուղացիների ամենից սիրելի և նախընտրած ճաշն է, մանավանդ եթե ընտանիքում ամենաքիչը վեց կամ յոթ երեխա կա: Ասեմ նաև, որ այն ընտանիքներում, որտեղ այդ ճաշը հաճախ են պատրաստում, երեխաների քանակն ավելանում է...

Մայրս ինձ հաճախ էր ուղարկում շինական թաղամաս, հայտնի ձկնավաճառ Տակամուրաչի մոտ, որն ամեն շաբաթ մեծ քանակությամբ մանր ձուկ էր ստանում: Մայրս տապակում էր ձկները, և մենք ուտում էինք բլղուրով: Տասը փենսով կարելի էր այնքան ձուկ գնել, որ բավարարեր մեր ամբողջ ընտանիքին, իսկ երկու ֆունտով՝ մոտ երկու հարյուր մանր ձուկ, որոնք կարելի էր ուտել առանց փորոտիքը հանելու և գլուխները կտրելու:

Ծեծած ձավարը խառնում էին աղացած մսի հետ և պատրաստում գնդիկներ, մեկ-մեկ մեջը լցնելով նրան հատիկներ, և կամ էլ լոլիկը, պղպեղը, դդմիկը, դդումը, սմբուկը լցոնում էին այդ գնդիկներով կամ գնդիկները փաթաթում խաղողի տերեղով: Հայաստանում միսն

ու ճավարը խնձորի ու սերկևիլի մեջ էին լցնում, բայց մեզ մոտ դա  
ընդունված չէր: Ծիրանի և դեղձի շիրը ավելացնում էին մսով ճա-  
շերին, որ թուլացնեն սխտորի և մսի, շորացրած սմբուկի կամ որևէ այլ  
բանի տհաճ համը, սակայն խնձոր կամ սերկևիլ երբեք չէին ավելաց-  
նում: Իհարկե, ոչինչ չէր պատահի, եթե ավելացնեին, քանի որ լավա-  
գույն ճաշերը սուղ միջոցներով են պատրաստվում: Ինչ տանը կա՝ նրա-  
նից էլ պատրաստում ես և աշխատում ես, որ համեղ լինի:

Մեր տան ամենասիրած ուտելիքը բիթլիսցիների լեզվով ասած  
թթուն էր: Այդ բառը միաժամանակ նշանակում է և թթվաշ, և կծու  
Վերցնում եք մի մեծ գլուխ կաղամբ, կտրտում մանր կամ խոշոր, մեկ  
է, դնում կճուճի մեջ, վրան մի քիչ աղ ցանում, ավելացնում մի կտոր  
հաց և մի քիչ թթխմոր, վրան գու ջուր լցնում մինչև կճուճի պոունկը,  
հետո ծածկում ամանով, վրան որևէ ծանրություն դնելով, որպեսզի  
հումքը սեղմվի հատակին: Սովորաբար, մենք մի մեծ սմբուկի շափ  
քար էինք օգտագործում որպես ծանրություն: Մի շաբաթից կամ տասը  
օրից հումքը ձեռք էր բերում սուր համ, արդեն թթված էր լինում,  
բայց սա բոլորովին այլ թթու էր, համի իմաստով շատ ավելի լավը,  
քան ձեզ քաջ ծանոթ թթուն: Սրա հյուսթը կազդուրիչ է և ծարավը հա-  
գեցնող: Իսկ եթե տանը ունեք այլ մթերքներ, դրանք էլ կարող եք խառ-  
նել այդ կտրտած կաղամբի հետ, հատկապես շաղգամի կանաչ մասերը,  
նեխուրը, կանաչ լոլիկը և նման այլ բաներ: Թթվի սառը հյուսթը շատ  
հաճելի է խմվում, բայց առավել հաճելի է հենց ինքը թթուն ու դրա-  
նով պատրաստած ճաշը:

Հինգ հոգի էինք մեր ընտանիքում, որոնցից ևրկուսս՝ ես ու  
եղբայրս, լավ ուտողներ էինք, այնպես որ մայրս սովորաբար մեծ  
կաթսա էր օգտագործում՝ երեք գալոն կամ ավել տարողությամբ:

Նախապես մեկ գալոնի շափ թթվի ջուր էր լցնում մեջը, և կես  
գալոն ջուր, քանի որ եփելու ընթացքում հենց այդքան հեղուկ էլ  
կգոլորշիանար: Այդ հյուսթի մեջ դրվում էին երեք-չորս ֆունտ գա-  
ռան մսի ոսկրոտ խոշոր կտորներ: Գառան միսը կես ժամ կամ մի քիչ  
պակաս եփելուց հետո մայրս վրան ավելացնում էր երեք կամ չորս  
ֆունտ թթու կաղամբ և մի բաժակ նախօրոք լվացած կորկոտ: Կորկոտը  
կարծեմ գարին է, բայց այնքան էլ վստահ չեմ: Կորկոտը եփվում էր,  
ուռչում, ինչպես որ պահանջվում էր այդ ճաշի համար: Այնուհետև  
մայրս կտրտում էր վեց-յոթ լոլիկ, դնում կաթսայի մեջ, մարմանդ կրա-  
կին: Մեկ ժամից մի քիչ ավել եփելուց հետո վերջապես ճաշը պատ-  
րաստ էր: Եթե ամբողջը այդ օրը չէր ուտվում, ապա հաջորդ օրն ավելի

համեղ էր լինում: Հարկավոր էր ուտել տաք-տաք: Հատկապես լավ էր ուտվում ձմռանը:

(Շերվուդ Անդերսոնն իր «Պատմություն պատմողի պատմության» մեջ գրում է, թե կար ժամանակ, երբ ամեն օր ինքը ստիպված էր լինում կաղամբի ապուր ուտել, քանի որ տեղացի խուլիգանները կաղամբ էին շարտում նրանց տան դռներին, և նրա մայրը, միտումնավոր, անարգանքից վիրավորվելու փոխարեն հավաքում էր այդ կաղամբը և ճաշ պատրաստում: Այդ պատմությունն ինձ դուր եկավ):

Գառան գլուխը եկում էին մեծ քանակությամբ ջրով, բայց եղբայրս շէր ուտում, քանի որ շէր կարողանում հանդուրժել եփած գառան գլխի իրեն ուղղված հայացքը: Այս ճաշը, որ կոչվում էր փաշա, նույնպես Բիթլիսի գյուղացիների նախընտրած ճաշերից էր: Բացի այն, որ գառան գլուխը սխտորով էր եփվում, ուտելու ժամանակ էլ ավելյացնում էին ջրի մեջ արուված սխտոր և ստաղվում էր սուր համ ունեցող կերակուր, արգանակը շատ թանձր էր, իսկ սխտորը՝ այրող: Գյուղացիները լավորաբար ան ուտում էին եփրակի առավոտյան, որպեսզի մարսելն մինչ ևրեկո 'ս գիշերը հանգիստ քնեին:

Մեր տանը միշտ թխել են ամեն տեսակի հայկական հաց՝ գրտնակած, տափակեցված, սավարաթղթից էլ բարակ հաց կամ լավաշ, բաղարջ կոչված հացը, մեջը ահագին յուղ կամ որևէ տեսակի ճարպ պարունակող հաց, որ գաթա էր կոչվում:

Հաց թխելու օրը մայրս շատ վաղ էր արթնանում և իսկույն գործի անցնում: Նա սիրով մի լավ կրներ ձմռանը, ևրը նկուղներում միրգ մթերելու կարիք չկար, բայց նրա կարծիքով հացը պետք է թխվեր վաղ առավոտյան, և նա զարթնում էր առավոտյան ժամը հինգին, ամառ լինելը թե ձմեռ և գործի անցնում: Երբ բոլորս սոքի վրա էինք լինում և նախաճաշելու պատրաստ, մորս աշխատանքն օրդեն ավարտված էր և մի քանի ժամ տունը լցված էր լինում նոր թխված հացի թարմ բուրմունքով և հաճելի ջերմությամբ: Երբ նստում էինք ուտելու, նշում էինք Հաց թխելու օրը մի ուտելիրով, որը կոչվում էր Թաղա հաց կամ Նոր հաց. ահա թե ինչպես է այն պատրաստվում: Վերցնում եք մի կտոր հացի խմոր, տափակեցնում և թեթ թավայի մեջ յուղով կամ կարագով տապակում: Մի քանի բոպեից նրա մի կողմը կարմիր կեղևով է պատվում: Շուտ տվեք, որ մյուս կողմն էլ տապակվի: Այս ամենի համար ձեզնից կպահանջվի ընդամենը վեց բոպե: Այդ հացի հետ թեյ խմեք: Միայն թե՛յ: Կակաոն կամ սուրճը և կամ որևէ այլ բան նրա համը կփչացնեն: Տաք, բուրումնավետ, զովացնող, թույլ թեյ, ինչպիսին



խմում են բոլոր թեյ գործածող ժողովուրդները, բացի անգլիացիներից, որոնք թեյին սուրճի պես են վերաբերվում և այն կաթով են խմում:

Որպես տապակած մսեղեն հարմար էր գառան թիակը, բուդը, կուրծքը, որը արտակարգ համեղ կերակրատեսակ է, շատ տաք կամ սառը վիճակում, որովհետև որոշ դեպքերում երկրորդ անգամ տաքացնելուց համը կորչում է: Իսկ լցոնում են գառան կուրծքը, հիմնականում բրնձով, ավելացնելով ինչ-որ կամենան՝ ծիրանի շիր, շամիչ, շոքացրած կամ թարմ անանուխ, մանր կտրտած սիրտ և լյարդ, մսի մանր կտորներ, մի խոսքով այն ամենը, ինչ չպետք է գուր տեղը դեն նետվի և շարժե առանձին-առանձին պատրաստել: Ապահովության համար նույնքան միջուկը լցոնելը արժե նախապես բրինձը եփել մոտ տասը րոպե, որպեսզի նա իր արժանի տեղը գրավի տապակվող ճաշի մեջ:

### Միլիոնատերեր

Սա միայն չնչին մասն է այն ամենի, ինչ մենք սովորաբար ուտում էինք: Չնայած դրան, ես ու եղբայրս հակված էինք մտածել, որ մեր կերածն ամենևին առաջնակարգ չէ: Մենք չէինք էլ պատկերացնում, որ աշխարհի ամենահամեղ ճաշերը հենց մեր տանն ենք ուտում, ընդ որում պիտի հասկանաք, որ խոսքը միայն հիմնական ճաշատեսակների մասին է: Հապա ի՞նչ ասեմ տոնական ճաշերի մասին: Բանն այն է, որ մենք ուտում էինք և լավ էինք ուտում, բայց ուզում էինք մեր սնունդը էլ ավելի բազմազան դարձնել: Ամառը մայրս Գուգենհայմի մոտ էր աշխատում, թուզ էր փաթեթավորում, արտաժամյա աշխատանքը շատ էր, համապատասխան հավելավճարով, և այդ օրերին նա ուշ էր տուն վերադառնում, պատահում էր՝ երեկոյան տասին կամ ավելի ուշ, ուստի մեզ թույլ տվեց միասին ընթրել քաղաքի որևէ ռեստորանում: Իհարկե, ինքնին հասկանալի է, որ շափավոր դներով և ողջամիտ տության սահմաններում: Մենք էլ էինք այդ հասկանում, քանի որ հենց ինքներս էինք որոշել շանցնել այդ սահմանները և ողջամիտ լինել:

Մեր մտքով չէր էլ անցնի գնալ մի այնպիսի շքեղ ռեստորան, որտեղ վեց կերակրատեսակից բաղկացած ճաշը կարժենար մոտավորապես քսանհինգից քառասուն սենթ: Հավանաբար, մեշ թույլ չէին էլ տա մտնել նման ռեստորան, ուստի և մենք որևէ էժան ռեստորան փնտրելով, վերջապես ընտրեցինք Քեռն սթրիթի վրայի այն ռեստորանը, որը գտնվում է Ջեյի և Վան Նեսի միջև: Ռեստորանի տերերն ու խոհարար-

ներր շինացիներ էին, բայց ճաշերը գուտ ամերիկյան էին, հինգ կերակրատեսակը տասը սենթ՝ սիրած ռեստորանը այն օրավարձու բանվորների, որոնք լավ գիտեին փողի գինը: Այստեղ ոչ մի առանձին սեզան չկար, միայն մի ընդհանուր ճաշասեղան-վաճառասեղան:

Երբեք չի մոռացվի, թե ինչպես մենք առաջին անգամ ներս մտանք, ևրկու ազատ տեղ գտնելով, նստեցինք և սկսեցինք սպասել մեր առաջին ռեստորանային ճաշին:

Մինչ եղբայրս ճաշացուցակ էր փնտրում, ինչպես ընդունված էր մեր տեսած կինոներում, շինացի մատուցողը վալեվազ երկու թաս ապուր դրեց մեր առջ: Ջրալի մի բան էր, բայց եղբայրս շատ հավանեց, իսկ երրորդ գրալից հետո ես էլ ընտելացա: Հետո բերեցին շոգեխաշած ինչ-որ միս, ըստ էրևույթին՝ կատվի միս, բայց մենք ռեստորանում էինք, մեղ սպասարկում էին, և մենք սոված էինք, ուստի հաճույքով կերանք այդ շոգեխաշած կատուն, հետո էլ սալաթի փոխարեն ևրեք կտոր բաղուկ: Հետո բերին աղանդերը՝ հուցի պուդինգ, որի միջի հացը դեռևս պուդինգ չէր դարձել: Մենք զեռ սրբանոցից լավ հիշում էինք իսկական սշուդինգի համը, այնպես որ դժվար չէր գլխի ընկնել, որ սա իսկական պուդինգ չէ: Վրաս բաբակ շերտով կարմիր, քաղցրավուն ինչ-որ բան էր քսած: Մենք դա էլ կերանք, լուռ ու մունջ, մեր շուրջը գտնվող բանվորների սևս: Վերջապես, թեյ կամ սուրճ ընտելու հնարավորություն ստացանք: Կարծեմ, ես կաթ խնդրեցի, բայց շինացին արագ-արագ ասաց — «Կաթ չկա, կաթ չկա սուրճ, թե՞ թեյ»:

Մենք թեյ վերցրինք, վեր կացանք, վճարեցինք մեր տասսենթանոցները, մի-մի ատամփորիչ դրեցինք բերաններս և հայտնվեցինք Քեոն սթրիթում, որպես «Փարլամաունթ Ֆիլմից» դուրս եկած մի դուլզ կերպարներ:

Մենք գովում էինք ճաշը, փառաբանում և զարմանում էինք, թե ինչպես է շինացիներին հաջողվում նման մի ճաշ պատրաստել և այն էլ ընդամենը տասը սենթով: Հաջորդ երեկո, երբ բոլոր թերթերը վաճառեցինք, ժամը իննի կողմերը նորից այնտեղ գնացինք և կերանք նույն ճաշը, այն տարբերությունով, որ այս անգամ մեր կերածը շոգեխաշած կատվի փոխարեն մի այլ բան էր՝ երևի շոգեխաշած շուն: Մենք նորից գովեցինք ճաշը և տուն գնացինք երեկայելով, որ միլիոնատեր ենք, աշխարհի տերը և ռեստորանների մշտական հաճախորդ:

Այնուհանդերձ, ռեստորանային մեր շորրորդ երեկոյից հետո ես ասացի:

— Հենրի, արի էլ շուտենք այդ տասը սենթանոց ճաշը, դնանք տուն ու ինքներս մի բան պատրաստենք:

Հենրին հիացմունքով ընդունեց իմ առաջարկը, քանի որ նա էլ էր զզվել այդ ճաշերից:

Այսպիսով մենք վերջ տվինք ճոխ կյանք վարելու մեր վաղաժամ փորձին և գնացինք տուն: Տունը լի էր ուտելու համար պիտանի ամենատարբեր մթերքներով:

Հենրին բլղուրի փլավ պատրաստեց, իսկ ես՝ սալաթ. մենք նստեցինք ու մի լավ կերանք, իսկ քույրերս մեր շուրջն էին պատվում և ասում, որ այդ ամենը իրենք ավելի լավ կարող էին անել, և այսուհետև եթե մենք էլ չպիտի գնանք քաղաք ընթրելու, նրանք ամեն ինչ կպատրաստեն նախքան մեր գալը: Բայց մենք ասացինք, որ նրանք հեռու մնան, քանի որ մենք ինքներս զուլս կհանենք այդ գործից: Նրանք երկուսն էլ աշխատում էին, մեծը՝ Գոթշուլքի մոտ որպես քարտուղարուհի, իսկ փոքրը՝ Վուլփորթի խանութում: Երկուսն էլ հոգնած էին տուն գալիս, և մենք ուղում էինք, որ նրանք հանգիստ առնեն նվազելով ու երգնելով, մինչ մենք ճաշ կպատրաստեինք:

Երբ այդ օրը մայրս տասն անց կեսին տուն եկավ, տեսավ Հենրիի եփած փլավով թավան: Թավայի մեջ մի քիչ բլղուր էր մնացել: Մայրս նստեց, փլավի վրա մածուն ավելացրեց և հարցրեց.— «Ո՞վ է եփել այս բլղուրը»:

- Ես,— պատասխանեց Հենրին:
- Որտե՞ղ ես սովորել էսպիսի համեղ բլղուր եփել:
- Հենց այստեղ: Շատ հեշտ է:

Եվ իրոք ճիշտ այդպես էր, որ կար: Պարզապես պիտի լավ սոված լինեիր և փոքր-ինչ ձեռներեց:

Մի անգամ էլ մենք մեկ գոլար և իննսունհինգ սենթ վճարեցինք պաղպաղակ պատրաստող մեքենայի համար, և նորից վրիպեցինք: Գլխացավանքը շատ էր, իսկ ստացվածը իսկի պաղպաղակի նման չէր... և մենք նորից վերադարձանք մեր լիմոնադին ու սառը ձմերուկին:

Գալով ինձ, ապա ինձ համար աշխարհի ամենահամեղ ուտելիքը, հատկապես ամռան շոգ երեկոներին, սառը խաղողն է, սովորական հացը, սպիտակ պանիրը, անանուխը, կանաչ պղպեղը, կանաչ սոխը, լոլիկը, վարունգը և պաղ ջուրը:

### Բիրիսցի Արմենակին

Այս տարվա սկզբին ես այցելեցի քո շիրիմին, որը գտնվում է Կալիֆոռնիայի Սեն-Ջոզ քաղաքի երկաթգծի կողքի գերեզմանոցում, և համարակալված այդ փոքրիկ հողակտորի մոտ կանգնած հիշեցի իմ առաջին այցելութունն այստեղ՝ քո կրտսեր եղբոր հետ:

Քառասուն տարի առաջ էր, երբ ես տասնյոթ թև տասնութ տարեկան էի, իսկ նա՝ երեսունյոթ թև երեսունութ: Քո եղբայրը լաց եղավ, և ես իմ մեծ բերանով, որը ժառանգել եմ մեր գերզաստանի մյուս ճյուղից, քո կնոջից, իմ մորից, մեր բնտանիքի բարձրաձայն կողմից, ասացի. «Ինչո՞ւ ես լալիս, նա այստեղ չէ»:

Եվ ես ծիծաղեցի ամառային այնպիսի հոյակապ մի օր նման մի վայրում գտնվելու հաճույքից, որովհետև այնքան լավ էր ողջ լինել, և որովհետև ես չէի հավատում մահվան, չէի կարող հավատալ. չէի հավատում, օրինակ, որ դու մահացել ես կամ թե որևէ մեկը երբևիցե մահացել է:

Քո եղբայրը ցնցվեց իմ այդ ակնարկից ու ծիծաղից և, չկարողանալով հստակ խոսել, քանի որ աշխատում էր զսպել հեծկլտուքը, ասաց. «Հապա ո՞ւր է նա»:

Եվ սրանով նա գործը ավելի վատացրեց, որովհետև իրեն հասուկ լրջությամբ և պարզությամբ Միհրանը միշտ տալիս է այնպիսի հարցեր, որոնք ծիծաղելի են ուրիշների համար:

— Օ՛, շատ տեղերում, — ասացի ես, — ոչ ոք չի ավարտվում իր գերեզմանափոսում, միայն նրա ոսկորներն ու փոշին են ամփոփվում այնտեղ: Մարդը մնում է այնտեղ, որտեղ եղել է, ծնվել, անցկացրել մանկությունը և պատանեկությունը: Նաև մնում է այնտեղ, որտեղ ճամփորդել է՝ գնացքներում և նավերում, և նա մնում է այն գրքերում, որ կարդացել է: Ես ունեմ իմ հոր գրքերը. նա իր գրքերի բոլոր էջերում է: Ես այստեղ եկա միայն տեսնելու, թե որտեղ են հանգչում նրա ոսկորները: Իմ հայրը մեռած չէ: Ես այստեղ եմ, հետևաբար նա ևս այստեղ է: Իհարկե նման տեսությունները վիճելի են, բայց դա հարցի ուրիշ կողմն է:

Երկար ժամանակ ես հիշում էի ճանապարհի և երկաթգծի կող-

\* Հատվածներ նույնանուն գրքից:

քին, ծառերի տակ, կանաչի մեջ գտնվող այդ փոքրիկ տարածությունը։  
Ես չէի մտածում կամ զգում, թե՛ «Ահա, թե որտեղ է իմ հայրը», կամ՝  
«Ահա, թե որտեղ են հանգչում իմ հոր ոսկորները», և կամ նման մի  
բան։ Ես միայն հիշում էի, որ եղել եմ այստեղ։

Որպես մի փոքրիկ տղա, որ սկսել է ջանք թափել հասկանալու  
իրերը, ես հավատում էի, թե շուտով, մի օր, դու փողոցով քայլե-  
լով պիտի գայիր դեպի ինձ և գիտենայիր, որ ես քո երեք, շորս, հինգ,  
վեց, յոթ կամ ութ տարեկան որդին եմ։ Ես այս բանին շարունակե-  
ցի հավատալ մինչև տասնմեկ թե տասներկու տարեկան դառնալս։  
Ապա մոռացա այդ մասին։ Ոչ թե սկսեցի շահավատալ, այլ մոռացա  
այդ մասին, թողեցի, որ այդ միտքը հեռանա, և այդպես մոռացված էլ  
մնաց երկար ժամանակ։ Եվ Լույա, հանկարծ, այդ միտքը նորից սկսեց  
ինձ հաճախել, երբ ես արդեն շափահաս էի։

Ինձ միայն ծանոթ էին ծիծաղը, քաջառողջությունը, անասարկեօի  
վստու հույսունքը, տիվ և դիշեռ ամեն տեսակի ներքին և արտաքին շար-  
ժումները, ամեն տեսակի տեղատվություններ և մակընթացություններ։  
Ես սկսեցի ճամփորդել, հենց որ դրա համար բավարար դրամ ունե-  
ցա։ Բայց իմ առաջին ճանապարհորդության համար ինձ նյութապես  
օգնեց քո կրասեր եղբայրը՝ Միհրանը, որը իմ քսան տարեկան դառնալու  
նախօրեին, 1928 թ., ինձ փոխ տվեց երկու հարյուր դոլար, որպեսզի  
կարողանամ Գրեյհաունդ հանրակառքով նյու Յորք գնալ Ես, ամշաշա,  
հետո նրան վերադարձրի այդ դրամարը, բայց նա միշտ, հետադարձում ես,  
դրամ էր փոխ տալիս ինձ, նույնիսկ այն ժամանակ, երբ Լու սկսեցի  
իրենից քսան թե երեսուն անգամ ավելի վաստակել, և ես միշտ նրան  
վերադարձնում էի պարտքս, բացի մեկ թե երկու անգամից, երբ  
տարիներով ուշացրի վճարել և ի վերջո, կարծում եմ, նա ավելի շատ  
էր ինձ փոխ տվել, քան թե ես վերադարձրել եմ։

Տարիքս բավական առել էի, մոտավորապես այն տարիքում էի,  
որում դու մահացել էիր 1911-ին, երբ նորից սկսեցի հավատալ, որ  
դու փողոցով քայլելով գալու ու գտնելու էիր ինձ։

Կամ, ճիշտն ասած, հավատալուց ավելի, որ այդ պետք է պատահեր,  
սկսեցի հիշել, թե երկար տարիներ առաջ ինչպես էի հավատում այս  
բանին։ «Իմ հայրը,— մտածում էի այն ժամանակ,— պիտի անի այդ  
բանը, որովհետև իմ հայրն է. նա մահացած լինելու պատճառով հեռ-  
վում չի մնալու, որոնելու է մի հնար նորից ոտքի կանգնելու և փողո-  
ցով քայլելով, ինչ-որ տեղ գալու-գտնելու է ինձ, քանի որ իմ հայրն է։  
Այնպիսիք, ինչպիսիք որ մենք ենք, կանենք այդ բանը իմանալով հան-

գերձ, որ դա անհնար է, դա բնության օրենքի դեմ է, բայց իմ հայրը կանի այդ, և այնժամ ի՞նչ կ'մտածի աշխարհը: Ի՞նչ կասեն մարդիկ: Նըրանք կասեն. «Նա տասը տարի մեռած էր, հետո հետ եկավ, այնպես, ինչպես որ եղել էր և ոչ թե որպես ուրվական, ոչ թե իրեն նմանվող ինչ-որ մեկի կերպարանքով. հետ եկավ հենց ինքը՝ արտասանելու որդու անունը»: Ահա թե ինչ կասեն նրանք: Եվ այսպես շարունակվեց նույնիսկ այն ժամանակ, երբ ևս ման էի գալիս աշխարհով որպես ուրույն անձնավորություն, բարձրախոս և արագաշարժ, այնպես որ հասարակական վայրերում անծանոթ մարդիկ հետ էին քաշվում զարմանքով և երբեմն նաև վախեցած, ասես ես ինքս բարձրախոս և ծիծաղկոտ մեկ մարդուց ավելին լինեի:

Ասլա դեպքերը հաջորդեցին միայնց, և ևս նորից մոռացա այդ մասին երկար ժամանակ. Հիշում էի, բայց շատ ուշադրություն չէի դարձնում այդ հիշողությանը, որովհետև կամ այն այլևս չէր ազդում ինձ վրա, կամ էլ դեռևս չէի հասնել ըմբռնման մի նոր աստիճանի, թե ինչպես էր այդ պատահելու. դուցե պատահելու էր ավելի քան երեսուն տարի հետո: 1939 թվականին ևս դուրսի, որ Լախկին անխոնջ, անսպառ մարդը շեմ, ինչ-որ բան է կատարվել իմ ծիծաղի, իմ կատակների, իմ աղմուկի, իմ գնալ-գալու, ճանապարհորդելու, ուտելու, խմելու, հաճույքի, աշխատանքի, համբավի և դրամի հետ: Երեսուն տարեկան էի, երբ ուր էլ որ գնում էի, իմ մեջ նկատում էի ահավոր մի վիշտ: Գուցե պատճառն այն էր, որ նորից պատերազմ էր պայթել իմ գլխին: Ես մտածում էի. «Փողոցները հիմա շատ խառնակ են, որպեսզի իմ հայրը կարողանա հետ գալ, նա կկորչի այս խելագար աշխարհում, և եթե մենք հանդիպենք դեմ-դիմաց, նա չի ճանաչելու ինձ, նա բոլորից սարսափելու է, նույնիսկ ինձնից մահու շափ վախենալու է»:

Ես գտա մի Լրիտասարդ աղջիկ, ամուսնացա, և նա ծնունդ տվեց իմ որդուն. ես նայում էի նրան, հոտոտում նրան, լսում նրան և խոսում նրա հետ, և գլխումս ծաղեցին ինչ-որ պարզ մտքեր, մոտավորապես այսպիսի մտքեր. «Ահա նա, և շուտով ես տեսնելու եմ նրան փողոցով քայլելիս, և նա կանգնելու է ու խոսելու ինձ հետ, ճիշտ այնպես, ինչպես գիտեի, որ պիտի աներ: Ընդամենը ութ ժամ, կամ քիչ ավելի առաջ ծնված այս ծեր մարդը իմ հայրն է»:

Բայց ես բաց թողեցի այս միտքը, շմտածեցի, որ դա կարող է ճիշտ լինել, բոլորովին նույն բանը չէր, թեև դրանում ինչ-որ ճշմարտություն կար, որից լրիվ հրաժարվել հնարավոր չէր:

Պատերազմից հետո ես նորից տեսա իմ որդուն, նա երկու տա-

րեկան էր, բայց թվում էր շի ճանաչում ինձ, և ես էլ շեմ կարող ասել, որ իսկապես ճանաչում էի նրան: Կյանքի առաջին ամիսներին նրա լացն ինձ մտահոգում էր, որովհետև դա ուրիշ երեխաների իմ լսած լացին նման չէր:

Երբ ես Եվրոպայից վերադարձա գույլալած, շփոթված, հիվանդ, հուսահատ, թեև ողջ, բայց նույնքան մեռած, իմ որդին նայեց ինձ և սկսեց լաց լինել: Առաջին բանը, որ ես մտածեցի, հետևյալն էր. «Իմ խեղճ հայրն է, մահացած երեսունվեց տարեկանում, բայց հետ վերադարձած և ամբողջովին զայրացած: Նա մի՞թե ջղայնացել է ինձ վրա իրեն հետ բերելու համար: Արդյոք ես սխալ եմ գործել: Արդյոք ո՞ճի՞ր եմ գործել նրա դեմ»:

Մենք ամուսնավուծվեցինք, բայց մինչ այդ արդեն ունեի նաև մի դուստր, որ կանգնում էր և քայլում ւրդուս կողքին: Երանք մնացին իրենց մոր մոտ, իսկ ես սկսեցի մտածել. «Ինչպե՞ս են, ի՞նչ է պատահում նրանց, ինչպե՞ս են յուր զնում, արդյոք լավ են, լավ են լինելու»

Այդ ժամանակ ևս քեզնից մեծ էի: 1949 թվականն էր Բառասունմեկ տարեկան էի, բայց խորտակված, բուլորովին խորտակված, ամեն իմաստով. սակայն ոչինչ, դա միշտ պատահում է, կարող է յուրաքանչյուրին պատահել: Ինչքան ես գիտեմ, դա բուլորին պատահում է, բայց երբ քեզ է պատահում, դա նորից բուլորովին այլ է, դա սյն չէ, որի մասին կարող ես խոսել, դա քեզ ճնշում է, սպանում, և դու պետք է շատ տոկուն լինես և շատ բախտավոր, որպեսզի հաղթահարես այդ վիճակը:

Տարիներով ես շոնացի Սեն-Ջոզում գտնվող գերեզմանատունը, թեև քշում-անցնում էի նրա կողքի պարտապաշտ և հիշում քո շիրիմը ու մեկ-մեկ նայում այդ ուղղությամբ: Ես այդ մասին այլևս նախկին ձևով չէի մտածում, պարզապես քշում-անցնում էի, և ինձ հետևում էին կտրտված հիշողություններ, որոնք ջանում էին իրար գալ և նորից ամբողջանալ:

Այսպես շարունակվեց երկար ժամանակ: Երբեմն արթնանում էի ցնցումից, ասես մահից, ջանում էի ամեն ինչ տեղը բերել, հարցնելով. «Սպասիր մի րոպե, ո՞ւր եմ ես, ո՞ւր է իմ ժողովուրդը, ո՞ւր է իմ հայրը, ո՞ւր է իմ որդին»: Եվ ապա, քիչ-քիչ ուշքի էի գալիս, և ես հասկանում էի այն ամենը, ինչ յուրաքանչյուր կենդանի էակ հասկանում է, վեր էի կենում, մի սիգարետ վառում, բաժակը վիսկի լցնում, ներս էի քաշում ծուխը, կուլ տալիս վիսկին և ջանում մտածել:

Ժամանակ առ ժամանակ տեսնում էի իմ որդուն և նրա քրոջը, խոսում էի նրանց հետ, բայց մենք օտարներ էինք, ես, իսկապես, չէի ճանաչում նրանց, չէի ճանաչում քեզ և չէի ճանաչում ինքս ինձ:

Եվ ահա մի օր ես Նյու Յորքում 44-րդ փողոցից գնում էի դեպի 5-րդ պողոտա: Ես որոշել էի իմ որդուն իմաց շտալ, որ Նյու Յորքում էի լինելու, որովհետև նա շատ հաճախ չէր պատասխանում իմ նամակներին, իսկ երբ գրում էր, նրա նամակները օտարոտի էին թվում: Նամակներից մեկում նա նույնիսկ ասել էր, որ իմ նամակները իրեն տաղտուկ են պատճառում. ուստի ես այլևս չգրեցի նրան:

Երբ ես տեսա նրան 5-րդ պողոտայով քայլելիս, ճանաչեցի, որ իմ որդին է, բայց դա նշանակութուն շուներ, ես որոշեցի անցնել նրա մոտով և թողնել, որ ինքն էլ անցնի: Ի՞նչ կա որ, նման բաներ միշտ պատահում են: Ով ո՞ւմ հայրն է Որևէ մեկը մի որևէ ուրիշի հա՞յրն է: Աշխարհի՛ աչդ ամեն մարդու հոր գաղափարը չէ՞ արդյոք դա: «Հիմա նա տասնհինգ տարեկան է, մոտավորապես ինձ նման բարձրահասակ է, 5-րդ պողոտայով դեպի իմ կողմն է դալիս, բայց ես պիտի քայլեմ-անցնեմ նրա կողքով, ես կտեսնեմ նրան, բայց նա ինձ չի տեսնի»:

Եվ ապա մտածեցի. «Իրոք, ասես իմ հայրն է դալիս փողոցով, ինչպես միշտ հավատում էի, որ պիտի դար, միայն թե այժմ ես տեսնում եմ նրան, իսկ ինքն ինձ՝ ոչ, ուստի կարելի է կարծել, որ մարդկային բազմության մեջ մեկը կողքովդ անցավ, ահա ամենը, ահա թե ինչ է լինելու, և դա նույնիսկ ոչինչ»:

Ես մինչ քայլում էի, շարունակում էի նայել նրան, և երբ ընդամենը մեզ իրարից մոտ շոտս քայլ էր բաժանում, տասնյակ մարդկանց մեջ ես տեսա նրան, և նա ակնավ ինձ, և ես քայլեցի 5-րդ պողոտայով վե՛ր, իսկ նա՝ վար: Ես շփտացի, և նա շփտաց: Ես գլխով շարեցի, և նա գլխով շարեց: Ես շաղղվեցի և շմտահոգվեցի, որ նա չճուղվեց:

Եվ ահա պատահեց այ՛ն, ինչի մասին, որ ես երևակայել էի երկար ժամանակ, բայց ոչ ամբողջապես նույն ձևով:

Ես առաջ էի քայլում, երբ մեկը մարդկանց միջով վազելով եկավ ու սկսեց քայլել իմ կողքով և միևնույն ժամանակ գրեթե բղավեց. «Հա՛յր»:

Ես կանգնեցի, և նա նայեց ինձ և ասաց. «Ի սեր աստծո, հայր, դու իմ կողքով անցար, տեսար ինձ, բայց չկանգնեցիր: Երևի ես մտքերի մեջ էի, կամ նման մի բան, որովհետև հաստատ չգիտակցեցի, որ այդ դու ես: Մտածեցի, որ կարող է ուրիշը լինել: Ինչո՞ւ չկանգնեցիր, հա՛յր: Ինչո՞ւ ինձ հետ չխոսեցիր: Ինչո՞ւ անունս չտվիր»:



Ես ասացի. «Լսիր, տղաս, ւշո, ես տեսա քեզ, բայց դու ինչ-որ տեղ էիր գնում, և ես մտածեցի, որ պետք չէ քեզ կանգնեցնել, մաքովս շանցավ, որ հարկավոր է անունդ տալ: Հիմա ես գիտեմ, որ դու գնում ես ինչ-որ տեղ, ուրեմն գնա, որովհետև ես ևս պետք է գնամ»:

Ես բարկացած չէի, և նա տեսավ, որ բարկացած չեմ և հասկացավ:

— Կարո՞ղ եմ հյուրանոց գալ՝ քեզ մոտ:

— Ուղածդ ժամանակ:

Նա գնաց 5-րդ պողոտայով ցած, իսկ ես՝ վեր:

Տարիներով միշտ նույն հյուրանոցում էի իջևանում, և նա գիտեր այդ: Այդ նույն օրը, ժամեր անց, մոտավորապես գիշերվա տասնմեկին, նա զանգահարեց, և մենք խոսեցինք, ապա, մի ժամ հետո նա եկավ ինձ մոտ, մենք դուրս եկանք, քայլեցինք ու զրուցեցինք:

Գրանից անմիջապես հետո ես Եվրոպա մեկնեցի, և ապա ամեն տարի գնում-գալիս էի: Մեկ անգամ էլ, երբ նորից վերադարձել էի Սան Ֆրանցիսկո, գտա Սեն-Ջոզ քաղաքի պետական քոլեջի ինչ-որ անձնավորության կողմից ինձ հասցեագրված մի նամակ, որով հրավիրվում էի գնալ այնտեղ և խոսել: Եվ հանկարծ հիշեցի Սեն-Ջոզի գերեզմանատանը գտնվող փոքրիկ հողակտորը, և պատասխանելով նամակին, հայտնեցի, որ համաձայն եմ, երկու կամ երեք օրով կգնամ այնտեղ: Երբ ես Սեն-Ջոզ հասա, ուղիղ գնացի գերեզմանատուն, մտա գրասենյակ, մի տիկին նայեց արձանագրություններին և ինձ տվեց քո հողաթմբի համարը և բացատրեց ինչպես հասնել այնտեղ. Եվ ես գնացի և գտա քո շիրիմը, կանգնեցի ու նայեցի մուլախոտերով ծածկված կանաչին:

Ուղղակի ուզում էի այդտեղ կանգնել:

Ես հիշեցի քո կրտսեր եղբոր՝ Միհրանի հետ իմ առաջին այցելությունը այս վայրը, հիշեցի, թե ինչպես նա կանգնեց ու լաց եղավ, ու ես ծիծաղեցի:

Հայր իմ, այդտեղ կանգնած ժամանակս ես հիսունութ տարեկան էի, որդիս քսաներեք էր, քո կրտսեր եղբայրը մահացել էր մեկ տարի առաջ յոթանասունյոթ տարեկան հասակում, իսկ քո ոսկորները դեռևս երեսունվեց տարեկան էին: Ես հաստատ չգիտեմ, շեմ կարող երդվել, բայց հավատացած եմ, որ ինքս ինձ ասացի, կամ մտածեցի, կամ ղգացի. «Այո, հայրս մեռած է այնտեղ»:

Կարծում եմ, որ սխալվել եմ, բայց ինչ-որ մտածեցի, ասացի,

զգացի, կամ հաշտուցի, դրա նման մի բան էր, սակայն արտումս ես  
ցավ չէի զգում: Գուցե դա նրանից էր, որ ցավ չէի զգացել, երբ փոքր  
էի և հավատում էի, որ մի օր դու քայլելով պիտի գաս փողոցով ու  
գտնես ինձ և տաս իմ անունը: Այդպիսի բան երբեք չպատահեց, բայց,  
այնուամենայնիվ, ինչ-որ բան պատահեց: Հավանաբար դրանից շատ  
բան հասկանալ հնարավոր չէ, բայց մտածեցի, որ ավելի լավ է նշեմ  
այդ մասին, քանի նորից չեմ մոռացել:

### Հովակիմ Սարոյանին

Հիշում եմ այն գիշերը, որ անցկացրի Ֆրեզնոյի հյուսիսային մա-  
սում գտնվող քո խաղողի այգում, ուր եղբայրս՝ Հենրին և ես քեզ հետ  
գնացինք ձրովաբքով: Գիտեմ, որ Սեն Բենիտո պողոտայի համար  
2228 մեր տնից մինչև քո այգին ընդամենը շորս մղոն է, քանի որ  
վերջերս շատ անգամ կտրել-անցել եմ այդ ճանապարհը, բայց այդ  
ժամաճակ մեզ թվաց շատ ավելի երկար:

Հենրին և ես նստեցինք հետևում՝ ճամփորդների նման, իսկ դու  
նստեցիր առջևի բարձր նստարանին: Մենք լուռ էինք, գուցե այն պատ-  
ճառով, որ քո լեզուն հայերենն էր, իսկ մերը՝ անգլերենը, թեև մենք  
նույնպես կարողանում էինք հայերեն խոսել: Բայց հիմնականում  
մենք չէինք խոսում, որովհետև ուրախ էինք, որ միասին ենք և ճամ-  
փորդում ենք: Ամառային շոգ մի օր, հետմիջօրեի ուշ ժամին դու  
եկար մեր տուն և ասացիր մեր մորը. «Թագուհի, թույլ տուր, որ տղա-  
ներին տանեմ ազարակ, նապաստակի որսի կգնանք, կընթրենք, մեր  
երկրից բերած ձայնապնակներ կլսենք, իսկ վաղը նրանց հետ կբերեմ  
ճիշտ ժամանակին, որպեսզի հասցնեն եկեղեցի գնալ: Չեմ ուզում տուն  
գնալ մենակ»: Եվ մայրս ասաց. «Հովակիմ, եթե ուզում ես, որ նրանք  
քեզ հետ գան, տար նրանց»: Եվ այսպես, մենք դնացինք:

Դա 1917-ին էր, ճիշտ հիսուն տարի առաջ, գուցե այս նույն հու-  
լիս ամսին, և դու մենակ էիր քո այգում: Կինդ ու երկու որպիներդ  
Բիթլիսում էին, կամ նրա մոտերքում, և կամ հեռու նրանից, եթե,  
իհարկե՛ն, մահացած կամ սպանված չէին, եթե, իհարկե, Բիթլիսից դե-  
պի անապատ ճանապարհին ուրիշ բազմաթիվ մարդկանց նման չէին  
մեռել քաղցից ու ծարավից: Բայց նույնիսկ եթե կենդանի էին, դու  
նրանց մասին ոչ մի տեղեկություն չունեիր՝ ոչ իրենցից, ոչ էլ նրանց  
տեսած որևէ մեկից: Գուցե տղաները կենդանի էին, բայց շատ փոքր

լինելով՝ չէին հիշում, չգիտեին, թե ովքեր էին իրենք. նրանց տարել էին որրանոց և նոր անուններով կոչել:

Գիտեի, որ մենակ էիր: Եվ մի օր էլ, երբ մայրս խոսում էր ինչ-որ մեկի հետ, ես իմացա քեզ պատահածի մասին:

Գու եկար Ամերիկա աշխատելու և դրամ ուղարկելու քո կնոջը, որ պեսզի նա և երկու որդիներդ էլ կարողանան գալ, բայց այլ բան ստացվեց: Գու դրամ և նամակներ ուղարկեցիր, և կինդ պատասխանեց, և հետո նա շպատասխանեց. անցավ մի ամբողջ տարի, ապա էլի մի տարի, և դու չգիտեիր, թե ինչ է պատահել: Գու ինչ-որ բան կոհում էիր, բայց հաստատ չգիտեիր: Ես քեզ միշտ տեսնում էի միայնակ, նույնիսկ «Արաքս» սրճարանում, որ միշտ լիքն էր լինում թուղթ խաղացողներով: Հենց առաջին անգամ, երբ ես քեզ տեսա մեր հյուրասենյակում նստած՝ ումպ-ումպ սուրճ խմելիս, ես հասկացա, որ դու մենակ էիր, ուստի երբ դու ասացիր՝ «Զեմ ուզում տուն գնալ մենակ», ես գիտեի, թե ինչ էիր ուզում ստել, այնպես, ինչպես մի փոքրիկ սողա դա կարող է իմանալ, թե երբեք չի կարող այլ սասին արտահայտվել:

Քո կառքի հետևում նստած, դեպի քո խաղողի այգին և այնտեղ գտնվող քո փոքրիկ տունը գնալիս, ես մտածում էի, թե ամենից շատ ի՞նչն էր քո մենակության շարժառիթը, և ինձ թվում էր, որ պատճառը քո կողքին հայր շունենալը էր, որովհետև, կարծում եմ, որ մեզանից յուրաքանչյուրը մենակության իր անձնական պատճառները վերադրում է նաև ուրիշին: Քո հայրը և իմ մոր հայրը և դրայրներ էին, և ես գիտեի, որ մորս հայրը մահացել է Բիթլիսում և մեռնելիս ասել է մորս մորը. «Քո ընտանիքը հեռացրու այստեղից, գնա այստեղից: Գնա մի որևէ ուրիշ տեղ, բայց այլևս այստեղ չմնաս, եթե կարողանաս դասավորել՝ գնա Ամերիկա»:

Եվ, իհարկե, նա կարողացավ դասավորել, թեև այդ անելը հեշտ չէր Մարդիկ, որ ստուգում են փաստաթղթերը և ձեռքներին ռետինե կնիք ունեն, պետք է առանձին-առանձին կաշառվեին ոսկով, հետո պետք էր վճարել ճանապարհորդության համար: Նախ՝ Բիթլիսից էրզրում, որտեղ 1905-ին ծնվել է իմ եղբայր Հենրին, և էրզրումից Տրապիզոն, լեռնային նեղ կածաններով պետք էր գնալ ավանակով, հետո Տրապիզոնից Կոստանդնուպոլիս և այդտեղից Մարսել՝ նավով: Մարսելում հարկ է եղել, որ նրանք աշխատեն, որպեսզի դրամ ունենան Ֆրանսիայի վրայով շոգեկառքով Հավր նավահանգիստը հասնելու: Հավրում նույնպես աշխատել են, մինչև որ վաստակել են Նյու Յորք նավով ճամ-

փորձելու համար յուրաքանչյուրին հարկավոր դրամը: Այն ճանապարհորդութիւնը մի երկարատև խաշելութիւն էր. նրանք տեղավորվել էին նավի ներքնահարկում, ուր հարյուրավոր ընտանիքներ պատրաստում էին իրենց ճաշը և քնում հատակին բացված տեղաշորերում: Ճամփորդութիւնը հաջորդեց էլիզ կղզում բժշկական քննութիւն վախն ու սարսափը: Բոլորը քննութիւնից անցան բարեհաջող, բոլորը «բոնո» էին, բացի Լյուսիից, այսինքն՝ նույն ինքն մորս մորից, և ձեռքին ռետինե կնիք ունեցող մի մարդ ասաց, որ նա պետք է վերադառնա Բիթլիս: Ամբողջ ընտանիքը իրար անցավ: Դրութիւնը թվում էր անելանելի, բոլորը հուսահատվել էին, իսկ տարեց կինը, որն այն ժամանակ հազիվ քառասուն տարեկան էր, ասաց. «Մի հուսահատվեք, աստված մի ելք ցույց կտա»: Հաջորդ օրը նրա աչքերը նորից քննվեցին, և ուրիշ մի անձնավորութիւն ռետինե կնիքով կնքեց Լյուսիի թղթերն ու ասաց. «բոնո», ասես այդ բառը ոչ մի իմաստ, ոչ մի նշանակութիւն չունենար. իսկ այդ բառով ամբողջ ընտանիքը շարկվեց իր ուժից, հեղինակութիւնից, խելքից, իմաստութիւնից և հավատքից:

Ի՞նչն էր քեզ մղել առանձնութիւն: Ես շարունակեցի միտք անել, թե ինչո՞ւ էինք մենք բոլորս միայնակ, նույնիսկ այն ժամանակ, երբ մեզանից շատերը միասին էին լինում, և ես զգացի, որ դրա պատճառը, գոնե մասամբ, իրենց ձեռքին ուժ, թղթեր, ռետինե կնիք ունեցող մարդիկ են, օրենք և կարգ ու կանոն գործադրողները, նման մարդկանցով լցված աշխարհը: Նրանք ահաբեկում են մարդկանց, նրանք մարդասպաններ են:

Քո այգին հասնելուց հետո դու մեզ տարար քո կովի մոտ, կթեցիր ջրան և մեզ հրավիրեցիր թարմ կաթ խմելու: Կաթը գուլ էր և մեզ հաճելի թվաց, բայց մի ժամ հետո, երբ մենք գնացել էինք նապաստակ որսալու, Երկուսս էլ սրտներս հետ տվեցինք: Մենք նկատեցինք մի գուլջ խոշոր նապաստակ, բայց շկրակեցինք, որովհետև շատ հեռու էին:

Այս վերադարձանք քո փոքրիկ խրճիթը, և դու մեզ լավ ընթրիք մատուցեցիր, որ բաղկացած էր հյութեղ լուխից, կարմիր պղպեղից, վարունգից, տափարակ հացից ու մածնից: Հետո նստեցինք քո հյուրասենյակում, և դու մեզ համար քո լարովի ձայնագրի վրա հայկական ձայնապնակներ նվագեցիր: Հպարտ, գեղեցիկ ու տխուր երաժշտութիւն էր: Ապա մեր Երկուսի քունը տարավ, և դու մեզ անկողին դրեցիր:

Հովակիմ, քո տանը քնելը այնպիսի մի բան էր, որ երբ առա-

վոտյան զարթնեցի, շարողացա հասկանալ: Իմ քթածակերում վշտի և մենակության հոտ կար, և շէի կարողանում հիշել, թե որտեղ էի, բայց գիտեի, որ իմ սեփական տանը, իմ սեփական անկողնում չեմ: Հագնվեցի, դուրս եկա և թզի մեծ ծառի վրայից թուզ կերա: Հետո դուրս եկավ իմ եղբայր Հենրիին և նույնպես թուզ կերավ: «Ուրիշի տանը քնելը տարօրինակ է, չէ՞», — ասաց նա: Եվ ես ասացի. «Ի՞նչ էլ ես զգացել այդ բանը»:

Շուտով մենք տեսանք, որ դու գալիս ես այն ձորակից, որտեղ ջրում էիր քո այգիները, և դու անգլերեն ասացիր. «Հապա, տղաներ, գնանք սնվելու»: Դու մեզ համար թեյ պատրաստեցիր, խմոր եփեցիր, այսինքն նոր հաց, որի մեջ սպիտակ պանիր դրեցինք, կերանք խաշած ձու, բարակ կտրտած բաստուրմա, ազատքեղ, անանուխ, թարմ լոլիկ և երկարությամբ կտրտած վարունգ:

Հետո դու քո ձին լծեցիր կառքին, և մենք ճանապարհվեցինք տուն: Ահա բոլորը, Հովակիմ: Բայց դա իմ կյանքի մեծ փորձառություններից մեկն էր: Մի՛ հարցրու, թե ինչու: Պարզապես դա այդպես է: Կարծում եմ, որ պատճառը քո բարությունն ու մենակությունն էին: Հաստատ կարող եմ ասել, որ պատճառը կովի թարմ կաթը չէր, որ թունավոր էր:

Այնուհետև մի քանի տարի ևս ես քեզ տեսա, քաղաքում, և ապա ամեն ինչ դարձավ հիշողություն:

Հույս ունեմ, որ որդիներդ կենդանի պրծան, նույնիսկ եթե կորցրին իրենց անունները: Կարծում եմ, որ ինչ անուն էլ որ կրեն, նրանք լավ մարդիկ կլինեն:

## Վահան Մինասյանին

Երբ ես մտածում եմ, թե ինչքան շատ ժամանակ է անցել մեր վերջին հանդիպումից հետո, դժվարանում եմ հասկանալ, որ դեռևս ես ինքս այստեղ եմ, այս աշխարհում և հիշելով քեզ հետ իմ առաջին հանդիպումը, մտածում եմ, թե ով էիր դու, ինչպիսին էիր, որովհետև տակավին ես չեմ կարողանում շղարմանալ քո արտաբերած խոսքերիդ համար, որոնք իմ սիրտը երախտագիտությամբ են լցրել:

1917 թվականին ես մեկ արժաթե դուլար վճարեցի գնելու համար նիկելապատ մի կրծքանշան, որը պարտավոր էր կրել «Ֆրեզնո Իվնինգ Հերալդ» թերթը վաճառող ամեն մի տղա: Դա ոստիկանի կրծքա-

նշանին նման էր, թեև ոչ մի փմաստ շուներ: Ես դա գնեցի դժկամությամբ, կողոպտված լինելու մի զգացումով: Նրա վրա փորագրված էին մի քանի բառեր և մի թվանշան, որոնք, դատ իմ կարծիքի, «Ֆրեդնո Իվնինգ Հերալդ» բառերն էին և թերթավաճառի համարը, այս գեպքում № 8, թեև դա կարող էր մի որևէ ուրիշ թիվ լինել, որովհետև կրծքանշանները վաճառելու հիմքը հետևյալն էր՝ ով որ առաջինը ներկայանա, կստանա առաջին համարը: Ես դա ամրացրի իմ բրդյա վերնաշապիկի վրա, որ գնել էի Ուեսթըրն Սեյլս կոշվող բանակային ապրանքների մնացորդների խանութից: Ես վերցրի իմ թերթերը և վաղեցի քաղաք: Այդ օրերին ես դեռևս շունեի իմ անկյունը, այս ու այն կողմ վազելով վաճառում էի թերթերս, որտեղ կարող էի: Մերթ ընդ մերթ նայում էի իմ կրծքանշանին, բայց քիչ հետո մոռացա դրա մասին:

Երբ ես վաճառեցի իմ բոլոր քսան թերթերը և կես դոլարի շահույթ ապահոված պատրաստվում էի տուն գնալ և ճաշել, հանկարծ նկատեցի, որ կրծքանշանս չկա...

Ինչ-որ տեղ ընկել էր, ուստի փոխանակ տուն գնալու, ես սկսեցի քայլել այն տեղերով, ուր երկու թև երեք ժամ վազվզել էի: Փնտրեցի կրծքանշանս, բայց չգտա: Ես նորից նույն հետքերով սկսեցի որոնել իմ կրծքանշանը, մտածելով, որ եթե իմը չգտնեմ, կարող է մի ուրիշի կորցրածը գտնեմ, որովհետև, եթե ես կարող էի կորցնել իմ կրծքանշանը, ինչո՞ւ ուրիշ մի տղա էլ չէր կարող իրենը կորցնել:

Ես զգում էի, որ անպայման մի բան պետք է գտնեմ, որովհետև մեկ դոլարը ահագին դրամ էր, և այդ օրերին որևէ տեսակի կորուստ ինձ թվում էր շափազանց դժբախտ մի պատահար: Ես ամբողջ քաղաքը ոտքի տակ տվեցի, փնտրելով կամ իմ կորչրած կրծքանշանը, կամ մեկ ուրիշի, և կամ էլ, որևէ կորած բան:

Երկար ման եկա, բայց ոչինչ չգտա, ոչ մեկ սենթ, ոչ մեկ մեխ, կամ կոճակ: Եվ այս բանը ինձ ջղաձնացրեց: Ես այնքան աշխատել էի կես դոլար վաստակելու համար, ապա ավելի շարձարվել էի կորած կրծքանշանը կամ ուրիշ որևէ բան գտնելու համար, բայց ոչինչ չէի գտել: Սոված էի, ծարավ, հոգնած ու ջախջախված, թեև այդ օրերին այս բառի իսկական իմաստը չէի կարող ըմբռնել: Ես պարզապես պարտված էի և ատում էի պարտված լինելը:

Երբ տուն հասա, մայրս հասկացա՞վ, որ ինչ-որ բան է պատահել, ուստի ես նրան պատմեցի ամեն ինչ: Ես նախեց ինձ ու իմ սողն՝ սեղանին դրեց խաղողի թփով դրվա: Չնայած շափազանց սոված էի,

բայց շկարողացա ուտել: Երբ սեղանից վեր կացա՝ մայրս հարցրեց՝ «Այդ ի՞նչ պատահեց»:

— Ես պետք է նորից քաղաք գնամ և փնտրեմ իմ կրծքանշանը, — ասացի ես:

— Բայց դու արդեն փնտրել ես:

— Պիտի փնտրեմ այնքան, մի՞նչ և գտնեմ, — ասացի ես:

Ես քաղաք վազեցի և նորից սպսեցի իմ որոնումները, ամեն կողմ նայեցի, հետզհետե ավելի ու ավելի ջղայնանալով, բայց ոչինչ չգտա:

Դանդաղ քայլելով տուն վերադարձա, ահավոր հոգնած էի, բայց ներս չմտա: Նստեցի մուտքի առիճանների վրա՝ անիծելով իմ բախտը, ջանալով հասկանալ, թե ինչպես և ինչու էր այդ պատահել, և ինչու ես շկարողացա գտնել իմ կրծքանշանը այդքան ուշագիտ որոնումներից հետո:

Հենց այդ պահին դու, դուրս գալով և փողոցի վրա գտնվող քո տնից, քայլեցիր Սեն Բենիտո փողոցն ի վտար, դու, որ իմ մորաքրոջ ամուսինն էիր և հայրն էիր իմ Բոբսի, Զավեն, Հելեն, Արշի, Գրրոգ և Ստելլա զարմիկների: Ես ամաշում էի որևէ մեկի աչքին երևալ իմ այդ հոգեվիճակով, բայց չափադանց շատ էի հոգնած տեղիցս վեր կենալու և հետնաբակ գնալու համար: Եվ այսպես, դու տեսար ինձ, իմ քաղցածություն և բարկություն արտահայտող դեմքով:

— Ի՞նչ է պատահել, ասա ինձ, — հարցրիր դու:

Դու մեր ընտանիքի միակ շափառաս անդամն էիր, որ ինձ հետ խոսեցիր որպես հավասարը հավասարի հետ: Ուստի և ես ամեն ինչ պատմեցի քեզ այնպես, ինչպես եղել էր: Եվ այստեղ է, որ դու զարմացրիր ինձ:

— Ընդամենը ա՞յդ է եղածը, — ասացիր դու, — մի կրծքանշան, որ մեկ դուլար արժե: Վճարել ես և անմիջապես էլ կորցրել: Դա ի՞նչ է որ... Հոգիդ ողջ լինի:

Եվ հանկարծ ամեն ինչ իր տեղն ընկավ, խաղաղվեց:

Այո, ես կորցրել էի մի կրծքանշան, որ մեկ դուլար արժեք, բայց շնորհիվ քո այդ խոսքի և այն ասելու ձևի ես հասկացա, որ պատահածը շնչին մի բան է: Կարևորը ես էի, իմ ողջ լինելն էր, և ինչպես դու ասացիր՝ իմ հոգու ողջությունը:

Մինչ այդ ինձ ոչ ոք նման իմաստալից և օգտակար խոսք չէր ասել:

Մի քանի տարի հետո դու հեռացար աշխարհից, մոտավորապես այն տարիքին, երբ հայրս էր մահացել, երեսունվեց տարեկան հասակում:

Եվ հիմա, թեև ես քեզնից և հորիցս քսան տարով մեծ եմ, չգիտեմ, թե ինչպես գնահատեմ ամբողջ անցած ժամանակը և ինձ պատահած ամեն ինչ, երբ ես այնուամենայնիվ փողոցներում եմ, ոչ միայն Ֆրեզնոյի, այլև ամբողջ աշխարհի, և ես ոչ թե անպայման փնտրում եմ ինչ-որ կորած բան, կամ ուզում եմ գտնել որևէ բան, բայց ապրում եմ, գնում-գալիս և նայում շուրջս:

### Պրոֆեսոր Գալֆայանին

Ով դու փոքրիկ, ծեր, անմահ, անծանոթ, կարճիկ մարդ, թող որ ես պատմեմ քեզ քո մասին:

Ո՞վ էր այն մարդը, որ քայլում էր Վեն Նես պողոտայով, կեղծ իշխանի տեսք ընդունած, ասես աշխարհի մի անհայտ մասում գտնվող երևակայական մի վայրից դուրս ընկած: Նա ուներ սև բեղեր, սև այծամորուք, որոնք ասես կեղծ լինեին, եղեգսացուպ, զանգապաններ, բոհեմական սև գլխարկ, սև կոստյում, սև թիկնոց: 1918 թվականին ո՞վ կարող էր լինել այդ մարդը, որը գալիս էր ուղիղ դեպի այն անկյունը, որտեղ ես վաճառում էի «Իվնինգ Հերալդ» թերթը: Մինչ այդ Ֆրեզնոյում որևէ մեկը չէր տեսել նման մի մարդու, էլ ուր մնաց, թե հայ մարդու: Ո՞վ էր նա, ի՞նչ էր նա, ի՞նչ էր անում նա խաղողների, շամիչների, դեղձերի, ծիրանների, թզերի, ձիթապտուղների, նոնների, նուշերի, կաղինների, խաղողի այգիների, մրգաստանների, եկեղեցիների, սրճարանների, հիշողությունների, ցամառան, վշտերի և կատաղության այս հեռավոր քաղաքում: Նա քայլում էր կայտառ, ձեռնափայտը շարժելով, տեղովը սև կրակ, և սև, բոցավառ աչքերով գալիս էր ուղիղ իմ կողմը:

Այդ դո՛ւ էիր, անշուշտ, մի ձեմասեր մարդ, որ եկել էր Փարիզից, եղել նշանավոր Վենսան դ՛էնդիի փայլուն աշակերտը և եկել էր Ֆրեզնո՝ ստեղծագործելու, առաքելական եկեղեցում ղեկավարելու եկեղեցական երաժշտության երգչախումբը և հայրերին, մայրերին, նրանց որդիներին ու դուստրերին սովորեցնելու հայրենասիրական երգեր: Որոտաձայն մի խենթ, որն ուներ նույնքան բարձրադաղակ մի անուն՝ պրոֆեսոր Գալֆայան:

Անշուշտ նա հաջողության շհասավ, այդպիսի մի անձնավորություն տեղ շունի մեր պայքարող հասարակության մեջ, ամեն մարդ տեսնում էր, որ նա փքուն, սնափառ և հավակնոտ մի մարդ է, իսկ ես ի՞նչ



կարող էի անել, բացի նրան նայելուց և իմ արհամարհանքը արտահայտելուց:

Երբ դու ինձ մոտեցար, նայեցիր ինձ, շփոխադարձեցիր իմ արհամարհական հայացքին, միայն այնքան կանգնեցիր, որ ես նկատեի, որ դու տեսել ես ինձ և բարձր ձայնով ասացիր. «Գոռա՛, տղաս, դու հայ ես»: Եվ հեռացար, մտար նամակատուն, իսկ բոված կորեկ վաճառող ծեր Հաֆը իր մեկ առողջ աչքով, ինչպես նաև փողոցով քայլող բոլոր մարդիկ կանգնում և նայում էին քեզ:

Պրոֆեսոր, դու իսկապես բանահյուսությունից դուրս եկած և սխալ տեղ ընտրած մի մարդ էիր, սկզբից մինչև վերջ մի ոչ իրական մարդ, բայց և այնպես քո մեջ կար ինչ-որ վեհ, մեծ, մութ, խենթավուն, միայնակ և հուսահատորեն տխուր բան:

Չնայած քո տարօրինակ բարեին, և գուցե հենց այդ պատճառով, ես հակակրեցի քեզ: Թեև դու հայ էիր, բայց այդ էլ չազդեց ինձ վրա: Դու այն տեսակի հայերից չէիր, որոնց ես սիրում եմ: Կան զանազան տեսակի հայեր, որոնց ես չեմ սիրում, որոնցով չեմ հպարտանում կամ ուրախանում: Եվ նման անընդունելի բազմաթիվ հայեր կան նաև իմ սեփական ընտանիքում: Ես չսիրեցի քեզ առաջին իսկ հայացքից, փոքրիկ ծեր մարդուկ: Ինչի՞ համար էր քո այդ թիկնոցը: Քեզ ինչի՞ տեղ էիր դրել, քեզ որտե՞ղ էիր կարծում:

Ապա, հետզհետե, սկսեցին խոսել, թե ո՞վ էիր դու և որտեղի՞ց էիր եկել, և Հայկական քաղաքի բազմաթիվ երեխաներ գնում էին կարմիր աղյուսով սարքած եկեղեցին և ասում էին, որ դու նրանց սովորեցնում ես երգել, ճիշտ երգել: Ասում էին, որ դու վախեցնում ես նրանց քո բարձր ձայնով, սև դեմքով և աչքերով, բայց նաև խոստովանում էին, որ նրանք սովորում են երգել: Նրանք ասում էին նաև, որ դու նստում ես դաշնամուրի առջև, նվագում ես տարօրինակ, նոր, բայց և այնպես հայկական երաժշտություն: Դու նստում ես եկեղեցու երգեհոնի առջև և նվագում ես այնպես, որ նա ցուլի նման որոտա, և կամ էլ սրտաբեկ մի աղջկա նման արտասովի:

Այս ամենով հանդերձ ես շարունակում էի հակակրել քեզ, որովհետև կարծում էի, որ դու կեղծ մարդ ես: Անշուշտ որ դու այդպիսին էիր, ամենամեծ կեղծը ամբողջ քաղաքում, բայց նաև դու երաժշտության մարդ էիր, մի երգահան, որ դժվար աշխատանք է կատարում եկեղեցում: Դժվար, որովհետև եկեղեցին ինքը դժվարության մեջ էր, դու քիչ էիր վարձատրվում, և ընդհանրապես ժողովրդի, ազգի կյանքն էր դժվար, այդպես ջարդված, ցրված, վիրավոր, մեկ

օղակը մյուսից անջատված, և յուրաքանչյուր հայ հուսահատորեն աշխատում էր իր ապրուստը ապահովել և միևնույն ժամանակ շարունակել հայ մնալ:

Իմ հակակրանքը շնվազեց նույնիսկ այն ժամանակ, երբ մայրս որոշեց, որ ավելի լավ է, որ ես հայկական դպրոց գնամ և սովորեմ հայերեն կարդալ և գրել: Դու այդտեղ էիր սուրբ հայր Գասպարյանի հետ, սովորեցնում էիր այբբենգիմը և հայերեն պարզ նախադասություններ և բարձրաձայն երգեր: Ես տեսա, որ դու դժվար աշխատանք ես կատարում, բայց միևնույն է, ես տակավին չէի համակրում քեզ:

Քո հայրենասիրական երգերից մի մասը հասավ նաև Սեն Բենիտո պողոտայի վրա գտնվող մեր տունը գրված թղթի վրա, կամ որպես ձայնապնակ, ես լսում էի ձայնապնակները, և յուրաքանչյուր երգ, որ ես լսում էի, զարմանալի և հպարտ էր հնչում, բայց ամեն մեկ երգը վեց, թե յոթ անգամ լսելուց հետո միայն ես հասկացա, որ դու ավելին էիր, քան ինչ որ առաջին հայացքից ես կարծել էի: Երկու տարի չէր անցել, երբ Հայաստանից մեզ լուրեր հասան, և մենք հասկացանք, որ մենք նորից կորցրել ենք... Քո թիկնոցը, քո բռնեմական գլխարկը, քո փարիզյան կոշիկները, և զանգապանները հեռզհետև մաշվեցին և անհետացան, դու այլևս ձեռնափայտ չէիր կրում, և երբ գալիս էիր Վեն Նես պողոտայի իմ անկյունը, դու նման էիր մյուս հուսահատ հայերին, և ես սկսեցի նորից մտածել, թե ո՞վ էիր դու և ի՞նչ էիր անում, ես սկսեցի վերագնահատել իմ վերաբերմունքը քո նկատմամբ և զգացի, որ սխալվել եմ:

Եկեղեցական հատուկ տոնական օրերին, ես փոխանակ Հուլյական առաջին երիցական եկեղեցին գնալու, գալիս էի կարմիր աղյուսից սարքած հայկական առաքելական եկեղեցին, և տեսնում էի քեզ եկեղեցական շապիկ հագած՝ սղջիկներից և տղաներից կազմված դպրաց դասի երգչախումբը ղեկավարելիս. դու նաև երգեհոն էիր նվագում, և ես գիտեի, որ կատարված երաժշտության մեծ մասը քոնն է՝ հատկապես ստեղծված եկեղեցու համար:

Քո փոքրիկ տունը, որը քեզ հատկացրել էր եկեղեցին, գտնվում էր այն նույն նրբանցքում, որտեղ մեր տունն էր. քոնը մի քանի տնաշարք հյուսիսում էր, ուստի և ամեն անգամ քաղաք գնալիս ես անցնում էի քո տան մոտով և լսում էի քեզ զաշնամուր նվագելիս, աշխատելիս, երբեմն նույնիսկ երգելիս: Երբեմն էլ քեզ տեսնում էի սանդղահարթակին կանգնած, ազարակապանի նման. հավանաբար այդ պահերին դու մտածում էիր, թեև աստված գիտե, թե ինչ:

Երբ ես տասնյոթ տարեկան էի, սիրելի ծերուկ, և պատրաստվում էի հեռանալ Ֆրեզնոյից, Հայկական քաղաքի մեր հին հարևանությունից, դու հավանաբար երեսունհինգ կամ քառասուն տարեկան էիր և չէիր պատրաստվում ոչ մի տեղ գնալ: Դու մնալու էիր այնտեղ, և ինձ թվում էր, թե գիտեի պատճառը, որովհետև ամեն անգամ, որ տեսնում էի քեզ սանդղահարթակին կանգնած, դու այնքան կորսված, շփոթահար և միայնակ տեսք ունեիր: Ուսանած լինելով Փարիզում՝ ճանաչած լինելով Վենսան դ'էնդիին և վստահաբար ուրիշ լազմաթիվ երգեսանների, բանաստեղծների, նկարիչների, ուսանողների, և դեղեցիկ աղջիկների, որոնց հետ նման մարդիկ միշտ ծանոթանում են, քեզ համար հեշտ չէր, անշուշտ, ապրել այս վայրում: Ես բամբասանքներ էի լսում, որ դու կանոնավոր կերպով այցելում ես Բրոդվեյի փոքրիկ պանդոկների վերնահարկերը, որտեղ աղջիկներ էին լինում: Ես որպես հեռագրատան ցրիչ աշխատելիս Լոկոլ և մ այդ պանդոկներում և գիտեմ, թե դրանք որքան մռայլ ու ճնշող վայրեր են, Փարիզի համապատասխան վայրերին բոլորովին նման չեն:

Ես հեռացա Ֆրեզնոյից և այնտեղ էի այցելում երկար ընդմիջումներով՝ տեսնելու իմ ընտանիքի անդամներին, բայց միշտ անհամբեր էի նորից հեռանալ այնտեղից: Իմ այցելություններից մեկի ժամանակ երիտասարդ զարմիկներիցս մեկը և ես մեքենայով գնում էինք մոտակա քաղաքները՝ Ֆաուլեր, Սելմա, Քինգսբուրդ, Դել Բևյ, Սենշեր, Եդեմ, երբ հանկարծ իմ զարմիկը սկսեց բարձրաձայն երգել քո հայրենասիրական երգերից մեկը. դա մի թխադեմ ձիավորի մասին էր, որը դուրս է գալիս բլուրների հետևից. Եվ ես հարցրի նրան. «Ինչպե՞ս է կարճահասակ ծերուկը: Դնանք նրան տեսնելու»:

Ամռան մի շոգ օր էր, դու ոտաբոբիկ էիր, մի քիչ «վեկի էիր գիրացել և քրտնում էիր: Քո տան ներսը, որը ես առաջին անգամ էի տեսնում, քառասյին վիճակում էր՝ գետնին թափած երաժշտական թղթեր, գրքեր, հայկական ամսագրեր, զինվորների, քահանաների, հին բարեկամների, մահացած բարեկամների լուսանկարներ, որոնց վրա տարիների փոշին էր նստած: Չգիտեմ, թե ինչու, դու սկսեցիր Ֆրանսերեն խոսել, երևի մտածելով, որ իմ գրող լինելու համար անհրաժեշտ է իմանամ այդ լեզուն, և դու ասում էիր. «Սարոյան, մի՛ լքիր ինձ»: Դու այս խոսքը կրկնեցիր քաղմիցս, և ես չէի հասկանում, թե դրանով ի՞նչ էիր ուզում ասել: Միայն զգացի, որ դու պարզապես կործանվում էիր և շափազանց վախեցած էիր. Դու ծուղակի մեջ էիր, հոգնած, շնչահեղձ էիր լինում և շարունակում կրկնել:

«Սարոյան, մի՛ լքիր ինձ»: Ես այն ժամանակ ֆրանսերեն չգիտեի, հիմա էլ չգիտեմ, թեև Փարիզում եմ ապրում և կյանքիս վերջին ութ տարիները այստեղ եմ անցկացրել: Ես լեզուներ սովորելու ընդունակություն չունեմ: Բախտավոր եմ զգում ինձ, որ կարողանում եմ մի քիչ անգլերեն օգտագործել: Այդ օրերին ես բավականին եկամուտ ունեի, ուստի որևէ բան, որ չէի հասկանում, ինձ թվում էր՝ դրամի կարիքի մասին է: Ես քո սեղանին մի քիչ թղթադրամ դրեցի, հույս սունենալով, որ դու կգտնես դրանք, և ես ու զարմիկս մնաք բարով ասացինք քեզ:

Երկու տարի հետո նորից այցելեցի քեզ, նույն վիճակն էր, նույն իսկ ավելի վատ: Դու մեռնում էիր և գիտեիր այդ, միայն չգիտեիր ինչպես կանխել մահը: Նորից դու խնդրեցիր ինձ շքել քեզ, և նորից, զգալով, որ ուրիշ ոչինչ չեմ կարող անել, ես քո սեղանին դրամ դրեցի իմ զարմիկն ասաց. «Հիմա քաղաք կվաղի և դրամը կծախսի աղջիկների վրա»: Եվ ես ասացի՝ «Ի սե՛ր աստծս, գոնե հուսանք, որ այդպես կլինի»:

Փոքրիկ, ծեր մարդուկ, քո եկեղեցական երաժշտությունը փառահեղ էր, քո հայրենասիրական երգերը հիանալի էին, և թեև ոչ ոք այդ մասին չգիտի, բայց դու մեծ մարդ ես:

Քո մահվան ժամանակ քո անկողնի շուրջն են եղել մի քանի ամուրի բարեկամներ, որոնցից մեկը Դոկ Շոտիկյանը: Նա քեզ ասել է. «Պրոֆեսոր, լսիր ինձ: Հասկանո՞ւմ ես: Ի՞նչ կարող ենք անել քեզ համար, սիրտդ ի՞նչ է ուզում»:

— Աղջիկներ,— ասել ևս դու ու մահացել:

Բլուրնների հետևից թխադեմ ձիավորը եկել և տարել է քեզ, աստված գիտե, թե ուր: Գուցե Ֆրեզնոյի Բրոդվեյ փողոցի վրա գտնվող պանդոկներից մեկը, կամ Վենսան դ'Էնդիի ժամանակների՝ Փարիզը, կամ էլ վերականգնված Մեծ Հայաստանը, և գուցե Արարատ լեռան գագաթը:

### Կարլ Սանդբերգին

Հիշում եմ մեր առաջին հանդիպումը Սան Ֆրանցիսկոյի Սաթրր սթրիթում գտնվող Լեոն Գելբերրի և Թեոդոր Լիլիենթալի գրախանութում 1937 թվականին, սրանից ուղիղ երեսուն տարի առաջ, երբ դու հիսուն-երկու տարեկան էիր՝ իմ այժմյան տարիքին, իսկ ես՝ քսանինը:

Գեւրբը-Լիլիենթալ գրախանութը քչերից մեկն էր Սան Ֆրանցիսկոյում, ուր հաճույքով էի մտնում այն օրերին: Մյուսը Ջեկ Նյուրեգինն էր Փոուսթ սթրիթում: Երրորդը՝ Փոլ Էլգերը: Ինձ՝ նորաթուխ գրողիս համար հաճելի էր ժամանակ առ ժամանակ մտնել գրախանութները՝ իմանալու, թե ինչպես են վաճառվում գրքերս, ինչ նորույթներ կան, մեկ-երկու բառ փոխանակելու խանութի տիրոջ կամ վաճառողների հետ, Լրբեմն նաև՝ գրողներից մեկնումեկին հանդիպելու հույսով, թեև այս վերջինը երբեք մտնել-չմտնելուս զրդապատճառ չի եղել:

Մի անգամ, օրինակ, Նյուրեգինի մոտ մտնելուս պես հաղթամարմին, կենսուրախ ու որոտաձայն Ջեկը դիմեց ինձ.

— Մի երկու րուպե շուտ գալիր, Ռիչարդ Հելիբարթընին կհանդիպելիր:

Քիչ էր մնում ասեի. ավելի լավ, որ չհանդիպեցի:

Սան Ֆրանցիսկոյում ամենասիրածս մարդկանցից մեկը Լեոն Գեւրբըն էր, միշտ աշխույժ ու դործունյա, լավատես ու մեծասէր, բարեկիրթ ու հիանալի ունկնդիր Լեոն Գեւրբըն նա շատ ավելի լավն ու բարդ էր, քան երևում էր, որովհետև մի օր նա կախվեց՝ ապշած թողնելով իր բոլոր ծանոթներին:

Մի անգամ ամռանը, երբ մտա Սաթրը սթրիթի գրախանութը, Լեոնն ասաց.

— Կարլ Սանդերրգն իմ սենյակում է: Ուզո՞ւմ ես ծանոթանալ:

Այդպես մենք հանդիպեցինք: Ես առաջարկեցի որևէ բան խմել թրք սթրիթի բարում, որտեղ ժամադրված էի Ջոն Գարֆիլդի հետ Ջոնի հետ մեկնել կար, նույնպես գրող, ու այն օրերին բավական հայտնի, համեմատյան դեպս Հոլիվուդում, բայց թե անունն ինչ էր, ոչ մի կերպ չեմ կարողանում հիշել:

Ջո Բալեյի մոտ (ուր սովորաբար թուղթ էի խաղում) երկու բաժակ խմելուց հետո, դու առաջարկեցիր դնալ ծովափ՝ Քլիֆ-հաուզ: Գուրս եկանք, տաքսի նստեցինք ու դնացինք այնտեղ, խմում էինք, նայում ծովարջերին ու ծովարջայեռանր զալնվող հսկայական ալիքներին:

Հետո տաքսիով վերադարձանք քաղաք՝ Փրսիֆիքից ոչ հեռու՝ Ջո Վանեսսիի ռեստորանը Բրոդվեյում և ընտիր իտալական կերակուր պատվիրեցինք: Տարիքով դու բոլորիցս շատ մեծ էիր, բայց քեզ սքանչելի էիր պահում. մեզ հավասար խմում էիր, ուտում ու խոսում, և տեսքդ ճիշտ այնպիսին էր, ինչպես լուսանկարների վրա, ինչպես վայել է բանաստեղծին՝ յուրահատուկ, արտասովոր ու եզակի, և միա-

ժամանակ՝ պարզ ու հասարակ, ինչպես մարզկանց մեծամասնությունը: Հասկազույն մազերդ, ինչպես միշտ, փոքր-ինչ խափ էին, չհարգարված, մի տեսակ արհամարհված:

Արդեն համարյա տասնմեկն էր, երբ իտալական կերակուրներից ու գինուց կշտացած, բոլորիս համար հաճելի ժամանակ անցկացնելուց հետո, բաժանվեցինք: Դու գնացիր հյուրանոցդ կամ այնտեղ, ուր օթևանել էիր, այն գրողը, որի անունը չեմ հիշում, ասաց, թե հաջորդ օրն անթիվ գործեր ունի ու նույնպես գնաց, իսկ ես ու Գարֆիլդը ուղղվեցինք դեպի Փրսիֆիքսթրիթ՝ Իզզիի մոտ:

— Չէ, պատկերացրու,— ասում էր Գարֆիլդը,— այդքան ճանաչված մարդ է, հռչակավոր բանաստեղծ, ծերունի է արդեն, բայց գրեթե ամբողջ օրը թրև եկավ մեզ պես քոստ լակոտների հետ, հետներս ուտում-խմում ու խոսում էր հավասարի պես: Ուրիշ ոչինչ չեմ ուզում. աջք տարիքում ես էլ նրա պես երիտասարդ լինեմ:

Ես նույնպես զարմացած էի: Երբ տասներեք տարեկան էի, դպրոցից հետո՝ շորսից տասներկուսը աշխատում էի որպես ցրիչ Տրեզնոյի հեռագրատանը, և գրեթե ամեն երեկո ընկերության գրամբենայով տպում էի սեփական բանաստեղծություններս: Արդեն լրիվ կարգացել էի քաղաքի հանրային գրադարանում եղած ամբողջ պոեզիան՝ Ուոլթ Ուիթմեն, Վեշըլ Լինդսեյ, Էդգար Լի Մասթերս, այլոց շարքում նաև Կարլ Սանդբորգ, և համոզված էի, որ ես էլ պետք է բանաստեղծություններ գրեմ: Բայց այնպես ստացվեց, որ առաջին գիրքս պատմվածքների ժողովածու էր, իսկ դրանից հետո ավելի ու ավելի քիչ էի բանաստեղծություններ գրում ու գրեթե չէի փորձում հրատարակել դրանք՝ նախ, որովհետև պոեզիա տպագրող ամսագրերն այնքան էլ շատ չեն, և ապա՝ եթե անգամ տպագրում են, շատ քիչ են վճարում կամ բաժնորոժին չեն վճարում, իսկ իմ առաջնահերթ խնդիրն այն ժամանակ գրելով ապրելն էր, որպեսզի ազատվեի այլ աշխատանք կատարելու անհրաժեշտությունից:

Ինչևէ, Չոն Գարֆիլդը մահացավ քառասուն տարեկանում՝ սրընթաց հաջողության հասած կինոաստղի փառքի գագաթնակետում, այն գրողը, որի անունը չեմ կարողանում հիշել և որը մեր առաջին հանդիպման ժամանակ նույնպես դեռ երեսուն չկար, վերացավ առպարեզից, շքացավ, որ մեռնելու պես մի բան է, եթե ոչ ավելի վատ: Երևան եկան բազմաթիվ նոր բանաստեղծներ, գերասաններ ու արձակագիրներ և գրավեցին իրենց տեղերը՝ յուրաքանչյուրն իր բնագավառում: Նոր բանաստեղծները հետևում էին Էզրա Փաունդին, Թոմաս

Ս. Լիլոթին, Ուխչամ Կարլոս Ուխչամսին և Ուալես Սթիվենսին, նոր դերասանները շարվում էին Քլաբբ Գեյբլի, Հեմֆրի Բոգարտի, Զեյմս Քեզնիի, Փսլ Մունիի, Սփենսըր Քրեսիի ու Գեբի Գրանտի կողքին, իսկ նոր արձակագիրները հետևում էին էռեստ Հեմինգուեյին, Մրոթ Ֆլեյշմանին, Ուխչամ Չոլքեներին, Մորլի Բելագանին ու Սթիվըն Վինսենթ Բենետին:

Կարճ ասած, Ամերիկան էր, ինչպես որ կա. Միամիտ Ամերիկան, շփոթված Ամերիկան, մոլոր ու կարկամ Ամերիկան: Եվ ինչպես էլ զարգանար ազդի պատմությունը, ինչ էլ կառարկեր Ասիայում էլ ծվրոպայում, պաշտոնական անձանցից ով էլ դար-գնար, մամուլում միշտ մի նորութուն լինում էր Կարլ Մանդրերգի մասին, և լուսանկար, այնպես որ ես հաճախ էի հիշում շատ տարիներ առաջ Սան Ֆրանցիսկոյում անցկացրած մեր Լրկար ամառաչին օրը:

Դու կիթառ էիր նլագում, երգում էիր «Սոկինագուլն թիթեոր», դու ձայնասկավառակներ էիր թողարկում, դու նյու Յորք էիր գնում կամ Հոլիվուդ, դու պատասխանում էիր լրագրերի ու հանդեսների թղթակիցների հարցերին և այդ ամենին զուգրնթաց կարողացար գրել Աբրահամ Լինկոլնի կրթիկ գրված ամենաճաշակուն կենսագրությունը:

Հենց այդ հսկայածավալ աշխատանքի ավարտելուց հետո էր, որ հյուր եկա քո տունը Հարբերգում, Միչիգանի ափին, Չիկագոյից ոչ հեռու: Երեկոյան ոտքով գնացինք հարեան առանձնատունը, որտեղ ուրիշ հյուրեր էլ կաչին՝ տարբեր տարիքի մոտ երեք տասնյակ սարու: Բոլորն ուրախ էին, ուտում էին ու խմում, սրամտում ու ծիծաղում, լսում ձայնարկիչից հնչող բարձր երաժշտությունը: Եվ այդ ժխորի մեջ դու՝ հոգնած բոլոր ժամանակների ամենաբարդ ամերիկացիներից մեկի կենսագրության վրա տասնամյա լարված աշխատանքից: Եվ այնուամենայնիվ, սովորական մարդ էիր, պարզապես հյուրերից մեկը՝ ըմբոստ մազափունջը ճակատիդ:

Դեռատի, դեռևս դպրոցական մի օրիորդ մոտեցավ քեզ ու խնդրեց մակագրել «Ժողովուրդն, այո» գրքի իր օրինակը: Դու մակագրեցիր ամենայն լրջությամբ՝ կարևորելով դրա նշանակությունն օրիորդի համար:

Հետո բացեցիր գրքի առաջին էջն ու սկսեցիր կարդալ:

Աղջիկը լսում էր, ես էլ էի լսում, քիչ անց ձայնարկիչն անջատեցին, և բոլորը դարձան դեպի քեզ ու սկսեցին լսել: Նրանք հիացած էին քեզով, որ ոչ միայն եկել ու մասնակցում ես իրենց երեկույթին,

այլ նույնիսկ կարողում ես բանաստեղծութիւններէցդ մեկը՝ Նրանց ձեռքերը պատրաստ էին ծափահարելու, նրանք շատ էին ուզում բուն ծափահարութիւններով ողջունել քեզ, սպասում էին միայն, որ վերջացնես:

Նրանք կարծում էին, որ հինգ ընկերներ լիովին բավական է պոեզիայի համար, և որ դու ուր որ է կվերջացնես, բայց դու կանգ չառար՝ անցար հաջորդ էջին:

Կարողում էիր հոյակապ՝ առինքնող ու հանդիսավոր ձայնով, ամենասովորական բառերն արտասանելով այնպես, ինչպես կարտասանելով դերասանը: Ունկնդիրներդ շարունակում էին հիացմունքով ու երախտագիտութեամբ լսել քեզ՝ պատրաստ շուրջ ծափահարութիւններով արժանին հատուցելու իրենց բարեկեցիկ, ապահով ու ձեռնահաս աշխարհից դուրս ապրող խեղճ ու կրակ մարդկանց նվիրված տողերիդ համար:

Առաջինը սենյակից դուրս սողոսկեցին տասը-տասնհինգամյա տղա-աղջիկները. ինչ արած, երեխան միշտ էլ երեխա է մնում, ու նրա համար կյանքն արվեստից գերադասելի է, և, անշուշտ, այդպես էլ պիտի լինի:

Քիչ անց երեխաներին հետևեցին երիտասարդ զույգերը. անաղմուկ հեռացան, հավանաբար առանձնատնից էլ դուրս եկան՝ որպեսզի առանց մեզ խանգարելու ազատ զրուցեն ու ծիծաղեն:

Հետո սենյակից աննկատ հեռացան նաև միջին տարիքի զույգերը, կարճ ասած, մնացինք երեքով՝ դու, այն աղջիկը, որի գիրքը մակագրել էիր, ու ես:

Երբ փակեցիր գրքի վերջին էջը, սենյակում միայն ես էի:

Ժողովուրդն, այո, բայց ոչ այդ երեկույթի ժողովուրդը: Գիրքը ցած որիք ու միասին վերադարձանք տուն:

Դու հանդիպել ես պրեզիդենտներից մի քանիսին, քեզ նույնիսկ փորձել են համոզել թեկնածութիւնդ առաջադրելու պրեզիդենտի պաշտոնի համար, դրանից, ճիշտ է, ոչինչ չստացվեց: Համենայն դեպս, կտակածից վեր է, որ Աբրահամ Լինկոլնի մասին դու ավելի շատ գիտեիր, քան ցանկացած այլ պոետնեցիալ թեկնածու: Դու ճանաչում էիր Սերըլին Մոնրոսին, որը սիրում էր քեզ, ինչպես հորը: Դու Հիսուսի կյանքին նվիրված կինոնկարի խորհրդատուն ես եղել:

Երեկ, երբ կարգացի, որ մահացել ես Ֆլեք Ռոքի տանդ, Հյուսիսային Կարոլինայում, անշափ վշտացա, թեև ապրեցիր զրեթե իննսուն



տարի, այդ ընթացքում լուրջ անհաջողություններ ու ձախողումներ շու-  
նեցար, դավաճանության մեջ շմեղադրվեցիր, հոգեբուժարանում շմե-  
կուսացվեցիր, ատելության, արհամարհանքի ու հետապնդումների շար-  
ժանացար, սխալ շհասկացվեցիր ու սխալ շմեկնաբանվեցիր, պատվա-  
զուրկ շեղար, շծաղրվեցիր ու շստոյացվեցիր:

Վշտացա, որովհետև ժամանակի ընթացքում ժողովուրդը (ինչ-  
պես դու կասեիր) սկսեց ճակատիդ ընկնող մագերդ ընկալել որպես  
պոեզիայի, ամերիկյան պոեզիայի խորհրդանիշ, այնպես որ դու և քո  
պոեզիան, քո ամբողջ ստեղծագործությունը համատարած ճանաչում  
գտաք նույնիսկ այն մարդկանց մոտ, ովքեր ոչ պոեզիա են կարդում,  
ոչ արձակ, ընդհանրապես շեն կարդում:

Դու հռչակով ապրեցիր, հռչակով էլ մեռար՝ բայց մինչև վերջ  
շճանաչված ու շհասկացված: Պրեզիդենտն անձամբ կարդաց հիշատա-  
կի խոսքը, որի իսկական հեղինակը բարեխղճորեն տքնել էր բանաս-  
տեղծություններիդ վրա: Շատ հանդիսավոր էր հնչում, բայց դատարկ  
էր ու անիմաստ: Դու մեծագույն անհատ էիր, բայց ոչ նրանց ներ-  
կայացրած առումով: Հարցն այն շէ, որ բանաստեղծները Լրիտասարդ  
են մեռնում, թեև այդպես էլ կա, անկախ ապրած սարիներից: Իրակա-  
նում, հակառակ տարածված պատրանքի, նրանց ոչ թե մեկ մահ է սպա-  
սում՝ կյանքի վերջում, այլ բազմաթիվ մահեր, ընդհուպ մինչև վերջինը:

## ԿՅԱՆՔԻ ԵՎ ՄԱՀՎԱՆ ՕՐԵՐ

ԿԱՄ

ՓԱԽՈՒՍՏ ԴԵՊԻ ԼՈՒՍԻՆ\*

13 օգոստոսի, 1967 թ.

Ես միշտ ինձ երիտասարդ եմ կարծում և հանկարծ հիշում, որ  
այդպիսին շեմ: Այո, նկատում եմ, որ այլևս երիտասարդ շեմ: Շար-  
ժումներս նման շեն երիտասարդի շարժումների, արթնանալուց հետո  
ընդոստ շեմ ցատկում անկողնից և ինձ գցում ցնցուղի տակ, հապշտապ  
շեմ խմում երեք կամ շորս բաժակ սուրճ, մեկը մյուսի հետևից շեմ  
ժխում սիգարետներ և կազմում օրվա անելիքների ծրագիրս: Օ, ո՛չ,  
ծրագիր կազմելու սովորությունը ձեռք բերեցի ավելի ուշ, երբ տա-

\* Հատվածներ նույնանուն գրքից:

րիքս առա: Երիտասարդ ժամանակ ես պարզապես գլուխս առած  
գնում էի: Ծրագրելը անհրաժեշտ չէր, թեև մտքումս միշտ էլ ունենում  
էի անելիքներս: Բայց դրանք կատարելու մասին չէի մտածում, պար-  
զապես կատարում էի:

Ուրոշ իմաստով, միակ բանը, որին չեմ հավատում, այն է, որ  
ընդհանրապես կենդանի եմ: Ասենք դրանից ի՞նչ օգուտ: Ինձ հա-  
մար որևէ շահ կա՞ դրանից: Ես դա չեմ ուզում, դրա կարիքը չունեմ:  
Եթե իմ կյանքը պետք չէ ուրիշներին, էլ ի՞նչ միտք ունի ապրելու: Ես  
այդպես եմ մտածել դեռևս այն օրերին, երբ պատանի էի և չէի որո-  
շել, որ գրելը ինձ համար կլինի ուրիշներին օգտակար լինելու մի-  
ջոցը: Եվ հիմա էլ, նույն ձևով եմ մտածում: Թեև գիտեմ, թե ինչքան  
անհեթեթ է հավատալ, որ իմ գրելը կարող է օգնել նրանց, ովքեր  
դրամի կարոտ են: Բայց այս միտքը նույնպես կարող է անհեթեթ  
թվալ նրանց, ովքեր շատ դրամ ունեն: Եթե բոլորը դրամ ունենային,  
կմտածեն նրանք, այդ դեպքում դրամը իր արժեքը կկորցնեի: Դրամը  
դրամ է նրանով, որ այն շատերից վերցվում է և կենտրոնանում մի  
քանիսի մոտ: (Եթե այդ խեղճ մարդիկ դրամ ունենային, չէին իմանալու  
ինչպես ծախսեն,— ասում են հարուստները):

Բայց միակ իսկական մարդիկ աղքատներն են: Նրանք գալիս են,  
քաղց: մ, աշխատում, ստեղծում, ծնում և մահանում՝ պահպանելով  
բնության հետ մեծ հաղորդակցությունը: Հարուստները իրականում  
չեն սպասկանում մարդկային ցեղին և հետևաբար դուրս են մնում  
բնության հետ հարաբերակցությունից: Նրանք, ինչպես իրենք են  
երևակայում, պատկանում են ինչ-որ գերադաս մի ցեղի: Իսկ դա այլա-  
սերված մի ցեղ է, որ թեև կապ ունի աշխարհի հետ, բայց ոչ մի  
առնչություն՝ բնության հետ:

Երիտասարդ մի մարդ էի, արագաշարժ, իր նոր զգեստներով ուրա-  
խացող, ազմկոտ և ծիծաղկոտ, իսկ հիմա դարձել եմ թափթփվածի  
մեկը, ուշադրություն չեմ դարձնում հին հագուստներիս, անփուլթ եմ  
կեցվածքի նկատմամբ, քայլում եմ դանդաղ և չեմ կարողանում ճամ-  
փորդել: Իսկ ես ինչե՞ր էի ակնկալում... Ասենք, արտաքուստ դատելով,  
ես ամեն ինչ ստացա՝ համբավ, դրամ: Բայց դա շատ անձնական ձեռք-  
բերում է, դա իմ իսկական նպատակը չէր...

Մահացել է Ռբեն Մարգրիտը, ուրախ, ֆանտաստիկ գործերի հեղինակ բելգիացի նկարիչը:

Մահը մահ է, անշուշտ, բայց ամենատպալոթիչ մահը, որին ականատես եմ եղել, պատահել է տասնչորս տարի առաջ, Կալիֆոռնիայի Մալիբու ծովափում:

Դա մի ջրագռավի մահն էր:

Փոքրիկ թռչունը մթնշաղխա թողեց ծովը, դժվարությամբ անցավ ծովափի թաց ավազի վրայով, տասը հունաչապի մազլյեց մի ժայռ, տեղավորվեց նրա խոռոչի մեջ և երես դարձրեց ծովից, արևից, աչրող ամեն ինչից և կանդնեց այնտեղ սպասողաբար:

Ես մի պահ նայեցի թռչունին, ապա քայլեցի անցա՝ լսճարարիւր հավաքելով: Երբ մեկ ժամ հետո վերադարձա նույն տեղը, արդեն արևը մայր էր մտել, և ջրագռավը ավելի խորն էր մեխվել ժայռի խոռոչում: Մոտակա ծովափում մեկ գյուղին կամ ավելի ջրադռավներ կային՝ հանձնված ապրելու հրճվանքին: Նրանք չէին նկատում մեռնող թռչունին: Եվ թվում էր, այս թռչունը նախընտրում է անտեսված մնալ: Երբ մահը մոտենում է անհատին, ոչ ոք և ոչինչ չի կարող կասեցնել այն:

Այդ գիշեր ես հիշեցի ջրագռավին և մտածեցի, որ առաժնայան մեռած կլինի, բայց նա գեռես ողջ էր՝ կկզած ժայռախուռոչի եզրին: Ուշ հետմիջօրեին նույնպես նա կենդանի էր, երես դարձրած ամեն ինչից:

Այդպես էլ է լինում. մահը կարող է երևի արարածի մոտենալ դանդաղորեն: Թռչունը ժայռափոսն էր ընտրել որպես մահվան հանգրվան, որպեսզի մեռնելիս հեռու լինի սև շներից, նրանց տերերից և ծովափի մարդկանցից:

Շները կարող էին տանջել նրան մինչև մահ, իսկ մարդիկ կարող էին ջանալ պահպանել նրա կյանքը՝ սպանելով նրան այն տեղի օգնությամբ, որ ամերիկյան բժշկությունը պարտավոր է զգում ցուցաբերել մարդկային արարածների նկատմամբ:

Ծրեկոյան ես կանգնել էի իմ տան առջև և դիտում էի մակընթացությունը, երբ հանկարծ հիշեցի թռչունին և քայլեցի դեպի նրա ապաստարանը:

Ի վերջո նա մահացել էր, անշունչ ընկել խոռոչի մեջ՝ աննդժ պահելով իր արժանապատվությունը և ճշմարտությունը:

Մարդկանց հետ տարբեր է լինում: Ես կարդացել եմ մահերի մասին, որոնք տեղի են ունեցել որոշ արժանապատվությամբ, սակայն մարդու մահվան մեջ ինչ-որ բան սխալ է, որովհետև նա այն արարածն է, որ երբեք հոժարակամ չի հանձնվում մահվան: Մարդը ստեղծել է աստծուն, երկինքը, հավիտենական կյանքի առասպելը և մահը ժխտող բազմաթիվ այլ բաներ:

Բայց գուցե նա բոլորովին էլ չի հնարել այս ամենը: Ես իսկապես չգիտեմ: Թող մարդը իրավացի լինի, իսկ ջրագուսվը՝ սխալ: Գուցե ջրագուսվը, այնուամենայնիվ, այժմ սնվում է երկնային ծովերում:

### 22 օգոստոսի

Որևէ գրող, երբ տարիքն առնում է և զգում, որ այլևս չի կարողանում անել այն, ինչ անում էր առաջներում, հարկ չկա, որ մտատանջվի. ամենախիմաստուն բանը կլինե՞ր այդ ամենին նայել հանդարտությամբ և համակերպումով, առանց իրեն պարտադրելու աշխարհում ինչ-որ հերոս լինելու վիճակը: Կարիք չկա դժբախտ զգալու այն մտքից, որ ինքը փոխվել է: Ի վերջո, ժամանակի ընթացքում, ամեն ինչ փոխվելու է:

Սա է ամենախիմաստուն ձևը, բայց դա հեշտ չէ, և բազմաթիվ գրողներ երկար տարիներ սոսկալիորեն ապերջանիկ են զգում, տեսնելով, թե ինչպես խամրում են իրենք իրենց ներսում, և խամրում է իրենց համբավը աշխարհում, չգտնելով իրենց տեղը միլիոնավոր նորեկների մեջ, մոռանալով, որ տարիներ առաջ իրենք ևս նորեկներ էին: Տարօրինակ է, որ գրողը, որ այնքան ուշի ուշով նկատել էր մարդկության ունայնության տարբերակները, ինքը ևս դառնում է այսքան խոցելի: Գրողը լրավունք ունի գոհ լինելու, որ ինքը գտել է իր գործը և կատարում է այն, բայց այս պարզ փաստը խճճել ամեն տեսակի խորթ և ոչ սաղական բաների հետ՝ սխալ է: Այլ ասպարեզի աշխատողները իրենց և իրենց կատարած գործի մասին նման թյուր կարծիքներ չունեն: Ապարակապանը լաց չի լինում այն բանի համար, որ իր բերքը կերել և մոտացել են: Կոշիկի արդյունաբերողը չի ցավում, որ իր արտադրած կոշիկները հագել, մաշել և դեն են գցել, բացի այն պարադոքսից, երբ գնորդը ես եմ, որովհետև ես պահում եմ կոշիկներս, ինչպես ուրիշ ամեն բան:

Զգայուն գրողը, որը կենդանի է մնացել, երբ այնքան ընտիր գրողներ իրենց շունչը փչել են, կարող է ինքն իրեն թույլ տալ մտա-

ծել, որ ինքը ևս մահացել է նրանց հետ, ասենք երեսունութ, քա-  
ռասունչորս, կամ հիսուներկու տարեկանին, և հետևաբար նա ունի  
ամեն իրավունք հրճվելու, որ իր տարօրինակ բախտի շնորհիվ դեռևս  
կա, ապրում է: Զգայուն գրողը պետք է հրճվի այն պարզ իրողու-  
թյամբ, թե անկախ այն բանից, թե ինչ կարող է պատահել իր հանճա-  
րին, իր անսպառ եռանդին և երևակայությանը, իր աշխատելու ընդու-  
նակությունը, որն ասես ավելի քան մեկ մարդունը լինել, ինքը դեռևս,  
այնուամենայնիվ, ողջ և առողջ է, իսկ սա հաճելի բան է.

Բայց, ո՞վ է ուզում խելամիտ լինել:

Ահա թե բանն ինչ է: Ո՞վ, ճիշտ մտածելով, ուզում է խելամիտ  
լինել:

Կարծում եմ, որ ես:

Այս առավոտ ժամը վեցին ես տեսա արևի անհավատալի լույսը,  
և նորից պանկեցի մի քիչ ևս քնելու: Քնեցի և երազ տեսա, հրճվելով  
և իմ քնի, և երազի համար, հետո վեր կացա մոտավորապես ժամը  
11-ին՝ շափաղանց դո՛հ, որ օրս սկսում եմ այգպիսի ուշ ժամի, դուրս  
եկա փողոց և սկսեցի քայլել:

Հրաշալի էր, նորից իմ անմահությունն էր: Քայլեցի Շատոգյուն  
փողոցով դեպի Լա Ֆայետ, հետո Բլյո, Սեն Դենիշ, Մարշե Սեն  
Քուենտեն, որը նման է Սան Ֆրանցիսկոյի հին Բյուրեղյան դղյակի  
շուկային, և ապա տուն վերադարձա:

Ինձ արքայի նման էի զգում:

## 23 օգոստոսի

Մեկն ասաց, որ ես գրում եմ այնպես, ասես նարդու քարեր եմ  
գցում: Սրա մեջ որոշ ճշմարտություն կա: Իմ բնավորությանը հա-  
տուկ է մարտահրավերներ ընդունելը և վտանգին ընդառաջ գնալը: Եթե  
որևէ բան ինձ գայթակղում է դեպի հաջողություն կամ անկում, ես  
ամեն գնով ընդառաջ եմ գնում և կամ փոխում եմ երեսնիվայր, կամ  
էլ հաջողության հասնում:

Ճիշտ հիմա, երբ ես նստեցի աշխատելու, սեղմեցի իմ Գրունդիկ  
ռադիոյի վերջին կոճակը: Այս կոճակով միանում ես Փարիզի դա-  
սական երաժշտության կայանին, կամ ինչ-որ երաժշտության, որ ես  
դասական եմ համարում: Երբ ես սկսեցի աշխատել, լսեցի, երևի  
հազարերորդ անգամ, ինձ շատ ծանոթ, ինձ համար հատուկ նշանա-  
կություն ունեցող մի երաժշտություն: Այդ այգպես լինելով հանդերձ,

առաջին ընդհանուր համաժողովում, թե ի՞նչ երաժշտություն էր դա, որովհետև կան երաժշտական բազմաթիվ կտորներ, որ ինձ համար ունեն անձնական նշանակություն: Եվ հանկարծ դաշնամուրային մի քանի հնչյուններ այլևս կասկած չթողեցին, որ դա Ջորջ Գերշվինի «Երկնագույն ռապսոդիա» ստեղծագործությունն էր:

1920-ական թվականների շաղախին խմբի նշանավոր ղեկավար Պոլ Ուայթմենը ծրագրել էր Նյու Յորքի Քարնեգի համերգասրահում ջազ երաժշտության համերգ տալ, մի բան, որ այդ օրերի համար շատ նոր և համարձակ նախաձեռնություն էր: Նա գիտակցում էր, որ պետք է կատարի այնպիսի մի գործ, որը անմոռանալի մնա: Ջորջ Գերշվինը երաժշտական կոմեդիաների համար բազմաթիվ լավ երգեր էր գրել: Ուայթմենը զանդահարեց Գերշվինին և պնդեց, որ կոմպոզիտորը մինչև հաջորդ երեքշաբթի շաղախին մի նոր երաժշտություն գրի: Գերշվինը առարկեց, բայց, ինչպես ես եմ անում՝ անմիջապես աշխատանքի անցավ: Ընդամենը մի քանի օրվա ընթացքում նա գրեց իր «Երկնագույն ռապսոդիան»: Ֆրեդ Գրոֆե անունով մի մարդ կատարեց գործիքավորումը, Ուայթմենը կատարեց այն, և մի նոր գլուխ ևս գրվեց ամերիկյան երաժշտության պատմության մեջ:

Դա մոտավորապես 1924-ին էր, Գերշվինը քսանվեց տարեկան էր, ես՝ տասնվեց: Ամեն առավոտ, իմ լարովի ձայնարկիչի վրա, ես դնում եմ «Երկնագույն ռապսոդիա» ձայնասանակը, կատարում եմ գեղամարզանք, հագնվում ու դուրս գալիս տնից:

1928-ին ես առաջին անգամ եղա Նյու Յորքում: Այնտեղ էր նաև Ջորջ Գերշվինը, բայց անշուշտ մենք չհանդիպեցինք: 1928 թվականին ես ոչ ոքի չհանդիպեցի:

Բայց 1935 թվականին, երբ ես վերադարձա Եվրոպա կատարած իմ առաջին ուղևորությունից, ես հանդիպեցի Ջորջ Գերշվինին՝ Նյու Յորքում կայացած մի մեծ հավաքույթի ժամանակ և հարցրի նրան. «Ինչպե՞ս գրեցիր այդ գործը: Դա երիտասարդության, հույսերի և վշտի երաժշտություն է: Կարո՞ղ ես նորից նման մի բան գրել»: Գերշվինը փորձեց բացատրել ինձ, թե դա ինչպես էր իրեն հաջողվել, և ասաց, որ չի հավատում, որ երբևիցե նա կկարողանա նման մի գործ նորից ստեղծել:

Մի քանի տարի հետո նա մահացավ հանճարեղությունից և ուղեղի ուռուցքից:

Ամեն օր գրելու նպատակներից մեկը այս է, որպեսզի գրողը ապագայում ի վիճակի լինի իմանալ, թե անցյալի որոշ ժամանակահատվածի օրերը ինչպես են անցել, իմանալ, թե մարդը որտե՞ղ է եղել, ի՞նչ մտքեր է ունեցել, իմանալ նաև նրա ներքին և արտաքին առողջութիւն մասին:

Բայց ի՞նչ օգուտ իմանալուց, թե դեպքերը ինչպես են կատարվել:

Միակ բանը, որի մասին պիտի մտահոգվել այն չէ՞ արդյոք, թե ի՞նչ է կատարվում հիմա:

Այո, բայց ներկան էլ շուտով անցյալ է դառնում, և մարդը, եթե այն թուղիի հիշողութիւն քմահաճույքին, շատ քիչ բաւ կիմանա նաև այսօր կատարվածի մասին:

Եթե արճեստաւարժ դո՞ղր ամեն օր չունեն հինգ կամ տասը բոլոր գրի, տասը տարում նա գրած կլինի այնքան շատ բան, որքան մարդ կարող է գտնել երկարածիգ գրքերի մեջ, ներառյալ Աստվածաշունչը: Եվ այս անփույթ բառերը հետագայում կարող են այնպիսի մեծ նշանակութիւն ստանալ, որ գրողը դրանք գրելիս չի էլ պատկերացրել:

Բայց հարցի ամենակարևոր կողմը այդ չէ:

Կարևորը հետևյալն է. եթե գրողը գիտակցի, որ ամեն օր ինչ-որ բան է գրելու և գործին պինդ կպչի, այդ օրերի իր գրածը, ինչքան էլ որ անհեթեթ և անպետք թվա, բայց հենց դրանով նա իրեն պատրաստված է զգալու առաջ շարժվել դեպի ավելի լավ գովածքներ:

Եվ այսպես, ձեռք բերելով ամեն օր գրելու սովորութիւն, նա մի տարվա ընթացքում ավելի շատ բան է գրելու, քան այլ պարագաներում պիտի ջանար անել, եթե, անշուշտ, մի շարք գրողների նման, ինչպիսիք են Դոստոևսկին և Բալզակը, նա չգտներ գրելու մի այլ մեթոդ, որը ստիպեր նրան քիթը անընդհատ կախած պահել իր գործի վրա, այն է շահած դրամը ծախսելով ամեն տեսակի հիմար գնումների կամ դրամախաղի վրա, նորից նստել գրասեղանի առաջ ու գրել՝ մարելու համար պարտքերը:

Համենայն դեպս տաղանդով օժտված գրողները միշտ մի պատճառ են փնտրում գրելուց խուսափելու համար: Եվ երկար փնտրելու կարիք չունեն: Այնքան լավ պատճառներ կան չգրելու համար: Կյանքը շատ գեղեցիկ է, շատ հազվագյուտ, շատ հրճվալի, շատ թանկ, որպեսզի մարդ այդ ամենի մասին գրելու համար ժամանակ կորցնի:

Միշտ էլ բավականաչափ դրամ կճարվի, որ մարդ դուրս գա տնից և վայելի աշխարհը՝ գնելով ամենալավ բնակարանը, կամ կացարանը հյուրանոցում, ամենալավ ուտելիղենը, ամենագեղեցիկ հագուստը, ամենահարմարավետ կոշիկը, կամ լավագույն ընկերությունը, այո, այս գրնվում է, դա ամեն մեկի համար հասանելի չէ: Կանանց սերը, կամ կնոջ կեցվածքը՝ նույնպես: Եվ այսպես շարունակաբար:

Եվ, այնուամենայնիվ, արհեստավարժ գրողը միշտ վերադառնում է իր աշխատանքին: Ինչո՞ւ: Մասնագետները առաջ են քաշում գրողի մասին որոշ տեսակետներ, և դրանք բոլորն էլ, իհարկե, իրենց մեջ պարունակում են ճշմարտության մի կորիզ, մինչև որ մեկը ազդարարում է, որ եթե գրողը չի գրում, նա անպայման պարտավոր է մի որևէ այլ գործ կատարել:

Ինչո՞ւ է ատաղձագործը տուն կառուցում:

Ամեն մարդ ինչ-որ բան է անում նույն նպատակի համար: Աշխատել: Չես կարող պարզապես ձեռքերդ ծալած մնալ:

## 28 օգոստոսի

Նա եկավ Մալիբուի ծովեզերքին գտնվող իմ տունը: Նրա ձայնը խորունկ էր, տաք և զարմանալիորեն համեստ:

Ես նրան էի ուղարկել իմ «Քարանձավի բնակիչները» թատերախաղից մի օրինակ և խնդրել, որ ստանձնի խաղալ Թագավոր կոչվող ծեր մարդու դերը: Թատերախաղն ստանալուց մեկ շաբաթ հետո նա ինձ երկտող ուղարկեց և խնդրեց, որ զանգահարեմ իրեն: Հեռախոսեցի: Նա հարցրեց, թե ե՞րբ կարող է այցելել ինձ: Ասացի, որ կարող է գալ, երբ իրեն հարմար լինի: Նա ճշտեց այցելուից օրն ու ժամը՝ հաջորդ օրը ժամը երկուսն անց կեսին: Ճիշտ նշանակված ժամին ես լսեցի նրա ոտնաձայնը. նա իջավ Մալիբու փողոցից զեպի ծովեզրյա իմ տունը առաջնորդող փայտյա աստիճաններով: Ես սիրում էի ապրել այս տանը, որը կառուցված էր ավազի վրա: Օրը երկու անգամ, երբ մակընթացություն էր լինում, ալիքները թավալվում էին լժ տան տակով: Բայց տունը ինքնին շատ անշուք էր որպես բնակավայր այնպիսի մի գրողի համար, որը ահագին փող է վաստակում: Բայց ես սիրում էի այս վայրը: Ամեն առավոտ տան գավիթում արևի տակ հայտնվում էին փոքրիկ մողեսներ: Պարտեզում կար պայծառ գույներով մի օձ, որը մերթընդմերթ իրեն ցույց էր տալիս՝ վայելելով լուրիկի թփի ստվերը: Պարտեզում հայտնվում էր նաև մի կարմիր սկյուռիկ:



Շերեփազգիները և հեծահավերը հաճախ թռչում էին պարտեզում, մի գուլջ գոթրիկ բազե ապրում էր տան քիվում, և ծովափոկերը երբեմն քնում էին հետևի գավթի տակ և այնպես ուժեղ էին հազում, որ սկզբում ինձ թվում էր, թե մոտակայքում սաստիկ մրսած մեկը կա:

Իմ այցելուն նստեց սև բազմոցին, և մոտ մեկ ժամ մենք զրուցեցինք:

Նա Թագավորի դերում հիանալի կլիներ, բայց վերջում որոշեց շմասնակցել ներկայացմանը:

Անցյալ շաբաթ Պոլ Մյունին մահացավ:

### 30 օգոստոսի

Երբ ևս դիտում եմ ուրիշ մարդկանց, որոնք անշուշտ այս կամ այն բնատանիքի զավակներ են, և սույա մտածում եմ իմ սեփական զավակների, ինչպես նաև իմ մասին, Արմենակ և Թագուհի Սարոյանների շորս երեխաներից մեկի, զարմանում եմ, թե ինչպես այդ մյուսները այդքան քաղաքավարի են, ողջամիտ, գործնական, իսկ մեր բնատանիքի երեխաները իսկապես տարօրինակ են Այդ մյուս երեխաները այնքան հեշտ են հարմարվում միջավայրին, կյանքի և իլենք իրենց հետ հաշտ են, մինչդեռ մեզ համար կյանքը մի սոսկալի սլայքար է:

Ինձ մնում է եղրակացնել, որ հավանաբար մենք խենթեր ենք, բայց ոչ հասարակ տեսակի կապվելիք գժեր: Մենք ամեն ինչում սխալ ենք գտնում: Աշխարհը ապականված է, և թեև մենք ջանում ենք հաշտվել այդ իրողության հետ, բայց շենք կարողանում զսպել մեր ցավը, և այս կամ այն առիթով պոռթկում է մեր զայրույթը: Ես աչքի առջև եմ բերում մեր գերդաստանի բոլոր ճյուղերը և նրանց մեջ շեմ կարողանում գտնել մեկին, որ լինի բարեհամբույր, սլարզ, ժուժկալ, հարմարվող, քաղաքավարի, ոչ լգահանջկոտ, հմայիչ, գործնական, հաշվենկատ և ունենա բոլոր այն մյուս բաները, որ հատուկ են այսպես ասած կարգին մարդկանց: Ծռությունը անցնում է իմ գերդաստանի յուրաքանչյուր ճյուղի միջով: Մեզանից ամեն մեկը յուրատեսակ ծուռ է: Ինչո՞ւ ենք այսպես, դա ինչպե՞ս է պատահել: Դրա պատասխանը չկա:

1967 թվականի օգոստոսի վերջին օրն է, 31-ը: Եւ հիսունինը տարեկան եմ: Տոնելու համար իմ տարեդարձը, ես սափրվեցի, ցնցուղ ընդունեցի, նոր զգեստ հագաւ և հինգերորդ հարկի աստիճաններով վար սուրացի: Բայց երբ շորերդ հարկ հասաւ, ինչ Ծորտյուն գրասենյակի դուռը հանկարծակի ուժեղ բացվեց, և դուրս եկավ հիսուն տարեկան մի կին, նրա հետևից՝ երեսուն տարեկան մի տիկին: Ապա հաջորդաբար դուրս եկան երեք երիտասարդ աղջիկներ և վեց երիտասարդ տղամարդիկ, բոլորն էլ ջանալով ինչքան հնարավոր է շուտ հասնել փողոց՝ արևի լույսին, և ասլա ճաշել:

Երբ ևս իջաւ հինգ հարկերը, դուրս եկան նուե պաշտօնատան աշխատողները: Երբ ևս կանգ առաւ բացելու իմ փոստարկղը, նրանք անցան լճ մոտով՝ անխոս, լուռ:

Փայտեցի Շատողյուն փողոցով մինչև Նոտո-դամ դը Լորեա, որտեղ Լեկեղեցու կողքին կանգնած էին եռկու մեծ ավտոբուսներ և Գերմանիայից եկած զբոսաշոյիկներ, մեծ մասամբ երեսունից ցածր տարիքի երիտասարդներ, տեղ էին դրավում մեքենաներում:

Հասաւ ինչ Ծայեա փողոցում դանվող կոշկակարի խանութը, որի սլա տուհանի վրա կաւ մի փոքրիկ կանաչ պարտեզ՝ մի մեծ արևածաղկի թուփ, մի զույգ գորշագույն մեծ աղավնիներ, երկու երիտասարդ աղավնիներ, մի մեծ սև ագռավ և շոյս սլրուն թռչնակներ՝ կարմիր և դեղին փետուրներով:

Կոշկակարը մոտ հինգ ոտնաչափ բարձրութեամբ, լայնաթիկունք, հուժկու, բոլորովին ճաղատ, կլոր զլխով թխալեմ մի հայ է: Նա հաճելիորեն տարօրինակ և հիւսցումի արժանի մի մարդ է: Հնարավորին չափ շուտ սխտի ես նրան տանեմ նորոգութեան կարոտ իմ մի զույգ կոշիկը:

Մատուղին, որը լիքն էր բանվորներով, հաճելի էր և արևոտ: Ես շափաղանց երջանիկ զգացի, աննկարագրելիորեն դժ ոչ թե ինձնից, այլ աշխարհից և մարդկային ցեղից:

Հիսունինը տարեկան եմ, — մտածեցի ես, — Ռեքան մեծ մարդիկ մահացել են նախքան իրենց երեսունիւ, երեսունհինգիւ, բառասունին, բառասունհինգիւ, հիսունին, հիսունհինգիւ հասնելը: Բայց ահա ես շարժվում եմ դեպի իմ վաթսունը:

Հանկարծ հիշեցի Բախլին՝ իր քսանմեկ երեխաներով, որը յոթնասուն տարեկանում մահացավ: Իմ Գուրգեն զարմիկը մեկ անդամ

ինձ ասաց, որ Վերդին իր «Աիդա» օպերան գրել է ութսուն տարեկան հասակում: Շատ մարդիկ են եղել, որոնք ապրել և աշխատել են վաթսունից հետո երկար տարիներ, ոմանք հասել են մինչև իննսունը, ինչպես Բեռնարդ Շոուն: Այնպես որ, ի՞նչ է վաթսունը: Չէ, կարող եմ դեռևս երիտասարդ համարվել:

Արևելյան կայարանում կա մի լուսանկարիչ, որի լուսանկարչական մեքենան, Փարիզի մյուս լուսանկարչական գործիքների համեմատ այնպիսին է, ինչպես Քարշն է Օտտավայի անձնագրի լուսանկար հանող մյուս լուսանկարիչների համեմատությամբ:

Շաբաթվա մեջ նախօրոք մտադրվել էի իմ հիսունիններորդ տարեդարձի առթիվ լուսանկարվել, այնպես որ գնացի լուսանկարչի մոտ:

Հետո քայլեցի Ստրասբուրգ փողոցն ի վար դեպի մեծ ծառուղիները՝ ինձ հիանալի զգալով: Կավ զգալու ոչ մի առանձին պատճառ չկար: Ոչ մի նոր բան, հանկարծակի բան չկատարվեց, ոչ մի բան չհայտնաբերեցի կամ չհայտնագործեցի:

Այնուամենայնիվ, բացարձակապես երջանիկ էի: Ինչո՞ւ: Գուցե լավագույն պատճառն այն էր, որ ես ողջ էի, կայի, և սա ոչ թե երևակայություն էր, պատրանք, կամ շարժանկար: Հրաշալի էր, որ օգոստոսի այս վերջին օրը, իմ հիսունիններորդ տարվա վերջին օրը ես ողջ էի, դեռևս քայլում էի, դեռևս ազատ էի:

8 նոյեմբերի, 1938 թ.

Այս բնդարձակ տունը գնեցի շորս տարի առաջ, որպեսզի Փարիզի իմ տնից բացի ուրիշ մի հարազատ անկյուն ևս ունենամ:

Նախ գնեցի փողոցի անկյունում գտնվող տունը, հետո նրա կողքինը, այսինքն՝ այս տունը, որտեղ ապրում և աշխատում եմ, երբ Ցրեզնոյում եմ լինում:

Հիսուն տարի առաջվա բնկերներիցս մեկը հարցրեց.

— Ինչո՞ւ երկու տուն:

— Ճիշտն ասած՝ չգիտեմ,— պատասխանեցի ես,— կմտածեմ այդ մասին, և եթե պատճառը իմանամ, կհայտնեմ քեզ:

Հարցնողը լինելով հայ, բարձր ծիծաղեց: Նրա ծիծաղն ասում էր՝ «Թեև շեմ հասկանում, բայց լավ է և բացատրության կարիք չկա»:

Սակայն, այնուամենայնիվ, ես ինքս ուզեցի իմանալ, թե ի՞նչը դրդեց ինձ նախ գնել անկյունի տունը, հետո նրա անմիջապես կողքինը: Կանխագծված շրջանակով շարժվելու ներքին մղումը չէ՞ր

արդյոք պատճառը: Մի՞թե եկել էի մահանալու այնտեղ, որտեղ ծնվել էի, թե՞ երկու տուն ունենալու կարողությունը ունեի:

Պատճառն ինչ էլ որ եղած լինի, փաստն այն է, որ այստեղ եմ: Այս տարվա, իմ տարվա մեծագույն մասը այստեղ եմ անցկացրել: Ասում եմ իմ տարվա, որովհետև այն վերջանում է ութով. 1908-ին ծնվել եմ, և ահա 1968 թիվը:

1967 թվականի նոյեմբերին, ուղիղ մեկ տարի առաջ, երբ Նյու Յորքից դալիս էի Կալիֆոռնիա, հիշում եմ, մտածեցի. «Եկող տարին՝ 1968-ը, իմ տարիներից մեկն է նորից, և դա լինելու է ամենալավը»:

Միևնույն ժամանակ այն զղացողությունն ունեի, որ դա լինելու է նաև տարօրինակ և սարսափելի մի տարի:

1968 թվականի ապրիլին ևս Օկլահոմայում էի գտնվում, քուեջում, Էրբ ռադիոյով լսեցի, որ Մարտին Լութեր Քինգը սպանվել է Մեմֆիսում:

Ութ օր հետո, երբ մեքենայով Նյու Յորք էի գնում, անցա Մեմֆիսով, որովհետև մտածում էի Լութեր Քինգի կյանքի մասին և ցանկացա, որ գոնե անցնեմ այն քաղաքի միջով, որտեղ սպանվել է նա:

Ո՞րն էր նրա մահվան պարփակած ճշմարտությունը: Նա ինքը առել է, որ կարող էր ընտրել հանգիստ կյանքը, բայց շուգեց այդ անել: Եվ իսկապես չէ՞ր կարող: Նա խոսում էր այնպիսի բուռն հուզականությամբ, որ լսողների մոտ հարուցում էր և՛ հիացմունք, և՛ գուլթ: Խոսելիս նա իրեն տեսնում էր մահացած, միայնակ, հպարտ, սիրելի և նահատակված...

19 նոյեմբերի, 1968 թ.

Մի օր, այգեկութի վերջերին, ես քայլում էի Սանտա Ֆիի այգիներ: միջով, երբ ինձ մոտեցավ և բարևեց նավով խաղող արտահանող մի մարդ: Նա վերադառնում էր իր հոր անից:

— Իննսունչորս տարեկան է, բայց նախընտրում է ապրել իր սևփական տանը, միայնակ,— ասաց նա,— ինքն է եփում ճաշերը, խնամում պարտեզը, կարգում է հայերեն թերթեր և իր լարովի նվագա րկիչի վրա լսում հայկական ձայնապնակներ:

Ես այդ մարդուն ասացի, որ բախտավոր է նման հայր ունենալով: Հետո ես անդրադարձա, որ նրա և իմ հայրերը տարեկիցներ էին: Մնվել էին նույն տարում, նույն նահանգում, իրարից հազիվ հարյուր

կիլոմետր հեռավորության վրա: Իմ հայրը մահացել էր հիսունյոթ տարի առաջ, իսկ նրա հայրը ողջ-առողջ էր:

Գուցե ես Ֆրեդնոյում եմ իմ հոր պատճառով, որն իր ընտանիքով այստեղ եկավ 1908 թվականի ամռանը, իմ ծնվելուց քիչ առաջ: Այո, 1968 թվականը շատ հաճելի էր:

Ծիրանները հասունացան: Ես քաղեցի դրանք, կերա, ինչպես նաև բաժանեցի բարեկամներինս և շրջապատի մանուկներին:

Հասունացան նաև դեղձերը, նեկտարադեղձերը, Խաղողն ու թուզը, և ամենից գեղեցիկ միրգը՝ նուռը:

Իմ երկու տներից յուրաքանչյուրի առջև կա մի ձիթենի: Երկուսը միասին տվեցին մոտ քառասուն ֆունտ ձիթապտուղ, որը ես տարա իմ զարմուհիներից մեկին, որպեսզի դրանք մշակի ինձ համար: Արդեն մի ամիս է, ինչ ամեն օր մոտ երկու դյուծին ձիթապտուղ ևմ ուտում:

Խոշոր, ընտիր խնձորներ երևացին մի ծառի վրա, որի բարակ բունը վնասված է ինչ-որ խոշոր վարակից: Զարմանալի է, ինչպե՞ս կարող են այսպիսի կատարյալ, հյութեղ, վարդագույն խնձորներ աճել հիվանդ մի ծառից: Զգիտեմ, թե ինչպես, բայց խնձորներն աճեցին ու հասունացան ծառի ճյուղերի վրա, և դրանք տեսնողը զարմանում էր, որովհետև Կալիֆոռնիայի այս մասում, որտեղ ամառները շատ շոգ են, խնձորը ոչ սովորական միրգ է:

22 նոյեմբերի, 1968 թ.

Տարվա մեջ երկու կամ երեք անգամ Ֆրեդնոյում լինեմ. Փարիզում, Նյու Յորքում, Լոնդոնում, Սան Ֆրանցիսկոյում, թե Մալիբույում, անդրադառնում եմ, որ ես մոռանում եմ օգտագործել հայերեն այն բառերը, նախադասությունները և արտահայտությունները, որոնք անգլերենին անժանոթ հատուկ արժեք և իմաստ ունեն: Բառեր, նախադասություններ և արտահայտություններ, որ ես լսել եմ իմ մանկության ու սպատանության տարիներին իմ ընտանիքի անմիջական անդամներից, բարեկամների և նույնիսկ հայ օտարականների բերանից:

Ճիշտ հիմա էլ կարծես ես լսում եմ իմ մեծ մորը՝ Լյուսիին, որ 1918-ին ինձ ասում էր. «Ահ-բա»:

Բառը նշանակում է մի տեսակ «Այո» և կրում է հավանության, հիացումի, քաջալերանքի և հարգանքի շեշտ:

Ես \տուն էի վերադարձել «Հերալդ» թերթը ծախելուց և դատար-

կում էի գրաւանումս եղած ամբողջ մանր դրամը, իմ մեկ օրվա վաստակը, որը կազմում էր ընդամենը մեկ դոլար և երեսուն սենթ:

Հարցը «ԱՏ-բա» բառի մասին է, որ շատ սովորական էր բիթլիսցի հայերի մոտ: Բայց մի՞թե նրանք կամ նույնիսկ Սարոյանները կկարողանային այդ բառին տալ այն յուրահատուկ իմաստը, որ ստանում էր մեծ մորս շուրթերին: Դա մեծ մորս մոտ մի ուրիշ շեշտ ու երանդ ունենր՝ հասկանալի միայն իր ու ինձ համար:

Շնորհակալական մի նրանց էլ ուներ այս բառը տատիկիս մոտ: Գուցե դա կիսով չափ էր միայն անկեղծ, որպեսզի ինձ քաջալերի շարունակելու իմ օգտաբեր աշխատանքը, բայց փուլթ չէր: Հոգս չէր նաև, եթե նա իմ բացակայությամբ ասեր, որ այդ գնահատանքը հարկավոր էր, որպեսզի փոքրիկ տղան իրեն կարևոր մարդ համարի, իլեն զգա տան փող աշխատողը և կերակրողը.

Կարևորն այն է, որ ես իսկապես դիտեի, որ տան փող վաստակողը և կերակրողն էի, և խիստ մեծ մայրս կհասցներ ամեն օր իմ շահածը գովել: Ուրիշ տղաներ դպրոցից հետո խաղում էին, կամ տուն կ'են գնում ընտանեկան մթնոլորտ, կամ հանգիստ վայելելու, մինչդեռ ես վազում էի քաղաք՝ ստանալու իմ թերթերը և հաշորդ երկու, թե երեք ժամում վաճառում էի դրանք: Եթե ես մեկ դոլար վաստակեի, բավական էր, որ իմ ընտանիքը դա համարի լավ շահույթ, որովհետև այդ դրամով կարող էինք գնել բավարար մթերք նպարավաճառ Երանոսից կամ մի այլ տեղից:

Երբեմն պատահում էր, որ իմ վաստակը քիչ էր լինում: Մարդիկ չէին ուզում թերթ գնել. (Հիշում եմ՝ նման պահերին ես երգվում էի, որ եթե երբեք նշանավոր մարդ դառնամ, հարստանամ, թերթ վաճառող որևէ տղայի հաճույք պատճառելու համար ես ամեն օր պիտի գնեմ մեկ թերթ և վճարեմ մեկ դոլար: Հետագայում, իմ առաջին գիրքը լույս տեսնելուց հետո, գլխավորապես Սան Ֆրանցիսկոյում այդ բանն անում էի, բայց հետո ձեռք քաշեցի, մոռացա այդ մասին):

Շատ փոքր վաստակով ես մի օր վերադարձա տուն, բայց խիղճս հանգիստ էր, որովհետև հնարավորս արել էի: Բայց երբ օրվա շահույթը դրեցի սևղանի վրա, մեծ մայրս սառը նայեց ինձ, նրա դեմքը չճառագայթեց, և նա շասաց «ԱՏ-բա»:

Ես գզացի, որ նա մտածում է «Քսան սե՛նթ, և դու դա դրամ ես համարում».

Եվ հետո նա հուսահատ, բայց բարի ձայնով ասաց, ցույց տալով սեղանի վրա դրած ճաշը. «Զխտվիր»: Դրանով ուզում էր ասել, որ

ես գայլի ախորժակ ունեմ: Բայց ես գիտեի Լյուսիին և երբեք չէի վիրավորվում նրա «զխտվիր» բառից, դա նույնիսկ ինձ մի տեսակ հաճույք էր պատճառում, ինչպես որ առանձնապես չէի շփանում նրա «Ահ-բա»-ից:

Երբ մի անգամ Լյուսին նորից ասաց «զխտվիր», ես սկսեցի բարձրաձայն ծիծաղել, որովհետև այդ ամենն այնքան զվարճալի էր. մեր աղքատությունը, նրա ինքնությունը, իմ ինքնությունը, նրա գովեստի կամ հանդիմանանքի խոսքերը և իմ անխոցելիությունը: Եվ ահա նա էլ սկսեց բարձրաձայն ծիծաղել: Ասացնք խնդրեմ՝ դա ի՞նչ լեզվով կարելի է արտահայտել...

### 30 նոյեմբերի, 1968 թ.

Այս տան հետնաբախում գոնազան ճառեր կան:

Ես կարող եմ անմիջապես գլխի քնկնել, որ սու նոյեմբերի վերջին օրն է, որովհետև թղենու շուտո տերեւները արդեն թափվել են:

Ամիսներ շարունակ ինձ գայրմացնում է ծիրանենու տերևների դիմացկունությունը: Մի քանիսը թափվել են, բայց շատերը դեռևս ճյուղերի վրա են: Եվ ավելի քան կեսը շարունակում են դալար մնալ, մինչ ուրիշներն արդեն սկսել են դեղնել: Վաթսուն օր է ինչ դեղձենին տերևաթափ է եղել, կողքի և անձնու տերևների մեծ մասը արդեն կամաց-կամաց թափվել ներքևի կասաչ խոտերի վրա, իսկ մնացած մի քանի տերևները ավելի դեղին են, քան ծիրանենու տերևները:

Ընկուղենու վրա մնացել են մի քանի խոշոր, մուգ դեղին տերևներ: Որթատունկի տերևները դարձել են մի տեսակ կեղևուտ սրճագույն: Նարնջենին բեռնավորված է հասուն նարինջներով, բայց ես դրանք ծառի վրա եմ թողնում, որպեսզի ավելի քաղցրանան: Ես քաղեցի մի դյուծին և կերա վեցը. ոչինչ, համով էին, բայց դեռևս պետք եղած քաղցրությունը չունեին:

### 7 դեկտեմբերի. 1968 թ.

Հաստ ապակիներով լուսամուտի մոտ դրված է իմ աշխատասեղանը: Այստեղից երևում է փոքրիկ, անտերև, մերկ դեղձենին ու ճյուղին նստած կապույտ փետուրներով խոշոր թռչունը:

Դեղձենուց քիչ հեռու, թղենու առջև դրել եմ մի սպիտակ աման, որտեղ ամեն օր կեր եմ դնում, ձմեռային ուտելիք՝ թռչունների համար: Կապույտ փետուրներով թռչունը եկել է ուտելու:

Իմ կյանքի վաթսունմեկերորդ տարվա իննսունիններորդ օրվա այս փոքրիկ միջադեպն ինձ մեծ երջանկություն է պարգևում: (Արդյո՞ք սա Երջանկության այն Կապույտ թռչունն է, որի մասին այնքան շատ եմ լսել երգերում և պատմություններում):

Առավոտյան մտադրվել էի դուրս գալ մեքենայով, մոտ երկու հարյուր մղոն դեպի Սան Ֆրանցիսկոյի հյուսիսը, ապա քայլել քաղաքով, Երրորդ փողոցի վրա գտնվող Հոլմս գրախանութից գնել մի քանի զիրք, և ապա հետ գալ: Բայց շգնացի:

Մնացի անկողնում և հեռուտացույցով դիտեցի խելսզար մարդկանց: Ամեն առավոտ ցույց են տալիս զանազան խաղեր, անձնավորություններ, հաղորդում են հարց ու պատասխաններ, խոսակցություններ, երգեր, վիճաբանություններ, բոլորը պատրաստված նույն մարդկանց կողմից: Վերջին հինգ տարում նրանցից ամեն մեկը հանդես է գալիս այս կամ այն ծրագրում, գրում, մեքենագրում է մի նոր հաղորդում հաջորդ օրվա, շաբաթվա, ամսվա կամ տարվա համար:

Այշեցուցիչ է տեսնել այս անկուշտ մարդկանց՝ գործողության մեջ: Հանկարծ ես անջատեցի հեռուտացույցը: Գրիպ եմ, թե՛ գրիպ չեմ, պետք է վեր կենամ, պետք է գնամ սուպերմարկեթ և գնեմ աղ, միս, նարնջի հյութ և նաև «Սան Ֆրանցիսկո Քրոնիկլ» թերթը:

Օրը օր է, և նույնիսկ շատ վատ օր, հիվանդ պառկած օրդ մի տեսակ անհավատալի հրաշք է:

### 31 դեկտեմբերի, 1968 թ.

Եվ ահա մի քանի ժամից այս տարին կվերջանա:

Իմ նախասիրած եղանակը ամառն է, և 1968 թվականին Ֆրեզնոյում ամառը հրաշալի էր:

Ես դիտեցի ծառերի բողբոջումը, ծաղկումը և սլողակալումը: Եվ երբ ժամանակը եկավ, ես իմ ձեռքով անկած տարբեր ծառերից՝ ծիրանենուց, դեղձենուց, սալորենուց, խնձորենուց, տանձենուց, ընկուզենուց և նարնջենուց պտուղ քաղեցի:

Ամենակարևոր ծառը, որ պտուղ տվեց, սպիտակ թզենին էր: Տարիներ առաջ ես մոտակա թզաստանից մի ոստ բերեցի և տնկեցի իմ պարտեզում. ահա այն արմատակալեց և սլողակալեց:

1967 թվականին ես որոշեցի, որ մոտ ապագայում գամ Ֆրեզնո և կանգնեմ իմ տնկած ծառերի մոտ, պտուղ քաղեմ դրանցից, բայց չէի սպասում, որ իմ այդ երազանքը այդքան շուտ կիրականանա և



հաջորդ ամռան ես կլինեմ այստեղ... Կալիֆոռնիայի այս մասում հե-  
րիք է, որ մի կտոր հող ունենաս և մշակես, ու դու կստանաս այնպիսի  
դեղեցիկ բաներ, որոնք դիտելը և վայելելը շատ հաճելի է:

Նախկինում իմ ճանաչած քաղաքից քիչ բան է մնացել: Խառնի-  
ճաղանջ այս քաղաքում քայլելու մի կարգին տեղ էլ չկա: Բայց, այ-  
նուամենայնիվ, ես քայլեցի Առաջին ավենյուլից դեպի արևմուտք, մինչև  
Առաջին փողոց, անցնելով իմ սեփական կյանքի ու հիշողությունների  
պատմության միջով...

### ՊԱՏԱՀԱՄԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ՝



Ես ամենից շատ սերախ եմ, որ բախտ եմ ունեցել հանդիպելու,  
բառիս իսկական առումով, երկու անձանց՝ իմ որդուն՝ Արամին, իր  
ծննդից ևրկու ժամ հետո, 1943 թվականի սեպտեմբերի 25-ին, շաբաթ  
մի օր, Նյու Յորքում, և իմ դստերը՝ իր ծննդից շրս ժամ հետո, 1946-  
ին, հունվարի 17-ին, Սան Ֆրանցիսկոյում

Երբ տեսնում ես մարդկային նորածին մի էակ, այսպես ասած մի  
նոր կյանք, և եթե այդ էակը անմիջականորեն առնչվում է քեզ հետ,  
դու իրոք ականատես ես լինում մի շատ կարևոր բանի, դու իրոք  
հանդիպում ես կարևոր մի անձնավորության: Ես լինելով շատ ան-  
փորձ, երբ առաջին անգամ հանդիպեցի իմ որդուն, մտածեցի. «Բայց  
այս էակը շատ ծեր է, ավելի ծեր, քան երբեք իմ տեսած որևէ ծերունի»:

Նա այնքան զայրացած էր թվում, որ ես մտածեցի. «Նա գոհ չէ  
իր ներկա վիճակից, չի սիրում լինել այս փոքրիկ մարմնի մեջ, կնա-  
խընտրեր լինել այնտեղ, ուր որ էր: Զայրացած է իր մոր, հոր, մարդ-  
կային ցեղի և մնացած ամեն ինչի վրա, որովհետև նրանք բոլորը միաս-  
նաբար գործել են իր դեմ և իրեն դրել այս փոքրիկ մարմնի մեջ, փո-  
խանակ թողնելու, որ լիներ ամենուր, ինչպես եղել էր մինչ այդ»:

Եվ, անշուշտ, մի փոքր ճշմարտություն կա իմ այս մտածածի մեջ,  
ինչպես մի փոքր ճշմարտություն կա, առհասարակ, ամեն տեսակի  
մտքերի մեջ:

Սակայն, շուտով, իմ մյուս հանդիպումների ժամանակ, երբ դուռն  
նա մի շաբաթական էլ չկար, նկատեցի, որ նա այլևս զայրացած չէ

\* Հատվածներ նույնանուն գրքից:

իմ կամ որևէ մեկի դեմ: Եվ ես ուրախ էի, որ հանդիպեցի նրան, քանզի Նման մի հանդիպում, հոր հանդիպումը որդու հետ, շատ զարմանահարաշ և կարևոր դեպք է, որովհետև նրանում համադրված են մեծ ու փոքր պատահարներով հառուստ դարեր. ժառանգականությունը այժմ հուստատել է, որ որդին հակված է ժառանգելու ոչ անմիջականորեն իր հոր, այլ ավելի շատ իր պատյերի, ապուպայերի և էլ ավելի հեռավոր նախնիների նկատառելիքը:

Այսուհանդերձ, նորածնի հետ առաջին մտերմիկ հանդիպումից հետո նորեկը օրինականապես և ֆիզիկապես հաստատվում է որսյեսքո որդին: Եվ ես ուրախ եմ, որ այդ այդպես եղավ, բանի տեղ չդնելով նրա առերևույթ նեղսրտութունը, բարկութունը, զայրույթը, որոնք, ինչպես նկատեցի, շուտով իր մեջ վերածվեցին թաքուն զվարճության:

Նա աշխարհ էր եկել: Ես հանդիպեցի նրան իր ծնվելուց անմիջապես հետո: Նա շարժվում էր, նա պետք է աճեր, փոխվեր, նա ահագին նեղություն էր պատճառելու ոչ այնքան ուրիշներին, որքան իրեն, և այսպես Սարոյան ընտանիքը շարունակվելու էր, մարդկային ցեղը պետք է հարատևեր՝ իր ոչ կատարյալ հավատքով և անզիտությամբ:

Եվ այդպես էլ եղավ: Նա աճեց ու մեծացավ: Հետո հանդիպեց մի աղջկա, ամուսնացավ և ունեցավ մի դուստր: Ինձ դուր եկավ որդուս իր դստեր մասին զրած այն բանաստեղծությունը, որը 1972-ին լույս տեսավ «Փարիզ Ռեվյու» պարբերականում.

Պատիկ է,  
Ահա թե ինչ է  
Նա:

Ես հավանեցի այս բանաստեղծությունը: Ես սիրում եմ իմ որդուն, նրա կնոջը, հատկապես նրանց դստերը:

Ես նրան հանդիպեցի, երբ նա շորս ամսական էր: Իմաստունի նման խաղաղ էր: Ինձ դուր եկավ դա:

Իսկապես ուրախ եմ, որ հանդիպել եմ որդուս:

Եվ ուրախ եմ, որ հանդիպեցի իմ դստերը: Բայց եթե որդուս ծնվելուց հետո մի սեռակ շփոթվել էի նրա արտաքին տեսքից և վերաբերմունքից, աղջկաս ծննդից հետո ինձ պատել էր զարմանքը: Երբ ես նրան առաջին անգամ տեսա, նրա դեմքը ամբողջությամբ աղավաղված էր, երևի իբրև հետևանք ծննդաբերության ժամանակ բժշկի օգտագործած գործիքների միջամտության:

Ո՞վ գիտե: Ես ինքս հաստատ չգիտեմ: Երբ նա յոթ, թե ութ տա-

րեկան էր, ես դստնրս պատմեցի, թե ինչպիսին էր նա ծնված ժամանակ: Այնքան տղեղ էր, թեև ևս ձևացրի, թե շատ ուրախ էի նրան տեսնելով, բայց երբ գուրս էի գալիս Սան Ֆրանցիսկոյի ծննդատան սրահից, մտածեցի. «է՛հ, ի՛նչ արած, հուսով ևմ, որ գոնև մեծ մաքի տեր կլինի, թերևս գրող դառնա»:

Հորդ և մորդ հանդիպելուց հետո քո երբուն և զստերը հանդիպելը ամբողջացնում է մարդկային փորձառութիւնդ:



Բոլոր կենդանի էակներն իրենց դեմքն ունեն՝ առյուծներն ու փղերը, շնաձկները, կովերն ու ոչխարները, գորտերն ու շերեփուկները արծիվներն ու վագրերը, այծերը, դեղձանիկներն ու թիթեռները, կատունները, մկներն ու շղջիկները, շներն ու ձիերը. թվարկում եմ մտքիս առաջին եկածներին:

Ինչ վերաբերում է մարդկանց, ապա նրանց դեմքերը հաճախ հիշեցնում են այս կամ այն կենդանուն: Երբեմն՝ նույնիսկ կենդանական աշխարհից էլ դուրս գտնվող որեէ առարկա: Ո՞վ չի տեսել, ասենք, խնձոր հիշեցնող դեմքով մեկին:

Սովորաբար ասում են, թե աչքերն են զարդարում մարդկային դեմքը, սակայն միշտ շէ, որ փաստերը գալիս են հաստատելու դա: Դողողի աչքերս, օրինակ, շափից դուրս մեծ են ե, տառչին հայացքից՝ տհաճ ու անքնդունելի, բայց դե անընդունելի թվացող ամեն բան կարճ ժամանակ անց ոչ միայն ընդունելի՝ անգամ հաճելի է դառնում այն պարզ սլաճառով, որ դիտվում է արարածի կերպարի ամբողջութիւնի մեջ. հետևաբար, դուրս սլրծած հսկայական աչքերը միանգամայն սազում են դողողին, եթե շասենք՝ միանգամայն գրավիչ են: Այդպիսի աչքերով մարդկանց էլ ևնք հանդիպում, և պարզ է, որ դրանք շեն սազում մարդկային դեմքին:

Անհատականութիւնի նկարագրի հարցում հույժ կարևոր է քթի դերը, քանզի մեծ քիթ ունեցողը պետք է համապատասխան էլ կյանք ապրի. բոլորիս հայտնի է Սիրանոյի սրտաշարժ պատմութիւնն ըստ էղմոն Ռաստանի, որն ասում են հայ է եղել:

Ո՞վ է ասում:

Որոշ հայեր: Եվ ասում են հպարտութեամբ, ավելացնելով. «Բացի հայից էլ ո՞վ պիես կգրեր մեծ քթով մարդու մասին: Ո՛չ, սրբ, ճշմարտութիւնն այդ է, և գուր տեղը մի վիճեք: Ուզում ե՞ք ասեմ, թե

ինչպես է Ֆրանսիականացել նրա անունը: Նրա իսկական անունը՝ Երվանդ Ռոստոմյան էր, կամ նման մի բան, և նա՝ իր ազգին հատուկ իմաստությամբ վերանվանվեց էդմոն Ռոստան: Գոհունակությամբ ընդունենք այսքանը և զուր շասենք, թե ոչ մի պարագայում նա չպետք է փոխեր իր անունը»:

Քթերը տարբեր են լինում, ու քիչ թե շատ կարգին քիթ շունեցողները ամբողջ կյանքում ափսոսում են ու մտովի դժգոհում իրենց ծնողներից կամ, առնվազն՝ նրանցից մեկից: Սակայն քթերն էլ փոխվում են: Պատանու նիզակակերպ քիթը հասուն տարիքում ավելի շատ վասան է հիշեցնում, իսկ ծերության օրոք դառնում կոճակի պես պստիկ մի չան:

Ուզում եմ սկզբից ևեթ հպարտությամբ ասել հետևյալը. նախ և առաջ իմ քիթը ի ծնե կարգին քիթ էր, դասական իմաստով՝ հոմեակալ: Սակայն կոտրվել է բեյսբոլի խաղաձողի հարվածից մինչև տասնմեկս լրանալը, կրկին կոտրվել է, երբ քսաներկու տարեկան էի, և կրկին՝ քառասունչորս տարեկանում, վերջին անգամը՝ թեթև ավտովթարներում:

Երկու անգամ քիթս արժանացել է վիրաբուժական ուշադրության, երկու անգամն էլ՝ ի դեմս ապուշների, որոնք ավելի լավ կլինեք առուծախով զբաղվեին, քանի որ նրանց ուշքն ու միտքը միայն դրամն էր:

Եվ երկրորդ՝ հպարտ եմ, որ մեծն էդմոն Ռոստանի պես ես էլ հայ եմ: Կրկնում եմ, այսպիսի հարցում լավ է ի սկզբանե պարզություն մտցնել: Ուստի ընթերցողին խորհուրդ կտայի ուսումնասիրել սեփական քիթն ու ճշտել իր ազգային պատկանելությունը:



Ամբողջ կյանքումս առանձնահատուկ վերաբերմունք եմ տածել նկարելու շնորհ ունեցող մարդկանց նկատմամբ, որովհետև ինձ թվացել է միշտ, թե նրանց գործածած լեզուն թերևս ավելի լավն է, քան բառերի լեզուն:

Երբ տեսնում էի երաժշտական որևէ գործիք նվազող մարդու, միանգամայն ապշում էի ու հիացմունքով լցվում՝ եթե անգամ այդ գործիքը ւասսենթանոց շրջհարմոն էր, իսկ մեղեդին՝ «Մանկի Դուդլը»:

Հասկանալի է, որ ինքս էլ հակում եմ ունեցել փորձելու մատիտով կամ ներկերով որևէ բան նկարել կամ որևէ մեղեդի դուրս բերել սլառաձայն տասսենթանոց երաժշտական գործիքից, քանի որ բնա-

ցառվում էր, թե մի ամբողջ դուար կունենամ՝ իսկական, ասենք «Հոխներ» շրթհարմոն գնելու համար, այնպես որ մնում էր բավարարվել դրա տասսենթանոց նմանակով՝ պատրաստված ամենայն հավանականությամբ գժանոցի արհեստանոցներում, որոնց ամբողջ թքով կպցրած արտադրանքը արագ վաճառքի, վայրկենական օգտագործման ու տեղնուտեղը շարքից դուրս գալու համար էր.

Գծանկարներս հաճախ զվարճացնում էին ինձ՝ հատկապես հաջորդ օրը, երբ մոռացած էի լինում, թե ինչ էի փորձում նկարել:

Գունանկարներս էլ տանելի էին, եթե մտքիս դնում էի կենդանիներ, տներ, ճանապարհներ պատկերել և ոչ թե ինչ-որ գաղափարների կամ մտքերի հետևից ընկնում: Հատկապես հաջողվում էին այն նկարներս, ուր ազատ խառնում էի գույներն ու ձևերը. այդպիսիք երեխաներն են շատ սիրում նկարել, բայց համարյա չեն նկարում՝ ճշգրիտ նմանության հանդեպ մեծահասակների համո պաշտամունքի ահից:

Հայտնի է, որ ամեն տեղ, աշխարհի ցանկացած անկյունում կան սիրող նկարիչներ Այդ մարդկանց ստեղծագործությունները սովորաբար չեն վաճառվում, շունեն գնահատման շափանիչներ և ոչ էլ պահանջարկ:

Ֆրեզնոյում այդ կարգի մի հիանալի նկարիչ կար՝ Սարգիս Սմբուլյան անունով թխահեր մի տղա, որը գրչածայրով ու թանաքով ամրոցներ էր նկարում, հերոսական ամրոցներ՝ բարձրաբերձ լեռների գագաթներին, երկնամերձ, որոտացող ամպերով պարուրված: Եվ արտակարգ բարեհունչ անուններ էր տալիս իր նկարներին, ասենք «Թրյոմերայ»: Նրան, իհարկե, հարցնում էին. «Իսկ դա ի՞նչ է նշանակում»: Նա պատասխանում էր. «Թրյոմերայ գերմաներեն նշանակում է երազ»:

Սարգիս Սմբուլյանը պատկերել էր իր հերթական երազը: Այս անգամ ոգեշնչողը Շուրերտի երածշառությունն էր, իսկ ինքը՝ Սարգիսը, նկարում էր Հայկական թաղամասի էմ սթրիթի իր աղքատիկ տնակում՝ հետճաշյա սեղանի մոտ նստած: Մինչ ընտանիքի մնացած անդամները լրագրեր էին կարդում կամ զրուցում, նա գրչածայրն անշտապ թաթախում էր թանաքամանում ու կլանված աշխատում երկու-երեք ժամ՝ մինչև նկարն ավարտելը: Տպավորիչ նկարի ներքևում՝ համապատասխան տեղում գեղեցիկ տառերով գրում էր, օրինակ. «Թրյոմերայ: Գործ Սարգիս Սմբուլյանի: Ֆրեզնո, դեկտեմբեր 1918 թ.»:

Այն ժամանակ նա մոտ քսան տարեկան էր և դպրոցն ավարտել էր: Ավստրական վկայականը հանգրվանել էր հյուրասենյակի պատին, իսկ ընտանիքի ապրուստի միջոցների հայթայթմանը Սարգիսը մոտ-

նակցում էր օժանդակ բանվորությունն անելով մրգավաճառների պահեստներում, խանութներում կամ գրասենյակներում:

Այդուհանգերձ նա արվեստի մարդ էր: Շարքային մեկը չէր:

Ամեն շաբաթ նա մի նոր նկար էր ավարտում:

Թղթի թերթն արժեր մեկ սենթ և վաճառվում էր հիսունթերթանոց նոթատետրի ձևով՝ վերևից սոսնձված: Պատրաստի նկարը սյոկվում-առանձնացվում է նոթատետրից:

Սովորաբար նա նկարածը տանում էր ուղիղ կրտսեր հորեղբորս՝ Միհրանի մոտ, և երկուսով նստում ու երկար նսյում էին:

Սարգիս Սմբուլյանի նկարները ես կոչում էի «երգեհոնային». դրանցից յուրաքանչյուրի խորքում թաքնված էր թախծոտ հառաչի տրտում արձագանքը:

Սարգիս Սմբուլյանը նյարդային ցնցում ունեցավ, սակայն մարդիկ ասում էին, թե զժվել է: Քսանչորս ռաբեղանում նա հեռացավ քաղաքից:

Մի անգամ Միհրանն ինձ ասաց.

— Նա կոնդոնում է: Սարգիս Սմբուլյանը կոնդոնում է: Սյնտեղ է նկարում իր նկարները: Ինձ հայերեն նամակ է ուղարկել:

Այսբանը: Այդպես էլ շիմացա, թե ինչ եղավ Սարգիս Սմբուլյանը կոնդոնո մ կամ էլ մի ուրիշ քաղաքում: Գուցե պարզապես մահացավ և վերջ:



Ես հաճախ եմ գովերգել Բիթլիսը, որովհետև դա իմ ժողովրդի լեոնանխատ քաղաքն է, որոշ իմաստով՝ ինքնին մի ազդ ու երկիր, ուր կողք-կողքի ապրող երեք ժողովուրդները՝ հայերը, քրդերն ու թուրքերը, միմյանց ավելի սերտորեն են կապված եղել, քան ուրիշ քաղաքներում ապրող իրենց ցեղակիցներին:

Առաջին տեղում դնում եմ հայերին, քանի որ Բիթլիսը հին Հայաստանի մի մասն է: Քրդերին դնում եմ երկրորդ տեղում, քանի որ Բիթլիսը եղել է նաև քուրդ ժողովրդի սշխարհագրության մի մասը: Թուրքերին վերջում եմ դրել, քանի որ նրանք վերջինս են եկել:

Եվ ահա, երբ բազմաճյուղար բիթլիսահայերը հասկացան, որ այստեղ իրենց սպասող ապագան լավագույն զեպքում լինելու է հերոսական, իսկ վայրագ մահը՝ գրեթե անխուսափելի, նրանք կանգնեցին լուրջ երկընտրանքի առջև. մնալ Բիթլիսում և մեռնել որպես հայ, թե մեկնել Ամերիկա ու այնտեղ մեռնել՝ հասնելով ծերության: Շատերն

ընտրեցին ծեր հասակում մեռնելը և գնացին Ամերիկա՝ Նյու Յորք, Ռոդ Այլենդ, Մասաչուսեթս, Իլինոյս, Միչիգան, իսկ ամենից շատ՝ Կալիֆոռնիա, թեև հայեր կան Միացյալ Նահանգներից յուրաքանչյուրում, ամենայն հավանականությամբ նաև՝ աշխարհի ցանկացած երկրում:

Սա կարևոր հանգամանք է, եթե հիշում ենք, որ 1915 թվականին աշխարհում կար հազիվ երեք միլիոն հայ՝ ներառյալ կիսահայերին ու քառորդ հայերին, իսկ հայերն իրենց հաշիվը հենց այդպես են պահում: Նրանց մտքով էլ չի անցնում, թե խառնածինը կարող է իր անգլիական, գերմանական, ռուսական, ասորական, հունական, ֆրանսիական, իտալական, պորտուգալական կամ ամերիկյան կեսը գերադասել հայկականին:

Միակ բանը, որ կարող եմ ասել. Բիթլիսը գովերգելիս անօգնական եմ եղել, ու դա է, կարծես թե, ճշմարտությունը:

Երբ Ֆրեզնոյում հանդիպում էի մեկին, որը հիացնում էր ինձ, անմիջապես հարցնում էի, ո՞ր քաղաքից է, ծնողները որտեղի՞ց են, և «բիթլիսցի ենք» պատասխանն ամենից հաճախ էր հնչում:

Միշտ ուրախանում էի ու գոհունակությամբ մտածում. «Սա էլ մերոնցից է»:

Այս դարի երկրորդ, երրորդ և չորրորդ տասնամյակներում Ֆրեզնոյի ամենաերջևի մարդկանցից էր հաղթամարմին, մշտաժպիտ, խոշոր դեմքով (ժպիտը ոչ միայն աչքերին ու շուրթերին էր, այլ ամբողջ դեմքին) մի տղամարդ, որի անունը Արամ Զոզեֆ էր, ասել է թե, նրա լրիվ ու իսկական անունը հայերեն Արամ Հովսեփյան էր:

Նա տեղի լավագույն ըմբիշներից էր և հաճախ հենց նա էր «Միվիք Օդիթորիումում» ուրբաթ երեկոները անցկացվող մրցամարտերի կենտրոնական դեմքը:

Հավանաբար, ոչ ոք չէր համարձակվում սլարտվելու առաջարկ անել Արամ Զոզեֆին այն դեպքերում, երբ փոխադարձ պայմանավորվածությամբ կանխորոշվում էր մրցամարտի ելքը, քանի որ նա հաղթում էր իր լուր մենամարտերն անխտիր: Եվ ճիշտ էր անում, քանի որ գրավադիրներից շատերը հայ էին, թեև ոչ անպայման բիթլիսցի: Բիթլիսցիք փողերը քամուն տվողը չեն: Դա ավելի շատ բնորոշ է պակաս խելամիտ մշեցիներին, վանեցիներին, սասունցիներին, տիգրանակերտցիներին ու տասնյակ այլ քաղաքներից եկած հայերին:

Բոլոր մենամարտերից առաջ Արամ Զոզեֆը 20—30 անվճար մուտքի տոմսեր էր բաժանում իր ընտանիքի անդամներին ու մտերիմ

ընկերներին՝ գլխավորապես բիթլիսցի: Նա սպիտակամաշկ էր, կապուտաչ, պահվածքով իսկը վաղ կալիֆոռնիացի՝ հուժկու, սրընթաց ու աղմկոտ, շոայլ ու բարեսիրտ, փողոցային կովում՝ անկրկնելի:

Մի օր լրագիր վաճառելիս տեսա, թե ինչպես անշարժ ունեցվածքի հաշվառման գրասենյակից, որտեղ նա ծառայում էր, նստատեղերից հանեց ու փողոց շարտեց երեք հաղթանդամ ամերիկացիների: Եթե նրանցից մեկը ոտքի էր ելնում, բայց անմիջապես շէր փախչում, Արամ Զոզեֆը դաստակի եզրով հասցնում էր նրա վզակոթին ու գետին փռում: Երեքն էլ ամրակազմ, աժդահա տղերք էին, որոնք այն տարիների հեռուստատեսային վեկտեռններում մարդասպանի տեղ կանցնեին: Արամ Զոզեֆն արհամարհում էր իրեն ուղղված բոլոր սպառնալիքները, մինչև այն պահը, երբ վտանգն արդեն դառնում էր իրական: Այդ ժամանակ նա հակառակորդից խուժում էր ատրճանակը կամ դանակը ու գետին տապալում նրան, սակայն ավարառված զենքը, որը, նման պարագայում իրավամբ կարող էր ուղղել իր հնարավոր մարդասպանի դեմ, երբեք չէր գործադրում: Փոխարենը ղենքի լավ հավաքածու ուներ:

Մի անգամ, մեռնելուց մի քանի տարի առաջ, Արամ Զոզեֆը կանգնեցրեց ինձ Ֆրեզնոյի Այ սթրիթում ու ասաց. «Վիլի, ուզում եմ կմանաս, որ Բիթլիսում հայրդ եղել է իմ ուսուցիչը: Արմենակ Սարոյանը լավագույնն էր այս աշխարհում ճանաչածս մարդկանցից»:

Այդ պահը կյանքումս ապրած ամենահպարտ պահերից էր...



Սան Ֆրանցիսկոյի Իններորդ ավենյուրի Իրվինգ և Զուդա փողոցների միջև ընկած հատվածում գտնվող իր արհեստանոցի երկրորդ հարկում մի կահույքագործ էր ապրում. նրան կոչում էին իր հայրենիքում ընդունված ձևով՝ պարոն Գաբրիել կամ միստր Գաբրիել: Նա կրում էր Զիվարյան ազգանունը և նույնպես բիթլիսցի էր: Պարոն Գաբրիելը բանաստեղծություններ էր գրում:

Մի անգամ հարցրի նրան, թե ինչպես պատահեց, որ լինելով կահույքագործ, իմիջիայլոց՝ գերազանց արհեստավոր, սկսեց բանաստեղծություններ գրել:

— Ինչ ասեմ, տղաս, միստր Վիլյամ, երբ այս դազգահիս մոտ գործ եմ անում, միտքս անելիք շունի, աշխատողը ձեռքերս ու աչքերս են: Միտքս անգործ չի ուզում մնալ ու սկսում է հետս խոսել, իսկ ես



լսում եմ: Ասում է մեկ բառ, երկու բառ, մեկ տող, երկու տող, երբ երեկոյան վերջացնում եմ գործս, լսածս՝ գրի եմ առնում:

Նա միջահասակ, հաստարուն ծառի պես սլինդ տղամարդ էր: Թիկունքը՝ լայն, ձեռքերը՝ խոշոր, մատները՝ երկարավուն ու շատ ուժեղ: Աչքերում՝ ահավոր վշտի ու կայծկլտող կենսախնդուության մի զարմանալի ներդաշնակութուն:

Նրա զավակները՝ երկու որդիներն ու դուստրը, քույզի ուսանողներ էին. նա համոզված էր, որ երեխաներին ինքնուրույն կյանքին պատշաճ ձևով նախապատրաստելը իր միակ պարտականությունն է: Կնոջ հետ Ամերիկայում էր ծանոթացել, սակայն վերջինս էլ Բիթլիս քաղաքից էր: Ամեն օր ժամը երեքին նա պղնձե սկուտեղի վրա ամուսնուն մատուցում էր փոքրիկ զավաթով արևելյան սուրճ, մի կտոր լոխում ու մի բաժակ պաղ ջուր:

Ժպտում էր ու ցածրաձայն ասում.

— Գաղար առնելու ժամն է, սրբ:

Հետո սկուտեղը թողնում էր դազգահի ազատ մասում ու անմիջապես բարձրանում էր տուն, քանի որ գիտեր՝ արհեստանոցում ամուսինը ստեղծագործող էր, ստածող ու տանել չէր կարողանում, երբ դատարկ խոսակցություններով իրեն կտրում էին փայտից կամ պոեզիայից:

Այն օրերին երկրի վրա սով էր, ինչպես կասեին Հին Կտակարանի հեղինակները: Իրամը չէր բավականացնում, աղքատ ընտանիքներն ավելի էին աղքատանում: Այնուամենայնիվ, մարդիկ կարողանում էին մտերմիկ ճաշկերույթներ կազմակերպել՝ պարզ ու էժանագին ուտելիքներով: Բացառություն չէր նաև մեր ընտանիքը, որ ապրում էր Կառլ սթրիթի թիվ 348-ի երկրորդ հարկում, պարոն Գաբրիելի արհեստանոցից բավական հեռու: Ես քսաներկու տարեկան էի ու մի քիչ նեղվում էի, որ մշտական աշխատանք չունեմ: Ու նաև՝ որ ինձ չէին տալագրում, թեև գրում էի ամեն օր, հաճախ նաև՝ սմեն գիշեր:

Եվ այսպես, քանի որ եկամուտ՝ հետևաբար և դրամ չունեի, անվերջ թափառում էի փողոցներով, անսահման քանակությամբ ջուր խմում մինչև ընթրիքի ժամը, երբ մեր տանը մատուցում էին սոխեռածով պատրաստված բլղուրով փլավ՝ բերնեբերան լիքը ափսեներով, և ես ու եղբայրս, բարեկիրթ ձևերը մի կողմ թողած, մեծ ախորժակով վրա էինք տալիս ու փորներս լցնում:

Շատ էի սիրում այդ կերակուրը, մինչև հիմա էլ սիրում եմ: Հորստանալուցս հետո էլ հաճախ էի խնդրում, որ մեծ ամանով փլավ

եփեն ինձ համար կամ ռեստորանի խոհարարին էի պատվիրում հատուկ ինձ համար պատրաստել մի մեծ ամանով: Ի վերջո, ինքս սովորեցի պատրաստելու ձևը և հիմա կարող եմ սիրածս փլավն ուտել, երբ ուզեմ ու որտեղ ուզեմ:

Թափառելիս հաճախ էի անցնում կահույքագործի արհեստանոցի մոտով և պատահում էր, որ, տեսնելով ինձ, նա ձեռքով էր անում, ներս հրավիրում ու ասում.

— Միտր Վիլյամ, հենց Ձեզ էի ուզում տեսնել: Դուք գրող եք, թեև առայժմ ոչ հայտնի: Եվ Դուք անդլերեն եք գրում: Ես նույնպես գրող եմ, դե, թերևս այնքան էլ գրող չեմ... համենայն դեպս, բանաստեղծություններ եմ գրում: Հայերեն: Սա անցած գիշեր եմ գրել:

Եվ նա կարգում էր իր բանաստեղծությունը, որն, իմ կառծիքով, իմաստուն էր, մարդկային ու զարմանահարաշ ոչ միայն հասարակ կահույքագործի, այլև ցանկացած մարդու համար:

Ես շնորհակալություն էի հայտնում ու գնում ծովափ, ուր քարեր էի հավաքում, ասես դրանք բառեր էին կամ մետաղադրամներ:

Համառությունս վարձատրվեց շորս տարի անց, երբ տպագրվեց առաջին գիրքս, և հիմա, թեև գրեթե քառասուն տարի է անցել, ուզում եմ երախտիքս հավաստել երկնքին, Աստծուն, Քրիստոսին, արևին, ամենին ու ամենքին: Իսկ հիանալի կահույքագործի բանաստեղծությունները մինչև օրս էլ առտիպ են. բոլորիս Աստված է տնօրինում:



Իհարկե, ոչ բոլոր երեւելի մարդիկ, կամ առնվազն մյուսներից փոքր-ինչ ավելի երևելի խելառներս են բիթլիսցի, թեև բիթլիսցիներին որ մնա՝ բոլոր երեւելի մարդիկ անխտիր բիթլիսցի են: Սա բնորոշ է հատկապես այն մեծագույն տխմարներին, որոնք անկոտրում համառությամբ ջանում ևս պահպանել ամեն բանում առաջինը լինելու Բիթլիսի ավանդույթը, այդ թվում նաև՝ ազադակող գեհկության մեջ, և պետք է ասել, որ այս վերջին առուսով անվրեպ հաջողակ են:

Միակ բարդությունը սա է. ի վերջո պարզվում է, որ նման մեծագույն մի տխմարն իր խելքով գրեթե շի գիշում քաղաքի հանրահամբավ խելոքներին՝ հայ լինեն, քրիստոնյա, անհավատ թե անգլոսաքոսն:

Սարոյանների տոհմի իմ ճյուղում իրենց տեղն ունեն թե՛ առաջին, թե՛ երկրորդ տեսակը, ես, կարծես թե, կրում եմ երկուսի ազգեցությունն էլ. և՛ խելք եմ, և՛ հիմար, համենայն դեպս, խենթ եմ:

Ասեմ նաև, որ ինձ սխալ շհասկանաք. «խենթ» բառը հայերենում երբեք քամահրանքով չի օգտագործվում, իսկ որոշ դեպքերում հիացմունք, եթե շասեմ պատկառանք է արտահայտում:

Սասունցի Դավիթն, օրինակ, խենթ էր: Ու եթե ձեզ չի վիճակվել իմանալու, թե նա ինչեր է արել, հսկիրճ լինելու համար ասեմ՝ ամեն ինչ:

Ոչ բոլոր մեծ, ցնցող կամ պարզապես հետաքրքիր հայերն են բիթլիսցի: Սասունն, օրինակ, գտնվում է Իիթլիսից մոտ քառասուն մղոն դեպի հյուսիս-արևմուտք, բայց այդ լեռնային քաղաքում էլ միշտ եղել են հիանալի մարդիկ:

Մյուս կողմից, քաղաքներ կան, որոնց վառքը ձեռք է բերվել բացառապես դրանց բնակիչների առևտրական տաղանդի շնորհիվ՝ գործարար մարդկանց, վաճառականների, թանկարժեք հնաոճ իրերի մատակարարների, դրամատերերի, վաշխատունների, շինարարության վարկատունների, գորգավաճ սոնների: Ակնկալվում է, անշուշտ, որ նման անձինք մի կողմից պետք է անգթորեն շահագործեն մարդկանց, այդ թվում՝ այրիներին ու երեխաներին, իսկ մյուս կողմից՝ հակայական գումարներ տրամադրեն անշահախնդիր բարեգործությանը: Նրանք կտակում են, որ իրենց հարստությամբ աշխարհով մեկ կառուցվեն հայկական դպրոցներ, ուր մանուկները միշտ ապահովված կլինեն թարմ կաթով:

Մորս հայրը՝ Մինաս Սարոյանը, Կարապետ անունով մի կրտսեր եղբայր ուներ, որը գնաց Ստամբուլ (այն ժամանակ քաղաքը կոչվում էր Կոստանդնուպոլիս), այնտեղ խառը գործերի մեջ ընկավ՝ կապված հույն աղջիկների հետ, թուրքական նավատորմի սպաներին այնպիսի վիրավորանքներ հասցրեց, որ ձերբակալությունից ազատելու համար նրան շտապ հեռացրին քաղաքից, հետո էլ ուղարկեցին Ամերիկա: Մոտավորապես 1898 թվականին նա հաստատվեց Ֆրեզնոյում՝ առաջին Սարոյանը Ամերիկայում:

1918 թվականին նա մի մեծ գումար նվիրաբերեց հայ որբերին: Վերջիններիս մեջ անկասկած կային նաև նրա արյունակից ազգականները, որոնք պատկերացում էլ չունեին, թե իրենք Սարոյան են: Երբ այդ նվիրատվություններ հավաքողները 1932 թվականին կրկին եկան Կարապետի մոտ, նա ասաց. «Տակավին չմեծցա՞ն այդ որբերը»:

Նա այն մարդկանցից էր, որոնց ճանաչելու համար ուրախ եմ: Տասը տարի առաջ, եբք Կարապետն արդեն վաղուց մահացել էր, թաղել ու գրեթե մոռացել էինք նրան, մեր ընտանիքի անդամներից մի

քանիսը հաճելիորեն զարմացրին ինձ՝ երկու տարվա բացակայությունիցս հետո հետևյալ բառերով դիմավորելով ինձ. «Երբ ներս մտար, երդում կուտեի, որ քեռի Կարապետն է»:

Այո, ի վերջո, նույն ճակատն ու նույն բեղերն են:

Մի անգամ, երբ արդեն երկու տպագրված գրքի հեղինակ էի, Սան Ֆրանցիսկոյում անցնում էի Իններորդ ավենյուտով, կահույքագործի արհեստանոցի մոտով: Պարոն Գաբրիելը խնդրեց, որ ներս գնամ: Չեռքն առավ գծավոր թղթի մի թերթ ու ասաց. «Այս բանաստեղծությունը երկու շաբաթ առաջ եմ գրել: Սպասում էի, այստեղով անցնես, որ կարդամ քեզ համար: Յուրաքանչյուր տողը հատուկ տառով է սկսվում: Հայտնատանում այդպես հաճախ են գրում, գիտես: Մենք դա օգտագործում ենք նաև որպես ծածկագիր՝ աշխարհի բոլոր ծայրերի մեր հայրենակիցներին մեր մտքինն ասելու համար: Մեր բանաստեղծները այդ եղանակով ծածկագրված կոչեր են հղել. «Հայե՛ր, միացե՛ք», «Հայե՛ր, պայքարե՛ք» և այլն: Իսկ այստեղ ես ծածկագրել եմ քո անունը: Հրատմե՛մ, կհավանես»:

Եվ նա կարդաց բանաստեղծությունը:

Ես, իհարկե, զղացված էի, քանի որ բանաստեղծությունը ոչ միայն իմ մասին էր, այլ նաև Արմենակ հորս, Թագուհի մորս մասին, Բիթլիսի, Ֆրեզնոյի, Սան Ֆրանցիսկոյի ու Ամերիկայի մասին:

Ննորհակալություն հայտնեցի ու դուրս եկա արհեստանոցից:

Տարիներ անց լսեցի, որ կահույքագործը հոգեկան խանգարում է ստացել ու ընկել հիվանդանոց: Հետո իմացա, որ մահացել է: Եվ ուրախ էի, որ տանն էր մահացել՝ արհեստանոցի վերևում գտնվող իր քնակարանում:

Կարծում եմ, կանխորոշված էր, որ նա խելագարվելու էր նախ, հետո մեռնելու:

\*\*\*

Մանոթներին մեջ, նույնիսկ սուլադրվելուցս հետո, շատ շեն եղել առաջնակարգ գրողները, թեև մի քանիսին, ճիշտ է, ճանաչել եմ:

Ես ավելի շատ նկարիչների հետ եմ շփվել, քան գրողների:

Նկարիչների մեջ մի բան կա, որ ես դժվարանում եմ հասկանալ: Նրանք՝ գրեթե բոլորը, ձգտում են բառերով բացատրել հրենց նկարածը, ու գրեթե միշտ՝ անօգուտ: Բառերը միայն խանգարում են նկարի ուրույն լեզվին, որն ամենևին կարիք չունի լրացուցիչ բացատրությունների:

Տարիներ առաջ, երբ ապրում էի Սան Ֆրանցիսկոյի Կառլ սթրիթի թիվ 348-ում, երբ քսանչորս տարեկան էի, գրում էի, բայց դեռ չէի տպագրվում, մի օր զբոսնում էինք ընթրիքի բլղուրով փլավից հետո, և Հենրի եղբայրս ասաց.

— Այս տանը մի կին է ապրում, որն աշխատում է Ռեսթըրն Յունիթնում: Ասում է, թե իր որդին մեծ նկարիչ է: Մի երկու բուպեով շմտնե՞նք:

Այդպես էլ արեցինք: Տիկինը հարավցի էր և խոսում էր գրեթե այնպես, ինչպես խոսում են բոլոր հարավցի օիկնայք հարավի վեպերի, շարժանկարների, ներկայացումների մեծամասնությունում, բայց ոչ բոլորում:

Տիկնոջ պահվածքը ենթադրում էր, ինքը գիտի, որ հարավի ավանդական ոճը պահող իր խոսելաձևը տպավորիչ է, և սպասում է, որ ես ու Հենրին հաստատենք, ոչ բարձրաձայն իհարկե, թե ըստ արժանվույն ենք գնահատում դա:

Զգիտեմ, ինչպես Հենրին, բայց ես հաճույքով էի լսում Նրան, հետևաբար՝ ուրախ էի գալուս համար:

Նա ոչ թե շափված-ձևված, չոր ու խստարարո ընտանիքի մայր էր, այլ խոշոր, գեր ու ջերմ մի տիկին, որը սասը-սաանհինգ վայրկյանը մեկ խոսքն ընդմիջում էր զրնգուն ծիծաղով:

— Դե ինչ,— ասաց նա,— դուք՝ երիտասարդներդ, դադափարի մարդիկ եք, իմ որդի Քլայբորնի պես. նա դեռ երեխա է, հոգյակս, ընդամենը քսանչորս տարեկան, իսկ դո՞ւք քանի տարեկան եք. նո՞ւյնպես քսանչորս, հիանալի է, դուք պետք է մնաք ու անսլայման տեսնեք նրան, ուր որ է կգա, համողված եմ, որ ինձ տեսնելու ու իմ անվերջ բլբլոցը լսելու համար շեք եկեի, այնպես որ, ձեզ սղստո ղգացեք, իսկ ես գնամ, տեսնեմ ինչով կարող եմ հյուրասիրել, ևս ջանք չեմ խնայի, դուք էլ, հուսով եմ, հիացած կմնաք իմ հյուրասիրությունից, կամ, համենայն դեպս, կասեք, թե հիացած եք:

Նա անհետուցա՞վ խոհանոցում, իսկ քիչ անց այնտեղից մի պատանի դուրս եկավ:

— Դո՞ւք եք Քլայբորնը,— հարցրի ես:

— Ոչ,— պատասխանեց տղան,— նա քսանչորս տարեկան է, իսկ ես՝ տասնութ: Ես Ֆարազըն եմ: Մայրիկն ինձ խոհանոցից բռեց:

Մենք ներկայացանք, հետո Ֆարազընին հարցրինք իր եղբայր Քլայբորնի մասին: Ֆարազըն ասաց.

— Դե, ես հաստատ չեմ կարող ասել, բայց ինձ թվում է, որ դա

աշխարհի հրաշքներից է: Նա կարող է մեկին նայել, նայել, հետո վերցնել մատիտներն ու վրձինները ու նկարել, և քիչ անց այդ մարդուն կտեսնես: կտավի վրա, ու նրա դեմքին ինչ-որ ուրույն բան էլ կավելանա, որը բացի Քլայբորնից ոչ ոք չի տեսնում:

Այժմ Քլայբորնն ու նրա գործերը ինձ ավելի հետաքրքրեցին. նրա մայրը համոզված էր, որ դրանք մեզ ցույց պետք է տա Քլայբորնը և ոչ թե ինքը, այլապես, իր կարծիքով, սրբապղծութուն կլիներ:

Սրբապղծ չէր արդյոք Քլայբորնի մոր ու եղբոր այդօրինակ հիացմունքը, եթե նույնիսկ ընդունենք, որ նա հանճարեղ էր:

Վերջապես մետաղե մեծ սկուտեղի վրա հայտնվեց հյուրասիրութունը. կիտրոնով թեյ, մեղրաբլիթե մարդուկներ և ստիտապ հացի միջուկով ու վարունգով սանդվիչներ:

Ես վրա տվեցի ու կերա ինձ հասանելիք բաժնից անհամեմատ ավելի շատ, բայց որովհետև ուտելիքը շատ էր, իսկ Հենրին կերավ յուրաքանչյուրից մեկական հատ (Ֆարադըթը միայն թեյ էր խմում), հնարավոր չէր որոշել, թե ես որքան կերա: Եթե, իհարկե, չհաշվելիր: Ես այդպես էլ արեցի՝ շորս մեղրաբլիթե մարդուկ, ութ վարունգով սանդվիչ:

Վերջապես հյուրասենյակ մտավ Քլայբորնը՝ զուսպ, վտիտ, արտահայտիչ արտաքինով մի երիտասարդ, որը մեզ հետ ծանոթանալուց անմիջապես հետո մեզմ ձայնով դիմեց ինձ.

— Թույլ կտա՞ք նկարել Ձեզ:

Մի ամբողջ ամիս շաբաթը երկու անգամ գալիս, նստում էի Քլայբորն Թեթրսոլի մոտ: Ի վերջո, նա հանձնվեց

— Աստված վկա, Դուք ամեն օր ուրիշ եք:

Հետագայում իմացա, որ նա հոգեկան խանգարում է ունեցել: Իսկ ազգային զորահավաքի ժամանակ լսեցի, որ հրաժարվել է ծառայությունից, ու նրան բանտարկել են:

Բոլոր ծանոթներս չէ, որ հոգեկան խանգարում են ունեցել կամ հրաժարվել են զինվորական ծառայությունից:



Երբ սկսեցի Թեյրու փողոցի թիվ 74-ի հինգերորդ հարկի բնակարանից հետևել Փարիզի անցուղարձին, 1960 թվականն էր, ու ես դեռ հիսուներկու տարեկան էի: Այն ժամանակ որևէ պատճառ չունեի հինգ

աստիճանաշարքերը մի շնչով շնորհակալությամբ, հետևաբար՝ այդպես էլ անում էի, ու, կարծում եմ, դա ինձ ավելի օգուտ տվեց, քան վնաս:

Առավոտները, արթնանալուն պես վազում էի ցած՝ «Փարի Հերալդ» (այն ժամանակ լրագիրն այդպես էր կոչվում) և փարիզյան բազմատեսակ ախորժատես հացերից մեկը գնելու: Գրանցից ամենատարածվածը այսպես կոչված «բագեթն» էր (և է). ավելի մեծը, հաստն ու երկարավունը անվանում էին «փարիզյեն», փոքրը «ֆիսե»:

Ես վերցնում էի լավ թխված, դեռևս տաք հացը՝ հիմնականում «բագեթը» և անմիջապես բարձրանում էի տուն: Թեյնիկով ջուր էի եռացնում, թեյ պատրաստում ու սեղավորվում կարմիր մահուդածածկ թղթախաղի սեղանի մոտ, նույն այս սեղանի, որի վրա դրված է գրամեքենաս, նախաճաշում էի թարմ հացով, հունական պանրով ու ձիթաւտղով: Հետո ազատում էի սեղանս ու սկսում գրել:

Ես միշտ համարել եմ, որ Փարիզում իմ հիմնական գործը դրելն է:

Եվ ո՛չ թե ամուսնանալը: Ո՛չ թե հարուստ ու հմայիչ կին գտնելն ու ամուսնանալը: Ո՛չ թե տեսակ-տեսակ երիտասարդ օրիսրդներին ու հասուն կանանց անկողին քարշ տալը (ճիշտ է, ժամանակ առ ժամանակ հլավիրում էի որևէ մեկին, բնական է, բայց՝ առանց նուրբ զգացմունքների, առանց հարց ու պատասխանի, առանց ինչ-որ պահանջների): Սա շեշտում եմ, որովհետև երբ մտածում են Փարիզի մասին, հատկապես, երբ ամերիկացիներն են մտածում Փարիզի մասին, հիշում են Ֆոլի Բերթեն ու հյուսիս արժիրուհիներին, որոնց հմտությունը անհասանելի գաղտնիք է սամերիկուհիների համար, և ... օ-լա-լա, աղջիկներ, աղջիկներ, աղջիկներ, ինչպես երգում էին դարասկզբին

Բոլորը կարծում են, թե Փարիզը չի մատարած խլտտացող զվարճանք է, բայց դա ճիշտ չէ, ոչ մեկ քաղաք այդպիսին չի լինում: Ղա ընդամենը Վրոսաշրջիկներին գայթակղելու խառնիքից սակն է:

Սկզբից ի վեր Փարիզում իմ գործը միշտ գրելն է եղել, քանի որ եթե մարդ դարձել է հիսուս սարեկան, իսկ դա սրղեն ոչ բառասուն է, ոչ էլ առավել ևս՝ երեսուն, և եթե նա հավատարիմ է ինքն իրեն, իր ընտրած գործին, աշխատի՞ պիտի, թե՞ ոչ:

Անձամբ ինձ հասարակ սա երբեք հարց չի եղել, ես պարզապես ուզում էի աշխատել ու դրա օգտին հիմնավոր փաստարկ ունեի՝ դրամի կարիքը:

Ինձ դրամ էր հարկավոր, իսկ ես դրամ վաստակելու այլ միջոց չուների: Իմ գործը գրելն էր, հետևաբար ամեն առավոտ թեյով, հաց

ու պանրով կուշտ նախաճաշելուց հետո անմիջապես նստում էի գրելու, իսկ երբ օրվա արածս գոհացնում էր ինձ, կրկին ցած էի վազում աստիճաններով՝ մոտակայքում զբոսնելու:

Յուրաքանչյուր գրող կհասկանա ինձ:

Մեծագույն հաճույք է, երբ օրվա գործն արված է ու կարելի է ազատ ու աննպատակ թափառել փողոցներում:

Դիտում էի ցուցափեղկերը, հատկապես գրատներինը, որոնք Փարիզում վաճառում են նաև քարտեզներ, հուշանվերներ ու բազմազան այլ մանրուքներ, և խիստ ասած, ամենին էլ գրատներ չեն: Իսկ ահա երկրորդ կարգի գրատները իսկական գրատներ են, կարճ ժամանակ անց ես արդեն գիտեի դրանց տեղն ու ամեն օր մտնում էի:

Լավագույններից մեկը Լամարտին փողոցի վերջում էր, Պուլասոնյերի հատման տեղից քիչ այն կողմ, ուր Լամարտինը դառնում է Մոնթոլոն: Այնտեղ անգլերեն հին գրքերի մեծ ընտրանի կար, և ես սիրում էի փորփրել գրադարակներն ու ընտրել մի քանիսը՝ յուրաքանչյուրի համար վճարելով մեկական ֆրանկ կամ քսանական սենթ, թեև կային հիանալի գրքեր, որ արժեին ընդամենը հիսուն սանտիմ կամ տասը սենթ:

Գրավաճառը մոտ 74 տարեկան էր, և երեք տարվա ընթացքում մեր միջև հաստատվել էին սիրալիր ընկերական հարաբերություններ, թեև բացի միմյանց ֆրանսերեն ողջունելուց ոչ մի բառ չէինք փոխանակել:

Բայց մի օր նա մոտեցավ ինձ ու ասաց հայերեն.

— Ինձ ասել են, որ Դուք Սարոյանն եք: Դա ճիշտ է:

Մեր բարեկամությունը նոր որակ ստացավ, բայց մեր կորցրածը, ո՞վ գիտե, դուրս ավելի արժեքավոր էր:



Նախկին հայ ըմբիշ Նազարեթ Թորոսյանի հետ մի տարի աշխատել եմ խաղողի այգիներում: Նա այն սակավաթիվ մարդկանցից էր, որոնցից, լմ կարծիքով, ինչ-որ բան սովորել եմ, որովհետև նա հաճախ դադարեցնում էր աշխատանքն ու խրատում.

— Եթե հակառակորդդ արջանել է վիզդ, աշխատիր զգալ նրա մկանների աշխատանքը, դրանց լարման ու թուլացման հաճախականությունը, և թուլացման հաջորդ իսկ պահին ամբողջ ուժով փորձիր դուրս պրծնել՝ համոզված եմ, որ կստացվի:

— Այո, սրբ,— ասում էի ես,— բայց այդ դեպքում հնարավոր



չէ այնպէս դուրս պրծնել, որ գլխով շղիպշեմ նրա կզակին, իսկ դա կանոնների խախտում է:

— Ոչ, սրբ,— պատասխանում էր նախկին ըմբիշը,— քո կտրուկ շարժման պահին նա ինքնաբերաբար հեռացնում է կզակը: Սակայն ենթադրենք, որ կզակը չի հեռացրել, և դու իրոք գլխով դիպչում ես նրան. ավելի լավ, տղաս: Մի անհանգստացիր, դու հազիվ թե որևէ բան զգաս, իսկ նա այդ հարվածից կարող է նույնիսկ գիտակցությունը կորցնել:

— Այո, սրբ,— ասում էի,— ես կհիշեմ դա:

Հետո կարող էինք լռել տասը րոպե, անդամ քսան րոպե, երբեմն նույնիսկ մի ամբողջ ժամ, քանի որ մուսկատի մշակումը որոշակի ուշադրութուն է պահանջում, բացի այդ, մենք գերադասում էինք լուռ հիանալ վազի գեղեցկությամբ:

Բայց վաղ թե ուշ ըմբիշն ուղղում էր մեջքն ու ասում.

— Եթե դու պառկած ես, իսկ նա ամբողջ մարմնով վրա է ընկել, որ թիակներդ հպի գորգին ու մաքուր հաղթանակ տանի, Աստված քեզ օգնական, ուրիշ ասելիք չունեմ:

— Այո, իհարկե,— ասում էի ես,— բայց մի՞թե այլևս ոչինչ չեմ կարող հակադրել նրան ու խուսափել պարտությունից:

— Կարող ես, իհարկե,— ասում էր տարեց ըմբիշը,— բայց դա հեշտ չէ, դա գրեթե անհնար է. ըմբշամարտում ամեն ինչ շատ արագ է կատարվում, ու եթե հավասարակշռութունդ կորցրած ընկած ես գորգին, էլ ի՞նչը կարող է քեզ ուժ տալ: Ընկած ես գորգի վրա՝ զուրկ ուժերդ հավաքելու ու հակադրուհի անցնելու որևէ հնարավորությունից: Փրկության ուղի, այնուամենայնիվ, կա, բայց այն ավելի շուտ արվեստի աշխարհից է, քան ըմբշամարտի: Անձամբ ինձ՝ ըմբշամարտով զբաղվելու ամբողջ ընթացքում առավազն հարյուր փորձից ընդամենը հինգն է հաջողվել:

— Բայց ինչպե՞ս,— հարցնում էի ես:

— Անհետանալ,— ասում էր նազարեթ Թորոսյանը,— բառիս բուն իմաստով: Անհետանալ հակառակորդիդ տակից: Այդպես էլ շատ կացա, թե դա ինչպես էր հաջողվում ինձ, թեև հարցին մոտեցել եմ բոլոր հնարավոր տեսանկյուններից: Քաշս այն ժամանակ 240 ֆունտ էր՝ ոսկոր, մկան ու ջիլ, այդքանը, բնականաբար, շատ է անհետանալու համար, և այնուամենայնիվ, անհետացել եմ՝ առնվազն հինգ անգամ: Հակառակորդս՝ մի անգամ ինքը՝ Աքցան Լյուխը, մյուս անգամ Զիմմի Լոնդոսը, մի անգամ էլ Ստանիսլավ Զաբիսկոն, արդեն տա-

պալել էր ինձ, և հանկարծ՝ հայտնվում էի նրա հետևում, ոտքի վրա, իսկ նա շուրջն էր նայում՝ տեսնելու, թե ուր կորա: Անընդհատ հարցնում էի ինքս ինձ. «Լավ, ինչպե՞ս է դա հաջողվում»: Մարտն, իհարկե, շարունակվում էր, ու ես հաղթում էի: Այն տարիներին, երևի ինքդ էլ հիշում ես, երեքից երկուսը գերազանց մենամարտեր էին:

— Այո,— պատասխանում էի:— Այո, սրբ, իհարկե, հիշում եմ: Իսկ ի՞նչ եղրակացության եկաք այդ ամենի մասին այդքան երկար մտածելուց հետո: Ինչպե՞ս էր Ձեզ հաջողվում այդպես անհետանալ: Ինչի՞ շնորհիվ էր, որ հնարավոր էր դառնում այդ անհավանական անհետացումը:

— Գիտես,— ասաց Նաղարեթը,— ի վերջո ևս եկա այն եղրակացության, որ դա քրիստոնեության շնորհիվ էր: Գա Քրիստոսն էր անում: Աստծո օրհնված որդին նոր հրաշք էր գործում: Զուր չէ, որ մենք առաջինն ևնք ընդունել քրիստոնեությունը: Քրիստոնեության շնորհիվ էր դա:

— Այո, սրբ,— ասում էի ես,— բայց ձեր հակառակորդներն էլ, բոլորն անի սիր, քրիստոնյա էին:

Ըմբիշը նայեց աչքերիս, ուշադրությամբ լսեց ասածս ու քիչ անց պառասխանեց.

— Ճշմարիտ է, բայց մենք հայ քրիստոնյա ենք, և դա է մեր առավելությունը: Իսլամացի քրիստոնյա լինի, հույն թե լեհ, Քրիստոսն, անշուշտ, նրան էլ կօգնի, բայց միմիայն հայ քրիստոնյային օգնելուց հետո:

Ինչէէ, այդպես էլ առիթ չներկայացավ ըմբիշի խորհուրդները գործնականում կիրառելու...

## ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ՀԵՏ\*

(Հարցազրույց)

«Այն ամենը, ինչ ասել եմ, իմն է,  
լավ է, ես տեր կկանգնեմ, ես տեր կկանգնեմ»

Կ. Պ. 1934-ին «Սթորի» ամսագրի փետրվարի համարում լույս տեսավ ձեր առաջին պատմվածքը՝ «Խիզախ պատանին թոշոդ տրապեզի վրա». նույն տարվա հոկտեմբերին «Ռանդոմ Հաուս» հրատարակչությունը լույս բերեց ձեր առաջին գիրքը՝ «Խիզախ պատանին թոշոդ տրապեզի վրա և այլ պատմվածքներ»:

Ուր ամսում դուք դարձաք այդ տարվա ամենից շատ ընթերցված, ամենից շատ աղմուկ հանած գրողը: 26 տարեկան էի: 41 տարի հետ գնալով, ինչպե՞ս կարող եմ բացատրել ձեր հանկարծակի և հանդիսավոր մուտքը ամերիկյան գրականության մեջ: Ռեպե՞ղ է ձեր հաջողության գաղտնիքը:

Վ. Ս. Ստիպված եմ պատասխանելու, որ այսպիսի հարցերում անպատմելի և անբացատրելի մի տարր գոյություն ունի: Սխալված կլինեմ, եթե չընդունեմ անպատմելին: Ամեն բանից առաջ ես ուզում էի իմ գրածները հրատարակված տեսնել, որսնազի կարողանայի սկիզբ ունենալ և ապրուստս շահել: Ուրեմն, ես ակնկալում էի ընդունելության այն տեսակը, որ ինձ թույլ կտար շարունակել դրականությունս, միաժամանակ կարիքը շունենալ ուրիշի նյութական օժանդակության:

\*Հարցազրույցը՝ «Մինչև վերջ Վիլյամ Սարոյանի հետ» վերնագրով տպագրվել է «Մշակական գրականություն» (այժմ «Նորք») ամսագրում (1976, N 1): Ամսագրի խմբագրության առաջարկությամբ այն վարել է Փարիզում բանաստեղծ Կարիկ Պասմանյանը: «Հարցազրույցը, — գրել է Պասմանյանը ամսագրին ուղղված նամակում, — տեղի է ունեցել 25-ին մայիսի 1975 թ., իմ բնակարանում, երեկոյան ժ. 8-ից մինչև 11.3) ք: Նույն օրվա ցերեկը մենք միասին եղել ենք Ֆրանսահայ գրողների միության ճաշկի սյթին, ապա Հայոց եկեղեցում՝ հարսանիքի: Հարցազրույցի լեզուն է անգլերենը, կան տեղեր, ուր Սարոյանը հայերեն է խոսել (տրվում են մեծատառով. — եմբ): Զրույցը ձայնագրել եմ երեք ժամանոց ժապավենի վրա»:

Կ. Պ. Լավագույն ընդունելություն՞ուն էր դա, արդյոք նման էր ձեր ակնկալությանը:

Վ. Ս. Պեսք է խոստովանեմ, որ հենց սկզբից ես ունեցա թերևս այն լավագույն ընդունելությունը, որ որևէ գրող ունեցել է առաջին գրքի համար: Հետագայում, «Իմ սիրտը լեռներում է» և «Քո կյանքի ժամանակը» թատերգություններով, ես մի ուրիշ տեսակի ընդունելություն գտա ընթերցողի և քննադատների կողմից, որ միաժամանակ զարմանքի և երախտագիտության արտահայտություն էր: Իմ առաջին գիրքը ինձ դարձրեց հռչակավոր և հարուստ:

Կ. Պ. Արագ չէ՞ր խանդարելու շահ...

Վ. Ս. Ոչ ինձ համար:

Կ. Պ. Կարողացա՞մ դիմադրել:

Վ. Ս. Դիմադրելու կարիքը չունեի, ինձ խենթի տեղ էի դրել: Երիտասարդ էի և հռչակն ու հարստությունը հաճելի էին ինձ համար: Ես չեմ հրաժարվել ինքս ինձ խենթի տեղ դնելուց: Իմ գրականությունն էլ այնպիսին էր, որ մարդիկ կարող էին ասել. «դու քեզ միայն խենթի տեղ ես դրել»: Ես համաձայնեցի լինել մի յուրահատուկ կերպար գրական աշխարհում. բարձր ու բացահայտ խոսող. խանդավառ և եռանդուն, ինքնավստահ, ամբարտաշտ:

Կ. Պ. Անմեղ, միամիտ

Վ. Ս. Շատ անմեղ և շատ միամիտ, միաժամանակ արթուն և խելացի, և այնպիսի ինքնահավանությունամբ, որ, կարծում եմ, ամեն գրող պիտի որ ունենա: Ես չէի հավատում, թե որևէ մեկը Ամերիկայում կարող էր ինձնից լավ գրել կամ պոտենցիայով ինձնից լավ գրող էր: Ես պատճառ չունեմ դա հիմա սրբագրելու: Բայց մենք հեռուսում ենք խնդրո առարկա գրականությունից: Այսպես լինելու հիմնական պատճառը իմ գրականությունն էր. դա նոր գրականություն էր, դիմամիկ գրականություն էր, կենսունակ գրականություն էր:

Կ. Պ. Հորես Գրեգորին ձեր ֆենոմենալ հաջողությունը կապում է Դեպրեսիայի շրջանի հոգեբանական պահանջներին և ավելացնում. «Մ'ը ժամանակ, երբ մարդիկ իրենք իրենց հետ չէին համարձակվում բարձրանայն խոսել, լավ էր իրենց փոխաբեն մեկ ուրիշը ունենալ, թոմաս Վուլֆի և Վիլյամ Սարոյանի պես, իրենց փվլած և կորավի անհատականությունը պարտադրող»:

Վ. Ս. Ո՞ւմ մասին է խոսում:

Կ. Պ. Վուլֆի և Սարոյանի:

Վ. Ս. Հորես Գրեգորին Երբեք չի խոսել իմ մասին. [www.a.pdf.com](http://www.a.pdf.com)  
խոսում:

Կ. Պ. Ջեբ:

Վ. Ս. Չեմ կարողացել: Որտե՞ղ է տպագրվել:

Կ. Պ. «Նյու-Յորք Հերալդ Թրիբյունում», 23 փետրվար, 1936, էջ 7:

Վ.Ս. Շատ բարի. Մենք կարող ենք շատ բան ասել շատ բաների մասին: Ճշմարտության տարր չի կարող չլինել ամեն բանի մեջ, ինչ մենք ուզում ենք ասել: Ես հանդիպել եմ սքանչելի գրողների և չեմ հասկանում, թե ինչո՞ւ նրանք շունեն այն ընդունելությունը, որին, կաշ- ծում եմ, որ նրանք արժանի են: Ուրեմն, առանց մեղ միստիկակա- նության մեջ նետելու, մեր դեմ է գալիս տարողության, հզորության հետ կապ ունեցող մի երևույթ: Ես միշտ եղել եմ ավելին, քան ընդ- հանուր մարդը: Ես միշտ եղել եմ մի քիչ ավելին, քան մեկ հոգի: [Դադար]: Ես ջանում եմ հնարավորին շափ հարգանքով մոտենալ ձեր հարցերին:

Կ. Պ. Անցնե՞նք ուրիշ հարցի:

Վ. Ս. Ո՛չ: Կանցնենք մեկ ուրիշ հարցի, բայց դո՞նե խոսակցու- թյան մեջ չկարծենք, թե հասել ենք փակույտու և վերադառնանք Դա արդեն անում ենք գրականության մեջ: Պետք է դուրս գալ դրանից: Ես ուզում եմ պատասխանել, և ժամանակ է պետք, որովհետև սա նոր է իմ մտքում... [Դադար]: Պատասխանը հետևյալն է. ես մեկն եմ, որ՝ է: Հնարավոր չէ ինձ կասեցնել, և հենց սկզբից դա երևում էր: Ես պետք է միշտ գրող լինեմ: Ես պետք է միշտ Ստրոյան լինեմ և ուրիշ ոչինչ: Անվճռական ոչ մի բան չկա իմ դոյություն մեջ: Իմ ողջ էությունը վճռական է, և՛ բարձր է, և՛ ուժղին է, և՛ ավելի տարածու- թյուն ունի, քան կյանքը: Արվե՛ստն է իմ էությունը: Այս բառերից ոչ մեկը ավետարան չէ, բայց նաև ոչ մի հարց ավետարան չէ: Միայն հարցը կամ միայն պատասխանը չեն կարող լինել մեր միակ փրկու- թյունը, հետևաբար մենք հարցնում ենք և պատասխանում Ես գրող եմ, և իմ առաջին գիրքը դա է հաշտարարում և հաստատում, և դուք բոլորդ ստիպված եք ինձ լսելու: Հիմա, եթե հարցնե՞ք՝ «ենթադրենք, թե չկարողացաք տալ ձեր երկրորդ և ապա քառասունչորսերորդ գիրքը»: Հենց այդտե՛ղ է հիմնական կետը. ես տվել եմ:

Կ. Պ. Կարո՞ղ եմ մի ուրիշ բան ենթադրել: Ենթադրենք, քե «Սթորին», ապա «Ռանդոմ Հաուս» հրատարակչությունը մերժում են հրատարակել «Խիզախ պատանին...», և դուք երկար ժամանակ մնում եք չհրատարակված, լիվա՞ծ մի գրող:

Վ. Ս. Ավելի ուժեղ կլինեի, քան երբևէ:

Կ. Պ. Ուրեմն, հաջողությունը խանգարե՞լ է ձեզ:

Վ. Ս. Ո՛չ, ինձ չի խանգարել, բայց ունեցել է այն ազդեցությունը, որ վերաբերում է մեզ բոլորիս. որքանո՞վ ենք ուզում մենք ենթարկվել քաղաքավարությանը, շնորհակալություններին, միօրինակ գովեստին կամ արհամարհանքին, սիրո և բարկության խառնուրդին: Ես թերևս ամենաջղային գրողն եմ, որին հանդիպել եմ:

Կ. Պ. Բայց ձեր գրականությունը լեցուն է սիրով:

Վ. Ս. Աաաաա՛աաաա՛հ, մի՛ խաբվեք: Այնքան էլ սիրով լեցուն չէ, որքան մարդիկ պատկերացնում են: Մի մոռացեք, որ իմ զրականության մեծ մասը դեռ անտիպ է, և որ Լս խմբագիրները, հրատարակիչների տրամադրության տակ եմ: Գաղափար ունե՞ք իմ այն պատմըվածքների մասին, որ խմբագիրներն ստացել են և հետ են ուղարկել: Չունեք: Ե՛ս ունեմ: Եվ նրանք շատ գրություններ են մերժել: Կա՞մ գրականություն չլինելո՞ւ համար. հյրե՛ք: Նրանք պարզապես չեն ուզում «մերժում են»: Այնպես որ, դժվար է դատել: Ինձ ծանոթ է ամբողջ տեսությունը Սարոյանի, տաքսիրտ հայի, որ ամբողջ աշխարհն է գրկում, համբուրում և այլն: Ես ավելի ճշմարիտ զայրույթ և բողոք ունեմ մարդու և իր խոցելիության, ապականելիության, կաշառելիության դեմ, քան որևէ այլ գրող. Հիմա, գուցե, հարցնեք՝ «Ուրեմն, ինչպե՞ս կարող եք այսքան սեր ունենալ»: Այդ սերը կարգապահության արդյունք է: Ոչ մեկը չպետք է մի պահ կասկածի, որ ես իր հետ չեմ: Այսօր ո՛չ եկեղեցում, ո՛չ էլ դրոշների ճաշկերույթին չկար մեկը, որի հետ համաձայն լինեի, բայց միաժամանակ ես չեմ կարող տարօրինակ լինել և գուրս գալ մարդկությունից: Նրանք բոլորը իմ ընտանիքի անդամներն են, այդ խենթերը, և ես սիրում եմ նրանց: Ես սիրում եմ այն խենթ բիթլիսցուն, հիշո՞ւմ եք, ի՞նչ հիանալի մարդ էր. 87 տարեկան, և աչքերից արցունքները հոսում էին:

Կ. Պ. Եվ որպեսզի ոչ մեկը չկասկածի, որ իր հետ չեմ... դերասանությամբ եմ դիմում:

Վ. Ս. Իմ ամբողջ կյանքում ես ինքս ինձ եմ խաղում ամեն տեղ: Ուրիշ էլք չունենք: Մենք մեր միջից ընտրում ենք նրան, որը պետք է լինենք, նայած պարագաներին: Ստեղծագործական առաջին գրգիռը դերասանական անվերջանալի բազմազանությունն է մարդ արարածի մեջ: Ես հավատում եմ, որ բոլոր գրողները դերասաններ են: Ոչ խակ և արտաքին իմաստով, այլ ուրիշին ճանաչելու իմաստով, ամեն մարդ լինել կարողանալու իմաստով: Այո՛, ես խաղում եմ:

Կ. Պ. Եվ հաճախակի՞ և քիչ փոխում:

Վ. Ս. Նայած պահին: Հանդիպում եմ ձեր տղուն, ես մի ուրիշ դերասան եմ: Ես չեմ կարող նույնը լինել նրա հետ, ինչպես որ եմ ձեզ հետ: Նախ և առաջ՝ ես պետք է ինձ ասեմ՝ սպասիր, սա մի փոքր երեխա է, հիշիր, որ նա կարող է վախով լեցուն լինել, դու շատ տարօրինակ տեսք ունես, քո հոտը տարբեր է, աչքերդ վայրի են, զգույշ, այնպես արա, որ երեխան քեզ ընդունի առանց վախի: Եվ նա չվախեցավ ինձնից: Նրա դուրը եկավ, երբ ձեռքը սեղմեցի: Նա ժրպտաց: Մենք դառնում ենք թռչուն կամ շենք, եթե հարկավոր է՝ մե՛կ դառնում ենք փողոց: Չե՞ք տեսնում, որ մենք հեղուկ ենք: Մի ինքնություն չի կարող կայուն լինել: Կա՞, արդյոք, մի բան, որ հոսքի մեջ անգամ շարունակում է իր իրականությունը, կայունությունը: Պիտի ասեմ, որ դա այն է, ինչ մենք ունեցանք այսօր հայ գրողների ճաշկերույթին, և դա կոչվում է արենակցություն, այսինքն կապ ընտանիքի հետ:

Կ. Պ. Խոսենք ձեր ընտանիքի մասին: Ձեր «Ներշնչում և արտաշնչում» հատորը ունե՛ր հեռակալ ձոնը. «Անգլերեն լեզվին, ամերիկյան հողին և հայկական ոգուն»։ Որքանով է ձեր հայկականությունը օգնել ձեզ վախճելու ձեր ինքնությունն ու գրականությունը:

Վ. Ս. Ես չեմ կարող իմ ինքնության մասին մտածել հայություններից դուրս: Սա ինձ համար այնքան հիմնական է, որքան առաջին կայծը կյանքի: Ես Լյարտական եմ ամեն բան այն անպատմելիին, որ մեր յուրաքանչյուրի ներսում է, և որը գալիս է յուրաքանչյուրի կենտրոնից, և՛ ընտանիքի մի մասից, և՛ հողի մի մասից, և՛ մշակույթի մի մասից: Ես վատ ուսանող եմ: Ես մշակույթները չեմ իմանում պատմականորեն կամ ըստ գիտության, ես դրանք ապրելով եմ միայն ճանաչում: Ուրեմն, պատասխանս ձեր հարցին պիտի լինի՝ իմ պարտքս Հայաստանի և հետևաբար բոլոր հայերի հանդեպ անհաշվելի, անչափելի է, վիթխարի է դա, այո, վիթխարի:

Կ. Պ. Արմատների և պատկանելիության մասին:

Վ. Ս. Հիմնական է, փախուստ չկա:

Կ. Պ. Կարո՞ղ եմ ասել, թե ձեր գրական արտադրության լավագույն տարրը ձեր հայկականությունն է:

Վ. Ս. Այո:

Կ. Պ. «Կոտրած անիվը», «Հայաստանի Անդրանիկը», «Հայր և հայր»...

Վ. Ս. Ոչ վիճակագրական խմաստով, այլ այն խմաստով, թե ի՞նչ

ձևով եմ օգտագործել իմ ինքնությունը: Ի՞նչ օգուտ ունեմ իմ լինելության արկածից: Դա է կարևորը:

Կ. Պ. Եղե՞լ եմ ամերիկացի:

Վ. Ս. Միշտ:

Կ. Պ. Դուք միշտ հայ եմ եղել և միշտ եղել եմ ամերիկացի. եկե՛ք այս երկվորյան մասին խոսենք:

Վ. Ս. Անպայման: Մենք արտագրությունն ենք բոլորի կողմից ընդունված երկու բաների՝ ժառանգականի և միջավայրի: Ես հայ եմ արյունով: Ես ամերիկացի եմ միջավայրով: Հայ եմ, բայց Կալիֆոռնիան իմ տունն է: Մեկը հարցնում էր. «Ի՞նչ է Կալիֆոռնիան ձեզ համար»: «Իմ ծննդավայրն է,— ասացի,— ես խորապես կապվել եմ դրան»: Ասում է՝ «Հայաստանի՞ շափ»: «Այո, Հայաստանի և Բիթլիսի շափ»: Այլաբանական կամ զգացական տեսակետով, անշուշտ, Բիթլիսը վսեմ է, գերազույնն է Բայց դա մեկ ուրիշ եզր է փորձառության, որ դեպի երազ կառաջնորդի: Բիթլիսը մի տեսակի հուշարձան է դարձել մեր կորուստի համար, և ես վերադառնալու մի հիվանդագին զգացում ունեմ: «Թրեյսիի վագրը» գրքումս կորուստը վերադառնելու թեման խելացնոր է, հալածախտային: Այն շուն-շանորդին լաց է լինում անցյալը հետ բերելու համար, և դա խելագարություն է: Ելավ Բիթլիսին, ես այնտեղ էի տասը տարի առաջ, շէի ուզում դուրս գալ:

Կ. Պ. Քննադատությունը որևան՞ով է ազդել ձեր գրելակերպի վրա:

Վ. Ս. Պետք է մի սարսափելի խոստովանություն անեմ. ես ինձ համար երբեք օգտակար որևէ բան չեմ սովորել որևէ թեր կամ դեմ գրությունից: Ոչ մի գրախոսական ինձ ոչ մի ձևով օգտակար չի եղել: Երբ երիտասարդ էի, ես պատասխանում էի բոլոր քննադատներին և դիտմամբ քննադատում էի նրանց: Հաճելի էր: Վերջերս նորից պատասխանեցի մի քննադատի, ցույց տալով մի քանի կետ, որ չէր ըմբռնել: Գրեցի. «Կարծո՞ւմ եք, որ ես իմ մասին եմ գրում. ես գրում եմ ձեր բոլորի մասին: Իմ ընթերցողների մեծ մասը կարդում են ինձ, երբ ուզում են հավատալ իրենց ներքին ճշմարտությանը»:

Կ. Պ. Գիրք կարդո՞ւմ եք:

Վ. Ս. Աշխարհում կարդալը ուրիշ ո՞չ մի բանի հետ չեմ փոխի: Ես սիրում եմ առանձնությունը, հանդարտությունը, սիրում եմ կապը այն բազում մարդկանց հետ, որոնք գրել են: Ես սիրում եմ անգամ թույլ գրողներին և աղբանոցի գրքերն եմ սիրում: Հետաքրքրվում եմ նրանց արածներով:



Կ. Պ. Դասականներից ո՞ւմ եմ բնդհանրապես կտրտում կամ հո-  
րից կարդում:

Վ. Ս. Ամենից շատ սիրում եմ կարդալ ուս գրողներին, առնվազն  
տարին մի անգամ: Մանավանդ Չեչուով և Տուրգենև: Սիրում եմ  
Տոլստոյի փիլիսոփայությունները, սիրում եմ նրա մարդկային ցեղը  
բարեկամելու գրադմունքը: Դա ֆանտազիա է, որ միայն Տոլստոյի նման  
մի մարդ կարող է ունենալ: Ո՛չ մեկը ո՛չ մեկին չի կարող բարեկամել:  
Շատ շատ՝ ինքդ քեզ... Տոլստոյին շահողվեց ինքն իրեն բարեկամել:

Մոտս ունեմ 1901-ի մի հին հրատարակություն՝ «Պատմվածքների  
թարգմանված ուսերենից». այդտեղից սիրում եմ Գոգոլի «Վերսր-  
կուն», Պուշկինի «Պիկովայա դաման»: Ուս գրականությունը ունի  
այնպիսի մի որակ, որ կարողանում է մեծ ոգիներին գոհացնել. պար-  
կեշտություն, անկեղծություն, անմիջականություն, թուլություն՝ տկարի,  
սխալի և ձախողության հանդեպ, տկարություն՝ ամոթխածության և  
խելագարության, համակրանք՝ զվարճալի կերպարի հանդեպ, և վեր-  
ջապես մի խորունկ, ջատ խորունկ սեր: Նոր հարց տվեր:

Կ. Պ. Դուրս ձեզ գրագե՞տ եմ համարում:

Վ. Ս. Հավակնություն կլինի, եթե ասեմ, թե սնդրագետ եմ:  
Ես մի արհեստավոր եմ, որի աշկերտությունն ահա քառասուն տարուց  
ավելի է: Քառասուն տարի ես այնքան եմ սրբագրել, որ երբ հիմու  
գրում եմ, սրբագրությունը իսկույն և ինքնիրեն կատարվում է: Հի-  
մա ես բնագրով եմ գրականություն մշակում: Եթե ուզում եք գրա-  
գետ անվանել այն իմաստով, որ ոճաբանները անգլերեն են օգտագոր-  
ծում, ո՛չ, ես լեզվական ստիլիստ չեմ, ոչ էլ ուզում եմ լինել, որով-  
հետև իմ օգտագործած բառերը հնարավորին շափ դուրս պետք է մնան  
իմ արածի ճամփից: Ստիլիստը ապրում է իր օգտագործած բառերի  
մեջ, ես այդտեղ չեմ ապրում: Ինչ որ գրելու լինենք, պետք է գրավենք  
ընթերցողին հենց սկզբից, առաջին իսկ տողից, նրան մի բան տա-  
լով: Եվ նա կասի՝ «այս մարդը ինձ հետ է խոսում, լավ կլինի, եթե  
լսեմ նրան», և նա կարդում է: Ո՛չ, ես միաժամանակ գրագետ և տեղե-  
րենը շատ պարզ ու շատ անմիջական օգտագործող մի գրող եմ: Անգլե-  
րենը միակ լեզուն է, որով աշխատում եմ:

Կ. Պ. Եվ լեզվական սխալներ՞ եմ անում:

Վ. Ս. Այո, բազմաթիվ սխալներ: Ես թողնում եմ, որ գրանք մնան:

Կ. Պ. Նշանակում է, որ դրանք միտումնավոր սխալներ են:

Վ. Ս. Այո: Միտումնավոր են, եթե մի բան կարելի է սովորել դրան-  
նից:

Կ. Պ. Թշվառությունը երբևէ ձեր գրություններում այնքան բանաստեղծական է ներկայացված, որ թվում է, թե բնթերցողին հրավիրում եք այնտեղ ապրելու...

Վ. Ս. Ուրեմն, դա թշվառությունն չէ: Եթե այդպիսի մի բան կա, դա թշվառությունն չի կարող լինել: Ես ծեր եմ, 67 տարեկան, ձախողվել եմ, իմ երեխաները մեծացել են, հեռացել և ինձ այլևս չեն սիրում, ես հոշակ չունեմ, մի լավ պատճառ չունեմ ուրախ լինելու, և հակառակ այս բոլորին՝ ես շարունակում եմ: Ունեմ մի սենյակ, սենյակումս մի սեղան կա, թուղթ և մատիտ, վերցնում եմ թուղթն ու մատիտը և գրում. [Գրում է]. Աշխարհը մի վիթխարի սուա է: Հետաքրքրական է: Ես գրում եմ հիմա: Ինչպե՞ս կարող եմ ես թշվառ լինել: Ես շնջում եմ աշխարհը մի վիթխարի սուա է, մոտաճյում, թե դա կարող է ինչ-որ դյուրագգաց մեկին վիրավորել և գրում եմ դրա տեղ աշխարհը իսկապես անհրակա է: Հետո նայում եմ իմ գլ.ածին՝ աշխարհը իսկապես անհրակա է: Հաստատ անհրակա է, թեև Պոլ Գեթթին և Գալուստ Կյուլբեկյանը կարծում էին, որ իրական է, նրանք սխալվում էին, և այլն: Ես սկսում եմ աշխատել: Հետո վեր եմ կենում, գնում եմ ձիալըսվի. այդտեղ մի բան է կատարվում, ձիարշավը սկիզբն է արվեստի: Կամ վերցնում եմ մատիտը և նկարում եմ: Կամ էլ սկսում եմ մի բանաստեղծություն գրել:

Կ. Պ. Ի՞նչ կարծիք ունեք Վիլյամ Սարայանի բանաստեղծության մասին:

Վ. Ս. ԻՄ ՄԱՅՐ ԳԱԹԱ ՏՎԵՅ ՆԱԶԱՐ ԼԵՎՈՆԻՆ ԵՎ ՆԱԶԱՐ ԼԵՎՈՆ ԸՍԱՎ. «ՄԱՄԻ, ԲՈՒ ԳԱԹԱՆ ՀԱՄՈՎ ՀԱՅ է»: Իմ բանաստեղծությունն էլ համով արձակ է: Վերջին քառասուն տարում իմ պոեզիայի հերոսը եղել է մեկ մարմին, և դա արևն է, և մեկ կապ մարմնի հետ, և դա աչքն է: Մի օր Արամը՝ տղաս, հարցրեց. «Հայրիկ, եթե ստիպված լինես պահելու քո մարմնի մի մասը, որի շնորհիվ ամենից շատ դու ինքդ կարող ես մնալ, ի՞նչը կլինի»: Ասացի աչքը, որովհետև չեմ կարծում, որ մեզնից մեկը կարող է ճշմարտությունից մի բաժին վերցնել առանց աչքի: Ասաց՝ «ենթագրե՞նք, թե կույր ես»: Ասացի՝ ներքին մի աչք կունենամ և արևի մեջ վերացական կտավներ կտեսնեմ:

Կ. Պ. Ձեր բոլոր գրերի նյութը միշտ դուր եք եղել:

Վ. Ս. Բացարձակապես:

Կ. Պ. Դժվար թե ստեղծած լինեք մի երևակայական կերպար:

Վ. Ս. Ինչ կարիք ունե՞մ. ես ամենից երևակայական կերպարն եմ: Ի դեպ, մի թատերգություն ունեմ, որ կոչվում է «Երևակայական հերոս, անունը՝ Սարոյան»:

Կ. Պ. Հրատարակվե՞լ է, բեմադրվե՞լ...

Վ. Ս. Ո՛չ հրատարակվել է, ո՛չ էլ բեմադրվել: Հենրի Տոնդան կարդաց: Եվ ինչպիսի՜ երեխաներ են Հովիվուդի մարդիկ. նա նախընտրում է ձախող դեր կատարել «Քո կյանքի ժամանակը» պիեսում ( և նա շատ ձախող էր այդ դերում), քան բեմ բարձրանալ մի անտիպ պիեսով և ջանք թափել ստեղծելու համար այդ նոր կերպարը: Նա կարդաց և վախեցավ: Դա սքանչելի, հրաշալի մի պիես է: Ստեղծե՞լ եմ, արվյոք, կերպարներ, այն իմաստով, որ ուրիշ դրողներն են ստեղծել... Ո՛չ: Իմ բոլոր կերպարները ես ինքս եմ: Ուրիշ բան չեմ կարող ասել: Դա կարող է նկատվել մի սարսափելի սահմանափակություն, բայց ճշմարտությունն է:

Կ. Պ. Դուք արդեն 50 գրիք ավելի եք հրատարակել, նույնքան անտիպ ունե՞ք:

Վ. Ս. Ավելի շատ անտիպ:

Կ. Պ. Վե՞պ, պատմվածք, քառերգություն...

Վ. Ս. Ամեն բան: Դա իմ գործը չէ: Դա նրա գործն է, ով գիտնակուն է կամ ուզում է գիտնական լինել: Իմ գործը ապրելն է: Գրել, ապրել է նշանակում, և դալիս է մի ժամանակ, երբ գրելն ու ապրելը՝ արվեստն ու իրականությունը մոտենում են իրար. իմ կյանքում ես ուզում եմ, որ դրանք միանան: Եթե ասեք՝ «ուրեմն, դուք սարսափելի դժբա՞խտ եք», կսլատասխանեմ, թե ինձ համար հնարավոր չէ դժբախտ լինել: «Ուրեմն դուք շատ երջանի՞կ եք». դա նույնքան անհնարին է ինձ համար: Ես ենթակա եմ մի մեծ պարտքի, և իմ պարտքն է շատ գրելը: Ես լաց պիտի շինեմ, ես պիտի շողբամ, շտրտնջամ մարդու սոսկալի կացություն վրա, մարդկային հոգու անտանելի դժոխքի, մարդկային ճակատագրի բանավածություն... Ի սեր Աստծո, մենք թե՛ չկիսմենք, մենք կնայենք երեխաներին, ծերերին, կլսենք նրանց, կքսլենք փողոցներով և կտեսնենք խենթություն, և կտեսնենք դեղեցիկություն, և կտեսնենք իմաստություն, և կտեսնենք գուժ, և կտեսնենք սեր: Ի՞նչ կարիք կա հանկարծ ինքս ինձ բոլոր ժամանակների ամենամեծ ապուշը դարձնելու, և ձևացնելու, թե ես որևէ մի բան ավելի գիտեմ, քան կարող եմ ընդունել... Ա՛խ, իմ կյանքը սկզբից ի վեր շատ դժվար է եղել, բայց ես շարունակեցի, շքեցի գրականությունը:

Կ. Պ. Կարծո՞ւմ եք, որ մի օր վերջնականապես կլե՛ք...

Վ. Ս. Երբե՛ք Ես պիտի գրեմ մինչև իմ մեռնելը, եթե, անշուշտ, հնարավոր է: Եթե հնարավոր չլինի, ապա պիտի խոսեմ սրա մեջ [ցույց է առնում մագնիսոֆոնը] և պիտի ասեմ. ՎԱՂԵՔ ԲԵՐԵՔ ԱՆ ԲԱՆՆՆՆ, ԵՍ

ԺԱՆԻ ՄԸ ԽՈՍՔ ՈՒՆԻՄ ԸՍԵԼԻՔ. ՑՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԸՍԵԼԵՆ ԱՌԱՋ, ՍԻՐԵ-  
ԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ, ԵՍ ԱՅՍՏԵՂ ՊԱՌԿԵԼ ԵՄ, ՈՐ ՊԻՏԻ ՍԱՏԿԻՄ ՀԻՄԱ,  
ԶԵԶԻ ԲԱՐԵՎՆԵՐ ԿՂՐԿԵՄ: [Ծիծաղում է]:

Կ. Պ. Խոսեմք մահվան մասին: Գուր գրել եմ. «Կգա մի օր աշ-  
խարհի հեամիջօրեին, երբ մարդ պարզապես պիտի ուզի պառկել և փա-  
կել իր աշխարհը»: Որքան հաճախ եմ ունենում այս զգացումը:

Վ. Ս. Երբ գրում էի «Մի օր աշխարհի հեամիջօրեին» գիրքը, ես  
խսկապես սրտշել էի պառկել անկողին և փակել աչքերս: Ինձ մնում  
է երեսուն տարի. ես կարծում եմ, որ 97 տարեկանիս պիտի հանգիստ  
փակեմ իմ աչքերը: Բայց մոտեցել եմ արդեն այն ժամանակին, ուր  
մահը շարունակ աճող և մեծացող իրականություն է: Մեր նպատակն  
է սակայն ձեր հիշած նախադասությունը օգտագործել և մահվան մա-  
սին խոսել:

Ես լավ ընկերներ եմ ունեցել, որոնք մեռել են սրտի կաթվածից,  
և բոլորը լաց էին լինում մեռնելուց առաջ Ե՞ս էլ լաց կլինեմ,  
արդյոք. թերևս, բայց ինչպիսի՞ նվաստացում է լացը մեռնելուց առաջ:  
Ինձ ծանոթ ամենահսկա մարդկանցից մեկը ժամերով լաց էր լի-  
նում և ասում էր ինձ. «Բիլ, ես գնում եմ», ասացի՝ բան չկա, լավ  
կլինես, ասաց. «Բիլ, ոչ այս անգամ»: Եվ նա գնաց 48 ժամ հետո: Տես-  
նո՞ւմ եր, մի անբացատրելի բան նրանց ասում է: Իժիշկը պետք  
չունի ասելու: Ես հավատում եմ, թե պատգամը գալիս է, հասնում  
անսխալականորեն: Ես նշմարել եմ, որ մահամերձը նաև դյուրս-  
գրգիռ է լինում, և դա կարելի է մոռալուտ մահվան շափանիչ ըն-  
դունել: Կաղիլակով մորս և քրոջս տանում էի Ֆրեզնոյից դեպի Սան  
Ֆրանցիսկո. երբ շուռ տվեցի Սկայլայն բուլվարն անցնելու համար,  
մայրս այնպիսի բաներ սկսեց ասել, այնքան էր ջլազրգիռ, որ ես  
մտածեցի, թե ներսից մի հարված է ստացել, և նա մեռավ կաթվա-  
ծից: Այդպիսի անբնական բարկությունը ոչ թե իմ շրջադարձի հա-  
մար էր, այլ մահվան շրջադարձի: Մի ուրիշ պատմություն. Պաղտա-  
սարյան ընտանիքում մի աղջիկ կար՝ Փենին, որ թոքախտից էր  
մեռնում: Տիգրանին ուղարկել էին հիվանդանոց, որ նրան օգնի: Տիգ-  
րան Պաղտասարյանը մորաքրոջս՝ Վերգինեի հետ է ամուսնացել:  
Տիգրանը նրան համոզում է. «Փենի, ՄԻ ՎԱԽՆԱՐ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ  
ՊԻՏԻ ԸԼԼԱ, ԱՆՈՒՇՈՒԹՅՈՒՆ ՊԻՏԻ ԸԼԼԱ, ԱՐԵՎ ՊԻՏԻ ԸԼԼԱ» և փոքրիկ  
Փենին ասում է. «ՏԻԳՐԱՆ ՔԵՈՒ, ԶԵՄ ՈՒԶԵՐ ՄԵՆԵՆԻԼ»: Գեղեցիկ է,  
չէ՞: Մի ուրիշ պատմություն. իմ ընկերներից մեկը շատ աղջիկներ  
ունեի, բայց նա, ով ամենից շատ էր նման թիթեռնիկի, առյան սպի-

տակութիւնն ունեցաւ: Բոլորս գնացինք հիվանդանոց: Նա փակեց իր աչքերը և ասաց. «Պետք է մեկնեմ հիմա, պետք է մեկնեմ» և մեռավ: Իմ տատը՝ Լուսին, մեռավ 88 տարեկանին և վերջում այսպես ասաց. «Ա՛յ ԶԵՄ ԿՐՆԱՐ»: Հոյակապ է, չէ՞՞ «Ա՛յ ԶԵՄ ԿՐՆԱՐ»: Որքա՞ն հասուն ենք, արդյոք, մեր փորձառութեան մեջ մահը փրկութիւնն նկատելու համար: Դա պատահում է, բայց դժբախտաբար միայն ինքնասպանութեամբ:

Կ. Պ. Մտածե՞լ եմ երբէք ինքնասպան լինելու մասին

Վ. Ս. Երբե՛ք: Երբ երեխա էի, կարողանում էի քնելուց առաջ իմ մեջ սլարփակել ամբողջ տիեզերքը: Պետք է խոստովանեմ, որ նաև կարողանում էի մտքումս ցանկանալ ինձնից բացի ամեն բանի կործանումը, սչնչացումը: Բայց, անշուշտ, դա անօգուտ էր: Ինձ հետաքրքրում է փաստը, որ դա անօգուտ էր: Կա՞, արդյոք, բնախոսական մի կարոտ երեխաների մեջ: Կա՞, արդյոք, մի կարոտ դեպի անհունը, պարտապր: Դերագուլն ինքնասպանութիւնը նյութի կործանումն է:

Ինքնասպանութիւնը ոճիր է: Երբ ես ծառայում էի ամերիկյան բանակում, այնքան էի կատաղել, որ կարող էի իմ բոլոր շարքիներէն սպանել կամ ինքնաստան լինել: Բայց անգամ այդ անտանելի շրջանում ես կարողացա համբերել և սպասել:

Մահը մահ է միայն, երբ անբաղձալի է, կանխահաս, սխալ, նվաստացնող: Այլապես մահը օրհնութիւնն է, մի վերջին հույս՝ դիմացդ սլարված: Միայն մեկ ընդունելի ինքնասպանութիւնն ինձ ծանոթ է. Մորլի Կեներլի հրատարակչի ինքնասպանութիւնը 84 տարեկանու: Նա հավաքում է իր զավակներին և ասում. «Ինձ շատ տարօրինակ բաներ են պատահում, առողջութիւնս խանգարվել է, այս գիշեր, հենց այստեղ մի մեծ հավաքույթ ենք սարքելու, պիտի ուտենք և խմենք, որովհետև շատ շուտով ես վերջ եմ տալու իմ կյանքին»: Ոչ մեկը չի բառարկում, և նա ընթրիքից հետո ինքնասպան է լինում:

Կ. Պ. Հեմինգուե՞յր...

Վ. Ս. Ես պիտի ամառի Նման ինքնասպանութիւնից: Ես հասկանալով ու սիրով եմ խոսում մի մարդու մասին, որ այլևս չէր կարողանում ինքն իրեն հանդուրժել: Յավում եմ, բայց կցանկանայի, որ բժշկութիւնը կամ իր բախտը տարբեր լինեին: Կուզենայի, որ նա շղիմեր այդ քայլին: Նրա կիներ՝ Մերի Ուելշը, ինձ ասաց այդ մասին, և երբ «Թայմ» թերթից ինձ հեռաձայնեցին Փարիզ այդ մասին հարցնելու համար, ես ասացի, որ «արկած է»: Եթե մարդ ինքնասպան է լինում, դա միայն արկած կարող է լինել, արկած է նույնիսկ այն, որ նա

ստիպված է ինքնասպան լինել, արկած է նաև իր ինքնության խողովոթյունը...

Կ. Պ. Ազդեցությունն ունեցել է Հեմինգուեյը ձեր գրականության վրա.

Վ. Ս. Երբե՛ք: Հին ու նոր կտակարանները ավելի են արել, քան ինքը [Անգլերեն դարձվածք է, որ նշանակում է, թե ոչ մի բան չի արել:— Կ. Պ.]: Շերվուդ Անդերսոնը, որ ազդել է Հեմինգուեյին՝ ազգել է ինձ: Ես սիրում եմ Շերվուդին, գովքեր եմ գրել նրա մասին, բայց ոչ մի գովք չեմ գրի Հեմինգուեյի մասին, որովհետև նա սիրում էր բոլորի վրա ազդեցություն ձգողի տեսք ընդունել, դա մի քիչ շատ հեռու է գնում: Ոչ, նա ազդեցություն չի ունեցել իմ գրականության վրա: Միաժամանակ անաղնիվ կլինի իմ կողմից շքնդունել, որ ես քաջ տեղյակ էի նրա գրածներին, տեղյակ և հարգանքով լեցուն: Թեև անասնեղի էի հաճարում «Ում համար է դողանջում գանգը» գիրքը:

Կ. Պ. Շերվուդ Անդերսոնից բացի ուրիշ ովե՞ր են ազդել ձեր գրականության վրա

Վ. Ս. Մարի Տվենն ու Ուոլտ Ուեթմենը: Գի դը Մոպասանը ինձ նետեց գրականության մեջ: Ֆրեզնոյի դպրոցում, 14 տարեկանիս գրադարանում կարդացի Մոպասանի «Զանգը» պատմվածքը. դա էր, որ ինձ գրող դարձրեց: 14 տարեկանիս Մոպասանն ինձ ասաց. «Պատմիր քո պատմությունը և՛ կողմ մի՛ ըռնիր»: Դրանից հետո «Հեքլրերի Ֆիննի արկածները» տպավորեց ինձ, Զեխովից ամեն բան: Իբսեն, Շոու, Զարլզ Դիքենսի «Օլիվեր Թվիտոր», որ ողբերգական պայմաններում հիասալի կատակերգություն է: Այդ գիրքը կարդացած օրերիս ես թերթ էի վաճառում անձրևի տակ և Օլիվերի մասին մտահոգ գնում էի տուն. Ես նրանից շատ ավելի սարսափելի պայմաններում էի ապրում և նրա մասին էի մտահոգվում. ԱՅԴ ԽԵՂՃ ԹՂԱՆ, ՀԻՄԱ ԱՆՆԻ ԻՆՉ ՊԻՏԻ ՊԱՏԱՀԻ...

Կ. Պ. «Սառ էգոյի տան մեջ» գրում դուք ասում եք հետևյալը. «Այն, ինչ ես գրում եմ, այն, ինչ ես երբեք գրել եմ, այլաբանական է: Դա պատահեց անխուսափելիորեն: Ես Փոֆր Ասիայի արտագրություն եմ, ուրեմն, իմ մտքում այլաբանականն ու իրականը շաղախվել են իրար: Ինձ հավաք յուրաքանչյուր իրականություն այլաբանական քնույր ունի»: Եկեք այս մասին խոսենք:

Վ. Ս. Ես ընդունում եմ դրա յուրաքանչյուր բառը: Այսօր մենք գնացինք հայ գրողների ճաշկերույթին: Իրական էր դա, այդպես չէ՞: Այսուհանդերձ, դա խորապես արմատացել է այլաբանության մեջ,

որ շարունակությունն էր հավաքությունների, բաժակաճանների, լիեւացների, մեկը մյուսին պատվելու, մեկը մյուսին սիրելու՝ գերեզման գնալուց առաջ: Այս բոլորը այլաբանական է: Այլաբանական է, երբ ես այդպես եմ մտածում և, մանավանդ, երբ այդպես եմ մտածում գրելիս:

Կ. Պ. «Յուրաքանչյուր իրականություն այլաբանական է» արտահայտությունը մեզ շատ հեռու կարող է տանել, դեպի բանավոր ավանդույթը հին Հայաստանի, դեպի հայկական ֆոլկլորը: Թվում է, թե դուրս պատմում եմ ձեր պատմվածքները հայրենի ասացողի նման, դուրս չեմ գրում դրանք:

Վ. Ս. Այո, բայց նաև շնորհանք, որ իմ պատմվածքները պատմվել են ինձ: Հենց որ դուրս եկա որբանոցից (հազիվ 8 տարեկան էի), ես սկսեցի լսել իմ պատմվածքները: Ես լսեցի դրանք իմ հայրական և մայրական տատիկներից և Կարապետ Սարոյանից: Ծերուկները բոլորը սքանչելի պատմություններ ունեն:

Կ. Պ. Կարելի՞ է սրանով բացատրել նաև ձեր անհավատալի րենն առատ արտագրությունը:

Վ. Ս. Կարելի է մի ուրիշ շացատրություն գտնել: Դա իմ անհանգիստ ոգին է: Ես ուզում եմ, որ իմ յուրաքանչյուր օրը նշանավորվի: Չեմ ուզում մի օր անցկացնել առանց մի բան անելու: 40 տարի է, որ այդպես եմ ապրում: Ես կարծում եմ, որ դա գալիս է այն օրից, երբ հայրս մեռավ: Չէի բնդունում նրա հանկարծակի և բացարձակ հեռացումը, և ես պատասխանեցի այդ հեռացումին. «Ձեզ հետքավոր չպիտի լինի տղուն էլ հեռացնել: Ես մի բան պիտի անեմ»: Գրականությունն ընտրելուց առաջ ես ուսումնասիրեցի այն ամենը, ինչ ժամանակը չի կարող ավերել. արձաններ, նկարներ, երաժշտություն և գրականություն: Ուրիշ ոչինչ: Փողը գործ չունեի այնտեղ:

Կ. Պ. Կա՞ մի բան, որ դիմանում է ժամանակին...

Վ. Ս. Միակ բանը, որ կարող է դիմանալ, հարաբերական գեղեցկությունն է և ճշմարտությունը: Դրա մեջ են մտնում աշխարհը, արվեստը, ամբարտավանությունները աշխարհի. այսինքն գնացքը, ինքնաթիռը և այլն: Դալով ինձ, ես ասել եմ շատ վաղուց՝ «Հիշիր սեպագիր արձանագրությունները, և երբ գրում ես, մտածիր, որ դրանք մտնելու են քարի մեջ, հետո միայն սկսիր գրել»: Դա կարող է քեզ անդամալույծ դարձնել: Կարող ես երկար ժամանակ ոչ մի բան չասել:

Կ. Պ. Դուրս հիշողություն ունե՞մ, ինչպես նաև երևակայություն:

Վ. Ս. Որտե՞ղ է հարցը:

Կ. Պ. Հաստատում է:

Վ. Ս. Յավի, ընկճվածության և կամ մերժման հետ հիշողությունը շատ կանուխ է գալիս: Եթե գտնվում ես սիրով լեցուն մի ընտանիքի կենտրոնում, քո հիշողությունը ուշանում է: Եթե դու զրկվում ես քո հորից՝ նրա մահով, քո մորից՝ պարտադրաբար, և գտնվում ես տարօրինակ հոտ ունեցող մի տեղ, որ կոչվում է որբանոց, առաջին պատկերը, որ կհիշես, բաժանումն է քո մորից: Դու դեռ երեք տարեկան չկաս, մայրդ հեռանալուց առաջ ասում է. «Դու հիմա մեծ մարդ ես, ամոթ է լաց լինելը»: Դու իսկույն վերջ ես տալիս քո լացին, ասում ես, մայրս իրավունք ունի, ես մեծ մարդ եմ: Հետո հսկիչն է գալիս. նա սխալ տեսք ունի և քեզ առաջնորդում է դեպի քո նեղլիկ անկողինը և այլն: Դա բացում է հիշողությունը: Եթե հայրս աշխատանքից վերադառնար, բռներ իմ ձեռքից և ասեր, թե գնանք ման գալու, դիտենք խաղողի վազերը, ծաղիկները և լսենք թռչուններին, ես չէի հիշի այդ, որովհետև այդտեղ ցավ չկա:

Հիշողությունը երևակայություն է: Որովհետև ինչ որ հիշում ես, նման չէ ճշդրատորեն քո տեսածին, և քանի որ քո տեսածը տարբեր է, քո հիշողությունը մի աստիճանն է երևակայության: Իսկ երևակայությունը վերհիշված իրականն է: Այսքան:

Կ. Պ. Ձեր «Հայ գրողները» պատմվածքում դուք ասում եք, որ ձեր անունը ԶԱՎԶԱԿ է: ԶԱՎԶԱ՞Կ եք դուք իսկապես:

Վ. Ս. [Ծիծաղում է երկար և լիաթոք]: Այո՛, օ, այո՛: Պետք էր, որ գրեի այդ պատմվածքը, իմանալով հանդերձ, որ մի քիչ անհարմար էր մի քանի բարեկամների նկատմամբ, մարդիկ, որոնց հանդիպել էի հայկական շրջանակներում: Բայց մենք այնքան հիանալի ենք մեր անկեղծության և մեր անձին տված կարևորության մեջ: Պատմվածքը զավեշտորեն շոշափում է այս ամենը: Զվարճալի պատմվածք է:

Կ. Պ. Լո՞ւրջ եք ընդհանրապես:

Վ. Ս. Խառնվածքով, լինելության փաստով, այո՛, ես շատ լուրջ եմ. Ինչպե՞ս կարող եմ լուրջ չլինել: Բայց պիտի շուղեի լուրջ լինել անդամալույծ լինելու շափ, անպետք լինելու շափ, շարժվել չկարողանալու շափ, նայելու և ասելու՝ «անհույս է»:

Ես գնացի Կալկաթա, և այն վեց օրերին, որ անցկացրի այնտեղ, մի գեղեցիկ կին նստել էր փողոցի անկյունում՝ հարուստ հյուրանոցի դիմաց իր շորս երեխաների հետ: Նրանք այնտե՛ղ էին ապրում: Ես նայում եմ նրանց և ասում ինքս ինձ. այս կինը աշխարհի ամենագեղեցիկ կինն է, այս ևրեխաները գեղեցիկ են, նրանք այնտե՛ղ են ապրում. Ես ի՞նչ կարող եմ անել նրանց համար. ոչինչ՝ գրելուց բացի:



Ուրեմն, շես հուսահատվում. շես նայում և ասում՝ «անհույս է»։ Կալկաթայում տեսածս մարդկային մի տեսակ ստորացում է և միաժամանակ բարձր արժանապատվություն, որ դժվար է որևէ ձևով օգտագործել։ Մի օր ես անպայման պիտի գրեմ այդ կնոջ և երեխաների մասին, փողոցի և անցնող անտարբեր մարդկանց մասին։ Հուսով եմ, որ մի օր դրանից մի բան դուրս կբերեմ։

Կ. Պ. Ձեր յուրաքանչյուր տեսածը օգտագործե՞լ եմ ջահում.

Վ. Ս. Այո, ջանում եմ։

Կ. Պ. Երբեք չե՞ք մոռանում ձեր գրող լինելը։

Վ. Ս. Երբեք։ Կմոռանա՞մ, եթե ապրում եմ։ Փող կուտակողը երբեք չի մոռանում, որ նա փող է կուտակում։ Իմն էլ գրականությունն է։ Դա իմ աշխատանքն է։

Կ. Պ. Ձե՞ք ձանձրանում։

Վ. Ս. Ոչ, շեմ ձանձրանում։

Կ. Պ. Դժվար չե՞ք ձանձրանալ...

Վ. Ս. Թող դժվար լինի։ Ինչո՞ւ հեշտ պետք է լինի։ Անշուշտ, դժվար է։ Ավելի դժվար է կյանքից զրկվելը, երբ դու դեռ ապրում ես։ Օրինակ, իմ ամերիկյան բանակի երեք տարիները։ Եթե իմ կյանքում մի թշնամի եմ ունեցել, դա էլ ամերիկյան բանակն է։ Ուրիշ ոչ մի բան ինձ չէր կարող սպանել։ Դժվարը փախուստն է այս մեծ օրենքներից, որ ես կոչելու եմ սլատմական արարքներ՝ անհատը անվորություն վերածող։

Կ. Պ. Քիչ առաջ խոսեցիք ձեր «Բազմաթիվ մարդիկ» երգի մասին։ Եկեք խոսենք Սարոյանի և երաժշտության մասին։ Դուրս խոսք և երաժշտություն եմ գրել մի քանի երգերի, որոնցից մեկը՝ «Եկուր իմ տունը», միջազգային հաջողություն է ունեցել։

Վ. Ս. [Սկսում է երգել]։

*Եկուր իմ տունը, իմ տունը,  
ես քեզ կոնֆետներ կտամ,  
եկուր իմ տունը, իմ տունը,  
ես քեզ խնձոր, սալոր կտամ  
և մի ծիրան, հե՛յ*

Կ. Պ. Մի տեղ ասում եմ հետևյալը. «Ամեն ինչ, որ գրել եմ, մի տեսակ երգ է». բացատրե՞ք այս։

Վ. Ս. Իմ առաջին թատերգությունը՝ «Իմ սիրտը լեռներում է», երգ է, [Երգում է]։

«Քո էյանքի ժամանակը» ազդողչություններ երգ է, մի ինչ-որ տեսակի սուևատ է: Մի գիրք ունեմ, որի կառույցը սիմֆոնիկ է: Գիրքը կոչվում է «Ռոք Վագրամ»: Ունեմ 11 ելանակ սկզբում, 11 եղանակ մեջտեղում և 11 եղանակ վերջավորություն, և բոլորը հանդում են մեկ եղրուկացություն: Գրքի ձևը երաժշտական է: Այսինքն, եթե ձևը չեղան է, այս ձևի ու լեզվի կապը միայն երաժշտություն կարելի է գտնել: Գրականության մեջ ձևը վատ հաղորդիչ է: Կամ հաղորդիչ են բառերը, որ մենք դնում ենք ձևի մեջ ես կարծում եմ, որ ոչ ոք չի կարողանում դաշնակը օգտագործել այնպես, ինչպես Շոպենն է օգտագործել: Ես չեմ թողնի, որ որևէ մեկը փորձի այդ մարդու տաղանդը նվաստացնել: Ֆրեդերիկ Շոպենը իշավունք տվեց դաշնակին ամեն բան խոսելու և ասելու ամեն ինչ: Եվ այդ ամենը շատ խորունկ և համեստ քաղաքավարություն: Քաղաքավարությունը ճշմարիտ նշանն է քաղաքակրթության: Ես որևէ մշակույթ չեմ կարող պատկերացնել, ուր քաղ սքավ սրությունը կենտրոնական սեղ չունի: Հայր դա խորապես ունի, բայց զարմանալիորեն ավելի շատ ունի օտարների հանդեպ, քան յուրայինների: .

Կ. Պ. Կարոյի<sup>6</sup> է ձեզ հայ Դոն Կիխոտ անվանել:

Վ. Ս. Ոչ, կամ էլ բավական չգիտեմ դրա մասին: Ոչ, Դոն Կիխոտը Դոն Կիխոտ է, ես հայ Սարգսն եմ: Այդքանը բավական է ինձ: Ես ոչ մեկի նման չեմ: ԵՍ ՍՄՐՈՅԱՆ ԵՄ: Ի դեպ, ես մի թատերգություն ունեմ, որ ուզում եմ հայերեն ձայնագրել և Սովետական Հայաստան ուղարկել ժապավենը, այնտեղ բեմադրելու համար: Այդ թատերգությունը կոչելու եմ «Ռեզեն-ՉՌեզեն-Ք՝ ՀԱՅ ԵՆՔ»: Կարծում եմ, որ դա լավ գործ է, ինձ համար դոնե մեկ հատիկ է:

Կ. Պ. Մտածե՞լ ե՞ք ձեր բեղերը անիլելու մասին:

Վ. Ս. Այն օրը, երբ աշխարհում հարսնացու էի որոնում, ես անիլելի բեղերս: Անբաժիկի տեսք ունեմ առանց բեղերի: Դա չի էլանակում, որ անբա սարսափելի չէ բեղերով... Ոչ, որոշել եմ շածիլել: Վերջերս նկատեցի, որ մի քիչ հեռու է գնում, մկրատեցի, մաշերս էլ կտրեցի: Մրանք զեջումներ են, որ մարդ կատարում է ՀԱՅՈՑ ՓԱՌԲԵՐԻ ՀԱՄԱՐ. (ՍՄՈԹ է, ՔԻՉ ՄԸ ԿՏՐԵ ԱՏԻ, ՔԻՉ ՄԸՆ ԱԼ ՄԱԶԵՐԻ ԿՏՐԵ, ԱՄՈԹ է) (ծիծաղում է): Հայերն ասում են՝ ՏԱՐՈՐԻ-ՆԱԿ ԸԼԼԱՆՔ, ԲՍՅՔ ԱՍԶԱՓ ՏԱՐՈՐԻՆԱԿ ՊԵՏՔ ՉԷ ԸԼԼԱՆՔ»: Ես կարծում եմ, որ բոլորս իրավունք ունենք մի քիչ լավ երևալու, առողջ

տեսք ունենալու: Ես մարդկանց շատ շուտ եմ ճանաչում, գրեթե անմիջապես: Զոկում եմ առողջ մարդկանց՝ աչքերին նայելով Ես գեր էի, մոտ 100 կիլո, և 78-ը շատ ավելի լավ է: Սխալ բան չէ ունայնություն ունենալը, արտաքինով հետաքրքրվելը: Իմ մայրը հումորի մեծ դպացում ուներ: Նա կարող էր կապկել բոլորին և պատմում էր, որ մի օր իր քրոջ որդին՝ Զավենը ճաշի է գալիս. «Գլխիս ԿԱԽԵՅ՝ ԿԵՐԱԿՈՒՐ ՊԻՏԻ ՈՒՏԵՐ», Զավենը մոռս է նալոււ և ասում. «ԳԻՏԵՍ, ԹԱԳՈՒՂԻ, ՄԱՐԴ ՔԻՉ ՄԸՆ ԱԼ ՏԵՍՔ ՊԵՏՔ Է ԸՆՆԵՆԱ»: Եթե որևէ մեկը տեսք չունի, նա էլ Զավեն է: Մայրս պատասխանում է. «ՀԱՊԱ՛, ՄԱՐԴ ՏԵՍՔ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ, ԱՅԴ ՔՈՒ ՍԻՒԱԹ ՏԵՍՔ Է» (ծիծաղում է):

Կ. Պ. Կցանկանայի՞՞ք խոսել ձեր, այսպես ասած, «մոլորյուն երկրի» մասին:

Վ. Ս. Օրինակ, ի՞նչ:

Կ. Պ. Խմել, թղթախաղ, ձիարշավ...

Վ. Ս. Ես կիսում եմ աշխարհի բոլոր մարդկանց հետ խենթ չլինելու ցանկությունը: Ես կիսում եմ նաև աշխարհի բոլոր մարդկանց հետ խենթ եղած լինելու ճշմարտությունը: Հակառակը ձևացնել ինձ համար պիտի լինի անազնիվ, և ես չեմ ձևացնում: Ես պիտի սախընտրեի, անշուշտ, խենթ եղած շլինել իմ կյանքում, բայց միաժամանակ չեմ կարող շրնդունել մեր բոլորի մոլություններն ու խենթությունները: Աններելի պայմանների տակ ես մի ժամանակ ինքս ինձ հիմարի տեղ եմ դրել, առանց այդպիսի վիճակում գտնվելու իրավունք ունենալու: Ոչ մեկ օրոր չկա իմ բառերի մեջ: Ես շափից ավելի եմ խմել և մի անգամ ալկոհոլամոլ եմ դարձել, այն իմաստով, որ ալկոհոլի կարիքն ունեի օրս սկսելու համար: Երկար շտեկ: Ես կարողացա ինքս ինձ բուժել առանց բժշկի կամ հոգեբույժի միջամտության:

Կ. Պ. Ե՞րբ էր դա:

Վ. Ս. Դա 1952—53-ին էր: Երկրորդ ամուսնությունից հետո ինձ բաժանեցին իմ երեխաներից: Ես զզում էի, որ իմ երեխաները իմ կարիքն ավելի ունեին, քան որևէ մեկ ուրիշի: Եվ ինձնից զրկվելը դժվար էր նրանց համար: Գուցե իրականությունը ճիշտ հակառակն է. այսինքն՝ նրանք ավելի լավ ժամանակ էին անցկացնում իմ հետո լինելով: Ես կարող եմ մեղավոր լինել մոլությանս և դերս սխալ հասկացած լինելուս համար: Բայց մենք՝ հայերս, փորձում ենք հայր լինել բոլորին: Ուրեմն, այդ ժամանակ ես մոտավորապես ալկոհոլամոլ դարձա:

Կ. Պ. Որին հաջորդեց խաղարկութիւնը:

Վ. Ս. Այո՛: Գիտենք, որ Դոստոևսկին մեծ խաղացող էր: Գիտնք նաև, որ նրա մղումը դեպի պատրանքը խաղի նրան նոր բան գրելու պիտի վերադարձներ: Կորսնցնելով նա պիտի մղվեր նոր գրելակերպի: Ես իմ «Մարդկային կատակերգութիւնը» գրեցի, որովհետև ևս վեդասում մի գիշերվա մեջ երեք հազար դոլար էի կորցրել: Դրանից շատ ավելի եմ կորցրել. մի օր ակումբներից մեկում կես ժամվա մեջ ես կորցրել եմ տասը հազար դոլարից ավելի:

Կ. Պ. Պարտե՞րք...

Վ. Ս. Պարտքերն սկսվեցին, երբ դեռևս բանակում էի: Իմ կինը իմ հաշվին էր շոռայում նա պիտի որ շափազանց հարուստ լիներ. ամուսնութիւնից հետո պարզվեց, որ սուտ էր: Նա մեծ բեռ էր ինձ համար: Ես խոսում եմ անանձնականորեն. նա անվերջանալի երեկոներ էր կազմակերպում, անվերջանալի մարդկանց էր հրավիրում և ամեն բան թանկ էր: Ես իմ գլխից վեր էի ապրում: Ոչ մի գրող իրավունք չունի այդպիսի կյանք վարելու: Սրանից հանեցեք նաև բանակում գրական ամլութիւնն ևրեք տարիներս:

Կ. Պ. Ե՞րբ էր դա:

Վ. Ս. 1942—45-ին, պատերազմի ժամանակ: Ես Փարիզում էի, Լոնդոնում, Լյուքսեմբուրգում և Գերմանիայում: Հիվանդանոց ընկա, բուժվեցի, և պատերազմը վերջ գտավ: Ուրեմն, պարտքերը կուտակվեցին շարունակ, անտիպ գրութիւններ շունենալուց և շոռայ կնոջից: Թվում էր, թե խաղը ինձ պիտի փրկեր դրամական ճնշումից, բայց ավելի վատթարացրեց իմ վիճակը. Մի օր միայն ձիարշավից 42 հազար դոլար պարտք ունեի, այնքան հուսահատ էի, որ Չիկագոյում խաղացի այդ պարտքի վրա և 60 հազար շահեցի, տվեցի պարտքս և ինձ մնաց 18 հազար դոլար: Բայց դա խենթութիւնն է:

Կ. Պ. Կարծում եմ ընդհանրապես կորցնում էիք:

Վ. Ս. Եթե խաղում ես, ստիպված ես կորցնել: Շահող խաղացողը խաբեբա է և ստախոս. նա անպայման մի բան է իմանում: Ես բացառիկ բախտ ունեի, բայց եթե, ասենք, շահում ես երեք հազար դոլար և շեք բավարարվում ու շարունակում ես, պիտի կորցնես, անշուշտ:

Կ. Պ. Գու՞մ գրել եք հետևյալը. «Ես չեմ կարծում, որ իմ գրակնութիւնը սենսիմենտալ է, բեկ մի շատ սենսիմենտալ բան է մարդ արարած լինելը»: Շատ լավ է ասված, բայց դեռ անգլո-սախոն ֆենս-

դատութիւնը շարունակուի և սենտիմենտալութիւնը ձեր գրականութեան ամենախոցելի կողմը նկատել... Ինչո՞ւ.

Վ. Ս. Քիչ առաջ խոսում էինք հայ լինելու մասին: «Մարդկային կատակերգութեան» մեջ Հոմեր Մաքոլին, ավելի ճիշտ՝ Հոմեր Մաքելլան, կամ Հրանդ Մաքելլան, կամ Հարութիւն Միքայելյան, կամ մի որևէ ուրիշ հայ անուն, չի խոսում սենտիմենտալ կերպով: Բայց երբ մի ամերիկացի է խոսում նրա փոխարեն, իսկույն սենտիմենտալ է դառնում: Այսինքն այն, ինչ շատ բնական է հայու համար, անբնական է դառնում ամերիկացու համար. Այս ամերիկացիները դերասան լինել էլ չեն կարող: «Մարդկային կատակերգութիւն» ֆիլմը անսուսնելի էր: Ես բանակում էի այն ժամանակ և ուզում էի դատ բացել «Մետրո-Գոլդվին-Մայերի» դեմ: Իմ սենտիմենտալ լինել-չլինելու հարցը պիտի թողնեմ, որ ժամանակը լուծի: Ես ճանաչում եմ շատ գրողներ, որոնք թվում է, թե ուժեղ են, պինդ և չրապաշտ. նրանք են սենտիմենտալը, ես գիտեմ այդ, ես սենտիմենտալ չեմ:

Կ. Պ. Սենտիմենտալ և Սամուել Բեկեթը...

Վ. Ս. [Երկար դադար]: Բացարձակապէս ոչ. Ես նկատի ունեմ «Սպասելով Գոդոյին» թատերգութիւնը, որի մասին մի գրախոսական եմ գրել: Թատրոնի պատմութեան մեջ դա բացառիկ գործերից է: Անկյունաքար է: Բեկեթը իր վարպետի՝ Զոյսի նման մեծ գիտնական է: Բայց իմ ջուրը չի գնում նրա հետ: Նախընտրում եմ շխոտել այդ մասին:

Կ. Պ. Ճիշտ կլինի Բեկեթի ազդեցութիւնը կամ արձագանքը գտնել ձեր «Քարայրաբնականում»

Վ. Ս. Ոչ թե «Քարայրաբնականում», այլ մեկ ուրիշ թատերգութեան մեջ:

Կ. Պ. Ո՞ր մեկի:

Վ. Ս. «Կյանքը Վոբաշի վրա»: Եթե երբևէ հրատարակելու լինեմ, ես անպայման շնորհակալութիւն կհայտնեմ Բեկեթին: «Քարայրաբնականները» իմն է ամբողջութեամբ, և եթե մի որևէ սվանդույթի է պատկանում, ապա ամենից հավանականը «Քո կյանքի ժամանակն» է: «Քարայրաբնականները» սրա տարբերակն է\*:

\* Հարցազրույցից երկու օր հետո մի նամակ ստացաւ Սարոյանից: Հարմար եմ գտնում այստեղ մի հատված մեջբերել այդ նամակից (Կ. Պ.).

«Եթե մի օր հարցազրույց ունենաք պարոն Սամուել Բեկեթի հետ, կարող էք

4. Պ. Ամերիկյան ցրականագիտության մեջ կա մի ընդհանրացած փաստանձ, որ դուրս լրիվ չե՛ք օգտագործել ձեր հրաշալի տաղանդը: Ի՞նչ է ձեր կարծիքը

Վ. Ս. Մինչև հիմա տեսաք, թե հարգանքով եմ ընդունում գրեթե ամեն ասվածի հավանական ճշմարտությունը: Այս էլ հավանաբար ճշմարտության տարրեր ունի իր մեջ: Պետք է մի պատմություն պատմեմ. Մաքս Բայեր ու Ջո Լուիս բնօրգամարտիկները մրցում են: Ջո Լուիսը չեմպիոնություն է ուզում, և Մաքս Բայերը չի սիրում հարված ստանալ: Առաջին ռաունդից հետո Բայերը վերադառնում է անկյուն և մարզիչն ասում է նրան. «Մաքս, սքանչելի ես, հոյակապ ես խաղում, ո՛չ մի հարված չհասցրեց քեզ»: Եվ այսպես շարունակվում է երեք ռաունդ, և վերջապես Մաքս Բայերն ասում է. «Հիմա ինձ լսիր. ահավասիկ երեք ռաունդ է, որ այնտեղ եմ, և ամեն անգամ, որ վերադառնում եմ, ինձ ասում ես, թե Մաքս, սքանչելի ես, հոյակապ ես, ոչ մի հարված չհասցրեց քեզ... Ի սե՛ր Աստծո, աչքդ դատավորի վրա պահիր, որովհետև մեկն այնտեղ ծեծի տակ հոգիս է հանում»: [Ծիծաղում է]:

Հիմա մեկը թող աչքերը քննադատների վրա պահի... որովհետև 40 տարի է, որ ես անընդհատ աշխատում եմ, և եթե ես չեմ, ապա ո՞վ է գրում իմ գրքերը: Ավելի լավ կանեք, եթե իմ քննադատներին հսկեք, թերևս նրա՛նք չեն օգտագործում իրենց տաղանդը: Ես ծուլլ չեմ: Ես ինքս ինձ հավատարիմ եմ և կարծում եմ նաև հավատարիմ եմ եղել իմ տաղանդին: Բազմաթիվ գրողներ անհետացան իմ շուրջը, ես շարունակում եմ ճշմարիտ գրող լինել:

4. Պ. Առանց ժողովրդականության:

Վ. Ս. Իմ գործը չէ ժողովրդականությունը: Մեկն ասաց. «Իուք հի-

---

նրան հարցնել, թե նա «Սպասելով Գողոթին» գրելիս չի՞ սզդվել «Քո կյանքի ժամանակի» Ջոյի և Մերի Լ.-ի միջև անցնող տեսարանից, որ «Սպասելով Գողոթին» իսկությունը ներկայացվել է խորապես պարզ մի ձևով: Մի պիես, որ բեմադրվել է Նյու Յորքում 1939 ին և հրատարակվել ույն տարին Ամերիկայում ու հաջորդ տարին Լանդոնում: Ոչ, պարոն Թեկեթի գրականությունը ոչ մի ձևով չի ազդել իմ ոչ մի գործին, ներառյալ այն պիեսը, որ ստիպեցի ինքս ինձ երևակայել, թե կարող է գոհը լինել այդպիսի ազդեցության, այսինքն այն պիեսը, որ գրվել ու բեմադրվել է 1961-ին և կոչվում է «Կյանքը Վոբաշի վրա»: Եվ վիթխարի սենտիմենտալություն կա «Սպասելով Գողոթին»-ի մեջ: Չարմանում եմ, որ դուք չեք նկատել այդ, շատ ավելի, քան իմ «Մարդկային կատակերգության» մեջ:

Վ. Սարոյան, Փարիզ, երեքշաբթի, 27 մայիսի, 1975

մա այդքան հոշակավոր չեք, որքան էիք», պատասխանեցի՝ «Ձեզ համար հոշակավոր չեմ, ինձ համար շատ հոշակավոր եմ»: Ես հոշակավոր եմ նրանց մոտ, ում համար իմաստ ունի իմ հոշակավոր լինելը. և ինձ համար դա իմաստ ունի:

Ինձ ստիպում եք մի լուրջ հայտարարություն անել. իբրև հրատարակված մի գրող, ես դիմացել եմ 41 տարի: Հրատարակված գործերս միայն նկատի առնելով, ես գոհ եմ և կարծում եմ, որ գրանք իրենց ամբողջականությամբ կարող են կանգնել բոլոր ժամանակների մեծերի կողքին: Ես կարող եմ նաև անանձնական լինելով տեսլ, ի՞նչ հիմա կամ որևէ այլ ժամանակ ինձ նման գրող չի եղել: Այնքան ժամանակ, որ մարդիկ գիրք են կարդալու, ոչ մի գրող ին՝ շատ իրավունք չունի մտածելու, թե ինքը պիտի կարդացվի ավելի, քան ես: Ես հավատում եմ իմ այս խոսքերին: Ես մրցակցության եղ չեմ ոչ մեկի հետ: Ես, կարող է, մի քիչ նախանձ ունեմ և բարկանում եմ, երբ ուրիշ մարդիկ շատ փող և շուտ հոշակ են ձեռք բերում, բայց դու էլ իմ սահմանափակումն է, իմ նկարագիրն է և ինձ չի խանդարում: Միաժամանակ ինձնից լավը չկա: Ոչ մի գրող ինձնից լավ չէ. ում անունը ուզում եք տվեք, լինի դա Բեկեթ, Ջոյս կամ Էրիչը Չոստանանք նաև, որ Բեկեթն ու Ջոյսը իրենց էրուդիցիայով, վիթխարի ուսումով, երկիմաստ բառերով, բառախաղերով, կատակներով և ըննադատությամբ զվարճացնում են սնոբին կամ մասնագետին միայն, մնացյալներս դուրս ենք մնում կամ ստիպված ենք ուղեգիր ունենալ: ՉԸԼԼԱՐ ուղեգիր՝ կարդալու համար այն գիրքը, որ իբր թե ինձ համար է գրված... Ինչի՞նչ է պետք ուղեգիրը: Այսուհանդերձ, չենք կարող շքնդունել, որ նրանք իրենց տեսակի մեջ մեծություններ են: Բայց ես նրանց չեմ կարող կարգալ, ինչպես ուսաներին եմ կարդում թեկուզ թարգմանությամբ, կամ ինչպես Մոպասան եմ կարդում:

4. Պ. Ամերիկյան գրականության «լրջության» և հոռետեսության ֆոնին ձեր կենսափինդ ու բարի կերպարները կարող էին նոր շեմություն հաղորդել ընթերցողին: Ինչո՞ւ այս արժանիքն անգամ մեղադրանք են դարձնում ձեր հասցեին:

Վ. Ս. [Ծիծաղում է]: Ինչո՞ւ, որովհետև քննադատները ծուռ են ու կամակոր: Բայց եկեք հարցը այդպես շղնենք: Ասենք միայն, թե չենք իմանում: Ես կարծում եմ, որ ինձ սխալ են կարդում: Վերջերս Վուտեր Քլըր քննադատը մի գրախոսական էր գրել «Քո կյանքի ժամանակը» պիեսի նոր բեմադրության առթիվ: Նա ասում է, թե անցյա-

լում կարծում էր, որ սա մի սենտիմենտալ, ճղճիմ պիես է, հիմա տեսնում է, որ սա հանդուգն, կատաղի, արդիական պիես է: Սա նշանակում է, որ այն, ինչ մեղադրվում էր որպես սենտիմենտալ ու ճղճիմ, կարող է ժամանակի ընթացքում նույն մարդու կողմից ուրիշ բան նկատվել: Երբ ես ասում եմ. «Մահ, մի՛ գնա դեպի իմ երկիրը, շատ ջավ մի՛ պատճառեք ծնողներին, երեխաները մի՛ հեռացնեք ընտանիքներից», սա էպիկ է, ոչ թե սենտիմենտալ: Գուցե ես մեղավոր եմ այն իմաստով, որ անվերջ ինչ-որ տեսակի կարոտ եմ բանեցնում: Բայց ի՞նչ անեմ, եթե չեմ ուզում, որ Կալկաթայի կինը իր երեխաների հետ նստի և ապրի փողոցում, հարուստ հյուրանոցի դիմաց: Եվ վերջապես, մի ինչ-որ տեսակի ամբարտավանություն և բարկություն պիտի ասեմ. շա՛տ լավ, եթե անհրաժեշտ է ինձ սենտիմենտալ կոչել, կասեմ՝ այո՛, սենտիմենտալ եմ, իմ պետքս չէ սենտիմենտալ լինելը, և ես մնալու եմ սենտիմենտալ, դուք ստիպված եք ընդունելու, որովհետև սենտիմենտալ լինելուց բացի ես բոլոր ժամանակների մեծագույն պրոդյուսերից եմ, և դուք ստիպված եք դա՛ էլ հաշվի առնել: Սենտիմենտալ ե այլ բաներ:

Կ. Պ. Դուր անփո՞ւյթ գրող եմ:

Վ. Ս. Ես արագ գրող եմ, բայց ոչ անփույթ:

Կ. Պ. Մշակո՞ւմ եմ ձեր գրածները:

Վ. Ս. Սկզբում չէի մշակում, կարծում էի, թե դա խաբել է ընթերցողին: Իմ առաջին գիրքը մշակում չունի: Սկսեցի մշակել ևրկրորդ գրքից և դրանից հետո միշտ սրբագրում եմ:

Կ. Պ. Ձեր բոլոր գրածներից կա՞, արդյոք, մի գրույթյուն, որի համար ավստոսում եմ:

Վ. Ս. Ոչ մի գրության համար չեմ ավստոսում, լինի դա հրատարակված կամ անտիպ: Սոմբրսեթ Մոեմը, երբ լույս ընծայեց «Ճամփորդի գիրքը» պատմվածքների ծաղկաքաղը, ուր տեղ էր գտել իմ առաջին պատմվածքը, ասում էր, թե Սարոյանը ներսի և դրսի գրող է. մեկ պատմվածք՝ ներս, ուր՝ դուրս: Ես հասկանում եմ նրան, բայց նաև ուզում եմ այսպես կոչված «թույլ» պատմվածքներս պահել, դրանք ինձ չեն խանգարում: Ես չեմ կարծում, որ իմ որևէ պատմվածքը կարող է իսկապես թույլ լինել:

Հիշեցի. մի վեպ ունեմ՝ «Խնդալու բանը», որի համար գուցե կարող եմ ավստոսալ: Ավստոսում եմ, որովհետև շատ է տխուր: Ես ամաշում եմ այն գրույթյունից, ուր չեմ ծիծաղում, և այդ վեպում ծիծաղ չկա:



Դրանից ընկճվում եմ: Դժբախտ վեպ է, տխուր: Հիվանդ վեպ է, շատ հիվանդ:

Կ. Պ. Հեղափոխե՞լ եմ ամերիկյան գրականությունը:

Վ. Ս. Կարծում եմ, այո: Կան շատ գրողներ, որ ընդունում են այդ: Ես հաստատ կոտրեցի դուռը ինձնից հետո եկող բոլոր դրամատուրգների համար: Նրանց մեջ են Թենեսի Ուիլյամսը, Օլրին և ամբողջ խումբը:

Կ. Պ. Ճի՞շտ կլինի ասել, թե ձեր լավագույն արտադրությունը մնում են ձեր քառերգություններն ու կարճ պատմվածքները և ոչ վեպերն ու ինքնակենսագրականները:

Վ. Ս. Կարծում եմ նախընտրության հարց կարող է լինել: Ինձ համար տարբերություն չկա: Սարոյանը ամենուր Սարոյան է: Եթե անհրաժեշտ է ձեռն անձնատուր լինել, ապա ես էլ ձեզ նման պատմվածքներին ու թատերգության կտամ նախասիրությունս:

Կ. Պ. Կարո՞ղ եմ ձեր բոլոր պատմվածքներից լավագույն Լեբի աճուճը ապա:

Վ. Ս. Կարող եմ: Առաջին՝ «Խիզախ պատանին Ռոշոլ տրապեզի վրա», երկրորդ՝ «Մարդ, որի սիրտը լեռներում է», երրորդ՝ իմ վերջին պատմվածքներից՝ «Այսօր է օրն արդյոք» և «Վախկոտները»: Այս երկուսը պետք է երրորդ լինեն, կատարեցեք ձեր ընտրությունը:

Կ. Պ. Ո՞րն է ձեր լավագույն քառերգությունը:

Վ. Ս. «Իմ սիրտը լեռներում է»:

Կ. Պ. Նորի՞ց. նախ պատմվածքը՝ «Մարդ, որի սիրտը լեռներում է» և ապա պատմվածքի հիման վրա գրված քառերգությունը...

Վ. Ս. Իրավունք ունե՞ք, պետք է լինի «Քո կյանքի ժամանակը»:

Կ. Պ. Մեկ կարճ և մեկ երկար վեպ:

Վ. Ս. «Թրեյսիի վաղըրը»՝ կարճ վեպերից և «Ոոք Վազրամը»՝ երկար վեպերից:

Կ. Պ. Մեկ ինքնակենսագրական:

Վ. Ս. «Զմեռներու համար»:

Կ. Պ. Մարդկային ո՞ր արժանիքն եմ ամենից շատ գնահատում:

Վ. Ս. Անկեղծությունն ու զարմանքը: Բայց մարդու ամենամեծ արժանիքը նրան կասեցնելու անհնարինությունն է: Դա տեսնում ենք մանավանդ Չարլի Չապլինի սկզբնական ֆիլմերում. նա ոչ մի բան չունենր, և ոստիկանները հալածում էին նրան, և շար բախտը նրան հալածում էր, բայց հնարավոր չէր նրան կասեցնել: Նա ընկնում էր փոսերի մեջ, նրա վրայով էին քայլում և դեռ նա վազում էր, նրան բան-

տարկում էին, և նա փախչում էր: Ես սիրում եմ ապրելու այս տեսակի համառությունը: Մենք՝ հայերս, ունենք այդ:

Կ. Պ. Ի՞նչ կարծիքի եմ այս հարցազրույցի մասին:

Վ. Ս. Պետք է ասեմ, որ ես Կարիկ Պասմաճյան բանաստեղծի և ինձնից 40 տարով երիտասարդ հայրենակցի հանդեպ մեծ համարում ունեմ, որ ես գոհ եմ ձեզ հետ զրույցելուց: Խոստովանում եմ, նեղանում եմ ձեզնից, որ ինձ վշտացնում եք սենտիմենտալ լինելու մասին շատ խոսելով: Բայց գոհ եմ: Դուք ձայնագրել եք այս ամենը ժողովանի վրա: Ոչ մի բան չեմ որակավորելու: Ինչ որ ասացի, ինձնից մի մաս է, կապված այսօրվա իրականության հետ՝ 25 մայիսի, 1975, երեկո: Մի բան ասացի, որ ստիպված էի ասելու, երբ ինձ հարցրիք՝ «կա՞ մի գիրք, որ ափսոսում եք». ես չեմ ափսոսում, բայց գոհ չեմ «Խնդալու բան» գրքիցս, որովհետև այդ գիրքը ծիծաղ շունի իր մեջ: Ես հավատում եմ, որ դադաղում անգամ մենք պետք է ծիծաղենք, թե մենք իրավունք ունենք մեր դավելշտությունները և զավզակությունները սիրով ընդունելու, նաև զարմանքով և երախտագիտությամբ, կամ ինչպես մշեցիներն են ասում՝ փոփոխության ու կորստի զգացումով. «Ի՛նչ էի՛նք, Ի՛նչ եղևինք»:

Կ. Պ. Մի վերջին հարց: Պիտի ուզե՞մ սրբագրության ենթարկել, մասեր փոխել այն հարցազրույցից:

Վ. Ս. Բացարձակապես ո՛չ: Դա դեմ է իմ ողջ էությանը և հավատքին: Ո՛չ: Այն ամենը, ինչ ասել եմ, իմն է, լավ է, ես տեր կկանգնեմ, ես տեր կկանգնեմ:

## ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ժողովուրդը, որի համար մեր ժամանակը դարձավ վերածնության ու սուղ-ծագործ ոգու և ուժի բազմաբեղուն դրսևորման դարաշրջան, համաշխարհային ար-վեստին ու գրականությանը տվել է այնպիսի պայծառափայլ, այնպիսի հանրամտաբան ու բարձրարժան անուններ, որոնցով իրավամբ կարող է հպարտանալ Ողբերգի և գեղեցիկի համընդհանուր իր գանձարանն առավ ազնվասեր ու արվեստասեր մաղկու-թյունը վարպետ Մարտիրոս Սարյանի կտավները, վարպետ Ավետիք Բասնակյանի Լեզու ու քանաստեղծությունը, Արամ Խաչատրյանի երաժշտությունը . Առավ, ամենայն սիրով, նաև Վիլյամ Սարոյանի անգլիալեզու, բայց և միաժամանակ հայասիրտ, տասնամյակներ շարունակ ամենուր արձագանք գտած, խորապես իմաստուն ու հմայիչ զրվածները, ամենեին վերաբերող, ամենեին պարզորեն ուղղված սարոյանական ջերմ ու ներա-շունչ խոսքը

Բնությունը Սարոյանին անզուգական տաղանդ ու եռանդ շնորհեց Հայ ազգը իբրև բնական մի ժառանգորդի օժտեց նրան հազարամյա տոկուն իր արյան խտագած եի-շողությամբ ու զգայնությամբ Հայոց բախտի բերումով նրա անձնական կենսավորձի, գրողական մաքառումի ու հաշողության Երկիրը եղավ խոշոր ու արագասլաց Սմե-րիկան՝ 20-րդ դարի մարդկության պատմական կյանքի այս կենտրոնատեղին ու խառ-նարանը. Ամերիկյան երուն ու խստաշունչ, բազմապիսի, բազմահանգույց կյանքի բո-վով անցած, դրա Ե՛ շարք, Ե՛ բարին հանաչած Սարոյանը հազար ու մի տպավորու-թյուններով հարստացրեց իր միտքն ու հոգին՝ նամիորդելով Եվրոպայում, ապրելով նրա Բաղաֆներում, մի Բանի անգամ այցելելով Խորհրդային Միություն, լինելով իր նախնյաց Բիրյիս Բաղաֆում, «հին հայրենիքում», հարազատ ժողովրդի, հայրենյաց լեռների իր կարոտն առնելով այսօրվա Հայաստանից, Երևանից, Էջմիածնից, Լոռուց ու Չանգեզուրից

Լիարյուն ու լիարժեք կյանք ապրեց նա, իրեն շնորհվածին կարողացավ սեռ կանգ-նել, շարժուն եղավ ու անխոնջ, զգայուն ու պայծառամիտ, ինքն իրենից կերակրեց հո-գեհարուստ, հիրավի փառահեղ մարդկային մի անձնավորություն, սեր ու հավատ բերեց մարդկանց ու սեր վայելեց. Ամեն բանից, ամեն գավից, հոգոյի, հրե՛վանքից, դառն ու Բազրից, կեղծ ու նշմարիտից, անհաստ մարդուց ու ողջ մարդկային գեղից, անցողիկ առօրյայից ու հավերժականից խոսեց իր «կյանքի ժամերին», իր ժամանա-կակիցների հետ, ազգ ու դասի խտրություն չղնելով դրանց միջև Խոսեց Եղբայր ս-բար, անկեղծորեն, սքտաբաց, մտերմիկ ու պարզ եղանակով: Իրենով ուրիշին զգաց, ուրիշներով գիտակցեց իրեն, զգացածն ու գիտակցածը, ապրածն ու տեսածը օրեցօր,

տարեցուարի խոստովանեց պատմեց, պատկերեց, արժե՛ւզուեց, արվեստի՝ համար նանաշելով ազնւի մի նպատակ, որն է, ի՛ր իսկ սաւածով՝ «օգնել մարդուն մարդ լինել»։ Իբրև արվեստագետ Սարոյանը ստեղծեց յուսանասակ գծագրի ու երանգավորման մի աշխարհ, հագեցնելով, սակայն, յուրակերպ ստանձնակի այդ աշխարհը համընդհանուր հնչելոյթյամբ և իմաստնոյթյամբ Սա Էղով, մնում է ու թերևս անանց կմնա Սարոյանի ստեղծագործոյթյան հանդէպ համայնատարած նետաբերոյթյան գրավակները կենսակարծան, մարդակոր ՚ան երևոյթնելով լի մեր դարում Սարոյանի կենսասեր, մարդկայնապահպան ձայնը բարի է ամենուեք ու ամենեքին և դրանով իսկ անգրին է, դրանով իսկ եամագրալիչ

Համամարդկայինով լեցուն, համաթարհային արձագանք գտած սարոյանական արվեստը՝ ծագումով «հայարչուն» լիկելով, արավելագործն նետաբերոյթյան, ստանձնակի, յուրագգաց ու խորին նանաշումի, հագեհարագա ընկայման տեղ ունի հայոց աշխարհում Սլստեղ է, որ երա ունի և մշտապես պիտի ունենա իր արժանավար ժառանգորդին իր շնորհապարտ ու հայատարիք ընթելոցովին։ Այստեղ՝ իր ժողովրդի երկում, Իսկերեկով, Հայաստանում.. Ել արանում է անու նարոյանի երկերի քառահատուր այս ժողովածուի նպատակամիտումն ու խորհուրդը սրա համար է, որ արժե նակ՝ նկկայանայի այս հրատարակոյթյան առիքով քիչ քե շատ ընդարձակ խոսել մեծատաղանդ գրողի կյանքից ու ստեղծագործոյթյունից։



Վիլյամ Սարոյանը ծնվել է 1908 թվականին ԱՄՆ-ի Սալիֆոռնիայի նահանգի Նրեզնո քաղաքում, շքավոր հայ գաղթականներ Սրմենակ և Քագունի Սարոյանների ընտանիքում Վիլյամն ընտանիքի չորրորդ երեխան էր, քայց առաջինը, որ ծնվել էր Ամերիկայում, ուր Սարոյաններին՝ ի քիվս քաղմահագուր արևմտահայների, բերել էր երե ոչ ավելի լավ, ապա գոնե դույզն իսկ պակաս կախյայ, պակաս դասն ու ծանր կյանքի հույսը Սակայն ամերիկյան իրականոյթյունը նրանց քե՛ դժվարոյթյուններ բերեց, քե՛ հուսախաբոյթյուն «Ամերիկան էր սա, և այստեղ էր հայրս, որն ինքնաշարժեր չէր ստեղծում, ձիերի առումախազ չէր գրագլում, չէր ստում ու կեղծում կամ որևէ այլ կերպ դրսևորում բարեկեցոյթյան հասնելու բնատուր ունակոյթյուններ»,— այսպես կասի տարիներ անց գրողն իր հուշապատումներում։ Սրմենակ Սարոյանը գուրկ էր աներիկյան ապրեչակերպի համար պիտանի հատկանիշներից երագրդի ու բանաստեղծի հոգու տեր այդ խոնուն մարդը՝ գիր ու գրականոյթյուն էր սիրում, կենսական բարիքներ բերող գործունեոյթյուն չէր որսնում, երագում էր ծառայել մարդկանց հոգևոր ու մտավոր կոթոյթյանը նա բնաշնորհ քառագիչ էր և ուսուցիչ, լուսավորիչ, քառագիչ էր Էղել իր եայրենիքում, ու նյու Յորքում Էղած առաջին տարիներին նույնպես քառագներ էր կարդում պրեսքիտեական եկեղեցում Շատ շուտով, սակայն, առոյթյայի դաժան պահանջները, իրեն հետևած ընտանիքի, հանապագորչա հացի հոգսը նրան ստիպում են թողնել գրերն ու քառագները և աշխատանք որոնել՝ մեկ վայրից մյուսը տեղափոխվելով Երբ 1911 թվականին երեսնյորամյա Արմենակ Սարոյանը մահանում է՝ այդպես էլ իր տեղը չգտնելով Սմերիկայում, նրա կրտսեր որդին՝ Վիլյամը, դեռ երեք տարեկան էլ չկար

Գրող Վիլյամ Սարոյանի կյանքի պատմոյթյունն ու նախապատմոյթյունը շարադրված ու ցուցադրված են նրա ինքնակենսագրական գրերի էջերում, բագմիցս ու

բազմերանգ արտացոլված են նրա վիպակների ու պատմվածքների գեղարվեստական աշխարհում

Սևմիջական, նուրբ ու բանաստեղծական իր գրչով ներկայացնում է նա մեզ մի մանուկ տղայի, որը եզրուր ու փուրերի հետ միասին մոտ հինգ տարի ապրել է որբանոցում, ուր հայտնվել էր այն պատճառով, որ հայրը շատ վաղ էր մահացել, և մայրը պետ է երկուսի վախարեն աշխատեք երեխաներին ապահովելու և ընտանիքի կյանքը ժամանակի ընթացքում կարգավորելու համար Մենք վկաներն ենք դառնում այդ տղայի առաջին տխուր և ուրախ տպավորությունների ու ապրումների, կյանքի պարզագույն, բայց և կարևոր տարրերից բաղկացած այն միջավայրի ու առօրյայի, որոնք մասնակցում են նրա գիտակցության ու բնավորության ամենակրթական ձևավորմանը Հոր կորստյան դառը զգացողությունը և այդ կապակցությամբ հառնող մտիվան ահեղ, անլուծելի հանելուկը, մորից կտրված լինելու ցավն ու մորմուրը, որ պարբերաբար սրվում էր յուրաքանչյուր այցելությունից հետո թերևս սրանք են Վիլյամ Մարոյանի վաղ մանկության ամենաուժեղ ապրումները, որոնք ընդմիջտ դրոշմվել են նրա հոգում եվ որքանով որ մանկության օրերին զգացածն ու տպավորվածը արտացոլվում է հասուն մարդու աշխարհագրացողության մեջ, այնքանով էլ այդ մանկական ապրումները հիմք են դնում մարդկանց նկատմամբ սարոյանական սոսնձևահատուկ ներազգացության, նրա ընդգծված արժեքային վերաբերմունքին այն ամենի հանդեպ, ինչը կազմում է «մեր կյանքի ուղին», որն անխուսափելիունեն կտրվելու է մի օր .. «Մահվան մասին մտածել եմ ամբողջ կյանքումս, մտածել եմ, ամենայն հավանականությամբ, այն պատճառով, որ հայրս շատ էր մահացել՝ երբ ես եմ տարեկան էլ չկայի Այդ բանը սրտովս չեկավ Տարիների ընթացքում՝ **ավելի ու ավելի ..**»։ Մեկ կարևոր հանգամանք ևս որբանոցում անցկացրած աղքատ ու **անուրախ տարիները** նրան տվեցին նախ՝ իր անձի՝ որպես շատերից մեկի, գիտակցումը և **սայա՝ վաղ ինքնուրույնություն և կոփվածություն**

1916 թվականից Մարոյանների ընտանիքը կրկին Ֆրեզնոյում է։ Գավառական փոքր այս ֆաղաքը գտնվում է Կալիֆոռնիայի լայնարձակ ու արևոտ Սան Հոակին դաշտավայրում Քաղաքում, ինչպես և ամբողջ դաշտավայրում ապրում են ոչ այնքան «գտարյուն» ամերիկացիներ, որքան հայեր ու մեքսիկացիներ, իսպանացիներ ու հնդկացիներ, իտալացիներ ու ֆիլիպինցիներ, լեհեր ու չեխեր Ֆրեզնոյում հատկապես շատ են հայերը։ Նրանք ներգրավվում են դարասկզբի սթափ, գործնական Ամերիկայի գործարար ու աշխատանքային մրենայրտի մեջ, ջանում են իրենց տեղն ու ապրուստը գտնել, հարմարվում են տեղի պայմաններին, կարգերին ու հոգեբանությանը, սակայն նրանց հոգում չի խամրում «հին հայրենիքի» կերպարը՝ իր հողով ու պատմությամբ, մարդկանցով ու նրանց նահապետական մաքրությունը պահպանած փոխհարաբերություններով, Լեզերով, սովորույթներով, խոսք ու գրույցով. նրանք սիրագործով պահպանում ու իրենց երևիսաներին են փոխանցում «հին հայրենիքի» լեզուն ու ավանդույթները, երեխաների մեջ սերմանում են բոլոր դժվարություններն ու աղետները հաղթահարող հոգու արիություն ու կենսունակություն.

Ամերիկյան Ֆրեզնո ֆաղաքի բազմամարդ հայկական՝ «սարոյանական» տոհմում իր աշխույժ, տղայական կյանքով ապրում է Վիլյամ անունով ձեռաբերասեր ու ընկալունակ, պոռթկուն ու երազկոտ պատանին. նա, իհարկե, դպրոց է գնում, սակայն նրա կենսագրության մեջ դպրոցը, թերևս, ամենատաղտկայի ու անհրապույր էջն է։ Դպրոցում ամեն ինչ այնքան ձանձրալի է, կեղծ ու ստորացու-

ցիշ . Իսկականն ու հետաքրքիրը նրա պատերից դուրս է: Յոթ տարեկանից Վիլյամը դրամ է վաստակում փողոցներում լրագրեր վաճառելով «Յոթ տարեկանից սկսեցի լրագրեր վաճառել մայր ու խաչմերուկներում և հիանալի փողոցային կրթություն ստացա. . Տասներեք տարեկանում, երբ մայրից անցա հեծանիվին, տեսա ինձ ինձ խաճուրի ցուցափեղկում փոստատան ցրիշի համազգեստով: Տեսա սատանայական էր, ինձնագրացողությունս՝ ավելի վատ նախ, սոսկալի շոգ էր ու քունն տանում էր: Իսկ ևս պետք է հեծանիվով սլանայի հարազատ ֆադաֆիս փողոցների շիկացած ասֆալտի դժոխքով մեկ՝ տեղ հասցնելով ու հավաքելով սիրային, սգո և գործարար հեռագրեր. . Երրորդ դասարանում առաջին անգամ վաստակեցի դպրոցի ամենաշար աղայի համբավը, ու ինձ հանախ անկյուն էին կանգնեցնում, հայհոյում, ֆաշում մագերս ու ականջներս և, ի վերջո, վանդեցին դպրոցից...» Սի ուրիշ դպրոցում էլ սովորեց, բայց այն նույնպես թողեց անավարտ. Պատանի Վիլյամը աչքի էր բնկնում կենդանի ու սուր մտքով, անկասկած ընդունակությունները նրանում ակնհայտ էին, սակայն ուսման բարեպարկեշտ հունն ու դպրոցական օրենքների շրջանակները նրա ինձնուրույնության ու յիեռսեղության, միամիտ ու ամեն բանի նկատմամբ պահանջկոտ հետաքրքրության, նրանում վաղ արթնացած բնականության ու նշմարտության ծարավի համար շէին եվ երբ Վիլյամի դպրոցական ուսուցիչներից մեկը, արտառովոր ինչ-որ բան նկատելով այդ ոչ օրինակելի աշակերտի մեջ, լրջորեն խորհուրդ տվեց նրան ժամանակին ուսումը շարունակել ֆոյեշում, եւ այսպես մտածեց. «Ինչի՞ս է պետք ֆոյեշում սովորելը Ռոպեսգի շարունակել տոնել ամեն տեսակի հիմարությունների վրա՞. Եվ հանդուրժեմ հարուստ հայրիկների օտլայած վերահապիկներ, պլլլյան կոշիկներ հագած բալիկների վիրավորական շարժումները Հենց նրանք էլ թող նստեն ֆոյեշներում նրանց դա պետք կգա, իսկ ինձ՝ ոչ»:

Վիլյամ Սարոյանը կանոնավոր ուսում ու կրթություն չի ստացել, բայց շատ ու շատ է ուսանել զբերից ու կյանքից Սշխարհին ու մարդկանց եւ ծանոթանում էր «ազատության մեջ», առօրյայի կենդանի ու բնական զարտոտիներում, ինձնուրույն տարբերակելով քարին ու շարը, արդարն ու անարդարը, գեղեցիկն ու այլանդակը, տխուրն ու ծիծաղելին Հետագայում այդ տարիների տպավորությունները մեծապես պայմանավորեցին նրա լավագույն ստեղծագործությունների՝ «Իմ անունը Արամ է» պատմը-վածաշարի, «Իմ սիրտը յեռներում է» թատերգության, «Մարդկային կատակերգություն» վիպակի, «Ֆեվրյի-հիլդի հեծանվորդը» ֆնարական-ինձնակենսագրական զբքի էյուրեն ու եղանակները.

Հուշերում դիմելով իր անցյալին, գրողը բազմիցս խոսելու է այն մասին, թե որքան մեծ նշանակություն է ունեցել իր համար պատանեկության ու երիտասարդության վառ, անդադար շարժումով հագեցած ժամանակը: «Ծո ի ծնե անհանգիստ եմ եղել, ու մշտապես շարժվելու գանկությունն ինձ երբեք չի լքել: Բոլոր հանապարհներն ինձ թվում էին կարհ, բոլոր շարժումներն՝ անբավարար. ես միշտ ձգտում էի դեպի մի նոր նպատակ, ավելի առաջ, ավելի հեռուն տանող հանապարհի, շարժման մեջ եմ հանաչել այն ամենը, առանց ինչի երբեք չէի դառնա այն գրողը, ինչպիսին դարձա: Դեռ տասնվեց տարեկան էլ շկայի, բայց շարժման շնորհիվ, երկար ժամանակ օրեցոր նեծանիվ էշելու շնորհիվ, բավական պատկառելի պատկերացումներ ունեի, թե ինչ է, ասեմք, սեր, արագությունը, ներագեղությունը, նպատակը, իմաստը, ձեր, ամբողջականությունը, առողջությունը և հումորը, և երաժշտությունը, և կենդանի շունչը, և վերջապես, գուցե սա է ամենակարևորը՝ սկզբի և վերջի փոխհարեակցումը»:

1928 թվականին տասնութամյա Վիլյամ Սարոյանը, որը մինչ այդ հասցուել էր և՛ փոռաաար լինել, և՛ սեւագործ բանվոր, և՛ սեզոնային մշակ Սան Հոակիների ֆերմաներում ու խաղողի այգիներում, թողնում է իր հարազատ ամերիկա-հայկական Ֆրեզենոն ու գնում Սան Ֆրանցիսկո: Առաջին շրջանում դժվարություններ շատ է կրում՝ միայնակ, կորած մեծ ֆաղափի փոքր մարդկանց հոծ բազմության մեջ Աշխատում է որպես հեռագրատան ծառայող, սպորտային ապրանքների խանութի վանառոզ, պահեստի բանվոր, ոչ մի տեղ երկար չի մնում, ապրում է վարձով տրվող խղհուկ սենյակներում՝ ազլեռ, հանախ կիսասոված կյանքով, սակայն այդ ամենը ոչ շատ ցնում, ոչ էլ թեւաքափ է անում նրան. Քանզի նրա՝ կենդանի երեակայությանը. դիւղակաւնությամբ ու հումարով օժտված, ազատ ու կենսասնոր բնավորությամբ անհեղեղստ ու որոնող Լեիտասարդի համար գլխավորը շարժումն էր. նայաճիկից դեպի անհայտը գնալը, նոր իրադարձություններ ու սլառեկներ, բնավորություններ ու նակատագրեր ներքնկալելը, մարդկային կյանքի էությունը, հակասությունները, առեսարակ իմաստը հատկանայր Սարոյանի նամար դա ինչպես արտափն, այնպես էլ ներքին աշխարհին վերաբերող նայտնագործությունների ժամանակ էր, ինքնանանաչման ու ինքնորոշման, այս կամ այն արժեքների, կենսական այս կամ այն ուղու լեւորոքան ժամանակ Այդ ժամանակվանից էլ նա վերջնականապես բնորում է գրողի ուղին և վործում է նշմարաացի ու պարզ կորելով արձանագրել տեսածն ու վերսպրածը՝ ձգտելով, կործենս, «կանգնեցնել» իր սեփական և շուրջը ծավալվող ու հասող կյանքի անկրկնելի ակերարթը: Բռնելով այդ ուղին, Սարոյանն ի սկզբանե առաջնորդվում է «մարդն որպես եղբայր հասկանալու և ջույց տալու», մարդկանց մեջ սիրո և բարության, եղբայրության սզին հաստատելու անկեղծ գանկությամբ իր անփոփոխ ազնիվ նվիրվածությունն այս պարզ, բայց նաև հավերժ բարոյական արժեքներին Սարոյանը ֆաղել էր հասարակ մարդկանց այն աշխարհից, որին կապված էր մանկությամբ, պատանեկությամբ ու երիտասարդույլամբ և որն րնդմիշտ ու ամենուր նրա համար մնալու է որպես միայ հարազատ ու գրավիչ աշխարհը Հարազատ առավել ևս այն սլառեռաով, որ այդ ախարհի մի մարը իր արյունակից հայերի շրջապարն էր՝ իրենց բարոյական լիցքով, մարդկային կապերի բնորոշ կայունությամբ և՛ բոլոր դժվարություններին ու աղետներին հակառակ, ծիծաղելու, կատակելու ու երագելու ունակությամբ:

Սարոյանի նեավորման մեջ, աշխարհում մարդկային ու գրողական դիրքորոշման նրա որոնումներում հակայական դեր են կատարում գրեեր, վաղ տարիքից նրան կլանած ինքնուրույն, յուրը րնթերցանությունը. «ես նայտնարերեջի, որ ընթերցանությունը կարող է աեկամներից թերես մեծագույնը լինել, և որ անթիվ են կարդալու արժանի գրեերը » Իրագարանում երաննոր գրեեր կարդալով երկար ժամեր է անցկացնում նախ մանուկ, ապա սլատանի Սարոյանը, և պատահական չէ, որ հանրային գրագարանը, որպես կուրես ու պարտադիր տարր, աակու է նրա պատմվա՛հներից ու վիպակներից շատերում, նրա րնարական հերոսների կենցաղում: Ոչ միայն Ֆրեզենոյի և Սան Ֆրանցիսկայի տներում ու փողոցներում է նա իր համար հայտնագործում բարդ ու հույժ հետաքրքիր կենդանի կյանքը, այլև՝ իսկապես հրաշքով, կրկին հանդիպում է այդ կյանքին, կենդանի մարդկանց՝ իրենց ուրախություններով ու տագնապներով, արցունքներով ու ծիծաղով, հանրային գրագարաններում իր կողմից տեղորեն կլանվող բազմաթիվ գրեերի էջերում: Կյանքի (որն անցնում է)՝ խոսքի (որը

մնում է և ընդմիջտ պահպանում իր մեջ կյանքը) վերածվելու հրաշքը ապշեցնում ու ոգեշնչում է նրան:

«Դեռ երեխա ժամանակս, Ֆրեզնոյում, առանց ընտրության ու տարերայնորեն կյանելով գրականությունը, կարդալով հանրային գրադարանում ձեռքս ընկնող բոլոր գրքերը, ես հայտնագործեցի մարդկանց, որոնց նկատմամբ համակվեցի խորին երախտագիտությամբ դու, մասնավորապես, Գի դը Մոպասանն էր, Ջեյ Լոնդոնը և Հենրի Լյուիս Մենկենը, բայց առաջին անձնավորությունը, որի նկատմամբ մտոփկությանս, ետրագատությանս զգացումը սուսնձեպես հստակ էր, Ջորջ Բերհարդ Շոսն էր

... Որպես մարդ, որպես անհատ ձևավորվել եմ բազմաթիվ գրողների ազդեցության տակ... Տասներկու տարեկանում կարդացել եմ Շոպենհաուերին, առանց շփոթվելու, առանց փամահրելու նրան՝ աշխարհի, այդ աշխարհի անեղծվածային բնակչի հանդեպ նրա փամահրանքի համար, չփամահրելով նաև այդ անեղծվածային բնակչին՝ ես կարդում էի սուսնց որևէ տարբերակման, նշանակություն չապով ո՛չ գեղարվեստական մակարդակին, ո՛չ գրողի անվանը. միայն թե գրող լինե, գիրք լինե, տպագիր տեխտ. կարդում էի Մարկ Տվեն և Ուոլտ Ուիթմեն կարդում էի ռուսներին՝ Չեխով, Անդրեյ Գոլկո: Կարդում էի Շերվուդ Անդերսոն ու Կարլ Սանդբորգ, Հերթուս Սրայն և Էռնստ Հեմինգուեյ: Կարդում էի Իբսեն և Օսկար Ուայլդ կարդում էի «Պոեզիա» նանդեսն ու Ֆրեզնոյի բուկինիստական խանութներում ձեռքս ընկնող բոլոր հանդեսները կարդում էի ամեն բան՝ Ամբրոզ Բիս և Թեոմ Հարտ, փրանսերեն, գերմաներեն ու իսպաներեն գրված գրքեր՝ որինչ շնտականալով, կարդում էի պարզապես այն պատճառով, որ գրեք էին, որ դրանցում ինչ-որ բան էր սավում. թեկուզև ինձ համար անհասկանալի լեզվով: Այդ ամենը նմայում էր ինձ, ես երախտապարտ էի՝ երախտապարտ էի սուս՝ գաղափարների, պատմությունների, ավանդությունների ու խոստովանությունների, թղթի ու բանափի, տպագրության ու գրեթե գոյության մեծ հրաշքի համար և այն բանի համար, որ այդ ամենը կարելի է վերցնել ու, առանձնանալով մի խաղաղ անկյունում, հանգիստ նսյել ու կարդալ»

Սարոյանը կարդում է ազահորեն և առանց որևէ սխտեմի, սակայն նրանում շատ վաղ է արթնանում ներագրացությունը գրականության մեջ նշմարիտի նկատմամբ: Մարկ Տվենը և Ուիթմենը, Դիքենսն ու Շոտն, Չեխովն ու Սոպասանը վաղ տարիքից դառնում են նրա սիրելի գրողները Իրենց սանեղծագործության օրինակով արդեն, մարդկանց ու կյանքի իրենց տեսողությամբ նրանք ազդում են Սարոյանի վրա, ձևավորում են նրան որպես անհատ, հաշում վստահելի կենսական ուղևորներ, իսկ գլխավորը՝ նրանում գրելու ծարավ են արթնացնում: Նրանց գրածն ու գրելածը Սարոյանին նույնպես համակում են գրելու, իր կյանքի ու նանաչած աշխարհի մասին պատմելու ցանկությամբ ու վեռականությամբ:

«Նրկար ժամանակ մտածում էի, թե գրողն Աստված է, երբ վերջապես հաստ Գի դը Մոպասանին, հասկացա, որ գրողը մարդ է նրա գրածն ինձ շատ դուր եկավ, և նույնիսկ այնպիսի զգացում առաչացավ, որ ես էլ միգուցե կարողանամ գրել, նիշտ այնպես ինչպես նա է կարողացել... ես շատ ժամանակ էի անցկացնում դպրոցի գրադարանում և մի անգամ պատահաբար ձեռքս ընկավ Գի դը Մոպասանի գրած գրքերից մեկը: Պատկերացում չունեի, թե նա ո՞վ է Գիրքը բացեցի ու կարդացի մի պատմըվածք, որն անգլերեն վերնագրված էր «Ջանգը»: Այն ժամանակ ամբողջ գրքից միայն այդ պատմվածքը կարդացի եվ դա կյանքումս առաջին պատմվածքն էր. որն ի սկսապես կարդացի, քանի որ կարդալ նշանակուով է նաև գրել, և կարդալով այդ



պատմվածքը ևս միաժամանակ գրեցի այն ու գրառա ինչ որ Լիպովսկի օրը, երբ կարգացի ու գրեցի Գի դը Մուպասանի «Ջանգը» պատմվածքը, կյանքիս հենց այն պահն էր, երբ գտա ինձ ինձ ևս պարզապես ցնցված էի ինձնում հայտնագործած մեծուքյան գիտակցությամբ։ Հազմունքից ամբողջ օրվա բնթացում ոչ մի խոսք չստացի։ Ես չի էի տխրությամբ, բայց այնպիսի տխրությամբ, որում նաև մեծ ու ախարյուն էա։ Վախեցած էի, մտածում էի, գուցե սխալվել եմ, բայց միտմամանակ գիտեի, որ վերապես ամեն բան պարզ դարձավ ինձ համար»

Հիշատակեմք ևս մեկ ոչ աննշան կենսագրական մանրամասն։ Մտազուտապես այդ ժամանակ նկատելով թե ինչ ուղղության են բնդունում Վիլյամի հետաքրքրությունները, մայրը նրան է հանձնում ամենաբանկազին բնասնեկան մասունքը՝ Մամենակ Սարոյանից մեացած ու երկար տարիներ ինձմեջ պահված թղթերի ու տետրերի ի կապուց։ Մանկական եհշտությունների պատահիկներով, մոր ու մյուս հարազատների պատմածներով Վիլյամն արդեն գիտի, թե ինչպիսին է եղել հայրը ինչ խոսք ու դժվար կյանքով է ապրել Սմերիկայում՝ աշխատանք գտնելու հույսով և աղավիզ և աղաք տեղափոխվելով, ինչպես է կարոտել իր սիրելի «հին հայրենիք», որը ստիպված էր եղել թողնել Բանուն ընտանիքի ապագայի, որքան խորն է զգացել իր հայրենակիցների բնդհանուր ցավն ու դժբախտությունը։ Հոր լուսանկարներից Վիլյամին է նայում տխուր ու ինքն զնման, ամենատես ու խորաբանակն աշխարհով մի մտուց Վերջապես, նրանակ Սարոյանի ձեռքով գրված թղթերն ու տետրերը Վիլյամի համար չազահայտում են միանգամայն նոր ու հույժ կարևոր կգրեք նա իմանում է, որ իր հայր բանաստեղծ է եղել, բանաստեղծություններ ու պոեմներ է գրել «հին հայրենիքի» լեզվով նրան անծանոթ են այդ լեզվի տառերը ու նա՝ հոր ստեղծագործությունների միակ ընթերցողը, անկարող է կարգալ դրանք, սակայն գուշակում, հասկանում է կյանքի նկատմամբ այն հայացքը, այն հույզերն ու զգացմունքները, որոնք գրելու կին մղում հորը։ Հոր մեջ գրողի հայտնագործելը կարծես մեկ անգամ էլ է հուշում Վիլյամ Սարոյանին, թե որն է իր կոչումը

«Հորս լուսանկարներում, — հետագայում կգրի Սարոյանը, — ես գրող տեսա, որոշ ժամանակ անց ես տեսա Գի դը Մուպասանի, Ջարյո Գիֆենսի և Անտոն Չեխովի լուսանկարները և ամեն անգամ, ուշադրությամբ նայելով նրանց դեմքերին, ես գտնում էի, թե որքան նման են նրանք հորս ևս շեմ նանաչել նրանց, շեմ նանաչել հորս, բայց նրանք ես՝ յուրաքանչյուրն իր ժամանակին ու բույրը միասին, դաժան հայերս, եհշտ այնպես, ինչպես փաստորեն բույր գրողները, ում գրվելը սիրելի են ինձ համար»

Տասնչորս տարեկանում Վիլյամը գրամեկնա է հայթայթում և կատարում գրելու առաջին փորձերը։ Նա չի ձգտում որևէ բան հորինել, նա պարզապես նկարագրում է շրջապատում տեսածը, զգացածը՝ «Ինձ ոչ ոք չէր խնդրում, որ գրեի։ Ինձ առհասարակ ոչ ոք ոչինչ չէր խնդրում։ Պարզապես ես գայություն ունեի, ազբում էի այս աշխարհում և ինձ համար գրելուց լավ զբաղմունք չէի տեսնում։ Փուձել եմ տարբեր զբաղմունքներ, մտածել ու ի վերջո որոշել, որ ամենահարմարն ինձ համար գրելն է .. Ընտրությունս պայմանավորված էր այն բանով, որ սովորաբար ամեն ինչ շատ շուտ ձանձրացնում էր ինձ, իսկ այստեղ ես պատկերացրի, թե որքան բազմազան է աշխարհը և բազմաթիվ այդ մասին գրելու միջոցները, և մտածեցի, որ նման զբաղմունքը չի ձանձրացնի Դրանում շտապվեցի»։ Սան Ֆրանցիսկոյում երիտասարդ Սարոյանի կյանքը չի է ավելի հափշտակված, ավելի լուրջ ընթերցանու-

բյամբ ու գրելով Այստեղ նա ոչ միայն վերջնականապես գիտակցում է իր գրական կոչումը, այլև նստակորեն սահմանում իր գրողական խնդիրները, թեմաների շրջանակը և փորձում է մշակել ինֆնուրույն ստեղծագործական ձեռագիր: 1928 թվականին նա գնում է Նյու Յորք, աշխատանք է գտնում հեռագրատանը և ապրում այստեղ հինկյամիս: «Ինչու գնացի Նյու Յորք՝ Գնացի, որովհետև ներգաղթյալ էի, իսկ բուր ներգաղթյալները ձգտում են գնալ Նյու Յորք՝ Նյու Յորքում ապրել էր հայրս, ինչո՞ւ ևս էլ որոշ ժամանակ շապրեի այստեղ Առավել ևս, որ դա կարող էր օգնել զրկածֆներին, բարեյալել գրողական ոճս: Հանրակառնով ուղեորությունն ինձ հոտակ պատկերացում ավեց այն մասին, թե ինչ ասել է մեծ երկիր, իսկ Նյու Յորքը է՛լ ավելի հոտակ պատկերացում ավեց այն մասին, թե ինչ ասել է մեծ քաղաք, և ինչպես են մարդիկ ապրում մեծ քաղաքում նրանք ապրում են հիշտ այնպես, ինչպես Ֆրեզնոյում, միակ տարբերությունն այն էր, որ այստեղ նայեմքերին ձյուն եկավ»:

Նյու Յորքից Սարոյանը նորից վերադառնում է Սան Ֆրանցիսկո. Մի քանի տարի նա իր պատմվածքներն ապարդյուն ուղարկում է Ամերիկայի գրական հանդեսների խմբագրություններին, սակայն ոչ ոք չի ուզում տպագրել դրանք՝ Միայն 1933 թվականին Սարոյանին հաջողվում է մի քանի պատմվածք տպագրել (Սիրակ Գորյան կեղծանունով) «Hairnik» հայկական լրագրում իսկ որոշ ժամանակ անց, 1934 թվականի փետրվարին, Ուիթ Քարները և Մարթա Ֆոլին՝ ամերիկյան առաջատար գրական հանդեսներից մկի՝ «Սթորի»-ե հրատարակիչները տպագրում են Սարոյանի «Ճոնաձողով սավառնող խիզախ պատանին» պատմվածքը: Մրան հետևում են մյուս պատմվածքները Առաջին իսկ տպագրված գործերը Սարոյանին հաջողություն են բերում ինչպես ընթերցող հասարակայնության, այնպես էլ մասնագետների ու քննադատների շրջանում նրա մասին խոսում են որպես խոստումնալից գրողի, նշում են նրա առաջնորդի քարմությունն ու ինֆնատիպությունը իսկ ինքն իր մասին ասում է. «Անգլերեն լեզվով ես գրում էի հայերի ու հասարակ աշխատավոր մարդկանց մասին. Գրածներս միշտ վատն են եղել, սակայն ես աչֆի էի ընկնում համառությամբ, և հրատարակիչները, հուսահատությամբ տարածելով ձեռքերը, սկսեցին տպագրել իմ արտադրանքը. «Սթորի» փետրվարյան համարում «Ճոնաձողով սավառնող խիզախ պատանին» պատմվածքը տպագրվելուց հետո, — գրում է Սարոյանին նվիրված իր գրում ամերիկյան գրականագետ Հովարդ Ֆլոանթը, — Ուիթ Քարները և Մարթա Ֆոլին արդեն հիմքեր ունեին հավատալու, որ ի դեմս դրա հեղինակի՝ Վիլյամ Սարոյանի, իրենք գտել են Ջեկ Լոնդոնից ու Ֆրենկ Կորրիսից հետո Սան Ֆրանցիսկոյում ի հայտ եկած ամենանշանակալի գրական տաղանդը նախկինում նրանք երբեք չէին հանդիպել նոր հեղինակի ստեղծագործության այդքան անհապաղ ու այդքան միահամուտ-հիացական արձագանքի»:

Իրենց էջերը Սարոյանին են տրամադրում «Ամերիկյան մերկոսին» և «Աթլանթիկ մանրիկն», «Հարփրոգ մագրգինը» և «Յեյլ ռեվյուն» 1934 թվականի հոկտեմբերին ամերիկյան իռոչրագույն հրատարակչություններից մեկը՝ Ռենդոմ Հաուզը, լույս է բնայում քսանհինգ պատմվածքներից կազմված և հեղինակի առաջաքանով բացվող Վիլյամ Սարոյանի առաջին գիրքը Գիրքը նվիրվում էր Ուիթ Քարներին և Մարթա Ֆոլին և կրում էր «Սթորի» հանդեսում տպագրված Սարոյանի առաջին պատմվածքի խորագիրը՝ «Ճոնաձողով սավառնող խիզախ պատանին»

Գրական մամուլը բարձր է գնահատում երիտասարդ գրողի ժողովածուն Քեննադա Քարրըն Ռասֆոն նա մասին գրում է. «Մեր առջև պատմվածքների ժողովածու

չէ՝ սովորական առումով, այլ ավելի շուտ պատանեկան անմիջականությամբ գրված է իր տասարդի օրագիր, որի ինքնատիպ, բարձր գրելաձևում զգացվում է նշմարիտ շնորհք։ Միաժամանակ դա նաև արձակի մեջ յուրօրինակ փորձ է, որն արտակարգ խելոք այդ երիտասարդը ձեռնարկել է իր առջև դնելով լիովին հստակ խնդիր թղթի վրա ստեղծել զգացմունքի կենդանի ու առիմնող մի համարժեք, որը սերում է կամ իր անձնական հույզերից ու ապրումներից, կամ էլ առհասարակ մարդուն հասանելի հույզերից ու ապրումներից ԲՆՆՆ է Սարոյանին բնորոշում որպես գրող և առում է, պոռթկում ու խելագի, նա սիրում է ինքն իրեն և անբախույց ներհանյաց է, նա ախար է, նրբագրաց ու մարդկային, նա միամիտ է ձևում, բայց ամենին միամիտ չէ՝ նա առում է դաժանությունը՝ բոլոր դրսևորումներով, նա հասցում է մարդկային հպարտությունն ու արժանապատիությունը» Բարթըն Խասոն, նրա հետ միասին նաև մյուս ֆենադասները համարում են, որ «այս երիտասարդի գրում կա ոնի նասունություն», որը վկայում է հեղինակի անկասկած տաղանդի մասին

Սյդպիսով, Սարոյանը մտաք է գործում գրականություն, դառնում նահալված, ավելին՝ յայնորեն ֆենարկվող գրող Գրականությունն արդեն նրա մասնագիտությունն է, նա գրում ու տպագրվում է բազմաթիվ հանդեսներում Մարդկանց խենք, սևփականը հաղորդելու հրամայական պահանջով համակված (բուն գուղական զգացողություն), նա շապում է հեշտությամբ ու բնականորեն իրեն տրվող ձևով արտանայտել իրեն, իր կենսափորձն ու պիտարկումները, իր վերաբերմունքը հասույի աշխարհի նկատմամբ «նա միշտ շապել է, ինձ միշտ թվացել է, թե ժամանակը ինչ է իր քաղականացներու...» Սարոյանը բացառիկ արագ ու արդյունավետ է աշխատում, տառացիորեն մի ֆանի օրը մեկ նրա գրչի տակից մի նոր պատմվածք է գրուս զարիս, և բնական է, որ նման սրբնրաց տեմպերի պայմաններում նրա ոչ բարե գրածներն են գեղարվեստական առումով լիարժեք ու նշանակալի Ընդհանուր ամամբ, սակայն, Երիտասարդ Սարոյանը այս մոլի, սրբնրաց, արագ աշխատանքում ոչ թե վատնում է իր շոայլ շնորհը, այլ փորձարկում, ստուգում է այդ շնորհի հնարավորությունները, հետևաբար՝ ձևավորում իր գրողական անհատակ սնությունը

Սարոյանն բնոգծված կերպով վաճում է ավանդական նովելիստական բեմաներն ու ձևերը, գրական պրոֆեսիոնալիզմն ու մասնագիտական նրբությունները նրան չի հուզում բեմայի մեծ կամ մանրիկ, ձեի կատարյալ կամ ոչ կատարյալ լինելը՝ նա համարում է, որ կյանքի ցանկացած էջ արժանի է ստեղծագործության էջ դասնայու նա գրում է անկաշկանոգ, հեշտ, անպանայն, հետեկյով իր սիրած արվեստագետներից մեկի՝ Անտոն Զեխովի հաշակած սկզբունքին. «Իրավացի է նա, սվ անկեղծ է»:

Սարոյանի հաշոդաթյունը գրական ասպարեզում ոչ միայն ամրապնդում է նրանում հավասար սեփական ուժերի, գրողական աշխատանքի նկատմամբ, այլև, որը պակաս կարևորություն չունեք «մեծ դեպրեսիայի» ժամանակաշրջանի Ամերիկայում գործազուրկ երիտասարդի համար, հրան վաստակ է բերում, դրամ Իսկ դրամը նրան հնարավորություն է տալիս պոկլիելու տեղից, նանապարհ ընկնելու ու նանապարհի, շարժման մեջ հարսաանայու նորով, տիրապետելու իրեն խիստ անհրաժեշտ դիտողականության արվեստին, կուտակելու այսպես կոչված կյանքի փորձ, հարստանայու նոր հանդիպո մներով, տպավորություններով ու զգացմունքներով:

1935 բվականին Սարոյանը գնում է Նյու Յորք, որից հետո երկարատև նամփորդության է մեկնում դեպի եվրոպա, այնուհետև Ռուսաստան և, վերջապես, իր նախնիների հայրենիքը՝ Հայաստան: Այս ուղևորությունը միանգամայն զուրկ էր

այսպես ասած տոբիստակա բնույթից Սարգսնի ուղադրության հիմնով ընդհանրապես հրահանգներ են արվում: Եւ այս կամ այն երկիրը: Եւ իրեն ստիպում է իսկապես գրողի պես, նայում է, իր մեջ առնում ու հիշում իր համար միակ տեսարժանը ցանկացած վայրում. սովորական, ստորյա, հասարակ կյանքն այդ նոր տեղում, նոր երկրում և այդտեղի սովորական մարդկանց՝ նուանց դեմքերը, նշանոց բնավորությունը, փոխհարաբերությունները Ինտելե, մասնախոր, բուրգիկ դիպարկումները առանձին մանրամասներից նրա հայացի առջև և այդ գրչի տակ ներկայանում է նա՝ նախապատերազմյան Եվրոպայի կյանքի ընդհանուր պատկերը, այն առաջադրություններ, որոնցով սպրում էր Եստրադային Ռուսաստանը Հարկ է սակայն և Լ. Ս. Ս. Երիտասարդ Սարգսնը իր ռուսաստանի-ամենատեղական մաստրամադրվածությամբ, իր ճշ հասարակական խաբեվածությամբ հետո է այն կյանքի և այն երևույթների կոնկրետ տոգրիակական պատմաանների ու հեռանկարների մեջ խորությամբ ներքախանգելուց, որոնք դիտարկում է իր ուղեորության լնրացում և որոնց նետազայում անդադրանում է իր ստեղծագործության մեջ, ճիշտ այնպէս, ինչպես հետո էր ամերիկյան կյանքի բարդ պատկերի, նա հսկայական իրադարձությունների ու պարտեմների մեջ ներքախանգելուց. նա միշտ ելնում է այն ընդհանուր դրույթից, որ աշխարհը, համենայն դեպս, ժամանակակից աշխարհը անկաստար է ու անարդար ժամանակակից քաղաքակրթությունը, որտեղ գործում են մարդկանց ոչ թե միավորող, այլ տարանջատող ուժերը, մարդու գոյության հաստատական-քաղաքական պայմանները քառայնական են լինում և նա կողմից և հեռացվում նրա շահագրգիռ ուղադրության շարտից նա ուղադրության, մտասեւեռման և համակրանքի առարկան սկզբունքորեն հակադիր է բարդ, անդեմ ու անհողի քաղաքակրթությանը դա կյանքի պարզագույն, նախնական տարրերն են. համալարողային կարյունը կող առանձին մարդու դեմքն ու հոգին: Ընդհանուր ասած, սակայն, այս ուղեորությունն անկասկած հարստացնում է նրան և եթե ասուց նա կարող էր ասել, թե հստակ պատկերացնում է «Ինչ ասել է մեծ երկիր. . . Ինչ ասել է մեծ քաղաք, և ինչպես են մարդիկ ապրում մեծ քաղաքում», ապա այժմ նա իր պատկերացումն ունի այն մասին, թե ինչ ասել է մեծ աշխարհ

Սարգսնի համար հատկապես կշանակալի է «անձնական», անմիջական ծանոթությունը Հայրաստանին, նրա հոգին ու բնությունը, Երևան մայրաքաղաքին, նրա ինքնապայ ու ինքնուրույն կյանքին նրա համար դա ծանոթություն էր սեփական ակունքներին, սեփական ընտանիքին՝ բառիս յայն իմաստով, նրա հասար դա հարազատ մարդկանց հետ հարազատ լեզվով շփվելու հնարավորություն էր «Եւ Լանում հանդիպել եմ շատ կայերի, և՛ երիտասարդ, և՛ տարեց, և ինձ սիշտ բվացել է, որ նրանք իմ ընտանիքի անգամներն են . . . » Եւ, իհարկե, հանդիպելու հան իր գրչակից ընկերներին, մա՛րմացավ Գարգեն Մանարու՝ ժամանակի յավագույն հայ գրողներից մեկի հետ: «Մի նե քաղաքում էինք ու գրուցում մե՛ծ մասամբ անցյալից, նա հիքրիսից, ես՝ վանից. նա ինձ հախաննում էր, որ ծնվել եմ վանում և հիշում եմ վանք, իսկ ինքը ծնված է «Քալիփոսոնի մեջ» և հետևաբար՝ «բան մ՛ալ չեմ երշեր» բայց պատմում էր հիքրիսից այնպիսի մանրամասնություններ, որ շեք կարող զարմանք շարտեւանել ինձ Հանգստացնելու համար ամեն անգամ վերջում ավելացնում էր. «Մայրս է պատմեր . . իրավ կրսեմ՝ Ինչպես կի՛նա, այն ժամանակ էլ Վիլյամ Սարգսն էր, — զգայուն, անմիջական, մանկավուն, երբեմն կամակոր, բայց ինքնատիպ ու մեծաշնորհ»

Երևանից մեկնելուց հետո Մոսկվայում Սարգսնը հանդիպում է խոշորագույն հայ բանաստեղծ, «իմաստուն ու խռովահույզ» եղիշե Զարեհյին: Այս հանդիպումը

անջնջելի ապավուսչյուն է բողնում՝ ընդմիշտ մնալով նրա հիշողության մեջ: Տգստվորվում են հատկապես Չարենցի խոսքերը. «Դու անգլերեն ես գրում, բայց այնքան անհայնիվ դու հայ գրող ես»

Որք վերադառնալով ուղեորությունից, 1936 թվականին Սարոյանը նյու Յորքում հրատարակում է իր պատմվածքների երկրորդ գիրքը՝ «Շնչառություն» («Inhale and Exhale»), այն նվիրում է «անգլերեն լեզվին, ամերիկյան հոգին և հայկական ոգուն»: Սա, թերևս, անմիջական արձագանքն էր շարենցյան խոսքերի:

Հաջորդ տարիներին Սարոյանը շարունակում է արդյունավետ կերպով աշխատել ամերիկյան գրականության մեջ սիրված կարևոր պատմվածքի, նովելի ժանրում և հրատարակում է ևս տասը ժողովածու: Այս ժողովածուներում ընթերցողին ներկայանում է մտպեային դեմքերի ու կերպարների, արարների ու հարաբերությունների, տրամադրությունների ու զգացմունքների շարժում, կենդանի ու ինքնատիպ մի աշխարհ: Ներկայանում է իրականության միմյանց հաջորդող «ակնբարբային լուսանկարներով», հավիճելու ու նշգրիտ հոգեբանական կայուններով, առակ-պատմվածքներով ու այլաբանություններով, կենցաղային պատկերներով ու բանաստեղծական ֆանտազիաներով, վարպետական գովածոնախատական նովելներով, սրածիտ և ուրախ հումորեսկներով, էլեգիական նուշ-պատմվածքներով: Սարոյանը, կարեղի է ստել, անձամբ կենսագործում, ապացուցում է իր հեռակայ պնդումը «... պատմվածքն ազատ է գանկացած ձև ընդունելու, գանկացած չափ ու ոճ ընտրելու... Անձամբ ես համարում եմ, որ պատմվածքը շղթա է և նախադասության ոչ մի կանոնի, բացի մեկից՝ այն պետք է ապրի. իսկ թե ինչպես և ինչու է այն ապրում, ոչ մի հշանակություն չունի...» Ժանրի սմեմարագմագուս ներստ սովները ամենաանկաշկանեղ ձևով գոյակցում են Սարոյանի գրքերում՝ ամենատարբեր լեզուական բովանդակությամբ ու զգացմունքային տրամադրվածությամբ լեցուն:

Ինչո՞ւմ էր, սակայն, Սարոյան-գրողի ինքնությունը, որով ընդունակ էր գալ նա գուպել և՛ ընթերցողի սիրտը, և՛ ներանաշակ գրական միջավայրի ու վարձառու էկենոպատությանն աշաղրույթուկեր, և՛ ի վերջո՝ իր լուսապսակ տեղը 20-րդ դարի մեծ գրականության մեջ:



Սարոյանի գրական միտադրյալն ժամանակները Ամերիկայի համընդհանուր եզնա-ժամի «մեծ դեպրեսիայի» տարիներն էին, որոնք գրականությունը հագեցրին սոցիալական լուրջ պահի և գայրույթի ձայներով, դառը նշմարտացիությամբ, բուրժուական հասարակության նա անարդարության, նրա անբարոյական, անմարդկային նկարագրի մեկնություն և էկենոպատության ոգով: Ինքնուրուտական ուղղության գրականությունը վերստի մտնեց սարաի էր էլնում հանուն հասարակ շարժային մարդու շահերի, հանուն ժողովրդի մեծ գանգվածների ապագայի: Սմերիկյան և՛ առաջնակարգ, անվանի, և՛ նուտեարադ սպեղերի ստեղծագործությունները, տարբերվելով միմյանցից գեղարվեստական ուժով ու «խտունվածով», փաղափական լիցփավորումով ու գաղափարական շեշտով՝ լի էին սոցիալական ներկայացնում էին, սակայն, ամենայն սրությամբ ընդհանուր խոցող մտածողություն կյանքի, դաժան առօրյայի, էյուրապաշտության, շահաստեղծության լուրջ լի ու «մեքենայացման» ոգով առաջնորդվող հասարակության վերաբերյալ: Ինչպես նաև այդ հասարակության պայմաններում ողբերգականորեն ազատագրված լեզուական լիված մարդկային նախատագրերի մասին: Անմարդկային,

աճեաամոլ կենսակարգի մերկացման ու ժխտման պաթոսը երբեմն ստանում էր լայրահեղ արտահայտումներ, գունավորվում հուսահատությամբ, հռետեսությամբ, մասյ ու մաղձոտ օտարացումով, փակուղու զգացումով։ Իր ստեղծագործական ուղու էնեց սկզբից Սարոյանը որդեգրեց այն միտումը դեպի ուսայիզմն ու նշմարտությունը, սոցիալ-բարոյական բննադատության և հասարակության արտոների մերկացման, մարդկային իրավունքների պաշտպանության այն ոգին, որով համակված էր «սենեղ երեսնականների» գեականությունը Քայց իր խոսքը շրջապատող աշխարհի և մարդկանց մասին նա սարավ բայրավիճ ուրիշ հունով։ Պատումի մեջ ուղղակիորեն շարտացոլելով հասարակական մեծ-մեծ խնդիրներ, սուր բայրումներ ու այրող հակա-տարրություններ։ Սարոյանը գիմում էր առանձին անհատի աշխարհին, խորանում էր փոքր, աննկատելի դրամաների մեջ, եզակիի միջոցով բացահայտելով համընդհանուրը, կանխելու ու մասնավորը հազեցնելով նշանակալից բովանդակությամբ, դրանց հա-զորդելով խորհրդանշական իմաստ և արտահայտականություն։ Նրա պատմվածք-ներում իշխում էր բնաբական տարերբ ուրը ընթերցողի համար գրավչություն էր ձեռք բերում լայնածավալ քննալուծում և սոցիալ-հոգեբանական վերլուծությամբ շարժարեղծված, հանգամաններով, բնավարություններով և զանգվածային կեցու-րյան մրնոյորտով գերեհագեցած արձակի փոխ վրա Սարոյանի պատմվածքը դիմում էր անհատ մարդուն, նրա ներբնաշխարհին, ապրումներին, դրամային, սենտում ուշա-տ ուրյունը դրանց վրա, իր բարությունամբ, ինքնատիպությամբ առանձնանայով ժա-մանակաշրջանի գրական ընդհանուր պատկերից եվ, որ շահագանց կարեոր է, Սարոյանի պատմվածքներում կյանքը նորից ձեռք էր բերում սոսագված գույները, բազ-մերանգությունը։ Գրողի աշխարհընկալման մեջ և նրա հերոսների նակատագրերում մուսյ, մշտապ, ողբերգական երանգները ախրապետող շէին, դրանք միանյութում էին լուսավոր, ծիծաղկոտ, մխիթարիչ, ուրախայի երակներին հետ Սարոյանի պատմվածք-ներում ապրում էին մարդկային աներեր արժանապատվությունը և կյանքի ախտահ-մանության, անսպանության բարձր նշմարտությունը, մարդկայնության, բնականու-րյան, անկեղծության ջերմությունը, կայծկլտում էին կատակն ու վառակիչ ծիծաղը, առաջանում էր բարության և ազնիվ զգացմունքների յուրատեսակ ձգողականության դաշտ։ Այս էր նրա լայն նանաշման ու սիրվածության հիմնական զաղտնիքը։ Ինչպես վկայում է ամերիկյան հայտնի գրաբննադատ Ալբրեղ Քեյցիներ, «այն տարիներին, երբ մարդկանց մերձեցնում էր միայն տառապանք, անհնարին էր դիմադրել, Սա-րոյանի ձայնում ննչու բարությունը՝ Սարոյանի, որը յուրաճանչյուրին դիմում էր ու-րախ հարագաս եղբորը»

Սարոյանի բանաստեղծական բնագրը նշգրտորեն որսացել էր ժամանակի փոքր, շարժային մարդու հոգեբանության և տրամադրության ուժեղագույն տարերից մեկը՝ նրա շփարվածությունը, ննչվածությունը, նրա «օտարացումը» անարդար աշխարհում, ևրտեղ մարդկանց բաժանող գործոնները ավելի ու ավելի են գորեղանում էվ ա ս ամենի հարուցած արձագանքը Սարոյանի գրվածքներում արժեքավոր էր աւաջին հեր-բին իր կենսականությամբ, անկեղծությամբ ու մարդկայնությամբ Սարոյանը շափա-գանց սուր էր գրում «օտարացման», մարդկային կապերի խզման, հասարակության սպամարդկայնացման հիվանդությունը, առանձին մարդկային կյանքի անկայունու-րյունն ու արժեքագրելու ժամանակակից և, մասնավորապես, ամերիկյան հասա-րակական-խաղաղական բռնարոհում Թշվառության, մեկուսացման, հուսախարու-րյան, մեծ աշխարհի դաժանության և լույսի ու ջերմությանը կարստ փոքր մարդու

դրամայի նկատմամբ այն զգայնության մեջ, որը հատուկ էր Սարոյան-արվեստագետին, երևան էր գալիս հայի, այնքան շատ տառապած, դաժանագույն ցեղասպանության գոհ դարձած ժողովրդի զավակի ծննդաբանական հիշողությունը՝ Երոզի աշխարհընկալումը, նրա ստեղծագործության գաղափարական-գեղարվեստական համակարգը ձևվել են ոչ միայն իր ժողովրդի ցավից ու դառնությունից, այլև այն իմաստությունից ու բարոյականությունից, ոգու այն ամբողջությունից ու գոյատևելու այն կամքից, երազելու, հույս ու հավատ պահպանելու այն անսպառ ընդունակությունից, որը հայերն իբրև մեծագույն արժեք փառեցին իրենց փշոտ, բազմաշարժար սլաճությունից: Ժողովրդից ժառանգածը բնականորեն լրացվեց գրողի սեփական կենսափորձով: Սարոյանը մանկությունից հանաչեց ու կիսեց այն մարդկանց կյանքը, որոնք ամբողջական խաբուսիկ պրոֆեսիոնալ մախառում էին մի կտոր հացի, ապրելու իրավունքի համար: Նրանք մարդկության մեծամասնությունն են կազմում, որոնց ավելի շատ դժվարություններ են բաժին ընկնում, քան հաշողություն, ավելի շատ հոգս, մտմտ ու հիասթափություն, քան ուրախություն: Նրանց նակատագիրն է կիսել նա մանկուց և հետո էլ՝ դիմում իբրև իր եղբայրներին, ինքն իրեն համարելով շատերից մեկը: Մի մասնիկը ոչ ու խայտաբղետ գանգվածի, որը շրջապատում էր նրան և՛ փոքրիկ զավատական տարածում, և՛ հետո՝ ամերիկյան սառն ու անսիրտ ամբոխալից մեծ փաղակներում:

Սարոյանը ամերիկյան գրականություն է բերում իր րեմանեն ու վերադառնալով իր սյուժեներում բազմահնար, դեպքերի ու դեմքերի պատկերման մեջ անսպառ, սրտատես ու նշգրիտ, էլեկտրոնիկ ու երանգ որսացող Սարոյանը պատմում ու վերապատմում է հայրենաբաղձության, մեծության, անհանգրվանության դրաման, նա սզգատ կոգիների, ջերմացնող օջախի, տառն՝ իրեն ներդաշնակ ընդհանրության մարդկությունն անգուցար որոնումների դրաման: Մարդու գալազին կարվածությունը իր համար մտն ու բնականից, իրեն հարազատորեն ծանոթից ու մտերմիկից նա հերկայացնում է ոչ միայն մասնավոր ու կոնկրետ, այլև ավելի ընդհանուր խորհրդանշական իմաստով՝ իբրև խզում օտարվածություն մասյուն բնականորեն անհրաժեշտ, նրա բուն մարդկային էությունը համապատասխանող կեցությունից՝ նա արտահայտում է եղբայրագրացության ու սրտայնության, սիրտ ու կարեկցանքի ծարավը՝ նա գործարար Մմերիկայի կարգ ու բարեբեին, դրանց անհատամեծ, համահարթող ստանդարտներին հակադրում է «հին հայրենիքի» եղանակը, խորհուրդը, նրա ստասպելը, մարդկանց ամառ կապող «հին հայրենյաց» ավանդները, բարեբե ու սովորույթները՝ նա ստեղծում է ներուսներ, որոնք ամերիկյան կեցության անխնա պայմաններում իրենց մեջ կրում ու պահպանում են միանգամայն այն՝ «հին հայրենիքում» ձևավորված պատկերացումներ, իդեալներ ու երազներ, որոնք ընդունակ են նայել աշխարհին, սպրել, գոյակցել ու շփվել միմյանց հետ դեռ անազարտ, մանկությանը հատուկ անմիջականությամբ, սրտարացությամբ՝ նրա ներուսները այս կամ այն կերպ շեղվում են ստանդարտից, տարօրինակ են, «շիկկլում», պահպանում են իրենց դեմքի, վարքի առանձնահատկությունները, օտար են բուժական ողջամտությանը և գործնականությանը, ապրում են զգացմունքներով, չեն կուցնում իրենց մարդկային արժանապատվությունն ու հպատակությունը, հնչող իրականությունից պաշտպանվում են միմյանց սատարելով, հուժարով, ծի՛ազով, երազով ու հույսով, իրենց մեջ կրում են «մարդկայնության աչք մանրագույն հյուսվածներ», որոնք իր ողջ կյանքում փնտրում է ու նշմարում, ի հայտ է բերում ու փառաբանում Սարոյանը, կյանքը նշմարողությունը միշտ ներկայացնելով մարդուն հուսադրող ումանտիկական յուսով:

Սարոյանի ստեղծագործության հիմնական մտածելակերպը իրենց բարոյական և սոցիալ-հոգեբանական բովանդակությամբ խորապես այժմեական էին 20-րդ դարի համաշխարհային, այդ թվում և ամերիկյան, իրականության համար Այդ մտածելակերպը հաստատուն տեղ լին գտավում ժամանակի կարևորագույն հագեար բախումների կոնտեքստում Դրանի համաժամարդկային սշանակություն ունենի և միաժամանակ արտաջուրում էին ամերիկյան կյանքի խնդիրները Սարոյանի մտածելակերպի և կերպարների մեջ մարմնավորվում էր հատկապես ամերիկյան գրականության էական թեմաներից մեկը՝ ամերիկյան էթնոյոգրոգներ, նրանց դժվար նակատագրի, ապրելու պայմարի և հոգեկան դրամայի թեման Սարոյանը մեկն էր այն գրողներից, որոնք ոչ միայն նույնազգործեցին այդ չեման, այլև ավեցին դրա հոգեբանորեն ամենահամոզիչ և արվեստի տեսակետից ամենավառ յուծուրը

Բուցանայա նկարակառույցունն ու սրտագին անկեղծությունը և երանգներով հարուստ, անսպառ հուծուրը՝ անհայն երկու հիմնական, բնորոշ հնչերանգները, որոնց նուրբ, արտիտիկ միաձուլմամբ Սարոյանը իրացնում է իր թեմաներն ու մտածելակերպը. նա օգտագործում է հիմնականում ինքնակենսագրական նյութը, չի «հնարում», այլ սկզբունքորեն նենջում է իր տեսածի, զգացածի, ապրածի վրա: Այս կետում նա մերձենում է իր ականավոր ժամանակակից, խոշոր արձակագիր, վիպասան Թոմաս Վուլֆին (1900-1938), ուի կարծիքով գրողը պետ է ստեղծագործի իր սեփական կյանքի ընձենած նյութի հիման վրա, «նշարտացիորեն և լրիվ օգտագործի իր կենսագրության տարրերը», խորանա իրեն ծանոթ նյութի, «այն ամենի մեջ, ինչ պատկանում է իրեն» Պատահական չէ, որ երեսնական թվականների ամերիկյան բննադատության մեջ Սարոյանի անունը երբեմն կապվում է Թոմաս Վուլֆի անվան հետ Պատահական չէ և այն, որ ինքը՝ Սարոյանը մի շարք առիթներով հիպոթեզանում է խոսում Թոմաս Վուլֆի մասին Պարոսի, ռնի, ստեղծագործական բնդգրկումների բուր տարբերություններով հանգերն այդ գրողների ստեղծագործության մեջ ակնհայտորեն բնդհանուր ինչ-որ բան կար: Վուլֆի պես Սարոյանը կյանքի բանաստեղծական ընկալում ուներ, ստեղծագործության մեջ ավելի տարեային էր, բան կարգապահ ու տեխնիկային նշանակություն տվող և, ինչպես Վուլֆը իր էպիկական լայնաշունչ արձակում, պատմվածքներում գնում էր իրեն ծանոթ կենսական նյութի, «իրեն պատկանողի» զեղարվեստական իմաստավորման ուղիով Այդ սկզբունքի մեջ արտահայտվում էր կենսական նշարտության ձգտումը, հրաժարումը գրական պայմանակառույցներից, լինեը դա սյուժե բառիս ավանդական իմաստով, թե ննարների բուշակի համակարգ Այդ իմաստով Սարոյանը, ինչպես և նրան ժամանակակից ամերիկյան մյուս նշանավոր գրողները՝ Վուլֆը, Ֆոկները, Հեմինգուեյը, Սրայերեկը և ուրիշներ, ժառանգեցին Շերվուդ Սեդերսոնի, նրա «Ուայնսթրուգ, Օհայո» (1919) պատմվածուշարի զեղարվեստական հայտնագործություններն ու փորձը, Անդերսոնից եկող միտումը դեպի ինքնակենսագրականն ու «տեղականը», շրացառելով զեղարվեստական երեսակայության ակտիվությունը, դեպի ազատ, այսպես ասած՝ անարվեստ պատումի ձևը, որը հիշեցնում է կարծես բուն կյանքը, նրա առօրեական, տարեային և փոփոխական, մարդկային նակատագիրն ու գիտակցությունը իր մեջ առնող հուքը Սարոյանի պատմվածքներում մարդու նակատագիրը, գիտակցությունը, զգացմունքների աշխարհը բացահայտվում էին ոչ թե մեծ ու փոքր իրադարձությունների հաջորդական շղթայում, այլ որևէ հոգեբանական շրջադարձի, բեկման, ներքին կյանքի դրամատիկորեն հագեցած պահի, խորհրդանշական ժեստի, արարի միջոցով, պատմողի խոստո-



վանական հեշերանգի բանաստեղծական կամ հեզնական գունավորման մեջ՝ Սարոյանը գրականություն մտավ իբրև ձեռնարկած գրող, սեփական ու ինհապիսիս ձևազուգորդ, որի վրա դժվար էր տեսնել կոմպոզիցիոն, ուղղակի ազդեցությունների կեղծ Քայցայդ միանգամայն ինֆուռույն ձեռագիրը առնչվում էր օրոշակի ավանդների հետ, որոնք 20-րդ դարի համաշխարհային գրականության մեջ գալիս էին շեխովյան պատմրվածքից ու դրամայից, իսկ ամերիկյան գրականության մեջ՝ Մեդերսոնից, հրա առձակից. արձակ. որ իր իսկ՝ Անդերսոնի խոսքով ասած, ճնվել է 20-րդ դարի «այս ավրոզ ոռնացող խելագարության տակ թափված էղբայրներին գոնելու» ձգտումից այն բանի որոնումներից, «ինչ հասուն տղամարդկանց և կանանց հնարավորություն է տալիս դիմանալ ժամանակակից կյանքին», «մեր կյանքում եղած փոքրիկ գեղեկա քունների» նկատմամբ եղած ուշադրությունից՝ Սյդ հույն ազդակներն էին շարժում և Սարոյանի գրիչը, այդ տրամադրություններով էր համակված հրա սեղծագործությունը:

Սարոյանի պատմվածքների բնույթը շատ են այնպիսիներ, որոնք կապի է ծրագրային համարել և որոնցում ուղղակիորեն արտահայտվում է գրողի բարոյական և գեղագիտական սկզբունքները («Յոթանասուն հազար աստիկներ» «Յուսուր», «Ես ինքս երկրի երեսին» և այլն). Սյս գործերում գրողը անմիջականորեն արտահայտում է իր զգացմունքներն ու մտքերը, տալիս է իր ինֆորմացիոն ձգտում է ընթերցողին վարակել իր աշխարհայեցողությամբ: Չափազանց ու, երանգապահ լին կառուցված մենախոսություններում ևս բացահայտում է աստիկների իր երանգագր «Ես պատմող եմ, ու իմ պատմությունը մեկն է՝ մարդու մասին աշխատում եմ այդ պատմությունը ևս ուզում եմ պատմել իմ ձեռք՝ ժողովրդի պրեմիատորության կանոնների և կոմպոզիցիայի օրենքների մասին ես արձեռագրում չեմ ևս իմ գրածի վարպետը չեմ ես չեմ հավատում իսկապետությանը, և առաջադիմությունը ինձ ի ոգևորում երբ ինչ-որ տեղ խելագարական կամուրջ է կառուցվում, և հիպոթեզներ չեմ ապրում, երբ ինֆորմացիոններ կտրում են Աստվածային օվիլանոսը, և չեմ մտածում՝ «Ինչ գարմանալի դար է»: Մնացր՝ անա այն միակ բանը, որն ինձ հետաքրքրում է կյանքը սիրում եմ, մահին համակերպված եմ Քայց ևս մեծում և ատում եմ բռնությունը, սուր կերպով ատում եմ բոլոր հրանց, ումից այն սկիզբ է առնում, ովքեր գործադրում են այն: Անարդարությունը, կենդանի մարդու մասին անգամ ցավեցնող դաժանությունը ևս ավելի սարսափելի և կործանարար եմ համարում, քան մարդու բնական մահը եվ երբ բազմաթիվ մարդկանց ոչնչացնում են պատերազմներում, ևս այնպիսի ցավ ու վիշտ եմ ապրում, որ մոտ է խելագարությանը ևս կատաղությունից ինձ անգոր եմ գգում եմ միակ գեներ լեզուն է, ու քեզ ևս զիտեմ. ոչ այն թնդանոթներից և գնդացիներից գորեղ է, ևս հուսահատված եմ, ու ովքեր մեկնակ, առանց կողմնակի օգնության, ևս չեմ կարող ոչնչացնել ավերումի սպե հակումը, որ մարդկանց մեջ արթնացնում են պրոպագանդիստները Քայց ևս ինքս էլ պրոպագանդիստ եմ և իմ այս պատմվածքում ևս իմ ուժերի շափով աշխատում եմ մարդուն վերադարձնել դեպի իր բնական արժանապատվությունն ու ազնվակա քությունը. ևս մարդուն ուզում եմ վերադարձնել ինքն իրեն, ամբոխից վերադարձնել ի սեփական մարմնին ու ոգուն» Մի այլ պատմվածքում Սարոյանը նույնպես անմիջականորեն արտահայտում է իր գեղարվեստական սկզբունքները «Մոտ իսկ Մեմրիկայի մասին .. Մտածիր Ամերիկայի ցավի մասին, նաև՝ սարսափի, իսկ ու երկրի տրամության մասին՝ Ամերիկայում կենդանի ամեն ինչի մեջ: Հիշիս վիթխոսի մեքենաներն ու անիվների պտույտը, ծովս ու կրակը, համեմատել են ու այնպիսի

խատու մարդկանց, ժամօր, իբարանցումը Հյշիր լրագրերն ու կինոքարոզները և այն ամենն, ինչ այս կյանքի մասնիկն է կազմում Թող քո նայատակը լինի՝ նկատի առնեալ վիթխարի մի երկիր»։ Ընդհանուրի սյս ընկալումը, նրա մասին հիշողությունը սարսաղիւր են գրողի համար, բայց հրանք պետք է գրացվեն կյանքի կոնկրետ պահի, «ակնբարթի» նետում, որը որսացել է նրա պատմվածքը և որը կապված է առանձին մարդու կամ ապրուսթի նետ «Հետո դիմի՞ր որոշակի, առանձին մի բանի Դիմիր միակ մի մարդու և նրա հոգին քաժանցիր Սիրելով, շանալով հասկանալ նրա գոյության հրաշքը, գոյց տալով նրա զայի խորհուրդը, բացահայտիր այն պարզ փաստի հրաշքը, որ նա կա, ապրում է, ու նենց դա էլ պատմիր մեծ արձակով, պարզորեն ցույց տուր, որ նա ծնունդ է ժամանակի, մեքենաների, ծուխ ու կրակի, լրագրերի ու աղմուկի .. Մի ստիւր Բաներ մի մրգոնիր՝ որևէ մեկին սիրաշահելու համար։ Պատմվածքիդ մեջ ոչ մեկին ապանելու հարկ չկա, ուղղակի առա, քե ինչն է ամբողջ պատմության, բոլոր ժամանակների մեծացայն երեւոյրը՝ սովորական գոյության պարզ ու համեստ նշմարտությունը Ավելի մեծ քեմա չկա։ Կարիք չկա, որ մեկնումեկը բռնություն գործի՝ քո արվեստի մեծ կեզ օգնելու համար Բռնությունը կա՝ հիշեցրու, իհարկե, երբ հիշեցնելու ժամանակն է Պատերազմը հիշեցրու Բո որ այլանշակությունները, բարբ կորուստները հիշեցրու նույնիսկ դա՝ սիրելով առա. Սակայն շեշտիր պարզ գոյության սխանչելի նշմարտությունը։ Դա է գլխավոր քեման Քեզ պետք չի ծայր յարումներ տեղծել։ Մարդը, ու՛ մասին գրում ես, հերոսական կամ հրեշտակու բաներ անելու կարիք չունի՝ արածը մեծ արձակ դարձնելու համար Թող անի այն, ինչ արել է միշտ, օրը օրի վրա, շարունակելով ապրելը Թող հայլի ու խոսի ու մտածի ու կնի ու երգներ տեսի ու արքունա և նորից հայլի ու նորից խոսի ու շարժվի ու ապրի։ Այդքանը բավական է Գոելու ուրիշ բան չկա Այնքան դու երբեք պատմվածք չես տեսել։ Կյանքի դեպքերը երբեք պատմվածքի ձև կամ պոեզի ձև կամ ուրիշ որևէ ձև չեն ընդունում Սեփական գիտակցությունը միակ ձևն է, որ պետք է կեզ, միայն արքուն միտք է կեզ պետք»

Այս ծրագիրը Սարոյանը նետողականորեն իրագործում է իր արվեստում, հնարագիտորեն ու նկուն օգտագուծելով մասնավորապես, պատմվածքի ժանրը, որը նրա ստեղծագործության մեջ հանդես է գալիս ամենատարբեր ենթատեսակներով՝ քնարական նորավեպ և սուր-դրամատիկական նորավեպ, տրամագրությունների պատմվածք և բնավորությունների պատմվածք, սեսարաններ «կյանքի հոսից» և պատմվածք-այլախոսություն (պրիաշ), հոգեբանական էսայուց և կենցաղային նեպունկար, էսսեներիկ հումորեսկ և բանաստեղծական մանրանկար։ Սարոյանը սիրում է «իր մասին պատմվածքը», առաջին դեմքով վարվող պատմը, որը կոչված է պատմողի նկատմամբ ստեղծել լիակատար վատահայտյան մթնոլորտ, առաջացնել լիակատար նշմարտացիության տպավորություն։ Նրա շատ պատմվածքներում առաջին դեմքը, «եսը» գրողի երկվորյակն է, քնարական հերոս, իսկ պատմվածքն ինքը սուրբեկտիվ-քնարական է և նենվում է ուղղակի ինքնաարտօնայտման վրա Այս բնույթի պատմվածք-խոստովանանք, որը հիշեցնում է օրագրային գրարում և, Սարոյանի սեփական բնութագրմամբ, գրված է ոչ քե գրական կանոններով, այլ իրեն «սովորական մարդկանց ուղղված նամակ». իր մեջ է տոնում պատմողի ներքին և արտաքին կյանքի դրվագները, «պահերը» և բնորոշ է հատկապես նրա առաջին ժողովածուին։ Հետագա ժողովածուներում այս տիպի պատմվածքները որոշակի տեղ ունեն, բայց պատմվածքների մեծ մասում հեղինակային «նոյն» փոխարինում է սե-

փական դեմ, բնավորություն, գիտակցություն, խոսելածն ունեցող պատմողը, երևան են գալիս օբյեկտիվ կերպարներ, ինքնաբերականապես տարբեր փոխարինում են պատկերը, պլաստիկան, «եսը» դառնում է պատմի անհատականագլած կրող, որը ձևավորում է յուրահատուկ տեսանկյուն, կարգավորում կյանքից, իր տպավորություններից ու դիտողություններից գրողի վերցրած նյութը Սյլ հարց է, որ աշխարհի նկատմամբ հեղինակային հայացքը որոշում է Սարոյանի պատմվածքների սյուժեն, կոմպոզիցիան, որ գրողի աշխարհագրումը երևան է գալիս նրա հերոսների զգացմունքների, վարքի հոգեբանության մեջ ևլ այլ հարց է, որ Սարոյանի պատմվածքը միշտ պահպանում է իր պարզությունն ու «անարվեստությունը», ճշնշում է անբռնազբոս, իբրև բոլորին ուղղված «նամակ»:

Սարոյանի պատմվածքների «խնամկարը» արտացոլում է բուն կյանքի բազմադիմությունն ու դինամիզմը, գայլների ու Լեանգների հարստությունը Դեողը չի ջրջանցում իրականության մոայլ, ծանր կողմերը, տեսնում է «շարությունն ու ժպտությունը, ասելությունն ու Լեկյուղը, արատավորությունն ու անկույրը» Գտնությունը ու հեզնանե՛ով է համակված այն պատմվածքը, որի անունով կոչվում է առաջին ժողովածուն և որը պատմում է սովից մահացող Լեիաասարդ գրողի մասին, այն մասին, թե ինչպես նրան չի նկատում փոքր մարդու հանգիստ անտարբեր ու դաժան կապիտալիստական մեծ հաղախը Հագարտ ու ոտմանակի հոգու տեղ Լեիաասարդը իրեն շրնգունույ է իր համար անընդունելի իրականությունից նստանում է արտիստարեն ու աներկյուղ, «նստածաղով սավառնող պատանու» խիզախությամբ: Սարոյանի հերոսը չի կսող և չի ուզում ասրել սառը, ցլնիկ, անհոգի աշխարհում: Քաղաքի փողոցներում նրա վիշի միայնակ քափառուների մասին պատմող սեղմ ու հշմարտացի Լեիա, Լեիին մեծախոսությունն ու վերջապես մահը ոչ միայն կենսականորեն և կողերանունն առժամանակապես ևն Դեանց մեջ բարոյական ընտություն և դատ կա, որը և պատմվածիկն հասարակական հնչելություն է տալիս իբրև բուրժուական հաղախությունն աշխարհում մարդու ընչազրկության, մոլորվածության և միայնակության խոսուգանիչ է մնում ընթերցողի գիտակցության մեծ փոքրիկ կուլի կերպարը «նարինյեներ» պատմվածից: Դեողը այնքան հշմարտացի է պատկերել աղքատ մասղիանց տեղ ու իրից՝ մեկը, այնքան կենդանի ու կոնկրետ են հաղաղված տղայի սպումները, նա և կույրն ու շփոթվածությունը, նրա տխրությունն ու տարակուսանքը, այնքան և բուրեն է գծված Երատեխարը, որ փոքրիկ տղային բաժին ընկած դասը փոժությունների մեջ երևան է գալիս շատերի նակասագիրը, «անձպիտ», դստան աշխատի ընկաներագլած պատկերը: Մաղու նկատմամբ գործաղրված բանության այդ նակարհակաճությունն ու վայրենությունը բացահայտված են «Ֆիլիպինյին ու հուրանը» «Պատանագիր» և այլ պատմվածքներում: Սարոյանի մի շարք պատմվածքների իրավիճակներում և կերպարներում սրամտորեն ծաղրված են ամերիկյան ապրիկոկոպի տիպական կողմերը՝ բիզնեսի մալուցքը, առևտրական սխրագուժությունները, գործամության և գործարարության ոգին, հաղթենիական ինքնախոստանությունը, մասղիային վարքի և հետաբերությունների միակերպությունը, զգացմունքային գատակությունը, գորշությունը: Սարոյանը վարպետորեն է օգտագործում հուսուրն ու հեզնանք նրա հուսուրը ներբուրեն փոխում է իր երանգները, կապված այն բանի հետ, թե ում և ինչին է ուղղված Սարոյանը հեզնող է, խոցույ, հույնիսկ սասկատիկ, Լեր խոսում է ամերիկյան կյանքի իրեն օտար, իր համար մերձիկ և ետյրենի և միտումների մասին՝ բուրժուական ձեռն-

Յեցուրյուն, քաղաքական ամբոխավարություն ամենաքափանց ռեկլամ, շահութաբեր «արվեստ», օգտապաշտություն, մարդկայնության կոռուստ Սարոյանի հումորը այլ ուրակ է ստանում այնտեղ, ուր գրողը սիրով ու կաբեկցանքով պատմում է «ոչ նիշտ», անգործնական, անխոհեմ մարդկանց մասին, որոնք ապրում են աղֆատության մեջ, բայց պահպանել են հոգու մաքրությունը, չեն սիրտը, այդ պարզասիրտների, երագողների, անհաջողակների և անբանների մասին Այդ մարդկանց կերպարները, նրանց շրջապատող հանգամանքները ներառված լինում են մեղմ ու բարի, մարդուն ֆաշալերոզ և սաստառող հումորով

Պատմվածքից պատմվածք անցնող թեմաների ու տրամադրությունների հետ միասին կա նաև ներուսի մի ավազ, որը հանդես է գալիս տարբեր գործերում և որի աչքերով գրողը նայում է աշխարհին Այդպիսի հերոս է սրատես ու իննախառն, անհանգիստ ու կաբեկից սիրտ ունեցող տղան, որը շատ սուր է զգում նշմարությունն ու կեղծիքը, մտորում է այն ամենի մասին, ինչ տեսնում է և լսում, շատ խորն է զգում և՛ «առօրեականը», և՛ «հրաշալին», կյանքի և՛ դառը, և՛ ուրախ կողմերը Այս կերպարին հարագատ ևն և այն մեծահասակ հերոսները, որոնք պահպանել են մանկայան բանկարժեք գծերը՝ մաքրությունն ու հավատքը, հոգու ամբողջականությունը, զգացմունքների հարստությունն ու բնականությունը։ Նրանք «տարօրինակ», անհաջողակ մարդիկ են, օտար ու մերժված այն հասարակության մեջ, որտեղ տիրապետում են շահն ու գոնիկ-կյուրական ձգտումները։ Նրանք հոգու ազնվության կրողներն են, ներկայացուցիչներն այն նշմարության, որ «մարդ ավելի լավ է բարի լինի, քան թե շուր՝ համաձայն իր իսկ մարդկային բնությանը» Սարոյանի այս սիրելի հերոսները զանազան տարբերակներով հանդես են գալիս պատմվածքագրի հրա ուղ ստեղծագործության մեջ, բայց ամենից վառ երևում են գրողի լավագույն գրքում՝ «Խմ անունն Արամ է» (1940) Այստեղ սանկական հիշողություններն են, Ֆրեզոն իր փողոցներով, իր հայկական քաղաքով, իր մարդկանց մտահոգություններով ու տագնապներով, վշտերով ու ուրախություններով այդ մարդիկ սրտով տպրում են «իսկներում», իրենց հոգում պահպանում են զգացմունքներ, որոնք նրանց վեր են բարձրացնում գորշ իրականությունից, գոյության պայքարից։ Ամերիկյան բնագատության կարճիկով, «Ֆրեզոնյի հայերի կյանքը գրողի հայտնագործած թերևս լավագույն նյութն է» «Խմ անունն Արամ է» գրքում ուշադրության կենտրոնում են Ղարոյանյանների բազմանդամ ընտանիքի ներկայացուցիչները, պատմվածքները մի ամբողջություն են դառնում գլխավոր ներուսի և պատմողի՝ Արամ Ղարոյանյանի շնորհիվ Պատմվածք տարվում է երկու պլանով՝ պարզամիտ և անմիջական տղայի հայացքն ու ձայնը լրացվում խորացվում և հարստանում են անցյալը հիշող հասուն պատմողի հայացքով ու ձայնով։ Իրա շնորհիվ գրողը հասնում է և՛ զարմանալի կենդանության ու պատկերի կոնկրետության, և՛ դրա հետ միասին բանաստեղծորեն քննահանրացնում է կենդանի պատկերը։

Սարոյանի այս գրքի հերոսների աշխարհում տիրապետում է համատարած «խենթությունը» Այստեղ ոչ մի բան չի համապատասխանում կենցաղի ու մարդկային հարաբերությունների մասին տարածված պատկերացումներին։ Ղարոյանյանների ընտանիքի բոլոր նյութերը ապրում են «ամենագարմանալի և աննեթեթ աղֆատության մեջ» Բայց դրա փոխարեն նրանք կարող են պարծենալ և պարծենում են այն բանով, որ իրենք «հպարտ են, ազնիվ և ի բնե իմաստուն» Կարիերայի և նախադասության ձգտումը չի ամլացրել նրանց կյանքը, նյութական բարիքների կուտակման մրցա-

վագր և բարեկեցության միապաղաղ հոգսերը չեն սպանել կյանքի մարդկային բովանդակությունը Եանի մասին մտածելու անընդունակ է «Երագու և բանաստեղ» ֆևոի Մեյիբր, նա ձգտում է դեպի գեղեցիկը, նա ուզում է «գեղեցկությունը տնկել, ինչպես ծաղիկ, և զմայլվել նրա անով» Նա տարվում է անապատում նոնենիների պուրակ անեցնելու անհնարին գաղափարով և կորցնում է իր վերջին վաղերը Ղարոլյանյանների տոհմի «ամենամեծ խելառներից մեկը՝ ֆևոի Ջորգին, շի ուզում աշխատել, «օրերով նստում է ծառի տակ, կիրթառ է նվագում և երգում» Քնտանիքը հանդիսավորապես նրան ուղարկում է աշխատանքի, ուղեկցորդ կարգելով Աբամին, որպեսզի սև օրվա համար մի ֆիշ փող վաստակեն, իսկ պարզամիտ Ջորգին ուրախանում է, ու իրենից առաջ ուրիշները ձմերուկը լրիվ հավաքել են, աշխատանք այլևս չկա, և ինքը կարող է տուն դառնալ, հարազատների կողքին լինել, նստել ծառի տակ «և իր հրաշալի, տխուր ձայնի ուղջ ուժով տիեզերքի զովքը երգել» «Խելքը կորցրած» ֆևոի Խոսրովը, որն այրվում է հին հայրենիքի կարոտով, իրեն տեղ չի գտնում ֆաղեհնիկան-գործարար եռուզեռի մեջ և կարծես գանկանում է դրա աղմուկը խլացնել իր որոտընդոտ ձայնով «Հիմարություն Ոչինչ էլ չկա . Ուշադրություն մի դարձրե՛ք » Այն ամենը, հանուն որի շրջապատի մարդիկ շարժարվում են, ոչինչ չարժե հայրենիքը կորցրած մարդու աշխուժում Քևոի Գիֆոն էլ ապրում է իր մտքերի ու երևակայության աշխարհում: Նա պետք է որ մտածի գլխի վերև տանիք ունենալու և օրվա հացի մասին, այնինչ խելքը տվել է արևելյան փիլիսոփաներին և փորձում է իր մեջ գտնել ինչ-որ խորհրդավոր ուժեր Այս բոլոր մարդիկ հեռու են ամերիկացի լինելուց Ու ինչքան էլ նրանք փորձում են հարմարվել իրենց համար նոր կյանքի պարտադիր պահանջներին ու օրենքներին, միևնույն է, չեն կարող վերափոխվել Եվ ամեն մեկը շրջապատող իրականության հնչումից պաշտպանվում է իր ձեռք՝ անհստակությամբ, խաղով, երազկոտությամբ, «խենթությամբ»: Նրանք ոչ միայն ուրիշներին են թվում խենթ ու խելառ Երբեմն իրենք էլ իրենց այդպես են անվանում Բայց, միևնույն է, հավատարիմ են մնում իրենց Սհա այդպիսի երազողներ ու կատակաբաններ, բանաստեղծներ ու ռոմանտիկներ են նաև Ղարոլյանյան տոհմի տղաները, առաջին հերթին Աբամը՝ խելամիտ, կեղծն ու հշմարիտը անմիջապես հասկացող, պարտադրանք չհանդուրժող, կենսասեր ու հանդուգն Նա իր մեջ միացնում է սքափ հայացքը և դյուրահավատությունը, երազկոտությունն ու համառությունը, մեղմությունն ու հումորը: Նրան ի ծնե հատուկ են բարությունը, արդարության և պատվի զգացումները Սարոյանի հերոսները իրենց շրջապատող իրականության մեջ ոչ արմատներ ունեն, ոչ էլ հեռակետ Սուր կերպով զգալով, որ այդ իրականությունը ավելի ու ավելի ֆիշ կենսական տարածություն է բողբոլում նրանց, Սարոյանը նրանց է տրամադրում իր պատմվածքների գեղարվեստական տարածությունը Գրողը նրանց մեջ հայտնաբերում է մարդկայության այն բանկարծեք հյուպեները, որոնց որոնումների ու պաշտպանության մեջ տեսնում է իր արվեստի նպատակը

Պատմվածքների «Իմ անուշ փոքրիկ» (1943), «Ասորին» (1949) և «Ամբողջ աշխարհը» (1956) ժողովածուներում մարդկանց միմյանցից կտրված, մեկուսացած լինելու մասիվը ավելի ուժեղ է հնչում, ավելի ու ավելի հանախ են երևան գոլիս խստաշունչ, տխուր զույներ, ուժեղանում է կյանքի ստոյիկական համբերատարությամբ ապրելու երանգը: Գրողի տրամադրություններում արտագոյվում են այն շփոթվածությունն ու հնչվածությունը, այն ծանր հոգևոր մթնոլորտը, որոնք տարածված էին հետպատերազմյան Ամերիկայում «սառը պատերուզմի» և «մակարտիզմի» համաճարակի

պայմաններում. Գեր խաղաց նաև այդ տարիներին գրողի աստիճանական դրաման. Սարոյանի այդ ժողովածուների պատմվածքներում, նրանց սյուժեներում և կերպարների մեջ ավելի հանախ է զգացվում մարդու մերժվածության, միայնության, կապերի խզման եղանակը. Հոգեբանորեն նուրբ և համոզիչ գույներով է այն մարմնավորվում «Այգու ձմեռային գործավարները», «Մենդյան օրերից երեք օր հետո», «1944-ի Համաշխարհային պլանախի» ընթերցողը», «Բիլ Մակգիի եղբայրը» և այլ պատմվածքներում. Դառը տարակուսանքով և տխրությամբ են ընկալում մեծերն ու փոքրերը անուրախ առօրյան, աշխարհի պառակտվածությունն ու մարդկանց մեկուսացածությունը, նրանք արդարություն, բարություն և ներդաշնակություն են որոնում, երազում են մարդկայնորեն ջերմ, բանական, գեղեցիկ կյանքի մասին. Բայց ի վերջո այս գրքերում էլ, նրանցում պատկերված հանգամանքներում և բնավորությունների մեջ էլ հաղթանակում են հույսը, մարդկանց առջև բաց և կարեկից հոգու ջերմությունը, քարմացնող հումորը. մարդու և կյանքի նկատմամբ անսպառ հավատը.

Սարոյանի ստեղծագործության գլխավոր մոտիվներն ու քեմաները մարմնավորվում են նաև նրա վիպակներում և վեպերում, քարմ ու հետաքրքրական լուծում են ստանում նրա ինքնատիպ քատերագրության մեջ.

Սարոյանի երկու լայնահոշակ պիեսները՝ «Իմ սիրտը լեռներում է» և «Քո կյանքի ժամերը», ստեղծվեցին 1939 թ և նույն տարին էլ մեծ հաջողությամբ բեմադրվեցին ամերիկյան առաջատար քատերախմբերի կողմից «Քո կյանքի ժամերը» դարձավ ամերիկյան քատրոնի կյանքի ամենաչուրջ իրադարձություններից մեկը և գրողին բերեց Պուլիտցերի և Եյույորբյան բննադասների հեղինակավոր գրական մրցանակները. Առաջինից Սարոյանը հրաժարվեց, հայտարարելով, որ «առևտուրը իրավունք չունի հովանավորելու արվեստը» Գա անկելով և վնասական ժեստն էր մի գրողի, որը ե՛ր սեփական կյանքում, և՛ ստեղծագործության մեջ ծագում էր ամերիկյան իրականության բոլոր ոլորտները քաղաքական առևտրական ոգին.

«Գրողը միշտ մեկնաբանում է իր ժամանակը», ասում էր Սարոյանը: Իր ստեղծագործության մասին ասում էր, որ այն «միշտ եղել է իր ժամանակի արդյունքը»: Բայց արտացոլելով իր ժամանակի խնդիրները, հոգևոր մրնույրտը, կոնկրետ պատկերները, Սարոյան-քատերագիրը ստեղծում է պիեսներ, որոնք բանաստեղծական խոր ընդհանրացումներ և այլախոսության խորհրդանշական հագեցումն ունեն Ուրալս օրենք, իր պիեսների համար Սարոյանը գում էր հեղինակային նախապայմաններ, որոնց խնդիրն էր օգնել այդ պիեսների ըմբռնմանը. մատնացույց անել այն «բանաստեղծական» և «փիլիսոփայական» պլանը, որն սովոր էր իրադարձությունների նկարագրության մեջ. «Իմ սիրտը լեռներում է» պիեսի նախաբանում նա գում է «Ձեր առաջ է մի պիես, որը իրական է ինչպես փողոցների խաչմերուկը», բայց և ավելացնում է, որ դա այլախոսություն է, որ էականը այստեղ ոչ թե մանրամասների նշգրտությունն է, այլ ընդհանրացման նշմարությունը. ընդհանուր բանաստեղծական տպավորությունը: Սա սարոյանական քատրոնի մշտակայուն հատկանիշն է կյանքը այստեղ հանդես է գալիս իրական գծերով, առօրեական իրարանցումով ու աղմուկով. Այս էլն այն «խաչմերուկում» անսպասելիորեն հանդիպում են ամենատվորական, շարժային մարդիկ, որոնք իրար առաջ բաց են անում իրենց հոգսերն ու տազնապները, ջրվն ու ուրախությունը, կասկածանքն ու հավատը. Ամեն ինչ կատարվում է «այստեղ» և «հիմա», բայց դրա հետ միասին կատարվող գործողությունը նեոք է բերում խորհրդանշական լայն իմաստ, զուգորդվում աշխարհի ընդհանուր

պատկերին Պատահական դրվագները մի ամբողջություն են դառնում բնորոշ առա-  
 մադրության ու գաղափարի շնորհիվ Այս իմաստով Սարոյանի բատերգությունները  
 հարազատ են Չեխովի գործերին. Դրանց հենասյուները ոչ թե աչքի բնկնող իրա-  
 դարձություններն են, ոչ թե արտափն բախումը, այլ կենսական հոսանքի գրվագ-  
 ները, որոնք արտացոլում են մարդկային հոգեվիճակները, հեղինակի ստեղծած պատ-  
 կերների և իրականության ոգու ու բնույթի կոնֆլիկտը: Սարոյանի հերոսները հա-  
 կադրվում են ոչ այնքան միմյանց, որքան իրենց շրջապատող անարդար և անազատ  
 աշխարհին: Ավելին, այդ սպանիչ ու խեղդող աշխարհից պաշտպանվելու համար կա-  
 ծես նրանք ունենալիս, երբեմն էլ սենտիմենտալ միություն են կազմում, որի  
 հիմքը բարոյ և անշահախնդրության ոգին է, մարդու ցավը իբրև իր սեփականը ըն-  
 դունելու և հասկանալու, ուրիշին օգնության հասնելու պատրաստակամությունը, մեկը  
 մյուսին «խաղով» և «Լեռագով», ուրախությամբ ու հույսով վարակելու քննադատությունը:  
 Չարը ներխուժում է նրանց միջավայրը, հետապնդում նրանց, և «Քո կյանքի ժա-  
 մերը» պիեսում հեղինակը տալիս է շարի մարմնավորումը: Դա ուստիկան է՝ ինչն է,  
 որի կերպարի մեջ զգացվում է նախապատերազմյան աշխարհում արդեն տարածվող  
 դաժանության ու ֆաշիզմի ոգին: Չարը միշտ առկա է Սարոյանի պիեսների «կարդից  
 այն կողմ», այդ նա է ուրվագծվում «Իմ սիրտը լեռներում է» պիեսում, շանաչված  
 բանաստեղծների մեջ մեծագույններից մեկի»՝ Քեն Ալեքսանդրի «խոր դայրույթով» հու-  
 մակլիաժ մեհախոսության մեջ

Սարոյան-բատերգրի գլուխգործոցներից մեկը «Հե՛յ, ով կա» մեկ գործողու-  
 րյամբ պիեսն է (1942) Դա խորապես ողբերգական գործ է նեղ խցիկում պա-  
 տեպատ է տալիս իրեն հալածական հերոսը: Նա կանխագգում է դատաստանը, որը նրա  
 համար պատրաստում է մուր, սարսափելի բնագրներով ու նախապաշարումներով  
 համակված ամբոխը նրա դեպի լուրջություն նետված հուսանատ կանչին՝ «Հե՛յ, ով կա»,  
 արձագանքում է բանտի հավաքարտ աղջիկը, և պիեսում պատկերված կարև ժամա-  
 նակամիջոցում տեղի է ունենում երկու միայնակ, կյանքի կարոտով լեցուն հոգիների  
 հանդիպման, մարդկային փոխադարձ կարեկցանքի հրաշքը: Չարը դատաստան է  
 տեսնում մարդու հետ Քայց Սարոյանը այստեղ վերջակետ չի դնում Տղան գեղվեց,  
 բայց մնում է աղջիկը, և նրա հետ, նրա մեջ մնում է այն, ինչ հնարավոր չէ սպա-  
 նել՝ սերը, երգը, երջանկության մարդկային ծարավը: Ողբերգական երակը Սարոյանի  
 բատերգության մեջ սիրտ ներկա է, բայց այն մեղմացված է շարք հաղթահարող  
 բարոյ տարերժով, միանյութով է կատակերգականի, զգացմունքների ու մանտիկայի,  
 պատուանքի և իսպի բնու՝ «Իմ սիրտը լեռներում է» պիեսի հերոսների հանդիպումը  
 Ֆրեդնուրի Սան Քենիտա սպանյում, ինչքանով էլ որ լինի առօրեական ու տխուր, այ-  
 նուամենայնիվ ծիպելի է և բանաստեղծական, համակված մարդու հոգևոր ուժե-  
 րի նկատմամբ հավատով «Քո կյանքի ժամերը» պիեսում Սան Ֆանգիսկոյի ծայ-  
 րամասային փոպոցում գտնվող մի պանդոկում հանդիպում են այնպիսի մարդիկ,  
 որոնք բաժին են բնկել տանջանքն ու վշտերը», ստորագումը, վախը, հուսահատու-  
 րյունը, բայց այդ մարդիկ պահպանում են հոգու արիությունը, իրենց կյանքից  
 անպակաս «կեղտից ու մանից» վեր կանգնելու, բարին հասկանալու քննադատությունը:  
 Նրանք կարող են բարին զտնել, ինչքան էլ այն խոր թաղված լինի» Սարոյանը  
 իր հերոսներին համախորուն է դաժան իրականության դեմ-հանդիման, նրանց օժտելով  
 «խաղով»: Լիսպենսիկոյով «խնջությունը» մխիթարվելու, մեկը մյուսին մարդկայ-  
 նորեն կարեկցելու, աշխարհի անսահման լույսն ու խորհուրդը ժպտով ողջունելու»

քեղունակությամբ Իհարկե, այդ ամենը այն չէ, ինչը կարող է իրականում դառնալ հասարակական շարիքին դիմադրելու համար Սարոյանի հերոսները հեռու են սոցիալ-ֆաղափական ակտիվությունից ու պայքարից, նրանք անգոր են վոլսեյու աշխարհը, բայց նրանք կարողանում են մարդ մնալ, և դրանում է նրանց արժանիքն ու հմայքը Ինչպես Սարոյանի արձակում, այնպես էլ թատերագրության մեջ կյանքի եռումանիստական ըմբռնումը ներկայանում է իբրև բարոյական սկզբունք, մարդկայնությունը պաշտպանության տակ է առնվում և բանաստեղծականացվում է իբրև այդպիսին, հաստատվում են ավանդական հավերժ բարոյական արժեքները

Հետպատերազմյան տարիներին Սարոյանի ստեղծած պիեսների մեջ առանձնանում են «Կոտորածն անմեղաց» (1952) և «Քարանձավի մարդիկ» (1957) գործերը։ Իրանցից առաջինը արտացոլում է ամերիկյան կյանքի մթնոլորտը մակարտիզմի տիրապետության տարիներին, երբ ամենուրեք տարածվում էին բռնությունը, կասկածամտությունն ու վախը։ Սակայն այստեղ էլ ինչպես և ուրիշ սարոյանական պիեսներում, մակերեսն ունի անհատակ խորություն և յուրաքանչյուր պատկեր՝ բնդհանրացման դաշտ Հարկ է ասել, որ «Կոտորածն անմեղաց» պիեսի պատկերների և բնդհանրացումների ուժը առավելագույնս կզգա մեր բնթեցցողը չէ՞ որ մեզանում տասնամյակներ շարունակ ան ու ման էր տարածում, կոտորած էր գործում ամենազառաման առատալիտարիզմի հրեշը Գեղարվեստական պայմանականության, սատիրական գրոտեսկի միջոցներով Սարոյանը պատկերացնում է այն հասարակությունը, որը հենվում է ննջման ու մահվան, համատարած անաբեկչության մեխանիզմի վրա։ Քաղաքային ռեսուրսներում նիստեր է գումարում տրիբունալը, առավոտից Լրևիո ֆենեյով բազմաթիվ գործեր, և այդ բոլոր գործերի առիթով նույն վնիոն է հանվում, որն անմիջապես ի կատար է ածվում Պիեսը գնում է պահակախմբի համազարկերի նվագակցությամբ, գնդակահարվում են «հանուն ժողովրդի» դատապարտված մարդիկ, Մահապատժի են ենթարկում ոչ թե հանցագործներին, այլ հենց այն մարդկանց, սրունցից կազմված է ժողովուրդը Գնդակահարում են ում պատահի, ծառայողի նետ վիճած գործազուրկին, ոպարություն խեղրող խեղն պատավին, խանութից մթերքներ գողացած աղքատ բանաստեղծին փորձում են մահապատժի ենթարկել սևգամ չորս տարին դեռ չլրացած երեխային, որը համարձակվել է հրապարակորեն իր ատելությունն արտահայտել «հանրապետության պաշտպանությունում» ծառայող ձեռոցների նկատմամբ Առիթը կարեոր չէ կարևորը սկզբունքն է։ Պետությունը անաբեկում է մարդկանց, հասցնում սարսափահարության վերջին աստիճանին, և այդ մթնոլորտում որևէ դիմադրություն անհնար է Բայց իր լավատեսական աշխարհագրացմանը հավատարիմ, Սարոյանը այս երգիծական պիեսին ևս տալիս է ռոմանտիկական լուծում՝ համբնդհանուր վախի ու խույ լուռության մեջ պոռկում են նաև մարդկային զգացմունքներ, լսվում են խիզախ ձայներ Թող որ այդ զգացմունքների և այդ ձայների տերերը իրենք գառապարտված են, բայց նրանք փրկում են երեխային, նշանակում է փրկում են ապագան

«Քարանձավային մարդիկ» պիեսի գործողությունները ծավալվում են լված թատերական դահլիճում, որի հակատին գրված է «Աշխարհ»։ Այդ դահլիճը, այդ «աշխարհը» վաղը պետք է պայթեցվի շինարարների կողմից Պետք է պայթեցվի, որովհետև այլևս ոչ մի բանի պիտանի չէ՞ ոչ խաղալու, ոչ ապրելու Բայց այսօր այնտեղ ապաստան են գտել երկու ծեղ դերասան, բռնցքամարտիկ, որը լվել է ասպարեզը, տուն ու աշխատանք չունեցող մի աղջիկ, կրկեսի դերասան ամուսիններ նուածին երեխայի և հսկայական



խելով արջի հետ կված բառունի ժառգոտ տանիքի տակ հավանելով այս բովանդակ, մերժված մարդկանց, Սարոյանը իր բարի երևակայության հումորի և էֆսցենեարիկայի օգնությամբ իսկապես ստեղծում է մի ամբողջ աշխարհ, որը լիքն է մարդկային զգացմունքների խաղով՝ սեր և խանդ, հուսահատություն և հույս, վախ և ինքնահանություն Հակառակ իրականության, որտեղ բոլորը օտար են իրար, Սարոյանի ներստները այս պիեսում էլ ստեղծում են իրենց մադկային «ընտանիք», լինեց «տունը», բարու և հույսի իրենց ձգողական աշխարհը

10-ական րժականներին Սարոյանը գրում է ծովալուրն արձակի իր երկու ուշքի ընկնող, այսօր անդեն կարելի է ասել՝ դասական գործերը՝ «Մարդկային կատակերգությունը» (1942) և «Վեսլի Ջեֆսոնի արկածները» (1946) Սարոյանի պատմվածքների այն հերոսները, որոնք մամուլախորում են կյանքի նկատմամբ ետիվ ուսմանտիկական հայացքը, այս գործերում կապվում են ավյալ ուսանմայակի գրականության կենտրոնական թեմայի՝ պատերազմի հետ, որն բնկարվում է իրեն մեծագույն արկար ամբողջ մարդկության համար

1942 թ. Սարոյանն ինքը գորակոչվեց բանակ Նա սկզբում ծառայում էր հայրենիքում, հետո անդամակապեց օվկիանոսից այն կողմ, Լոնդոն, որտեղ գրադիում էր գինվորների համար ուսումնական ֆիրմեր ստեղծելու գործով Բայց պատերազմը Սարոյանը ընկալեց և արտագոյեց ոչ թե այդ պատերազմի կոնկրետ բովանդակույյանը ու իմաստով, ոչ իրեն մադկությունից միխոնավոր գահեր պահանջած ազատագրական պայքար ֆաշիզմի դեմ, այլ իրեն անիմատ սպանդ, վերագականորեն հարկաչված ողբերգություն Այդ ողբերգության սոցիալ-պատմական ենթատեխտը, իրական շարիերն ու բնույթը շրացահայտվեցին Սարոյանի ստեղծագործության մեջ, բայց և այնպես նրա գործերում կրկառ բողոք հնչեց ընդդեմ ուզմամույության, ընդդեմ շարի ու բոնություն Պատերազմը ժխտվեց իրեն մարդու համար հակաբնական վիճակ, մերժվեցին պատերազմի հետեանները՝ քայքայված ընտանիքներն ու բոնությունը մարդու լավագույն ձգտումների նկատմամբ

«Մարդկային կատակերգություն» վիպակում գրողը պատկերում է կալիփոնիական փոքրիկ Լադալի խոսկան սոտրյան Այստեղ ամեն օր մահվան ծանուցագրեր են ստացվում, նեովում փոքրեկվող պատերազմի ավերիչ ուժը ներխուժում է այս քաղաք Պատումի կենտրոնում է Սարոյանի նախասիրած հերոսը՝ դեռահաս պատանին, որպիսիք այնքան շատ են նրա պատմվածքներում Տասնչորսամյա ցրիչ Հոմեր Մադոլին ամեն օր հեծանվով շրջում է քաղաքում. դիտում է նրա կյանքը, հանդիպում է տարբեր մարդկանց, իր զգացմունքներով և խորհրդածություններով միավորում է միաբնակում նկարագրված դրվագներն ու անտարանները. Այդ բոլոր տեսարանները, բեկվելով քննախույզ, զգայուն պատանու ընկալման մեջ, դառնում են բազմաբարդ ու բազմաբնույթ «մարդկային կատակերգության» դրվագներ, սրում և բացահայտում են միմյանց Այստեղ խառնվում են «լավն» ու «վատը», արտագրվում է բարու ու չարի հավիտենական, բայց պատերազմի պայմաններում առավել ևս սերված պայքարը և՛ հասարակության, և՛ անհատ մարդու մեջ: Եվ հակառակ դժվարությունների, գրչանքների և կորուստների, հակառակ բոլոր ծանր փորձությունների և կարվածների, ի պատասխան հերոսի մեջ ծագող բարդ և տանջալի հարցերի, հաստատվում է այն միտքը, որ կյանքը անհուղթահալի է և անվերջ, որ մարդու բառայական ուժերը անսպառ են, որ «եզրի վրա ամեն ինչ ավելի լավ պետ է լինի, և մարդիկ

ավելի լավ պետք է լինեն», որ աշխարհում կան բարու ամրացներ, որան կղիմանան ամեն ինչի

«Վեսլի Ջեֆսոնի արկածները» վեպում մարդու լավագույն զգացմունքներն ու ձգտումները բախվում են պատերազմի և զինվորականության անմարդկայնությանը: Բռնությամբ զինվորի վերածված ամերիկյան սովորական պատանու շուրթերով այստեղ ներկայացվում է ոչ այնքան իրական պատերազմը, որքան բանակային «անիծյալ մեֆենան», զորանոցային կարգերը, որոնք կտրում են մարդուն, կեղծ-հայրենասիրական պրոպագանդան, որի շնորհիվ ոմանք նարստանում են, խաբեյով և կործանելով ուրիշներին: Սարոյանի այս հերոսի տեսադաշտն ընդարձակ չէ, պատերազմը, որին նրան ստիպում են մասնակցել, խորք և անհասկանալի է նրան Նա միայն մի բան է զգում, որ պատերազմը ինքնին «խելագարություն» է, խաբեություն և անեծք, որովհետև նրա բոցերում ոչնչանում է ամենաթանկարժեք բանը՝ մարդկային կյանքը: Վեսլի Ջեֆսոնի բանակային կենսագրության ողբերգա-կատակերգական վերովարումների մեջ բացահայտվում են և՛ պատերազմի դաժանությունն ու անհեթեթությունը, և՛ երջանկության ու արդարության ծարավը, խաղաղության և Լոբայության համառ երազանքը, որոնք նարագատացնում են մարդկանց Սարոյանի վեպի ուժը մի կողմից՝ զինվորականության անողոք ու սրամիտ ֆենադատության, մյուս կողմից՝ այն ֆնարականության մեջ է, որով ներկայացված են ազնիվ ու բարի զգացումները, մեկը մյուսին նեցուկ ինչու մարդկանց կարողությունը:

50—60-ական թվականներին Սարոյանի գրած վեպերում ու վիպակներում («Ռոք Վազրամ», «Միծաղելի բան», «Մայրիկ, Լս սիրում եմ քեզ», «Հայրիկ, դու խենթ ես», «Սպիկներն ու տղաները միասին», «Աշխարհի հետկեսօրյա ժամին») հարցերի շրջանակը սահմանափակված է մարդու մասնավոր կյանքով, նրա գուտ անհատական հոգեբանական դրամայով, իր կյանքի եզակիությունն ու անկրկնելիությունը ժամանակակից կյանքի սպանիչ ստանդարտներից պաշտպանելու ձգտումով, ամուր, բնական մարդկային կապերի ծարավով: Գրողի ապրած դրաման է որոշում այդ ստեղծագործությունների թեման: Դա ընտանիքի ստեղծումն է ու կորուստը, կարոտը դեպի նրա ջերմությունն ու լուս փոփոխի աշխարհի ներդաշնակությունը, որը պանդանում է հետպատերազմյան աններդաշնակ ու սառը Ամերիկայում արագորեն տեսնացող ավանդական բարոյական արժեքները ևր անձնական զգացմունքային փորձից՝ սիրո, ամուսնության, հայրության, ամուսնալուծության, Երեխաներից բաժանվելու, նրանց ֆաղցր շնչին կարոտելու, անընտանիք, անօջախ ապրելու դրամայից հյուսում է գրողն իր նրբին վիպակները, որոնցում մեծերն ու փոքրերը միասին, և հաճախ՝ մեծերը փոքրերի օգնությամբ, փնտրում են իրենց կյանքի հուճը, իմաստը, իրենց տեղն ու կոչումը ստեղծվածային աշխարհում: Եվ որքան էլ գունավորված լինեն այդ վիպակները նեղմական, հիասրափական, թախծալի հնչերանգներով, կյանքը իր բոլոր տարրերումներով Սարոյանի և նրա հերոսների համար մնում է նրա՞ք ու անվերջանալի նիսցում:

1950-ական թվականների վերջից Սարոյանը ապրում է Եվրոպայում, հաճախ նամփորդում է, տարբեր ժամանակ երկարատև զանվելով փարիզյան Քեյբու փողոցի իր բնակարանում կամ իր ծննդավայր Յեզեյում, որտեղ տուն ուներ և այդի Երկու տասնամյակների բնթացում նա լույս է ընծայում մի շարք գրքեր, որոնք հակիրճ կարելի է բնութագրել իրեն ի ն ֆ ն ա պ ա տ ու մ և ն ու շ ա պ ա տ ու մ

Ինֆնակենսագրականը, ինֆնադիմանկարայինը մշտապես բնկած է եղել Սարոյանի ստեղծագործության հիմքում, սենլ է ու ֆնարական շնչով նամակել նրա շատ ու

շատ սյուժեներն ու կերպարները Այժմ տարբեր ժանրերի փայլուն վապեար ակնկեր-  
բար նրաժեշտ է տալիս բազմաժանրությամբ, հեռանում արվեստի պայմանական  
ձևերից և անմիջականորեն պատմում իր տպրածն ու տեսածը, վերհիշում է, ստորում,  
դիտում և դատում, խորհրդածում է և խոստովանում Տրվելով ինքնապատում-հու-  
շապատումի տարերհին, Սարոյանը այստեղ էլ վապեարեն զանաւ է կենդանի սե-  
ձակ կառուցելու իր միանգամայն ուրույն, նորահոր նուրբ և նկուն ձևերը, եղանակներ,  
չնորհիվ որոնց կարծես վերակենդանանում է անցյալը և «կանգնեցվում» ներկան,  
կյանքի արտաքին հոսքին միախառնվում է ներքինը, օրվա մանրուհներով՝ խորքն ու  
նշանակալիցը, կենցաղային դիպուկ պատկերներին՝ մեծ արվեստագետի խանրն ու քա-  
տողությունները իրականության և գրականության, ամեն մարդու և գրագ-մարդու հո-  
գեբանության, հույզերի ու ձգտումների շուրջ սովորական և առաստվոր լեզվով,  
շարժային և արտակարգ դեմքերի, հիշարժան իրադարձությանց և անծանց շուրջ. Սա-  
րոյանական այս կարգի արձակը ներկայիս մեր բարգմանչական հնարավորություններին  
հիշ թե շատ հնազանդվող հատվածներով ներկայացված է ընթերցողին: Ըմաստային և  
ոճական տեսակետից լիարժեք դրա ավելի ընդարձակ ներկայացումը մնում է դեռևս  
ապագայի խնդիր

Այն հարցին, թե հանուն ինչի է ստեղծագործում գրողը, Սարոյանը ունեցել է ան-  
փոփոխ մի պատասխան՝ հանուն մարդու առավել բարօրության ու վեհության Գրողին  
ոգևորողը աշխարհն ավելի լավը դարձնելու պահանջն է, այն խոր նավատը, որ դա  
նհարավոր է. «Կարծում եմ, — գրել է Սարոյանը, — արվեստի դերն այն է, որ բափա-  
նումների ուղին բուժած մարդկությանն ապահովի լավ մշակված, հուսալի մի փարտե-  
զով, որը նրան ցույց կաա դեպի ինքն իրեն տանող նահապարհը» Նա ձգտում էր իր  
ուժերի շափով հարստացնել այդ փարտեզի գծագրությունը և իսկապես կարողացավ այդ  
փարտեզին ավելացնել իր՝ սարոյանական երբեք չխամրող, անջնջելի գծերը

Կյանքի վերջին տարիներին Վիլյամ Սարոյանը երկու անգամ եղավ Հայաստանում  
(1976, 1978), այս ոտը նշեց իր 70-ամյակը, ունեցավ շատ ու շատ ջերմ հանդիպումներ,  
մոտիկից շփվեց երկրի մարդկանց հետ. հիշվեց, տպավորվեց, նույն ու տպավորություն  
տարավ: 1981-ի մայիսին նա իր մանկանացուն կնքեց Ֆրեզնոյում, նախապես կուս-  
կելով, որ իր անյունից մի բուռ տեղափոխվի Նրեան, հանձնվի հայկական հողին: Այժմ՝  
Նրեանում՝ հայոց մեծերի Պանթեոնում կա նրա անունը կրող դամբանախար:

Հայտնի և ամերիկյան գրող Սարոյանը ապրեց ու ստեղծագործեց իբրև համայն  
մտադրության անդամ, համայն աշխարհի փողափայլի, բերելով իր ժողովրդին բարի  
համբավ, համակրանք ու պատիվ, փոխանցելով նրան իր կենսափորձի և կենսափիլիսո-  
փայության, իր ազնվաբարո և վեհանձն ոգու հարստությունը.

Ուստի՝ ստեղծելով և ընթերցելով իր պարտին հասած այս շորսնատուրյակը, շա-  
րունակենք առաջիկայում էլ ներազգացությամբ բարգմանել, արժանավայել նրատարա-  
կել և սիրով ընթերցել Վիլյամ Սարոյանի ստեղծագործության էջերը:

ՆԱՏԱԼՅԱ ԳՈՆԶԱՐ

**ԲՈՎԱՆԿԱԿՈՒԹՅՈՒՆ**

|   |     |
|---|-----|
| Մայրիկ, ես սիրում եմ քեզ— թարգմ. Չ. Բոյաջյան . . . . .  | 5   |
| Հայրիկ, դու խենթ ես— թարգմ. Չ. Բոյաջյան . . . . .   | 265 |
| <b>Հուշապատումներ</b>   |     |
| Ահա եկավ, գնում է, ինքդ գիտես՝ ով (հատվածներ գրքից) — թարգմ.<br>Ա. Էմին . . . . .                             | 219 |
| Նամակներ Թեյբու փողոց թիվ 74-ից (հատվածներ գրքից) — թարգմ.<br>Շ. Վարսյան, հատված V— Լ. Չուլֆիզարյան . . . . . | 228 |
| Կյանքի և մահվան օրեր կամ փախուստ դեպի լուսին (հատվածներ գրքից) —<br>թարգմ. Շ. Վարսյան— . . . . .              | 349 |
| Պատահական հանդիպումներ (հատվածներ գրքից) — թարգմ. Լ. Չուլֆի-<br>զարյան, հատված I— Շ. Վարսյան— . . . . .       | 365 |
| Մինչև վերջ Վիլյամ Սարոյանի հետ (հարցազրույց) — Կ. Պամսեյանի հետ   | 383 |
| Վիլյամ Սարոյանի կյանքն ու ստեղծագործությունը — Ն. Գոնչար . . . . .  | 467 |

Քրական-գեղարվեստական հրատարակություն  
**ՎԻՋՍՄ ՍՍՐՈՅԱՆ**

**Ընտիր երկեր չորս հատորով**  
Հատոր 4

Лигературно-художественное издание  
**УИЛЬЯМ САРОЯН**

Избранные сочинения в четырех томах  
Том 4

*Мама, я люблю тебя*  
*Папа, ты с ума сошел!*  
*Мемуарные фрагменты*

На армянском языке  
Издательство «Наири»  
Ереван 1991

Խմբ. վարիչ՝ Վ. Հ. Բաբայան, խմբագիր՝ Ա. Ս. Հովսեփյան, նկարիչ՝ Հ. Մ. Մատուռյան,  
Գեղ. խմբագիր՝ Հ. Ս. Մալխասյան, տեխ. խմբագիր՝ Ս. Գ. Շահվերդյան, վերստուգող  
սրբագրիչ՝ Վ. Գ. Ազատյան

ИБ № 6518

Հանձնված է շարվածքի 5. 03. 91: Ստորագրված է տպագրության 18. 06. 91:  
Տորմատ՝ 60×84<sup>1</sup>/<sub>16</sub>: Թուղթ՝ տպագր. № 1: Տպագրություն՝ բարձր: Տառատեսակ՝  
«Քրքի սովորական»: 25,11 պայմ. տպ. մամ., 23,9 հրատ. մամ.+1 ներդիր: Տպաքա-  
նակ՝ 50000: Պատվեր՝ 147: Գինը՝ 6 ռ. 40 կոպ.:

«Նաիրի» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:  
Издательство «Наири», Ереван-9, ул Теряна, 91.

22 Նախարարների խորհրդին առընթեր մամուլի կոմիտեի № 1 տպարան,  
Երևան—10, Ալավերդյան 65:

Типография № 1 Комитета по печати при Совете Министров  
Республики Армения Ереван-10, ул Алавердяна, 65.

